ՎԱՐԱԶԴԱՏ ՏԵՐՈՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ

Ամփոփում է բանագաւառածներու հիշատակին

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ARCH. MESROB ASHJIAN
ՄԱՏԵՆԱՇԱՐ BOOK SERIES
17 17

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ ИСТОРИИ

ВАРАЗДАТ ТЕРОЯН

НАУЧНЫЕ И ПУБЛИЦИСТИЧЕСКИЕ ТРУДЫ

ЕРЕВАН–2006

Գ 4.Գ25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԱԶԴԱՏ ՏԵՐՈՅԱՆ

Ա 91459

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԵՐԵՎԱՆ – 2006

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Տ 495

Առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյան
Հրատարակության պատրաստեց Ն. Վ. Դերոյան

Տ. 495 Տերոյան Վարազդատ. *Գիտական և հրապարակախոսական աշխատություններ. Եր.: Պատմության ինստիտուտ, 2006. 436 էջ:*

Գրքում ներկայացված է Վարազդատ Տերոյանի գիտական, հասարակական գործունեությունը: Առաջին անգամ հրապարակվում են գիտնականի անտիպ գիտական հոդվածները, նրա ելույթները Արևմտահայ առաջին և երկրորդ համագումարներում: Բերված են նյութեր նրա ձեռնարկած միջոցառումների վերաբերյալ դպրոցներ հիմնադրելու, փիլիսոփայական ընկերություն, փիլիսոփայական բառարաններ ստեղծելու կապակցությամբ և այլ: Գրքի հավելվածում զետեղված են փաստաթղթեր, ծանոթագրություններ, անվանացանկեր:

ISBN 99941 – 991 – 5 – 3

ԳՄԴ 63.3(2Հ)

Երևան *2006*

ՎԱՐԱԶԴԱՏ ՏԵՐՈՅԱՆ
ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(1887–1938 թթ.)

Ժամանակի վաստակաշատ մտավորական, դիտական, հասարակական գործիչ Վարազդատ Տերոյանի (Դերոյան) անունը, ցավոք, ներկայիս հասարակությանը գրեթե անհայտ է մնացել:

Գիտական-հասարակական ասպարեզ մտնելով XX դարի սկզբին՝ նա իր կարճատև կյանքի ընթացքում զբաղվել է բազմաթիվ ու բազմարնույթ բարդ խնդիրներով:

Ստանալով փայլուն կրթություն, կատարյալ տիրապետելով ֆրանսերին ու գերմաներեն լեզուներին՝ նա բարձր էրուդիցիա ունեցող, պարմանալի աշխատասիրությամբ օժտված բազմակողմանի հետաքրքրությունների տեր գիտական գործիչ էր:

Վ. Տերոյանը թողել է ուշագրավ ու արժեքավոր մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված փիլիսոփայության ու գրականության բարդ հարցերին. թարգմանել է փիլիսոփայության դասականների կարևորագույն աշխատությունները (ընագրից): Նա զբաղվել է նաև գիտական-կազմակերպչական աշխատանքներով, որոնց շարքում հատուկ տեղ են գրավում Հայ փիլիսոփայական ընկերության հիմնելու, հայերեն-գերմաներեն-ֆրանսերեն լեզուներով փիլիսոփայական բառարանները ստեղծելու ծրագրերը: Մտահղացել է գաղափարքեր պատրաստելու, Հայաստանում գրքերի ամբողջական հավաքածու ստեղծելու, Մխիթարյան միաբանության հետ գրքափոխանակության մասին գրավելու հարցերով և այլն, և այլն:

Հարազատ ժողովրդի և Հայրենիքի նկատմամբ ունեցած ջերմ սերն ու նվիրվածությունը չէին կարող Վարազդատ Տերոյանին

թողնել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող դրամատիկ իրադարձությունների սառնասիրտ դիտորդի դերում: Ինչպես հայ մտավորականության չատ ներկայացուցիչներ, նա ևս իր ուժերը նետած չափով աշխատում է օգնել բզկտված, ծանրագույն վիճակում գտնվող Հայրենիքին:

1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին Վ. Տերոյանը մասնակցել է Վանի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանական մարտերին:

1916–1920 թթ. ընթացքում Տերոյանը հասարակական-քաղաքական և կազմակերպչական լայն գործունեություն է ծավալում: Մասնակցել և ղեկավարել է հայ գաղթականությանը նվիրված համագումարները, գրել է մի շարք հոդված-ծրագրեր Հայրենիքի վերաշինության, գաղթականության խնդիրների վերաբերյալ:

Ագգային չահերը ամեն ինչից վեր դասող, պետականորեն մտածող այս գործիչը նվիրյալ քաղաքացի էր բառիս բուն իմաստով և մեծ հայրենասեր:

* * *

Պրպտումների ընթացքում հայտնաբերել ենք մի շարք փաստաթղթեր և նյութեր, որոնք լույս են սփռում Վ. Տերոյանի 1905–1935 թթ. գործունեության վրա:

Վարազդատ Մկրտչի Տերոյանը ծնվել է 1887 թ. փետրվարին Վան քաղաքի Այգեստան թաղամասում: Նա հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներ, ՀՅԴ անդամներ Վազգեն (Տիգրան)[1] և Ժենյա (Զարուհի)[2] Տերոյանների կրտսեր եղբայրն էր:

Վ. Տերոյանը նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում: Նրա պատանեկության մասին հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, Վանի 1915 թ. ինքնապաշտպանության կազմակերպիչ Արամ Մանուկյանի հուշերում կա հետևյալ վկայությունը. «Մենք հաճախ էինք գնում Վազգենի մայրիկի մոտ, որ ամենքիս մայրիկն էր: ... Այն ժամանակ մայրիկը մի աղջիկ ուներ՝ օր. Սաթենիկ... և մի փոքրիկ տղա՝ Վարազդատը, դեռ պատանի, 13-15 տարեկան, որ հաճախում էր Երամյան դպրոցը. հանդարտ, փափկիկ, սի-

---

[1] *Տե՛ս Ռուբեն Սահակյան. Վազգեն (Տիգրան Տերոյեան). Նահատակութեան 100 ամեակի առթիւ.– «Դրօշակ», 26 մարտ – 8 ապրիլ 1998, թիւ 6, էջ 22–27:*

[2] *Վասպուրական Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեհինգամեակին առթիւ, 1915–1930. Վիեննական – Ս. Ղազար, 1930, էջ 324–325*

բուն տպա էր, աչքաբաց...: Նա Ահարոնյանի Վազրիկն էր[3] և, ինչ ասել կուզե, որ թուռնդ դաշնակցական էր: Նա էր մեր և Երամյան դպրոցի ուսուցիչների միջի կապը»[4]:

Վ. Տերոյանը 1905 թ. ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Այստեղ նրա հետ միասին ուսանում էին մեկ տասնյակ վաստակաշինները՝ Համազասպ Բազինջյանը, Ղևոնդ Մելոյանը, Արտակ Դարբինյանը, Հայկակ Կոսոյանը, Արսեն Հացագործյանը և ուրիշներ: Ուսանողական ելույթներին մասնակցելու պատճառով Վ. Տերոյանը հեռացվել է ճեմարանից: Նույն թվականին նա վերադարձել է Վան, ուր դասավանդել է «Երամյան» և «Մանդիկյան» դպրոցներում:

Վանեցիները դումար են տրամադրում Վ. Տերոյանին՝ արտասահմանում բարձրագույն կրթություն ստանալու համար: 1909 թ. նա մեկնում է Փարիզ և ընդունվում Սորբոնի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը, որն ավարտում է 1912 թ.: Այնուհետև, ինչպես գրում է Վ. Տերոյանն իր ինքնակենսագրությունում. «ուսումս չարունակել եմ նաև գերմանական մի քանի համալսարաններում: Ամեն տեղ էլ փիլիսոփայական ֆակուլտետներում»[5], եղել է նաև Ավստրիայում և Իտալիայում:

Սորբոնի համալսարանում Վ. Տերոյանի ավարտական թեզն էր "La biologie d'Au Comte" (Ո. Կոնտի կենսաբանությունը), իսկ Բեռլինում փիլիսոփայական դիսերտացիոնների դոկտորի աստիճան ստանալու համար պատրաստել էր "Die Soziologischen Grundlagen der Erkenntnis" (Իմացության սոցիոլոգիական հիմունքները) թեզը: Յավոք, վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմը հնարավորություն չի տալիս պաշտպանել դոկտորական թեզը: 1914 թ. ամռան վերջին Վ. Տերոյանը վերադառնում է Վան: Ժննդավայրում նա դասավանդում է Կեդրոնական վարժարանում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան Թուրքիայի կառավարությունն իրականացնում է կայսրության տարածքում բնակվող հայ ժողովրդի ցեղասպանությունը: Մի շարք վայրերում հայերը դիմում են ինքնապաշտպանության: Երիտթուրք

---

[3] *Տե՛ս Ա. Ահարոնյան. Ժողովածու երկերի, հատոր հինգերորդ, Ազատության ճանապարհին. Բրիսատփոր Մինքայելյան, Անդրանիկ, Վազրիկ. Բոստան, 1948, էջ 163–171:*

[4] *Արտակ. մահվան հետևն ամյակի առթիվ. Լիբանան, Բեյրութ, 1969, էջ 284.*

[5] *Տե՛ս Տերոյանների ընտանեկան արխիվ:*

ելուզակներին առաջին դիմադրությունը ցույց է տալիս Վան-Վասպուրականի հայությունը: 1915 թ. ապրիլի 7-ին Վան քաղաքի հայկական թաղամասերի Այգեստանի և Քաղաքամեջի հայ բնակչությունը կազմակերպում է ինքնապաշտպանություն: Երիտթուրքական իշխանությունները նրանց դեմ կենտրոնացնում են զգալի թվով կանոնավոր զորամասեր, քրդական ջոկատներ, հրետանի և գնդացիրներ: Դիմադրական մարտերը ղեկավարելու համար ստեղծվում է «Վանի Հայ ինքնապաշտպանության Զինվորական Մարմին»[6]: Վ. Տերոյանն ընդգրկվում է «Հայկական կարմիր խաչ» մարմնի կազմում, որի հիմնական խնդիրն էր. «անմիջական օգնություն հասցնել դիրքերում ընկած վիրավորներին»[7]:

Հայ բնակչության հերոսական դիմադրության և ռուսական զորքերի ու հայ կամավորական ջոկատների առաջխաղացման շնորհիվ Վանի հայկական թաղամասերի ինքնապաշտպանությունն ավարտվում է հաղթանակով:

1915 թ. մայիսի 7-ին ռուսական հրամանատարությունը Արամ Մանուկյանին, Վ. Տերոյանի բնորոշմամբ «Վասպուրականի հասարակական հսկային», նշանակում է Վանի և նահանգի ազատագրված գավառների ժամանակավոր նահանգապետ: Արամի անմիջական ղեկավարությամբ և մասնակցությամբ կազմակերպվում են նահանգային կառավարման մարմիններ՝ նահանգային վարչություն, տնտեսական մարմին, ոստիկանական տեսչություն, դատարան և այլն:

Մեզ չհաջողվեց պարզել, թե Վ. Տերոյանը վերը նշված մարմիններից, որում է ընդգրկվել, սակայն հաջողվեց հայտնաբերել նահան-

---

[6] *Վանի հայության ինքնապաշտպանության մասին ավելի մանրամասն տե՛ս Ռ. Օ. Սահակյան. 1915 թ. Վանի հերոսամարտը օտար ապբյուրներում.– «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, №8, էջ 54–63: Նույնի՝ Վասպուրականի հայության գոյամարտը 1915 թվականին.– «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1995, №1, էջ 19–30: Նույնի՝ Վան քաղաքի հայության ինքնապաշտպանությունը 1915 թվականին.– «Հայկական բանակ», 1996, №1, էջ 15–24:*

[7] *Վան-Վասպուրականի հերոսամարտը–75: Ժողովածու, կազմող Հ. Ռ. Փափազյան. Ե., 1990, էջ 32: Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնվեհինգամյակի առթիվ, էջ 32:*

[8] *Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Ս. Ասլյան, Արամ Մանուկյան, կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում). Ե., 2005, էջ 121–143: Ռուբեն Սահակյան, Ոստիկանության ծառայության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում.– «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ ԲՀԱ), №2, 2003, էջ 153–161:*

պային վարչությանն ուղղված քաղաքի և գավառների բնակչության դանազան բովանդակությամբ դիմումներ, որոնց վրա կային Վ. Տերոյանի մակագրությունները[9]*: Մի քանի փաստաթղթեր էլ կազմվել են անձամբ նրա կողմից: 1915 թ. մայիսի 7–22-ը նահանգական և գավառական զանազան մարմիններում կատարված փոփոխություններից հետո, Վ. Տերոյանը կազմել է այդ մարմինների դեկավար անդամների ցուցակները և վարած պաշտոնները, հաշվառել է ոստիկանների և քաղաքի ու գավառների պաշտոնյաների մոտավոր թվաքանակը*[10]*:*

Վ. Տերոյանը հաշվառել է նաև նահանգային վարչության դիվանում ստացվող խնդրագրերի քանակը և նշել, որ «դիվանատունը օրական մինչև 200 խնդրագրերի ընթացք է տվել, բայց միայն պատկանյալ իշխանությանց հղելու համար: Բացի այդ, մոտավորապես 112 մարդ ոտացել են ներքին և արտաքին անցագիր, և մոտավորապես 132 մարդ՝ զենք կրելու իրավունք, բացի ոստիկաններից, թեև իրականության մեջ ավելին է (զենք ունեցողների թիվը – Ռ. Ս.), քան տրված արտոնագրերի թիվը»[11]*:*

Փաստաթղթերից երկուսը (որոնցից մեկն ուղղված է «Տների հանձնախմբին», իսկ մյուսը՝ ուսուցչին լեզվով «Մատուցիչ» սիրանմի ատրճանակ կրելու իրավունք է, թվագրված մայիսի 16 և 20-ով)[12]*, Վ. Տերոյանը, հավանաբար որպես լիազորված անձ, ատրազրել է Վանի նահանգապետարի փոխարեն*[13]*:*

Վանի 1915 թ. հուլիսյան նահանջից հետո Վ. Տերոյանը գաղթականների մի մասի հետ գալիս է Թիֆլիս: Նույն թվականին Բաքվի «Հայոց մարդասիրական ընկերություն հանուն Ս. Գրիգոր Լուսավորչի» մշակութային, կրթական և բարեգործական հատարակական կազմակերպության կողմից նա հրավիրվում է Բաքու՝ գտնավանդելու քաղաքի հայկական թաղամասի հայ գաղթական երկսեռ Ժխտական դպրոցում[14]*:*

---

[9] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 9–11, 13–42, 44–92:*

[10] *ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 6–9:*

[11] *Նույն տեղում, գ. 39, թ. 9:*

[12] *Նույն տեղում, թ. 10:*

[13] *Նույն տեղում, թ. 2:*

[14] *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 9, ֆ. 27, ց. 1, գ. 281, թ. 2:*

1916 թ. ապրիլի 20-ին Բաքվի հայ գաղթականների ժողովը Վ. Տերոյանին լիազորում է «Հայոց մարդասիրական ընկերությունում» լինել իրենց ներկայացուցիչը[15]:

Որպես Բաքվի հայ գաղթականներից ընտրված պատգամավոր, նա մասնակցում է 1916 թ. մայիսի 10–13-ը Պետրոգրադում կայացած Առաջին հայկական համագումարին: Այստեղ հավաքվել էին փախստականներին օժանդակող 29 կազմակերպությունների ներկայացուցիչներ. Պետական դումայի և Պետական խորհրդի ազգությամբ հայ անդամները[16]:

1918 թ. Վ. Տերոյանին հրավիրում են դասավանդելու Թիֆլիսի «Գայանյան օրիորդաց դպրոցում»: Նույն թվականին, դպրոցի մանկավարժական կոլեկտիվը նրան ընտրում է տնօրեն: Այդ պաշտոնում, սակայն, Վ. Տերոյանը երկար չի մնում, և 1918 թ. վերջին գալիս է Երևան «որովհետև ուսուցչական կազմը (Գայանյան դպրոցի – Ռ. Ս.) արձակեցին, վրացիները հալածում էին հայերին...»[17]:

1919 թ. հունվարի 9-ին Երևանում կայացած հայ գաղթականների ներկայացուցչական ժողովի կողմից Վ. Տերոյանը ընտրվում է Արևմտահայերի 2-րդ համագումարը նախապատրաստող կոմիտեի կազմում: Նույն թվականի փետրվարի 6–13-ը Երևանում տեղի ունեցած Արևմտահայերի 2-րդ համագումարում նա հանդես է գալիս զեկուցմամբ, ապա ընտրվում է գործադիր կոմիտեի նախագահ[18]:

1919 թ. ապրիլի 20-ին և 22-ին կայացած Արևմտահայ գործադիր կոմիտեի նիստերի որոշմամբ Վ. Տերոյանը ապրիլի 24-ին մեկնում է Էջմիածին՝ հարթելու ՀՀ կառավարության և գեներալ Անդրանիկ Օզանյանի միջև ծագած տարաձայնությունները[19]:

---

[15] *Նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 286, թ. 1–6, 16. ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 9:*

[16] *Նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 286, թ. 22. ֆ. 57, ց. 5, գ. 116, թ. 5–7: Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.). փաստաթղթերի և նյութերի ժողովածու. պատասխանատու խմբագիր Ա. Վիրաբյան. Ե., 2004, էջ 117–158:*

[17] *Տե՛ս ՀՀ կառավարության արքիվ ազգային անվտանգության ծառայության արխիվ, կարճված գործերի ֆոնդ (այսուհետև ԱԱԾԱ, ԿԳՖ), գ. 3336, թ. 45.*

[18] *Տե՛ս Համառոտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը. Թիֆլիս, 1919: Համահայկական խորհրդակցություններ, էջ 293–306:*

[19] Отчет представителя исполнительного органа западных армян о результатах переговоров с Андраником и правительством Республики Армении о формировании частей для обеспечения иммиграции беженцев из Западной Армении. *Տե՛ս* Андраник Озанян. Документы и материалы. *ԲՀԱ, № 1–2. 1991, էջ 343–349: Այս հրապարակման մեջ, չնայած արդեն 1991 թվա-*

1919 թ. Վ. Տերոյանը ծառայության է անցել Մերձավոր Արևելքի Օդուժության ամերիկյան կոմիտեում (Ամերկոմ), ուր տնօրինել է ուսումնական հաստատությունները, որբանոցները և հիվանդանոցները:

Վ. Տերոյանը վիճակագրական տվյալներ է հավաքում Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում, Թիֆլիսում և Բաթումում ապաստանած արևմտահայ գաղթականներից: Նա կազմում է համապատասխան տեղեկագրերը, ուր արձանագրվում են փախստականների «ոչ միայն բնթացիկ, այլև 1915-ից առաջ ունեցած սոցիալ-տնտեսական կացությունը»[20], և այդ բոլոր վիճակագրական տվյալները նա զեկուցում է Ա–Դ-ի (Հ. Տեր-Մարտիրոսյան) 1912 թ. յուլս տեսած Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներին նվիրված աշխատության[21] համապատասխան էջերում: Նշված գրառումներն ուսումնասիրած Գ. Բագալյանի կատարած հաշվարկի համաձայն, Վ. Տերոյանի «կողմից գրանցված 600 բնակավայրերից 205-ը բաժին է ընկնում Վանի, 270-ը՝ Բիթլիսի, իսկ 125-ը՝ Էրզրումի վիլայեթներին»: Ինչպես նշում է Գ. Բագալյանը, Վ. Տերոյանի կողմից Վանի նահանգում հիշատակված 50 բնակավայրերը բացակայում են Ա–Դ-ի հաջորդ աշխատությունում[22] «Մեծ դեպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին» (Ե., 1917): Բացի հայերից, Վ. Տերոյանը վիճակագրական տեղեկություններ է հավաքում նաև ասորիների մասին:

Գ. Բագալյանի համոզմամբ. «Վ. Տերոյանի տվյալները, որպես կանոն, ունեն սկզբնաղբյուրային նշանակություն, քանի որ շատ հաճախ լրացնում են Ա–Դ-ին»[23]:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Վ. Տերոյանը Հայաստանի Հեղկոմի կողմից նշանակվում է լիազոր Ամերկոմում[23]: Վ. Տերոյանի վկայությամբ, այդ նշանակումը կատարվում

կանն էր, չի հիշատակվում, որ Անգրանիկի հետ բանակցություններ վարողը Վ. Տերոյանն էր. տե՛ս Ռ. Սահակյան. Վ. Տերոյանի վկայությունները Արևմտահայ գործոնիր մասին, ՊՀՀ, № 2, 2003, էջ 287–291:

[20] *Գեղամ Բագալյան. Վարպետ Տերոյանի վիճակագրական նյութերն Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ. ԲՀԱ, № 1, 2005, էջ 212:*

[21] *Ա–Դ. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Ե., 1912:*

[22] *Գ. Բագալյան, նշվ. հոդվածը, էջ 213:*

[23] *Մեկ այլ փաստաթղթում Վ. Տերոյանը նշում է, որ 1920–1921 թթ., մոտ վեց ամիս նաև է ՀԽՍՀ Աբպատրաժոկոմատի ներկայացուցիչը Ամերկոմում: Տե՛ս ԱԱՃԱ, կԳ-ն, գ. 3336, թ. 23 հակ.:*

է այն նպատակով, «որպեսզի բանակցություններ վարեմ փախչող Ամերկոմի հետ, որպեսզի նրանք (ամերիկացիները – Ռ. Ս.) մնան և Հայաստանում աշխատեն»[24]*:*

Հիրավի. Հայաստանի Հեղկոմի դեկավարությունը, հանձին նախագահ Սարգիս Կասյանի և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալեքսանդր Բեկզադյանի գիտակցելով, որ Ամերկոմի աշխատակիցների հեռանալուց հետո խորհրդային պետությունն ի զորու չի լինի ապահովել բացմահազար որբերի տարրական կենսապայմանները, 1920 թ. դեկտեմբերի 14-ին հատուկ ուղերձով դիմում են Ամերկոմին: Ուղերձում ասվում էր. «Ընդունելով Մերձավոր Արևելքի Օգնության կոմիտեի գործունեությունը զուտ մարդասիրական, որբական և ընդհանրապես խնամատարական գործում օգտակար և անհրաժեշտ Խորհրդային Հայաստանում, Հ.Խ.Ս.Հ. Հեղկոմը (ընդգծումը տեքստում – Ռ. Ս.) նրա գործունեության շարունակությունը և ընդարձակումը համարելով անպայման ցանկալի, խոստանում է նրան իր լիակատար աջակցությունը և առաջարկում է Հ.Խ.Ս.Հ. բոլոր քաղաքացիական և զինվորական իշխանություններին ցույց տալ նույն կոմիտեի վարիչներին հարկ եղած աջակցությունը իրենց գործունեության ընթացքում»[25]*:*

1921 թ. փետրվարի 1-ի շրջաբերական նամակով Ներքին գործերի ժողկոմ Իսահակ Դովլաթյանը խստորեն պատվիրում է Հայաստանի գավառային հեղկոմներին ստեղծել բոլոր նպաստավոր պայմանները Ամերկոմի գործունեության համար[26]*:*

1921 թ. նոյեմբերի 21-ին իր ծանոթ Հերուկյանին ուղղված նամակում Վ. Տերոյանը հայտնում է. «Այժմ ևս գարձյալ ամերիկացիների մոտն եմ և տանում եմ դպրոցական գործը՝ որպես վերատեսուչ: Մյուս բոլոր բաժանմունքները հանձնեցի չորս ամերիկացիների, որոնք բավական մեծ խանդոտություն գրին մի գործի մեջ, որին իրենք կապված են չատ թուլլ կապերով»[27]*: Նույն անձնավորությանն ուղղված մեկ այլ նամակում գրում է. «(Ամերկոմում – Ռ. Ս.) ինձ մնաց միայն կրթական բաժինը: Կազմակերպել եմ չատ մեծ դպրոցներ Երևանի և Ալ.-պոլի (Ալեքսանդրապոլի, այժմ՝ Գյումրի – Ռ. Ս.)*

[24] *Նույն տեղում, թ. 45:*
[25] *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 171, թ. 4:*
[26] *Նույն տեղում, ֆ. 116, ց. 3, գ. 1, թ. 78:*
[27] *Տե՛ս Դերոյանների ընտանեկան արխիվ:*

մեջ՝ 3500 այտաղ (Երևանում – Ռ. Ս.) և 4200 որբերով այնտեղ (Ալեքսանդրապոլում – Ռ. Ս.)[28]:

1922 թ. Վ. Տերոյանին նշանակում են Ամերիկոմի ուսումնական մասի վարիչ, իսկ ավելի ուշ՝ ուսումնական հաստատությունների վերահսկուչ[29]:

Խորհրդային տարիներին պետական կազմակերպությունների հանձնարարությամբ գրել է մի ծավալուն աշխատություն Ամերիկոմի գործունեության մասին՝ «Միխոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անգրկովկասում» խորագրով, որն անհայտ պատճառներով չհրատարակվեց և մնաց անտիպ:

1930–1931 թթ. աշխատել է ՀԽՍՀ Գրատպատում՝ որպես միջազգային գրքափոխանակման բաժնի վարիչ: Այդ պաշտոնում նամակագրական կապ է հաստատում Միխիթարյան միաբանության և նրա պարբերական «Հանդես ամսօրեայ»-ի խմբագրության հետ: Նա հատկապես կարևոր էր համարում Հայաստանում լույս տեսած հայագիտական բնույթի գրականության Միաբանությանը ուղարկելու գործը: 1931 թ. համար կազմված աշխատանքային ծրագրի հուշագրում Վ. Տերոյանն ի թիվս մյուսների նախատեսել էր. «Միխիթարյանների պահանջած 1928–1930 թթ. մեր հրատարակությունները հավաքել և ուղարկել: Միխիթարյանների պահանջած հայերեն ու հայագիտական գրքերը՝ լույս տեսած Միության (Խորհրդային Միության – Ռ. Ս.) մեջ, հավաքել և ուղարկել: Միխիթարյանների ուղարկած գրքերը պահպանել և գիտական մշակման ենթարկել»[30]:

---

[28] *Տե՛ս Դերոյանների ընտանեկան արխիվ. Վ. Տերոյանի նամակը Հերուկյանին*

[29] *ԱԱՃԱ, ԿԳԲ, գ. 440, թ. 16, գ. 3336, թ. 145: Հետագա տարիներին Ամերիկոմի նկատմամբ խորհրդային իշխանությունների վերաբերմունքը կտրուկ փոխվեց. Դա իր արտացոլումը գտավ խորհրդահայ հետազոտողների աշխատություններում: Այսպես, նշված է, որ «Ալեքսանդրապոլում Ամերիկոմի աշխատակիցները ոչ միայն հրահրում էին հոգևորականությանը խորհրդային իշխանությունների դեմ բացահայտ ելույթի, այլև լայնորեն օգտագործում էին որպես լրտեսներ իրենց հետաքրքրող տեղեկությունները ստանալու համար...»: Տե՛ս* Н. А. Аníян, Органы государственной безопасности Советской Армении в период строительства социализма (1920 – 1934 гг.). Е., 1986, с. 177 – 178. *Տե՛ս նաև՝* Ա*ր*ամ*ա*նակ Մ*ա*նուկյան. *Հայ առաքելական եկեղեցու բռնագրաված հոգևորականները 1930–1938 թթ. (քան ՊԱԿ-ի փաստաթղթերի). Ե., 1997, էջ 46–47:*

[30] *Մեզ չի փաստաթուղթը վերագրված է. «1931 թ. համար միջազգային փոխանակման բաժնում նկատի են առնվում հետևյալ գործերը».– տե՛ս Դերոյանների ընտանեկան արխիվ:*

Վ. Տերոյանը, դիմելով ՀՍՍՀ Լուսժողկոմատին, տեղեկացրել է. «Ընթացիկ աշխատանքների ժամանակ պարզվեց, որ մեր գիտական հիմնարկներից ոչ մեկը չունի խորհրդային հրատարակութիւնների ամբողջական կոմպլեկտը»: Այդ բացը լրացնելու համար նա կազմել է 12 կետից բաղկացած առաջարկութիւններ: Վ. Տերոյանը, սակայն, չի բավարարվում միայն ահազանգելով, այլև ձեռնամուխ է լինում գրքերի ցուցակներ կազմելու, որով նպատակ ուներ լրացնել Գրապալատի գրադարանում եղած գրականութիւան պակասը:

1931 թ. հունիսի 31-ին Վ. Տերոյանին որպես «անբարեհուսա տարր» ազատում են ՀՍՍՀ Գրապալատում զբաղեցրած պաշտոնից: Լուսժողկոմատը Վ. Տերոյանին աշխատանքի է տեղավորում «Նոր ուղի» ամսագրի խմբագրութիւնում որպես տեխնիկական քարտուղար: Ինչպես գրում է Վ. Տերոյանը իր ՆԳԺԿ-ին ուղած ցուցմունքում. «Ծառայեցի ընդամենը հինգ օր («Նոր ուղի» ամսագրի խմբագրութիւնում – Ռ. Ս.), որից հետո ձերբակալվեցի»[3]:

Բանտարկութիւնից ազատվելուց հետո, 1933 թ. նա դիմել է Լուսաշխին կից գիտաշխատողների սեկցիայի նախագահութիւանը խնդրելով իրեն ընդունել որպես գիտաշխատող: Ընտանիքի գոյութիւնը պահպանելու համար Վ. Տերոյանը ստիպված է եղել աշխատել նաև որպես սրբագրիչ Պետհրատում և վարել օտար լեզուների մասնավոր դասեր:

* * *

Առանձին հետաքրքրական է Վ. Տերոյանի գիտական ժառանգութիւնը, որը մինչև օրս, չնչին բացառութիւամբ, հնարավոր չի եղել ներկայացնել մեր հասարակութիւանը: Նրա գիտական աշխատութիւններից հիշատակելին են. «Բերգսոնի էվոլյուցիոն թեորիա»-ի մասին, «Կանտի պրագմատիզմը», «Սոցիոլոգիայի տեղը փիլիսոփայութիւան մեջ», «Պանգերմանիզմը և պատմափիլիսոփայութիւններ», «Սոցիալիզմ և Սոցիալիզմ», «Intuition և Einfüng որպես գեղարվեստական մոնիզմի հիմունքը», «Ռեգուլատիվ գաղափարները և գաղափարների ռեգուլատիվ դերը կյանքի մեջ»: Թարգմանել է փիլիսոփայութիւան դասականներին. Իմ. Կանտ՝ «Զուտ բանականութիւան

[3] ԱԱԾԱ. ԿԳԲ. գ. 440. թ. 11. 54: Փաստաթուղթը թվագրված է 1930 թվականով, որը հավանաբար տպագրական սխալ է, քանի որ Վ. Տերոյանի ձերբակալութիւնը տեղի է ունեցել 1931 թ.:

քննադատությունն», «Պրոլեգոմեններ», Ռընե Դեկարտ՝ «Քննախոսություն մեթոդի մասին» (լույս է տեսել 1968 թ. հետմահու), Սպինոզա՝ «Էթիկա», Հեգել՝ «Ընդ. երևութաբանությունը», Բերքլոն՝ «Մարդածագործող էվոլյուցիան», Վինդելբանդ՝ «Փիլիսոփայության պատմությունն», Հիպոլոլիտ Տենն՝ «Գեղարվեստի փիլիսոփայությունը» (լույս է տեսել 1935 թ., երբ Վ. Տերոյանը ձերբակալված էր, և այդ պատճառով թարգմանչի անունը հանվեց արդեն տպված գրքից): Ի դեպ, Հ. Տենի վերը նշված աշխատությունից մի գլուխ ժամանակին թարգմանել է Արշակ Զոպանյանը:

Վ. Տերոյանը թարգմանել է նաև գեղարվեստական գրքեր. Անատոլ Ֆրանս՝ «Կարմիր շուշանը» (լույս է տեսել 1946 թ., հետմահու), Ռյուսկո Իրանյով՝ «Պիեր դը Լյուն», Հանրի Բարբյուս՝ «Կրակը» (լույս է տեսել 1935 թ.) և այլն:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Վ. Տերոյանի հարաբերությունները Հ. Բարբյուսի հետ: Նրանց ծանոթության չորժատիճը եղել է Ասքանազ Մուրացյանի հանձնաժողովը՝ ֆրանսերենից թարգմանել Հ. Բարբյուսի «Կրակը» երկը:

Երբ 1927 թ. ամռանը գրքի թարգմանությունն արդեն հիմնականում պատրաստ էր, Վ. Տերոյանը գիմում է հեղինակին՝ մի շարք հարցերի շուրջ պարզաբանումներ ստանալու նպատակով: Բանն այն է, որ Հ. Բարբյուսն իր ստեղծագործություններում հաճախ օգտագործել է ժարգոնային արտահայտություններ, գինվորական կենցաղին հատուկ խոսակցական դարձվածքներ և այլն:

Կարելի է ենթադրել, որ թարգմանչի և հեղինակի միջև աշխույժ նամակագրություն է եղել, քանի որ Դերոյանների ընտանեկան արխիվում պահպանվել են երկու նամակ Հ. Բարբյուսից և երեք նամակ Վ. Տերոյանից:

1929 թ. Վ. Տերոյանն ավարտում է թարգմանությունը և ձեռագիրը հանձնում է Պետհրատին, որի գեկավարությունը, սակայն, ձգձգում է տպագրությունը: Ի վերջո, գիրքը լույս է տեսնում միայն 1935 թ.: Վ. Տերոյանը չատագում է ուրախալի լուրը հաղորդել այդ ժամանակ Մոսկվայում գտնվող Հ. Բարբյուսին: Վերջինս նույն թվականի օգոստոսի 14-ին Մոսկվայից ուղարկած նամակում գրում է. «Իմ թանկագին բարեկամ, ես բերկրանք զգացի լսելով, որ իմ «Կրակ» գրքի թարգմանությունը պետք է լույս տեսնի Հայաստանում: Ես չատ կցանկանայի ունենալ մեկ-երկու օրինակ այդ թարգ-

մանութ յունից»: Հ. Բարբյուսը խնդրում է գիրքն ուղարկել Մոսկվա: Մենք չկարողացանք պարզել, թե նշանավոր գրողը ստացավ թարգմանությունը, թե ոչ: Բանն այն էր, որ 1935 թ. օգոստոսի վերջին Հ. Բարբյուսը մահանում է Մոսկվայում[32]:

Վ. Տերյանի գիտակազմակերպչական գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում Հայ փիլիսոփայական ընկերության ստեղծելու ծրագիրը, որի 10 կետից բաղկացած կանոնագրության նախագծում հետևյալն է ասված. «Ընկերության նպատակն է փիլիսոփայական գիտությունների և խնդիրների ուսումնասիրությունը և համապատասխան գրականության մշակումը հայոց լեզվով: ...Այդ նպատակին հասնելու համար ընկերությունը հատուկ ժամանակ է նվիրում փիլիսոփայական բառարան կազմելուն հայոց լեզվով: Մեծ փիլիսոփաներին թարգմանում է հայոց լեզվով»[33]:

1935 թ. ապրիլի 27-ին Վ. Տերյանը ՀԽՍՀ ժողկոմխորհրդին է ներկայացրել հայերեն-գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով փիլիսոփայական բառարան հրատարակելու որոշման նախագիծ: 1931 թ. Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հանձնարարությամբ պատրաստում է հայերեն–գերմաներեն–ֆրանսերեն լեզուներով 22000 բառ ընդգրկող փիլիսոփայական բառարան: Միաժամանակ մշակում է ծրագիր՝ 80000 բառ ընդգրկող գերմաներեն–հայերեն բառարան կազմելու համար: Եղել է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի փիլիսոփայական տերմինաբանական հանձնաժողովի աշխատակից:

Վ. Տերյանը Պետհրատի վարչության նախագահին ուղղված պիտումում իր մտահոգությունն է հայտնում տպագրվող դասագրքերի բովանդակության և որակի վերաբերյալ և առաջարկում է իր օգնությունը. «Մեծ ուրախությամբ ես կուզեի իմ համեստ ուժերը տրամադրել ուսումնասիրելու և ծրագրելու, թե ինչպես կազմակերպել ստաբիլ դասագրքերի արտադրության գործը հետագայում, թե-կուզ եկող տարվա համար»[34]: Նա միաժամանակ նյութեր է նախապատրաստել ապագայում հրատարակվող Հայկական հանրագիտարանի համար:

---

[32] Վ ա ր վ ա ռ ա Գ ր ի գ ո ր յ ա ն. Հ. Բարբյուսի նամակը «Կրակի» հայ թարգմանչին.– «Գրական թերթ», 8 ապրիլի 1977, №14: Ֆրանսերենից թարգմանել է Վ.արվառա Գրիգորյանը:

[33] Տե՛ս Դերյանների ընտանեկան արխիվ:

[34] Նույն տեղում:

Դեռևս 1916 թ. Թիֆլիսում Վ. Տերոյանը գրում է բավականին հետաքրքիր մտքեր պարունակող մի հոդված՝ «Մրագիր վերաշինության» վերնագրով: Բերենք մի քանի հատված այդ հոդվածից. «Պետք է ստեղծել ամենից առաջ հասարակական լուրջ, տևական և ալ՛անդապահ մի հսկողություն մեր բոլոր գործերի վրա, որոնք ազգային բնույթ են կրում: ... Դուրս պետք է մնան, հեռո՛ւ յոթն հորիզոններով բոլոր նրանք, որոնք հայ ժողովրդի կյանքի և ապագայի դարբնման գործին մոտենում են իբրև թերուսներ և սիրողներ:... Հայասարարության համար, ռևկլամի համար գործող ինչքան անհատներ կան և ընկերություններ: Պինդ պիտի փակել նրանց առջև բոլոր դռները:... Գործի սերը, պարտականության գիտակցությունը և հայ ժողովրդի ապագան դարբնելու սրբազան իղեալները պիտի լինեն միակ տեսակետները, որոնք վճռական և հրամայական նշանակություն են ունենալու...: Պատմություն ունեցող, անցյալ ունեցող ժողովուրդները շատ դժվարությամբ են կարողանում մի անգամ՝ վերականգնել, գոնե պատկերացումը իրենց ազգային կյանքի:...եթե մենք ազգովին դեր պիտի ունենանք վերաշինության գործի մեջ, այն ժամանակ հարց է առաջ գալիս՝ պիտի աշխատել ո՞ր ազդեցություններն ավելի քաջալերել և ընդգրկել՝ անհատական, թե համայնական»[35]:

Ապա, Վ. Տերոյանը ներկայացնում է արդյունաբերության, լուսավորության, գյուղատնտեսության վերաշինության, իր կարծիքով նախընտրելի տնտեսաձևը. «Կոպերատիվոնը կազմելու է մեր տնտեսական վերաշինության հիմնական սկզբունքը... Վերաշինությունը լինելու է ազգային ջանքերով»[36]:

Իր գրառումներում Վ. Տերոյանն անդրադառնում է հողային հարցին և բնապահպանական խնդիրներին: Նա հատկապես կենտրոնացել է լուսավորության հիմնահարցերի վրա, և ընդգծել է դիտության և տնտեսության կապը: Վ. Տերոյանը գրում է. «Շատ ցանկալի է, որ դիտությունը ձեռք մեկնի տնտեսությանը:... Հինը, որ պնում է, դեռ ապրում է մի որոշ ժամանակ էլ նորի մեջ: Պիտի պինդ բռնել հնության այդ թանկագին վայրկյանները, լինեն հիշատակներ, կամ հիշատակարաններ, մի քար կամ փայտ, որ կարող է որևէ կերպով մեր արյունոտ անցյալը կենդանի պահել. երկյուղածութ-

[35] Տե՛ս նույն տեղում:
[36] Նույն տեղում:

յամբ պիտի հավաքել, արձանագրել, յուսանկարել և պահպանել, ինչ որ մի խոսք, մի բառ կարող է պատմել մեզ և մեր հետնորդներին:... Պետք է նորոգել մեր մեծ պատմական հուշարձանները... Պետք է որ վերջապես մեր ժողովուրդը; անդամ մեր մտավորականությունը մի քիչ ավելի խորացնե իր կյանքն ու աշխարհայացքները, մի քիչ կապոզանա կտրվել առօրյայից և կապվել ավելի մեծ ծավալով ժամանակների ու տարածությունների հետ:... Ժամանակն է վերջապես մեր նորագույն պատմության մեջ կապմակերպել ապագային կամքը» (ընդգծումը մերն է — Ռ. Ս.)[7].

Գանվելով մեծ ողբերգության ապրած հայ ժողովրդի կյանքում կատարվող փոփոխությունների ժամանակաշրջանում՝ վ. Տերոյանի մտահոգության առարկան են եղել հայ գաղթականների և որբերի խնդիրները: Նրա մտորումների արդյունքն է դարձել «Գաղթական հարցեր» անտիպ հոդվածը, ուր նա գրում է. «Ամեն հասարակարգի մեջ էլ գոյություն են ունեցել աղքատներ և նպաստընկալներ, բայց նպաստընկալ ժողովուրդ, միայն գաղթականությունն է ճանաչում:... Նպաստընկալ ժողովուրդ, մի անկարելիություն է, մի հասարակագիտական անհեթեթություն: Ազգային կյանքի մահն է դա, և անպատվություն: Բարեգործություններ պետք է թողնի մի քանի աթոռներ և նստի դուռ ազգային պարտականության հոգսերի վրա: Այդտեղից նա կկազմակերպե ոչ թե սովամահների և հիվանդների նպաստարաշխություններ և խնամակալություններ, այլ պարզապես ազգային քանդած անտեսության և հասարակարգի վերաշինություն: Աշխատանքի պատիվը պետք է արմենանա ոչ միայն նպաստընկալների, այլև նպաստաբաշխների մեջ: ... Գլխավորն է մենք կարողանանք ասել — մենք ազգ ենք, մեր ազգը նպաստընկալ ազգ չէ: ... Աշխատանքի կազմակերպությունը, ահա կոնկրետ առաջարկություններից մեկը»[8]:

Խորհրդային Միությունում հետզհետե ծավալվող բռնություններն իրենց արտահայտությունն են գտել վ. Տերոյանի անտիպ պատմափիլիսոփայական մտորումներում և հրապարակախոսական գրվածքներում: 1931 թ. ապրիլի 11-ին թվագրված իր գրծերից մեկում վ. Տերոյանը հետևյալն է գրում. «Ահա երկրորդ տասնամյակն ենք մտնում անհուսալի վախճանով, ինչպես առաջինն էր», կամ «Ա-

[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում:

սում են, ով որ իր ձեռքում սվին ունի, նա ամեն բան կարող է անել, բացի նրա վրա նստելուց, սակայն մեր տերերը հաղթական ինքնամոռացությամբ նստել են սվինների վրա և ձեռքներին էլ սվին ունեն»[39]:

* * *

Խորհրդային իշխանության տարիներին Վ. Տերոյանը ձերբակալվել է չորս անգամ: Առաջին ձերբակալությունը տեղի է ունեցել 1922 թ. օգոստոսի 4-ին: Նա և 17 հոգի ևս, ամբաստանվել են ՀՅԴ անդամ լինելու և Թիֆլիսում Ջեմալ փաշայի սպանությանը մեղսակից լինելու մեջ[40]:

1922 թ. օգոստոսի 7-ին բանտից Վ. Տերոյանը երկու դիմում է ուղարկում: Առաջինը հասցեագրված էր ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Աշոտ Հովհաննիսյանին, իսկ երկրորդը՝ ՀԽՍՀ լուսավորության ժողկոմ և ՀԽՍՀ ժողկոմխորհրդի նախագահի տեղակալ Ասքանազ Մռավյանին: Վ. Տերոյանը խնդրում էր նրանց միջամտել, և ինչպես գրում էր դիմումում. «Երեք օրից ի վեր ինձ բանտարկել են Ջեկայում (Արտակարգ հանձնաժողովում – Ռ. Ս.), տաբօրինակ մեղադրանքներով»[41]: Հետաքննության ընթացքում չի հաջողվում անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերել, ուստի Վ. Տերոյանն ազատ է արձակվում:

Երկրորդ անգամ նա ձերբակալվում է 1924 թ. հոկտեմբերի 6-ին: Այս անգամ Վ. Տերոյանն ամբաստանվում է Ամերիկոմի Լենինականի մասնաճյուղում դաշնակցական գործունեություն ծավալելու մեջ: Նրա հետ նույն մեղադրանքով կալանվում են Ամերիկոմի ևս երկու աշխատակիցներ՝ Մկրտիչ Լոռեցյանը և Վարդան Մաքսապետյանը: Վ. Տերոյանի մասով ներկայացված մեղադրական եզրակացության մեջ նշվում է, որ նա «որպես դաշնակ հայտնի է վաղուց: Նա մասնակցություն է ունեցել Թուրքիայում տեղի ունեցած անկարգություններին, որի համար պատժվել է Թուրք (ական – Ռ. Ս.) իշխանությունների կողմից[42]: ... Ամերկոմում մշտապես գտնվելով պա-

[39] Նույն տեղում:
[40] ԱԱԾԱ, ԿԳԲ, գ. 3336, թ. 130:
[41] Նույն տեղում, թ. 49–50:
[42] ԱԱԾԱ, ԿԳԲ, գ. 875, թ. 44: Վ. Տերոյանն օսմանյան Թուրքիայում «հակապետական» կամ որևէ այլ գործողության համար չի դատապարտվել: Հավանաբար գործը վարող քննիչ Միխայլովը չվոխել է Վարագտատին իր եղբոր՝ Վազգենի հետ կամ էլ փաստերը կեղծել է:

տասնամյակում պաշտոններում[43] Դերոյանը (Տերոյանը – Ռ. Ս.) համակողմանի աջակցություն է ցուցաբերել Դ/կ (Դաշնակցություն կուսակցության – Ռ. Ս.) ընդհատակյա աշխատանքներին, իր երաշխավորություններով և հանձնարարականներով Ամերիկոմում աշխատանքի ընդունել Դ/կ անդործ անդամներին: Բացի այդ, նա անձամբ մասնակցություն է ունեցել հակախորհրդային աշխատանքում, սակայն այնպես հմուտ և զգույշ, որ դժվար է հաստատել փաստերով»[44]:

Ջնայած, որ ամբաստանյալները, այդ թվում Վ. Տերոյանը, կարգանախապես մերժել են իրենց հարուցված մեղադրանքները, գործը քննող լիագոր Մ. Միխայլովը 1925 թ. ապրիլի 15-ին առաջարկում է նրանց դատապարտել հինգ տարի աքսորի[45]: Այս վճիռը, սակայն, 1925 թ. հուլիսի 21-ին բեկանվում է Անդրֆեդերացիայի Պետական քաղաքական վարչության կողմից[45], և ամբաստանյալներն ազատ են արձակվում[46]:

Այս ձերբակալության մանրամասնություններին մասին տեղեկանում ենք Վ. Տերոյանի 1925 թ. հունիսի 15-ի Անդրֆեդերացիայի կենտրոնկոմի նախագահին ուղղված բողոք–դիմումից, որը նա ուղարկել էր Թիֆլիսի Մետեխի ամրահռչակ բանտի հիվանդանոցից: Վ. Տերոյանը գրում է, որ ինը ամիս է ինչ բանտարկված է և ոչ մի հետաքննություն չի կատարվել: Իսկ Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ս. Մելիք–Հովսեփյանին հղած իր բազմաթիվ դիմումները մնացել են անպատասխան: Ի վերջո, Ս. Մելիք–Հովսեփյանը բարեհաճել է ներկայացնել այն «ծանրակշիռ փաստերը», որոնց հիման վրա կատարվել է ձերբակալությունը:

Ինչպես նշում է իր դիմումում Վ. Տերոյանը, այդ փաստերը հետևյալն էին.

«ա) 1898 թվին, 28 տարի առաջ Տաճկաստանում (Թուրքիայում – Ռ. Ս.) սպանված եղբայրս (Վազգենը – Ռ. Ս.) եղել է դաշնակցական:

բ) 1922 թվին իմ բազմաթիվ աշխատակիցների շարքին պատվելիս է եղել մի դաշնակցական կին:

---

[43] *ԱԱՀԱ, ԿԳՖ, գ. 875, թ. 44 հակ., 76:*
[44] *Նույն տեղում, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 1191, ց. 4, գ. 34, թ. 25:*
[45] *Նույն տեղում, թ. 67:*
[46] *ՀԱԱ, ֆ 1191, ց. 4, գ. 34, թ. 79:*

դ)Ինձ բանտարկած ժամանակ նույնպես, իմ հարյուրավոր աշխատակիցների մեջ գտնվել են երկու նախկին դաշնակցականներ:

դ)Ես ճանաչել և հարաբերություններ եմ ունեցել լավ համբավի դաշնակցական գործիչների հետ, սկսած 1905 թվից մինչև 1920-ը, թեև ոչ պարզ ծանոթության հարաբերություններ»[47]:

Երրորդ անգամ Վ. Տերոյանը ձերբակալվել է 1931 թ. օգոստոսի 5-ին և ամբաստանվել է լրտեսության մեջ: Հետաքննության նյութերից երևում է, որ Վ. Տերոյանն իր «լրտեսական» գործունեությունը սկսել է 1918 թվականից: Նման անհիմն մեղադրանքի համար ոտի է հանդիսացել 1918 թ. ամռանը մի խումբ հայ մտավորականների կողմից Թիֆլիսում հիմնած Հայ-գերմանական ընկերության: Նրա հիմնադիրների թվում էին՝ Ստեփան Կանայանը, Մանուկ Աբեղյանը, Վարդգես Տերոյանը և ուրիշներ՝ մոտ 20 հոգի: Հարցաքննության ժամանակ Վ. Տերոյանը հետևյալ պարզաբանումն է տվել. «1918 թ. կեսերին Թուրքերի տեղ Թիֆլիս մտան գերմանացիները, հայ ինտելիգենցիայի, գլխավորապես նախկին գերմանական (հայ) ուսանողների (նկատի ունի տարբեր տարիներ Գերմանիայում ուսանած հայերի — Ռ. Ս.) չրջանում միտք հղացավ կազմել հայ-գերմանական ընկերություն, կուլտուր-քաղաքական մերձեցման համար հող նախապատրաստելու նպատակով... Համաշխարհային պատերազմի պատմական մոմենտում, երբ գերմանական — Ռ. Ս.) բանակները ոչ մի ֆրոնտում լուրջ պարտություն չէին կրել և բոլոր հանրապես Կովկասյան ֆրոնտում, հակառակ իրենց դաշնակից թուրքերի ցանկության իրենք էին մտնում Թիֆլիս, արգելում թուրքերի մուտքն այնտեղ — գերմանական օրիենտացիայի այս նպաստավոր պայմաններում, ասկայն, հայ ինտելիգենցիայի համար բավական հանդուգն մի նախաձեռնություն էր հիմնադրությունը»[48]:

Վերը նշվածը վկայում է ոչ թե հայ մտավորականության, մասնավորապես Վ. Տերոյանի «լրտեսական» գործունեության մասին, այլ նրանց կողմից գերմանացիների և թուրքերի մեջ եղած հակառակությունները ի նպաստ հայ ժողովրդի օգտագործելու մասին:

Այս ձերբակալությունից հետո խորհրդային անվտանգության ծառայությունների հետաքրքրությունը Վ. Տերոյանի անձի նկատ-

---

[47] *Վ. Տերոյանի 1925 թ. հունիսի 15-ի բոլոք-գիմումի պատճենը Անգլիական Սեծի Հանրապետության Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահին. տես Գերոյանների բնտանեկան արխիվ:*

[48] *ԱԱՄՄ. կԳԲ, գ. 440, թ. 71 հակ., 72:*

մամբ բավականին ուժեղացավ: Քրեական գործի նյութերում պահպանվում են որոշ փաստաթղթեր, որոնք վկայում են վերը նշվածը: Ուստի, օպերատիվ նկատառումներով 1932 թ. հունվարի 25-ին Վ. Տերոյանն ազատ է արձակվում[49]*: Նրա նկատմամբ ուժեղացվում է գործակալական հսկողությունը:*

Բանտարկությունից վերադառնալուց հետո, հավանաբար կանխազգալով մոտալուտ ձերբակալությունը, Վ. Տերոյանը փորձում է պաշտպանություն գտնել Հ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի մոտ: Վ. Տերոյանի հարազատների վկայությամբ, նա եղել է Ա. Խանջյանի ուսուցիչը և եղել են մտերիմներ, ճանաչել է Ա. Խանջյանի հորը՝ Ղևոնդին: Այս հանգամանքով է գալիս Վ. Տերոյանի նամակն՝ ուղղված Ա. Խանջյանին. «Ընկեր Խանջյան! Ավարտելով իմ հերթական բանտարկությունը, մեծ ցանկություն զգացի, որ նման դեպքերում, առանց մեծ դժվարություններ հարուցելու, Կենտկոմի Քարտուղարն ինձ ընդունում է երկարատև խոսակցության: Այս անգամ, հույս ունեմ, որ մի առանձին դժվարություն չպիտի ներկայանա այդ ավանդական սովորությունը դործադրելու նույնությամբ, ուստի խնդրում եմ բարի եղեք նշանակել տեղը և ժամանակը պարտուպահանջի խնդիրներն ամենակարճ ձևով վերջացնելու համար և որպեսզի ասեմ, ինչ որ գրել չպիտի կարողանամ»[50]*:*

Վ. Տերոյանի վերջին և ճակատագրական ձերբակալությունը տեղի է ունենում 1935 թ. օգոստոսի 17-ին: Եթե նախորդ երեք ձերբակալությունների ժամանակ նրան ճիգերի գերագույն լարումով, և հավանաբար Ա. Մռավյանի, Ա. Հովհաննիսյանի և գլխավորապես Ա. Խանջյանի աջակցությամբ, հաջողվել էր ապացուցել իր անմեղությունը, այս դեպքում, ստալինյան տեռորի պայմաններում դա անհնար էր: Կալանվելուց հետո Վ. Տերոյանին ներկայացնում են հետևյալ մեղադրանքները.

1. ՆԳԺԿ-ին չի հայտնել նախկին գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանի միապետական հայացքների մասին:

2. Աքսորավայրից վերադարձած, ՀՅԴ նախկին անդամ Հռիփսիմե Մուշեղյանի կողմից Հայաստանում դաշնակցական կազմակերպությունների վերականգնման փորձերի մասին:

---

[49] Նույն տեղում, թ. 84:
[50] Տե՛ս Դերոյանների ընտանեկան արխիվ:

3. Երիվանյան Լեո Կամսարի (Արամ Թումանյան) հակախորհրդային հայացքների մասին[51]:

Հարցաքննությունների ժամանակ Վ. Տերոյանը հերքել է բոլոր մեղադրանքները: Նա հայտնել է, որ գեներալ Մ. Միլիկյանի հետ ծանոթացել է 1924 թ. Լենինականում, ուր վերջինս աշխատում էր Ամերիկոմի տեղի մասնաճյուղում: Երևանում եղել են հաճախումներ, ունեցել են ջերմ, բարեկամական հարաբերություններ, սակայն հակասովետական բնույթի զրույցներ չեն վարել: Հ. Մուշեղյանի հետ վարած խոսակցությունները եղել են առօրյա թեմաներով, և դրանք չեն առնչվել ՀՅԴ-ի ընհատակյա գործունեության հետ: Իսկ ինչ վերաբերում է Լեո Կամսարին, ապա իրենք մանկության ընկերներ են եղել և դրանով է բացատրվում իրենց մտերմությունը:

Սակայն կիրառված բռնությունների պատճառով Վ. Տերոյանը «խոստովանել» և «հաստատել» է հարուցված մեղադրանքները[52]:

1936 թ. հունվարի 4-ին ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին կից հատուկ խորհրդակցությունը Վ. Տերոյանին դատապարտել է երեք տարվա բանտարկության, որը նա պետք է կրեր Սիբիրում՝ ուղղիչ աշխատանքային ճամբարում:

Ըստ պաշտոնական տեղեկանքի, Վ. Տերոյանը վախճանվել է 1938 թ. փետրվարի 6-ին, 51 տարեկան հասակում Մարիինսկում, ԽՍՀՄ - Նովոսիբիրսկի մարզի Օլովո-Ռոզովսկայան բաժնի համակենտրոնացման ճամբարում (Сиблаг)[53]:

Դերոյանների ընտանեկան արխիվում պահպանվել է Վ. Տերոյանի՝ Երևանի բանտից ուղարկված երկտողը, ուր նա կնոջը՝ Մարիամին, խնդրել է բերել մի չարք իրեր, որոնք անհրաժեշտ են ճամբարի հանապարհին և համակենտրոնացման ճամբարում: Երկտողի վերջին հատվածը, որը չնջվել էր, հավանաբար, բանտի դրաքննիչի կողմից, դժվարությամբ ընթերցվում են հետևյալ տողերը. «Երևանցիներին չբերես տանելու: Նրանց կամաց-կամաց կհաշտեցնես այն մարդի հետ, թե պապան չկա այլևս»:

Դերոյանների բնատնիրին սպասում էր մեկ ծանր հարված ևս: Ապօրինամոլության ամբաստանությամբ ձերբակալվում է Վ. Տերոյանի կնոջ՝ Մարիամի եղբայրը՝ անվանի վիրաբույժ, Հայաստանում

---

[51] ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 36, ֆ. 571, ց. 5, գ. 158, թ. 17:
[52] Նույն տեղում, ց. 4, գ. 2081, թ. 94:
[53] Նույն տեղում, թ. 54, 56ա, II մաս, թ. 24:

ժամանակակից վիրաբուժության հիմնադիրներից, պրոֆեսոր Հաբրիել Միրզա-Ավագյանը (1879–1938): Ազգայնամոլության ամբաստանությունը լոկ առիթ էր նրան ձերբակալելու համար: Հ. Միրզա-Ավագյանը այն երեք բժիշկների թվում էր եղել, որոնք հրաժարվել էին վկայել Ա. Խանջյանի «ինքնասպանության»: Դերոյաննեբի ընտանիքը զրկվում է իր վերջին պաշտպանից ու հովանավորից: Այժմ նրանք համարվում էին «երկկողմանի ժողովրդի թշնամիներ»:

Վ. Տերոյանի տիկնոջը՝ Մարիամին, ամուսնու և եղբոր ձերբակալության կապակցությամբ իր կարեկցանքն ու աջակցությունն է հայտնում գեներալ Մ. Սիլիկյանի կինը՝ Նատալյա Ալեքսանդրովնան, Թիֆլիսից գրած իր նամակում[54]:

Ի. Ստալինի մահից և նրա մի շարք հավատարիմ կամակատարների ձերբակալությունից հետո միայն հնարավոր դարձավ վերականգնել 1930-ական թվականներին անհիմն բանտարկվածների բարի անունը:

ՀԽՍՀ դատախազությունը, հիմք ընդունելով Վ. Տերոյանի զսաեր՝ Ն. Դերոյանի 1954 թ. գրված դիմումը, հարուցում է քրեական գործ և 1955 թ. մարտի 4-ից մինչև 1956 թ. մարտի 12-ը հետաքննություն կատարում, որի արդյունքում Տերոյանի ընտանիքը ստանում է պաշտոնական գրություն հետևյալ բովանդակությամբ. «ՀԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի Դատական կոլեգիան 1956 թ. փետրվարի 15-ի իր որոշման համաձայն, Վարազդատ Դերոյանի նկատմամբ ՆԳԿ-ի հատուկ խորհրդակցության 1936 թ. հունվարի 4-ի վճիռը չեղյալ է հայտարարել և ապացույցների բացակայության պատճառով գործը կարճել»:

Մեր հետազոտության ընթացքում ուսումնասիրել ենք Վ. Տերոյանի դեմ հարուցված չորս քրեական գործերը: Հարկ ենք համարում կանգ առնել մի շարք փաստերի վրա:

Վ. Տերոյանի քրեական գործի վերաքննությունը կատարում է Անդրկովկասյան ռազմական օկրուգի դատախազի օգնական, փոխգնդապետ Ջանդիրովը: 1955 թ. ապրիլի 20-ին կազմած տեղեկանքում նա հետևյալ փաստն է առանձնացրել. «Գործի (1935 թ. հարուցված քրեական գործի – Ռ. Ս.) առանձին ծրարում կցված էր ՆԳԺԿ-ի նախկին ղեկավար աշխատակիցներ Դոգլիձևի և Կոբուլովի

[54] *Տե՛ս Դերոյանների ընտանեկան արխիվ:*

դրավոր հրամանը Հայկ. ԽՍՀ-ի ՆԳԺԿ-ին՝ վարազդատ Դերոյանին (Տերոյանին – Ռ. Ս.) հետաքննության նյութերով վարկաբեկելու անհրաժեշտության մասին (ընդգծումը Ջանգիրովինն է – Ռ. Ս.) և իրենց այդ նյութերն ուղարկելու մասին»[55]: Թե ինչն է եղել ՆԳԺԿ - բարձրաստիճան ղեկավարների այսչափ «չհագրգռվածության» պատճառը Վ. Տերոյանի անձի հանդեպ, մնում է անհայտ: Հավանաբար, այս հարցի պատասխանը կարելի է գտնել Վ. Տերոյանի վերաբերյալ Ս. Գոգլիձեի և Հ. Կոբուլովի հրամանով առանձին կազմված №235958 քրեական գործի նյութերում[56], որը թերևս գտնվում է կամ Մոսկվայի, կամ էլ Թբիլիսիի նախկին ՊԱԿ-ի արխիվներում:

Վ. Տերոյանի բարի անունը վերականգնելու գործում իրենց մասնակցությունն են ունեցել նրա հարազատները ու ընկերները: Վերջիններիս թվում են եղել Գրիգոր Զուբարը (1888–1962), որը 1920–1924 թթ. ղեկավարել է ՀԽՍՀ արդարադատության ժողկոմի տեղակալի պաշտոնը և բանասեր, հայագետ, արևելագետ ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը (1893–1970) և ուրիշներ:

Մեր կողմից ներկայացված փաստաթղթերի և նյութերի ժողովածուն ընդգրկում է Վ. Տերոյանի կյանքի, հասարակական ու գիտական գործունեության մի մասը: Դեռևս զգալի թվով փաստաթղթեր և նյութեր չարունակվում են մնալ անտիպ: Մեր հետագա հետազոտությունների ընթացքում կփորձենք լրացնել այդ բացը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող նյութերի և փաստաթղթերի ճնշող մասը անտիպ է, տրամադրված է Դերոյանների ընտանիքի կողմից: Փաստաթղթերի մի մասը քաղվել է Հայաստանի ազգային արխիվի զանազան ֆոնդերից ու ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության արխիվից: Հրապարակվում են առաջին անգամ: №11 փաստաթուղթը առաջին անգամ տպագրվել է ռուսերեն (տե՛ս ԲՀԱ, 1991, №1–2, էջ 343–349), իսկ նույնի հայերեն բնօրինակը, ինչպես և №5, 7 և 8 փաստաթղթերը՝ տե՛ս ՊԲՀ 2003, №2, էջ 276–293: Փաստաթղթերի և նյութերի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1887–1956 թթ.: Փաստաթղթերը հրապարակելիս մեր կողմից պահպանվել են դրանց բնագրային վերնագրերը, ինչպես նաև հեղինակի կողմից գրված ոչ բառերի գրելաձևը: Բոլոր ընդգծումները և կախման կետերը հե-

---

[55] ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, II մաս, թ. 5:
[56] Նույն տեղում, II մաս, թ. 23:

դինակինն են. մեր կողմից արվող միջամտությունները նվում են փակագծով:

Վ. Տերոյանի որոշ դիտական հոդվածներ թերի են, որովհետև 1931 թ. ձերբակալման ժամանակ բռնագրավել են նրա բոլոր աշխատությունները և 1932 թ. ազատվելուց հետո միայն նա կարողացել է ձեռագրերի որոշ մասը հետ ստանալ: Նկատի ունենալով, որ այդ աշխատությունները հետաքրքրություն են ներկայացնում, մենք նպատակահարմար գտանք դրանք ևս ընդգրկել ներկա ժողովածուում:

Մենք փորձեցինք, առաջին անգամ լինելով, ներկայացնել մատվորական-գործչի, անբասիր հայրենասերի կյանքն ու գործը՝ նպատակ ունենալով հանրությանը ծանոթացնել նրա դիտական ժառանգությանը: Դա անհրաժեշտ է մանավանդ մասնագետ պատմաբաններին, ինչպես նաև փիլիսոփաներին, որոնք կբացահայտեն Վարագպատ Տերոյանի գործունեության բուն արժեքն ու նշանակությունը առավել հանգամանորեն:

Հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում Դերոյանների ընտանիքին Վարագպատ Տերոյանի անտիպ նյութերը տրամադրելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև Հայաստանի ազգային արխիվի և ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության արխիվի աշխատակիցներին՝ տրամադրած նյութերի համար:

ՌՈՒԲԵՆ ՕՆԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ




Վազգեն
(Տիգրան Տերոյան)




Վարազդատ Տերոյան
(1900 թ. սկիզբ)



Վարազդատ Տերոյանը քրոջ
Զարուհի (Ժենյա) Տերոյանի հետ
Բեռլին, 1911 թ.



Վ. Տերոյանը
1932 թ. բանտից դուրս գալուց
անմիջապես հետո



Վարազդատ Տերոյան
բանտային լուսանկար. 1935 թ.

ՎԱՐԱԶԴԱՏ ՏԵՐՈՅԱՆ
ՊԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մեր Հայրենիքի ապերախտները կվերափոխվեն այն ժամանակ, երբ մեզ մեր միաբը կոպատաներ ապերախտներից».

Վ. Տերյան

ՄԱՍ I

ԳԱՂԹԱԿԱՆ – ՈՐԲ

Երկու բառեր, վշտերի երկու անսահմանություններ:

Մարդու զգայական և իմացական ընդունակությունները երբևէ՞ են այն աստիճանին, որ կարելի լիներ հասկանալ պահպանելի արքայի ցավը և մարած աստղերի վիշտը: Ընտանեկան օջախից կոպատությամբ խլված այդ ապագա մարդկությունը ներկայացնում է մեզ մի ավելի սրբազան և անըմբռնելի վշտի մարմնացում: Կա՞ ավելի վեհափառ կայսրություն, քան հայրենի օջախը, որի ամենահեռին մանրամասնություններից է հյուսված յուրաքանչյուր մանկան հոգին: Եվ կա՞ ավելի մեծ լուսատու աստղ, քան հայրական խրոխտ պատվերը, կամ մայրենի քնքուշ հրամերը:

Մանր փորձություններով և դժնդակ փորձառություններով կազմակերպված մեր ուղեղը հազիվ կարող է բանականության սահմաններին մոտեցնել այն ամենը, ինչ որ այս սարսափելի տարում մենք ապրում ենք: Այդ մատաչոչ գլուխների առջև այս մարդկությունը երբևիցե պիտի կարողա՞նա արդարանալ իր թափած խնամքներով և հոգածությամբ: Կեղծիքի և թերահավատության մի անսպառ օվկիանոս է բուն դրել այնտեղ արդեն:

Այն, ինչ ես կարդում եմ ամեն օր նրանց աչքերում, ոչինչ չի հայտնում իմ այս մարդասպան մտքերից: Բայց մի ավելի սրբազան մեծություն կա նրանց փոքրիկ ամոթխածության մեջ, իրենց ծիծաղի վրա. նրանք ամաչում են, երբ ուրախանում են: Ես ասում եմ, նրանք ամաչում են, որ դեռ մարդ են մնացել: Եվ ներքին ինչպիսի բավականություն են զգում նրանք, երբ դու նրանց պատժում ես. նա իրեն մշտական պատժի արժանի է համարում: Նա գիտե իր վիշտը, նա գի-

տե. որ պետք է միշտ տխուր լինել, և ինչ ամոթալի բան է, որ դեռ մարդ է մնացել դատապարտված ծիծաղող կենդանի լինելու:

Եթե փրկչական 1913 թվականի չեն ու խաղաղ մարդկությունը վերականգներ հանկարծ մոգական մի հարվածով իր ծոցումն ունենալով գաղթական որբերի այս բանակները, նա երբեք կարող պիտի չլիներ այլևս այսքան անպատիվ մարդկություն դառնալ: Պատերազմը միշտ ենթադրել է ավել մահ կամ մահեր, և այդ պատճառով էլ ազդու դեղահատ, հողագնդի չահ ու վնասը փնտրողների համար: Բայց սարսափելի չեն պատերազմի սփռած մահերը, ըստ որում, բոլոր մեռնողների բերնին կարելի է դնել առնվազն համլեայան դիլլեման, մինչդեռ պատերազմը մեզ կյանքեր է բաշխում, որոնք անկարելի ողբերգություններ են լինելու:

Էջմիածինը մեր սպասելիքների մշտական դամբանատան, և որբևրի վախկոտ ու գաղտնի հուսերի ամայի կայարանն է: Ջուր եք դուք ձեզ խաբում, իմ գառնուկներ, սպասելով այնտեղից գալիք ձեր մայրիկին: Այժմեանից արդեն դուք դատապարտված եք դոյության մեծ կռվի մեջ պարտվող բանակների չարքերը խտացնելու: Երանի թե ձեզնից շատերը, նույնիսկ բոլորը, մի օր կարողանային ասել. «այնուամենայնիվ, կյանքն արժե ապրել»:

Բաքու, 28 նոյ[եմբերի] 1915: Վ[արազդատ] Տ[երոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԽՈՍՔԵՐ

Դուք չգիտեք երբեք, թե ինչ է նշանակում գաղթական, ոչ թե ուրովհետև գժվար է հասկանալ այն հոգեկան դրությունը, որի մեջ չես գտնվում, այլ որովհետև մի գաղտնի մտածողություն կա քո մեջ. թե գաղթականը մի երջանկություն ունի, որ դու չունես: Անշուշտ ցավալի է, որ նա կորցրել է ամեն բան և հեռացել է իր հայրենիքից, բայց որ նա կարող էր իր կորցրածի հետ կորսնցնել և իր կյանքը նույնքան հեշտությամբ, որքան իր թաշկինակը, կամ մահճակալը — այս միտքը նախանձ է առաջ բերում քո մեջ, որ դու երբեք չես կարողացել այդքան էժան գտնել քո կյանքը: Ու մարդու մեջ գարթնում է մի անդիմադրելի հրապույր, ավելի էժանացնելու այդ էժան կյանքը...:

* * *

Բայց ժամանակի ընթացքին չէ, որ ես պիտի ապացուցանեմ իմ թանկութիւնը: Այժմեանից ես քեզ կասեմ այնպիսի խոսքեր, որ դու փոշմանես քո այն բոլոր գործերի համար, որոնք չատ խնամով վարագուրում են քո այդ գաղտնի մտածողութիւնը, որովհետև ինչ էլ որ խոսես, ինչ էլ որ անես, չես կարող ապացուցանել, թե դու համոզված ես, որ դու ինձանից չատ ավելի դժբախտ չես: Եղա՞վ մի գաղթական, որ ասեր, թե ես ինչքան չատ դժբախտ եմ, այնքան պերճախոս ձևով և համոզիչ, որքան դու ասացիր քեզպեսներին, թե դու ինչքան ես տանջում այդ դժբախտների դժբախտութիւնից: Եվ քեզպեսները, ավելի չուտ քո յավերն ամոքելու համար որոշեցին օգնել գաղթականներին, որ դու նրանց համար չտանջվես: Ես ծանոթ եմ բոլոր նրանց հետ, որոնք խնամում են գաղթականներին կամ դրանց գործովն են զբաղված. և երբ համեմատում եմ խնամք ավոդներին ատացողների հետ, չեմ կարողանում չտանջվել ավոդների յավերով և տանել ատացողների անտարբերութիւնը՝ ավոդների վշտահոծ զոհաբերութեան և քրտնաջան աղդատիրութեան հանդեպ:

Կար մի ժամանակ, երբ ես արհեստով բարեգործ էի, քանի-քանի անգամներ ես օրհնել եմ իմ Աստծուն, որ ինձ որբեր է ուղարկել, որ աշխարհի վրայից անպակաս է արել այն կարգեր, ուր մուրացկանութիւնը երկրի միակ եկամուտքի աղբյուրն է եղել, և ուր որբութիւնը անհատական սահմաններն անցել է, և ես որբ ապրի մասին եմ խոսել: Այժմ երբ ես գաղթական եմ, դիտեմ, թե ես ինչքան ցավեր եմ ամոքում, ինչքան անգործներ գործի վրա են: Ինչքան չատախոսներ իրավունք ունեն նաև պարտականութիւն չատախոսելու: Ինչքան թերթեր, որ պատավել էին անհամութիւններով, հարստացել են գդայացունց հոգվածներով: Ինչքան գրիչներ, որ ժանգոտել էին, փայլում են այժմ և փայլատակում: Ինչքան հրապարակախոսներ, որ տասնյակ անգամներ գրել էին մկնասպանութեան և ճանճասպանութեան մասին, այժմ կարող են, առանց նյութ որոնելու դժվարութեան, գրել մարդկային դժբախտութիւնների վրա, այնքան արտառուչ, այնքան մոդական լեզվով: Ինչքան հասարակական գործիչներ, որոնք հասել էին վերջապես այն կետին, երբ պիտի լուծին հասվիտյան՝ համոզվելով իրենց հասարակական գաղափարների ոչնչութեան, այժմ թև ու թիկունք են ատացել և հրեղեն լեզու՝ գաղթականութեան հրաշագին այլազանութեան մեջ իրենց սկզբունքներն արդարացնող դևքերի հանդիպելով: Եվ այժմ, երբ ես էլ գրիչ վերցրի, այսինքն հրատարակիչներին անձնատուր եղա, այժմ նման ինձ

թողնեն խոսել, այդ նրա համար է, որ լռիկյայն կասեն, թե հանճարեղ սուտերը միշտ ավելի մեծ արժեք ունեն, քան տափակ ճշմարտութիւնները: Բայց երանի թե չթողնեին, որ խոսեի. անձնատուութիւնը մի անգամ փորձ կարող է լինել, բայց ոչ մշտական փորձութիւն: Ու մտածել, թե ազգային այսքան ներուժ կյանքը պիտի վերջանա մի քանի տարուց, երբ ջնջվեն գաղթականութեան հետքերը, մարդն ակամայից սկսում է կարոտել ապագա գաղթականութիւններին:

Պատմական այս մոմենտին բոլոր ազգերն էլ իրենց հոգեկան ուժերի գերարտադրութեան մեջն են. Ֆրանսիացին իր ամբարված վրեժխնդրութիւնն է պոռթկացնում, անգլիացին իր դիվանագիտական միջոցների հավաքածուն, գերմանացին իր պատրաստվող գերմարդկայնութիւնը, թուրքը դարերով կուտակված և մի րոպե մոռացած իր բարբարոսութիւնը, իտալացին իր կատարելագործած ռեկլամները, ռուսը իր լայնածավալ տարածութիւնները, և այլն, և այլն, իրար գլխի, հա՞յը միայն անմասն պիտի մնար, այսքան բարեպատեհ վայրկյանին, իր հոգին ցուցադրելեն: Եվ ահա, տեսնք, թե ինչքան պատշաճ խոսքեր կային, տասնյակ տարիներով պատրաստված, որ պիտի չարտասանվեին, հայ լեզվից պիտի ջնջվեին, եթե գաղթականութիւնը չլիներ, ինչքա՜ն պատրաստի արցունքներ կային տասնյակ տարիների համբերութիւնից քարացած աչքերի ճոթին, որոնք պիտի չհոսեին, եթե գաղթականութիւնը չլիներ, ինչքան արժեքներ կային, որոնք պիտի ոչնչանային, եթե ...: Ինչքան փոքրութիւններ կային, որոնք երբեք պիտի չմեծանային, ինչքան անուններ կային, որոնց մասին երբեք պիտի չլսեիք, ինչքան սրաներ կային, որոնք երբեք պիտի չբաբախեին, ինչքան լեզուներ, որ պիտի չբարբառեին երբեք, ինչքան աչքեր, որ պիտի չլային, ինչքան գրիչներ, որ պիտի չշարժեին երբեք, եթե գաղթականութիւնը չլիներ:

Ես չգիտեմ, թե ինչպես կատարեցին լեհերը իրենց ազգային ներքին համեմատութիւնը, մի հատվածից մյուսը գաղթած ժամանակ, բայց ես այդ տեսա, տեսնում եմ, և պիտի տեսնեմ այստեղ մեր «երկրորդ հայրենիքում»: Միայն փոքրերը չէին, շատ մեծ էր նաև մեծերի ցավը սրանից առաջ: Ըստ որում ի՞նչպես պիտի մեր մեծ վիպասանը մեզ ասեր՝ թե դուք չունեք ինձպես վիպասան, կամ մեր կաթողիկոսացու մեծ առաջնորդը՝ իր պալատի դռան վրա միայն ցուցադրեր իր փայլուն չորերը և մեծ հասակը իր գաղթական պաշտոնակիցներին, քանի որ մենք չունենք այդ բոլորը. կամ մեր դպրոցների և դպրանոցների տեսուչները ինչպե՞ս պիտի կարողանային իրենց

հարյուրավոր պաշտոնակիցներին մի անգամ ընդմիշտ դռնապանության աստիճանին դցել, և այլն, և այլն, առանց դաղթականության: Համեմատությունը շատ հաջող էր, որովհետև ո՞վ կարող է ասել, թե սխալ է. երկուսն այնպես կհամեմատի չորսին, ինչպես ուրը՝ տասնվեցին:

Երբ ես որոշեցի «Գաղթականական պատմագրություն» իմ դրքից այս մի կտորը հրատարակության հանձնել այս օրերին իսկ, երբեք չզեկավարվեցի գործնական նպատակներով, որովհետև, եթե իմ գաղթական եղբայրներն սրանից օգուտ ստանան, ինչ որ շատ մեծ պարտաքս պիտի լիներ, ուրեմն ես վատ բան չեմ կատարել, գոնե նրանց հանդեպ, իսկ եթե նրանք վնասվելու են սրանից, այն ժամանակ առնվազն մի օգուտ կունենան, որ հասկանան վերջապես, իրենց տանջանքով չբախտավորացնել ոչ ոքի:

Ով որ իմ փառքի օրերին դուռս եկավ պլուխս ցավցնելու իր դրպանի հոգսերով և խանութպաններին ու պանդոկապետներին հետ մղած իր պատերազմներով, նա կհասկանա, որ ինքն զրկված է այժմ իմ դեմ ունեցած իր սրբազան վրեժխնդրության կայծակներից:

Գաղթականը սարսափելի բան է: Ես ձեզ ասում եմ վախեցեք նրանից, որ ոչ միայն գաղթական է, այլև որբ-գաղթական: Նրան չմոռեննաք երբեք այդքան հեշտ:

Այս թող ձեզ փաստ լինի, որ համոզվեք, թե ճշմարտությունն այստեղ վարագուրված չէ, ոչ էլ պարոդիայի ենթարկված:

Այնուամենայնիվ, ես չը

[Թերի է:
Բաքու, 1915]
Բնագիր: Ձեռագիր:

[Վ. Տերոյան]
[Գրված է Վ. Տերոյանի ձեռագրով նույն թղթի վրա, նույն թանաքով, ինչ որ Գաղթական-որբը]:

ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Առհասարակ որևէ գործի հաջողությունը համարվել է սկզբունքներ չունենալու, կամ շատ քիչ սկզբունքներ ունենալու մեջ: Սկզբունքները զրկում են գործին ճկունությունից և արագությունից: Հրամայական և հրատապ գործերը այդ պատճառով խիստ հեռու են կանգնած լինում գիտակցական հետևողականությունից:

Ընդունելով հանդերձ այդ առարկությունը՝ անկարելի է, սակայն, անտեսել այն հետևանքները, որ բխում են անմիջապես դրանից: Պատմության հանած սկզբունքները շատ հաճախ իրականության չեն համապատասխանում, որովհետև հետին թվով արած գյուտեր են լինում: Վայրկյանի պատմական արժեքը պատմական վայրկյանի մեջ կարելի է ստուգաբանել ամենից առաջ: Բացի այդ, գործի սկզբունքները միայն տեսական արժեք չունեն. սկզբունքի բացակայությունը ստեղծում է ոչ միայն անհետևողականություն, պատրություն և թեթևություն գործի մեջ, այլև երևան է բերում մատածող, անդրադարձող կամքի դժգունություն: Անհեթեթությունները սովորական են դառնում, անկարելի է լինում ճշտի և սխալի չափանիշը:

Այս բոլորի համար կա, թե չկա մի ազգ, որ մեծ և հրատապ հարցեր չունենա դրած իր առաջը լուծելու համար: Գաղթականությունը մեկն է մեր այդ տեսակ հարցերից: Ինչքան էլ շտապ և անբավարար չափով հիմնավոր լինեն, այնուամենայնիվ գործի շահը պահանջում է քննության և ուսումնասիրության ենթարկել այն բոլոր հարցերը, որոնք այս կամ այն կերպ կարող են լուսաբանել գաղթականական գործի ճանապարհը: Միայն կենդրոնական Մարմին ստեղծելով չէ, որ պիտի դարմանվեն գաղթականության կարիքները ու ցավերը: Մի անօպատ չարիք կա թաքնված գաղթականության ախտի մեջ: Եվ անկարելիության աստիճան դժվար է գտնել այն միջոցը, որով դարմանվեն այդ ցավերը, որ կատարված աշխատանքը իր նպատակին հասնի, որ բարեգործությունը չարագործություն չդառնա: Կենդրոնական Մարմինը պիտի բերի ամենից առաջ վարչական բարեփոխություն գաղթականական գործի մեջ, բայց դրանով չեն վերջանում գաղթականական հարցերը: Գործելու համար կանչած մի մարմին, ամենայն հավանականությամբ, զրկված պիտի լինի գործին մոտենալու հնարավորությունից սկզբունքային տեսակետով, բնդհանուր աշխարհայացքներով:

Հոգևկան մի մեծ փորձություն կա մեր ֆիդիկական փորձության այս ժամվա մեջ: Ապագային հարցը միայն դիպլոմատիական աշխատանք չէ, ներքին ինքնահատկացողություն է անհրաժեշտ՝ անպիտակից աշխատակիցներ չդառնալու համար մեր թշնամիների գործունեության:

Բայի այդ, գաղթականությունը երևան բերից մի շարք այնպիսի հարցեր և առեղծվածներ, որոնք ժողովրդականական-հասարակագիտական նշանակություն ունեն, և որոնք գուցե երկար ժամանակ անհայտ և անլուծելի մնային խաղաղության մեջ: Այդ հարցերից մի քանիսը այնքան խոշոր տարողություն ունեն, որ ոչ միայն գաղթականության ներկա վիճակի մասին կարող են լուսաբանություններ տալ, այլև առհասարակ մի ժողովրդի հոգեբանական տարրերն են բնությագրում, նրա պոտենցիալ և պլաստիկ ընդունակությունները հայտնագործում՝ թե նա ի՞նչ է, և ի՞նչ կարող է լինել. նաև, թե նա ի՞նչպես այս կամ այն կերպ կարող է լինել:

* * *

Որ գաղթականությունն ինքնին հարուցանում է հասարակագիտական առեղծվածներ, այդ պարզ էր պատերազմից առաջ կատարվածների վերաբերմամբ էլ: Բայց միայն պատերազմն է, որ առեղծում է ամենակատարյալ գաղթականությունը: Կարելի է գաղթականությանը տալ այնպիսի սահմանափորում, որ անմիջապես հայտնի լինի հարցադրության նը: Գաղթականությունն ուրևէ, որոշ շրջապատի, շրջանակի և ձևի մեջ կազմակերպված կյանքի տեղափոխությունն է այլ շրջապատի, շրջանակների և ձևերի մեջ: Թե ինչպես հնարավոր պիտի դառնա հինը նորի մեջ, ահա ամբողջ խնդիրը: Բայց այս պարզ բանաձևը բարդանում է հաճախ մի շարք անհատկացողություններով և ներդպղիի ու վերադարձի առանձնահատկություններով: Ամեն գաղթականություններն էլ համարվել են ժամանակավոր, ինչպես և ամեն դժբախտությունները. իրևե թե դժբախտությունները տևականության իրավունք չունեն աշխարհի վրա: Բայց խնդրին այս ձևով մոտենալով չէ, որ մենք կարող ենք ցանկալի լուծումն ստանալ: Ընդհակառակն գաղթականությունը մի այնպիսի փաստ է, որ կատարվելուց հետո երևան է բերում հարցեր և առեղծվածներ, որոնք երբեք չեն վերջանա, եթե ժամանակավոր նկատվեն: Գաղթականությանը պիտի չկատարվեր. կատարվելուց հետո իր երևան բերած հարցերը կմնան նույնքան հրատապ և այրող, եթե անգամ ներդպղիը կամ վերադարձը կատարվի վերջանա: Գաղթելը նշանակում

է դիմել դեպի մի նոր հասարակարգ: Ներգաղթը նույնպես մի նոր հասարակարգի ձգտում է: Թեև վերադարձողները աշխատում են վերականգնել հինը, բայց այդ անկարելի է. ոչ մի կամքից, մարդկային կամքից կախված չէ այնպես հեշտությամբ և ճշտությամբ վերստեղծել հինը, առանց նոր տարրերի ներմուծման: Այսպես է ահա, որ գաղթականության հարուցած հարցերը միայն ժամանակավոր և տեսական արժեք չունեն, այլև տևական և գործնական մեծ նշանակություն:

* * *

Քաղաքակրթության անընդհատ և անխնա տարածումն առաջ է բերել երկրագնդի վրա, կարելի է ասել, կյանքի միատեսակություն: Կատարելապես տարամերժ հասարակարգեր պատմությունը չի ճանաչում քաղաքակրթված ազգերի մեջ: Միայն տնտեսագիտությունը և ուժեղ երևակայություններն է, որ մի վարդագույն ապագա են ցույց տալիս մեզ, ուր պետք է բոլորովին նոր հասարակարգ հաստատված լինի:

Մինչ այդ, իրականությունն այն է, որ գոյություն ունեցող հասարակարգերը չատ տեսակետներով իրար նման են, տարբերությունները նմանության տարբերություններ են, հակադրություններ չկան գրեթե, և մի հասարակարգի վարժված մարդը մեծ դժվարություն չի քաշի ապրելու մի այլ հասարակարգի մեջ:

Այդպես չէ սակայն գաղթականությունը:

Նախքան գաղթը, մեծ տարբերություն չկար օրինակի համար Կովկասի և Տաճկահայաստանի հասարակարգի մեջ: Նույն անհատական և անհատապաշտ տնտեսությունը, մի տեղ ավելի մեծ թռիչքներով, մյուս տեղ ավելի խեղճ քայլերով. նույն գոյության կռիվը, ճիշտ է մի տեղ ամենքը ամենի դեմ, և մյուս տեղը մի կամ մի քանի ազգեր մի ուրիշ ազգի դեմ. նույն պետական կարգեր, երկու տեղումն էլ տեր և հպատակ գաղափարներով, և վերջապես նույն ազգային կյանք, նույն բարքեր և սովորություններ: Որչափ որ խոշոր չափերով վերցրած են նմանության գծերը, նույնքան խոշոր գծերով էլ կարելի էր տալ նաև տարբերությունները: Բայց եթե գոյություն իսկ չունեցային այդ տարբերությունները, բավական է գաղթականությունը կատարվեր, որպեսզի ծագեր մեկն հասարակագիտական այն անլուծելի հարցերից, թե ինչպես հնարավոր է մի բովանդակություն նոր ձևերի մեջ: Միայն տնտեսական հարաբերությունների

տրամագծական հակադրությունը բավական էր մտածել տալու համար նոր հասարակարգի գժվարությունների մասին:

Անհատական-հոգեբանական մի մոմենտ կա, որ ծածկում է այս հարցի գոյությունը: Մեծ փոփոխությունների և անակնկալների առջև մտածել, քննել և վերլուծելը միայն գոյության կռվին անընդունակ մարդկանց գործ է. կյանքի հրամայական պահանջն է չուտ հարմարվել և գործել, որպես թե ոչինչ արտակարգ բան չի պատահել: Պարզ է, թե ինչքան շատապողականություն կա այս խնդրության մեջ. Բայց այժմ, ավելի քան երբևէ, դրված տնտեսական հարցը գործնական արժեք ունի:

* * *

Եթե որևէ բան չքանդվեց գաղթականությամբ, անժխտելի է, թե գոնե մի ժողովրդի տնտեսությունը հիմնահատակ քանդվեց: Գաղթականությունը առեղծեց տնտեսական մի նոր հասարակարգ: Ամեն հասարակարգի մեջ էլ գոյություն ունեցել են ապրանքներ և նպաստընկալներ, բայց նպաստընկալ ժողովուրդ, միայն գաղթականությունն է ճանաչում: Դժվար է մի խոսքով պարզել այն հակայական տարողությունը, որ պարունակում է նպաստընկալ ժողովուրդ գաղափարը: Կրոնը և տնտեսությունը չեն կարող այնպես հեշտությամբ փոխվել մի ժողովրդի համար՝ առանց ծանրակշիռ, հիմնական հոգեբանական-հասարակագիտական հետևանքներ, փոփոխությունները առաջ բերելու: Այս խնդիրն ավելի է ծանրանում, որովհետև, ինչպես ասվեց, այստեղ գաղթականությունը չի վերցվում իբրև ժամանակավոր մի երևույթ, այլ տևական հետևանքներ ունեցող մի հեղաշրջում: Նոր միջավայրը ազդում է նրա վրա, բայց ոչ այնքան, որ կարողանա հեշտությամբ նրան կլլել և մարսել: Ինքն ազդում է անմիջական միջավայրի վրա: Բայց այս ազդեցություններից ավելի հիմնական է լինում այն ազդեցությունը, որ ինքնաբերաբար առեղծվում է հնի և նորի փոխհարաբերություններից, և որ դիմավորն է գաղթի անմիջական ակտից:

Որովհետև համփոթդելը այստեղ ուրիշ բան է: Ամեն մարդ գիտի, թե տուբիստները չեն գաղթում, կամ գաղթողները տուբիստներ չեն: Եվ ահա հոգեկան այն ավերակը, որ առեղծվում է վարժված, սովորած ու սիրած երկիրն ու շրջապատը, միջավայրն ու կյանքը թողնելու, մի հանկարծական մղումով լքելու, լաժանվելու արդյունքից, դա արդեն նախապատրաստում է մի բավական հաջող կամ հետևողականորեն շարունակելու համար նոր շրջանակի լուսանդակությանը:

Նոր կառուցվածքներ այդ կավից լինում են, բայց ինչպի՜սի. կառուցումն այժմ քանդում է, ավեր և կործանում: Յուրաքանչյուր քայլը, որ արվում է գաղթից առաջ եկած վնասները դարմանելու, նպաստում է միայն գաղթից առաջ եկած հոգեկան ավերակները բազմապատկելու: Բարեգործությունը դառնում է չարագործություն, եղբայրությունը՝ թշնամություն: Ո՞րն է իմ մեծագույն թշնամին, նա, որ իմ տունը քանդեց, թե նա, որ իմ հոգին է քանդում: Այնքան որ ընդարձակ և խոր են գաղթի հետևանքները: Մի անլուծելի, անվախճան դժբախտություն է դա, և ոչ միայն կրողի, այլև դարմանողի համար, որովհետև սովորական բարեգործությունը համենայն դեպս չարիքը չունի իբրև նպատակ: Թեև միշտ տեղիք կա հավատալու, որ մտածված, գիտակցական բարեգործությունը որոշ չափով կարող է մեղմացնել գաղթի արհավիրքները:

* * *

Քաղաքակրթության, առաջադիմության և առհասարակ կրթության արժեքը հոգու հոգեկանացման մեջն է: Ինչքան քիչ է կրթված մի մարդ, այնքան նրա հոգին նյութական է, նյութային բովանդակություն ունի, իրերի և առարկաների հետ է կապված: Դատարկեցեք այդ հոգին իր բովանդակությունից, իր բազկացուցիչ նյութերից, և դուք կստանաք ներդաշնակ կյանքի անընդունակ անհատներ: Այդպիսի դատարկ հոգով է կատարվել գաղթը: Ու ահա անկարելի է այլևս հետևանքները կշռել: Օգնության է հասնում բարեգործության ձեռքը, և նա կարծում է իր իրավունքների հանդեպ գտնվել: Նպաստընկալությունը դառնում է մի արհեստ, իր բոլոր դրական և բացասական կողմերով, մեծ աշխատանք պիտի թափի նա, ինչպես միշտ, իր արհեստի մեջ հաջողելու համար: Ու ինչպես միշտ, այստեղ էլ առաջ են գալիս ավելի հաջող և ճարպիկ արհեստավորներ, բազմաթիվ անհաջողների և սոլիկարների կողքին: Նպաստը իբրև աշխատանք և արհեստ, կլլում է նրա ամբողջ ժամանակն ու հոգին: Դատարկ չրջանակի մեջ կազմակերպվում է նոր բովանդակությունը: Մշակվում են նոր միջոցներ, մտածվում են նոր դարձվածքներ և ձևեր ավելի մեծ առաջադիմության և հաջողության: Մուրացկանություն գաղափարը չնկվում է աշխարհի երեսից և մնում է առանց աշխատանքի ապրելու ամոթը:

Նպաստընկալ հասարակարգի մեջն էլ գոյություն ունի աշխատանքի բաժանումը. գլխավոր ու ծանր աշխատանքը տանում են այստեղ ծերերը, երեխաներն ու կանայք: Տղամարդիկ ընդհանրապես

զբաղված են անպործ ժամերը հաշվելով, ու եթե պատահի, որ նպաստից դուրս ուրիշ աշխատանք էլ կատարել պետք լինի, նա հարմարեցնում է այդ ուրիշ աշխատանքը, իր հիմնական աշխատանքի – նպաստի տրամադրությունների. երկրորդ տեսակի աշխատանքը կատարվում է, ինչ ջանքով, որ սա չի խանգարի առաջինի անսայթաք գործունեության: Եվ որովհետև հայտնի է, թե ինչպիսի հատարակություն է այդ նպաստընկալ ժողովուրդը իր կրթության տեսակետից, ուստի և ավելորդ է վնտրել նրա ժամանակի մեջ ուրիշ հիմնական գծեր էլ: Իհարկե, պատահում են նպաստընկալների ծնունդը կամ մահը, ամուսնությունը կամ չնորհավորությունները, ճամփորդությունը կամ տեղափոխությունները, վերադարձի ծրագիրներ կամ հաստատվելու նախապատրաստները, մանր և տնավարի ոճրագործությունները, սուտ և գողություն, վեճ և կռիվ, ընդհարում և հաշտություն, նոր լուրերի և հայրենիքից եկած խարբինկների մշակումն ու տարածումը, մեկ-մեկ էլ՝ կարոտ և տանջանք անցած օրերի և հատարակարդի, բայց միայն այսքան. ու այնքան երկրորդական ու անարժեք են այս վերջինները նրա կյանքի բովանդակության համար, որ ոչ մի հնաք չեն թողնում, ամեն բան լռում է և վերջանում նպաստընկալության վնհատատ սահմաններում:

* * *

Դժվար է տալ դատարկ հոգու դատարկության լիակատար նկարագրությունը: Այլ բան է չարժումների արագությունը և փոփոխությունը գիտակցության մնջ, այլ բան է նաև չարժումների անկայունությունը: Սրբազան արժեքները մի անգամ անարժեք դարձնելուց հետո այլևս անկարելի է լինում սովորական կյանքի համար անհրաժեշտ եղող գնահատումների նորման պահպանել. մի թանկագին իր չի արթնացնում երբեմն այնքան ուժեղ ցանկություններ, որքան մի անարժեք առարկա խլում է նրա ժամանակը, ուշադրությունը և կամքը: Ծուլության մեջ հաստատած հավակնոտությունը առաջ է բերում մի վրդովեցուցիչ պահանջկոտություն, որպիսին չէր արտահայտել նա իր ճակտի քրտինքով վաստակածը պահպանելու համար: Մի խոսք և համառ գիտակցություն կա՝ թե ոչ միայն նպաստընկալությունը, այլև նպաստաբաշխությունը մի արհեստ է, և չահավոր երկու կողմի համար էլ: Կատարված գեղծումները չեն այնքան պատճառը այդ մտածողության, որքան այն անգիտակից ըմբռնումը, թե ազգը չահ ունի իրեն պահելու և պաշտպանելու մեջ, թե ազգը իրեն պարտական է մշտապես և թե ազգի կամքը չեն կատա-

րում այն նպաստաբաշխները, որոնք իր կամքը չեն կատարում: Այս հոդվածը չի առաջադրել նպաստաբաշխների ախտավոր հատկությունները ու գործելակերպը երևան բերելու, այնպես որ առանց այս վերջիններն արդարացնելու նվազագույն մտադրության կարելի է շարունակել նպաստընկալ հասարակության հոգեբանական վերլուծությունները: Պարզ է, թե այսքանը միայն բավ է՝ նպաստընկալությունը մի քրտնաջան աշխատանք դարձնելու համար: Այդ քրտնաջան աշխատանքի ծոցում մեռնում է ստեղծագործական կամքը և աճում է ու մեծանում ծուլության հպարտությունը: Իր գիտակցության խղճությունը չէ պատճառը, որ նա իր աշխատանքից զատ ուրիշ աշխատանք չի կարող անել: Նա արհամարհում է աշխատանքը, դա պատվաբեր չի կարող լինել իրեն, լավագույն դեպքում, աշխատելը ավելորդ է, և նպաստընկալության աշխատանքից ավելի լավը չի կարելի երբևէ գտնել: Այս մտայնությունից չեն ազատվում նրանք նույնիսկ, որոնք ինքնաբերաբար գտել են մի աշխատանք, նրանք դժվարությամբ են հրաժարվում նպաստից: Գաղթականությունն նշանակում է նպաստընկալություն, բայց ո՞ր գաղթականն է, որ գաղթական չէ այլևս:

Ո՞վ թշվառացրեց այս ժողովուրդը նպաստընկալության արհավիրքներով, ո՞վ սպանեց ստեղծագործող կամքը, և աշխատանքի պատիվը: Ո՞վ վերածեց հայությունը և ազգայրակցությունը նպաստաբաշխության, ո՞վ դարձրեց բարեգործությունը չարագործություն...:

* * *

Նպաստընկալ հասարակարգի հիմնական և բաղկացուցիչ տարրերից մեկն է նաև նպաստաբաշխությունը: Այս աշխարհում կատարվածները պակաս չնպաստեցին երևան բերելու հայ ժողովրդի թաքնված հոգեանկյունները: Համայնական թշվառությունը, ըստ երևույթին, պետք է առաջ բերեր համայնական դիտակցության ուժեղացումը: Համայնական (communal) կյանքը պետք է սովորական և բնական դառնար համայնական ազեսի վայրկյանին: Բայց ինչպես նպաստ կազմակերպողները գաղափար անգամ չունեին, թե իրենք մի նոր հասարակարգ են կազմակերպում, այնպես էլ նպաստընկալները երբեք չուղեցին հասկանալ նոր հասարակարգի տրամադրությունները: Անհատապաշտ տնտեսությունն է աշխարհի կարգը, ու նպաստաբաշխն և նպաստընկալը այս կետում մի նշանակությունից անգամ չեն տարբերվում իրարից: Շատ բնականորեն նպաստաբաշ-

խությունը դառնում է մի բարեգործական արհեստ, և նպաստընկալությունը մի չահավետ աշխատանք. խիստ պատահականորեն կարիքը ստիպում է երբեմն համայնական տնտեսություն ստեղծել: Բայց իսկույն այդպիսի տնտեսություն կազմակերպողների ապիկարությանը հակադրվում է անհատապաշտ տնտեսության գաղանացած կամքը, նպաստընկալների կողմից: Երևան է գալիս նպաստընկալի նուրբ ճաշակը, զարգացած բարոյականությունը, ժամանակի տնտեսության պահանջը և այլն, և այլն, ջնջելու համար համայնական սեղանը, և թեկուզ սովից մեռնելու գնով պահպանելու անհատական տնտեսությունը: Առողջապահությունը և տարրական խնայողության դիտակցությունը անհրաժեշտ պետք է դարձնեին ուժերի և միջոցների կենտրոնացումը և համայնացումը՝ կռվելու համար անհատական ուժերից վեր սպառնացող վտանգների դեմ: Մի ժողովուրդը, որ չատ նուրբ ճաշակ չի ունեցել հագնվելու համար, անհարմար դրության մեջ է դնում նպաստաբաշխի բարեգործությունը, երբ չորիը ծախում է, մերկ և դզդզված մնալու գնով, դրամ ձեռք բերելու համար: Եվ ահա, եթե ուրիշ չատ արդարացի հիմունքներ էլ չլիներին, սրանք էլ բավական են ցույց տալու համար նպաստաբաշխությունը և նպաստընկալությունը՝ իբրև երկու կատարյալ հակառակորդություն, կատաղի թշնամիներ, որոնցից մեկի չահը անպայման մյուսի վնասի մեջ է կայանում: Տեր և ստրուկ բարեգործության սահմանները. բարեգործությունը ավելի մեծ անկում չի ճանաչում. թշվառությունը երբեք այսքան հավակնոտ չի եղել: Համայնական գործի և անհատական կամքի այս պայքարը չատ բնական պիտի լիներ յուրաքանչյուր հասարակարգի մեջ, որ մի նորի պիտի տեղ տա: Բայց այս դեպքում խնդիրն այնքան մարդկային չէ, որքան առանձնահատուկ ազգային:

* * *

Համայնական (communal) կյանքի այս կատարյալ անընդունակությունը իրատական դասեր է պարունակում մեր ցեղային նկրտագրի ճանաչողության տեսակետից: Որովհետև միայն նպաստընկալները չեն, որ ըմբոստանում են այդպիսի ապրելակերպի դեմ: Ավելի նշանակալից է նպաստաբաշխների ապիկարությունը, որ այնպիսի աղաղակող պակասություններով, քաոսային անկազմակերպությամբ է երևան գալիս, որ չատ հաճախ մարդ ստիպվում է մտածել, թե գուցե այս ժողովուրդը չէ, որ համայնական կյանքի անընդունակ է երևում, գուցե հիմունքներ կան, որոնք բացարձակապես

անկարելի են դարձնում կյանքի նվազագույն համայնականացումն իսկ: Մեր հին ու բարի պատմագիրները մի մեծ գյուտ են արել մեր ցեղային նկարագրի մասին, գրա անունն է անհամերաչխությունն, անհամաձայնությունն, անմիաբանությունն: Այս «Նոր օրերի» մեջ դրա անունն է համայնական կյանքի անընդունակությունն: Հայվազյուտ դեպքերում է, որ ազգային գոյությունը պահպանում է ազգային համայնական միջոցներով ու կամքով: Ընդհանրապես յուրաքանչյուր անհատ ինքն է ազգը, ինքն մասնիկն է ամբողջությունը, չկա ազգային կամ համայնական կամք, մասնիկի կամքից դուրս: Կարելի էր դունավորել բանաձևը, թե փոքր ազգերի մեջ այնքան կուսակցություն կա, որքան անհատ: Բայց անփոփոխ է մնում իրականությունը. ու ազգային փոքրությունը այստեղ չի սահմանափակվում թվական ավյալների վրա, որքան բարոյական ընդունակության վրա: Փոքր է մի ազգ ոչ թե իր թվական փոքրության համար, այլ համայնական կամքի չգոյության կամ բացառության համար. Ինչքան շատ են համայնական կամքի արտահայտության վայրկյանները, այնքան մեծ և ուժեղ է մի ազգը: Նա լինում է ազգությունն ստեղծագործության և պատճառականության, ամփոփրար Աստվածն այնտեղ մարմնանում է երկրի վրա: Բայց եթե նկարագրությունից անցնենք բացատրության, մեկնաբանության, գուցե ավելի առարկայական կարողանանք լինել, եթե ընդունենք, որ ոչ համայնական կյանքի անընդունակությունն է, ոչ էլ թվական փոքրությունը պատճառ մեր ազգային փոքրության, դրանք երկուքն էլ ավելի շուտ փոխհարաբերական (corrélatif) պատվիարներ են, մեկը պայմանավորում է մյուսը և փոխադարձարար: Սա կարող է մի հիմնավոր մխիթարություն լինել նրանց համար, որոնք մեռնում են մշտական պատասխանության վճիռը լսելիս, իսկ այստեղ ավելի շուտ մի դիտողություն, կամ ասիճան մեր կատարյալ սանդուղքի վրա: Լոկ փաստի արձանագրությունը ապացույց է մի բանի մեր ժողովրդի դարավոր և առօրյա հոգեբանության համայնական կյանքի անընդունակություն և անհատապաշտության թյուրիմացություն...:

* * *

Այդ առանձնահատուկ նկարագիրը երևան է գալիս մշտապես, և մանավանդ ախտավոր բնույթ է ստանում այն ժամանակ, երբ մի ժողովուրդ պիտի դրա հակատակ նկարագիրը ցույց տար: Դևլքների ու միջավայրի բերմունքը ստիպում են հասարակական օրգանիզմին հայտնագործել նոր պայմաններին համապատասխան փունկցիաներ.

Հարմարվելն ու հաղթանակի պահանջը հրամայական են դարձնում շատ բան ստեղծելու հետ, շատ բան էլ մոռանալ և անտեսել:

Ազգային գոյության այս հոգեբանական հիմունքի պակասությունը լուրջ կերպով երևան է բերում ազգային կամքի բացակայությունը: Ինձ թվում է՝ ներկա մոմենտը ցույց տալիս է անհրաժեշտ օրգանական անակսիոնը, արտաքին հարաբերությունների անպայման հարմարանների վերաբերմամբ: Բայց միայն ինքնապաշտպանությունը չի կարող լինել հիմքը ազգային գոյության: Ազգային կամքը, եթե գոյություն ունի, դա չի կարող սոսկ բացառական արտահայտություն ունենալ, միայն մերժել, չընդունել, չհամաձայնվել: Ճիշտ է, ամեն ազգային չահեր չոչափելու չափ նշանակություն ունեցող հարց կարող է չդիմել անմիջապես ազգային կամքին, բայց խնդիրներ կան, որոնք ազգային մի հատվածի լինել չլինելու հետևանքն են կազմած. այդ դեպքում է, որ ազգային կամքը պետք է արտահայտվի, կամ թե եղրակացվի, թե այս «ազգի» մեջ գոյություն չունի ազգային կամքը:

Այդ անհրաժեշտությունը ավելի ակներև է դառնում, երբ նկատի ունենանք, թե ազգային կամքն է, որ ոչ միայն կարող է իր լավությամբ մահ առաջ բերել, այլև գոյությամբ՝ կյանք ստեղծել, բան արտի պահպանելը դեռ ստեղծել չէ: Եթե արգելիչը չլինելը, այդ չի նշանակում թե առաջ ենք բերում լինելը. հարաբերությունը հետևյալ անմիջական փոխհարաբերությունն լինելուց, ավելի շատ չլինելու արգելքը առաջին քայլն է լինելու աշխատանքին: Ազգ լինելու աշխատանքի մեջ այս բոլորն այլևս ձգտումների և կանխությունների բոլորն չէ, դրանք վերջացան, երբ սկսեց ներկա պատերազմը: Այժմ դրական աշխատանքի, ազգային ճիգի վայրկյանն է, ազգային կամքն է, որ պետք է երևան գա, թեև տարածում, ուժ և իշխանություն չեն նրա հատկանիշները, բայց այն հարցերն իսկ, որ օրեօր դրվում են նրա առջև, պահանջում են նույնքան յարվածություն և կամք, որքան թե դրված լինեին Ալեքսանդրի կամ Նապոլեոնի պրոբլեմները հրապարակի վրա: Այդ ազգային կամքն է, որ պիտի հայտնագործի իր ներկայությունը:

* * *

Որովհետև նպատակ ժողովուրդ՝ մի անկարելիություն է, մի հասարակագիտական անհեթեթություն: Ազգային կյանքի մահն է դա, և անպատվություն: Զարիքի մեծությունը դառնում է անսահ-

ման, որովհետև չի երևում ոչ մի կերպ նպաստընկալության վախճանը:

Կոնկրետ առաջարկություններ բերելուց առաջ պիտի զգալ նախ նպաստընկալության չարիքի մեծությունը, հետո իբրև ազգային մի հրամայական պահանջ դնել նպաստընկալությունը վերջացնել: Ազետի առաջին րոպեին պետք էր նպաստել ինչ ձևով և միջոցով որ կարելի էր, երկրորդ րոպեն բերում է նոր պարտականություն՝ կազմակերպել նպաստաբաշխությունը: Շուտունց է, որ սկսել է այդ երկրորդ րոպեն, ու դեռ չհասած իր վախճանական վիճակին, ու դեռ նպաստը չկազմակերպված՝ ահա երևում է նոր մոմենտը: Երկու մոմենտներն էլ ազգային պարտականություններ էին դնում, երրորդ մոմենտը մեզ վրա դնում է ոչ միայն ազգային, այլև մարդկայնական պարտականություն՝ քանդել և ոչնչացնել ամբողջովին նպաստընկալ հասարակարգը: Սա կլինի մեծագույնը մեր ազգային կամքի արտահայտություններից. սրանով փրկվում է մի ժողովուրդ, մի ազգ, ոչ միայն ներքին բարոյական անկումից և ինքնակործանումից, այլև արտաքին ճնշումներից, կախումներից, անգնահատելին ու անվարձատրելին՝ գնահատելի և վճարելի դարձնելու սորկություններից:

Բարեգործությունը պետք է թողնի մի քանի աթոռներ և նստի դուտ ազգային պարտականության հողաթմբի վրա. այդտեղից նա կկազմակերպե ոչ թե սովամահների և հիվանդների նպաստաբաշխությունը և խնամակալությունը, այլ պարզապես ազգային քանդված տնտեսության և հասարակարգի վերաշինություն: Աշխատանքի պատիվը պետք է արթնանա ոչ միայն նպաստընկալների, այլև նպաստաբաշխների մեջ: Անչուշտ կմնա միշտ մի նպաստընկալ դասակարգ. և ո՞ր հասարակարգի մեջ է, որ գոյություն չունենն այդպիսինները, բայց նրանց թիվը այնքան կսահմանափակվի, որ քաղքենի բարեգործությունը բավական աշխատանք կունենա դեռ, բայց, որ գլխավորն է մենք կարողանանք ասել — մենք ազգ ենք, մեր ազգը նպաստընկալ ազգ չէ: Նեղմիտ ազգասիրական հպարտությունը չէ այստեղ խոսողը, այլ պարզապես ազգային գոյության բարոյական հիմունքը: Մի ազգ կամ այդպես միայն կարող է գոյություն ունենալ, կամ երբեք: Մի տարվա փորձը ամեն իրավունք տալիս է հոռետեսության. անձնական կրքերի տխուր հերոսները լցրել են մեր ազգային կյանքի բովանդակությունն ամբողջովին. տեղ կա՞ արդյոք այլ տեսակ ազգային կյանքի: Խոսքի և մտքի ուժը մի անգամ էլ հաղթանակում է իմ մեջ այս կետում: Ոչ միայն պատմությունը,

այլև ներկա գաւն իրականութիւնը թաքնված ուժեր ունի, որոնք անողոք կարող են լինել կատարվածի և կատարվելիքի հանդեպ: Պետք է երևան գա վերջապես ազգային կամքը:

* * *

Աշխատանքի կազմակերպութիւնը՝ ահա կոնկրետ առաջարկութիւններից մեկը:

Ամբողջ աշխարհը այս րոպեիս մարդու պակասութիւն է զգում. և երջանիկ Կովկասում պահվում են նպաստընկալների բանակներ: Ոչ մի բացատրութիւն չի կարող ծածկել անհեթեթութիւնը: Կովկասում գոյութիւն չունի հայութիւն, այլ արհեստով, ի պաշտոնե բարեգործութիւն. այսպես կարելի էր եզրափակել այդ անհեթեթութիւնը: Բայց եթե բոլոր բարեգործները հասկանային, թե ազգային կամքը բարեգործութեան մեջ չէ, թե նպաստընկալութիւնը ազգային մահ է, այն ժամանակ բարեգործ հայութիւնը պիտի կազմակերպեր նպաստընկալ հայութեան համար պատշաճավոր աշխատանքի հաստատակարգ: Արդեն երևում են ինքնաբերաբար աշխատանքի կայքանների սաղմերը՝ Թիֆլիս, Երևան, Բաքու և այլն: Բայց ո՞ւր է, որ աշխատանքը չի կարելի դարձնել հասարակական անհատութեան աղբյուրը: Գաղթականութիւնը չձուլվից վերջացավ գաղթավայրերի բնակչութեան հետ, նա մնաց ու մնացել է կղզիացած առանձին, նպաստընկալ դասակարգը: Պետք է մանել ամեն տեղ ուր կա գաղթական և դուրս բերել յուրաքանչյուր գաղթականի մեջ նիրհող մարդը, աշխատող և պատշաճավոր դյուզացին, սպանել նպաստընկալ և անպատիվ գաղթականը, ու բարձրացնել հայն ու մարդը այդ թշվառ գոյութիւնների մեջ: Կազմակերպել ամեն տեղ աշխատանքի մեղվանոցներ, արհեստ իմացողներին օգտագործել չիմացողների համար, աշխատանք ստեղծելը այնպես համառ ակզբունք դարձնել, որ եթե աշխատանքը միայն վնաս բերի, դարձյալ չթողնել աշխատանքը: Թեև վնաս բերող աշխատանքը ըրկվում է մասամբ իր բարոյական հիմունքից: Ըստ որում չուր ծեծելը բարոյական աշխատանք չէ, բայց ներկա պայմաններում միայն անփորձութիւնն ու ապիկարութիւնը կարող են աշխատող ձեռքերից վնաս սպասել: Համենայն դեպս, սրանք այնպիսի մանրամասնութիւններ են, որոնք միայն գործի մեջ կարող են պարզվել ու հարթվել: Էականն այն է,

որ միանգամ ընդմիշտ վերջ է տրվում նպաստընկալ վիճակին, վերակազմակերպվում է նախկին վիճակը, և մեզանից է կախված, թե ինչքան ռասիոնել կարող ենք դարձնել նորը, և այնպիսի ուժեղ հիմունքներով, որ ոչ մի ներգաղթ չպիտի կարողանա քանդել սկսվածը, որովհետև նպաստընկալության անմիջական հետևանք – չարիքներից մեկն էլ այն է, որ ներգաղթը մի ավելի սարսափելի գաղթ պիտի լինի, քան եղել է որևէ գաղթ: Մինչդեռ աշխատանքի կազմակերպությունը ոչ միայն վերջացնում է գաղթի ներկա, այսօրվա արհավիրքները, այլ նաև ոչ մի տեղ չի թողնում բարոյական անկումների և տնտեսական կործանումների այս՝ չարագործությամբ և բարեգործությամբ միանգամային թշվառացած ժողովրդի համար:

Բաքու, 7 հունիսի 1916 Վ[արազդատ] S[երոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ԾՐԱԳԻՐ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ

Մի անգամ, որ մենք սկսեցինք մտածել վերաշինութեան մասին, նշանակում է, որ մենք հաշտվեցինք ավերակների հետ, և դեռ ավելին, նշանակում է, որ մենք ոչ միայն հաշտվեցինք և ընդունեցինք, որ մեր Հայրենիքը քանդվել է և ավերվել, այլև սկսեցինք լավ-լավ երազներ տեսնել քանդված ավերակների վրա, ընդունել նրանց անհրաժեշտությունը, մտածել կատարված չարիքից օգտվելու, ձեռնարկել մեռելությունը վերակենդանացնելու, և, մեկ խոսքով, այնպես անելու, որ չարիքը դառնա բարիք: Հետաքրքիր մարդիկ են այս հայերը. ոչ մի բան նրանց անհարմար և անօգուտ չէ, անգամ չարիքից նրանք կարողանում են օգտվել: Որովհետև ահա, հիմնահատակ կործանումից հետո, մենք ոչ թե հեռանում ենք, թողնում և հրաժարվում, այլ ամեն րոպե մտածում ենք, թե ե՞րբ պիտի կարողանանք այլևս ուրիշ բան չանել, միայն վերաշինությամբ զբաղվելու համար: Որովհետև ահա, մենք դիմում ենք Կիրակոս Դանձակեցուն, Արիստակես Լաստիվերտցուն և Առաքել Դավրիժեցուն, մի վայրկյան անգամ չմոռանալու համար, թե Հայաստանը ինչպես է ավերվել և քանդվել թաթարների, սելջուկների և Շահ-Աբասի ձեռքով, ու դրանից հետո, թե ինչպես անկարելի է եղել այդ հողակտորից արմատախիլ անել հայ կյանքը և գոյությունը: Որովհետև մենք դեռ չենք մոռացել երկար չարքը այն վոքրիկ պետությունների, որոնք նախքան պետություն դառնալ մեզ պես ավերվեցին, կոտորվեցին և քանդվեցին վերջին անգամ լինելով «բարեխնամ» օսմանյան կառավարության ձեռքով — անմիջապես հետո ձեռնարկելու համար վերաշինության և վերանորոգության: Որովհետև ահա, մեր մտապրությունների անկախ, դաղթականական հսկայական բանակներ են պահվում և սնուցվում, միայն այն պիտավորության համար, որ նրանք այսօր կամ վաղը դառնալու են վերաշինության ժիր մշակները: Որովհետև հայկական ոգու մի անբացատրելի դաղանիքն է վերջապես, կառչել այդ անհյուրընկալ և արյունոտ հողին, մինչև վերջին մարդը, որ դեռ քաջություն ունի իրեն հայ անվանելու: Ու դեռ չմարած ծուխի վերջին հետքերը հրդեհվող քաղաքներից, դյուղերից և դաշտերից, դաղթող ժողովուրդն ու իր դործիչները մի բան միայն մտածեցին, ոտք կոխելով ավելի ապահով հորիզոնների մեջ՝ կազմակերպել վերաշինությունը: Շատ ուրախալի է, որ ոչ մի մտապրություն

չեղավ վերադառնալ նորից ավերակ դարձնելու ավերակները, որ մեզ չեն տալիս, այլ անգամ այդ ժամանակը, առաջին գործն եղավ վերադառնալ վերաշինելու ավերակները, որ ոչ ոք չէիտե՝ մեզ տալո՞ւ են երբեք:

Դրանից հետո ահա, անհրաժեշտ է այս եզրակացությունն անել, որ մենք այնքան էլ չդժգոհեցինք, որ այդքան շատ ավերակներ ունեցանք: Գուցե մարդիկ գանվեն, որ բացատրեն այս բանն էլ, ցանկանալով ոչինչ չթողնել անբացատրելի, թե խարխուլ չինուհյուններըր նորոգելու արմատական ձևն է քանդել ամենից առաջ, հետո սկսել. Կամ գուցե, ոչ մի հին ձև չթողնել մի սկսվող կյանքի համար, որ ըստ ամենայնի նոր է լինելու: Կամ թե, մեռնող պետությունը պետք է ներկայանար իսկապես ավերակներով և անապատներով, և թե բազմահազար նահատակներից հետո պետք է չինել մի Հայրենիք, որ այլևս նահատակներ չպահանջի: Համենայն դեպս մենք ահա, ես չգիտեմ թե բոլորն ինչպիսի սրտով, ընդունեցինք մեր Հայրենիքից ավերակներ միայն, և մտածում ենք վերաշինել: Ես ոչ մի լավ բան չէի տեսնի ավերակների մեջ, եթե չտեսնեի մի մարդ, որ վերաշինությամբ էր զբաղվում կամ մտահոգվում: Բայց, երբ ոչ մի մարդ չեմ տեսնում, որ վերաշինությամբ չի մտահոգվում, այն ժամանակ, ակամա, մտքիս են գալիս այս խորհրդածություններըր և ինքս ինձ ասում եմ. այս ժողովուրդը, որ վերաշինել է ուզում, դեռ անծանոթ է սճիրին, դեռ չարիքները չի ճանաչում, նա վնասվել չգիտի, այլ օգտվել միայն՝ ամեն բանիցն էլ:

* * *

Պատմությունից և առօրյա կյանքից բավական փաստեր վերցնելուց հետո՝ ապագային հայտարանալու համար, այժմ դառնանք, իրականության մյուս երեսին նայենք, որ այնքան շատ համեստության կոչեր է ուղղում մեզ: Անհաստարակ ամեն ապագան անորոշություններով հղի է, բայց երբ մեր առջև կա մի ապագա, որ կարող է իրականացնել ամենածայրահեղ հակաստվածությունները անգամ, այն ժամանակ լավ է և իմաստուն՝ մի բան անել որոշելուց առաջ այդ ապագայի մեջ, որոշել այն բոլոր բաները, որ պիտի չանել: Ծրագրելով գործունեության մի թեական կամ «եթեական» հիմունք, մենք մեզ նախապատրաստած կլինենք ամեն անակնկալների առջև, որոնք այնքան սովորական են մեր ճակատագրի մեջ: Բայց եթե ծրագրվելը մի անհատական առաջարկություն է լինելու, այն ժամանակ այդ թեական հիմունքը կարող է այսպես տրվել, եթե ավերակները մեզ չեն

տալու, ես առաջարկում եմ վերադառնալ ավերակները նորից ավերակ դարձնելու համար միայն, հակառակ դեպքում մնջոեղը մնում է այն, որ ծրագիրը է, ոչ թե իրրև անհատական առաջարկություն, այլ իրրև ընդհանուր տրամադրությունների կազմակերպումը: Կանգնելով այս վերջին տեսակետի վրա, այսինքն, որ այստեղ պիտի տալ ընդհանուր տրամադրություններին մի ուղղեցույց, որ կարող է օգտակար լինել, ինչքան էլ անիրագործելի լինի, պիտի որոշել համեմատական դեպս, մի բան անելուց առաջ՝ հակասություններով հղի այդ ապագայի մեջ, այն բոլոր բաները, կամ այն հիմնական սխալները, որ պիտի չանել: Այսպես ուրեմն, ընդունելով, որ իրականությունը գնում է հակառակ անհատական ցանկություններին, որ վերաշինություն լինելու է անպայման, պետք է, ուրեմն, անակնկալների առաջն առնել, հաստատուն հիմքերի վրա դնելով մի գործունեություն, որ տատանումների տեղիք չտա երբեք, որ իրաչաճումներ չառաջացնի և իրագործումն լինի միայն մի բանի, որի ամենավերջին մանրամասնությունները առաջուց կանխատեսված և սահմանորոշված են, գծագրված իրենց սկզբնական և զարգացման ձևերի մեջ, ու կանխորոշված իրենց ծավալով, տարողությամբ և նպատակներով: Ահա թե ի՞նչ պիտի չանել:

Դժվար գործ, իսկապես, անգամ իբրև ծրագիր: Ո՛չ մեր նպատակը և ո՛չ էլ նյութի սահմանները թույլ չեն տալիս արմատական քննադատությամբ մոտենալու մեր հասարակական մի չարք վիրավոր գործելակերպերին: «Պիտի չանել», մի խոսքով կարելի է ասել, այնպես, ինչպես եղել են մինչև այժմ մեր հասարակական բոլոր գործերը: Պետք է ստեղծել ամենից առաջ հասարակական լուրջ, տևական և ավանդապահ մի հսկողություն մեր բոլոր գործերի վրա, որոնք ազգային քնուցք են կրում և կարող են միշտ թեքվել դեպի այն ուղղությունները, որոնց քննադատությունը բոլոր չրթների վրա է: Դուրս պետք է մնան, հետու յոթն հորիզոններով բոլոր նրանք, որոնք հայ ժողովրդի կյանքի և ապագայի դարբնման գործին մոտենում են իբրև թևրուսներ և սխրողներ: Պիտի արտաքսել գործից նրանց, որոնք կոչված չեն այդ գործը տանելու, ոչ թե իրենց ընդունակությունների պատճառով, այլ իրենց ցույց տված լրջության համար այն բոլոր գործերի մեջ, որ երբևիցե իրենց վստահել է պատահականությունը: Ո՞վ կլինի տերն այդ ապագայի մեծ վերաշինության գործին և զսպանակը, այդ ոչ ոք չգիտի: Բայց բոլորս էլ գիտենք, որ կա ու կմնա միշտ հայ ժողովուրդը: Նա ունի բավական սակավ մի կուլտուրական անցյալ, նա կարող է այժմեանից իսկ այդ

մեռնող անցյալի մեջ թաղել մի չարք վերապրումները, որ այդ անցյալի հետ չմեռան սակայն: Դեռ հիսունական [1850-ական] թվականներից մնացած կրքեր և ատելություններ կան այսօր. հայ ժողովուրդը հասել է այնտեղ, որ էլ տեղ չունենա ոչ իր սրտում, ոչ էլ իր ուղեղում, այդպիսի հին սերերի ու ատելությունների համար: Պետք է հսկել, որ ավերակները չսրբապղծվեն այդ հնոտի նախապաշարմունքներով: Ուրիշ շատ կողմերով աղքատ մեր կյանքը, սակայն, հարուստ է բավական, այլ ասպարեզներ ցույց տալու համար դրանց: Հայտարարության համար, ռեկլամի համար գործող ինչքան անհատներ կան և ընկերություններ: Պինդ պիտի փակել նրանց առջև բոլոր դռները, որ տանում են դեպի ավերակներն ու վերաշինությունը: Նախանձի համար, խանդի համար, մրցման համար ինչքան գործիչներ կան. վերաշինություն պետք է լինի ամենից առաջ նրանց ցույց տալ այն ճանապարհները, որ հեռացնում են նրանց վերաշինությունից: Գործի սերը, պատասխանության գիտակցությունը և հայ ժողովրդի ապագան դարբնելու սրբազան իդեալները պիտի լինեն միակ տեսակետները, որոնք վճռական և հրամայական նշանակություն են ունենալու: Դրա համար պետք է մերժել նրանց, որոնք պատրաստ են ամեն բանի, և գտնել ու երևան բերել նրանց միայն, որոնք կանեն, եթե միայն իրենց վստահություն և արժանապատվություն հայթայթվի: Մեծ գործի մշակները պիտի լինեն լուռ հերոսներ, այդ մշակների ընտրությունից է կախված ամեն բան: Ոչ թե ի՞նչը, ամենից առաջ, այլ միայն ի՞նչպես՝ ամենից առաջ: Եվ դա կախված է մշակների ընտրությունից: Հայ ժողովուրդը պետք չունի այնպիսի վերաշինության, որ կատարվելու է հայտարարության համար, մրցման համար, բարեկամներին գործ դանելու համար: Ամեն մի մերժում, որ մենք այստեղ պայմանագրում ենք, ունի իր պատմությունը երկար և խայտաբղետ: Մեր կուլտուրական անցյալից հետո է, որ մենք, ամեն հայ իրավունք ունի ասելու. մենք ոչ մի ազգային գործ չենք ուզում, եթե այդ այդպես է լինելու:

* * *

Եթե միայն գործին տեր լիներ, մի որոշ, հաստատուն տեր, իր հեղինակությամբ պատկառանք ներշնչող, իր պատասխանատվությամբ վստահություն վայելող..., այն ժամանակ, իհարկե, կարիք չէր լինի անորոշ «հայ ժողովրդին» տեր կարգել, և նրան վստահել մի չարք սրբագրություններ մեր պատմական գործելակերպի: Բայց անորոշ ապագան մեզ դատապարտում է բավականանալ անորոշ տե-

ընթով. Դժվար է ասել, թե ինչպես է լինելու այդ կազմակերպությունը, բայց եթե վերաշինությունը անհերքելի կերպով մի օր դառնա ազգային պարտականություն, այսինքն աննպատակ վերաշինությունը չլինի մի երկրի, որ չգիտենք մեզ տալո՞ւ են թե ոչ, այն ժամանակ կարելի է հուսալ, որ այդ նոր, խոստումնալից կյանքի համար ոչ մի մարդ դեմ չի լինի, որ նոր մեթոդներով և նոր գործիքներով աշխատանք կատարվի: Ինչքան մտածվի ամեն պայմաններին հարմար վերաշինության ծրագիր տալ, անկարելի է դարձյալ անտեսել վերաշինության նպատակը, վերջնական իդեալը, որ պիտի կարողանա մի ամբողջ ազգ շարժել տեղիցը և գործի մղել: Պետք է անպատճառ, որ վերաշինությունը դառնե հնարավոր ապագան վարդապետ ցույց տա: Այդպես միայն նորմալ զարգացում կունենա մեր չինաբարական հոգեբանությունը և կկարողանանք ասել, թե ինչքան լավ են քանդված, այնքան և հեչտ է դառնալու գործը:

Հետաքրքիր հասարակագիտական փորձերի մի դաշտ է ներկայանում մեզ այն ժամանակ գործելու համար: Պատմություն ունեցող, անցյալ ունեցող ժողովուրդները չատ դժվարությամբ են կարողանում մի անգամով վերականգնել գոնե պատկերացումը իրենց ազգային կյանքի, ի՞նչ ծագում, զարգացում և փոփոխություն են ունեցել, ի՞նչ սկզբնական և վերջնական նպատակներ, այն բոլոր հասարակական գործառնություններն ու հաստատությունները, որոնց ցանցը կապում է մի ազգի ներքին կյանքը: Դժվար է որոշել այդ, ամենքը գիտեն, որ կան այդպիսի բաներ, բայց մեկը չգիտի, թե ինչ ազգեցություններ հետևանք են եղել դրանք: Մեծ գեր է խաղացել անշուշտ ժամանակի ընդհանուր աշխարհայացքը այսպիսի անտեսական գործունեության ձևեր ունենալու և ոչ թե մի ուրիշ տեսակի, այսպիսի գպրոց, և ոչ թե այնպիսի, այսպիսի կազմակերպություն և ոչ թե այնպիսի և այլն, և այլն: Այժմ ահա, ոչնչից մի երկիր պիտի ստեղծել, մի քաղաքակրթություն կազմակերպել, ո՞րն է լավագույնը, որ պիտի ընտրել:

Ազգեցությունները բազմապիսի են, որոնք վճռական նշանակություն կարող են ունենալ: Մենք անտեսում ենք դրանց առանձին-առանձին, որպեսզի բոլորի համար էլ կարելի լինի ընդհանուր մի տեսակետ մշակել: Թեև մարդկային հոգուն ներհակ ազդեցություններ կան, որոնց վրա կանգ առնելը բավական կլինի արդեն ընդհանուր աշխարհայացքի մշակման համար: Ավելի պարզելու համար մեր ասելիքը, փաստերի վրա կանգնենք: Ինչպիսի պայմաններ էլ ներկայանան, եթե մենք ազգովին դեր պիտի ունենանք վերաշի-

նուիրյան գործի մեջ, այն ժամանակ հարց է առաջ գալիս՝ պիտի աշխատել ո՞ր ազդեցություններն ավելի քաջալերել և ընդգրկել՝ անհատակա՞ն, թե համայնական: Վերաշինություն կատարվելու է համայնական ջանքերով անշուշտ, բայց կատարվելու է նաև անհատական ջանքերով: Հայտնի է արդեն, ուրիշ երկրների պատմությունից, թե ի՞նչ արդյունքներ են տալիս այդ երկու տիպի գործունեությունները: Կարելի չէ՞, օրինակի համար, այնպես անել, որ տնտեսության մեջ անհատացումը նվազագույն չափերի հասնի: Համայնական ազգային դրամագլուխ է, պետք է դա չանհատանա, պետք է համայնական լինեն գործիքները, մի խոսքով աշխատանքի միջոցները: Հարյուրավոր փաստաթղթերով մարդիկ կներկայանան, իրենց կորուստների հատուցումը պահանջելու: Վերաշինություն կլինի ոչ թե նրանց տալով իրենց հասնելիք դրամագլուխը, այլ նրանց տեղավորցնելով, ամեն մեկին իր համապատասխան տեղում, համայնական դրամագլխի գործունեության մեջ: Արդեն սաղմնային կերպով կան այժմ իսկ, գաղթականների մեջ, համայնական դրամագլխով աշխատող արհեստանոցներ: Ինչ որ ոսկերիչների և կոշկակարների համար կարելի է եղել անել ինքնաբերաբար, առանց կանխամտածված ծրագիրների, օտար և անհյուրընկալ հորիզոններում, ինչո՞ւ պիտի կարելի չլինի վերաշինված Հայրենիքի մեջն էլ չարունակել և տարածել արտադրության բոլոր ճյուղերի վերաբերմամբ էլ: Եվ ինչո՞ւ միայն արհեստների վերաբերմամբ: Առևտուրը, արտահանությունը և ներածությունը արդեն որոշ քաղաքակրթված երկրներում անցել են համայնականացման բովից: Այդ երկրներում ժողովրդական լուսավորության մակարդակը և մրցումն են նրանց բերել այդ մեթոդներին. մեզ մոտ տնտեսական ուժն է, որ մեր ձեռքին կարող է հոսել այն և այնպիսի խողովակներով, որպիսին մեզ թվում է լավագույնը: Կոոպերասիոնը կազմելու է մեր տնտեսական վերաշինության հիմնական սկզբունքը. կոոպերասիոն պահանջի և առաջարկի կազմակերպության մեջ, դրամագլխի դասավորման մեջ, շահի բաժանման մեջ, արտադրությունների կենտրոնացման և ցրվումի և արտահանության մեջ, ներածության դնումի և բաժանման մեջ: Նեղ-համայնական տնտեսական կարիքներ կան, ջրաղաց, ջրաբաշխություն և այլն. պետք է չտապել, որ գործը չանհատանա, թեև որդեգրած սկզբունքն ունի այնքան կենսունակություն՝ դրա դեմ մրցելու համար: Գյուղատնտեսության բոլոր ճյուղերն էլ ինչքան որ մեծ ընդունակություն են ցույց տալիս համայնական գործունեության, այնքան և մեծ համառություն են ցույց տալիս՝ կառչելու անհա-

տացման: Ո՞վ է որ մի կով, կամ մի փեթակ, կամ հավեր պիտի չուզենա պահել: Համայնական սկզբունքը այստեղ իր գերագանցությունը պիտի ցույց տա ոչ այնքան արդելիչ միջոցներով, որքան պարզ ու հասկանալի դարձնելով, ուր դրանք կարող են մի ընտանեկան տնտեսության ապրյուրները դառնալ միայն այն ժամանակ, երբ դրվին համայնական հիմքերի վրա: Հացահատիկները, բանջարները և անասնաբուծությունը ներկայացնում են համայնական գործունեության մի լայն դաշտ: Մենք պիտի պատապարտենք այդ երկիրը տասնյակ տարիների ողբալի մի դադարության, եթե համայնական նեղուժ աշխատանքով չբարձրացնենք, չտեղծենք մի բարձր տնտեսական դրություն: Հայտնի է արդեն, թե Հայաստանի որոշ շրջանները ինչպիսի պտղաբերություն ունեն, թե որոշ նահանգների միակ հարստություն եղած են ոչխարների և առհասարակ տավարների հոտերը: Համայնական հիմքերի վրա կարելի է կարճ ժամանակում բարգավաճել սկզբնական դրամագլուխը, պահիվ և բնդմնավոր տեսակների ընտրություն պաշտպանելով, լուրջ խնամքի տակ պատել ամեն տեսակ պատահականություններից և տեղծել նպաստավոր չուկաներ: Հանքահարուստ մի երկիր է Հայաստանը, կապարի, պղնձի, նավթի, արծաթի և քարածուխի բազմաթիվ հանքեր են տեսել հանապարհորդները. պիտի ձեռնարկել անմիջական շահագործության: Լավ կլինի, իհարկե, որ «ազգային շահագործում» հասկացվի ոչ թե մի հայ Կրեսոսի ձեռքով կատարվածը, այլ համայնական դրամագլխով, համայնական հարստության հաշվին: Այստեղ մանավանդ մեծ դեր է խաղալու պետական կազմը, որ ունենալու է այդ երկիրը, բայց ինչպիսին էլ որ լինի, եթե մենք ազգովին գնում ենք վերաշինության, ոչ մի կազմ չի կարող մեզ նկատի չունենալ, նույնիսկ այդ տեսակ գործելուց: Պետք է, որ մեր կամքը կազմակերպված լինի դրա համար: Նույնպես մեծ դեր է ունենալու պետական կազմը մաքսային և հարաբերության (հանապարհների հաղորդակցության) խնդիրների մեջ: Թող մեր համայնական ուժն ու ոգին կազմակերպված լինի, էականն այդ է. մնացյալի մասին ապագան ինքն հոգում է:

Մի խիստ ծանրակշիռ հարց էլ կա, որ մեծ չափով կապվելու է դարձյալ երկրի ներքին-կառավարչության հետ: Հողային հարցն է դա. ինձ չի հետաքրքրում բոլորովին թե ի՞նչ լուծում կստանա դա, երբ այդ երկիրը այս կամ այն ձևով մեզ չտան: Բայց անհրաժեշտ է, երբ մեր կամքը դործելու է այդտեղ, մտածել հողերի համայնացման մի իմաստուն ձևի մասին, որ կարողանա արդյունավոր և տևական

լինել, ու համապատասխանի երկրի ներքին պայմաններին, դրացիների դիրքին և հավակնություններին ու վերջապես ժողովրդի սովորություններին ու հոգեբանության: Վրդովեցուցիչ է մտածել, որ դժբախտ այդ երկիրը արյունոտ հալածանքներից հետո տեսնի տնտեսական ողբերգություններ: Այդպես չի կարող լինել ոչ մի վերաշինություն. դա կլինի ազգային մի ինքնակամ դատապարտություն և միաժամանակ հոռի հասկացողություն նպատակների՝ այդ երկրի տնտեսությունը բարձրացնելու: Եվ վերջապես միայն մարդիկ չեն տուժել այդտեղ, այլ բնությունն ամբողջ, մի անմիտ բռնակալության ձեռքից: Պիտի չտապել երկիրը զարգարել բուսականությամբ և անտառներով. բացի տնտեսությունը բարձրացնելուց, դա կնպաստի և կլիմայի մեղմացման, ուրեմն և կուլտուրայի ավելի մեծ առաջադիմության: Մի անգամ էլ ասենք, որ այս մեծ գործերը ինքնահասկանալի են թվում նույնքան, որքան վերաշինությունը այդ երկրամասի, որից անկարելի է լինում հային հեռացնել: Կապված մեծ չափով պետականության հետ մեր վերաշինությունը այլ կերպ էլ չի կարող լինել, քան պետական մի գործառնություն: Մի քիչ զգուշավորություն մեր կանխատեսության մեջ անհրաժեշտ է մի ապագայի հանդեպ, որ անորոշություններով բևեռավորված հնարավորությունների մի մթություն է միայն:

Բայց անկարելի է այսպիսի ծավալով գրվածքների մեջ գոնե կատարյալ թվումն անել տնտեսական այն բոլոր գործառնություններին, որոնք կարող են ստեղծել մի նոր տիպի երկիր, և հիմք դնել մի նոր տնտեսական քաղաքակրթության: Պիտի կազմակերպել ամենից առաջ համայնական կամքը, նա պիտի մտածի անել կատարյալ թվումն այն բոլոր ասպարեզների, ուր իր գործունեությունը կարող է տարածվել. և ոչ միայն թվումն, այլև մանրամասն, դիտական մշակումն ու ծրագրումն իր ամբողջ գործունեության: Հարցը, սակայն, առայժմ պատկերանում է այսպես, թե անվիճելի՞ է արդյոք, որ պիտի ընդգրկել համայնական մեթոդը տնտեսական գործունեության մեջ և միաժամանակ որոշ մտադրություն դնել անհատացումն արգելելու: Իմ այս հոդվածի ընդհանուր ոգուցն իսկ բխում է, ավելի զբաղվել հարցադրությամբ, քան թե հարցերը դնել վճռելու, լուծումներ բերելու համար: Ինչ որ վճռական է, այդ էլ այն է, որ վերաշինությունը լինելու է ազգային ջանքերով, եթե իհարկե դրա համար տվյալ պայմանները լրացած են. այն ժամանակ ազգային ջանքը պիտի անպատճառ ստանա այնպիսի կազմակերպություն, որ ընդունակ լինի ըմբռնել գոնե հարցադրությունը. նա ինքն վճռելու է, թե ո՞րն

է լավագույնը այնուհետև: Նրա անելիքներից է վերջապես, զբաղվել ամենից առաջ հաշտեցնելու տնտեսության մեջ հավիտենական ներհակությամբ իրար դեմ կանգնած անհատական և համայնական սկզբունքները: Ինձ համար կարևորը հարցադրությունն է, որովհետև կարող է պատահիլ, որ մի թեթև ուսումնասիրության մեջ կարելի չլինի պարզ տեսնել տնտեսական գործունեության այնպիսի ձևեր և ուժերը, որոնք մեր երկրի, մեր պայմանների մեջ լավագույն լուծում և ընթացքը կարող են ստանալ միայն անհատացման սկզբունքներով: Վերջապես կարելի չէ ստեղծել մի այնպիսի մթնոլորտ, ուր անհատական նախաձեռնությունը, որով յոթն երկինքն է բարձրանում հայը, բոլորովին խեղդվի կամ ոչնչանա: Ինչպես ստեղծել կարճ ժամանակի մեջ մի բարձր տնտեսություն այդ հարուստ ավերակներում. ահա առաջին և վերջին մտահոգությունը մեր համայնական գործունեության՝ վերաշինության մեծ շրջանակի մեջ:

* * *

Հարցադրության ձևն իսկ ցույց է տալիս, թե համակրությունը ավելի ո՞ր կողմն է հակված, բայց անհրաժեշտ է, որ հարցը մնա միշտ հարց, երբ վճռողը մի անհատ է, նա լուծումն ստանալու է միայն իր պատկանյալ, հնդկնակավոր մարմնի կողմից: Այս տեսակետից կարելի է անարգել շարունակել, իբրև հարցադրություն, առաջարկված մեթոդի մշակումը ազգային վերաշինության այլ ասպարեզներում: Թեև այս աշխատանքը երբեք չի հավակնում ծրագրային ճշտության, և մանրամասնությունների ամբողջական պատկերը տալ, այլ միայն մի ընդհանուր գաղափար, թե ի՞նչ ուղղություն և բնույթ է ունենալու մեր վերաշինությունը:

Զուգընթացաբար տնտեսական գործունեության՝ առաջ պետք է տանել կուլտուրական-կրթական-ազգային հաստատությունների կազմակերպությունը: Միակ անելիքը, որ կապմելու է մեր առաջին մտահոգությունը, այդ էլ լինելու է մեջտեղից վերացնել պատահականությունները, քմահաճույքները և անձնական ուժիմը, որ այնքան սովորական երևույթ է եղել մեր կուլտուրական կյանքում: Եթե դպրոցներ պիտի հիմնել, այդ լինելու է ոչ թե յուրաքանչյուր գյուղում, կամ քաղաքում, պատահաբար ներկա գտնվող մարդկանց կամ ուսուցիչների ցանկացած և դիտցած ձևով, այլ հաստատուն, կանխորոշված և մտածված ծրագրով և տիպերով: Պետք է բխի անշուշտ մեր վերաշինությունը մի կենտրոնական մարմնից, առանց դրան, ոչ

մի վերաշինություն չի կարող ազգային գործ համարվել: Ահա այդ գոյություն չունեցող մարմինն է, որ անելու է ամեն բան: Ինչքան որ իր աշխատանքը լինելու է մի ստեղծագործություն, այնքան և ոչինչ նոր բան ստեղծելու չէ նա: Այն մարմինը, որին նա վստահելու է, օրինակի համար, դպրոցական գործը, ներկայացնելու է անշուշտ իր կոչման գիտակցությունն ու հեղինակությունը, նա դիտի որ ինչպիսի հիմքերի վրա է դրված ժողովրդական լուսավորության գործը զանազան երկրներում, և թե ո՞րն է լավագույնը, որ պիտի որդեգրել մեզ համար, մեր տվյալ պայմանների մեջ: Մանր պարտականություններ կան դրված մի այդպիսի մարմնի վրա. նա ոչ միայն պիտի նայի դեպի առաջ, միայն լինելիքի վրա, այլև պիտի նկատի ունենա անհրաժեշտորեն, ինչ որ հղել է, ինչ որ անցյալ է: Այդ անցյալը կուլտուրական պատակատումներ է առաջ բերել, առանց այն էլ փոքրաթիվ, քաղաքականորեն և աշխարհագրականորեն պատակված ազգի մեջ: Ժամանակ է մտածել այդ սրբագրությունների մասին, մեր մեծ վերաշինության գործի ժամանակ: Լեզվական, գրական և առհասարակ հոգե-մտավոր ինչպիսի տարակարծություններ կան, որ պետք է հարթել, կոկել և ջնջել: Այժմ, կամ երբեք: Կարելի է ասել այժմ, եթե դրանք պիտի վերանան, այժմ պետք է լինի այդ, կամ երբեք չի լինելու այլևս: Պետք է ստեղծվի ամենից առաջ դպրոցական այնպիսի տիպ, որ բավարարություն տա երկրի բնակիչներին առհասարակ, ազգային գործը կանգնելու է այդտեղ մարդկային բարձրության վրա: Միջոցների ուժը ցույց կտա մեզ, թե որքան է լինելու աստիճանների և տեսակների թիվը լուսավորության գործում: Շատ ցանկալի է, որ գիտությունը ձեռք մեկնի տնտեսության, և դա էլ լինելու է արհեստագիտական դպրոցներով: Ժամանակը և միջոցները ցույց կտան, թե աստիճաններն ու տեսակները որքան են լինելու, բայց մի բան պարզ է այժմեանից, որ մի հաստատուն տիպ պիտի լինի գոնե տարրական և տարրական-բարձրագույն դպրոցների: Մեր դպրոցական անցյալը կատարյալ իրավունք է տալիս մեզ կանգ առնելու այժմ այլևս հաստատուն հողի վրա, ազատվելու տատանումներից և մոցնելու մի ընդհանուր միօրինակություն առարկաների, պարապմունքների, տարիների, դասագրքերի և նման հարցերի մեջ: Մեր լեզվի, մեր պատմության և մեր աշխարհի բազմակողմանի ճանաչողությունը հիմք պիտի կազմի այդ կրթության, ինչպես և մտավոր ու հոգեկան առողջությունը պիտի լինի մեր դաստիարակչական իդեալը: Բայց անկարելի է այստեղն էլ գոնե հարցերի թիվը ապահով: Մի նոր կյանք, որ սկսելու է, ուր ամեն բան նոր է լինելու, ան-

կարելի է առաջուց կանխատեսնել բոլոր հնարավորությունները: Մի բան, որ կարելի է անել, դա կենտրոնական-պահպանողական արդելիչ ուժն է, որ պիտի ստեղծել, նրանից է բխելու ամեն ստեղծագործություն, որ ազգային-ժողովրդական գործ է լինելու:

Բայց կրթական գործին զուգընթաց դեռ շատ հաստատություններ կան հիմնելու: Հինը որ դնում է, դեռ ապրում է մի որոշ ժամանակ էլ նորի մեջ, պիտի պինդ բռնել հնության այդ թանկագին վայրկյանները, լինեն հիշատակներ, կամ հիշատակարաններ, մի քար կամ մի փայտ, որ կարող է որևէ կերպով մեր արյունոտ անցյալը կենդանի պահել: Երկյուղածությամբ պիտի հավաքել, արձանագրել, լուսանկարել և պահպանել, ինչ որ մի խոսք, մի բառ կարող է պատմել մեզ և մեր հետնորդներին: Եվ սա ազգային լինելուց ավելի, մի ընդհանուր-մարդկային պարտականություն է: Մեծ ողբերգության մեջ ազգայինից ավելի այդ ընդհանուր-մարդկային տանջանքն է երևան գալիս: Պետք է նորոգել մեր մեծ պատմական հուշարձանները և նրանց տևական և խոսուն դոյության վստահել մեր նոր պատմության դրվագները և մնացորդները: Բացի պատմական արժեքից մեր այս աշխատանքը ունի և խոշոր դաստիարակչական նշանակություն: Պետք է որ վերջապես մեր ժողովուրդը, անգամ մեր մտավորականությունը մի քիչ ավելի խորացնի իր կյանքն ու աշխարհայացքները, մի քիչ կարողանա կտրվել առօրյայից և կապվել ավելի մեծ ծավալով ժամանակների ու տարածությունների հետ, և դա լինելու է մեր ամբողջական, դոնե նորադույն պատմության կենդանի վկայաբանություններով:

Բացի այդ, չի կարող կրթական գործը առաջ գնալ, առանց ազգային և առհասարակ մարդկային մտավոր գանձերի օգնության. պիտի կազմակերպել ամեն տեղ գրադարաններ, որոնք վստահելի ձեռքերի մեջ, ժամանակի ընթացքին դուրս կգան սալմնային վիճակից և կդառնան գործավոր գործակիցներ լուսավորության վառարանների: Մի անվերադարձ դատապարտություն կա մեր դլխին կախված, որ մենք ամեն բան նոր պիտի աննենք, ոչինչ պիտի չկարողանանք չաքսնակել, իսկ կուլտուրական գործը միշտ անցյալ է պահանջում հաստատուն լինելու համար՝ ամենավոքը քամու առջև չծռվելու համար: Պետք է պարզ զգալ այդ դատապարտությունը, որպեսզի կարելի լինի սկզբից, և եթե այնպես հաստատուն դնել հիմքը, ամեն բան այնպես անել, որպես թե շարունակություն է, որպես թե իր հաւն ունի մի խոշոր անցյալ և տատանումներից չի վախենում:

* * *

Տալով վերաշինության այս մի քանի խոշոր գծերը, ասենք մի վերջին անգամ էլ. մեր նպատակը չէր սպառել հարցը իր թվումի և մանրամասնությունների մեջ: Անհատական ուժերից բարձր է դա, անորոշություններով ծածկված մի ապագայի համար անկարելի է դա. ինչ որ այս ներկա վայրկյանին կարելի է, և ինչ որ անհատական ուժերից վեր չէ, այդ էլ կլինի այն՝ որոշել թե ինչպիսի՞ աշխատանքն է, որ կարող է կոչվել իսկապես վերաշինություն, և եթե լինելու է երբևիցե վերաշինություն, ի՞նչպիսի գործելակերպ պիտի որդեգրել: Զանազան խմբագրությունների կամ ընկերությունների կատարած աշխատանքը, ի՞նչ անուն էլ կրելու լինեն դրանք և ի՞նչքան շատ էլ գործ անելու լինեն, չի կարող երբեք վերաշինություն համարվել: Ժամանակն է վերջապես մեր նորագույն պատմության մեջ կազմակերպել ազգային կամքը: Վերաշինությունը մի ընդհանուր ազգային-ժողովրդական տրամադրության արդյունքը պիտի լինի, և ոչ թե անհատական ցանկությունների իրագործումը: Մենք պնաք է այս անգամ այո կամ ոչ ասելով, ճշտենք մեր դիրքը մեր արյունոտ անցյալի հանդեպ: Ամեն գնով վերաշինելու մարմանջը ուզում է մոռանա՞լ, որ մենք չենք կարող ներել գրավոր կամ բերանացի արված խոստումները, այն բոլոր հավանականությունները և տրամադրությունները, որ Արևելյան հարցի պատմությունը կարող էր արթնացնել մեր մեջ, այն բոլոր ներդործական և կրավորական օժանդակությունները, որոնք որոշ չափով նպաստեցին Հայաստանի նվաճման առաջադրություններ, որոնք մեղ բերին կատարյալ հուսախարության: Ամեն գնով վերաշինելու մարմանջը պիտի այնքան կորցնի իր հավասարակշռությունը և քաղաքական խորոգությունը, թե մենք շատ մեծ գենքեր ունենք բողոքի և մեր ձայնը լսեցնելու, որոնք, սակայն, ոչնչանում և խորտակվում են վերաշինության ամեն մի քայլից: Վերջապես ո՞ր վերաշինությունն է, որ պիտի կարողանա ազատվել այս ծանր դատապարտությունից, թե չկամենալով վերաշինությունը դարձնել ազգային քաղաքականություն, հայ ընկերությունները առաջինը հարվածեցին հայ իդեալներին և գործ հայթայթելով իրենց մարդկանց, նրանք ծախեցին Հայաստանի ապագան և բախտը: Եթե սեղիք էլ չլինի այսպիսի մտահոգություններին, մի ուրիշ դատապարտություն էլ մնում է կախված մեր գլխին, մեր վերջին

տասնամյակների կուլտուրական պատմության սովորություններից: Այն ժամանակ, ընդունելով տրված ներքին և արտաքին քաղաքական պայմանները մեզ նպաստավոր՝ հնարավորության սահմանների մեջ անչուշտ, դեռ հարց է մնում՝ ի՞նչպես անել վերաշինությունը, որ պա լինի իսկապես ազգային-ժողովրդական մի աշխատանք: Որովհետև վերաշինությունը լինելու է տնտեսագործության կուլտուրական մի տիպի, այդ պատճառով առաջին մտահոգությունը պիտի դառնա՝ անել այնպես, որ պահպանվի ամբողջության և ներդաշնակության այդ տնտեսագործության մեջ. մասերի կապակցությունը պիտի լինի գործարանավոր, որպեսզի առաջվի իսկապես մի ամբողջություն, և ներդաշնակ՝ որպեսզի վերաշինելը չլինի վերաքանդել: Իսկ դրա համար վերաշինությունը պիտի բխի մի կենտրոնական մարմնից: Մանր, պատմական պատասխանատվության զգացումը պետք է լինի միակ ոգին, որ տիրապետու է այդ մարմնի մեջ, մի զգացում, որ առաջ է գալիս միշտ գործի տիրոջ մեջ և բացակայում է միշտ նրանց մեջ, որոնք գործին մոտենում են իբրև սիրողներ և թնդուններ: Մրագիր, կանխամտածություն և կազմակերպություն ամեն գործի մեջ – դրանք են լինելու գործի մեթոդները, առաջնորդող սկզբունքները դործելակերպի մեջ: Միջոցները չեն պակասի, եթե տնտեսված պայմանները նպաստավոր են: Անդամ ամենատնտեսատ պայմանների մեջ, եթե վերաշինությունը դառնա իսկապես ազգային կամքի իրագործումը, այն ժամանակ, կրկնում ենք միջոցները երբեք չեն պակսի, ոչ նյութական, ոչ էլ մտավոր, ցանկալի բարձրության վրա դնելու համար ընդհանուր գործը: Գաղթականական գործով զբաղվող հայկական հատուկ ընկերությունների մի համագումար, անդամ գաղթականական անցդակի, ժամանակավոր գործի համար տասնյակ միլիոնների նախահաշիվներ էր պատրաստում: Ճիշտ է, այդ բոլորը ի հաշիվ ուրիշի: Բայց չէ՞ որ, եթե վերաշինությունը ազգային կամքի արտահայտությունից բխի, այդ նշանակում է արդեն միջոցները հայթայթված են. կամ թե միջոցների ապահովությունն ու ներկայությունն է, որ հարց կարող է առաջ բերել, թե ի՞նչ է լինելու վերաշինության մեջ մեր ազգային քաղաքականությունը: Այն րոպեին, երբ վճռվում է հարցը գլխավոր մաքով, ճիշտ այդ ժամանակ է ահա, որ մեր ընդհանրական կամքը կարող է ջլատվել հին մեթոդների սիրահարների կողմից: Այդ ժամանակ է, որ պի-

տի սկսել թաղել անմիջապես անցյալը, և նոր հորիզոնների համար նոր դիրքեր, նոր աչքեր և նոր գործիքներ վերցնել:

Վերաշինությունը կարող է լինել մի Հայաստանի մեջ, որ այլևս ~ վիճելի չէ իբրև ինքնուրույն գոյություն: Վերաշինությունը պետք է լինի մեր ազգային-ժողովրդական կամքի արտահայտությունը: Վերաշինությունը պարտավոր է գիտակցել և կրել այն ծանր և պատմական պատասխանատվությունը, որով միայն մի ժողովրդի գործիչները արժանի են լինում իրենց ժողովրդին, և կարողանում են հրդեհե փոթորիկներից ազատված, և արյան օվկիանոսների վրա լողացող նավը տանել դեպի խաղաղության, առաջադիմության և քաղաքակրթության նավահանգիստները:

Թիֆլիս, 14 նոյ[եմբերի] 1916 Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր:

ԲԱՐՈՒՆԱԿԸ ԵՎ ԲԱՐՈՒՆԱԿՆԵՐԸ

Նրա անակնկալ մահը խոր վիշտ պատճառեց բոլոր նրանց, որոնք առիթ էին ունեցել նրան ճանաչելու: Այդ մահը, սակայն, մի պատկեր է, որ նեղ-անհատական ծանոթությանն սահմաններից անցնում և առանում է մի կողմից լայն պատմական և, մյուս կողմից՝ հոգեբանական–ողբերգական մի բովանդակություն: Այն դեկորացիան, որ շրջապատում է նրա մահվան վայրկյանը, խիստ ողբերգական է: Իսկ այն ժամանակը, որ նրա մահով մի շրջան է մեզ հիշեցնում, գերազանցապես պատմական է:

Երբ դեռ չեն չորացել նրա մահվան համար թափված արցունքները, անշուշտ չտապղական մի փորձ է իր ամբողջ տարողությամբ նրանց բերել այդ մահվան հետ կապված այս երկու էական կետերը: Բայց, մենք սիրում ենք այդպես սիրել մեր մեռելներին. նրանց հետ հաշվեհարդար կատարել մի անգամ, իմ կարծիքով շատ նման նրան, որ նրանց հետ կատարում է կյանքը կամ մահը: Մեզ՝ ապրողներիս, կնքե՞ն արդյոք մեր այդ ջանքն ու չտապղականությունը մեր սիրելի մեռելները: Ահա մի հարց, որ ծանրանում է խղճիս վրա: Ես դրա համար ներողություն եմ խնդրում Բարունակից և ավելացնում, որ ինչ էլ լինի, ես հաշվեհարդար չեմ կատարում, նա դեռ շատ երկար պետք է ապրի ինձ համար:

* * *

Բարունակի մահը, իմ կարծիքով, պատմական մի շրջան է փակում: Ո՛չ իր տարողությամբ, ո՛չ էլ իր ծավալով մեծ չէ այդ շրջանը: Հազիվ թե կարելի լինի ընդհանուր ազգային նշանակություն տալ դրան. ինչպես նաև, հազիվ մի տասնամյակի վրա է հանգչում այդ շրջանը: Մի տասնամյակ, սակայն, որ բազմաբովանդակ եղավ, հակառադրական և շատ տեսակետներով էլ մեր ցեղի հատուկնայած երկունքը: Տաճկահայաստանի քաղաքական կյանքի առանձնահատկություններն են միայն, որ գավառական մի փոքրիկ քաղաքի մեջ կատարված փոքրիկ չարժումներին տալիս են մեծ արժեք և նշանակություն, այն աստիճան, որ, ինչ որ ըստ էության լայն նշանակություն չի կարող ունենալ և ոչ մի տեղ, այստեղ, սակայն, առանում է ընդհանուր արժեք և նշանակություն:

Վանի նորագարա գպրոցական երիտասարդությունը այս տասնամյակի շրջանում մարմնացումը եղավ մի շարժման, որ մեր ընդհանուր վերածնության շատ հետաքրքիր էջերից մեկն է կազմում: Մի սերունդ էր այդ, որ մի ժամանակ «Նոր սերունդ» էր կոչվում:

Թե նրանք ինչ Նոր բան էին բերում, այստեղ այնքան էլ անհրաժեշտ չէ: Բայց, ինչ որ բերում էին նրանք, պարզ ցույց էր տալիս, որ մեր վերածնության երկու հիմնական գծերի տակ չէր կարելի դնել: Իր խոշոր գծերի մեջ մեր վերածնությունը եղել է դրական և քաղաքական, իսկ ինչ որ դպրոցական երիտասարդությունը բերում էր, ո չ ամբողջովին գրական էր, ո չ էլ բոլորովին քաղաքական: Կամ, ավելի ճիշտ, այդ երկուքն էլ էր, մի քիչ տարբեր դունավորումներով, մի քիչ տարբեր որակով և չափով: Նրա բովանդակությունը, տարբերությունները, նմանությունները և առանձնահատկությունները ես թողնում եմ նրան, ով քաջություն կունենա նրանց պատմագիրը լինելու: Ես վերցնում եմ նրանց բերած հասարակական գործչի տիպը միայն, որ իմ կարծիքով գերազանցապես այդ չարժման դեռ չհասկացված, դեռ չգնահատված մեծագույն արժեքն է: Բարուճակը այդ տիպի մարմնացումն էր, այլևս փոփոխության և ձևափոխության անկարող, նրա վերջին հնարավորությունը, և ես շատ եմ վախենում, որ չլինի թե, նա նաև վերջին իրականությունն էր: Բարուճակը պիտի սիրեր, որ իր կենդանությանն էլ մենք այսպես խոսեինք, թեկուզ իր մասին նույնիսկ:

Այս տասնամյակը մեր վերածնության դրած շատ խնդիրները հասունացրեց, իսկ այդ դպրոցական երիտասարդության համար եղավ Sturm und Drang*-ի [«Գրոհ և փոթորիկ»] մի շրջան: Անսահման ցանկություններով, խիզախ և անդրդվելի վճռականությամբ երևան եկած երիտասարդությունը գործ էր ուզում, էներգիա էր բերում, որ պետք էր վատնել, պետք էր կաղապարել և օգտագործել, թե չէ կապայթեին այն անոթները, ուր կուտակվել էր այդ էներգիան: Եվ շատ ուղղությամբ հոսեց այդ ուժը, շատ չոր առուներ թրջեց, շատ ցամաք ածուներ ջրեց, պայքարի և ոգևորության բեղմնավոր դաշտեր գտավ, մերթ «դասակարգային» հավակնություններ սատարեց, հաճախ լուսավորության դարաշրջանի գաղափարները քարոզեց ինքնաբուխ հնարագիտությամբ, հանդուգն հեղափոխական գործեր կատարեց և միշտ էլ մնաց միևնույն բանը. ամեն բան արին և ոչ մի տեղ էլ չդարձան, սակայն, մի բան, որ միայն իրենցը լիներ: Միշտ ծարավի առաջադիմության, ամեն տեսակի առաջադիմության և կատարելագործության, նրանք, սակայն, ոչ մի ասպարեզում էլ չհասան այնտեղ, որին ձգտում էին, և նրանց չարքերում առաջ եկած բազմատեսակ խմորումները և ձևափոխությունները կարճաչունչ եղան, չգնացին մինչև վերջ ու մնացին մշտապես իրրև անորոշ ձգտումների տատանվող մարմնացումներ: Իրենց հասակին համապատասխանող այդ ռոմանտիզմը չլատուց նրանց ուժերը, ստեղծեց ակամա դասալիքներ հատկապես նրանցից, որոնք բռնել էին ճամ-*

բան ու գնում էին մինչև վերջ: Կամ թե ուժերի չափազանց վատնումից և չահագործումից խախտվեց նրանց կուսական թարմությունը և անբծությունը ու եղան այն, ինչ որ լինում է քսան տարեկանը, երբ երեսուն տարեկան է դառնում: Բարուճակը մնաց, սակայն, մշտապես նույնը, դաղափարների աշխարհում ունեցած իր բազմատեսակ հոլովույթի մեջ:

Ի՞նչն էր այդ բանը, որ անփոփոխ էր մնում, երբ իր գաղափարների ներքին բովանդակությունը հաճախակի փոփոխությունների էր ենթարկվում: Անշուշտ, նրա անհատականությունն էր, որ կազմում էր անփոփոխելին ամենօրյա փոփոխությունների մեջ, ինչպես նրա, նույնպես և ամեն մարդու համար: Բայց, մինչդեռ շատ շատերի անհատականությունը դառնում է միջավայրի և գաղափարական փոփոխությունների ստրուկը, նրա մեջ ահա մենք այդ բանը չենք տեսնում: Այդ չարժման առաջին իսկ վայրկյանից, երևան եկավ այդ անփոփոխելին շատերի մեջ, բոլորի մեջ, բայց այսօր, երբ մենք Բարուճակին թաղել ենք արդեն, նայում ենք չուրջը և Բարուճակներ շատ քիչ ենք տեսնում: Այդ պատճառով էլ Բարուճակը այդ չարժման տիպական ներկայացուցիչը եղավ, իսկացումը՝ նրա բերած նորությունների և առաքինությունների:

Թեև շատ հետաքրքիր կլիներ նրա անհատական-հոգեկան հատկությունների վերլուծությունն էլ կատարել, ավելի պարզ դարձնելու համար նրա տիպը, բայց ամբողջ մի առաջաբան էլ դրան պետք էր, իսկ մենք շատ քիչ կուզեինք հետանալ այժմ դրանից, որչափ որ անհրաժեշտ լիներ դուցե, դրանից բացի, առհասարակ հասարակական գործչի տիպը երևան բերել, ավելի պարզ և կարկատուն դարձնելու համար այդ չարժման բերած տիպը:

Մեկ կողմ թողնելով այդ բոլորը՝ մենք այդ չարժման մեջ տեսնում ենք ահա հասարակական գործչի այդ տիպը՝ որպես մի նորություն և առանձնահատկություն:

Մեր բազմաչարչար իրականության մեջ հասարակական գործիչը դարձել է մի տեսակ չարիք: Ինքնուրույն քաղաքական կյանքի կազմակերպության բացակայությունը մի մարդուն դարձրել է հազար տեսակ մարդ, եթե նա հասարակական կյանքի մեջն է մտել: Ամեն տեղ, ուր որ նա մտել և գործել է, նա դարձել է նույն տեղի և պայմանների մարդ, ու ոչ մի տեղ էլ նա չի մնացել իր հարազատ չափի և որակի մարդ: Մի մարդ, որ ամեն տեսակի մարդ է: Իր էությամբ դիվնատան և տամաշոու, նա միայն ավելի ծանրացրել է այն ցավերը, որ բուժել էր ուզում: Հասարակական գործիչը այնքան տեսակ մարդ է, որ այլևս մարդ չէ: Ահա մեր վերջին հարյուր տարվա պատմության մեջ գործող մարդը:

Այդպես չպետք է լիներ, սակայն: Եվ մեր դավառական փոքրիկ քաղաքի մեծ փոթորիկը այդ խոսքն էր բերում: Հասարակական գործչի մի տիպ, որ ամենից առաջ ուզում է կռվել այն հասարակական գործիչների դեմ, որոնք իրենց հասարակական պարտականությունները ամփոփում են աթոռակուվի շուրջ: Գործի սերը, անչահախնդիր և անանուն գործը, ահա ինչն է, որ բաժին է ընկնելու հասարակական գործչին. Բայց այդպես են խոսում բոլոր հասարակական գործիչներն էլ: Ու դրա համար էլ ավելի մեծ է լինում նրանց հասցրած չարիքը: Այդպես չպետք է լինի, սակայն: Մի օր ուզեն մենք կապատվենք բոլորովին հասարակական գործիչներից, և այլևս կարիք չի լինի վարդեր փնտրել անապատում: Բայց, մինչ այդ, մենք ունեցել ենք արդեն հասարակական գործչի մի տիպ, որի նման պետք է լինեին բոլորը:

Ասում են, մեծ զոհողություն են անում այն մարդիկ, որոնք հասարակական գործիչ են դառնում: Բայց հակառակն է ճիշտը: Մեծ զոհողություն են անում այն մարդիկ, որոնք հասարակական գործիչ չեն դառնում: Նրանց պատմությունն է բերել մեզ այս եզրակացության: Այդ չարժումը, ուրևմն, մի հին խոսք էր կրկնում իրրև նորություն, երբ հասարակական գործչի մեջ դնում էր անանուն և լուռ զոհողության բովանդակությունը: Այս խիստ արմատականությունը չէր բխում միայն նրանց տարիքի անկշռադատ ոգևորությունից: Բարուճակների տիպը վերլուծելով մենք այդտեղ տեսնում ենք մի խոր փիլիսոփայություն, մեծ մասով անգիտակից, և ամբողջովին ինքնածին: Գործի փիլիսոփայությունն է այդ: Գործի պաշտամունքը այն աստիճան, որ դրանից ստեղծվում է ամբողջ մի վարդապետություն: Գործին պետք է նվիրվել ինքնամոռացությամբ: Գործը պիտի կատարել ոչ թե այս կամ այն անձնավորության սիրուն, այլ գործի սիրուն միայն: Անհատը գործի առջև մի անշունչ մեքենա պետք է լինի, եթե գործն է այդ պահանջում: Ոչ թե գործը մարդուն, այլ մարդը պետք է գործին ծառայե: Այդ այնքան հեշտ է ասել, որքան և դժվար է կատարել: Դրա համար էլ, այնքան հասարակ այս խոսքերը մեծ արժեք են ստանում, երբ մարմնանում են մեկի մեջ:

Գործի հրամայականների առջև պետք է լռեն մյուս բոլոր հրամայականները: Եվ պետք է մտածել այս օրենքը իր ամբողջ տարողությամբ. այն ժամանակ մենք կտեսնենք, որ մարդու վերաբերմունքը դեպի գործը, մարդու «գործա-վարության» տեսակն ու ոճակն է, որ այստեղ հիմնական հեղաշրջման են ենթարկվում: Գործի մեջ մարդը գործի անհրաժեշտ մասնիկներից մեկը պետք է լինի, որպեսզի երբեք չկարողանա երևան բերել գործի հաջողության հակառող խորթ տարրեր: Երբ հիշում եք մեր բոլոր գործերի դեկավարող մար-

միննները, որոնց միայն «քառակուսի անիվ» կարելի է անվանել, այն ժամանակ պարզ է դառնում, թե գործի հանդեպ ունեցած այս նորատեսակ վերաբերմունքը՝ իր չարտահայտված, չհայտարարված անկազմակերպության մեջ նույնիսկ, որքան նորություն է բերում, որքան առողջություն, թարմություն և մեծություն: Երբ գործը սառնում է այդքան ծանրակշիռ նշանակություն, բնականաբար և անհատը ոչնչանում է: Բայց հասարակական գործը այդպես պիտի լինի: Այդպիսի գործ միայն զոհողություն անունը կարող է կրել: Այդպիսի գործիչը միայն իրավունք ունի, իբրև հասարակական գործիչ, լինել հասարակական ծառա և մշակ: Եվ երբ տեսնում ենք, որ մեր բոլոր հասարակական գործիչները մեր աղաներն ու տերերն են, մենք ակամա մոռածում ենք այն բարիքների մասին որ մեզ կարող էին տալ նրանք, և այն չարիքների մասին, որ մենք վայելում ենք օր ու գիշեր: Շատերը Բարուճակի ընկերներից բռնեցին այն ճանապարհը, որ ծառայությունից աղայության է տանում: Նրանք խորտակվեցին, իբրև ճանապարհը կորցրածներ, և դնացին բազմամարտելու հասարակական աղաների տխուր չարքերը: Բարուճակը մնաց միշտ նույնը, նա դեռ նոր էր սկսում կարծեք, այնքան, որ նա չեղվել չկարողացավ: Նա դեռ ուներ այն հոգեքանությունը, որ ունենում են այս օրերին Բաղդադից կամ Փոքր Ասիայի խորքից հրաշքով մեզ մոտ ընկնող հայրենակիցները, երբ ներկա են լինում մեր տխրահռչակ հասարակական գործիչների ժողովներին: Վնճը, կիրքը, ատելությունը, անհամաձայնությունը, հաչիվները, փառահեղ կերպով թաղում են ամենայն գործ և, վերջիվերջո, դուք համոզվում եք, որ մարդիկ, եթե որոշեցին օրինակի համար բժշկական օգնություն հասցնել համաճարակով վարակված գաղթականներին, այդ միայն նրա համար էր, որ այս կամ այն կուսակցության ծառայեն, կամ հարվածեն: Բայց սա գործ չէ. այդպես չպիտք է լիներ, սակայն: Մտածում եք և ակամա սկսում փնտրել մեկը, որ այդպես չէ: Ձեր ուրախությունները դուր կլինեն, եթե դուք Բարուճակներին չեք ճանաչում: Դուք անցնում եք այս ցավաչատ օրերին բոլոր ցավերի կողքից և ամեն տեղ տեսնում եք մի հասարակական գործիչ կամ մարմին: Լավ նայեցեք և խորը դիտեցեք: Երբ ձեզ հաչիվ կտաք ձեր տեսածի մասին, անպատճառ որոշեցեք՝ ո՞րն է ավելի մեծ չարիք՝ ցա՞վը, թե բժիշկը:

Ինչքան սակավաթիվ և ինչքան փոքր էին, սակայն, Բարուճակն ու Բարուճակները, որպեսզի կարողանային հասարակական գործչի այդ այլանդակ տիպը հիմնական ապրեցության և փոփոխության ենթարկել: Դեռ շատ կասկածելի է, թե դիտակցում էին նա կամ նրանք իրենց այդ դերը, թե ոչ: Իրենց բաժին ընկած հասարակական

գործի համեստ ասպարեզն էր, որ նրանց մտածել էր տալիս, թե իրենց վիճակված է անանուն, անաղմուկ գործը, սոսկ զոհողություն, գործի պաշտամունքը և անձնավորության ոչնչացումը: Դրա պատասխանը մենք չենք ունենալու, որովհետև Բարունակը չկա, ինչպես և չկան Բարունակի պես իրենց էվոլյուցիան վերջացնողներ: Միջավայրի հրամայականների մեջ մենք հանդիպում ենք միջավայրից անկախ ուժերի և անհատների: Այսինքն, այդ բացառություն որոշ ընդհանրական արժեք է ստանում որպես մի չարժման սիպական մարմնացումը և վերջաբանը:

* * *

Բոլորովին երկրորդական է, թե ինչ գործ էին կատարում նրանք: Բավական է, որ նրանք հասարակական գործիչներ էին, ուրեմն, պարզ է, որ ամեն տեսակ գործեր էլ կատարում էին և դրանով անցնում հասարակական գործիչների սովորական չարքը: Թե ինչպես էին նրանք որևէ գործ կատարում, այդ է էականը, և այդ է նրանց միակ արժեքը: Եվ այսօր, երբ գործի այդ մեծ ստրուկներից մեկը չկա, մենք մեր սրտի խորքից ցավում ենք, որ այդ այսօր չպետք է լիներ համենայն դեպս: Այս օրերին, երբ մենք թաղելու շատ բաներ ունենք, մենք պետք է և ոչ մի մարդ էլ չթաղենք: Երկունքի ցավերից պետք է մեռնի մայրը կամ նորածինը, բնության օրենքն է այդ: Դրա համար էլ մենք ուրիշ տեսակ վիշտ ենք զգում, երբ տեսնում ենք հոր մահը: Մեր մեծ երկունքի բազմահազար հայրերը երբեք այնպես արդարացի չեն ապրելու իրենց պահանջի մեջ, որպես այս օրերին: Բոլոր մեռնողները, եթե ապրողներին են միայն չարիք պատճառում, այս երկունքի ծանր օրերին, սակայն, նույնքան ավելի իրենց էլ չեն խնայում: Այն խանձարուրը, որ աչխարհառատ մեր երկրում հազիվ մեկ ոտք դնելու չափ տեղ է գտել իրեն համար, մեր սրտերի մեջ լայն ու հաստատմամբ ծավալվում է և խորանում: Շատ քչերը պիտի կարողանան անկեղծ սրտով և հայրական ներողամտության անսահմանությամբ ժպտալ տխուր նորածնին: Այդ շատ քչերի կատարյալ սուլ կա, և դրա համար էլ մենք տանջվում ենք իրական ցավերով. այդ օրվա համար ապրել տարիներ ամբողջ և այդ օր մեռնելը մի հասարակ վիշտ չէ:

15 Սեպտեմբեր 1918 Վ[արազդատ] S[երոյան]

Բնագիր: Ջեռագիր.

ԱԲՍՈԼՅՈՒՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

I

Պատմական անհրաժեշտությունը անսահման պայմանների և նախապրյալների հետևանք է: Եթե անհրաժեշտարար պետք է պատմական մի խոշոր ակտ կատարվի, ապա ուրիմն պետք է մի անցյալ դրյուրյուն ունենա, որ արդարացնի և պայմանավորի նրա կատարումը: Մի պատերազմ պետք է կործանի մի պետություն, պետք է ծնունդ տա նոր պետություններին: Պետք է բաժանվեն և վերականգնվեն ազգություններ. ահա անհրաժեշտություններ, որոնց համար կարելի է անթիվ նախապրյալներ և պայմաններ գտնել:

Երբ մենք արդեն կատարված ակտի առջև ենք դանվում, մենք պարտանում ենք պատմական որոշ գործոնների, պայմանների, ուժի և զորության վրա: Մենք համոզվում ենք, որ նրանք ունեն անվրիպելի ուժ և ազդեցություն. մենք դառնում ենք կատարված փաստերի ուշացած մարգարեներ և մեր արամաբանության անհրաժեշտությունը համարում ինչ որ միայն իրականության մեջ գործող տարրերի բարեհաջող դասավորության հետևանքն էր:

Բայց, եթե մենք փորձենինք իր ժամանակին մարգարե լինել և չուշանալ, եթե պատմական գործոնների ուժը և զորությունը մեր արամաբանության հարատատ որդիները կարողանայինք գտնել, և ժխտենինք փաստերի բացարձակ արժեքն ու նշանակությունը, եթե մենք մեր ցանկալի պայմանների լիակատար թիվն ունենայինք, և եթե անկասկած լինենինք նրանց անխուսափելի հետևանքների մասին ապա, ուրիմն պետք պիտի լիներ երբեմն չհամաձայել մեր արամաբանության, երբեմն դիտելու և համազրելու մեր ընդունակության, երբեմն էլ պատմական փաստերի ընդհանրացման և օրենքի ենթարկվելու հատկության:

Ըստ որում, փաստերի այլապան մեկնաբանությունը փրկում է ամեն անգամ էլ մեր արամաբանության դիմացկունությունը, և մենք պատահականություններն էլ կարողանում ենք պատմական անհրաժեշտություն դարձնել, երբ փաստերի անօդոք հրամայականների առջև ստիպված ենք լինում ծռել մեր անուղղելի դատողությունը: Նրանք, ովքեր մեր պատմությունն են չինում մեզ համար և մեր

կողմից, թող երբեք չմոռանան, թե ավելի մեծ պարտականություն չունեն կատարելու, քան այդ տեսակետի մշտական հիշողությունը:

Վերջին հարյուր տարվա ընթացքին մոտավորապես մի տասնյակ ապգությյուններ ազատագրվեցին թուրքական տիրապետությունից՝ Հունաստան, Սերբիա, Ռումանիա, Բոլգարիա, Մոնթենեգրո, Ալբանիա, Եգիպտոս, Լիբանան, Հրեաստան, Արաբիա և այլն: Այս ազատագրությունները ներկայացնո՞ւմ էին արդյոք պատմական անհրաժեշտություններ: Այդ հարցին մենք ստիպված ենք այժմ դրական պատասխան տալու, որովհետև, ինչպե՞ս կարող էին կատարվել այդքան խոշոր պատմական ակտեր, առանց ինքնին անհրաժեշտություն լինելու: Ի՞նչպես կարող է մի բան կատարվել, եթե նա չպետք է կատարվեր անհրաժեշտաբար: Եվ ժամանակը մեզ սովորեցրեց հետագայում, որ թե ազգագրական, թե երկրամասային, թե՛ տնտեսական և թե բարոյական-կուլտուրական գործոններն ու պայմանները առաջ բերին այդ պատմական անհրաժեշտությունները: Բայց պատմության թեթևամիտ ըմբռնողությունն է միայն, որ կատարված փաստերի պայմանների մեջ անհրաժեշտություն է տեսնում հետին թվով միայն, և տատանվող ու երկմիտ է դառնում այն վայրկյանին, երբ ամենից ավելի վճռական պետք էր դառնալ և տեսնել անկաշկանդ քաջությամբ այն գաղտնի զորությունները, որոնք չատ ուշ կարող են տեսանելի և շոշափելի դառնալ:

Որովհետև պատմական անհրաժեշտությունը մենք միշտ կատարված փաստերին ենք վերապահում, դրանով մենք մերժում ենք նրա գործնական արժեքը և տեսական չահագործության մի ապրանք դարձնում: Մինչդեռ ժողովուրդների լինելության մեջ առաջնակարգ գործոնը լինելու է անհրաժեշտաբար այդ պատմական անհրաժեշտությունը՝ որպես մի ռեգուլատիվ գաղափար, որպես մի ուղեցույց, որպես մի անվերապահ ճշմարտություն, բոլորովին հեռու չարի ու բարիի, սուտի և սխալի ու, եթե անհրաժեշտ է, նաև բարոյականության և տրամաբանության սահմաններից: Թող նա տեսական չահագործության ենթարկվի ապագա սերունդների և ուրիշ ժողովուրդների կողմից: Մեր ճակատագրի դարբնման րոպևներին նա պետք է լինի միակ գործնական ոգին ու միտքը:

Պետք է անկեղծ լինել ոչ միայն հոգևկցություն և մտավոր ազգականություն հաստատելու համար, ոչ միայն հասկանալի լինելու համար, ոչ միայն ասված խոսքի ներքին արժանապատվության տեսակետից, այլ նաև նրա համար, որ արտահայտության ձևերի մեծությունը հարազատ պատկերը լինի բովանդակության անպատնա-

պահ և անքողարկելի մեծության: Մենք պահանջում ենք այն, ինչ որ պատմությունը մեզ պարտական է դարերից ի վեր: Եվ մենք պահանջում ենք այդ, առանց պատճառաբանության, առանց պայմանների, առանց տեսակետների, առանց նպատակահարմարությունների: Մենք պահանջում ենք այդ, առանց ուրիշ որևէ այլ բառի: Մենք պահանջում ենք, որ պատմությունը իր աբսոլյուտ, բացարձակ և անպայման փաստերից մեկը կատարե այս վայրկյանին և ճիշտ մեզ համար: Ահա մեր անկեղծությունը, երբ դարեր ամբողջ մեր անկեղծությունը վիրավորվել է մեր պահանջների համառ անհասկացողությունից, այսինքն, երբ մենք ակամա կեղծավորներ ենք դարձել, որովհետև ցանկացել ենք սակավապետ լինել, համեստ և չարքաշ: Այժմ թող ամեն մարդ տեսնե, որ անկեղծ է մեր անկեղծությունը, որովհետև նա այլևս սակավապետ չէ, ոչ էլ համեստ կամ չարքաշ, այլ հնչում է բարձրագոչ իր մեծության, փարթամության, իր լայնության և խորության մեջ:

Ու մենք ոչ մի պատճառաբանություն էլ չենք բերում մեր պահանջներն արդարացնող, հիմնավորող և պայմանավորող. դրանով մենք ապացուցանում ենք ոչ միայն մեր անկեղծությունը, այլև մեր պահանջի բացարձակ և հրամայական անհրաժեշտությունը: Մենք չենք հիմնավորում մեր պահանջը նաև այն բանով, որ նա համաշխարհային է դարձել համաշխարհային պատերազմի առաջադրած սկզբունքների շնորհիվ: Այդ պարագային էլ աբսոլյուտ պատմություններ կարող էր չկատարվել, կամ այլ կերպ կատարվել: Թուրքիան էլ պլլվում է «ազգերի ինքնորոշման իրավունքին» (Վուդրո Վիլսոնի խոսքերը պարտության նախօրյակին) համիսլամականությունը փրկելու համար: Անկարելի է որևէ սկզբունք գտնել, որ կարելի չլինի մեկնաբանել մեր պահանջները չկատարելու իմաստով: Այսինքն է, ահա ամբողջ խնդրի կիզման կետը, ձգողության կենտրոնը և մեր գաղի կամ պահանջի «իրն ինքնին», որ ոչ մի վերլուծության, ոչ մի քննության չի ենթարկվում և չպետք է ենթարկվի: Մենք կարծում ենք, որ վերջին խոսքն ենք ասում մենք այն բանի մասին, որ դարեր ամբողջ խոսեցրել է չատ չատերին ժողովուրդներից և ազգերից: Այդ պատճառով էլ մենք հարցը դնում ենք իր վսեմագույն ծայրահեղության մեջ նույնիսկ.

– Անկարելի է որևէ սկզբունք գտնել, որ կարելի չլինի մեկնաբանել մեր պահանջները չկատարելու իմաստով:

Այդպիսի պահանջները երկու տեսակ կարող են լինել միայն և տրամագծորեն իրար հակադրված: Նշանակում է մեր պահանջները

չատ են անհիմն, անկարևոր և ավելորդ, քննության և քննադատության չդիմացող, անկարելի որևէ ձևով արդարացնելու, հակառակ լայնմտության և մարդասիրության մեր դարաշրջանի մեծ սկզբունքներին, արդարության, հավասարության և ազատության սրբազան իդեալներին, վնասակար իրենց էությամբ և ամբողջությամբ՝ թե՛ նրանց համար, որոնք պահանջում են և թե՛ նրանց համար, որոնք բավարարելու են: Մեր պահանջները թող այդպես լինեն մեր դարավոր հակառակորդների, ավելի պարզ ասենք, մեր դարավոր դահիճների համար, որպեսզի ճշմարիտ լինի մեզ համար և մեր բարեկամների համար մեր պահանջի մյուս ծայրը, մյուս ծայրահեղությունը, նրա հակադրությունը.

– Անկարելի է որևէ սկզբունք գտնել, որ կարելի չլինի մեկնաբանել մեր պահանջները կատարելու իմաստով:

Որովհետև մենք պահանջում ենք աբսոլյուտ պատմությունը, առանց արդարացնող և հիմնավորող պայմանների և նախադրյալների պատճառաբանության: Այդ պատճառով էլ մենք ոչ մի սկզբունքի պաշտպանության կարիք չունենք, կամ, որ նույնն է, բոլոր սկզբունքների պաշտպանությամբ զինված՝ մենք մեր պահանջն ենք պահանջում: Որովհետև ինձ է պատկանում աշխարհն ամբողջ, երբ ես ոչինչ չունեմ նրա մեջ: Որովհետև բոլոր հատկանիշների մարմնացումը ոչ մի հատկանիշ էլ չունի: Որովհետև ամեն բան ունենալուն և ամեն բան լինելուն է հատուկ ոչինչ չունենալը և ոչինչ չլինելը:

Ո՞վ է որ քաջություն ունի մեր պահանջները հիմնավորելու.

– Մի՞թե՞ այդքան անհիմն են ձեր պահանջները. կարելի էր առարկել վերջիվերջո ամենայն հիմնավորման:

Արդարություն պահանջելու չափ թեթևամի՞տ պիտի լինենք մենք, որպեսզի վիճելի դարձնենք գերագույն արդարությունը:

Ավելորդ չէի՞նք դարձնի մենք մի հարց, եթե ճգնեինք ապացուցանել նրա կարևորությունը և անհրաժեշտությունը:

Մենք մեր դատի և պահանջի տերերը չեինք լինի, եթե աբսոլյուտ պատմությունը չպահանջեինք. եթե ազատ ժամանակ ունեցողներին և այլ մտքերի ընդունակ մարդկանց չմղողնեինք վիճելու, առարկելու, քննելու, արդարացնելու և հիմնավորելու աշխատանքները:

Աբսոլյուտ պատմությունը պետք է կատարվի որպես մի բնանհրաժեշտություն, որպես արևի ծագումն ու մուտքը, որպես իմաստնիրից մեկը, որ մարդ արարածը կարողացել է տալ երբևիցե մեր պահած հողագնդին:

Որպես լուսյակը, որ խավարից հետո է գալիս, որ վերջացնում է խավարը, բայց որ թողնում է նաև խավար: Այդքան առարկայական, այդքան անմարդավարի, այդքան բնական: Մենք խոստանում ենք ապացուցանել նրա պատմական անհրաժեշտությունը, հիմնավորել նրա գոյության իրավունքը, արդարացնել նրա հետևանքները, պատճառաբանել նրա բոլոր հնարավորությունները, բայց միայն այն ժամանակ, երբ մեր մտքում հնարավոր կլինի մի ուրիշ մտքի կենակցությունն էլ, երբ աբսոլյուտ պատմության մեր պահանջը մեր մտքի աբսոլյուտ պատմությունը լինելուց հետո կլինի նաև մեր երկրի, մեր ժողովրդի, մեր ազգի, մեր քաղաքակրթության աբսոլյուտ պատմությունը:

Երևան, 2.12.18 Վ[արագյատ] Տ[երյան]

Բնագիր: Ջեռագիր:

II

Հայաստանի անկախությունը և հայության միությունը պետք է իրականանան որպես մի աբսոլյուտ պատմություն: Մարդու պատմությունը հաճախ այդպես է եղել հողագնդի վրա: Անհիմն են եղել բոլոր կատարվածները, որովհետև մենք հետո ենք միայն կատարվածին հիմքեր տվել: Բայց հիմնավոր են եղել բոլոր կատարվածները, որովհետև մենք չենք կարողացել տեսնել հիմունքը, որոնց վրա բարձրանում է շենքը, որևէ մի շենք, և նրա կատարների արտացոլումից միայն նկատել ենք հետագայում հիմունքի հաստատման պրոբլեմը: Ահա թե ի՛նչն է աբսոլյուտ պատմությունը: Մենք վախենում ենք մարգարե լինելուց, դրա համար էլ մենք մնում ենք անհուսալի կույրեր: Այդ սպառնալիքից ազատվելու համար պետք է ազատվել ամենից առաջ այդ վախից: Որովհետև այնքան էլ հասարակ չէ այն իրականությունը, որ մենք ուզում ենք կատարված տեսնել. և ամենից առաջ դերիրական է մեր պահանջը՝ ոչ որպես մի հրաշք, այլ որպես խտացած, ամբողջացած և լրացած մի իրականություն, որ դեռ չկատարված ավելի իրավունք ունի գոյության, քան այլ տեսակի անթիվ գոյություններ, որոնք կատարվել են և իրական դարձել անհիշատակ ժամանակներից ի վեր: Մենք վախենում ենք մեր արդու հակայական մեծությունից, ու չգիտենք, թե ի՞նչպես ենք սիրում նրան. մենք արդյոք սի՞րում ենք նրան: Աբսոլյուտ պատմության անհավատությունը այդ վախկոտ սիրուցն է կաթ ծծում:

Մեր պահանջի այս կրոնական մոլեռանդությունը և հավատքը, սակայն, բխում է իրական և առարկայական ավյալներից: Գոյությունն չունեցածին գոյության ավելի մեծ իրավունք տալը հավատքի դործ միայն կարող է լինել, ըստ Երևույթին: Որովհետև, ըստ էության, ժամանակի և պատմության հաստատակ սխալներից մեկն է, որ դրանով սրբագրում է մարդկային տրամաբանությունը: Ապազայապաշտությունը և վախճանաբանական բարոյականությունը քաղաքակրթության և փիլիսոփայության վերջին խոսքը չէին լինի, եթե չլիներին մարդկային իրականության հակադրությունը՝ «բնական» և անբնական իրականության: Բնական մարդը ոչ թե վայրենին է, ոչ թե քաղաքակիրթ և կոնկրետ մարդը, ըստ որում, նա դեռ լրիվ և կատարյալ մարդը չէ, նա դեռ չի ավարտել իր բոլոր հնարավորությունները. այլ նա միայն, որ պետք է դա, որ իդեալ է, որ դեռ չի եղել. Բնական մարդը իդեալ մարդն է. բնական-մարդկային իրականությունը իդեալ-մարդկային իրականությունն է: Այն, որ չի եղել, որովհետև հնարավոր է եղել սխալը, անբնականը, հակամարդկայինը և անիրականը: Թուրք պետության դարավոր գոյությունը անբնական, սխալ և անիրական մի գոյություն է եղել: Մարդկային մտածողությունը և տրամաբանությունը ոչ մի ժամանակ էլ չպիտի կարողանա գոյության և իրականության իրավունք տալ նրան: Նա եղել է մի բան, որ պետք է չլիներ. իսկ մի բան լինել կարող է այն ժամանակ միայն, երբ նա պարտավոր է ու պետք է, որ լինի: Ճիշտ է, աշխարհում գուցե գոյության այդ տեսակն ավելի հաճախազեպ է ու սովորական, բայց և այնպես այդ չի կարող մի չափանիշ լինել գոյության իրավունք ունեցողների դասակարգի մեջ դնելու սխալն ու հակամարդկայինը: Ընդհակառակն այդ երևույթը ավելի ու ավելի չեշտում է, ցույց տալիս հակադրությունների պայծառությամբ, նրա կողքին գաղտնի և ծածուկ հանդչող գոյությունը՝ զրկված արևի լույսից և ավազակներին պատկանող գոյության իրավունքից: Գոյությունն չի ունեցել, ինչ որ պետք է գոյություն ունենար և գոյությունն է ունեցել, ինչ որ պետք է գոյություն չունենար: Ահա հայթրքական պատմությունը: Ահա աբսոլյուտ պատմության մեր հասկացողությունը: Չի եղել մի բան, որ պետք է լիներ: Այս պարզ բառերի հրամայականի առջև պետք է լռեն մնացյալ բոլոր պատճառաբանությունները, թե՛ հօդուտ և՛ թե ի վնաս: Այն, ինչ որ պարտականն է մեզ տալու պատմությունը, մի պարտականություն է և մի իրավունք: Մենք մեր իրավունքի տերերը չէինք կարող լինել, եթե մեր իրավունքը չլիներ ուրիշների պարտականությունը: Վկաններին,

առարկությունների, հիմնավորումների և պատճառականությունների կարիք ունեն նրանք, որոնց իրավունքը մի պարտք է միայն, սովորությունների, իրավակարգերի և պայմանների վրա հաստատված մի պարտք: Մինչդեռ մեր իրավունքը մի պարտականություն է միայն, զուտ բարոյական օրենքի վրա հիմնված: Աչխարհը, եթե դեռ իր որևէ մասով հիմնված է տրամաբանության և բարոյականության վրա, ապա, ուրեմն, մեր պահանջն ու իրավունքը պետք է ամենից առաջ կատարված լինեն:

Անպայման և անպատճառ պետք է կատարվի մեր պահանջը. այդպես միայն հնարավոր կլինի պատմության արդարությունը և աբսոլյուտ պատմությունը:

Հայոց հարցը երկար ժամանակ համաչխարհային խաղաղության հարցն էր Ֆրանսիս դը Պրեսանսեի բերանում: Մի նոր Պրեսանսեի կարիքը կա՞ արդյոք, ապացուցանելու համար, թե համաչխարհային պատերազմից հետո նույնիսկ, համաչխարհային խաղաղությունը դեռևս անվտանգ չէ, քանի այդ հարցը չի լուծվել: Այս խոսքերի մեջ պարփակված հակայական ուժը դործի մարդկանց համար միայն մի սպառնալիք է: Նա իր էության մեջ ազդայնական ողջմիտ եսասիրության մի ուժածին աղբյուր է, բարոյական անսպառելի մի ուժանակ, որ պայթելով չի սպառվում՝ այլ միայն իր ճանապարհը դանելով, իր կայարանը հասնելով: Մի ավ ժողովուրդ, որ արմատախիլ լինելուց հետո մի հսկայի ձեռքով, իր հաստատման դոյությունն է ցույց տալիս, նա միայն մի ապագույց կարող է լինել բարոյական ուժի անխորտակելիության: Այս տրամաբանական դոյությունը և բարոյական ուժը ուրիշ բանի կարիք չունեն, որպեսզի հանդիստ սրտով նային իրենց ապագային, անարդարությամբ հղփացած մեռնող աչխարհին և արդարության համար բացվող նոր աչխարհին:

Մեզ համար սա ոչ թե հավատք է, այլ մի այնպիսի տեսակետ, որ միևնույն հայտարարի տակն է դնում բոլոր այլ սկզբունքները և տեսակետները: Պատմական անհրաժեշտությունը մեզ համար պետք է կատարվի թեկուզ որպես մի պատահականություն նույնիսկ: Այդ մի վախ կարող է լինել նրանց համար միայն, ովքեր հին պատմությունները դրելուց հետո ընդունակ չեն լինի նոր պատմությունները կարդալու: Ընտանեկան հարկի և ինքնուրույն ապրելու կամքը դեռ իրենց լրիվ պատմությունը չեն ունեցել: Մենք և մեզպեսները այդ նոր խոսքը պետք է բերենք՝ իբրև մեր բաժինը և պարտականությունը աչխարհասեղանի վրա:

Թե ի՞նչու համար սոցիալական իրականությունը մի մաթեմատիկական իրականություն չէ, այդ հարցի համար մեր հասակը և կամքը մի կատարյալ պատասխան կարող է լինել: Մեծ ազգերի մեջ մարդը չի լրացրել իր բոլոր հնարավորությունները, որովհետև նա մի քիչ տարբեր բան է փոքր ազգերի մեջ: Ըստ որում, բանականան որոշիչը ոչ մի որոշիչ էլ չէ մարդու համար, և նրա հոգու հնարավոր գաղտնիքները. երբեմն, իրենց ախտավոր արտահայտությունների մեջն են միայն երևան գալիս, փոքր ազգերի հիվանդագին նասիրության և գերմարդկային ինքնապահպանման մեջ: Մոքերի այս պիրկ նյարդայնությունը դրա հետևանքների մեկը չէ, եթե ուրիշ որևէ բան էլ նկատի չունենանք:

Եվ. վերջապես, մեր պահանջի գիտակցությունը, աբսոլյուտ պատմության մեր պահանջը մի ճշմարտություն է, միակ ճշմարտությունը աշխարհի վրա: Մենք կարո՞ղ ենք այդպես մտածել. Մենք չենք կարող ուրիշ բան մտածել: Սուտ է ամեն բան, եթե ճշմարտություն չկա, իսկ ճշմարտությունը մեր ճշմարտությունն է. Թող աշխարհն ամբողջ Պիղատոս դառնա, սակայն մեզ է միայն պատկանում իրավունքը աշխարհին հարցնելու. «ի՞նչ բան է ճշմարտությունը»: Մենք այդպիսի բան չենք ճանաչում մենք այդպիսի բան չգիտենք, որովհետև մենք ճանաչում ենք մեր ճշմարտությունը. մենք գիտենք միայն մեր ճշմարտությունը:

[Վարազդատ Տերոյան]

[Երևան, 2.12.1918]
Բնագիր: Ձեռագիր:

ՄԻՆՉԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ

Մանր պարտականություններ կան դրված մեզ վրա մինչև Հայրենիք վերադառնալը:

Երկու ամիս է ահա, ամեն կողմից գալիս են ուրախալի և սրտապնդող լուրեր, որոնք ավետում են մեր «բարեկեցության դերության» վախճանը: Մեր Հայրենիքն ազատվում է. մեր Հայրենիքը լինում է մե՛ր Հայրենիք: Էլ վեճ չի լինելու այն հողամասի համար, որ դարեր ամբողջ մեր արյունով ներկվելուց հետո, այժմ համարյա թե անմարդաբնակ է դարձել, և մենք կոչված ենք նրա տերերը լինելու: Ինչքան էլ մեզ համար քաղաքական մի ճարպիկ նախաձեռնություն լինելը այժմ ևեթ վեր կենալ և դեպի Հայրենիքը վերադառնալ, այնուամենայնիվ մենք այժմ պետք է հրաժարվենք բնության դեմ կռվելուց, եթե անդամ մեծ հպարտություն ունենանք, թե աշխարհի ամենահզորների դեմ կռվել ենք մենք: Բնության թշնամությունը աննկուն է և աննպատակ այս բոպեին մանավանդ, երբ Հաչափող մարդկության հետ մենք էլ ենք հաչափում: Դեռևս երեք-չորս ամիս կամավոր կերպով մենք պետք է երկարաձգենք մեր գերությունը, որովհետև մեզանից ոչ ոք չի ցանկանում ավետ Մասիսի մահաչունչ սառնությունը փորձել, ոչ էլ Հայկական պարի ձյունապատ համբերությունը: Հայրենի նվիրական լեռները, երբ մեզ համար մի արգելք են դառնում Հայրենիքը վերադառնալու այս բոպեին, երբ մեր պարավոր թշնամիների դարավոր արգելքները ջարդուփշուր են եղել, թվում է, թե մի նոր առելություն չէ, ոչ էլ մի դժկամություն մեր հայրենաբաղձ ցանկությունների առջև, այլ դուցե նախախնամական մի նպատակավոր հանգամանք, որպեսզի մենք գահճապետության մայրաքաղաքի կ. Պոլսի անկումը միայն բավական չհամարենք Հայրենիք վերադառնալու: Որպեսզի վեց վիլայեթների գրավման հավանականությունը միայն մեզ չթափարաբէ և որպեսզի մեծ հպարտության գինադադարը միայն մի հրաժեր չլինի մեզ Հայրենիքը վերադառնալու: Այդ բոլորից հետո մենք դեռ շատ սպասելիքներ ունենք, և այդ պատճառով էլ Մասիսի և Բարտողյան լեռների անդիմադրելի ձմեռները մեզ համբերություն են քարոզում, մեզ կամավոր և խելացի դատապարտություն են տալիս մեր գերությունը մի քիչ էլ երկարաձգելու:

Այս կամավոր գերության 3-4 ամիսների համար է ահա, որ ես կարծում եմ, թե ծանր պարտականություններ կան դրված մեզ վրա

մինչև Հայրենիք վերադառնալը: Այդ պատճառով էլ ես կարծում եմ, որ այստեղ հավաքվել, այդ պարտականությունների մասին խոսել և մտքերի շփումն ունենալը, ձեզանից ոչ մեկի համար ավելորդ ժամավաճառություն չի համարվի: Ընդհակառակն, գուցե մեր այդ պարտականություններից առաջինն այն է, որ մենք այդ մասին խոսենք և միայն այդ մասին մինչև Հայրենիք վերադառնալը: Մենք հո չենք ցանկանում պատահականությունների և բախտի խաղալիքը լինել նաև մեր սեփական ոտների և ձեռների չարժումների համար, մեր գլխի տեղը դրստելու համար, մեր ճանապարհը ուսումնասիրելու համար: Անկասկած մենք չենք ուզում, որ այդպես լինի և ընդհակառակն ցանկանում ենք, որ գոնե այսուհետև մեր յուրաքանչյուր քայլը չափված ձևված լինի և նախապես մտածված ու կանխորոշված: Մի պարտականությունից ավելի մի մեծ հաճույք է ինձ համար խոսել այդ մասին ձեզ հետ, եթե անգամ շատ քիչ նոր բան ունենամ ասելու ձեզ այդ մասին, այնքան որ ես կարծում եմ, թե ինձ զբաղեցնող մտքերը ձեզ էլ են զբաղեցրել, ինձ տանջող հոգսերը ձեզ էլ են տանջել, ինձ ժպտացող վարդագույն արշալույսը ձեզ էլ է ժպտում: Ես կարծում եմ միայն, թե ձեր հոգեկան ապրումները այսպիսի մի հրապարակական ժողովի նյութ դարձնելով, ես հնարավորություն տված կլինեմ բոլորին չոշափելի ձևով կազմակերպելու իրենց մտքի մեջ այդ մտածումները, այստեղ դրանց մի տեսակի մասին լսելուց հետո, աշխատելու նոր տեսակները երևան բերելու, կամ թե եղածը լրացնելու, ամբողջացնելու և անհերքելիորեն մի համոզմունք և մի հավատք դարձնելու մինչև Հայրենիք վերադառնալը:

* * *

Դուք տեսնում եք, որ ես ժամանակի մասին պիտի խոսեմ, մեր արյունոտ անցյալի, մեր տաժանակիր ներկայի և մեր վարդավառ ապագայի մասին: Մեր անցյալի մասին համենայն դեպս ձեզ չէ, որ մի որևէ մարդ համարձակություն պետք է ուննենա մի բան ասելու. լավ է որ ասենք՝ մենք այս րոպեին այդ մասին ոչինչ չգիտենք, որովհետև ամեն բան գիտենք: Այժմ ժամանակ չէ ընդհանրացումներ անելու մեր այդ գիտելիքների, այժմ անցյալը մեզ համար մի գրված գիրք է: Թեև ոչ մեկը մեր պատմաբաններից դեռ քաջություն չի ունեցել մեր մոտավոր պատմությունը գրելու, բայց դա գրված գրքի պես մի ամփոփ պատմություն է, որ անպատճառ գրագետ չպիտի լինել կարդալու համար, որովհետև մենք գիտենք, որ դերմ. [դերմանական] բարձրագույն կրթությունն ու քաղաքակրթությունը ան-

կարող եղան այդ գիրքը կարդալու, չենք ասում տաճիկների բարբարոսությունը: Իսկ ով որ դեռ աչքեր ունի և ականջներ, ու մի մսի կտոր չէ իր խիղճն ու պիտակությունը, նա պիտի կարդացած լինի այդ պատմությունը հազենալու չափ: Իսկ մենք դրան էլ պետք չունենք, որպեսզի մեր կյանքի չարունակությունը չընդհատվի: Մենք մեր անցյալի պատուղներն ենք քաղում այսօր և ժամանակն է, որ տանենք մեր անցյալը դատապարտողներին, թե ձեզ համար չենք քաղում: Այդ արյունոտ փրկությունն բերող անցյալն է ահա, որ տանել է ներկա քղքի. [քաղաքականը] մոմնետը, որի մասին արժե մի քանի խոսք ասել:

1. *Դաշնակիցների հաղթանակը (գեներալ Ֆոշը, Բուլգարիա, Ամերիկա, Թուրքիայի անձնատվությունը, 24 կետերի պայմանը, 6 վիլայեթները, Բրեստի դաշնագիրը և այլն):*
2. *Դաշնակիցների փոքրիկ դաշնակիցը (մեր զորապետակները, Սիրիա, Մոսուլ, Անդրանիկ, Բաքու, Երևան) (մեր թերահավատությունները, Բաքվից, Լոզանից և Փարիզից եկող ավետաբեր հրեշտակները):*
3. *Ամերիկայի դերը. Վիլսոնը և 14 կետերը:*
4. *Թուրքիայի վիճակը և վեց վիլայեթները:*

* * *

Դաշնակիցների այս քաղաքական և զինական մեծագույն հաղթանակն է ահա, որ Թուրքիային ծունկի բերից, մի զինադադար կապմել ավից, որ ցույց է տալիս մեզի Հաղթության մեծությունը և պարտության անչափելիությունը, որ դաշնակից հայտարարեց մեզ այն րոպեին, երբ մենք մեզի մուրացիկ էինք կարծում մեզ, որ հնարավոր դարձրեց Վիլսոնի մարդասիրական և փիլիսոփայական հրամայականների իրագործումը, որ մեր առջև բաց արեց մեր Հայրենիքի դռները, այսպես կոչված Տաճկահայաստանը: Ես մտադրություն չունեմ երկար խոսելու մեր հին և նոր Հայրենիքի սահմանների մասին, այն որ մեզ էր պատկանում և մեզ պիտի պատկանի այսուհետև: Ես համոզված եմ, որ ընդհ[անուր] քաղաքական բաղակցությունները և դաշտվորությունները ավելի մեծ դեր են խաղալու, քան ուրիշ որևէ այլ բան: Բայց մենք չենք կարող այդ մասին լռել և սոսկ հանդիսատես լինել: Մենք մեր ձայնը պետք է լսելի դարձնենք այս րոպեին և գուցե միայն այս րոպեին: Որովհետև այժմ է, որ կերպարանափոխում է, և եթե մեր ցանկությունը այժմ չլսվի, հետագայում այլևս չի լսվի. այժմ է, որ դարբինները իրենց հարված-

ները իջեցնում են, և երբ երկաթը սառի, գուցե զարբիններն իսկ հնար չունենան նոր ձև տալու նրան, որ արդեն ձևակերպվել է և գուցե մեր ցանկության և կամքին միայն կարիք ուներ ուրիշ ձև ու կերպարանք ստանալու համար: Եվ եթե մենք իրապես կռվող կողմ ենք և մեր տված զոհերի համեմատությամբ ամենաառաջինը դաշնակիցներից, ապա ուրեմն մեր ձայնը պետք է լսվի այդ հարցում, որպես ոչ ոքի ձայնը չի լսվել, և մեր կամքը պետք է կատարվի այդտեղ, որպես ոչ մի այլ կամք չպետք է կատարվի: Մենք, ճիշտ է, գաղթական ժողովուրդ ենք, մենք չենք վախենում ասելու նույնիսկ, թե մենք մի գաղթական ազգ ենք, բայց մեր օրերում դա երբեք էլ նորահրաչ մի բան չէ: Մենք ճանաչում ենք ճիշտ այս օրերին գաղթական թագավորություններ և պետություններ (Բելգիա, Սերբիա): Քիչ մնաց, որ նույնիսկ Ֆրանսիան իր մայրաքաղաքից գաղթեր, այս աչխարհավեր պատերազմի առաջին օրերին: Եվ որովհետև մենք գաղթական մի ազգ ենք, և որովհետև այդ գաղթական ազգն է, որ մեծ դաշնակիցների փոքրիկ դաշնակից է, ապա, ուրեմն, մեր գաղթական լինելը տարիներ ամբողջ մեզ քայքայելուց և բարոյական ու տնտեսական հարվածներ հասցնելուց հետո, այսօր պետք է մեր գաղթական լինելը մեր փրկությունն իսկ լինի: Ո՞վ է, որ այժմ կարող է ասել, եթե մենք գաղթական չլինեինք, պիտի կարողանայինք իրավունք ունենալ դաշնակից լինելու այնտեղ, ուր կշեռքի մեջ դրվում է միայն ուժը, թիվը և հարստությունը: Այդ բոլորը չունենք մենք, որովհետև գաղթական ենք, բայց որովհետև գաղթական ենք, այդ պատճառով էլ մենք արդեն ունենք ամեն բան, ինչ որ անհրաժեշտ է պահանջատեր լինելու, հաղթող լինելու, կամք ունենալու և խոսելու իրավունք: Ոչ ոք, իհարկե, այնքան միամիտ չի լինելու, որ սոսկ գաղթական լինելուն այդքան հրաշալի զորություններ վերագրե: Մեր գաղթական լինելը մեր դաշնակից լինելու ապացույցն է, անհերքելի փաստը և անզուգական համադրությունը մեր չորս տարվա պատմության, մեծ պատերազմի մեջ բռնած մեր դիրքի և վերաբերմունքի: Եվ այժմ երբ մենք չգիտենինք և հանկարծ գիտցանք, թե մենք այդպիսի մի գաղթական ենք, այժմ ասում եմ ես, արդյոք մի մեծ վտանգի չե՞նք ենթարկում մեր փրկության գործը, երբ մենք լռում ենք: Եթե մեր ձայնը չի հնչելու այնտեղ, ուր այդ սպասվում է, եթե հանուն մեզ գործեր պիտի կատարվեն և գուցե մի ամբողջ պետություն ստեղծվի ու մենք լուռ քարանում ենք, չենք ուզում խոսել — արդյոք մենք դրանով մի մեծ փաստ տված չենք լինի, թե մենք չկանք, մենք պահանջ չունենք, մենք չենք եղել, մենք

ցանկութիւն չենք ունեցել, ոչ էլ հավատք: Շատ դժվար է ասել՝ մարդ. եղե՛ք, նրանց համար, որոնք չեն ուզում մարդ լինել. շատ դժվար է ասել պետութիւն կազմեցե՛ք, նրանց, ովքեր մի ձայն էլ չեն հանում, եթե ոչ իրենց կամքն ու ցանկութիւնները, գոնե իրենց գոյութիւնն ապացուցանելու համար: Պատմական այս ծանրակշիռ վայրկեանին հանգամանքը լռութիւն և անշարժութիւն է, որ մենք պահպանում ենք այժմ: Մի քանի այսպիսի լուռ ամիսներ էլ, և մենք այլևս խոսելու իրավունք չենք ունենա. խոսելն ավելորդ կլինի այն ժամանակ, աննպատակ և անհիմն, ուշացած և դատարկ: Մինչև Հայրենիք վերադառնալը, եթե մեր ձայնը չհնչէ բարձրագոչ և մեծաբարբառ, թե՛ նրանց համար լսելի, ովքեր շատ քիչ ականջ ունեն մեզ լսելու, և թե՛ նրանց համար, ովքեր մեզ սոխակում են նույնիսկ խոսել: Ես ողբում եմ գաղթական ժողովրդին ոչ այնքան, որ նա իր Հայրենիքը կորցրեց, ո՛չ, այլ եղավ գուցն նրա փրկութիւնը և իր Հայրենիքը վերջնականապես գտնելու ճանապարհը: Ես ողբում եմ գաղթական ժողովրդին, որ ներկա ծանր պատմական մոմենտին, նա կորցրել է իր տերերը, իր հովիվները, որոնք վատ հովիվ եղան և անարժան տերեր, որոնք իրենց սիրելի անձը փրկեցին Հյուսիսային Կովկասում և դատապարտեցին գաղթականներին մի անդարմանելի լռութեան և անտերութեան: Մի՛ խանգարեք աթոռամարտի այդ հերոսներին և փախչելու այդ վարպետներին, թող դա մի ավելորդ խթան դառնա անխորտակելի որոշում կայացնելու՝ ամբողջ աշխարհին լսելի դարձնելու մեր ձայնը և մեր կամքը՝ մինչև Հայրենիք վերադառնալը: Ես ավելորդ եմ համարում ասելու, թե ի՞նչն է լինելու մեր կամքն ու ցանկութիւնը, դա երկրորդական է: Մենք՝ գաղթականներս, կուսակցական մոլեռանդութեան և վարդապետութիւններին չենք կարող զոհել մեր Հայրենիքը, մենք բոլորս էլ միևնույն բանն ենք պահանջում, միևնույն միտքն ունենք մեր Հայրենիքի մասին, փոքրիկ տարբերութիւնները չեն կարող մեծ նույնութիւնը մեր ցանկութիւնների ոչնչով խախտել: Առաջնակարգն ու անհրաժեշտը մեր ձայնն է, մեր խոսքը, ցանկութիւնը և կամքը: Մեր ձայնը կարող է նշանակութիւն ունենալ տալու թե չտալու հարցը վճռելիս, բայց ի՞նչ տալու և ի՞նչքան տալու հարցը կարող է վճռվել մեզանից անկախ: Ուրեմն, մինչև Հայրենիք վերադառնալը, այս 3-4 ամսվա ընթացքին, մենք կարող ենք մեր դատի ակամա դավաճանները դուրս գալ: Եթե չկարողանանք մեր գաղթական ժողովրդի մեջ ստեղծել մի ձայն, մի մեծ և զորավոր ձայն, մեծ իր միաձայնութեամբ և արտահայտութեան ամբողջական և լրիվ բովանդակութեամբ,

գորավոր իրավունքի և արդարության իր զրահներով մի մեծ ու զորավոր ձայն, որ լսելի լինի ամեն տեղ ու ամենից ավելի այնտեղ, ուր այդ ձայնն սպասվում է: Իհարկե, այսպիսի մի ժողովի մեջ դուք ինձանից չեք պահանջի, թե ինչպես կարելի է մեր այդ մեծ ու զորավոր ձայնը պատրաստել ու լսելի դարձնել. դրա համար անհրաժեշտ է մշակել որոշ տեխնիկա, որ ձեզանից պահանջում է միայն ներողամտություն իրար հանդեպ, լայնմտություն գործի հանդեպ, պահանջի արժանապատվության գիտակցությունը, միաձայնություն և համերաշխություն: Մեր ներքին երկպառակությունները, անհամաձայնությունները և ամեն տեսակի տարաձայնությունները պետք է լռեն վերջնականապես, որպեսզի հնարավոր լինի մեր ձայնը լսելի դարձնել նաև մեզանից հեռու գտնվողներին:

Համերաշխությունն ու համաձայնությունն անհրաժեշտ է մանավանդ նրա համար, որ հնարավոր լինի մի ուժեղ կազմակերպություն ստեղծել մեր գաղթական ժողովրդի մեջ մինչև Հայրենիք վերադառնալը: Մեր ձայնը լսելի կացուցանելու առաջին պայմանն է այդ: Թեև այս խնդիրը միայն այնքան մեծ է, որ արժեր դրա վրա չատ ավելի երկար կանգ առնել և ուրիշ ոչ մի մտահոգության էլ տեղ չտալ մինչև Հայրենիք վերադառնալը, միայն այդ մտքովն ապրել ու անվել: Բայց, որովհետև ես ուզում էի ձեզ հետ խոսել ուրիշ պարտականությունների մասին էլ, որոնք իմ կարծիքով նույնքան անհրաժեշտ ու հրամայական են մինչև Հայրենիք վերադառնալը, այդ պատճառով էլ ես մի քանի ցուցմունքներ էլ կանեմ այն պարտականությունների մասին, որոնք անհրաժեշտ են կացուցանում գաղթական ժողովրդին կազմակերպելը դեռ Հայրենիք չվերադարձած:

Ամենից առաջ գոյություն չունի մի ժողովուրդ, եթե նա կազմակերպված չէ գանազան հասարակական խմբակցություններով: Մենք պետություն չունենք դեռևս համարյա թե, բայց ունենք լեզու, կրոն և պատմություն: Այդ հիմնաքարերի վրա մենք պետք է ստեղծենք դրանցից բխող հասարակական այդ խմբավորումները, մեր գլխավորապես քաղաքական-հասարակական համոզմունքների և հավատալիքների պաշտպանության համար: Բնական է, որ մինչև Հայրենիք վերադառնալը մենք չենք կարող մեր հասարակությունը կազմակերպել տնտեսական-կուլտուրական գործունեության համար. դրանք երկար ժամանակ և մեծ չարունակություն են պահանջում: Բայց մենք կարող ենք և պետք է մեր գաղթականությունը կազմակերպենք հասարակական կազմակերպությունների ամենապարզ և հասարակ տեսակների մեջ. ես ուզում եմ ասել կուսակցականորեն:

Բնական է, որ իրերն ունեն իրենց բնական ընթացքը և գաղթականների կուսակցություններն էլ կլինեն այնպես, ինչպես աշխարհի բոլոր կուսակցությունները: Բայց, մի անդրդվելի հավատք ինձ ասում է, որ մենք չենք կարող ինքնանպատակ կուսակցություններ կազմել, ոչ էլ նրանց նման, որ մենք ամեն օր տեսնում ու լսում ենք մեր չուրջը: Մենք ուզում ենք մեր ժողովուրդը հասարակականորեն կազմակերպել՝ բարձր պարտականությունների համար: Ուստի, անհրաժեշտ է որ մենք ունենանք մեր պարտականությունների իրագործման համար տարբեր ճանապարհների և գործելակերպների առաջարկներ և հավատալիքներ, որպեսզի միակողմանի չլինենք, ոչ էլ միամիտ: Ահա այդ պատճառով է, որ մենք պիտի կազմակերպվենք, առեղծենք մեր մեջ շերտավորումներ, խմբակցություններ և դիտակցական բաժանումներ, որպեսզի հետո կարողանանք միաձույլ, միակամ և անբաժան հասարակության ու ժողովրդի անունից խոսելու և մեր ձայնն ու կամքը լսելի դարձնելու: Կազմակերպչական մեթոդի այս բաժանող և միացնող հատկությունն է, որ պետք պարզորեն մտապատկերել. չկա հասարակական միություն, եթե այնտեղ չկա դիտակցական բաժանում և խմբավորում: Այս իմաստին մենք ոչ մի բաժանում չունենք ըստ հրեությին մեր մեջ. լռել են կուսակցությունները, կրքերը և խմբակցությունները: Բայց այս լռությունը վիրավոր և ախտավոր անկազմակերպության նշանն է. անհաշտ է ամեն մարդ ամեն մարդու հետ և անհամաձայն, այդ պատճառով մեր մեջ տիրում է մի քաոսային միություն և խուժանական անտարբերություն: Մենք մի հասարակություն չենք, ոչ էլ մի ժողովուրդ. անթիվ ու անսահման չահերով իրար հետ կապված մի ժողովուրդ ոչնչանում է իր անկազմակերպության չնորհիվ: Մանուկները վեր են կենում և նրա ներկայացուցիչը դառնում, նրա անունից խոսում. հակառակորդները և գառնագնաց գայլերը նրա չահերն են պաշտպանում, թշնամիները նրա բարեկամն են հայտարարվում և անկարելի է լինում ամեն բանն իր տեղը դնել, ամեն մարդուն իր տեղը ցույց տալ: Մինչև Հայրենիք վերադառնալը, ճիշտ է, կարճ ժամանակ ունենք մենք, բայց դրա 1/10-ի համար էլ անհանդուրժելի պետք է համարվեր այս անդիտակից անկազմակերպությունը: Վաղը դուք Հայրենիքն եք ուզում գնալ, ուրեմն, ձեր ներգաղթն է՞լ պիտի լինի այնպես ամբոխավարել և անկազմակերպ, ինչպես այժմ եք դուք: Վաղը դուք վերջացնելու եք այս երկրում գտած ձեր հյուրասիրությունը կամ հյուրընկալությունը: Բայց չենք մտածում՝ ի՞նչպես և ի՞նչպես: Վաղը դուք պիտի ապատվեք խնա-

մակալությունից, բայց ի՞նչպես. դուք պիտի կարողանա՞ք Վան ու Մուշ հասնելուց հետո նույնիսկ, ազատվել ձեր համառ և պնդապյուխ խնամակալներից: Ձեր անկազմակերպությունը անչափահասության մի նշան պիտի լինի, եթե դուք չկազմակերպվեք մինչև Հայրենիք վերադառնալը: Վաղը դուք պիտի սկսեք քանդված Հայրենիքի վերաշինությունը և դառնաք մի անկախ պետության ազատ քաղաքացիները: Ուրեմն, դուք ձեզ երևակայում եք ցորենի հատիկներ, կամ ջրի կաթիլներ, որ պետք է լցնել պետական մեքենայի կամ Հայրենիք կոչված ամանի մեջ, որպեսզի այդ մեքենան չարժվի, կամ Հայրենիքն ապրի: Այսքան անդիտակցություն, անտարբերություն և անհոգություն ես չէի ցանկանա մեր թշնամիների մեջն անգամ տեսնել: Իհարկե դուք այսքան անկազմակերպ էլ Հայրենիք կունաք. բայց ձեր ներգաղթը կլինի մի նոր գաղթ ավելի ահավոր, ձեր վերաշինությունը մի հրդեհ ու կործանում, ավելի մեծ ու անկարելի, ձեր հսրկ[հասարակական] կյանքը գուցե տասնյակ տարիներով չլինի այն, ինչ որ կարող էր լինել, եթե բոլորս էլ նույն պիտակցությամբ և կամքով զինվեինք՝ կուռ և ամուր մի կազմակերպություն ստեղծելու Մեծ Հայքի գաղթական ժողովրդի մեջ՝ մինչև Հայրենիք վերադառնալը: Օրվա յուրաքանչյուր ժամը և րոպեն մեզ նորանոր հարցեր և խնդիրներ է առաջադրում, իսկ դրանց համար մենք անզոր ենք և անկար: Մենք ուզում ենք անարժան լինել այս մեծ գրների առջև, մենք չենք տեսնում սանդուխը, որ մեզ բարձրացնում է և նայում ենք միայն մեր ոտքի տակը: Հին հաշիվները մաքրելու համար մենք ավելի եռանդ և ոգևորություն ենք ցույց տալիս, քան նոր օրերի հոյակապ շենքերի կառուցման համար: Մեր հսրկ[հասարակական] ապրումների այս գծուծ, խղճուկ, փոքրիկ և ողբալի նմուշները մենք լրացնում ենք՝ ռուսահայ-տաճկահայ հարցը հարուցանելով, և այդ էլ այն րոպեին, երբ օտարները ձեռնամուխ են լինում ընդհ. հայկ[ական] հարցը լուծելու, իր ամենալայն ու խորունկ ծավալով: Բնական է, եթե մենք չկարողանանք մի ուժեղ և հեղինակավոր կազմակերպություն ստեղծել մեր մեջ, որ կանդնած լինի իր կոչման բարձրության վրա, բնական է, եթե մենք չտեսնենք, որ ներկա րոպեում մեր միակ հանցանքը մեր անկազմակերպությունն է, բնական է, որ այդ դեպքում մեր հսրկ. կյանքի ախտավոր վիճակի բնազդական զգացումը հանցավորներ պիտի փնտրե այլ տեղ, վերքեր տեսնե ուրիշ տեսակ, և հսրկ. կյանքի ապրումները դարձնե թունավոր, մաղձոտ և անհույս: Մենք Հայրենիքի ենք ուզում դնալ և չենք ուզում արժանի լինել նրա վարդագույն հորիզոնին, մինչև Հայրենիք

վերադառնալը՝ պատրաստ լինել նրա առաջադրած ծանր հարցերի և խնդիրների լուծման, թաղել վերջնականապես դահլիճների թափած արյունից բուռն առևլության և անհամաձայնությյան ղադացումները, պետական և ընդհ. հայկական տնտեսականների վրա կանգնել, անկախ և ինքնուրույն ապրելու հավատքը ներշնչել և արդարացնել ապրողների կյանքը և մեռնողների մահը, որովհետև այս ծանր բոպեին մենք մեր կյանքով պատասխանատու ենք ոչ միայն մեր կյանքի, այլև մեր սիրելի մեռելների համար: Ներկա մոմենտի գիտակցությունը և համապատասխան դիրքը, որ մենք պետք է բռնենք նրա հանդեպ, ոչնչով չի փոխվի Երևանի հանրապետության դոյությամբ: Երբ մենք մտածում ենք Հայրենիք վերադառնալու մասին, այդ միայն բավական է, որ մենք նրանից անկախ մտածենք մեր վիճակի մասին մինչև Հայրենիք վերադառնալը: Դուք տեսնում եք, որ ես ոչ մի խոսք չեմ ասում մեր ունեցած ներկա թշվառությունների մասին, հիվանդություններից և քաղցից օրական հարյուրներով մեռնողների մասին, քնքուշ մանկական հոգիների մասին, որոնք որբեր են կոչվում և ամեն օր կամ մեռնում են ֆիզիկապես, կամ հոգեպես, փոքրիկ գազաններ դառնալով, մեր հուսահատ տնտեսական դրության մասին: Իմ լռությունը դիտակցական է և դիտավորյալ, ու այդ պատճառով էլ ես մի պատասխան միայն ունեմ այդ բոլոր հարցերին, մենք դատապարտված ենք մեր թշվառության մեջ թշվառական մնալու մինչև Հայրենիք վերադառնալը, և եթե մենք Հայրենիք չվերադառնանք, մենք դատապարտված ենք հավիտենապես թշվառանալու: Այս 3-4 տարվա ընթացքին մեր ընդհանուր թշվառության վրա ավելացավ մեր նախկին «խորհուրդների» և մարմինների թշվառությունն էլ, որոնք անլուծելի հարցերի առջև կանգնած՝ վարկաբեկեցին իրենց հարկ. կոչումը, ղադացումները և պատասխանատվությունները: Այսօր մենք ընական է, որ երբեք չենք կարող ցանկալ նման անլուծելի և անլուժելի ցավերի համար նորանոր հուսահատ ճիգեր թափել և դրանով նորանոր վարկաբեկություններ և անկարողություններ առաջ բերել: Այդ անկարելի է: Թող մեր բարեկեցության դերությյան գիրկը դնա նաև այս 3-4 ամիսն էլ, որ մեր առջևն է մինչև Հայրենիք վերադառնալը: Թող, որ մենք ապրենք և չնչենք մեր այս թշվառության մթնոլորտում՝ ապագայի հույսերով, մոտավոր օրերի մեր թշվառության վերջնական ոչնչացումով: Ահա ինչու համար է, որ ես կարծում եմ, թե Մեծ Հայքի դաղթական ժողովրդի կազմակերպությունը պիտի ինքնանպատակ լինի. այսինք կազմակերպվինք, որպեսզի մի հոտ չլինենք, կազմակերպվենք, հաստատ գիտենալով, որ*

մեր այսօրերի թշվառութիւնը չպիտի կարողանանք դարմանել, բայց պիտի կարողանանք միակ դարմանը գտնել ապագա թշվառութիւններից հավիտենապես ազատվելու: Մեր արյունոտ և դարավոր դատի պաշտպանութիւնը մեր սեփական ձեռներով, ինչպես նաև ներդաղթի կազմակերպութիւնը մեր սեփական միջոցներով, ահա այն երկու հրամայականները, որոնք դրվում են մեր առջև, իջնում են մեր գլխի վրա կապարի ծանրութեամբ, մեր սիրտը մխվում պատժող չանթի պես, որպեսզի մենք թողնենք մեր հանգիստը, մոռանանք մեր ցավերն ու թշվառութիւնները, վերջ տանք ներքին երկպառակութիւններին և տարակարծութիւններին և վինված անխորտակելի և անդիմադրելի միաձայնութեամբ մեր կամքը կազմակերպենք և մեր հոգին: Հայ ժողովրդի դարերի բողոքն է, որ պիտի մռնչէ այս րոպեիս յուրաքանչյուր դաղթական հայի սրտում: Հայ ժողովրդի դարավոր իրավունքի պաշտպանութիւնն է, որ պետք է այս րոպեիս մենք հնչենք ամբողջ աշխարհում: Հայ ժողովրդի ապրելու կամքն է, որ մենք երևան պիտի բերենք այս րոպեիս հանուր աշխարհի առջև: Դրա համար էլ ես հարցնում եմ ամեն մարդու. դուք ձեզ կոչվա՞ծ եք զգում դրանց համար: Ով որ խոսք տալու քաջութիւն ունի, թող չմոռանա, որ դրանով ընկնում է ժողովրդական դատի և պատասխանատվութեան տակ: Բայց ներկա մոմենտը ինձ այնպես է պատկերանում, որ խոսք տալու քաջութիւն չունեցողները շատ ավելի մեծ պատասխանատվութեան տակ են ընկնում: Որովհետև ներկա սերունդն է, որ կանգնած է անցնող դարերի և գալոց սերունդների առջև ու պիտի արդարացնե իր գոյութիւնը, պիտի մենք հա՞յ մնանք, թէ ոչ: Թող պարզ ու պայծառ դառնա ամենքի համար, որ մենք այս հարցերը պիտի վճռենք դրական կամ բացասական մտքով, այդ միևնույն է, այսքան կարճ ժամանակի մեջ մինչ Հայրենիք վերադառնալը:

20 դեկտեմբերի, 1918 Վ[արազդատ] Տ[երոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ԻՆՔՆ ԱՐԱՍԸ[1]

Ես երեկ կարծում էի, որ այստեղից մենք պետք է սկսենք, բայց այսօր, ավելի ու ավելի համոզվում եմ, որ այստեղից սկսած՝ մենք պիտի վերջացնենք: Մենք դեռ չենք սկսել. մենք դեռ վերջացնում ենք մեր կյանքը, մեր հին երևնամյա պատմությունը: Սա մի ճակատագրական դատապարտություն է. մենք պիտի վերջացնենք մեր հին կյանքը՝ ոչ թե կուվի և գործունեության մեթոդները փոխելով, ոչ թե սահմանները և քաղաքական, պետական, ազգային ու հասարակության ձևերը փոփոխելով կամ տարուբերելով, նոր բառակցություններ ստեղծելով, այլ ճակատագրական դատապարտություն է, մեր հին կյանքի էությունները և մարմնացումները ոչնչացնելով, կամ տեսնելով նրանց ոչնչացումը: Մեր ազգային կյանքի և գիտակցության, կամքի և գործունեության լծականները պետք է մեռնեն այս երկունքի վայրկյանում, որպեսզի չարախնդաց ճակատագիրը մեր առջև գնե աչխարհի, մարդու և առհասարակ գոյության մեծագույն առեղծվածը: Մենք սրանից հետո պիտի կարողանա՞նք, և ինչպե՞ս, ապրել:

Որովհետև ահա բավականաչափ թուղթ և հայերեն տառեր կարելի պիտի չլինի գտնել, անհրաժեշտ «Մահադրի»ները տպելու: Հայ գրականության որակը սկսում է արդեն «բարձրանալ» մահազդների և դամբանականների առատությունից: Չէ՞ որ «լուրերի» և քաղաքական չատախոսությունների գրականությունից շատ բարձր է անպայման այն նյութը, որ մեզ պարտադրում են մեր սերնդի մեռելները:

Արամն էլ մեռնում է մեր նոր պատմությունը չսկսելու համար, ճիշտ այն պատճառով, որ Այսօրվա Ուխտավորը այսօր պետք է մեռնի: Մենք պիտի կարողանա՞նք հասնել մի օր այն «իմաստության»,

---

[1] *Մանուկյան Արամ (Հովհաննիսյան Սարգիս, 1879–1919), հայ ազգային-ազատագրական շարժման ակտիվավոր գործիչ. ՀՅԴ անդամ: 1915 թ. ապրիլ-մայիսին Վան քաղաքի Այգեստան թաղամասի հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպիչ և մասնակից: 1915 թ. մայիս-հուլիսին Վանի և ազատագրված գավառների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ): ՀՅԴ և Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի անդամ, 1917 թ. վերջից՝ Երևանի Հայոց ազգային խորհրդի փոխնախագահ: 1918 թ. մարտին ընտրվել է դիկտատոր: Սարդարապատի ճակատամարտի կազմակերպիչներից: Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո 1918 թ. հուլիսի 24-ին նշանակվել է ՆԳ նախարար:*

որ պիտի կարողանա մեզ հասկանալի դարձնել Այսօրվա համար ապրողների այսօրվա մահը:

Ես Այսօրվան չեմ հավատում:

II

Որովհետև միշտ կենդանի է աչքիս առջև իր բազմաբովանդակ հոգու հսկա հասակով այդ հին երիտասարդը: Մի անզուսպ միտք նստել է ուղեղումս և ինձ ասում է, որ նրան պիտի նկարչական անմահություն տալ: Նրա հոգին մի նկարագեղ (pittoresque) այլազանություն էր ներկայացնում: Մի քիչ ավելի երկար դիտողի համար նա մակերեսի փրփուրներ միայն ուներ: Շատերը մարգարիտներ էին տեսնում հատակում: Երբեմն դուք անդրդվելիորեն համոզվում էիք, որ նա մայր բնության անտարբերությունն էր միացնում իր մեջ չար ու բարի առաքինություններով: Ոչ մեկն էլ չէր բավականացնի ձեզ և վերջիվերջո, երբ Ձեզ անկարելի լիներ նրա հոգու բնագավառը գտնել, դուք պիտի տեսնեիք անխուսափելիորեն նրա ջղերի, մկանների և նյարդերի մեջ, ինչ որ չէիք կարողացել ուրիշ տեղ գտնել: Ըստ որում ավելի քան թե նրա մեջ նյարդեր և ջղեր կային, նա իր նյարդերի և ջղերի մեջն էր: Նրա հոգու այս բնախոսական կառուցվածքը անհասկանալի պիտի մնա որոշ հոգեբանության տեսակետից, որ չի ճանաչում փորձը, կենսաբանությունը և բնախոսությունը: Եվ ինչո՞ւ պետք է մարդկային լինի բնությունը, կարելի է ասել բարոյականության բոլոր վարդապետներին: Բայց եթե միշտ սովորել ենք մարմնիկներում կարդալ հոգու գիրքը, նրա մեջ բոլորովին հակառակն էր: Ոչ թե նրա աչքերի հիվանդությունն էր, որ նրան այնպես տանջում էր իր ճանապարհը, այլ նրա մտքի և հոգու ձևն էր մի հայտարարի բերված իր անզգույշ, անկումներով և սահումներով ընթացող քայլվածքի մեջ: Մի միտք միշտ այդպես է ճամփորդում, թեև նա հազարավոր մտքերով էր ճամբորդում: Ինչքան որ թուլլ էր նրա տեսության օրգանը, այնքան և դորավոր դրա ֆունկցիան: Նա չափազանց չատ էր տեսնում, նա չափազանց չատ էր լսում, աշխարհի բոլոր իրերի հանդեպ նա խանդոտ կնոջ նայվածքն ուներ, որ մի հայացքով իր տեսողության մեջ լուսանկարում է այն, ինչ որ ուրիշները, տարիներ ամբողջ տեսնելով հանդերձ, չպիտի կարողանային: Այդպես էր, որ նա տեսնելու և լսելու մի հսկայական մեքենա էր:

Եվ միայն այսպես հասկացողի համար պարզվում է նրա հասարակական գործունեության որակը: Նյարդերի և մկանների մեջ թագա-

վորում է միայն ազդեցությունների և հակազդեցությունների բարոյականությունը: Նյարդային մի դրգիռ էր նրա ազատագրական և հեղափոխական գործունեությունը Տաճկահայաստանում: Եվ դրա հակազդեցությունը կամ պատասխանը պիտի համարել այն ամենը, ինչ որ նա արել է այնտեղ: Այդ դրգիռը դարձավ մի «աչխարհայացք»: Դրան հետևելու էր անհրաժեշտաբար դործը, որ իր հերթին մնում էր դարձյալ նույն բնակարանում: Թուրք դյուղացիները նրան «փաչա» անվանեցին, որովհետև Թուրքական կամայականության դեմ վարած իր պայքարի մեջ նա փրկում էր Թուրքին էլ, Թուրք պետության հիմքերը փորելու համար, ինչպես որ հայ ժողովրդին փրկելու իր գործը, ավելի ուղիղ մի ճանապարհով նույն նպատակին էր հասցնում նրան:

Բայց իր ավելի փոքր տրամադծով ունեցած հարաբերությունների մեջն էլ նա մնում էր ազդեցությունների և հակազդեցությունների աչխարհում: Նա մի վրդովեցուցիչ մտերմություն ուներ ամենքի հետ: Հայ գյուղացիները, բոլորն էլ նրան ճանաչում են, ուր որ նա եղել է, և նա նույնպես ճանաչում էր բոլորին. հայ գյուղացու համեստությունն էր վրդովվում նրա մեծանուն մտերմությունից: Նրա առասպելական հիշողությունը իրեն կապում էր իր բոլոր տեսած և լսած իրերի հետ: Տեսողության և լսողության այդ հսկա մեքենան ոչինչ պիտի դառնար, առանց այդ հսկա հիշողության: Դրա չնորհիվ նա ամեն մարդու հետ կապվում էր անձնապես և անհատապես, թե նրանց, որոնց հետ ինքն բարեկամ էր, և թե նրանց, որոնց հետ ինքն պետք է թշնամի լիներ: Նա ձեր պատմությունը չատ լավ գիտե, ով որ նրան ճանաչում է: Ժամանակը նրան փոքրացնում և մեծացնում էր, բայց իր նյարդերի մեջ նա պահում էր միևնույն որակական չարժումները, որոնք կրճատվում և համառոտվում էին ժամանակի հետ, կամ ծավալվում և ընդարձակվում: Որովհետև նրա բացվելու և տարածվելու չարժումները ոչ թե երևան էին գալիս ժամանակի ընդարձակության և ծավալման հետ, այլ ամեն ժամանակ էլ նա բացվելու և տարածվելու հրամաններ էր պահում իր ջղերի մեջ: Ոչ թե մեջ, այլ նրանց կազմության բազկացուցիչ տարրերն էին կազմում ամեն տեղ լինելու և ամեն բանի մեջ լինելու հզոր տարածականությունը, որ կարող էր պայթեցնել ուղեղը, եթե նյարդերի և ջղերի մեջ դասավորված չլիներ արդեն: Այնպես որ, հեռվից դիտողի և չատ քիչ տեսնողի համար միայն, նա փոքրանում կամ մեծանում էր, միչդեռ մշտական աճող մի մեծություն էր պահում նա իր բնախոսական օրգաննե-

րի մեջ: Եվ դրանից դուրս նա ուրիշ բան չուներ, և ով որ այդ չէր տեսնում, նրան չէր տեսնում:

Անդրադարձումի այն համառոտ ձևը, որ բնորոշում էր նրա կրած և տված ազդեցություններն ու հակազդեցությունները, մեծ թյուրիմացություններ էր ստեղծում իր հարաբերությունների մեջ: Ընդունված և սովորական բանաստեղծություն չկար նրա մեջ, այլ առօրյա ներուժ. մի կենսահայեցողություն: Այդ էր պատճառը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նա միայն անձնական կապեր կարող էր ունենալ, որ նա շատ քիչ հարգանք էր ներշնչում. նրան կամ սիրում էին, կամ ատում, անտարբեր զգացումներ նրա հանդեպ շատ քիչ են եղել, որովհետև նա հրամայականորեն սեր կամ ատելություն էր ներշնչում նույնիսկ նրանց, որոնք մարդկային հարաբերությունների մեջ միայն հարգանքին են տեղ տալիս: Վանեցիները զարմանում են արդյոք, որ նրա մահը նույնիսկ չկարողացավ ստեղծել իր և արտաքին աշխարհի մեջ լինելիք պատկառելի հեռավորությունը: Թող ոճիր չհամարվի այն ուրախությունը, որ նրա մահը պատճառեց ոմանց կամ չատերին: Նրա անհերքելի մեծության անհերքելի փաստերն են այդ ուրախությունները:

Նրա հասարակական գործունեության բնախոսությունը երբեք չի վերջանա այսպիսի համառոտ գծերի մեջ, եթե չատերը նրա այս կամ այն կողմն էին միայն տեսնում, զարմանում էին ժամանակի հետ տարբերվող այդ մարդու նորանոր հայտնություններին վրա: Դրա համար է, որ նա շատ անհասկանալի է մնացել և շատ քիչ ճանաչվել: Մինչդեռ նա մի տևական անփոփոխելիություն էր ատնում իր բոլոր արտահայտությունների մեջ: Հանդգնության մի աննկարելի դիզաչափ էին տեսնում նրա մեջ չատերը, մինչդեռ նա չէր լինի նա, եթե վախկոտության ավելի մեծ կարողություններ խառացած չլինեին իր էության մեջ: Որովհետև անդրադարձումի սակավությունը և իրերն ու երևույթներն ըմբռնելու չտապողականությունը նրան խիստ արագությամբ մատչելի էին կացուցանում ստեղծված նոր կացությունները: Դրանց հանդեպ նրա միագիծ և ուղղադիծ վերաբերմունքը պատրաստի և կողք կողքի էին պահում իր մեջ հպարտությունը և պարտությունը, հրամանը և հաճոյակատարությունը, սերը և ատելությունը, տարածումը և կծկումը, որոշումը և քեկանումը:

Մարդկային ուժերից վեր է գուցե բացատրել, թե ինչպես էր կազմվել մի անձնավորության մեջ այս երկրամերժ և բազմաբովանդակ այլագանության համադրությունը: Նա չատ պարզ մարդ էր, և այդ է անկարելի դարձնում այս բարդ անդամազննության հասկա-

ցողությունը: Դուք մոտավոր կերպով կարող էիք դուշակել նրա պատասխանները, եթե միայն ուղեցույց ունենայիք նրա մեջ թաղված ազդեցությունների և հակազդեցությունների սխեման: Բայց նա հաճախ անակնկալներ էր բերում ձեր առջև, որովհետև դուք չգիտեիք՝ կրակի վրա ջուր էիք ածում թե յուղ: Ամեն մարդ չի կարող արտերկրյա և գետնափոր կյանքից դուրս գալ, աշխարհի և մարդկանց գահերի վրա նստելու համար: Նրա մեծ հիշողությունը միայն անասական և պատմական արժեք ուներ իրեն համար: Որովհետև ամեն անդամ այնպիսի անհատակ մոռացում կարող էր նա երևան բերել, որ ձեր մեջ կզարթնեցներ նրա ամբողջ պատմության անհասկանալիությունը:

Երբեք բնագիտական օրենքները այնքան հոգեբանական էլ չեն եղել որևէ մարդու մեջ, որպես նրա մեջ: Դրա հետևանքն էր, անշուշտ, երկընտրանքի բացակայությունը նրա մեջ: Մտքերի խեղճությունից կամ դրամատիզմից նա չէր տառապում երբեք, այդ պատճառով էլ նա պատրաստաբանության մի վարպետ կարող էր համարվել: Բայց մի տարօրինակ անվճռականություն հաճախ նրան անակնկացնում էր բոլորովին՝ իր մտքերի պատրաստի կապիտալից: Որովհետև մինչդեռ մտածողության ֆունկցիոնալ հակումը միայն նրան հասկանալի կարող էր կացուցանել մեծ դեպքերի և երևույթների մեջ բռնելիք իր ընթացքը, նա այդ տեղն էլ, ինչպես ամեն տեղ ուղղագիծ և միագիծ անդրադարձումի ճանապարհով էր տանում իր մտքերը և բնականորեն նրանք կանդ էին առնում փակուղիների առջև, առանց երկընտրանքի և դրամատիզմի: Բայց նրա մեջ մի դրամատիզմ կար, հիմնավոր և սովորական-մարդկային մի դրամատիզմ, որ այստեղ լրացնում է նրա նկարչագեղ հոգու այլազանությունը, բայց մնում մշտապես ենթագիտակցության մութ ծալրանեերում: Իր նվիրաբերության և անկեղծության անընդունելի խորությունը վերադառնում էր հետաքրքրների և երբեմն էլ մոտավորների վրա՝ որպես մի դերասանություն, և նրա համակեցուցիչ ճարտասանությունը միշտ հաղթանակում էր իր ընկերների մոտ՝ որպես մի ակամա համաձայնություն: Այստեղ պիտի փնտրել նրա հաշվական անընդունակությունը և սակայն համառ ու անդրդվելի տիրապետությունը և գործադրությունը՝ իր երբեք չսովորած ոհհետի մեջ: Չունենալ նա այդ խանդավառ անկեղծությունը և նվիրաբերությունը, նա մի քիչ ավելի լայն կարող էր բանալ գործի դռները և տեղ տալ ուրիշների էլ անխուռթության, անդրդուշության և լայնաձեռնության: Սրանց հետ կապվում է նաև առեղ-առեղ նրա մեջ

փայլատակող աննկարագրելի մարդասիրությունը, թեև նա անհիշաչարության տիպար դասեր կարող էր տալ ընկերականության և մտերմական հարաբերության սիրահարներին: Ահա մի քանի գծեր էլ նրա մեջ տիրող դրամատիզմի: Բավական է, որ նա խոսելու առիթ ունենար, որպեսզի իսպառ ցնդեր այդ կենսախինդ կյանքից դրամատիզմի ավելորդ բեռը: Բայց նա, երբեմն, ինքն իրեն պատժում էր՝ դնելով իրեն այնպիսի պատվանդանների վրա, ուր չատախոսությունը, արհեստի բերմունքով, իսպառ արդելված է: Այդ դեպքում նա դնում էր իր ճանապարհը՝ բոլորովին վստահ ճշմարտության և արդարության հաղթանակին: Սրա վրա պիտի հիմնավորել նրա հայկական համառությունը և անզիջողությունը, որովհետև գործնական մարդու պարապոր բնազդը նրան հաճախ դարձնում էր զիջող և համոզվող այն տեղերում մանավանդ, ուր իր էության բռնկվող տարրերը բավական խոնավացել էին և գործելու անտրամադիր դարձել: Չէ՞ որ մի հանցանք կլիներ ճշմարտության դեմ, գործի այդ վարպետի մեջ՝ զիջումը և տատանումը:

Սրանք բեկորներ են միայն նրա ամբողջական անձնավորության միաձույլ կերտվածքից: Մարդկային առնղծվածների մեջ նա պիտի մնա մի առեղծված և անկարելի պիտի լինի հաշտեցնել նրա բարոյական հսկա հասակի վերնասլաց ուղղաձգության հետ նրա էջքերի և տարածումների անընդհատական տատանումները: Մշտական տեղատվությունների մեջ նա իր խելագար մակընթացությունն էր կատարում մշտապես, երբ նա վերջ դրեց այդ անհավասար պայքարին: Նրա պատմությունը անհասկանալի մի գիրք կարող էր լինել, բայց շատ գեղեցիկ մի արձան: Նրա նկարագրի այս ազգագրական և բնախոսական այլազանությունը մի անսահման դաշտանկար է փռում մեր առջև: Այդ դաշտանկարից տիրականորեն և վեհափառ ոստյուններով բարձրանում է ժողովրդական հերոսը և հասարակական գործչի այն բազմադուն տիպը, որ իր անապատի աղբյուրներն է ցամաքեցնում իր անգութ մահով: Այս մեծության հասկացողությունը միայն մեզ կարող է հաղորդակից դարձնել այն մյուս մեծության:

Երևան. 30 հունվարի 1919 Վ[արազդատ] Տ[երոյան]

III

Արամի հետ հայ ժողովուրդը կորսնցնում է իր երեսնամյա հերոսամարտի գողտրիկ բեկորներից մեկը, ինչպես նաև ժողովրդական

Հերոսի ամենացայտուն տիպերից մեկը: Շուշվա ռեալականից մինչև Կարսի ուսուցիչը, Վանի գավառի հեղափոխականը, Ժնևի «ուսանողը», Վասպուրականի հասարակական հսկան, Երևանի ինքնապաշտպանության խտացումը և Հանրապետության Ներքին գործոց մինիստրը, նա ամեն տեղ էլ Երևան է բերել իր հասարակական անձնավորության մեջ իր բնախոսական անձնավորությունը: Մի հանդգնություն կլիներ այս րոպեիս մտածել նրա պատմությունը տալու մասին: Բայց չատ թերի կմնար այդ անձնավորության պատկերը՝ առանց նրա մեջ խտացած հասարակական գործչի տիպը երևան բերելու, և հասկանալի կացուցանելու ժողովրդական հերոսի հոգեբանական կառուցվածքը: Որովհետև նրա բնախոսական փունջ-յիանների համադրությունից վերջիվերջո նրա մեջ կազմվում էր մի ուժեղ և ներշաչնակ հոգի, որ թեև անասելի զորությամբ ապրում էր վայրկյանը, բայց և անհաղորդ չէր իր անցածին և գալիքին, իր գործի, տեղի և հողի ինքնագիտակցության:

Նրա հասարակական գործունեության հսկա հասակը մի անասելի ծաղր էր էվոլյուցիայի բոլոր օրենքներին. անկարելի է նրա պատմության համար ուրիշ ավելի լայն ընդհանրացում անել: Սովորելու անսահման եռանդի հետ միացած գործելու եռանդի մի ավելի մեծ անսահմանություն՝ նա հաճախ դրություններ է ստեղծել իր համար, ուր սովորել է միայն սովորեցնել: Այսպիսով նա չատ չուտ դարձավ առաջնորդ և «դեկավար», նույնիսկ չատ փոքր արամադծով վարած իր գործունեության մեջ: Հայ ժողովրդի անկեղ ու անչափ կարիքները նրա մեջ գտան ծառայելու և նվիրվելու անսահման պատրաստակամություն, և նա ամեն տեղ եղավ այն, ինչ որ ինքն չէր կարող լինել և կատարեց գործեր, որ ինքն այլապես պիտի չուզենար կատարել: Նրա մտաչենքի վրա ոչ մի լուսամուտ չէր բացվում, որովհետև ոչ մի պատ դռություն չուներ: Աչխարհի ամբողջ լույսը ծծելու այդ բացված երախի մեջ անձրև էլ էր գալիս, ձյուն էլ, կարկուտ էլ: Թամիներ էլ էին փչում այնտեղ, գորավոր կործանող քամիներ, որոնք տակնուվրա էին անում ամառվա խաղաղ երեկոների մեջ կառուցված դասավորություններն և չենքերը: Երբ կազմակերպվեց այսպես ատած նրա աչխարհայացքը, կարելի է ասել այն ժամանակ նա աչխարհայացք չուներ: Նա դարձավ մի հավաքածո, բաւ ամենալայն առումով և մարդկային բոլոր գործերի մեջ՝ մի անզուսպ «սերտող»: Բայց և խուլ պատահներում նա մի թանկագին և անտիպ հանրագիտարան էր, բացված բոլոր նեղյայների և հայածվածների առջև, որոնք պետք կարդալու ուժ կարող էին ունենալ: Նրա տունը մեր

տունն էր, նրա սեղանը բոլորի սեղանը: Այնպես տանջվում էր նա իր անսպառորեն և մշտապես տալու կամքից, որ չատ թանկ էր նստում իր անկեղծության և զոհողության համբավի վրա: Բնականաբար նա դառնում էր չափազանց իրատես այն հարաբերությունների մեջ, ուր նյութ կար: Այնուամենայնիվ նա չէր դադարում անուղղելի մի բարեխոզ լինելուց և չատ խորն էր վիրավորվում բոլոր մերժումների հանդեպ:

Մի ճակատագրական անհրաժեշտությամբ նա պիտի դառնար «դիլլետան[տ]», ոչ այնքան յուր հմտությունների այլազանությամբ, որքան իր բազմակողմանի կամքի և գործունեության համապրությամբ: Նա չէր ընդունում մերժում, ոչ թե որովհետև ուրիշներն էին կատարում իր հանդեպ, այլ որ ինքն էլ ինքն չէր լինի, եթե մարդկայնորեն հնարավոր մի գործի մեջ իր մասնակցությունը մերժեր ինքն: Անխուսափելիորեն նա պիտի բացարձակապես անընդունակ լիներ ընտրություն կատարելու, լինի գործի, բարեկամի, ուսմունքի, ուղղության կամ ճանապարհի վերաբերմամբ: Այսպես էր, որ իր բնախոսական իրապաշտությունը մի անհաչտ հակասություն էր կազմում իր կենսախինդ հոգեբանության բարձրաթռիչ իդեալիզմի հետ: Ճիշտ այդպես էր դարձյալ, որ իր գաղափարապաշտության աննկերելի լավատեսությունը ուժգին բախումներ էր առաջ բերում իր կենսաբանական, երբեք չբավարարված, ձգտումների հետ: Մի քանի փաստեր ցույց են տալիս արդեն, թե նա հասել էր այդ հակամերժ զորությունների հաչտության, իր համար անբացատրելի մի փիլիսոփայական սկեպտիցիզմի մեջ: Այսպիսի անձնավորություններ գուցե չատերը չատ տեղ են տեսնում: Բայց անկասկած չատ քիչ կարելի է տեսնել, հայկական իրականությունից դուրս, հասարակական գործչի այն պատրամադրաց ինքնասիրությունը, որ նրա մեջ արձանացած մի կերտվածք էր դարձել, իսկ մեր իրականության մեջ սովորական հասարակական գործչին ամեն օր ներկայացող թեք մակարդակն է: Ինքն իրան մոռանալ՝ իր ձեռնարկած գործի սիրուն, ստեղծել է հայ վարժապետի թափթփած ու ցրված տիպը: Նրա մեջ ավելացել էր հասարակական գործիչը ընդհանրապես, որ իր գործի հաջողության մեջն է փնտրում միայն իր պատիվը. բնականորեն նա պիտի սովորեր արհամարհել: Բայց գիտե՞ր արդյոք, որ այդ արհամարհանքը միշտ մի գնահատություն պիտի համարվի, և չէ՞ր հավատում արդյոք, որ ընդօրինակելու չատ քիչ բան էր կտակում նա դրանով: Սրա վրա ավելանում է նաև գործավարության այն յուրահատուկ ձևը, որով նա տանում էր հասարակական գործերը: Հառաջադիմութի-

յան համար մշտապես նրա հոգին մեզ հետ-հետ էր տանում իր այդ ձևերով. որովհետև ամեն տեղ լինելու և ամեն բանի մեջ լինելու իր պորտավոր և անգիտակից ձգտումները նրան սովորեցնում էին ամեն տեղ և ամեն բանի մեջ լինել թերի, պակասավոր և անխնամ: Շատ բաներ էր կարդացել նա աշխատանքի բաժանման մասին, բայց ուր որ նա լինում էր, աշխատանքի բաժանումը կամ ոչնչանում էր, կամ շատ անհաջող ձևով կատարվում: Արանից հետո տարօրինակ պիտի չթվի երևակ, որ նա անընդունելի էր համարում ոչ միայն հասարակական կյանքի մեջ թագավորող անհրաժեշտ հիերարխիան, այլև նույնիսկ գործի մեջ. նա տեղ չէր տալիս մեծ ու փոքր, վերև ներքև, շուտ և ուշ հասկացողություններին: Մեծ միտումներ էր ցույց տալիս նա դեպի անարխիզմը, բայց ոչ թե ապիկար ու գործի անընդունակ անարխիզմը, այլ գործունակ և գործունյա ան-իշխանություն՝ աշխարհի և մարդկանց դրած սահմանների և պատնեշների հանդեպ: Մի անբացատրելի միապետություն կար այդ անիշխանության մեջ՝ գործին նվիրվելու և զոհաբերվելու մի համառ կամեցողություն: Այստեղ էր, որ նա կատարյալ ինքնամոռացման փայլուն օրինակներ էր տալիս, բայց իր մեջ փոթորկվող հակասություններն ձեռքից նա անընդունելի հաշտություններ էր ստեղծում, իր անձնասիրության և ինքնասիրության անդիտակից հարձակումներ և ռեակցիաներ, որոնք անկասկած վերև հիշված սիեպտիցիզմի նոր արտահայտություններն էին:

Մի տարօրինակ խառնակություն էին կազմում նրա մեջ չարի ու բարիի դրացությունը: Հասարակական գործը չահում էր նրա չարությունից, ճիշտ ինչպես վնասվում էր նրա բարությունից: Մոդական մի փորձություն, չարի փիլիսոփայության: Բայց որովհետև նա ամեն տեղ անձնական էր և անհատական, այդ պատճառով էլ հասարակական գործը նրա մեջ անհատանում էր և անձնականանում ու հնարավոր չէր լինում չարը:

Դավադրության մեջ նա երբեք չկարողացավ վարպետ դառնալ իր շատ ընկերների պես: Բայց հեղափոխական ոգին նրա մեջ մնծանում էր օրեօր միշտ պայթելու պատրաստ ուժանակի պես: Նա կպայթեցներ ամեն շրջանակ. բայց նա դադարեց նա լինելուց, երբ այլևս չէր կարող պայթեցնել, այլ միայն պայթել, որովհետև օրեր եղան և մի քանի անգամներ, երբ նա դադարեց բռնանդակություն լինելուց և պարձավ մի շրջանակ, որ պարփակում և ծրարում էր պայթուցիկ խոշոր բռնանդակություններ: Այդ օրերում նա մի նոր մարդ էր, ժողովրդից հետու և ժողովրդից դուրս: Ու նա ապշում էր, թե ինչո՞ւ ոչ

ոք իրեն չի ճանաչում: Կազմակերպչական տաղանդի բացակայությունը նա լրացնում էր քաշելու և կապելու մի զորավոր մագնիսականությամբ, որ նրա մեջ կուտակվում էր, և մշտապես գործում էր գործունեության այն օրերում մանավանդ, երբ նա իրավամբ հարձակվում էր մեծությունների և կուռքերի վրա, ու «պատմության չարժիչ դերը անանուն և անհիշատակ հերոսներին» տալիս: Այն իսր երախտագիտությունը և քնքուշ ուշադրությունը, որ արտահայտում էր նա իր հին, մեռած և հեռավոր ընկերների վերաբերմամբ, նրա առօրյա կյանքի կամեցած բարձրացումներն ու վերացումներն էին հիմնավորում: Այստեղից և իր ամբողջ անձնավորության հիմնական արմատներիցն էին սնվում նրա կուսակցական և հասարակական գործի նույնացումները և նույնիսկ այլամերժ և եսասեր կուսակցականությունը: Եթե ընդհանուր հայկական տեսակետը քաղաքականորեն չէր կարելի հիմնավորել, կրոնականորեն անընդունելի էր, պատմականորեն չատ թույլ, աշխարհագրականորեն խիստ վերացական, տնտեսականորեն անկարելի, այն ժամանակ նա գտնում էր, որ միայն կուսակցականորեն հնարավոր էր այդ: Այդ պատճառով էլ նա չափազանց խանդոտ էր կուսակցական ինքնասիրության տեսակետից:

Ինչքան որ նրա անձնավորության բնախոսական կառույցվածքը հիմնաքարն է ծառայում նրա անձնավորության հասարակական կերպարանքին, նույնքան և խոշոր կապ կա այդ վերջինի և ժողովրդական հերոսի միջև: Ճակատագիրը և իրերի բերմունքները նրան մեծացրին չափազանց չատ, որպեսզի սպառեն նրա էության անգործ ուժերը: Բայց նա նորանոր հայտնություններ էր կատարում իր անձնավորության մեջ և դառնում կատարելապես տարբեր և անճանաչելի: Պատմության մեծ րոպեներին չգիտենք ի՞նչ խելապտույտ հորձանքների միջից, ջոկվում է մեկը, առանձնանում և կենտրոնացնում: Առանց քվեի, առանց համաձայնության և կանխամտածության, ժողովրդի ընտրելին իջնում է երկնքից, ընկնում ժողովրդի առջև, դիմում դեպի մահը և գտնում փրկությունը այդ ճանապարհով միայն: Փոթորկի ժամին դեպի ծովն առաջնորդող խոյը մի աստված կլիներ, եթե ջրի միջից գոնե մեկին էլ փրկեր. մի աներևակայելի պատահականություն ծովի ճանապարհը կարող էր տանել կանաչ դաշտի մեջ, և ոչ մի մարդ չի մնա, որ հրաչքին չհավատա, կամ իր փրկությունը չդնահատե:

Բայց ժողովրդական մարդը ժողովրդական հերոս է դառնում ավելի տարօրինակ և անհասկանալի ճանապարհներով: Ինչ որ նա ու-

ներ, չատ և չատ էր ամենաժողովրդական մարդը դառնալու համար Վասպուրականի մեջ: Բայց նա գիտե՞ր, թե ի՞նչ ուներ ժողովրդական հերոս դառնալու համար: Այդ ոչ ոք չգիտեր, որովհետև դրան նպաստում են աշխարհի ամենաատյրօրինակ զորություններըՙ լուսթյունը, անվճռականությունը, անգործնականությունը, նույնիսկ վախը և չատ ուրիշ բաներՙ պատմական վայրկյանին համապատասխան, որոնք մեկին գտնել են տալիս այն, ինչ որ ինքն չուներ, և ինչ որ ուրիշներն էին միայն դրել իր մեջ: Պետք է մեծ դերձ կատարվի, իսկ մենք անանձնավոր դերձ չենք ճանաչում և վնտրում ենք ու գտնում անմիջապես, և պատմությունը մեզ մատնանշում է. «Ահա այրդ ցանգ»: Ժողովրդական հերոսը մի ատուպ է: Նա պիտի երկրատուն չլինի, թե չէ հանկարծ նա կ«մարդանա» և այդ դեպքում դա կլինի մի անկում և նա «կանմարդանա»: Մեր օրերում մենք զրկված չենք ճշմարիտ ժողովրդական հերոսներ ունենալու բախտից: Բոլորն էլ մի մեծ դժրախտություն ունեն ժողովրդական հերոս լինելուց հետո էլ դեռևս ապրելու. ավելի լավ էր չծնվել: Բայց անհերքելի ապացույց, որ 1915-ի գարնան նա Վանի մեջ մի իսկական ժողովրդական հերոս էր, և 1918-ի գարնանՙ Երևանի մեջ ծառայում է գարուններին հետևող ամառների և աշունների ժողովրդական անզուսպ ռեակցիան, որ ամբոխային հոգեբանության ցայտուն ախտանշանների հետ, ցույց էր տալիս ժողովրդական հերոսի ճշմարիտ մեծությունը: Այդ ռեակցիայի օրերին միայն դուք կարող եք հասկանալ այն, ինչ որ փառքի և մեծության օրերին չէիք կարողացել հասկանալ: Նրա մոքերի մեծ մասը դեռ չծնված գործ էին դառնում արդեն: Հոգեբնախոսական և սոցիալական այս պատահությունը եթե երկարատև է լինում, ժողովրդական մարդը ինքնին պատրաստ է արդեն: Իսկ եթե պատմական վայրկյանը մարդուն դարձնում է հերոս, այն ժամանակ էլ մի քննեք թե ինչպե՞ս, այլ ապասեցեք նրա անկման օրերին, որպեսզի հասկանաք այդ ի՞նչպեսը: Երբ իր մեծության օրերին նա զրկվում էր իր թշնամիներից, որոնք միշտ ավելի են նպաստել իր մեծության և փառքին, քան իր բարեկամներն ու ընկերները, այն ժամանակ նրա մեջ դուք կարող էիք չոշափելի թանձրությամբ տեսնել հոգեկան մի անասհմանության խտացումը, այն աստիճան, որ պետք էր լինում նրա հետ դու-ով խոսել, նրան խոստովանել, նրա առջև խոնարհվել, նրան կարոտել և պաշտել: Այդ չուտով էր անցնում, սակայն, և ամբոխից ո՞վ էր, որ չէր մտածում, թե ինքն էլ մի ժողովրդական հերոս չէ և նա միայն մի բռնապրավող է: Այս ռեակցիայի օրերին նրա անզուգական անհամեմատությունը ծանր վիրա-

ձուլթյան էր ենթարկվում, ինչպես և իր ինքնագիտակցությունը լրջորեն վիրավորվում փոքրիկ նախանձներից և մրցակցություններից, որոնք դժբախտաբար ոչ օտարներից էին գալիս, ո՛չ էլ հակառակորդներից: Նրա անձնավորության շուրջ հյուծ գնահատումների ծայրահեղ հակադրությունները ժամանակի մեջ, անհերքելի և էքսպերիմենտալ ապացույցներ են, որ նա մի ճշմարիտ ժողովրդական հերոս էր: Նրան աստվածացնելուց և պաշտամունքի սեղաններ կանգնեցնելուց հետո, անուղղակի, անգլուխ և անսիրտ ամբոխը մի քանի անգամ էլ փորձել է նրան սպանել: Բացի այդ, նրա մոտ գնացել են, երբեմն, իբրև քրմապետի և կրոնական մի հովվի մոտ, առանց նրա կուսակցական և անհատական անձնավորությունը նկատի առնելու: Նրան դիմել են իբրև հոր և մտերիմի, որին ոչ թե պիտի խնդրել, այլ նույնիսկ հրամայել: Կարլայլի և Նիցշեի հերոսներից չատ քիչ տարրեր կային նրա մեջ, որովհետև նա իբրև պատասխան միայն մի անակնկալ նորություն կարող էր ասել կամ անել. մինչդեռ նա նոր խոսք և վարդապետություն չէր բերում, ոչ էլ ինքն իր համար ստեղծում իր Գողգոթան: Պատմությունն էր նրա մեծ բարեկամը, ինչպես նաև անցնող ժամանակը՝ նրա մեծ թշնամին: Բայց նրա ներշնչած ստեղծությունների և պաշտամունքների անսահմանությունը բոլորի, նույնիսկ փիլիսոփայողների ուշադրությունը կենտրոնացնում էր իրեն վրա և դարձնում անփոխարինելի մի գործիք սոցիալական կյանքի մեքենան շարժելու համար: Մի պատվի զորություն էր ամբարում նա իր մեջ, կամ մի անհասկանալի լեզվապիտություն: Նա հասկանում էր ամբոխի լեզուն և ժամանակն ու ամբոխը միայն, երբեմն, կարող էին նրա լեզուն հասկանալ: Այն ընդունելի և ցանկալի հաստարակ–ուիյունը, որ երբեք նրա մեջ ապնվական հավակնությունների և հատկությունների չփոխվեց, մի ուրիշ փաստ է մեր օրերի և կյանքի մեջ փայլող այդպիսի աստղների զորության և նրա ժողովրդական կրքերի գոպանակը լինելու դժբախտության և բախտավորության: Այսօր, երբ մեր առջևն է ամբողջական մարդը, իբրև ուղղաձիգ և ուղղագիծ գործերի մի վարպետ, ինչպես նաև, իբրև թռիչքների, անկումների, սահումների և բարձրացումների զիգ-զագ գծերի մի անսպառ պատմություն, այսօր էլ մեր մեջ արթնացող զգացումները նրան առանձնացնում են թե՛ աստեղության, թե՛ պաշտամունքի համար:

* * *

Պատմական հեռանկարի մոտավորությունը անկարելի է դարձնում նրա ճշմարիտ արժիքը բնորոշելու: Բայց այն հանգամանքը միայն, որ ես չգիտեմ, թե ինձ պիտի հաջողվի՞ երբևիցե սպառել նրա մասին իմ տեսլիքները, այդ միայն իմ աչքին պարզում է նրա անձնավորության և հասարակական գործունեության տիտանական հասակը, որ լուսյսի չափազանց հեռավորությունից է դուրս այդքան երկարացել: Սակայն անժխտելի է այդ զարմանալի մարդու մեջ մեկտեղված հակամերժ ու հակադիր ուժերի և հատկությունների դրացիությունը և համագրությունը: Դրանք ստեղծում էին նրա անձնավորության մեջ մի դյութական գրավչություն, մի մոգական ձգողականություն, մի գեղարվեստական ներդաշնակություն և մի անեզր համայնատեսարան: Երբևք կարելի պիտի չլինի հագենալ այդ համայնատեսարանի և դաշտանկարի այլազանությունները՝ խոտոր և չնդ, մութ և լուսավոր, ծուռ ու չիտակ, անսրոչ և պայծառ գծերից, ածուններից, ցորենի, տատասկի և խոտի արտերից, ակոսներից և առուներից, մշակած և անմշակ դաշտամասերի թովչական հարևանությունից, ջրվեժների, ձորակների և բլրակների, երբեմն էլ հեռվում մշուշի մեջ գծագրվող ձյունապատ գագաթների անասելի դյութանքից: Ով տեսել է դաշտի մեջ հանդչող նրա գեմքի վեհափառ խաղաղությունը և հոյակապ գեղեցկությունը, նա այդ պիտի կապել իր առաջին ծանոթության հետ նրա հետ, որպեսզի ոչ թե խնդրելու, այլ հրամայելու համար կարողանա այնտեղ կարգալ,

«Տես ղի՞արդ գեղեցկացոյց ղիս մահ արար յոյժ տարփելի...»

Բանաստեղծի խոսքերը, ուղղված ոչ թե Հրանոյշին, այլ իր մեծ սիրուհի Հայ ժողովրդին:

Երևան, 1 փետր[վարի] 1919 Վ[արագդատ] Տ[երոյան]

Բնագիր: Ձեռագիր

Ժ. ՀԵՌՈՒ ԵՎ ՄՈՏ[1]

Ես սիրում եմ Հեռուն: Եթե դա ճանապարհների Հեռուն է, ես սիրում եմ աչքերով գրկել այդ Հեռուն, և սրտով մոտենալ: Ես սիրում եմ տանջվել, որ երբեք չպիտի կարողանամ աչքերով գրկել և ձեռներով միաժամանակ ցանկալի Հեռուն: Նրա անչարժ ծածանումները կազմում են իմ մտքի համար հարսանեկան առագաստի դյուլմական անկողինը, որի մտապատկերը միայն իմ հոգին լցնում է երկնահոտ երանությամբ, և որի իրականության ճահճից ես պիտի փախչեի սարսափահար, ինչպես դյուլթական Հեռուն պտնելու համար պիտի փախչեի ամեն անգամ, երբ հասնեի նրան: Եթե դա հորիզոնի Հեռուն է, ես սիրում եմ ձուլվել նրա նրբերանգներում և իմ երկնագույն անհատականության տոնը կատարել առավոտ և երեկո, թուխ և ոսկեզօծ ամպերի հետ: Նրա մանրիկ և անսահման ալիքները իմ սրտին երգում են մի մոգական սիմֆոնիա, որի ձայնը ոչ մի ականջ չի լսել դեռ, և որ սիրելու համար ես ավելի ու ավելի փոքրանում ու հեռանում եմ: Երկնքի Հեռուն, ուր պետք է անպատճառ մի Աստված դնել, որովհետև ուրիշ ոչ մի դաղափար արժանի չէ այդքան վեհափառության: Երկրների Հեռուն, ուր չգիտես, թե ինչքան անծանոթ հրաշքներ կան պահված, ուր կանչում է քեզ անկարելի երջանկության անգուսպ ծարավը:

Նա անթիվ է, ես սիրում եմ բոլորն էլ: Ես մոլեգնաբար սիրում եմ ցանկալի Հեռուն և մի ահավոր ուժով կլինեի բոլոր նրանց գլխին, որոնք Հեռուն կդարձնեին մոտ:

* * *

Ես սիրում եմ Մոտը: Ինչ որ մոտիկ է, խիստ մոտիկ: Ինչ որ խոսում է միայն սրտին: Ինչ որ ինձ հետ նույնացած է և տարբեր է ինձնից նրա համար միայն, որ ավելի զգալի դարձնեմ իր Մոտիկությունը: Ես սիրում եմ այն ներքին փոքրիկ վայրկյանը, որ կա իմ և ամեն բանի մեջ, որ ինձ մոտիկ է, լույսի կամիլի պես վախկոտ և խուսափուկ, որ կարող է չքանալ նույնիսկ մի տերևի հրամանով. ես

---

[1] *Այս Ժ գլուխը մասն է կազմում 10 գլխից բաղկացած աշխատության, որի գլուխների վերնագրերն են. Ա. Ագատության պահանջը, Բ. Կզզինների խանդաղատությունը, Գ. Իմ անունը, Դ. «Խոսքեր», Ե. Հախճապակի ձևակերտումներ, Զ. Առաջին անկումը, Է. Մի գիշեր, Ը. Զինակոչ, Թ. Զոհաբերություն.— Ռ. Ս.*

չգիտեմ ինչպես գրկեմ այդ փոքրիկ վայրկյանը, որովհետև ամեն շարժում նրա համար մահ է: Այնքան փոքրիկ տեղ է բռնում նա, բայց այնքան խորն է նա, որ ևթե ես տիեզերքի ծայրն ուենենայի և երկնքի բարձրությունը չէր կարելի ինձանից ամենափոքրիկ բանն իսկ հեռացնել, առանց ինձ ոչնչացնելու: Մոտիկ, ավելի մոտիկ, ես չգիտեմ ոչինչ ավելի մոտիկ, քան արյունը, որ հոսում է երակներիս մեջ, կամ հրամանը, որ իմ կամքն է տանում նյարդերիս, կամ չարժումը, որ կենդանացնում է իմ մկաններըը, և կամ թե զգայնությունները, որոնք սիրելի առարկաների բովանդակությամբ բեռնավորված չրջապատում են իմ մեջ: Աննյութ մասնատներներ նյութական իրերի, որոնք իմ հոգու կյանքն են կազմում և իմ կյանքի անուղղը, հիշատակներ անցած գարերի և պատկերներ գալոց օրերի, որոնք թեև այժմ չկան, բայց այնքան մոտիկ են ինձ, այնպես խոսում են իմ սրտին. համբերության և տանջանքի գաշտանկարներ, նահատակության և երանության ոսկեզեն հնքիաթներ, որոնք իմ անմահական եսիդն ավելի մոտիկ են ինձ: Նրանք անթիվ են, ես սիրում եմ բոլորն էլ. ես մոլեգնորեն սիրում եմ, ինչ որ ինձ Մոտիկ է, իմ սրտում մի տեղ ունի և ես մի ահավոր ոուժ կլինեի բոլոր նրանց գլխին, որոնք Մոռը կզարձնեին հեռու:

Եվ այժմ, բոլոր նրանք, որոնք թողին իրենց հայրենիքը, գիտակցո՞ւմ են նրանք, թե ի՞նչ արին: Նրանք Հեռավորը դարձրին մոտիկ և Մոտավորը հեռացրին նրանք: Այնպես թեթև, այնպես մանկական բռնեցին նրանք դաղթի անծայր ճամբան, և ոչ ոք չեղավ նրանցից, որ կամենար և համենար մի րոպե ավելի սիրելի անուններն և երկրի առջև: Այնպես չուտ փախաք դուք այն ամեն բաներից, որ ձեզ Մոտիկ էր, և այնպես չուտ որդեգրեցիք դուք այն ամեն բաները, որ ձեզանից այնքան Հեռու էին: Այնպես հեչտ դուք ոչնչացրիք ոսկեզեն Հեռուն և այնպես հեչտ դուք գտտարկեցիք ձեր հոգու բովանդակությունը: Արևը ծագում է ձեզ համար անծանոթ լեռներից և անանուն հորիզոնների հետև նյութում ձեզ համար տանջանքի դիշերը: Դուք հասաք և մոտեցաք ցանկալի Հեռուին և անկարելի փորձն արիք, ձեռներով գրկելու Անմերձանալին: Դուք երկինքը գրկեցիք իր Աստծուց և ձեր ստամոքսի փառքը թափավորեցրիք այնտեղ: Դուք Հեռավոր երկրների մոգական քողը պատռեցիք և անատնական երջանկությունը փնտրեցիք այնտեղ: Եվ ահա, դուք, որ Հեռավորին մոտեցաք և Մոտավորից հեռացաք, և ահա, դուք ապրում եք: Դուք չեք կարող ասել, թե ինչքան երջանիկ եք դրա համար, ես չեմ կարող ասել, թե որպիսի անկում է այդ, ձեզ համար: Ես չգիտեմ, այժմ

ի՞նչ է հոսում ձեր երակների մեջ, որովհետև ես գիտեմ, որ ձեր մոտիկ արյունը չի հոսում այնտեղ: Ես չգիտեմ, թե ո՞րն է ձեր հրամանը, որ ձեր կամքն էր տանում ձեր նյարդերին, որովհետև ես գիտեմ, որ դուք հրաման չունեք և ձեր նյարդերի մեջ թագավորում են խնդիրքը և աղաչանքը: Ես չգիտեմ թե, ո՞րն է չարժումը, որ կենդանացնում էր ձեր մկանները ըմբոստության և հաղթանակի համար, որովհետև ես գիտեմ, որ այնտեղ ոստոստում է ձեր ստամոքսի կամքը. Իսկ ձեր զգայությունները և մտապատկերները, դուք արտաքսեցիք սիրելի և մոտիկ առարկաներն ու երևույթներն այնտեղից և լայն բաց արիք ձեր զգայությունների և մտապատկերների դռները ամեն բանի առջև, որ օտար էր և Հեռավոր: Դուք չկարողացաք սիրել ձեր սերերն ու գորովները, ու նոր սեր փնտրեցիք այն բաների մեջ, որոնք ձեզ համար չէին պատրաստված: Դուք չկարողացաք հասկանալ, թե ինչպես պիտի սիրել այն ատելությունները, որ ձեր սրտին մոտիկ էին, ու սկսեցիք նոր ատելություններ որոնել ձեր սրտից հեռու, որովհետև դուք չհասկացաք, թե մի քիչ էլ սեր կա մոտիկ ատելությունների մեջ: Ձեր մեջ չրջագայում են նյութեղեն մտապատկերներ նյութեղեն իրերի, որոնք ձեր ստամոքսի կյանքն են կազմում և ձեր մարմինը պարարտացնում: Գալոց օրերը ոչ մի քող չունեն ձեր առջև բանալու և անցնող գարերը ոչ մի հիշատակ չունեն ձեզ վստահանալու: Ձեր չրջապատի մեջ մի բան չկա, որ ասի՝ ես ձերն եմ, դուք իմն եք: Ինչպես որ ձեր հոգու մեջ նիրհում է մի բան, որ մի օր ձեզ պիտի ասի՝ ես ես չեմ, ես ո՞վ եմ: Ձեր համբերության առջև բացվում են միայն ախոռի դռները և ձեր տանջանքը ճաշից հետոյի լավագույն ծիծաղը միայն կարող է հարուցանել:

Օ՛, իմ եղբայրներ, այդ ի՞նչ արիք դուք: Ի՞նչպես գործեցիք դուք այդ ոճիրը, դուք՝ ձեր Հանդեպ: Ի՞նչպես Հեռավորը դարձրիք դուք մոտիկ և Մոտավորը հեռացրիք դուք, ի՞նչպես:

[1919] Վ[արազդատ] Տ[երոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ՄԻՈՒԹՅԱՆ ՍՈՄԵՆՏԸ

I

Միության հնարավորությունը թվում է, թե միության իրականությունն է նաև, կամ նրա առաջին քայլը: Բայց, նույնիսկ վերացական ձևով, միության մոմենտի մեջ կան բազմաթիվ իրական դժվարություններ, որոնց անտեսումը կարող է վատ և ցավոտ մի իրականություն առեղծել, միության բոլոր առավելությունները թերի և պակասավոր դարձնել և բաժանման բոլոր թերությունները ու պակասությունները իրենց ցանկալի առավելություններ ցույց տալ: Միությունը կատարվում է այնտեղ, ուր բաժանում կա և երևան է բերում ամեն անդամ էլ այն բոլոր խնդիրները, որոնք առհասարակ որևէ միության մոմենտում կարող են հանդես գալ: Միայն միության անկնդհատ պաշտպանությունն է, որ պետք է չանտեսի այդ խնդիրները, զբաղվի դրանցով և ցանկալի լուծումը տա նրանց:

Սովորություն է եղել անհիշատակ ժամանակներից ի վեր «արհեստական» համարել այն բաժանումը, որ առեղծել է ամբողջական հայ ժողովրդի մեջ հատվածներ: Անկասկած արհեստական են եղել այդ բաժանումները՝ պատմության անմիտ պատահականությունների կամ նույնիսկ անհրաժեշտությունների հետևանքները, բայց այն տեսակետից միայն, որ դրանք պետք է եղած չլինեին: Մի անգամ կատարված դրանք հետզհետե պիտի կորցնեին իրենց արհեստական բնույթը, պիտի ստանային բնական հիմունքներ և հոգի լինեին պատմական հետևանքներով: Ոչ ոք չի կարող ժխտել հատվածական, ինքնուրույն կյանքի գոյությունը զարերից ի վեր հայ ժողովրդի մեջ: Բայց իրականության անծանոթությունը միայն «արհեստական» կարող է համարել Ղարաբաղի լեռների և Կիլիկիայի ծովափնների վրա բնակող ժողովուրդների մեջ առաջ եկած բաժանումը, զանազանությունը և տարբերությունը: Ուրիշ ոչ մի փաստ էլ հարկավոր չէ, այնքան որ կարկառուն է այս մեկը, ապացուցանելու, թե ինչքան «բնական» է այդ արհեստականությունը:

Եվ այժմ, երբ պետք է առեղծվի միացյալ և անկախ Հայաստանը, այդ միության և անկախության թեթևամիտ և անգիտակից հակառակորդները միայն կարող են իսկի խնդիր էլ չհամարել այդ միությունը, նույնիսկ անարժան՝ մի րոպե իսկ զբաղվելու, հատարակական

մի հարց դարձնելու, միության վարպետների առջև նրա դժվարությունները պարզելու և ցանկալի լուծում տալու այն խնդրին, որ շատերը կարծում են, թե միայն ուղեղների մեջ գոյություն ունի: Անշուշտ, հայ ժողովրդի տառապանքները կատարելապես իրավունք ունեն ուրիշ տեսակի բարեկամներ ունենալու, քան այնպիսիները, որոնք կարծում են, թե խորհրդաժողովի որոշումները դրսի աշխարհից, և մի քանի կարդագրություններ և հրամանագրություններ՝ ներսի աշխարհից, բավական են «արհեստական» բաժանումները ոչնչացնելու և մի կատարյալ միություն ստեղծելու:

Այս րոպեիս աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների ամենագլխավոր հարցերը արտաքին քաղաքականության սահմանների մեջն են դեգերում: Այդ այդպես է նաև հայ ժողովրդի համար: Բայց շատ քչերն ունեն այդ արտաքինին գրեթե համահավասար մի ներքին հարց էլ, որպես հայ ժողովուրդը: Այդ հարցը շատ մեծ է, դրա համար էլ շատերը իսկի չեն էլ տեսնում. ոմանք վախենում են, այդ պատճառով չեն տեսնում, ոմանք էլ հայտնի խելոքության պատճառով իրենք չեն ուզում տեսնել, որպեսզի ուրիշները չտեսնեն: Այդ երեք տեսակի չտեսնողներն էլ հասարակականորեն անպետք և վնասակար տեսնողներ են. նրանց օրգանական կամ մտավոր աչքի ընդունակությունների վրա չի կարելի չափել մեր իրականությունը:

Բայց, եթե մեր պահանջների համեստության համար հանդիմանության էինք արժանանում անցյալ օր, և պետք լինի մի օր էլ ավելի համեստանալ քան այսօրն ենք, այն ժամանակ դարձյալ միության խնդիրը կմնա իր ամբողջ մեծությամբ և բազմատեսակ դժվարություններով՝ դրված հայ ժողովրդի առջև՝ իբրև մի ծանր և քրտնաջան խնդիր, որ պիտի լուծել ամենեն առաջ: Միայն դրա համար է, որ միության խնդրին մենք մոտենում ենք ավելի վերացական տեսակետով: Ամեն մարդ կարող է չոշափելի իրականության մեջ տեսնել այդ վերացականի թանձրացած օրինակները: Բայի այդ, մենք կարծում ենք, որ մեր պատմության մեջ միության վայրկյանն սկսվում է արդեն: Եթե ցանկալի հասկացողությունը պակասի, այդ ժամանակ կարելի է, իհարկե, ամեն բանին իր իսկական անունը տալ: Ինչպես նաև հայ ժողովրդի միության խնդիրը մի ծանրակշիռ և ինքնուրույն հարց է, որ պետք է լուծվի՝ անկախ նրա քաղաքական հարցի լուծման եղանակներից և տեսակներից:

II

Արհեստական բաժանման բնական հետևանքները պարզ են ամեն մարդու համար էլ: Այն հանգամանքը միայն, որ ոչ մի բաժանում չի կարողացել ոչնչացնել հատվածների մեջ գոյություն ունեցող ընդհանուր անցյալը, հոգի-մտավոր բավանդակության և արտահայտությունների տեսակները, ապագա հետանկարների նույնությունը, մի խոսքով ինքնուրույն ազգային գոյության բոլոր հիմունքները — այդ հանգամանքը միայն բավական է միության հնարավորություն կատարելապես ցանկալի և բնական մի բան դարձնելու: Բայց դա բավական չէ երբևիցե՝ միությունը առանց դժվարությունների իրականացնելու, մի շարք խոչընդոտներն անտեսելու և առաջուց չքմեղանալու, թե կարիք էլ չկա մի խոհական, պարզ և չիտակ ներքին քաղաքականություն վարելու:

Միության անհրաժեշտությունը, ինքնին, բաժանման ցավոտ իրականությունն է խոթում մեր աչքը չարունակ: Չի կարող այդ բաժանումից ավելի ցավոտ չլինել այն միությունը, որ ամենայն հավանականությամբ տեղի պիտի ունենա շատ տեսակետներով անհավասար մասերի միջև: Մեկը կարող է ունենալ որակական մեծություն, մյուսը՝ քանակական: Ի՞նչպես տեղի պիտի ունենա այս անհավասար և անհամաչափ մեծությունների միությունը: Առարկություններ կարող են լինել այն դժվարության մասին, թե ինչպես պիտի առեղծվի այդ հավասարեցումը, որովհետև առանց դրան չի կարող ճշմարիտ և օգտակար մի միություն կատարվել: Դժվար և անցանկալի մի բան է հարթահավասարությունը (Nivellierung) այդ անհամաչափությունների մեջ, որովհետև դրանով շատ բան պիտի կորցնել, այնպիսի բաններ, որոնք ծանր աշխատանքներով էին ձեռք բերված: Մյուս կողմից՝ չեշտված և պահպանված անհամաչափությունն էլ վիրավոր և անցանկալի խարտականություն կմտցնի արհեստականորեն բաժանված հատվածների մեջ: Հասարակական կյանքի մեջ ամենից քիչ ունեցողի ունեցածն է, որ ամենքն էլ կարող են ունենալ: Ուստի, պետք է մի անկում կատարվի, որպեսզի հնարավոր լինի մի միություն. այդտեղ մարդկային կամքը մեծ դեր կարող է խաղալ. մինչդեռ նա բոլորովին անզոր է մի թռիչք տալու, և այն էլ ժողովրդական զանգվածներին՝ ցանկալի հավասարեցման և միության համար:

Այս վերացական և ընդհանուր դժվարությունը շոշափելի իրականության մեջ բազմատեսակ ցավոտ խնդիրներ է հարուցանում: Լեզ-

վական, գրական, ընդհանուր դպրոցական և առհասարակ կուլտուրական բոլոր երևույթների մեջ չի կարող միություն առաջ գալ՝ առանց երևան բերելու յավալի թյուրիմացություններ՝ արհեստականորեն բաժանված հատվածների ըմբռնման և կամեցողության մեջ: Մեր օրերի բառագիտությունը՝ օրիենտացիա ընդհանուր և անորոշ մի վերնագրի տակ լուծում է այդ բոլոր խնդիրները նույն հեշտությամբ, որով սովոր են լուծել նախկին Ռուսաստանի սահմաններում բոլոր հասարակական հարցերը: Բայց դա լինելու է երկար ժամանակ մեր ներքին քաղաքականության ամենացավոտ հարցը: Մեկ կողմից հնարավոր պիտի չլինի մինչայժմյա բնական հակումներից և մեր սովորած ճանապարհներից հեռանալ: Մյուս կողմից՝ հեշտ չի լինի նոր ճանապարհի որոնգրումը, ինքնին դարձյալ օտար, մինչև սեփական ճանապարհ գտնելը: Միշտ իրավունք կունենա մեկը կարծելու, որ սեփական ճանապարհը կարելի է գտնել իր գլուցած հին ուղիներով: Մի հակայական թյուրիմացություն այսպիսով իրավունք կունենա գոյության:

Այսպիսի դժվարությունները ամենեն ավելի ցայտուն են դառնում կուլտուրական երևույթների մեջ, որովհետև այդտեղ միայն լավի և լավագույնի համար եղած գնահատումները պերազանցապես ենթակայական բնույթ են կրում, և չեն կարող քաղաքական ու տնտեսական հարցերի չափանիշով գտնել իրենց անհրաժեշտ լուծումը:

Հատվածական մեծությունների միության այս դժվարությունը պիտի ըմբռնել նաև այն դեպքում, երբ թե՛ որակական, և թե՛ քանակական հավասարություն կա, ու այդ ժամանակ հարց է դառնում՝ թե երկուսից ո՞րն է նախընտրելի, ո՞րը պիտի թողնել ու մոռանալ, ո՞րը վերցնել և յուրացնել: Բայց միության մոմենտում դեռ ուրիշ հավանականություններ էլ կան. քանակով շատը որակով քիչ կարող է լինել և ընդհակառակն: Երանի թե սրանց միությունը դժվարություններ չհարուցաններ, և մեր ինքնուրույն կյանքի կազմակերպությունը սկզբից ևեթ հնարավոր լիներ դնել կատարյալ հաստատուն հիմքերի վրա:

III

Ինքնուրույն պետական կյանքի երկարժամանակյա անվարժությունը առաջ է բերել բոլոր հատվածների մեջն էլ ազգային քաղաքական մի ինքնուրույն ապրելաձև: Բոլոր հպատակներն էլ հպատակ

են, բայց բոլոր հպատակներն էլ ռուսահպատակ չեն, կամ թուրքահպատակ: Միացյալ և անկախ Հայաստանը երկար տարիներ պիտի բազմամարդվի գերազանցապես թուրքահայերով և ռուսահայերով, մինչև որ մի օր այդ երկիրը բազմամարդեն առանց որևէ բարդության հայեր: Այդ ժամանակ, իհարկե, տեղի կունենա վերջնական միությունը, այսինքն հաջորդ սերունդը օրով: Բայց ներկա սերունդը ծանր պարտականություններ ունի իր վրա՝ հոգևկան, բարոյական և տնտեսական մեծամեծ զոհողություններ: Պետք է շատ բան մոռանալ, պետք է շատ բան էլ սովորել: Բայց ինչպես մեր, նույնպես և բոլոր ժողովուրդների ղեկավարող տարրերի մեջ կան ընդհանուր և անխորտակելի հատկություններ. նրանք ամեն տեղ էլ կատարելապես անընդունակ են թե՛ սովորելու և թե՛ մոռանալու: Նրանց տարրիքը չի ներում այդպիսի դիմաշրջություն. հասարակական հեղաշրջումների մեջ նրանք չեն կարող օրգանական հեղաշրջման ենթարկվել: Ոչ ոք իրավունք չունի այդ պահանջելու նրանցից, թեև նրանք ցանկանում են ջերմապես, և ուրիշ չեն փափագնի նրբեք իրենց այդ ցանկությունն ապացուցանելու: Մենք հասկանում ենք լիովին այս դրությունը և չենք էլ փորձում լուծել հարցը՝ առաջարկելով դոնել հայեր առանց բարդությունների: Դրանց թվի սակավությունը միայն անընդունելի է կացուցանում նրանց խաղալիք դերի արժեքը: Մենք չենք էլ փորձում հարցը լուծել այս ձևով, որ առաջարկենք իրար չեզոքացնող դրություններ ստեղծել, որոնք վերջապես մի հանապարհ կարող են համարվել չաուերի կողմից՝ ցանկալի միության: Օրգանական միություն պետք է լինի, կամ միացում. և բավական է, որ դա մի հարց համարվի և պետք լինելիք բարյացակամությունը չպակասի դրա համար:

Բռնի և չտապ լուծումները ոչ մի լուծում չեն, ինչպես նաև հարցի գիտակցական անտեսումը և անուշադրությունը: Եթե մենք չենք ցանկանում, որ միացումը լինի ներքնապես և կամովին, այն ժամանակ դա կլինի արտաքնապես և բռնի, իսկ այդ նշանակում է՝ մենք մեր դռնապանին ենք հանձնում մեր ննջարանի կարգադրությունները: Այդ պատճառով է, որ մեր պահանջը հնչում է նույնիսկ հրամայականորեն այդ «անկարելիության» առջև. մոռանալ չատ բաներ և սովորել մի քանի բաներ:

Որովհետև երկրաբանական երևույթների հանդեպ չենք դոնվում, այդ պատճառով էլ մենք կարծում ենք, որ ամեն բան պիտի կատարվի հետզհետե և աստիճանաբար: Բայց մենք կասկածում ենք, թե կարող է անհրաժեշտ կամքը բացակայել, և այդ դեպքում միացման

Հարցը միայն արտաքին քաղաքականության հարց համարողները երբեք չկարողանան հաշիվ տալ իրենց անմիտ եռանդի և անխորհուրդ գործերի հետևանքների մասին: Բնական է, ավելորդ կլիներ ինքնին այս մասին խոսելը, եթե մի քանի ախտանշական փաստերը ցույց չտային մեզ խորխորատ փորողների ձեռքի բահը: Բայց լավ է դեռևս մնալ ընդհանուրի սահմաններում և «ընդունել», թե միացման հարցը միայն մեր արտաքին քաղաքականությանն է վերաբերում:

Հայ ժողովրդի պետական ընդունակության և ներքին օրգանական միացման մասին այս օրերի պահպանված իսորհրդավոր լռությունը, սակայն, մի ուրիշ տեսակի ախտանիշ է միևնույն խնդրի լուծման դժվարության: Անցնող տարվա դեկտեմբերի 4-ը սպառել էր կատարելապես մեր հավատքը մեր ներքին ուժերի, կամեցողության և ստեղծագործության մասին ունեցած մեր հավատքը: Մենք սովորում էինք, թե ինչպես ամեն բան պիտի հուսալ դրսից և ուրիշից: Բայց շատ կասկածելի է, արդյոք մենք հա՞սել ենք այն ճշմարտության, թե ով որ այս ծանրակշիռ պատմական վայրկյանում ժողովրդի հետ չէ, նա հետագայում չպիտի կարողանա օգտակար կերպով նրա հետ լինել: Բացի այդ, ավելի չոչափելի խոսելու համար, արտաքին քաղաքականության մեջ մեր միության դարբնողներին, եթե վիճակվի ներքնապես էլ աշխատել այդ միացման համար, ապա, ուրեմն, այդ պիտի լինի, թեև հայի ձեռքով, բայց արտաքնապես և բոնի: Այդ պատճառով է, որ մենք կարծում ենք, թե համագոր աշխատանք են կատարում աշխարհի տերերը և աշխարհի ժողովուրդները: Անօգուտ և անմիտ է մեկի ցանկությունը և որոշումը՝ առանց մյուսի ցանկության և որոշման: Այս հասկացողության պակասությունից առաջ եկան այն չմտածված և անմիտ արտահայտությունները՝ զանազան հրապարակախոսների և նույնիսկ կուսակցությունների կողմից, որոնք չփոթում էին ժողովուրդների ճակատագրի դարբնման գործում դերակշիռ և համագոր դեր խաղացող ներքին և արտաքին ուժերի նշանակությունը, ու կարծում էին թե խաղաղության խորհրդաժողովը, կամ այս և այն անձնավորությունը կարող է անել նաև այն, ինչ որ միայն իրենք՝ ժողովուրդները պիտի անեն և ուրիշ ոչ ոք: Բայց այդ անհասկացողությունը մի զորավոր ապացույց է, թե միության մոմենտի մեջ կան այնպիսի մեծ դժվարություններ, որոնք միայն խոհական բարյացակամության և երկարատև ու համառ աշխատանքի չնորհիվ կարող են հրապարակից վերանալ, ու տեղ և ցավայի երևույթներ կանխել:

IV

Անշուշտ մի որոշ ժամանակի համար հայ ժողովրդի միության հարցը միայն արտաքին քաղաքականությանն էր վերաբերում: Մի անհերքելի մոլեռանդություն կարող է այսօր էլ այդ ժամանակին անցած չհամարել: Բայց, ոչ ոք չի կարող ընդունել, թե այժմ հատուցած չէ նաև հարցի ներքնապես լուծման ժամանակը և եղանակը: Այն ժամանակ մենք իրավունք ունենք հարցնելու, թե ի՞նչ է կատարված այդ ուղղությամբ, ի՞նչքան գիտակցական վերաբերմունք է ցույց արված նրա հանդեպ: Հայ ժողովրդի «բարեկամների» մեկ տեսակին են պատկանում նաև այնպիսիները, որոնք նրա միության մեջ չեն ընդունում նրա անկախությունը: Բայց նրանք, որ ա. ասելով բ. էլ են հասկանում, միություն ասելով անկախություն են հասկանում. նրանք պարտավոր են հայ ժողովրդի գոյության հարցին մոտենալ այժմեն ևեթ, ու ամեն ուղղությամբ գուգահեռաբար արտաքին քաղաքականության:

Հենց այն մոմենտում, երբ մեր գործը վճռվում է մեզանից հեռու, ճիշտ այդ պատմական վայրկյանում անհրաժեշտ է մեր գործի միջազգային բնավորությունը տարածել նրա մասերից ամբողջության վրա և, ոչ թե խաղաղության խորհրդաժողովից հայ ժողովրդի վրա, այլ հայ ժողովրդից խաղաղության խորհրդաժողովի վրա: Այդ նշանակում է, որ մեր արտաքին քաղաքականության հարցը չի կարող բանական լուծումն առանալ, եթե նա ներքին քաղաքականության մեջ չի առացել իր անհրաժեշտ լուծումը:

Շատերը կարծում են, որ ամեն բան վերջացած կլինի, եթե վերջանա Հայաստանի հոգամասերի ամբողջական նվաճումը: Եթե այսպես կոչված դաշնակիցներից մեկը, կամ Հայաստանի հրամանատուր (mandataire) պետությունը գրավե մեր պատմիրակների պահանջած հոգամասերը: Եթե Կիլիկիայի հայկական բանակները իրենց նվաճումները տարածեն լոթը վիլայեթների վրա ու մինչև Ղարաբաղը: Կամ, եթե Արարատյան Հանրապետության բանակները կատարեն այդ պարտականությունը: Հայ ժողովուրդը աշխարհի պատմության մեջ մի ամանդ է թողել, թե հոգամասերի միացումով երբևէ չի առնծվի ժողովուրդների միացումը: Այդ օրինակը մեզ շատ խրատական կարող էր լինել, եթե մենք հայ չլինեինք:

Շատերն էլ կարծում են, որ միության մասին խոսք չի կարող լինել, որովհետև «կոդմեր» չկան, ոչ էլ շահերի այդպանություն: Արհեստականորեն բաժանումից առաջ եկած տարրական պատմանները

նրանց համար միության ոչ մի խոչընդոտ չեն: Բնական է, որ միությունը մի դաշինք չի կարող լինել, ոչ էլ մի պայմանագրություն: Բայց նա պետք է լինի գործունեության և հասկացողությունների համերաշխություն ոչ թե կուսակցությունների, այլ en bloc *[ամբողջովին] ժողովուրդների միջև: Պետք է ստեղծել առաջին հերթին ներկայացող կամքերի համերաշխություն՝ առաջին հերթին ներկայացող մասերի համերաշխություն: Որովհետև միության մոմենտը այնպիսի բարդ նրբություններ ունի իր մեջ, որ ամբողջական միությունը չի կարող կատարվել, եթե մասնակի միացումները չեն կանխապատրաստել ամբողջականը:*

Միության ներքին օրգանական, անմիջական աշխատանքը նույնքան ավելի հզորությամբ մեր առջև է դրված, որքան արտաքին միջամտությունը նրա մեջ մեզ անցանկալի կարող է համարվել: Դա տեղի, հողի և ժամանակի ինքնագիտակցության պահանջն է: Փարիզից եկողները կամ վերադարձողները այդ չեն հասկանա և մեզ կմիացնեն իրենց այդ անհասկացողությամբ: Այդ ժամանակ ուշ կլինի արդեն, և մենք միացած կլինենք գուցե ոչ թե ստեղծագործական աշխատանքի, այլ հապճեպ ու հակաժողովրդական փորձերի դեմ պայքարելու համար: Մինչդեռ, եթե մենք համոզվել ենք, թե թուրքը շատ է հեռու և անզոր, թե մեր արտաքին քաղաքականությունը լուծում է մեր դարավոր հարցը, թե այդ հարցի ներքնապես լուծման համար շատ քիչ բան է արվել, կամ դրեթե ոչինչ, ապա, ուրեմն, մենք պետք է անմիջականորեն ձեռնամուխ լինենք աննելու, ինչ որ մինչև այժմ չենք կարողացել, լրացնելու, ինչ որ մինչև այժմ թերի է մնացել: Շարունակել այս դրությունը այլևս անկարելի է: Առողջ դատողության համար անընդունելի է կառավարությունը, որ ժողովրդից հեռու է կազմվում և գտնվում, որ Կիլիկիայի մեջն է կազմվում ամբողջ Հայաստանի համար, կամ Արարատի ստորոտում: Բայց մենք չենք էլ ցանկանում կենսունակություն և բարյացակամություն ներկայացնող որևէ կառավարության առջև դժվարություններ հարուցանել սոսկ այն պատճառով, որ նա, իրերի բնմունքով, ժողովրդից հեռու է առել իր սկզբնավորությունը, կամ նրա մասերից մեկի մեջ: Այդ կլիներ մեր ասածների կատարյալ անհասկացողություն: Մենք միայն ուզում ենք, որ նա ավելի ուժեղ լինի, ավելի ժողովրդական, ավելի իրավատեր և ավելի հաստատուն:

Երևան [21.IV.1919] Վ[արազդատ] Տ[երոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ՄԱՍ II

ԴԱՏԱՐԿ ՏԱԿԱՌՆԵՐ
(Մի հատված կուսակցությունների սոցիոլոգիայից)

Ամենամեծ դատարկ տակառները հասարակական կյանքումն են գտնվում: Ամեն մարդ գիտե դատարկ տակառի պատմությունը: Յուղի տակառներ, սպիրտի տակառներ, ոսկու տակառներ, դատարկ տակառներ – այդ միևնույն է, բոլորն էլ տակառներ են: Բոլորն էլ նույն մեծությունը կարող են ունենալ, բայց բոլորն էլ միևնույն ձևն ունեն անպատճառ, միևնույն չերտերը, օղակները, հատակը և բերանը: Ջանքայլը և խորդուբորդ տեղերից ճամփորդելիս միայն նրանք մատնում են իրենց ներքին արժեքը, այլապես ամեն մարդ պարտավոր է ընդունել, որ բոլոր տակառներն էլ տակառ են և բազմահարուստ, հավասար թե՛ որակով, և թե՛ քանակով, ընդունակ միևնույն տարողության և բովանդակության:

Կուսակցությունների սոցիոլոգիան անթիվ նմանություններ է երևան բերում տակառների հետ: Փոքր կուսակցությունները կատարելապես դատարկ տակառներ են, չրջապատով, ձևով և մեծությամբ նման լիքը տակառներին, դատարկ տակառների նման մեծապոչ և ազմկահույզ, լիքը տակառների պես հավակնություններ ունեցող և ծանրագլուխ: Արժե մի քիչ կանգ առնել փոքր կուսակցությունների սոցիալական ծագման և նկարագրության վրա, որովհետև նրանք էլ, երբեմն, կուլը պատահականության չնորհիվ, երբեմն էլ կուսակցություններին հատուկ տրամաբանության չնորհիվ դառնում են իրականության և գրության տերերը ու մեր ճակատագիրը վճռում միևնույն համարձակությամբ և հանդգնությամբ, ինչ որ մեծ կուսակցությունները:

Կուսակցություններն, առհասարակ, ժողովրդի մեջ առաջ եկած հասարակական խմբակցություններ են՝ կոչված որևէ հասարակական իդեալի իրականացման համար աշխատելու: Փոքր կուսակցություններն էլ այդպես են:

Նրանք ունենում են իրենց տարիքը, որ ժամանակի ընթացքին մեծանում է: Բայց երբ կուսակցությունները երկար ժամանակի ըն-

թացքին մնում են մանկական տարիքի մեջ և իրենց տարիները մեծացնելով չեն մեծացնում, սակայն, ո՛չ իրենց ծավալը, ո՛չ բովանդակությունը, ո՛չ էլ ազդեցության չրջանը, այն ժամանակ նրանք, ուրեմն, չեն էլ մեծացնում իրենց հասարակական դաստիարակությունը և խելքը: Այս փոքրահասակությունը դառնում է մի կատարյալ դատապարտություն նրանց համար, այն աստիճան, որ բոլոր տհաս խելքերի և մանուկների պես սկսում են վիճել իրենց մեծության և փորձառության մասին: Կազմված պետք է լինել ժողովրդի մեջ, ինչպես բոլոր կուսակցությունները, բայց կտրված լինելով նրանից իրենց փոքրության պատճառով, նրանք դուրսն են մնում ժողովրդից և մի տարօրինակ գրություն ստեղծում իրենց համար. ուզում են ժողովրդին ծառայել, բայց ժողովուրդը չի ընդունում նրանց ծառայությունը: Եվ այսպես, իրենց փոքրությունը նրանք սկսում են բացատրել ժողովրդի տգիտությամբ և չհասությամբ: Շփոթում են պատճառը և հետևանքը. ոչ թե փոքր են, դրա համար էլ ժողովուրդը չի հետևում իրենց, այլ որովհետև ժողովուրդը չի հետևում իրենց, դրա համար էլ փոքր են: Մի մչտական մխիթարություն նրանց փրկում է իրենց աչքում գոնե, թե բոլոր մեծ սկզբունքների և վարդապետությունների պես իրենք ևս պետք է սկզբում քիչ հետևողներ ունենան, փոքր ժողովրդականություն և դեռ հալածվեն: Բայց ինչպես երևում է, նրանք այնքան մեծ ժամանակի պետք ունեն, որքան մի մեծ կուսակցություն պետք չունի ծնվելու, մեծանալու, իր գործը կատարելու և վերջանալու համար: Այդքան ժամանակի ընթացքում, ուրեմն, նրանք քրիստոնեական մարտիրոսների դերը պիտի կատարեն և դրանից հետո միայն ծառայեն հասարակության, երբ գուցե իրենց սկզբնական իդեալներն իրականացնելու այլևս կարիք չլինի: Այդ մտահոգությունն է ահա, որ ինչպես բոլոր կուսակցությունների, նույնպես և փոքր կուսակցությունների ծրագիրը դարձնում է անիրագործելի իդեալների մի ժողովածու: Կուսակցությունները իրավունք չունեն մեռնելու և ամենից առաջ փոքր կուսակցությունները, որոնք իրենց ամենօրյա մահը անհաջողությունը, անգործությունը, անկենսունակությունը տեսնելով, անմահության երազներ են տեսնում և ծրագիրներ կազմում:

Մեր օրերում կուսակցությունները ախտավոր պարգացման հասան: Նրանց վիճակվեց ոչ միայն հասարակական կարծիքի դեկավարությունը, ոչ միայն հասարակական գործերի վերահսկողությունը և քննադատությունը, ոչ միայն ընտրությունների ժամանակ իրենց իդեալները քարոզելու, առաջարկելու և պաշտպանելու պարտակա-

նությունը, այլև ամենից առաջ ու ամենից ավելի պարզապես հասարակական գործերի ղեկավարությունը և տնօրինությունը: Մեր օրերում կուսակցություններն են երկրի տերերը և կառավարողները: Այս ծայրահեղ գարգացումը մեծ մասով կուսակցություն դաղափարի ախտավոր ըմբռնումից առաջ եկավ: Այդ ախտավոր ըմբռնումը կայանում է ոչ թե այն բանի մեջ, որ մեծ կուսակցություններն անցյան գործի գլուխը. այդ այդպես էլ պիտի լիներ քաղաքական ազատություններ վայելող յուրաքանչյուր երկրի մեջ: Այդ ախտավորությունն այն է, որ ասում է, թե բոլոր կուսակցությունները հանրօգուտ կազմակերպություններ և հաստատություններ են: Անկարելի է լինում որևէ լեգալ կուսակցության վնասակարությունն ապացուցանել: Այդպիսի մի փորձ ձեզ կբերեր կուսակցական, միակողմանի և նեղմիտ մարդուն վայել մեղադրանքներ: Բայց մի րոպե ենթադրենք, թե բոլոր կուսակցությունները, հաջորդաբար, իրար հաևից, դանազան ընտրություններում ժամանակ չահեին, և այսօր այս կուսակցությունը լիներ գործի տերը, վաղը մյուսը, և այլն: Ի՞նչ կլիներ այդ երկրի վիճակը: Ոչ միայն այդ հաջորդականությունը և փոփոխությունը պիտի ջնջեր հասարակական գործերի մեջ լինելիք անհրաժեշտ կայունությունը և չարունակությունը, այլև իր հակասություններով անվերջ հեղափոխություններ պիտի առեղծեր, և հասարակության ծառայելու անժխտելի սկզբունքը պիտի դառնար հասարակության պատժելու անհերքելի պատուհաս:

Բայց կուսակցական ըմբռնումի ծայրահեղ ախտավորությունը մարմնացնում են միաքր կուսակցությունները: Բավական է մի թերթ ունենալ, փույթ չէ թե ընթերցողները մի քանի տասնյակ են միայն. բավական է մի երկու ժողովներ կազմակերպել, փույթ չէ թե ունկնդիրները մտերիմների և ազգականների չրջանից դեն չեն անցնում, և վերջապես բավական է պատերին թռուցիկներ կպցնել իրենց տառապաքրությամբ և խոսել իրենց մեծադղորդ ծրագիրների մասին, խոստանալ դրախտներ, որ ոչ բիբլիական, ոչ էլ մահմեդական հանճարները չեն կարողացել երևակայել, ծանուցանել իրենց դաղափարների մեծ ընդունելությունն ու ժողովրդականությունը ուրիշ երկրներում և հատկապես Ռուսաստանում — բավական է այսքան տեխնիկան, որպեսզի մի կուսակցություն դոյության իրավունք ունենա և մտածի, դատե ու պահանջե, ինչպես անում են, մտածում, դատում և գործում մեծերը: Կուսակցական ըմբռնումի այս ախտավորությունը ոչ միայն աննկատելի է մնում իրենց համար, և իրենք էլ համոզվում են իրենց տառածին, այլև վերջիվերջո մեծ կուսակցություններն

էլ վարակվում են ընդհանուր ախտից և հանրօգուտ հաստատություն համարում նաև փոքրերին:

Շնորհիվ այդ ըմբռնումին դարձյալ մի սոցիալական տարակերպություն է ստեղծվում, որով մի կուսակցություն անուգանում և ապրեցնում է իր հակառակորդ կուսակցության: Փոքր կուսակցությունները հատկապես դառնում են այսպիսով մակաբույծներ, որոնք սնվում են՝ սպանելով իրենց սննդատու աղբյուրը: Այդ երևույթը տեղի է ունենում ոչ միայն այն ժամանակ, երբ կուսակցությունները ընդհանուր համաձայնության են գալիս գործերը ղեկավարելու, այլ պեռ ուրիշ հետաքրքիր դեպք է երևան բերում, այլև այն ժամանակ, երբ իրար դեմ բացարձակ թշնամությամբ են գործում: Ջուննալով ժողովրդականություն և մեծ ծավալ փոքր կուսակցությունները հատկապես ապրում են այն հույսով, թե մի օր մեծերը կկորցնեն իրենց ժողովրդականությունը, և իրենք կլինեն այն պատրաստի ամանները, որոնց մեջ հեշտությամբ հոսելու է քվեատու ամբոխը: Մեծ կուսակցությունների սխալները փոքր կուսակցություններին ապրելու նյութ և պաշար են տալիս այսպիսով: Եվ, որովհետև, ժողովուրդը «գոյություն ունի» միայն կազմակերպված կուսակցությունների մեջ, այդ պատճառով էլ կուսակցության ներքին արժեքը դեկավարող անձնավորությունների ներշնչած վստահությունը և գործունեության փաստը չէ, որ ժողովրդին տանում են մի կուսակցությունից դեպի մի ուրիշ կուսակցություն: Ընդհակառակն, մտածում են փոքր կուսակցությունները, հենց որ անցավ մի որոշ չրջան, երևան եկան մեծ կուսակցության սխալները և տեսանելի դարձան ամենքի համար, այն ժամանակ մենք կհաղթանակենք: Ոչ ոք չի ուզում ընդունել, թե փոքր կուսակցությունների հենց ամենամեծ վարկաբեկությունն է այն հանգամանքը, որ իրենք պիտի մեծանան, ժողովրդական և կենսունակ դառնան միայն այն պատճառով, որ մեծ կուսակցությունները սխալվում են: Սովորական և առօրյա կյանքի երևույթներից մեկն է տեղի ունենում այստեղ, քո ընկերոջ և բարեկամի, քո նմանի վարկաբեկությունն ու անկումն է միայն քո փառքը և բարձրացումը պատրաստում: Հետու լինելով դիտավորյալ կերպով բացատրելուց այս երևույթը՝ ինձ թվում է, որ կուսակցություններին և խմբակցություններին հատուկ է այս սոցիալական ընթացքը, որի մեջ ընկնում են բոլորն էլ, գուցե անդիտակցաբար:

Բայց շատ ավելի հետաքրքիր երևույթների ենք հանդիպում, երբ կուսակցությունները մի ընդհանուր համաձայնության են գալիս գործերի ղեկավարության համար: Այդ համաձայնությունը բազմա-

թիվ աստիճաններ կարող է ունենալ, բայց ամենատարօրինակ երևույթները հանդես են գալիս այն ժամանակ, երբ համաձայնությունը կատարյալ է, և դործերի համար ղեկավարող մարմիններ են կազմվում այսպես կոչված պարիտետի (parité – զուգություն, նմանություն) հիման վրա: Մեծ կուսակցությունները այդ համաձայնության մեջ կատարած իրենց սխալը ծածկում են մեծահոգության և հասարակական դործի մեջ ունեցած իրենց անսահման զիջողության ու ներողամտության քղամինդրով: Բայց այդ համաձայնությամբ կազմված մարմնի մեջ մեծը դառնում է փոքր, և փոքրը՝ մեծ: Դրանով քաջալերվում է ոչ միայն օպտակարը, այլև վնասակարը, անհամապատասխանն էլ համապատասխան է, աննպատակահարմարն էլ նպատակահարմար, չատն էլ քիչ է, քիչն էլ չատ, ոսկին հող է և հողը՝ ոսկի, երդն էլ աղմուկ է, աղմուկն էլ երդ: Այս արմատական և ամենայն տարբերություն և արժեք ոչնչացնող հավասարությունը թողնենք թե հասարակական դործի համար ինչպիսի անդունդներ և գերեզմաններ է փորում: Բայց, վերջվերջո համոզում է գոնե մեծահոգիներին և փոքրոգիներին կուսակցական ըմբռնումի վերև նկարագրած ախտավորությունը: Որովհետև կազմակերպչական ընդհանուր համաձայնությունը ինքնաբերաբար ստեղծում է անվերջ անհամաձայնություններ և մի վատ եզրակացության բերում բոլորին էլ՝ թե հասարակական դործի մեջ համաձայնությունը չարիք է, այնտեղ հնարավոր է աննկրոզամտություն և ուժի ու տիրապետության փառքը միայն: Այդպես չեն անում նրա համար միայն, որ փոքրերի հանած աղմուկից ազատեն իրենց ականջները և մի ավելորդ անգամ ապացուցանեն կուսակցությունների ինքնանպատակությունը՝ անկախ իրենց դերից և պարտականություններից: Բայլ այդ, դրանով արդարանում է նաև փոքր կուսակցությունների դոյության իմաստը ուրիշ տեսակետից էլ: Փոքր կուսակցությունները հանրօգուտ հաստատություններ են, ոչ միայն նրա համար, որ ապագայում կարող են մեծանալ, այլև նրա համար, որ վերահսկողություն կատարեն մեծերի վրա, քննադատեն նրանց դործերը և դործելակերպը ու մի կրջանիկ պատեհություն ձեռք բերեն մի օր էլ պարիտետն իրականացնելու և դրա չնորհիվ լինելիք ընտրություններ ղեկավարելով, մի վերջին ճիգ դործ դնելու, մեծանալու, չատ քվիններ ստանալու և ժողովրդական դառնալու: Այն օդուտն էլ կա, դրանցից բացի, որ հասարակական դործերը մենաշնորհ չեն դառնա որոշ խմբակցություններին, որոշ սկզբունքների և անցյալի տեր մարդկանց ձեռք: Եվ վերջապես պարիտետը և նման պատահակա-

նուիրյունները կարող են չատ օգտակար ուժերի, որոնք կուսակցական տարբերության համար միայն հասարակական գործից հեռացել էին, նորից բերել գործի մեջ և հնարավորություն տալ ոչ միայն բոլոր կուսակցություններին, այլև բոլոր կենսունակ և գործելու, ծառայելու տրամադիր անձնավորություններին՝ նվիրվելու հասարակական գործին, մանավանդ նրա ծանր և դժվար մոմենտներում:

Ահա այսպես է, որ կուսակցություններն իրականացնում են սոցիալական բազմաթիվ տարակերպություններ, դառնում ինքնանպատակ և, հանդուրժելով իրենց մարմնի վրա գտնվող մակաբույծներին, կուսակցություն գաղափարը, երբեմն դարձնում են համանիշ սոցիալական մակաբուծության, որ ծնվում ու զարգանում է սոցիալական մարմնի վրա և նրա հաշվին ապրում:

Կուսակցություն գաղափարի այդ ախտավոր ըմբռնման շրջանում այսքան խոր և ուժեղ հիմունքներով իրենց գոյությունն են արդարացնում ոչ միայն փոքր կուսակցությունները, այլև փոքր, չատ փոքր անհատական խմբերը և փոքրիկ եսամոլ անհատականությունները: Կուսակցականորեն գործելու տրամադիր ամեն անհատ իրեն կոչված է համարում մի նոր կուսակցություն հիմնելու և հասարակության տալու այն, ինչ որ մյուս բոլոր կուսակցությունները չկարողացան տալ: Բայց սա միայն փոքր կուսակցությունների տրամաբանական վախճանն է և ուրիշ երևույթ: Այդ մասին առայժմ չենք խոսում:

Բնական է, հասարակության մեջ տիրող կարծիքների այս շրջանում անկարելի է լինում որևէ կուսակցության ավելորդությունն ապացուցանել: Փոքր կուսակցությունների հաղթության և ոսկեպարի շրջանում մարդու արժեքը չափվում է միայն կուսակցականությամբ, և հասարակական մարմնի մեջ եղած ավելորդ և անպետք տարրերը դառնում են անհրաժեշտ և պետքական:

Մեր հայկական իրականության մեջ գործող սոց.-հեղափոխականները և սոց.-դեմոկրատները կատարելապես ներկայացնում են փոքր կուսակցությունների բոլոր առաքինությունները: Նրանք ապրում են ոչ միայն ի հաշիվ մեծ հակառակորդ կուսակցության, այլև ի հաշիվ այն մեծ կուսակցությունների, որոնք ուրիշ երկրներում մեծ են և ժողովրդական, և որոնց դժգույն արտացոլումները և արձագանքներն են իրենք Ասիայի այս անկյունում: Տարիների փոքրահասակությունը նրանց մեջ արմատացրել է ոչ միայն փոքր կուսակցություններին հատուկ բոլոր հիվանդությունները, այլև փոքր կուսակցությունները դարձրել է փոքրիկ մարդկանց կուսակցություններ:

Ոչ մի պայմանով նրանք չեն համաձայնվում մեծ և ուժեղ դառնալու: Սկզբունքների աղանդավոր պահպանումը նրանց ավելի հանրօգուտ գործ է թվում, քան ուժ և ազդեցություն ձեռք բերելն ու գործադրելը: Թեև չատ սովորական երևույթ է, որ հակադաչնակցականությունը նրանց և դեռ չատ ուրիշների էլ միացնում է իրար հետ, և դրանով եղծանում նրանց սկզբունքների կուսական անարատությունը: Բայց որովհետև նրանք ապրում են ապագայի մեծության երաշխներով և ներկայի երջանիկ պատահականությունների դեմ, այդ պատճառով էլ նրանք հանրօգուտ գործ են համարում աղմուկը, դատարկ տակառների աղմուկը: Հասարակական գործի մուրացկաններ և արկածախնդիրներ են դառնում նրանք ակամա, հենց այն պատճառով միայն, որ փոքր են և չեն ուզում, չեն կարող մեծանալ, ժողովրդական և լայն կուսակցություններ դառնալ: Ակամա նրանք մնում են ստվերում, երբեմն մեծ հակառակորդների, երբեմն էլ այսպես կոչված «մայր կուսակցության»: Փոքր կուսակցություններին հատուկ հոգեբանական և սոցիոլոգիական նրանց կացությունը ավելի ամրապնդվում է, իհարկե, բոլոր կուսակցություններին հատուկ հոգեբանությամբ, այսինքն նրանք ավելի ու ավելի համոզվում են իրենց օգտակարության և ինքնանպատակության, ինչքան քիչ են գործում, ինչքան անհաջող և անժողովրդական են դառնում, ինչքան իրենց դատարկ բովանդակության աղմուկը չոյում է իրենց ականջները և, մի խոսքով, ինչքան դեռ ոչնչությունը հնարավոր է կուսակցություն մեծադղրդ ամանի մեջ պարփակել: Բայց այդ ոչնչությունը նրանք երբեք չեն նկատում, չեն տեսնում և միշտ մեծ գործերի գլխին կանգնած են տեսնում իրենց և ափսոսում, որ մարդու սով ունեն: Նրանք չեն ընդունում, որ քվեի սովը առաջ է բերում առհասարակ մարդու սովը, և անկարելի պիտի լիներ կուսակցությունների բացարձակ օգտակարության մասին տարակարծիք լինել, եթե փոքր կուսակցությունները չապացուցանեին անժխտելի կերպով իրենց ավելորդությունը և անպետքությունը: Անշուշտ, կուսակցությունների սոցիոլոգիային է վերաբերում այն հանգամանքը, որ դատարկ տակառների աղմուկը վրդովմունք է առաջ բերում և ազդում մարդկանց գործերի վրա: Այնքան քիչն էլ բավական է, որ փոքր կուսակցությունները համոզվեն իրենց օգտակար և անհրաժեշտ դերին: Ո՞վ կարող է, սակայն, նրանց համոզել, թե այդքանը բավական չէ մի կուսակցություն հիմնելու և համառորեն նրան պահպանելու համար: Փոքր կուսակցությունների սոցիալական դիրքը և նշանակությունը այսպիսով մի ճակատագրական դատապար-

տուժյան է ենթարկվում իրենց դերի չնորհիվ: Նրանց ազդեցության չառավիղը, առանց որևէ թվի կամ գործակցի ամբողջովին ծածկում է նրանց շրջագիծը: Եվ ինչպես զորավոր և ուժեղ անհատականությունները իրենց կնիքն են դնում մի կուսակցության վրա, այնպես էլ մի կուսակցություն իր կուսակցական անհատականության կնիքն է դնում յուր անդամների վրա, իսկ փոքր կուսակցությունները միայն մի անհատական-կուսակցական կնիք ունեն՝ փոքրությունը և երկարատև անչափահասությունը. մի ավելորդ ապացույց՝ փոքր կուսակցությունները փոքրիկ մարդկանց կուսակցություններ են: Ծնված ժողովրդի մեջ, ժողովրդին ծառայելու նրանք արմատախիլ են լինում, ժամանակի ընթացքին, ժողովրդից և դառնում նրա դլխին մի կատարյալ չարիք, այդ անզոր կղզիացման և առանձնացման մեջ նրանք ոչնչանում են առանց հալածանքի, բայց իրենց փոքրությունն արդարացնող հալածանքը կա առնվազն նրանց դլխում, որովնք, իրենց սոցիալական անչափահասությունը բոլորովին անտեսելով, իրենց հասարակական դոյությունը դարձնում են մի հարց, հասարակական մի պրոբլեմ, որ լուծելու համար այս անդամ պետք լինի գուցե մի նոր կուսակցություն հիմնել:

[Անթվակիր] Վ[արազդատ] S[երոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ԱՅՍՕՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I

Պատմությունը լուսյան վայրկյաններ չատ ունի: Իրար հաջորդված դրություններ, երբ չարունակություն կկազմեն, կանցնեն անպատճառ այնպիսի վայրկյաններ, որոնց մասին չեն հետաքրքրվում չարունակությունը տեսնողները, և որոնց մասին լուռ են բազմաթիվ պատճառներով՝ ապրողները: Այդ վայրկյանի մնծությունը և ոչնչությունը միանգամայն անկարելի կդարձնեն որևէ խոսք: Մարդ չի գանվում իրականության հանդեպ, որ պետք է լրացնել, այլ հնարավորության մի անտահմանության առջև, որ ամեն վճռականության ցրկի դատապրտությունը: Մի ընդհանուր բառով կոչմար կարելի է անվանել այդպիսի վայրկյանը: Զգում ես մեռնելդ, և սակայն ապրում ես, ու ինչքան մնծ է լինում մեռնելուդ զգայնությունը, նույնքան և ամուր փակչում ես կյանքի թևերին: Անընդհատական պարտությունները այն աստիճանին են հասնում, որ թշնամուն այլևս հաղթելու բան չի մնում. այսինքն լրացած են մահվան ամեն պայմանները և, սակայն, ապրում ես, հաղթանակի հույս էլ չի մնում այս կյանքից զրկված կյանքին, և կենդանության կչելը հնչում են չափազանց կևդ:

Հայ ժողովրդի պատմությունը այս փաստի ապացույցն է: Մնծ ազգերը քիչ ունեն կոչմարի այդպիսի վայրկյաններ: Այժմ Ռուսաստանը թերևս կարելի լինի ասել այդ պայմաններումն է. իր չարունակական պարտությունները թշնամուն չեն տալիս ոչ մի հաղթանակ: Բայց Ռուսաստանը չատ տնտակի անելիքներ չունի, իսկ հայերը ... այդ մասին ո՛չ այսպես: Մեր մտածողության տրամաբանական կառուցվածքը երբեք այնպես չէ, որ մենք կարողանայինք հատկանալ, թե Գերմանիան կարող է հաղթել: Այդ պատճառով պատմության այս վայրկյանը պիտի անցնի անհասկանալի դալիք սերունդին, ավելի ճիշտ՝ լուռ: Իսկ մե՞զ համար: Ավերված և կոտորված Հայաստանի տեղ մենք կունենա՞նք այլևս Հայաստան. այս հարցը ավելի չուտ կապված է անթիվ պատահականության հետ, քան մեր ուղեղի տրամաբանական կառուցվածքի հետ: Պետրպրադի դրավումը Ռուսաստանի պարտությունը չէ, բայց Բեռլինի ոչ միայն գրավումը, այլ անգամ գրավման կասկածը կարող է Ռուսաստանի վերջնական հաղթությունը լինել: Ահա թե ինչու համար Ռուսաստանն անպարտելի է, իր հաղթանակի մասին կարող է վստահ երազել և համարձակ քայլել պատմության այս լուռ վայրկյանից:

Սակայն, մեր այս լուռության վայրկյանը իսկական կոչմարն է: Հայկական հուշյսերի միջնաբերդերը ընկան կամ ընկնում են: Հնձվում է հայությունը՝ որպես հասունացած ցորենի դաշտը, և ինչ որ չի մանրացվում, կոտորվում հնձած դաշտի վրա, գնում է, տարվում է ավելի «ապահով» տեղ՝ ուրիշ ձևերով, ավելի բնական ձևով մանրվելու և կոտորվելու համար: Այդ դաշտերը, ուր հայությունն էր բսնում, դատապարտված են ամայության և հատկացված խոտի ու տատասկի: Մահվան ուրագանն է չնչում Տավրոսի գագաթներից, մինչև ալևոր Մասիսի փեչերը: Ազգությունների մեծ ճանապարհին թափված անեծքները ոչնչացնում են այժմ այդ ճանապարհը, և մենք վայրկյանի ամբողջ գիտակցությամբ, լռում ենք, պետք է լռենք. պատմության լուռ վայրկյանն է: Երջանիկ են նրանք, որ այս ողբերգության ականատեսները եղան և դեռ ժպիտ ունեն ապագային նայելու: Ո՞ւր են մխիթարության կայարանները, որոնց վրա բևեռեինք լռության այս վայրկյանից մեր կարոտի սլաքները: Մխիթ՞ այս լռությունը վերջակետ չէ, վախճան չէ ամեն կյանքի, ամեն հույսի: Եվ զուր են, կեղծ են քաջալերության և կենդանության բոլոր շարժումները:

Մեր մտքի ափերակների մեջ մի հաստատուն սյուն կա: Ամուր բռնենք այն:

II

Որովհետև իսկապես ազգությունները չեն մեռնում կոտորածներից և համաճարակներից: Խորհրդավոր քողով ծածկված են մարդու, ինչպես և ազգությունների կյանքի երկու ամենամեծ անցքերը՝ ծնունդը և մահը: Նրանք, որոնք Ալբանիայից և քրդական հորդաներից ուզում են ազգություն ստեղծել, նույնքան ձախլիկ արհեստավորներ են, որքան նրանք, որոնք Լեհաստանի և Հայաստանի մահն են գուշակում: Մենք կհասկանանք այդ մարդկանց հոգեբանությունը: Ազեատի մեծությունը և ծանրությունը փոքր տարողությամբ մտքերի համար կյանքի վախճանն է: Այդպիսիները այսօրվա այն հերոսներն են, որոնք վաղվա մասին ոչ մի գաղափար չունեն: Սակայն, այս ազեատի գիտակցություն ունեցողներից բոլորն էլ եթե այդպես չեն, բայց անհերքելի է, որ մենք պատվավոր չենք անցնում լռության այս վայրկյանից: Մեր Հայրենիքի ափերակները կվերականգնվեն միայն այն ժամանակ, երբ մենք մեր միտքը կազատենք ավերակներից:

Ըստ որում ես գրում եմ նոր, դալիք սերունդի համար 1915 թվականի հայ ժողովրդի պատմությունը.— մենք հալեցնենք թուրքերին մեր կրած մշտական չարունակական կոտորածներով և պարտությու-

ներով: Գալիք սերունդը զարմանքներ չպիտի ունենա այս տողերի համար. կարճատեսները պարադոքսի սերը պիտի փնտրեն այդտեղ: Նա արեց, ինչ որ կարող էր: Մենք դեռ չարինք, ինչ որ կարող էինք: Մենք այն ճամփորդն ենք, որ ինչ չարժում էլ անի, կորցնելիք բան չունի այլևս: Մեր անզորության մեջ միայն զգայինք մենք մեր ամենակարողությունը: Այժմ միայն մենք գիտենք, թե ինչքան շատ հայ ենք մենք: Հայ ապրելու, հայ լինելու այդ խոշոր կամքը մենք կթաղենք ամեն անգամ, երբ մենք մահվան և վախճանի մասին կխոսենք: Պատմության այս վայրկյանը տանենք իր լռության վեհափառությամբ և աշխարհի ճմարտությունների մեջ հասկանանք վերջապես «որպես թե»ի ճմարտությունը, որովհետև հաջողությունը և հաղթությունը նրան կպատկանեն վերջիվերջո, ով իր գործը կչարունակե սկզբնական թափով, որպես թե ոչ մի անհաջողություն և պարտություն պատահած չլիներ:

Մենք զարդարված էինք հաղթության առարկաներով: Թշնամին խլեց մեզնից ամեն բան, և այժմ անչարժությունը և ողբը կատարյալ իրավունք կուտան հաղթողին իր պատուղները վայելելու: Նա ծանրաբեռնված է այժմ մեզնից խլած հաղթություններով, մենք, որ այլևս կորսցնելիք չունենք, կարող ենք ձեռք բերել ամեն բան: Այս հավատքը կյանքի հավատքն է, ապրելու միակ պայմանը: Ով այս պայմանը չի լրացնում, նա, իհարկե, պիտի ողբա միայն: Բայց ինչ որ մեր բարի պատմագիրները տասնևհինգ դար ողբացին, մենք քսաներորդ դարի մեջ պիտի նվաճենք միայն: Նրանք էլ դուշակեցին տասնյակ անգամներ մահն ու վախճանը: Եվ շատ լավ արին. այն ինչ որ իրենց անվան պատիվ չի բերում, այդ կազմում է մեր պատմական փորձառության հիմնաքարը: Եթե հայ կամքը այնօր էլ ապրեր այսօրվա գիտակցությամբ, այնօր էլ կարելի պիտի լիներ իրագործել — մենք հաղթեցինք թշնամուն մեր կրած մշտական և չարունակական կոտորածներով և պարտություններով:

III

Հայ կամքի այս անսպառելի ուժը ամեն քայլափոխին, ամեն պատահականության առջև նոր պարտականություններ երևան կբերի: Ինչքան մեծ են հարվածները, ինչքան շատ են լինում փորձությունները, այնքան շատ էլ մենք զգում ենք մեր հայ լինելը: Պատմության այս վայրկյանը հղի է նոր, ստեղծագործական պարտականություններով: Մենք այնքան քիչ հայ էինք կարծում մեզ մի ժամանակ, որ երբ հայ ժողովրդի վիրկության գործը ենթարկվեց այսօրվա ողբերգության, մենք կարծեցինք այլևս, որ մինչև այդտեղն էր մեր հայ լինելու կամքը: Դաղթականական հոգսերը, իհարկե, մի քայլ էլ

առաջ տարան մեր այդ կամքը, մի քիչ էլ մեզ չարունակել տվին հայ լինելու էքսպերիմենտները: Բայց այդտեղ չէ, որ մենք պիտի կանգ առնենք: Մշուշային և անորոշ ձևով զգում ենք բոլորս, որ պիտի չարունակել: Բնազդական է այդ զգայումը և դեռ չկազմակերպված, պարզ և տարրական մտածողության հետևանքն է այդ, որ երբեք ինքն իրեն հաշիվ տված չէ իր գործի մեծության համար, որ երբեք իր գործի մեծության տեսական հիմքեր չի տվել: Պարզ ձևով հարցն այսպես է.

– Հայ ժողովուրդը կոտորվելուց և գաղթելուց հետո հայ ժողովուրդը այլևս գործ չունի:

Սակայն, մենք երբեք չպիտի երթայինք Եգիպտոսի հայ ժողովուրդը փրկելու, ինչ պայմաններումն էլ լիներ նա: Երբեք Ամերիկայի հայ ժողովրդի փրկության հարցը չի կարող եղած լինի, ինչպես եղել է Հայաստանի հայ ժողովրդի փրկության գործը:

Հայ ժողովրդի փրկությունը չկա Հայաստանից դուրս:

Եվ եթե հայ ժողովրդի փրկությունը չեղավ Հայաստանի փրկությունը, այդ նշանակում է, որ Հայաստանի փրկությունը պիտի լինի հայ ժողովրդի փրկությունը:

Այսքան խորն են ազգության արմատները: Մարդկային ուժերով կարելի է վերջացնել մարդկային արժեքները: Բայց ավելի քան մարդկային արժեք կա այն բանի մեջ, որ մարդկային ուժերով չի կարելի ոչնչացնել:

Ես երևակայում եմ ոչ թե մեկ-երկու ամիս, կամ մեկ-երկու տարի, այլ ամբողջ հարյուր տարի Հայաստանը այնպես անապատ և ավերակ, ինչպես այսօրն է: Բայց Հայաստանը չպիտի դադարի այն ժամանակ էլ Հայաստան մնալուց: Արհեստական մի ստեղծագործություն չէ այն, մարդկանց քմահաճույքի արդյունքը, որպեսզի մի այլ քմահաճույքով վերջացվի այն: Հազարավոր տարիների հայկական դրոշմը կա այնտեղ՝ լեռների և դաշտերի, գետերի և ծովերի, քարերի և հողերի վրա: Ով էլ լինի Հայաստանի ապագա բնակիչը, իր վրա մի բան պիտի վերցնի հայկական՝ իր գյուղը, կամ քաղաքը, իր ճանապարհը կամ դաշտավայրը: Հա՞յն է միայն, որ այնտեղ պիտի չկարողանա հայ մնալ:

Շատ խախուտ պատճառաբանություն է ազգության այսպիսի հասկացողության հանդեպ թվի հարցը: Թուրքը, որ գաղթեց անվերադարձ կերպով, պակաս կոտորածների չենթարկվեց, և երբ Հունաստանն ազատվեց, իր որդիների երկու երրորդը կոտորվել էր արդեն:

[Թերի է, անթվակիր] [Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր:

[ԱՆՎԵՐՆԱԳԻՐ]

11.IV.31

Ոչ մի բան այնքան դժվար չէ, որքան ճիշտ դատողություններ հայտնել այն ժամանակի մասին, որի մեջ դու ապրում ես: Մի պատահական դրքի մեջ հանդիպեցի այս մտքին, և դատ, որ ոչ մի ժամանակաշրջանի այնքան չի պատչաճում այդ խոսքը, որքան մերինը:

Ահա, երկրորդ տասնամյակին ենք մտնում անհուսալի վախճանով, ինչպես առաջինն էր: Ըստ որում, չէ՞ որ ամեն օր հղի էր իրեն չնմանվող մի այնպիսի վաղվանով, մի այնպիսի օրով, որ, իսկապես, բովանդակությամբ կատարելապես արդարացնում էր մեր ապրատիններն ու վախերը, բայց իր էությամբ, իր ընդհանուր ձևով, իր անընդհատ կրկնվող չափազանցություններով, իր մտացածին, անիրական, չինծու, արվեստարկյալ բնավորությամբ անընդհատական կրկնություն էր միևնույն անհույս և անույս փորձերի: Փորձեր ասում ենք և մոռանում ենք, որ դործ ունենք քիմիկոսների հետ, որոնք տասնյակ տարիներ փորձում են ջուր ստանալ՝ քլորի և ածուխի միացումից: Ո՞վ կարող է ասել՝ անկարելի է. ֆիզիկոսների հետ, որոնց չինած օդանավերի չարժիչ ուժը մարդկային ձայնն է. կենսաբանների հետ, որոնք հրամաններ են տալիս ժառանդականության. բնախոսներ, որոնք սիրտը պետք է ոչնչացնեն, որովհետև գալվանիզատոր են տեսել մի դուռը բաց աշխատանոցի մեջ: Ահա ձեզ փորձեր, որոնք չարունակվում են տասնյակ տարիներով, և չդիտես, թե երբ այդ փորձերը կվերջանան այս կամ այն կերպ: Լինի, որ մեկը արդելի այդպիսի փորձեր անելը, շատ հասարակ ձևով ցույց տալով, որ դրանք արվել են արդեն, և ով որ ուզում է դեռևս չարունակել, նա պետք է դուրս դա աշխատանոցից: Լինի որ իրենք իսկ «փորձադետները» հասկանան այդ բանը, որովհետև որոշ տարիքի մեջ այդպիսի անկարելիությունները հնացած և մաշված ուղեղները միայն կընդունեն: Բայց քանի որ այդ փորձերը կրկնվում են անհուսալիորեն, տասնյակ տարիներով, ապա և պետք է որ այս տարիք առածներն արդեն կարողանան լավն ու վատը, չարն ու բարին, կարելին և անկարելին իրարից տարբերել: Սակայն, այդպես չի լինում. նույն անդրդվելի համառությամբ փորձերը չարունակվում են:

Բայց մի ուրիշ տեսանկյունից նայելով՝ դուցե կարողանանք որոշ ճշմարտություններ գտնել, մի քանի հաջողություններ տեսնել, որոնք արդարացնեին տասնյակ տարիներով կուտակված, կրկնված և կրկնվելիք սխալները, ու այդպիսով ապահովեինք միակողմանի լինե-

լուց մեր պատողությունների մեջ այս ժամանակաշրջանը հասկանալու և վերագնահատելու հարցում:

Ինքնին սխալ և թեթևամիտ հայացք է կարծել, թե կյանքն ամբողջ մի սխալ է և մասնակի սխալների անընդհատական ու անվերջանալի մի շարք կարող է կյանք ստեղծել: Եթե սխալը տևականորեն շարունակվում է և հարատևում, պետք է, ուրեմն, փոխել ճշմարտության չափանիշը և այն դարձնել այնպես, որ նրա մեջ մտնի նաև այդ սխալը իբրև ճշմարտություն, գուցե վատորակ, անկյանք ճշմարտություն, բայց ճշմարտություն: Թեև ճշմարտությունն այդպիսի հատկանիշներ չի կարող ունենալ, բայց անշահախնդիր որոնումի տրամաբանությունը պահանջում է այդ գոհողությունը: Այդ կարող է մեզ օգնել ոչ միայն լուսաբանելու համար մեր տեսության տեսունակությունը, այլև մեր հայեցողության աշխարհը վերաբերմունքը և դիրքը:

Ամեն մարդ գիտե, թե ինչ խոշոր դեր են խաղացել պատմության մեջ այն յուրատեսակ «խենթ»-երը, որոնք իրենց ժամանակի համար անկարելի համարված փորձեր են կատարել: Առանց այդ խենթ հավատքի և նվիրվածության, կյանքի մեջ գոյություն չէին ունենա ո չ գիտության և տեխնիկայի ամենաբարձր գյուտերը և հաղթանակները, ո չ էլ գրականության և գեղարվեստի բազմաթիվ ստեղծագործությունները: Պետք է հազարավորները իրենց կյանքը տալու փորձով հարթեին օդում թռչելու մարդկային խելագար ցանկության ճանապարհը: Մեր օրերում չէ միայն, ուրեմն, որ անկարելին նվաճելու փորձեր են արվում: Այդ միշտ եղել է և միշտ էլ կլինի, քանի կյանքի հուժկու զարկը բախում է սրտի վանդակը անսովոր ուժգնությամբ, քանի գլուխը պայթում է իր ստեղծագործության տիեզերքներով: Բայց մարդու մեջ անկարելին նվաճելու այս աստվածային թռիչքը, ինչքան էլ բազմաթիվ օրինակներով կարելի լինի թվել, միշտ էլ պիտի տեսնենք մեր դեմ կանգնած մեկ հատիկ անհատ: Մի քաղաք չկա, մի քաղաքիկ չկա, մի խմբակ չկա, երկու անձնավորություն չկա, որ միանային, իրար խոսք տային իրենց կյանքի գնով նվաճելու անկարելին: Այդ խենթությունը, որ աստվածային է անհատի մեջ, միայն մեկի մեջ, չատ զվարճալի կլիներ երկուսի մեջ, երեքի մեջ: Բացի այդ, երբ ես իմ կյանքը դնում եմ անկարելին նվաճելու համար, այդ, կասկած չկա, ամբողջ մարդկության բարօրության նվիրվելու ցանկությունն է իմ մեջ խոսում: Բայց նմանության որևէ եզր կմնա՞ այլևս, եթե ամբողջ մարդկության բարօրությունը պետք լինի գոհել նվաճելու համար մի խենթ գլխում ծնված այդ ան-

կարելին: Այստեղ գործ ունենք ոչ թե անկարելին նվաճելու սրբազան խնդրության, այլ հանցավոր կուրության և աններելի տգիտության հետ:

Ո՞րտեղ է ուրեմն այս համառորեն չարաբնակվող սխալի ճշմարտությունը: Նա կա, պետք է նրան գտնել, որովհետև ահա մեր ձեռները կրակի մեջ են, և չեն այրվում, ահա ես ընկա էյֆելի աշտարակից և ողջ-առողջ քայլում եմ դեռևս: Պատկերներ չեմ ուզում տալ, որքան համապարփակ ընդհանրացումներ: Որովհետև մանավանդ փաստերը պետք պիտի լինի կուտակել ժամանակագրական ամբողջությամբ՝ առանալու համար մի ընդհանրական հայացք: Մինչդեռ այս հապճեպ, մասամբ նաև եղոպտյան բարբառումի մեջ ո՞վ է, որ չի հասկանա, թե մեր կառքը գնում է տանյակ տարիներ ամբողջ իր քառանիկյունի անիվների վրա: Մենք կարել ենք այն ճյուղը, որի վրա նստել էինք, և սակայն չենք ընկնում: Աստված են, ով իր ձեռքում սվին ունի, նա ամեն բան կարող է անել, բայց նրա վրա նստելուց: Սակայն մեր տերերը հաղթական ինքնամոռացությամբ նստել են սվինների վրա և ձեռքներին էլ սվին ունեն:

Այս րոպեիս ես ավելի շատ հակված եմ պատմության պրագմատիստական մեկնաբանությունը որոնելու հենց այսօրվա համար: Պատմության երեկը բոլոր տնտակի վարիածների համար էլ հիմնավորման լիառատ փաստեր կարող է տալ: Դրա համար էլ ես միշտ հիշում եմ կատարված փաստի անհերքելի ճշմարտությունը: Տվի՛ք այդ փաստը՝ լրությամբ կատարված: Նրա հիմնավորումը, արդարացումը, սխատմամավորումը և մեթոդականացումը կդառնա հատարակ արհեստավորների գործ: Այդ մարդիկ կսկսեն ամբողջ մարդկության սովորեցնել, թե ինչպես հնարավոր է անկարելին, թե ինչպես հող են այն մարդիկ, որոնք կարծում են, թե հողի օրենքները չի կարելի տարածել մարդկանց վրա: Ի՞նչ օրենքների մասին ենք խոսում: Մարդկային իրականության օրենք չի կարող ունենալ, այդ ազատության թագավորության է, որտեղ անհրաժեշտության տարրկներն իրենք կամքը կթելադրեն՝ իբրև բնության և պիտության օրենքներ:

Ինչքան էլ մեծածավալ և խորապես հիմնավորված լինի պատմական անհրաժեշտության մտնենտիկների մեթոդոլոգիան, այնուամենայնիվ դա ծառայելու է վերջիվերջո ինքնահերքման միայն: Ըստ որում, եթե ճշմարտության պահանջած բոլոր պայմանները լրիվ չափով կան, սակայն, ավյալ պայմանից և հանգամանքներից չի ստացվում սպասված արդյունքը և փոփոխությունը, ապա ուրեմն մենք գործ ունենք «կատարված փաստի» ճշմարտության հետ, որի ան-

սության համար անթիվ հակասական փաստեր կարելի է բերել: Ահա այդ պատճառով է, որ պատմության պրագմատիստական ըմբռնողությունը շատ պատշաճ մի գործիք է անցյալի համար, որոշ չափով պիտանի նաև ներկայի համար, բայց նա օրենքներ չի կարող տալ, ոչ էլ օրինաչափ ընդհանրացումներ մի հատիկ փաստից ավելի: Եվ ինչո՞ւ պետք է այլ կերպ էլ լիներ: Ջէ՞ որ ներկա ժամանակի գնահատականը կատարելիս մենք ճշմարտության կարող ենք քչից-շատից մոտենալ այն դեպքում միայն, եթե մենք գործ ունենանք մի ամբողջական երևույթի հետ, որի սկիզբը, զարգացումը, հասունացումը, անկումը և վախճանը իրենց լրիվ կերպարանքով ձեռքի տակ լինեն: Մինչդեռ «ներկա ժամանակի», ընդհանրապես կատարվողի վերաբերմամբ, մենք չենք կարող այդ պայմանները լրացնել: Ներկա չկա, այդ կամ անցյալ էր, կամ լինող ապագա. այս երկուսի միջև կանգնած մի մարդ չի կարող հասկանալ երբեք, թե իր սևեռած մոմենտը ինչ չափով է իր վախճանին մոտենում: Գուցե դեռ սկզբի քայլերն են, որովհետև ժողովուրդներ կան, ինչպես նաև պատմական երևույթներ, որոնք տասնյակ և հարյուրավոր տարիներով մի սկիզբ են սկսում և վերջացնում են այն ժամանակ, երբ ամեն մարդ կարծում էր, թե դեռ իր զարգացման և հասունացման օրերը չի տեսել, ուր մնաց թե անկման կամ վախճանին մոտեցած լինեն: Այսպես ուրեմն, մենք ձեռքի տակ չունենք ամբողջությունը և դրա համար էլ չենք կարող նրա ճշմարտությունը գտնել:

Սակայն, անհրաժեշտ է իր ժամանակը հասկանալ առանց նրա ճշմարտությունը որոնելու անզոր փորձերի առջև կանգ առնելու: Պետք է կուտակել արամաբանության բոլոր փաստերը, որոնք իրենց ինքնահակասություններով ստեղծում են ներկա ժամանակի գոյությունն ու գոյության իրավունքը:

Միշտ հիշում եմ մտքերի այս կապակցության ընթացքում մի ադեղի պատմությունն: Ասում են, շատ լարելուց կջարդվի, շատ լարելուց կբթանա: Իր ներգործության ուժը այն չափի որոշման մեջ է, որով նա պիտանի է դառնում, և առանց որի նա կամ անպետք է կամ անզոր, այսինքն շատ քիչ լարումը հավասար է շատ-շատ լարումին: Եվ ահա, այս երկու դեպքում էլ վրիպումն անխուսափելի է: Իմ բարեկամ Ա-ն ահա մի այդպիսի ադեղ է: Ջափի բացակայությունը նրա էությունն է կազմում, ամեն բան որ չափ է, նրա մեջ չկա, և նրա մեջ կա միայն ամեն ինչ, որ չափազանցություն է: Ստուգաբանորեն նրա ազգանվան մեջ նույնիսկ չափազանցություն է գտնվում: Որտեղ նա կա, այնտեղ չափազանցություն կա: Նրա բարությունն, իր

սովորական չափազանցության մեջ, հիմարության սահմաններն է մտնում, և այդ է պատճառը, ուրեմն, որ ներելի է դարձնում նրա չարությունը, որ արդեն բարբարոս և դաժան մարդակերության զարգացած տիպարն է ներկայացնում: Ճիշտ խոսելու ցավագար չափազանցությունը նրան դարձնում է սուտ խոսելու կատարելագործված մի արհեստանոց: Լավագույն ապագայի երազները նրան ձգում են վաղեմարագույն կենցաղի մեջ: Նյութապաշտության Ավետարանը ձեռքին՝ նա դառնում է ցնորամիտ իդեալիզմի առաքյալը: Բարձունքներից է ճառում այն ժամանակ, երբ ընկել է անել խորխորատները: Բոլորին ուզում է փրկել և առաջին հանդիպողին կործանում է: Որովհետև, նա կարծում է, որ կթի մարդասպանությունը կատարվում է կատարելագործված ձևերով, դա բարձրագույն առաքինություններից մեկն է:

Չափի զգացումի այս բացակայությունը և չափազանցության ներկայությունը ամեն բանի մեջ, ակներև են դարձնում նրա հոգու ամենախոր ծալքերը: Ինչքան էլ նա ուզենա պաշտպանվել, ինչքան էլ նա ուզենա դրան հակառակ բազմաթիվ փաստեր բերել, դարձյալ ճշմարտությունը պայծառ կերպով փայլում է այդ քողերի տակից: Աստված որոնելու խելացնոր և հուսահատ փորձերը չէ՞ին, որ նրան դլորեցին անաստվածության խորխորատը: Ընդհանուրի պաշտամունքը չէ՞ր, որ նրան դարձրեց մասնավորի դահիճը: Ապագայի երազները չէ՞ին, որ նրան կուրացրին ներկայի հանդեպ: Միստիցիզմի կությունը ոչ թե դերբնական բովանդակության մեջ է, այլ շատ իրական ձևերի մեջ: Կարելի է միստիկ ապրումներ ունենալ մի կոշիկի վերաբերմամբ, որոնք նույնքան իրական կլինեն, որքան ս. Թերեզայի սեռական հարաբերությունները Քրիստոսի հետ: Դա հոգևական ապրումների գունավորման մի տեսակն է, որ այդ աստիճանին հասնում է բազմաթիվ ելևէջներից հետո: Դոգմատիզմը գարպանում է բավական աննպաստ պայմաններում, պարագլուխների մեջ այդ դառնում է շատ հեշտությամբ idée fixe, *երբ մի շատ անմեղ միտք աչակերտներ և ունկնդիրներ է ունենում: Նրա դոգմայացումը այլևս ժամանակի խնդիր է հատկապես այն դեպքերում, երբ այդ միտքը՝ որպես դործնական կյանքի ուղեցույց, պետք է դառնա և հավատացյալներ ունենա: Ահա այդ հավատացյալների և քարոզչի միջև ստեղծված անթիվ փոխազդեցությունները, նոր նշումները և ինքնանոր նշումները առաջ են բերում անհատների մեջ այդ մտքի քարացումը, որը, սակայն, հետզհետե կյանքի բոլոր ստորոգումներով օժտված, մեծանում է անընդհատ, ծավալվում, խեղդում շրջապատի*

բոլոր այլ մտքերը, կամ կենաց և մահու պայքար մղելով դուրս վռնդում բոլոր հակառակորդներին, իսկ դեռևս դիմացողներին և կենդանի մնացողներին ստրկացնում է, ոչ թե կամազուրկ, այլ կամակատար և հաճոյակատար աղախիններդ դարձնում: Հեռվից նայողի վրա այն տպավորությունն է թողնում, որ անհակասական և կուռ տրամաբանության վերջին նվաճումն է սա, սիստեմ կոչվելու միակ արժանի փիլիսոփայությունը, որ իր համատարած և ամենաթափանց լույսով բացատրում է բոլոր իրերն ու երևույթները, բոլոր ժամանակներն ու տարածությունները, բոլոր խնդիրն ու առեղծվածները: Ունենալով այսքան հսկայական հարստություն, որ կուտակված է մի մտքի մեջ, այլևս կարելի՞ է ժլատ լինել, այլևս կարելի՞ է այնքան չար լինել, որ չուզենաս բոլորին տալ այդ լույսը, թեկուզ բոլորի կամքին հակառակ: Փրկել բոլորին, բոլորին հակառակ: Ահա ֆանատիզմը պատրաստ է արդեն իր լրիվ հաստունության մեջ: Եվ ստեղծվում է մի բարոյականություն, որ հակառակ մտածելն անպատշաճ է, հետադիմություն է: Այս աստիճանին հասնում է նա, իհարկե, բազմաթիվ զարտուղի ճանապարհներով, չատ արցունք և արյուն թափել տալուց հետո, չատ անզուսպ բռնություններից հետո: Բայց, երբ անգիտակից կերպով բոլորի վրա թագավոր է այլևս աչխարհի և մարդկանց բոլոր գործերը թերահավատ լրջությամբ գնահատելու իմաստությունը, երբ, իրերի բերմունքով, ընդհանուրի սեփականությունն է դառնում մեծ իմաստունների կենսահայեցողությունը, թե այս կամ այն գաղափարի պաշտպանությունը չարժե այն եռանդը, որ նրա ծագման պատճառն է եղել, որ նրա զարգացման դոհերն է կուտակել, այն ժամանակ միահեծան թագավորում է խավարը իր բոլոր հետևողական հետևանքներով, խավարի կյանքը, խավարի ճշմարտությունը, խավարի տրամաբանությունը, խավարի բարոյականությունը և խավարի գեղարվեստը: Արդյոք ուժ, ժամանակ և եռանդ կունենա՞մ խավարի այդ բոլոր բնագավառները մտնելու և անշահախնդիր պատմաբանի նման նկարագրելու՝ ինչ որ տեսնում եմ, ինչ որ դեռևս կարելի է տեսնել այդ համատարած խավարում:

20.IV.31

Մեր դարը գիտության դար է կոչվում: Մի թշվառ և բազմաչարչար գաղափար: Արտագրելը նույնպես գիտություն է, եթե անճանաչելի է դառնում դրանով բնատիպը: Որևէ կույտ կազմելը նույնպես գիտություն է, եթե դրան բարձրաճռինչ մի անուն կարողանաս գտնել: Բայց ամեն բանից ավելի գիտության հատկանիշը ընդհան-

բացման և պատկերավորության մեջ է: Կամ այլ խոսքով ասած՝ որևէ բան, եթե տրվում է իբրև տեսություն, մտնում է թեորիայի տակ, այն ժամանակ դա դառնում է դիտություն: Թեորիա ասում ենք և կանգ առնում. ի՞նչ բան է այդ բանը: Շատ հատարակ մի բան. պետք է յուրաքանչյուր հասարակ դեպք այնքան ընդհանրացնել, որ վերածվի մի ամբողջական սիստեմի և արտահայտն լրիվ չափով բոլոր մասնակի երևույթները: Օրինակ, չպետք է ասել բամբակ, այլ տեխնիկական բույսեր: Մեր երկրում սով չկա, մեր երկրում կա միայն ապրանքային սով: Մի տարօրինակ, անորոշ և երազական դրություն, որի մեջ գրկանքի կատարյալ բացակայությունն ապացուցելու կարիք չի թողնում ոչ ոքի համար: Մարդ ապանելը ոճրագործություն է հատարակ տեսակի, իսկ արտահանությո՞ւն: Սա անշուշտ սիստեմ է, դարավոր կուլտուրական կյանքի վերջնագույն նվաճումը, արտահանել փոխանակության համար կամ վաճառքի համար մեր երկրից ամեն բան, երկրի խորքերից՝ իր հարստությունները, ավազից՝ ոսկի, երկրագնդից էլ, կամ կյանքից էլ՝ մարդը, կյանքը: Սա արդեն ոճիր չէ: Սա թեորիա է, կուլտական ուղեղները մարդակեր դարձնելու թեորիա:

Այս տեսակի դիտությանը հարազատորեն պատշաճում է մակերևույթային պրագմատիզմը: Բավական է, որ պատմության անհասկանալի խաղերից մեկն իրականանա թեկուզ մի վայրկյանի համար, այլևս անհերքելի փաստերով հիմնավորվում է մի պատմահայեցողություն, որի առաջին խնդիրը դառնում է ամբողջ աշխարհին հրավիրել աշակերտելու: «Ես կանեմ, ուրիշները կապացուցեն դրա անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը»,— ասում էր խորամիտ հեգնանքով մի թագակիր փիլիսոփա: Մարդկային և աշխարհային դրծերի վրա ավելի լուրջ են նայում ակարամիտները միայն, հավիտենական տհաս երիտասարդությունը միայն: Պետք է ներել ոսկեղեն տարիքի այդ խենթությունը՝ որպես չափազանց մարդկային մի թուլություն: Ժամանակը և իրերը նրան կատն համեստություն ավելի, քան թե պետք էր: Այս ավելին կործանարար է, ոսկայն, հատենության անընդունակ հոգիների համար: Ըստ որում, իշխանության երազներին հաջորդող համեստությունը այն աստիճան զորավոր մի հարված է լինում, որ ապրողները դատապարտվում են հավիտենական տարտություն: Ահա թե ուր է տանում մեր օրերի դիտությունը:

Սակայն, այստեղ չէ միայն, որ հանդիպում է մեր օրերի դիտության բնորոշ գիծը: Այդ անունը տալը միայն բավական էր, որ այս մտքերն ուղղվեին անմիջապես դեպի մի մարդ, ուր աշխատանքի բո-

վանդակությունն ինքնին պարտադրում էր գիտություն փնտրել և գիտականություն: Աղավաղումն այնտեղ այնքան վիթխարի չէ, որովհետև ամենավատթար պայմաններում անգամ, չի մեռնում ավելի լավ, ավելի գիտականորեն անելու, ինչ որ այժմ արվում է շատ վատ և կեղծ հասկացողությամբ: Հենց նրա արտաքին հատկանիշների այս քննադատության մեջ պարզ երևում է, որ միայն ժամանակի և փորձառության պակասն է զգացնել տալիս այդպիսի գիտության թերությունները: Բայց մինչև կարելի է մի ժամանակի հասնել, երբ որևէ գիտություն չունենա այլևս նման տեսակի թերություններ: Ինքնին հասկանալի է, որ նրա էության բաղկացուցիչ մասերն են կազմում մշտապես կատարելագործվելու, միշտ փոխվելու և փոխելու, կայուն և անշարժ վիճակը հաղթահարելու, առաջադիմության անունով նույնիսկ հետադիմելու հատկություններն ու ունակությունները: Մարդկությունը կոչված է ծառայելու և սպասավորելու այդպիսի գիտության, միակը, որ կա և լինելու է: Ահա այժմ միայն մենք կհասկանանք մի այլ իրականություն, որ ոչ մի կապ չունի առաջինի հետ, և որ, սակայն, համատարած թագավորում է իբրև միակ գիտությունը: Դժվար է նրա բնորոշումը տալ առանց այլաբանությունների մեջ ընկնելու: Նրա բռնակալությունը չէ, որ ատելի է, ոչ էլ նրա տրամաբանության ուժը, որ խորտակել: Ուժերի անպատշաճ վատնում համարելով՝ ասել, թե ինչպիսի աղավաղումներ է բերում նա կյանքի մեջ գիտության անունով, պետք է բավականանալ միայն՝ նրա ամենաէական մի բնույթը մատնանշելով: Այստեղ պիտի խոսել նրա հենարանի մասին միայն և ուրիշ ոչ մի բանի մասին: Բայց ինչ հենարանի մասին խոսք կարող է լինել, երբ ուզում ենք սահմանավորել մի գիտություն: Նրա հենարանը, անշուշտ, տրամաբանությունն է, ինդուկտիվ, դուցե նաև դեդուկտիվ մեթոդով կառուցված մի սիստեմ, ուր պատմական փորձի բազմաթիվ փաստեր ամեն քայլափոխին ճշգրտում և հաստատում են նրա բոլոր առաջադրանքները, և այս վերջինները ինքնահոս առատությամբ բխում են ինքնին, առանց ծանր մտաշխատանքի, առաջիններից: Ամեն մարդ իրավունք ունի հակառակը մտածել և հակառակը բերել, բայց ո՞վ է, որ չի վախենա ջարդուփշուր անելու իր գլուխը այդ ամրակուռ դրանիտի վրա: Նա հենարանի կարիք չունի, ինքն է իր հենարանը: Բավական է ծանոթանալ նրա սիստեմին, որպեսզի անմիջապես անձնատուր լինեն ամենահամառ հետադիմները: Այստեղ մտածում ես. այդպիսի մի գիտություն, անշուշտ, ստեղծում է իր համար կոմնակի հենարանները: Հասարակական կարծիքը, բոլոր առաջադեմ

մտածողները, առաջադիմության ընդունակ բոլոր գլուխները դառնում են նրա աչակերտները, պաշտպանները և հենարանները: Բայց այդ աստիճանին հասած գիտությունը արդեն հնացած է լինում. ծնվել է արդեն նորը, որի մասին ոչ ոք գաղափար չունի, թեև այս հնության մեջ գեռևս զորավոր լուսությամբ բորբոքվում է նրա ճշմարիտ երկրպագուների սիրտը. նրանք գտնում են, որ սա այն չէր, ինչ որ է, և այն չէ, ինչ որ էր: Շուրջը թափառող այս թշվառ գոյությունները ո՛չ նրա ներկայի վրա կարող են ազդել, ո՛չ էլ նրա պատմական արժեքը որոշել: Նա այն բաց դուռն էր, որի միջով անցնողը սովորում է միայն հաղթահարել քարացումները և վերջնականները: Պետք է, սակայն, վերադառնալ՝ քնորոշելու մեր օրերի այդ տարօրինակությունը: Զարմանալի է, ի՞նչ սահման տալ մի գիտության, որի հենարանը զինված ուժն է: Այդ անկարելի է: Խոսքի չնորհքը չպետք է ի չար դործածել: Նա մնում է մշտապես անսահմանելի, որովհետև ավելի կոպիտ ծայրը չի կարող լինել, քան պնդելը, թե այս գիտության պատվանդանը այն պետությունն էր: Եթե պատմության այդպիսի զվարճասիրությունը մի օր չէ, մի այլ օր հնարավոր դառնա և իրական, ապա, ուրեմն, այդ հակադրությունների միավորումը երկու եղերքի ստույգ մահվան փոխադարձ պայմանը կդառնա:

Առաջին միտքը, որ կունենա այս տողեր կարդացողը, անշուշտ այն կլինի, թե չատ անճաշակ են գիտության և փիլիսոփայության շուրջ հյուսված այս ֆանտազիաները: Շատ ճիշտ է, խորհուրդ կտամ չչարունակել, որովհետև ավելի արտառոց չափերի է հասնելու այդ ֆանտազիան հետագայում: Հենց այս րոպեիս այդտեղն ենք հասել, ուր պետք է երևակայել մի պետություն, որի գլուխը կանգնած լինեն ինժեներները: Շատ բնական է, որ յուրաքանչյուր մասնագիտության սպասավորը բացարձակ և անհանդուրժող մտքեր ունենա իր գիտության մասին՝ համարելով այն միակ օգտակարը, միակ գիտությունը և միակ սովորելու արժանի գիտությունը: Մյուս հարակից գիտությունների հանդեպ կարելի է հանդուրժող վերաբերմունք ունենալ այն չափով միայն, որ բոլորն էլ ծառային առավել կամ նվազ չափով հանրապետատիպը դարձնելու այս մեկը՝ մյուս բոլորի համար և մյուս բոլորի միջոցով: Ապրելու և առաջադիմելու միակ պայմանը դառնում է՝ իր ընդարձակ մանրամասնություններին մեջ ուսումնասիրել ինժեներական գիտությունը: Եթե գրականության ուսանողը չգիտե, թե ինչպես են կամուրջ չինում, ինչպիսի նախագծեր կան դրանց համար, ինչպիսի նյութեր կարելի է օգտագործել, ով տվեց առաջին անգամ այդպիսի գիտական նախագիծ, ինչպես էին

դրանք անցյալում և ապագայի համար ինչ հեռանկարներ կան և այլն, և այլն — նա չի կարող գրականության ուսանող լինել: Բայց չէ՞ որ ինժեներական գիտությունը միայն կամուրջ չինելը չէ: Ամեն տեսակի կառուցումներ մտնում են նրա մեջ և դեռ ավելի, ոչ միայն նավեր, երկնահուպ տներ, երկաթուղիներ, այլ նույնիսկ միջանցքներ, խոհանոցներ և հավաքներ: Ջուր կլինի փորձել բոլորը թվել: Եվ, սակայն, մեր գրականության ուսանողը այդ բոլորը պետք է սովորի: Տիրապետող բարոյականությունն աններելի է համարում որևէ սխալ կամ թյուրըմբռնություն այս ասպարեզում: Իր մասնագիտության մեջ նա իրավունք ունի ոչ մի բան էլ չիմանալու, չգիտնալու, մանավանդ, եթե նա կարողանա անգամ իր մեռած ծնողներից թուլտվություն բերել այդ մասին: Կարևորը իր մասնագիտությունը չէ, այլ այն մյուսը, տիրապետող, պետական գիտությունը, ինժեներագիտությունը: Ովքեր, որ դեռևս դժվարանում են այսքան հասարակ ճշմարտություններ հասկանալուց, նրանց պետք է միանգամ ընդմիշտ հասկացնել, որ մարդը իր գոյության բոլոր վայրկյանների մեջ գտնվում է ինժեներագիտության անխուսափելի պայմաններում: Առանց այդ գիտությունն ուսումնասիրելու անկարելի է ապրել: Ինա՞ծ ես, անշուշտ մի սենյակի մեջ ես, մահճակալի վրա, ահա երկու ինժեներական կառուցումներ: Անգամ, եթե դաշտումն ես քնած, պետք է դու լավ հասկանաս, ճանապարհի վրա է դուցե կամ թունելի մոտ. ահա ուրիշ ինժեներական կառուցումներ: Էլ չենք խոսում արթուն վիճակի մասին, երբ չես կարող մի քայլ անել առանց ինժեներագիտության հետ չփվելու և նրա ամենաօգտակար, ամենաանհրաժեշտ իմաստությունների կարիքն զգալու: Անգամ, եթե դու աշխարհից հեռանաս, լինի՝ օդանավի մեջ ուզենաս անցկացնել կյանքդ, թե դերիզմանում, ամեն տեղ դու հանդիպում ես ինժեներագիտության, որ քեզ ասում է՝ առանց ինձ դու ո՛չ ապրել կարող ես, ո՛չ էլ մեռնել: Խոսքը, իհարկե, գիտակից մարդկանց մասին է, որոնք չեն կարող ոգիտաբար անցնել այս ամենաառարած գիտության կողքով: Իսկ անգիտակիցների համար առաջին աշխատանքը, որ կատարվելու է, պետք է լինի ինժեներագիտության տարրերը տալ ամենից առաջ, հետո սկսել գրաճանաչությունն: Պարզ պետք է լինի միանգամ ընդմիշտ, որ կարդալ-գրելը այն չափով միայն արժեք ունի, որ բոլորին էլ հաղորդակից դարձնե ինժեներագիտության: Եվ, եթե երեխաներն անգամ հաղորդակից չլինեն ինժեներագիտության, կարելի՞ է միթե մտածել, թե մենք վերջապես մտել ենք քաղաքակրթության ճամփի մեջ: Մեծ ինժեներների անունները նրանց համար պետք է դառնա

ամենասիրելի անունը և նրանց կենսագրությունը հայանի, գպրոց մանելուց առաջ նույնիսկ: Այսպես, ահա բոլոր տարիքները և սեռերը, բոլոր մասնագիտությունները և գիտությունները պետք է ինժեներագիտության հզոր չնչով վերակենդանանան, վերապատրաստվեն և վերակառուցվեն, որպեսզի հնարավոր լինի նոր կյանքի հիմքը դնել և նոր կյանք կառուցել: Եվ, ահակայն, նոր կյանք կառուցող այս գիտությունը իր ծնողների կամքով հնանում է ծնված րոպեին իսկ: Պետք է նորը պատրաստել և նորի նորը, և այսպես չարունակ տասնյակ տարիներ ամբողջ: Չէ՞ որ աշխարհում ոչ մի բան չկա քարացած, անշուշտ, ուրեմն, նորի այս պահանջը առաջադիմության և նեղուժ ապրումների հետևանք է: Ու այսպես, միլիոնավոր սերունդներ, տասնյակ տարիներով կռմտրնն նորի հնության մեջ հավիտենապես քարացած, քարացնող և քար այդ գիտությունը քաղաքակրթության համար, առաջադիմության համար:

Օրինակի համար էր ասված վերևում դրականությունը: Որպեսզի այդ օրինակը չափազանցություն չհամարվի, կարելի է մի քանի ուրիշ օրինակներ էլ բերել:

Դեզարվեատը, սակայն, ավելի բախտավոր վիճակի մեջ չէ: Նա էլ պարտավոր է այդ աղախնական պարտականությունը տանձնել: Ո՞վ կարող է տարօրինակ համարել, որ կառուցումների մեջ ևս գիտնցկություն կա և դեզարվեատ: Սակայն, երբ միակ գիտնցկություն է ստեղծվում, և այն էլ հրամանով, որ իր մանրամասնություններին մեջ ճշտում է առաջուց նրա բոլոր չափանիշները, որ առաջուց հաստատական և վնասակար է հայտարարում այն ամենը, ինչ որ այդ ֆորմուլայի և քանաձևի տակ չի մտնում, ինչ որ արդեն ստհմանված թվով նյութեր չի մշակում և այն էլ հատկապես որոշ ուղղությամբ, որոշ, հաստատուն մտայնությամբ, անշեղ և անսայթաք ուղիով գծի վրա կանգնելով և առաջուց որոշված նպատակին առաջնորդելով, մի դեզարվեատ, որ դեզարվեատ չի լինի, մեր ժամանակի պահանջները չի բավարարի, հին կլինի և հետադիմական մի խոսքով, նման ստրկական ճշտապահությամբ չի ենթարկվի մեր տարատիպլիորեն ամենապետ և ամենակարող ինժեներների չափին ու ձևին:

Ոչ ոք չի դարմանա, անշուշտ, նման պահանջվի, որ մաթեմատիկան նույնպես ծառայե միայն այդ միակ որբական գիտության. չէ՞ որ սա նրա հիմքն է: Սակայն, նման հրամանի ավողները մանկամիտ բանաստեղծներ են, որոնք հրամայում են մաթեմատիկային ստրկական հաճոյակատարությամբ ծառայել միայն ու միայն գործադրելու մանկական գրականությունը, առաջուց որոշում են այն ճանապարհ-

ները, որով պետք է ընթանա մաթեմատիկան՝ հասնելու համար առաջադրված միակ սրբազան նպատակին, որոնք հայտարարում են հետադիմություն և չկամություն, սրանց անխուսափելի հետևանքներով, որևէ առարկություն կամ գանգատ, թե այդ հնարավոր չէ: Պատասխանը պատրաստ է՝ դուք մեզ հետ չեք, դուք չեք կարող նոր կյանք կառուցել: Մեր հակառակորդները ու մեզանից առաջ ապրողները միայն այդպես կարող են խոսել: Այն ժամանակ բացվում են բազմաթիվ միջնակարգ և բարձրագույն դպրոցներ, որոնց միակ պարտականությունը դառնում է պատրաստել մի նոր և առողջ սերունդ, որ կարողանա նոր կյանք ստեղծել՝ մաթեմատիկան ծառայեցնելով մանկական բանաստեղծություններ գրելու: Ինձ մի մեղադրեք անհեթեթության համար: Այդ մեկն անկարելի է սիրել, դրա համար էլ ես այս դարի որդին չեմ:

Բայց այդ ի՞նչ բան է, այդ ի՞նչ ուժ է, որ կարող է որոշ տեսակի մարդկանց մեջ կուտակվել այնքան առատությամբ և ուժածին հատկություններով, որպեսզի կարողանա իր նմանների հոդուս, մաքի, սրտի, ոգացմունքների և նյարդերի վրա ճնշում գործ դնել և բռնություն՝ իր առաջադրած նպատակներին հասնելու համար: Այդպիսի ուժեր պատմությունը ճանաչում է իր խորը և խավար անցյալի ծալքերում, ուր համենայն դեպս գիտության մասին ոչ մի խոսք չկար և չէր էլ կարող լինել, երբ մարդիկ դեռ այդ ուժի անունը հապիվ գտած՝ նրա իրական հետևանքների, ներքին էության և հոգևոր բովանդակության մասին ոչ մի դաղափար էլ չունեին: Պատմական և գիտական վերլուծությունը նրա տեղն ու արժեքը որոշել է այնքան ճշգրտությամբ պատմության մեջ, որ թվում է, թե մեր օրերում, գիտության և առաջադիմության անունով խոսող որևէ մարդ այլևս չի կարողանա հանդուրժել նրա ներկայությունը և ներգործականությունը՝ մեր օրերի անգամ ամենափոքր խնդիրների և հարցերի լուծման մեջ:

Սակայն, չպետք է մոռանալ, որ պատմությունը ճանաչում է միայն կրոնական դոգմաներ: Արդյոք մենք չենք հասել այն կետին, երբ ժամանակ է այլևս, որ պատմությունը ճանաչի նաև գիտության դոգմաներ:

Ահա մեր օրերի ամենից առատ նյութը, ապրանքը, որ առանց որևէ փոխհատուցման կարող ես ձեռք բերել: Այնքան համատարած և համապարփակ է դարձել այդ անփոխարինելի և անխուսափելի գյուտը, որ նրա ներկայությունը չես էլ զգում, ինչպես օդի ներկայությունը չես զգում: Դու չնչում ես դոգմա, ուտում ես դոգմա,

ապրում ես դոգմա և մեռնում ես դոգմա: Որովհետև մեր դարը դիտության դար է, այդ պատճառով էլ մեր օրերում դոգմայի անունը դոգմա չէ: Երկու էական հատկանիշներ կան դոգմայի համար. «Այսպես ասաց վարդապետը», և մյուսը՝ փոլճաքար-հատկանիշը. «Իսկ եթե այդպես չէ»: Ճշմարիտ գիտությունը առաջին հատկանիշը երբեք չի կարող ունենալ: Նա ոչ վարպետներ ունի, ոչ էլ վարդապետներ և ինչ որ էլ նրանց անունով ասվում է, այդ միայն լինում է այնքան պայմանականորեն և վերապահությամբ ասված, որ ոչ ոք չի կարող նրա հավանականության մասին դոգմատիկ մտքեր ունենալ: Հենց այդ ձևն ինքնին ամեն րոպե պատասխանում է երկրորդ հատկանիշին: Մի համայնքի կամ խմբակցության կողմից ընդունված և հայտարարված ճշմարտությունը բավական չէ դեռևս դոգմա ստեղծելու համար: Պետք է որ այդ ճշմարտությունն ունենա նաև անհանդուրժողություն, աննկարագրամտություն, բացարձակություն, պարտադրություն և բռնակալություն: Ինչքան ճշմարտությունը մի խմբակցության կողմից ընդունվում է ապատորեն, այնքան և նրա տարածումը կատարվում է բռնակալությամբ, և հենց այս վերջին հանգամանքն է որ անվրիպելի ցուցանիշ է ծառայում՝ գտնելու որևէ դոգմա մարդկային անթիվ ճշմարտությունների արսենալում: Հենց նույն պատճառով էլ մեծ հանդուգնություն կա ժխտական և հաստատական դոգմատիզմի մեջ: Ի՞նչը չէ կարևորը, այլ ինչպեսը: Հոգևկան այն առանձնահատուկ տրամադրությունը, որի մեջ գտնվողը ստանում է իր ներքին քննադատական բոլոր ուժերը և տեղ թողնում միայն մի ճշմարտության, որ միահեծան թագավորում է և հրամայում, լուսաբանում է և մեկնաբանում, ու իր այս ինքնագործունեության մեջ այնքան ուժ և եռանդ է կուտակում, որ ելնում է ամբողջ աշխարհը նվաճելու, երկրի կերպարանքը փոխելու, նոր դարաշրջան սկսելու և նոր պատմություն,— անշուշտ այս վիճակը ինքնին անբնական չէ, ստեղծագործական մեծ հնարավորություններ է ընձեռում և գործնական կյանքի դորավոր գործանակներ կարող է դառնալ: Բայց, այստեղ դոգմային միացած է հավատքի շնորհքը, մինչդեռ մի ուրիշ բազապրությամբ նա կարող էր մանիա դառնալ և սիստավոր մի հիվանդություն: Թողնելով այս երկու ծայրահեղությունները՝ մենք մնում ենք դոգմայի սեռական արժեքի վրա, և այստեղ է, որ մենք պարզ ու պայծառ տեսնում ենք, որ դոգման ուղիղ հակապրություն է գիտության: Մինչդեռ գիտության մեջ որևէ տեսական նվաճում ծառայում է դյուսավորապես իբրև հիմնաքար՝ նորանոր նվաճումների և առաջադիմության: Դոգման ընդհակառակն մի

կանգառնել է, մի քարացում, որի միակ նպատակը ինքն իր վրա, իր մտքի և մտածողության, կամքի և զգացողության վրա, ինչպես նաև ուրիշների վրա բռնություն գործ դնելն է, բերելու, ենթարկելու և բռնագաւթելու համար ամեն ինչ, ամեն երևույթ, ամեն միտք և մտածողություն, ամեն մարդ և պատմություն, իր իսկ ներքին այդ բռնակալի կամքին և քմահաճույքին: Եվ, որովհետև ամեն մարդ ընդունակ չէ իր մտածողության մեջ բնակարան տալ դոգմային, ուստի և պարզ է, որ որոշ տեսակի մարդիկ միայն կարող են դառնալ դոգմաների սարուկներ: Զարժե այստեղ այնքան հեռու գնալ վերլուծելու համար այդ որոշ տեսակի մարդկանց հոգեկան կառուցվածքը: Սակայն, առաջին հայացքից իսկ պարզ երևում է, որ սահմանափակ մտածողության, նեղմիտ և նեղսիրտ հոգիների մեջ դոգմաները գտնում են իրենց հարազատ բնակարանը և աճում հասարակածային ճոխ բուսականության փարթամությամբ:

Եթե կամենայինք իշխող դոգմաների գործունեությունը նկարագրել, այդ միայն բավական կլիներ մեր ամբողջ դարաշրջանի պատմությունը գրելու չափ: Ուստի և մի երկու օրինակ գուցե ավելորդ չհամարվի այստեղ:

Մեր օրերում այնքան է ընդհանրացել դասակարգային պայքարի տեսությունը, որ իսկապես դարձել է համատարած դոգմայի բնորոշ օրինակը: Սոսկ գիտական ճշմարտության որոնումը նույնիսկ կարողացել է շատ շատերի զբաղեցնել այդ հարցի շուրջ: Դոգմա դառնալուց հետո նույնիսկ, դեռևս կան, որ բավարար չափով չեն հագեցել այդ խնդրի մեջ ճշմարտություն որոնելու փորձերից, և, որպես թե բավական չէր որևէ գիտական առաջադրություն, որ դոգմա է դառնում, իսկույն տեսնել, թե այլևս ոչ մի բան չկա այնտեղ որոնելու,— դեռևս չարունակում են նրա մասին եղած ընդհանուր վարկաբեկման և համապարփակ գերագնահատության ծայրահեղություններից բարձր կանգնել և որոշել նրա տեղը, ազդեցության չափը, գործունեության շառավիղը և ուժի տարողությունը պատմության կամ պատմական խնդիրների լուսաբանության մեջ: Երբ նա դեռ դոգմա չէր, իր օրում, երբ ծնվեց իբրև մի ենթադրություն կամ վարկած, անշուշտ նա մի նվաճում էր այդ ուղղությամբ աշխատողների մտքի համար: Բայց, որովհետև այդ նվաճումը դարձավ նույն մտքերի համար վերջնական մի հանգրվան, որից դեն գնալու տեղ այլևս չի մնում, այդ պատճառով էլ նա դարձավ հենց այդ դյուտ կատարող մտքերի համար մտքի արգելակ և հետադիմության, քարացման և ճահճացման մի գոլավոր գործիք: Այս անխուսափելի ճակատագրին

ենթարկվում են բոլոր դոգմաները, անգամ եթե նրանց բովանդակության հումքը կազմված լինի մի բանով, որ ոչ մի բան չէ, այլ միայն մշտապես մի լինող բան է: Դեռ միայն ընդհանուր ճևական սահմանների մեջ անկարելի է միատեղել առաջադիմության մեծ դաշափարը որևէ դոգմայի հետ, նույնիսկ եթե մի դոգմա էլ առաջադիմության գաղափարը համարվի: Սակայն, ով որ այս մեկն ընդունում է, այն մյուսի համար այլևս տեղ չի մնա իր ընդունարանում: Բայց եթե մենք վերցնենք այդ դոգմայի երկու տարրերն առանձնապես, մենք ականատես կլինենք նորանոր դոգմաների, որոնք իրենց ներքին հակասություններով երբեք չպիտի կարողանան մի միավորություն և մեկություն կազմել, առանց պայթեցնելու առողջ բանականության ամենալայնարձակ և դիմացկուն պատերը:

Դասակարգեր հասարակության մեջ: Մի՞թե հնարավոր պիտի լինի հերքել այդ հասարակ և պարզ դիտողությունը: Ֆարը, հողը, բույսը, կեն...

[Ձեռագրի 35-38 էջերը պակասում են]

...արդեն ինքնին մեր օրերի ամբողջական պատմության մեծ նրպիծաբանությունը կլիներ, որ հաղիվ թե իր գրիչը կարողանա պահել այդ համատարած սուգի և սարսափի մեջ:

Ուրիշ խոսքերով եթե ամփոփենք, մեր միտքը, դասակարգի մասին, պիտի ասենք, որ նա կամ սոցիալական իրականության հարիր մի ստորոգություն չէ հատկապես նրանց համար, որոնք անդադարակարգ մարդկություն են ուզում, պարզապես այն պատճառով, որ մարդու ցանկությունը միայն բավական չէ բնությունը փոխելու և դոյությունը անդոյության դարձնելու: Կամ թե նա սոցիալական իրականության ընդհանուր հարաբերականության մի տարրն է միայն, որ ոչ պատմության կրողը կարող է դառնալ, ոչ էլ փոխողը կամ փոխվողը և մշտապես կլինի, ուր որ մարդկային խմբավորություն լինի:

Դասակարգային պայքարի տեսության մի եղրը դեռևս մնում է: Անկարելի է հերքել պայքարի գոյությունը՝ առանց բռնադատելու մարդկային իմացականությունը: Կյանքի գաղափարը ինքնին արդեն մեր դարում դարձել է մի համադրական գաղափար, որի տարրերից մեկը կազմում է պայքարը: Այնպես ընդարձակ ծավալով է նա բռնել ամեն տեղ, որ նույնիսկ մահից հետո դժվար է երևակայել, թե պայքարը կվերջանա, լինի մարդու անվան և գործերի շուրջ, լինի անշնչացած դիակի շուրջ: Պայքարի գաղափարը շատ քիչ բանի կարիք ունի՝ լրիվ չափով բռնելու և ծածկելու համար գործունեության

գաղափարը: Կյանքի լավագույն սահմաններից մեկը, մտքի կողքին, գործն է, և ուր գործ կա, այնտեղ նաև պայքար:

Սակայն այս պարզ ու հասարակ ճշմարտությունն աղավաղվել է մեր օրերում և աղավաղվել է հատկապես մեր երկրում: Գործունեության և կյանքի այդ սկզբունքը դարձել է անգործության և մահվան սկզբունք: Իսկապես, գոյության զանազան աստիճանների վրա պայքարի հետևանքը լինում է երկու մրցող կողմերից մեկի կամ մյուսի անգործությունը և մահը: Այս այն է, ինչ որ մարդուն մարդ է դարձնում և տարբերության նշանը դնում: Կամ պարագիտը պետք է մեռնի, կամ նրա կրողը, մոլախոտը կամ ընտրված ցանքը, անտառը կամ ժայռը: Բայց մենք չենք կարող ասել նույն բանը, երբ ամեն տեսակի տարբերություններով օժտված երկու մարդու տեսնում ենք, իրար դեմ կանգնած, որևէ ասպարեզում: Այդպիսի մարդկություն եղել է գուցե: Բայց ապրել է մարդու այն տեսակը, որ այդ սկզբունքին չի հետևում: Վերջիվերջո մարդասպանությունը մի գաղափար է, որ ստեղծել ու արժեքավորել, նորմավորել է մարդու այն տեսակը, որ իր ամենախոր բնույթով դրան հակառակ է: Բայց այդ տեսակին պատկանողներից ոմանք իրենց ամբողջ տեսակի համար հավիտենական պատիժ են դարձել՝ այն աստիճանի հասցնելով իրենց ներողամտությունը մարդասպանների հանդեպ, որ այս վերջինների կողմնակիցները դեռևս մնում են և մշտապես էլ կմնան կիրառելու համար իրենց տեսակի բնորոշող գիծը՝ մարդասպանությունը: Բնությունը երկու տեսակի պայքար է ճանաչում ճշմարիտ՝ իրական և բնական: Բայց այս ճշմարտությունը, այս իրականությունը այս բնականությունը չէ, որ հնարավոր են դարձրել մարդու գոյությունը աշխարհի վրա շատ ավելի ճշմարիտ և շատ ավելի բնական, և այս մյուսը, որ մարդու հնարավորության հետ հիմնավորել է ավելի բարձր ճշմարտությունը, ավելի կատարյալ բնության հնարավորությունը, պայքարի հետևողական և տրամաբանական վախճանն է, որ լրիվ կերպով ցույց է տալիս այդ գաղափարի հրեշավորությունը՝ մարդկության մեջ և անհեթեթությունը բոլոր այն սխեմաների մեջ, որոնց հիմքն է կազմում նա: Պայքարը որպես առաջադիմության մեթոդ

[Ձեռագրի 42 էջը վնասված է]

...մարտավորման մեջ մի իրականության, որ ամենից առաջ բնական է: Եվ, սակայն, այդ ֆանտազիան կատարվում է բնագիտության և մատերիալիզմի անունով: Միամիտ և մեկամիտ այդ մտածողները, սակայն, խորամանկ են դառնում ժամանակի ընթացքին և սկսում են աստիճաններ չինել, թղթե աստիճաններ, որոնց վրա

հանդչելու է երկաթակուռ և քարակույտ մի հսկա չենք: Հենց այդ աստիճանների ներկայությունը միայն բավական է հասկանալու համար, թե ինչքան չինծու, արվեստակյալ, անբնական և անհիմն է իրենց այդ կառուցումը, թե բնությունը, ապա և պատմությունը այդպիսի կաղապարներ և աստիճաններ, միաձևություններ և միօրինակություններ չի ճանաչում, թե անալիզի արժեքը սինթեզի մեջ է, և թե մարդը չպիտի պոկել բնությունից՝ նրան հասկանալու համար:

Ավելի զվարճալի է այս գիտությունը, երբ այդ մեթոդը գտանում է այսօրվա և վաղվա ուղեցույցը: Մի պարզ խոսք կա, որի նուրբը հիմնանքը մեր այս օրերի ամբողջ պատմությունն է տալիս բոլոր նրանց համար, որոնք ամեն քայլափոխին դատակարգային պայքարի անժխտելի փաստեր են ցույց տալիս ինձ, քեզ, բոլորին և բոլորին: Այդ ասում է. Cet animal est tres mauvais, quand on l'attaque il se défend. *Ափսոս որ լրիվ չափով չի կարելի այն տալ թարգմանության մեջ, որ այսպես կլինի. Այս անասունը չատ դարչելի է. երբ հարձակվում ես, պաշտպանվում է: Տեր Աստված, մի՞թե հնարավոր է այսպիսի այլանդակություն, ոչնչացնել, ոչնչացնել: Բոլոր նրանք, որոնք իրենց մտքում մեկից ավելի միտք տեղավորելու հարմարություններ չունեն, նրանք չեն կարող հասկանալ, թե ուրիշ ինչ անուն կարելի է տալ այն հսկայական ուժին, որ թագավորություններ է կործանում և հեղափոխություններ առաջացնում, կուլտուրաներ ծնում և սպանում, մի խոսքով պատմություն է ստեղծում, ճիշտ ինչպես նրանք չեն կարող հասկանալ, որ մարդկային պայքարն անասնական ոչնչացնող պայքար չէ: Մարդկային պայքարն, ընդհակառակը, համերաշխության և համակեցության ավելի սերտություն և ուժդնություն է ստեղծում, որևէ կերպ իրարից տարբերվողներին՝ որևէ կերպ միավորելու համար միայն կարող է իր գոյության իրավունքը պաշտպանել: Բայց, քանի որ մեր միտքը չի կարող հաշտվել այն պատկերացման հետ, թե մարդկությունը կարող է ոչնչանալ հենց իր գործունեության չնորհիվ, ապա և ամեն մարդ, որ նախապաշարումներ չունի, իսկույն կհասկանա, որ մարդկությունը իր գոյությունը պահպանում է գլխավորապես իր գործունեության չնորհիվ, այն ներքին զգացմունքի, ձգողականության, կապի և փոխադարձ ու անգիտակից համակրության չնորհիվ, որ և՛ սեր է ստեղծում և՛ ատելություն, և՛ միասնություն և՛ բաժանում, և՛ համագործակցություն և՛ պայքար, և՛ մարդու կյանք և՛ մարդու մահ: Այս ասված չէ նրանց համար, որոնք ո՛չ մարդ են ճանաչում, ո՛չ էլ մարդկություն,*

և դրանց տեղը դրել են կենդանաբանական ուրիշ տեսակներ, որ դեռևս չի ուսումնասիրված և դասակարգված:

Հապճեպ ընդհանրացումների այս գիտությունը իր արմատները խրել է ուրիշ տեղ: Ուրիշ տեղից է սնունդ առնում մեր այս իրականությունը, որ կարողացել է այնքան ձևակերպված և կաղապարված սիստեմով իշխել բոլոր մտքերի և կամքերի վրա՝ ստեղծելու համար մեր օրերի անհեթեթությունը, թարսությունը և չրջվածությունը: Արդարև, դրանց բոլորի ծնող-մայրը մեր օրերի համաստարած մատերիալիզմն է, որ անվիճելի է դարձրել այս իրականությունը և նրա հասկացողության թափանցումը:

[Երևան] 11 ապրիլի 1931 [Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ՊԱՆԳԵՐՄԱՆԻԶՄԸ ԵՎ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Նամակ պ. Հաների Բերգսոնին

Սիրելի բարեկամ!

Գերմանիզմի վրա գրած Ձեր սքանչելի տողերը դոնվում են ամենքի ձեռքում: Ես չեմ կարծում, որ մի ավելի թափանցող դատողություն լինի Գերմանիայի վրա, իր նկարագրի, իր մեթոդների, իր ոճիրների մի ավելի ճշդրիտ բացատրություն: Դուք ապացուցեցիք ինչ որ նա դարձել է՝ մի դիտնական բարբարոսություն, և թե ինչո՞ւ նա այդպես է դարձել: Սակայն, բավական է նկարագրել, ինչպես և ձաղկել այդ ընթացքը: Ես վախենում եմ, որ դիտակցության ուղղված մի պերճախոս և հուզիչ կոչ չպիտի հաջողի համոզել նրանց, որոնք խիստ զգայուն՝ ուժի բանականության, հավակնում են տնդի տալ միայն բանականության ուժին: Արդ, այդ ուժը, Գերմանիան դեռ հպարտանում է իր ձեռքի տակն ունենալու: Նա գինվորագրեց իր դիտնականներին, ինչպես իր գինվորներին: Նա մտադրվում է, թե՛ իր կարողությունը ցուցադրել, և թե՛ դրան արդարացնել, ներկայացնել լավագույն կազմակերպությունը, ինչպես նաև բարձրագույն մշակույթը: Գիտությունը նրան միայն միջոցներ չի տալիս, այլ մի վարդապետություն, և ճշմարտությունը, թե աշխարհի կառավարությունը պիտի անցնի իր ձեռքը:

Պանգերմանիզմի այս իրագեն պատմությունը հատկապես հայթայթել է իր տարրերը: Եվ իսկապես, մենք չպետք է ժխտենք, որ Գերմանիան XIX դարում եղել է պատմական ուսումնասիրությունների մեծ օջախներից մեկը: Սկսած այն օրից, երբ Պերցը 1819 թվին հիմնում էր Monumenta Germanie-*ների ընկերությունը՝ գրոդների, գիտունների, ճարտարագետների և հնախույզների ամբողջ մի* pléiade *հարձակվեց անցյալի վրա: Նա ցուցակագրեց,* déchiffré, *վերլուծեց՝ ուսումնասիրելով բոլոր ժողովուրդները, և հարուցանելով բոլոր առեղծվածները: Ի՞նչ պիտի լիներ մեր երախտագիտությունը, եթե Գերմանիան միայն հիշատակարանները պեղեր, բնագիրները վերականգներ և հրատարակություններ բազմապատկեր: Բայց ինչպե՞ս անգիտանալ նաև, որ այս աշխատանքից գիտությունը միայն չօգտվեց: Դեռ 1858-ին Գիզերբրեխտը գրում էր. Գերմանական գիտությունը հարստացրեց և լուսավորեց եվրոպական բոլոր ժողո-*

վուրդների պատմությունը. խորությունը, անկողմնակալությունը, ճշմարտի սերը, որ նա ներկայացնում է, բոլոր ազգերին երախտագիտության ստիպեցին ...: Փոխարենը, ուրիշների որոնումներին ի՞նչ պարտի մեր սեփական պատմությունը: Մենք կարիք չենք զգում պատասխանելու: Եվ Գիզեբրեխտը ավելացնում էր. «Ազգային մեծության սքանչացումը եղավ այն սկզբունքը, որ մեր պատմական դիտության թռուլլ տվեց ստեղծելու մի նոր կյանք»: Այսպես, այս լայնածավալ որոնումի մեջ, Գերմանիան մեկ կողմ էր դնում և անզուգական համարում իր տիտղոսները: Պատմությունից խնդրելով իր անցյալի հայտնագործունեությունը՝ նա այնտեղ էր փնտրում նաև իր ապագայի գաղտնիքը, չսահմանափակվելով սովորել՝ ճանաչելու համար, նա պատրաստվում էր գործի: Թե ինչ չափով էր մեծ պատմաբանները՝ Գերվինուս, Ռանկե, Գիզեբրեխտ, Վայից եղան այն ժամանակ միության քաղաքականության բանվորներն ու «մարգարեները», իրենք իսկ մեզ ասում են այդ: Մենք այժմ պիտենք, թե ծավալումի քաղաքականությունը ինչքան պարտական է իրենց հայրդներին: Կայսրականությունը ավելի լավ տեսաբաններ չունեցավ, քան Թրայչքեն և Լամպրեխտը: Նրանց միջոցով, իրենց աշակերտների միջոցով վերջապես կազմակերպվեց պատմության մի ամբողջ փիլիսոփայություն, որ իբրև մի փաստ, մի իրավունք և մի օրենք է հայտարարում փոքր ժողովուրդների ոչնչացումը, Գերմանիայի համաշխարհային գերիշխանությունը, և գերմանիզմի հաղթանակը:

Ի՞նչպես կազմվեց այս փիլիսոփայությունը: Ի՞նչ արժե նա: Ո՞ւր է առաջնորդում նա: Գուցե այսպես ավելի լավ կարողանանք տեսնել, թե ի՞նչ դարձավ «Մեծն Գերմանիայի» պատմական միտքը, և որո՞նք են իր իրավունքները՝ մարդկային ոգու դատախարակիչը կանգնելու:

I

Սա հատուկ է տեսություններին, որոնք թափանցում են մի ժողովրդի հոգին և թարգմանում նրա հավակնությունները՝ պատրաստվելու հետզհետե իր պատմության խորքերումը: Այս մտավորությունը (idéologie) մի օրվա գործ չէ, նա մի տարուց ավելի պետք ունեցավ կազմվելու համար, և մի մարդուց ավելի, գործավորների մի ամբոխ պատրաստեցին նրա մասերը, ինչպես և վերջացրին ամբողջությունը: Նա մեծացավ քաղաքական և ընկերային այն վիճակի հետ և միջոցով, որ նրա ծնունդը տեսավ: Այնպես, ինչպես նա

այսօր ներկայանում է, նա հետևանքն է այն գաղափարների, որոնք, սկած հորիզոնի զանազան կետերից, վերջվերջո միացան: Մի լուրջ վերլուծություն մեզ թույլ պիտի տա դրա տարրերը գտնելու:

Առաջինը ցեղ (race) գաղափարն է:

Կարելի է ասել՝ իր ծագումից ի վեր, Գերմանիան ունեցել է ազգագրական այս համայնականության խառն զգացումը: Բայց այդ զգացումը ճշտում և զարգանում է այն վայրկյանին միայն, երբ իր բաժանումներին և իր անկարողության գիտակից՝ նա փնտրում է միության մի սկզբունք, որ իրան հավաքի: Ցեղը չէ՞ այն իդեալ պատկերը, ուր նա ինքն իրան գտնում է այն ջարդված հայելու մեջ, որ ներկայացնում էր այն ժամանակ իր քաղաքական կառուցվածքը: Իր գրույները XVIII դարի վերջերում հայտարարեցին և փիլիսոփաները XIX-ի սկզբներում նորից մոռացան այդ վարդապետության, որ հատկապես պատմական գպրոցի գործն է: Վայից, Գիզեբրեխտ, Զիբել, Հետո Լամպրեխտ ահա ցեղի մեծ տեսաբանները: Եվ ի՞նչ գտան նրանք...: Մի նախնական ցեղ: — Մնված հին հնդեվրոպական ապբյուրից՝ մենք բռնում ենք նրա ճյուղերից ամենահինը: Թանկագին նվաճում, որի պատմությունը հարստացրեց լեզվաբանությունը: Երբ ճիշտ է, որ կան «բազմաթիվ բառեր, գերմանական ժողովուրդներին ընդհանուր՝ որոնք չեն գտնվում ուրիշ ժողովուրդների լեզվի մեջ», այդ բառերը չեն կարող ուրիշ տեղից եկած լինել, քան «մի նախնական գերմանական ժողովրդից»: Հեկքելը (Haeckel) պիտի նկատի հետո՝ «գերմանական լեզուն այն բանն է, որից դուրս են եկել արիական բոլոր լեզուները»:— Մի գուտ ցեղ:— Արևելքի մեծ կայսրությունները, հելլենիզմը, հռոմեական աշխարհը, արդի ժողովուրդները խառնուրդներ են: Նա է անխառն: Օտարականի ոչ մի կեղտ: Նա ցրվեց՝ առանց թույլ տալու, որ ներս խուժեն: Նա նվաճեց՝ առանց նվաճված լինելու: Հին Գերմանները, որոնք իրենց կարծում են աստվածներից իջած, չունեի՞ն միթե ազնվականության այս զգացումը: Իր հերթին էլ, անցյալի երևույթների մեջտեղից՝ նորագույն գիտությունը նշմարում է ցեղի տևական, որոշիչ գծերը, նրա ֆիզիկական և բարոյական ֆիզիոնոմիան: Նա մեծ է, խարտյաշ, խաղաղասեր և զգայնիկ (sentimental): «Գերմանացիները,— նկատում է Վայից,— ոչինչ պարտական չեն այն ժողովուրդներին, որ իրենք գտնում են առաջուց հաստատված այն հողի վրա, որ իրենք գրավում են...: Իր պատմության սկզբից իսկ գերմանական ժողովուրդը ցույց է տալիս այն հատկություններն ու ընդունակությունները, որոնց շնորհիվ նա հաճախ կանչվում է՝ միջամտելու աշխարհի գնացքի մեջ»: Դեռ

լսենք Լամպրեխտին. «Իր ծագումից ի՛ւսկ ցեղի գիտակցությունը հաստատվում է համայնական մի մշակույթով, և իր որոշիչ գծերը այն բաներն են արդեն, որ նա միշտ պահելու է՝ զինվորական ուժը, դաշինքների հավատարմությունը, զգացումի խորությունը, մարմնի և ոգու ուժգնությունը, իմաստությունը, գործունեությունը, կամքի ուժեղությունը»: Կայսերական Գերմանիայի և Տակիտոսի Գերմանիայի միջև միայն աճումի տարբերությունը կա: Այս իդեալը, որ այնպես չուտ պետք է անհետանար ուրիշ ժողովուրդների միջից, Արմինիուսի անտառներումն էր ծնվել՝ այլևս չկորսվելու համար:

Ցեղը, ահա համայնական էակը, որի ծագումը գտավ և ճակատագիրը պիտի գծե պատմությունը: Ղեկավարը (demiurge), որ անգործարանավորից կամաց-կամաց պիտի դուրս բերի գործարանավորը: Դարերի հարկադրած հաջորդական և առաջատվական ձևափոխությունների մեջ՝ նրա չնորհիվ հարատևում է միության մի սկզբունք, որ առաջ է գնում, ինչ էլ որ լինեն երևութական պատահածքները, անիշխանությունը և անկարգությունը: Նախնական Գերմանիային նա տվել էր մի «ազգային գիտակցություն»: IX-ից մինչև XIII դարը նա գծագրում է նրա արտաքին կառուցվածքը, գծագրում նրա սահմանները, հաստատում նրա լեզուն և կանգնեցնում նրա կառավարությունը՝ դքսություններ և տոհմեր գալիս են ձուլվելու ազգի իդեալ միության մեջ: Մի հետաքրքիր դիտողություն է այն, որ անում է Ռանկեն՝ Գերմանիայի պատմությունը համադրելով Իտալիայի պատմության: «Մեր ազգի կյանքը,– ասում է նա,– հանգչում է մասնավորի և ընդհանուրի ներհակության վրա, բայց երկրորդն է եղել միշտ ամենաուժեղ տարրը»: Եվ այսպես, Իտալիայի պատմությունը իր տեղական մասերի պատմությունն է, Ֆլորանսի, Հռոմի, Վենետիկի պատմությունը. մինչդեռ գերմանական տերությունների պատմությունը ոչ մի գաղափար չի տալիս Գերմանիային հատուկ կյանքի մասին, որովհետև նրա մոտ մասնականությունը (particularisme) ծծվում է ամբողջության մեջ: XV դարից հետո, էվոլյուսիոնը շարունակվում է: Սրբազան կայսրության ավերակների վրա հիմնվում է մի գերմանական կայսրություն, ինչպես որ կաթոլիկությունից պոկվում է մի գերմանական քրիստոնեություն: Բայց այդ տեղն էլ, ցեղն է, որ ինքն իրեն հաստատում է իր հաստատությունների, իր հավատի, ինչպես և իր արվեստի մեջ:

Ավելի ազգային մի հումանիզմ չեղավ, քանի հումանիզմն էր բանաստեղծների և գրագետների, որոնք Արմինիուսին Գերմանիայի խորհրդանշանը դարձրին, և երբևք Լուտերը հաջողելու չէր, եթե իր

հավատքը ներկայացրած չլիներ, որպես դերմանիզմի մի հակահարված՝ լատինության դեմ:

XVIII դարում այս անհատականությունը կենտրոնանում է գրականության և փիլիսոփայության մեջ: Այսուհետև մի հանճար կա, ինչպես և մի գերմանական ժողովուրդ: Այս նոր Գերմանիային ի՞նչն է պակասում: Քաղաքական միությունը: Նրան այլևս չի բավարարում միտքը լինել, կամ երազը, բանաստեղծությունը կամ դիտությունը: Նա ձգտում է կազմակերպության: Հայտնի է արդեն, թե Հեղափոխության փոթորկի և ազգային պատերազմների մեջ (11) ինչպես մեծացան իր հույսերը, և թե ինչպես դրանց իրականացրից գերմանական տերություններից ամենից գերմանականը՝ Բրուսիան: Կայսրությունը, իր պետի, իր բանակի, իր հարստության հետ, անգամ իր հաստատության և վարչական կազմակերպությունների բարդությամբ ցեղի անհրաժեշտ լրացումն է, իր կյանքի ծավիկը, իր «մշակույթի» բողբոջումը: Այսուհետև ցեղը պատրաստ է կատարելու իր կոչումը:

Գերմանիայի պատմությունն, ուրեմն, ցեղի հերոսապատումն է: Մի ուրիշ գիծ կա նրան հատուկ: Իր կազմության չարունակության մեջ, կարելի է ասել, որ ցեղը ներթարկվում է մի կրկին չարժման:

Առաջինը՝ ներսից դեպի խորքը: Մինչդեռ բոլոր ժողովուրդների մոտ առաջադիմությունը կատարվում է ծծումով, օտար տարրերի ձուլումով, որոնք գալիս են հարստացնելու նրանց հատատատությունները, ինչպես և իմացականությունը՝ ընդհակառակն գերմանական ցեղը կամեցավ ամեն բան միայն իրեն պարտական լինել, և իր հորերից միայն ջուր քաշել (ne puiser que dans son fonds)*: Ո՛չ մի փոխառություն դրսից: Իրավունք, կառավարություն, փիլիսոփայություն, կրոն, ամեն բան նրա մեջ միատարր է: Իր պատմությունը մերժումի մի երկար չանք է: Գերմանիան ոչինչ չի վերցրել կելտերից: Հռոմի հետ չփման մեջ՝ նա եա է մղում նրա հանճարը, ինչպես նրա բանակները: Միջին դարում նա ազատագրվում է այս երկու համաչխարհայնություններից՝ կայսրության աստված պետական հղացումից և նկեղեցու՝ հոգևոր հղացումից* (conception)*: Նորագույն ժամանակների մեջ Ֆրանսիայի դեմն է պաշտպանվում նա: Մեր դրականությունը, մեր փիլիսոփայությունը, մեր հեղափոխությունը կարող են թափանցել այնտեղ, նա դրանց պիտի առաջնորդի իր սահմաններին վրա: Արտափակության* (exclusion) *այս կարողությունը, ահա գերմանիզմի առաջին չարժումը, այն, որ իրեն կղզիացնում է: Ահա*

և երկրորդը՝ տարածումի կարողությունը, որ նրան մղում է արշավելու:

*Դեպ արևմուտք կամ արևելք, դեպի հյուսիս կամ հարավ իր ոահմանները տարածում է մի կանոնավոր տատանում յուրաքանչյուր դարաշրջանին: Կեսարից առաջ Գերմանիան առափնում է Հռենոսը: Նրանից հետո, և ամբողջ հինգ հարյուր տարվա ընթացքին նա կայսրության վրա է արձակում իր խիստ լիքն ժողովուրդները: Կիմերներ, Տևտոններ, Սուեվներ, Ալամաններ, Ֆրանկներ, Բուրգոնդներ. Վիսիգոթներ, Վանդալներ, ահա հորձանքը, որ ողողում է Արևմուտքը և պիտի բեղմնավորե նոր Եվրոպան: IX-ից XIII դարում հորձանքը դառնում է դեպի արևելք, ետ է մղում Սլավներին, առաջանում է Էլբայից մինչև Օդեր, Օդերից մինչև Վիստուլը և անսահման տափաստանի ափերին, որ տարածվում է դեպի հյուսիս, նա թողնելու է չուտով իր գինվորական կամ կրոնական մնացորդները (atterissements), մինչդեռ վերադառնալով դեպի Գաղղիան՝ նա ֆափանյում է Առդանի ծալքերում, կամ Սկովդիայի սառերին նահանդներում: Մոտավորապես նույն ժամանակներում դծագրվում է մի ուրիշ հոսանք: Ահա նա անցնում է Ալպերը, կլանում է Իտալիան, և դնում է Հռոմի պատերը ծածելու: Հետո իր տեղատվության հետևանքով նա բարձրանում է դեպի հյուսիս, դնալի Բալթիական ափերը և Սկանդինավիան: Ռիգայից մինչև Ռուեն, Դրոնթայմից մինչև Լոնդոն՝ վաճառականը չարունակում է ասպետի դործը: Բայց Գերմանիան միշտ տեղափոխվում է: Կանգ առած այն ժամանակ նոր պետությունների առջև, որոնք նրան սղմում են – Լեհաստան, Շվեդ, Հոլլանդիա, Ֆրանսիա – նա չի հապաղում նորից չարժվելու: Տատանումը վերսկսում է. իշխանների նվաճում, և ոչ այլևս ժողովուրդների տեղափոխություն: Դեպի արևելք Բրուսիան ընդլայնվում է ի հաշիվ Շվեդի, հետո Լեհաստանի, կամ Ավստրիան առափնում է հունգարական դաշտը կամ Բալկանները: Դեպի արևմուտք, պերմանական մղումն է վերջապես, որ նա է քշում Ֆրանսիային: Այսօր նոր կայսրության համար այս հին հորիզոնները անգամ խիստ նեղ են թվում: Այն կողմ նա տեսնում է այն հեռավոր աշխարհները, որոնց հասնելու թույլ կտա իր տնտեսական առաջադիմությունը: «Ագգային» պետությունը կերպարանափոխվում է «տարածական» պետության: Եվ ահա իր փախստականների, դաղթողների, առևտրականների և ծովագնացների ժողովուրդը դիմում է դեպի երկու ծովերը՝ Ատլանտյանը, նոր աշխարհի այս Միջերկրականը, հնապատկանը՝ նոր աշխարհների ժամադրավայրը:

Երբ մի փաստ կրկնվում է այս համառությամբ, պետք է զգուշանալ, որ նա չհատատավի իբրև մի օրենք: Այս հաջորդական ծավալումները ցեղի բնական աճումն են, և հետևանք թե՛ բնակչության առատության և թե՛ սահմանների չարժական առաձգականության: Եվ ահա թե ինչն է սահմանավորումն նրան վերջապես: Երկրից կախյակա, անհատից բարձր, նա է և միայն նա, որ ստեղծում է ազգությունը: Հետևաբար «Գերմանացին Գերմանիայից դուրս մնում է Գերմանացի»: Նա իր հետ տանում է իր հայրենիքի իրավունքը՝ կապված իր անձի հետ «լեռների, ձորերի, գետերի և ծովերի ընդ մեջեն...»: Այս կապը, որ նրան միացնում է ցեղին, ոչ մի պայմանագրությամբ չի կարող քանդվել: Ինչ նոր օրենք էլ որ նա ընդունի, նա պահում է իր օրենքը: Իր ազգային դեմքը անջնջելի է: Հետևաբար, ուրեմն, ինչ երկրումն էլ նա տեղավորվի, «Գերմանական հայրենիքը» երբեք չղթայված չի լինի իր հողին և կապված իր սահմաններին: Նա մեկ երկրով չի չափվի, նա իր որդիների սիեղերականությունն է: Այսպես, ամեն տեղ, ուր անցյալի մեջ ցեղը հատատավել է, ամեն տեղ, ուր ներկայի մեջ նա սկսում է հատատավել, իր սիրասատությունը մնում է: Գերմանիաներ են Շվեյցարիա, Բուլղոյնը, Լորեն, Բելգիա, Լեհատատան, Հոլլանդիա, որոնք իրենն են եղել մի անդամ: Գերմանիաներ են այն աշխարհները, որոնք ընդունում են և պահպանում այսօր յուրայիններին: «Այնտեղ է Գերմանիան, ուր գերմանացիները երկնքի Աստծու փառքն են երգում, ուր հազարավոր չրմունքների վրա արձագանքում են գերմանական երգերը...»: Մենք սկսում ենք նշմարել այն կետը, ուր ցեղի և կայսերականության գերազանց անհատականության վարդապետությունները դալիս իրար են միանում: Ինչպե՞ս պիտի սիեղերական սկզբունքը վերագրե իրեն այս մի հատիկ ցեղը, որի ամբողջ անցյալ աշխատանքը ուղղված էր Հռոմի, եկեղեցու և Ֆրանսիայի ներկայացրած սիեղերականության դեմ: Այս փաստը չի բացատրվում միայն ազգային զգացումի հրեշավոր աճումով: Նրա ծագումը գտնվում է մի ուրիշ տեսության մեջ՝ գարգայման տեսությունը: (15):

Ոչ մի գաղափար այնպես ընտանի չէ նորագույն գիտության, և ոչ մեկն ավելի թանկագին չէ Գերմանիայի համար: Վերջին գարի դեռ սկզբիցը՝ փիլիսոփայությունը գործադրում է այն պատմության վրա: Շելլինգը չէ՞ր ասողը. «Պատմությունը Աստուծո մեկ հայտնագործությունն է, և այս հայտնագործությունը գլուխ է գալիս մի հաջորդական զարգացումով»: Հատկապես Հեգելն է, որ պիտի նկատգրե այս էվոլյուսիոնը: Եվ իսկապես, մենք գժվարանում ենք այ-

սօր հասկանալու, թե որոնք եղան այդ փիլիսոփայության հմայքը, գրավչությունը և ճառագայթավորումը: Նա մեզ համար այժմ ներկայացնում է միայն մի դատարկ հետաքրքրություն, նա գրեթե մի կրոն եղավ: Նա միայն Գերմանիային չմոլորեցրեց, ամեն երկրների մեջ նա ունեցավ աշակերտներ, ինչպես և առաքյալներ: Եվ Գերմանիայի մեջ իր առաջին, իր ամենաջերմ հավատացյալները եղան նրանք իսկ, որոնք պետք է ամենից առաջ պաշտպանված լինեին դրական մեթոդներով՝ ընկերաբանները և պատմաբանները: Մենք նրան տեսնում ենք Բաուերի և Դրոյզենի մոտ: Նրա ազդեցությունը գգալի է կարլ Մարքսի և Լամպրեխտի վրա: Մենք չենք դարմանում: Ինչ որ մութն էր այս փիլիսոփայության մեջ, դա իր սկզբունքն էր, գաղափարը, այս անսահմանավորելին, որ սահմանավորվում է, այս բացարձակը, որ ինքն իրեն սահեցնում է՝ անցնելով տրամաբանությունից բնության և բնությունից ոգուն: Ինչ որ պարզ էր, այդ էլ այն գործադրությունն էր, որ անում էր Հեգելը պատմության վրա, պատմություն, որ դառնում էր միություն, ուր իր գարգացումը լրանում էր իրերի ամբողջության մեջ հղացված որպես մի կարգ և ուղղված դեպի մի նպատակ: Առաջին անգամ լինելով մի գորեղ և խորաթափանց միտք տալիս էր իրականության մի բանավարական բացատրություն: Էվոլյուսիոնի այս գաղափարով հեգելեանիզմը վերանորոգում էր պատմությունը, գեղարվեստի, կրոնի, փիլիսոփայության կամ քաղաքակրթության պատմությունը: Գերմանիայի ամբողջ պատմական մտածողությունը դրանով թափանցվել է կարծեք: Արդ, ինչպե՞ս է հղանում հեգելեանիզմը այդ էվոլյուսիոնը:

Նրա օրենքներից առաջինը սահմանավորել է Gervinius-*ը. «Պատմությունը հետևում է մի անփոփոխելի ուղղության: Իր խոշոր գծերով նա դնում է մի տրամաբանական և առաջուց կարգավորված ընթացքով»: Մի հաստատուն գնացք, մի տեսակ ուղղաձիգ, որպես նախադասություններուի մի շարք՝ մեկը մյուսից բխող, մեկը մյուսն ապացուցանող. նա այդ է ամենից առաջ: Փաստերի ժխորը կարգավորվում է մի հատակագծով: Միշտ աշխատանքի, միշտ հառաջադիմության մեջ՝ պատմության ներկա գաղափարը այն խմորն է, որ մղում է նրան, ինչպես բանականությունը, որ դեկավարում է նրան: Մեծ քաղաքակրթությունները նրա կայարաններն* (etapes) *են: Ժողովուրդները, որոնք շարք առ շարք գալիս անցնում են աշխարհի բեմից, դիմագրում են նրա սաորոգելիները, ավելացնում են նրա վրա մի նոր կատարելություն, իրենց դերը վերջացրած՝ նրանք եւ են*

քաշվում: Մի բարձրագույն ձև փոխարինում է նրան, որ անհայտանում է, մինչև այն օր, երբ իր բոլոր սահմանավորումները սրված լինելով, գաղափարը լրանում է բացարձակի մեջ, այսինքն կատարյալ գիտակցությունը, որ տիեզերքն ստանում է իր ազատության: [Լինելով][1] տրամաբանական, այս զարգացումը անհրաժեշտ է: Գաղափարն ընթանում է դեպի իր նպատակը՝ մի անդիմադրելի թափչքով, և այս թափչքը քաշում տանում է աշխարհը: Վայ նրանց, որոնք դիմադրում են նրան: Նրանք պարտվում են, ջախջախվում, պատառպարտվում անհաջողության և մոռացության: Փառք նրանց, որոնք նրան են ծառայում: Նրանք մոտակից են նրա կյանքին և հպարտանում են նրա հաղթանակով: Նրանք պատմության մեծ անուններն են, թեև նվազ մեծ իրենց կամեցողությամբ, քան իրենց արածով, որովհետև իրենց համապատասխանությունը կույր է, ինչպես և ճակատագրական՝ իրենց կոչումը: Կեսարը հրազում էր միայն իր թշնամիներից իր վրեժը հանել և հասարակական իշխանությունը ձեռք ձգել...: Իր մանավոր և անհատապաշտ մտադրություններում բնազդավորվում էր աշխարհի ապագան: Մարդն իրեն կարծում է պատմության ուրը, նա նրա գործիքն է միայն: Նա աշխատում է միայն իրենից դուրս կամեցված նպատակների համար, և այն միջոցներով, որ իրեն ծանոթ չեն: Մեծ թափչությունը, որ մեզ գործածում է առանց մեզ իր գազանիքի մեջ դնելու, բավական խորամանկ է մեր աչքերը մթագնելու համար: Նրան օգնում են մեր կրքերը, մեր չահերը, մեր բնազդները, պատճենելով նրա հավիտենական հայացքների հաղթանակի չուրջը՝ մեր մի ժամվա հուզմունքը: Ձգտելով ազատության՝ պատմությունը ազատության գաղարկությունն է: Եվ վերջապես, եթե ճիշտ է, որ մենք պատմության մեջ գործ ունենք անհատականությունների հետ, որոնք ժողովուրդներն են, գաղափարը չի կարող իրագործվել անհատի մեջ, ոչ էլ գեղարվեստի, փիլիսոփայության, կրոնի մեջ, որոնք բացարձակի հատվածական և անկատար մտապատկերն են տալիս: Նա իր լիության հասնում է միայն պետության մեջ:

Պետությունը պատմության եղանյութն (substance) *է: Նրան չենթակայենք երբև մի պատմանագրություն, կամ անհատների մի համայական ստեղծագործություն: Ինչպես Հնության և Ոգին: Նա «անհրաժեշտ է և ստվածային»: Ինքնին և իրանով բանավորական* (rationnel) *նա տիրում է մյուսների վրա, որոնք իրան բաղկաց-*

[1] *Փակագիծը հեղինակինն է.– Ռ. Ս.*

նում են և իր հետ նույնանում, ինչպես ինքն էլ նույնանում է նրանց հետ: «Նրա օրենքներն իր անդամների իրավունքներն են, իր հողը, իր լեռները, իր լույսը և իր ջրերը՝ նրանց հայրենիքը: Իր պատմությունը նրանց պատմությունն է: Իր բոլոր ինչքերը նրանց սեփականությունն են, որպես թե նա էր նրանց այդ արտոնությունը տվել իր կողմից: Նրանց կամեցողությունը իր կամեցողությունն է: Եվ այս համաձայնականությունն է, որ մի ժողովրդի ոգին է կազմում»: Բայց, փոխադարձաբար, անհատը ճշմարտության, բարոյականության և ազատության ընդունակ է, ինչ չափով, որ նա մասնակից է պետության, որովհետև ճշմարիտ ազատությունը, այսինքն ամեն սահմանի բացակայությունը, պետությունը միայն ունի: Այսպես են վճռում այն ներհակությունները, որոնց առջև կանգ էր առել Կանտի մորալիզմը: Էլ ոչ մի պայքար անհատի և պետության մեջ: Պետությունը, ներկայացնելով անհատը, լինելով մասնավոր գործունեությունների սկզբունքն ու նպատակը, յուրաքանչյուրի հնազանդությունը մի պարտականություն է, և նա ունի մի բացարձակ իրավունք իր բոլոր անդամների վրա: Էլ ոչ մի ընդդիմություն քաղաքականության և բարոյականության մեջ: Ապրելն է պետության առաջին գործառնությունը: Նրա գոյությունը պիտի լինի, ուրեմն, «հրամայականը, որ ծառայում է իբրև կանոն իր գործերին»: Այդ պաշտպանելու և ընդարձակելու համար՝ նա ուժ ունի: Նա կարող է պատերազմ հայտարարել, «երբ իր շահը վնասվել է կամ վտանգվել, երբ նա դրան կորստի մեջ է տեսնում, նաև երբ ներքին երկար հանգստից հետո, նա մղվում է դուրս գալու ինքն իրանից և գործելու դրսումը»: Հաջողությունը արդարացնում է ամեն բան: Ժողովրդին դեմ, որ տիեզերականն է ներկայացնում, «ուրիշ ժողովուրդների կամքը ոչ մի իրավունք չունի»:

Մնծափառ մի համագրություն, որի չղթայավորումը պիտի մոլորեցներ տրամաբանական բացառումների (abstraction) ծարավ ոգիներին, և որի եզրակացությունները պիտի չոյներին իր մեծության պաշտամունքն ունեցող մի ցեղի հպարտությունը: Երբ պատմությունը մի առաջադիմություն է, եթե առաջադիմությունը կատարվում է միայն պետության միջոցով, [ուրեմն][2] մի ժողովուրդ պիտի ըլա, որ բոլորից հետո, լինի բացարձակի իրականությունը: – «Արևելքը գիտեր (և դեռ գիտի) թե միայն մեկն է ազատ. հունական և հռոմեական աշխարհը՝ թե մի քանիսն են ազատ. գերմանական աշխարհը

[2] *Փակագիծը հեղինակինն է.– Ռ. Ս.*

գիտի, որ բոլորն են ագահ»: Ինչ որ Գերմանիան իր պատմության ծագումին իսկ հայտնագործում է մարդուն, դա այն իդեալն է, որ մարդը փնտրում է: Միանալով քրիստոնեության՝ նա ազատագրում է ոգին, վերածնելով հին ընկերությունը՝ նա այնտեղ սիրում է անձնավորության նոր գաղափարը: Մի ջնջնադարում չարունակված էվոլյուցիոնը կատարվում է նոր դարաշրջանում: Բարեկարգության (Reforme), փիլիսոփայության, ազգային անկախության և բրուսական աւերության միջոցով Գերմանիան վերջապես մարմնավորում է «ազատությունը»: Եվ միայն ինքն է նրան մարմնավորում: Անգլիայի համար ազատությունը մի առանձնաշնորհություն է, Ֆրանսիայի համար՝ մի անհատապաշտություն, միայն Գերմանիան է տալիս նրան իր ամբողջական բացատրությունը՝ միացնելով անհատը պետության հետ, մասնավորը սիեզերականի հետ: Մենք հասել ենք պատմության ամենաբարձր վայրկյանին, ուր «Ոգին գիտե է իրեն ազատ, կամենալով ինքն իրեն, իր համար՝ ճշմարիտը և հավիտենականը...: Գերմանական ոգին նոր աշխարհի ոգին է»: Գերմանիայի մեջն է խտանում և սպառվում մարդկության զարգացումը:

Այս բանաձևերից մի քանիսը չե՞նք տեսնում մենք դիվանագետների և հրապարակախոսների հայտարարություններում: Ինքնին արդեն այս մտավորությունը պարունակում էր կայսերականության մի ամբողջ հզացումը, ուժի փառաբանությունը, պետության աստվածացումը, Գերմանիայի ապոթեոզը: Բայց չուտով դա անբավարար պիտի թվար: Դա ոչ այլ ինչ էր համենայն դեպս, քան թե մի մտավորություն (idéologie): Արդ, մոտավորապես 1860-ին գաղափարապաշտության դարաշրջանը փակվում է: Միության աշխատանքից, Բիսմարկի դիվանագիտությունից և բնագիտություններուն առաջադիմությունից մղված՝ Գերմանիան գառնում է օգտապաշտ և իրապաշտ: Բնագանցությունը չի բավարարում այլևս իրան: Իր այս գաղափարների և հավակնության համար պետք է փաստերի հաստատուն կռվանը: Բնության և կյանքի գիտությունները տիրապետում են ոգիներին: Ի՞նչ փույթ, թե նոր ինտելեկտուալիզմը պարզապես խեղդում է բանաստեղծության և հայեցողական (spéculative) մտքի թռիչքը: Իր հերթին՝ պատմությունը բաժանվում է դուտ փիլիսոփայությունից՝ փակչելու համար կենսաբանության: Եվ սակայն, կերպարանափոխելով իր մեթոդները՝ նա չի փոխում իր ուղղությունները: Ցեղի և զարգացման երկու սիրական գաղափարներին կենսաբանությունը ընդհակառակն տալու է մի նոր ուժ՝ նրանց միացնելով

կենսական մրցման և ընտրության (concurrence vitale et la selection) իր տեսությունը:

Շատ հետաքրքիր է, որ այս հանդուգն հղացումը փոխ է առնված Անգլիայից: 1859-ին Դարվինը գրել էր իր հռչակավոր գիրքը Տեսակների ծագման վրա: Գերմանիան շուտով պիտի հարմարեցներ դրան իր հանճարին: Դեռ 1863-ին Շլայխերը գործադրում է դարվինիզմը լեզվաբանության վրա: 1864-ին Ջրից Մյուլլերը հրատարակում է իր մանիֆեստը «Դարվինի համար ...»: Ջորս տարի հետո լույս է տեսնում «Բնական ստեղծումը»: Հեկքելի հետ կազմակերպվում է գերմանական դարվինիզմը: Դա տեսությունը միայն չի ժողովրդականացնում: Նա նրան լրացնում է: Ընտրության և ժառանգականության օրենքով Դարվինը կամեցել էր բացատրել միայն առնանական կյանքի երևույթները: Հեկքելը տարածում է այս օրենքները մարդկության, ինչպես և բնության վրա:— Երևում է մի սաղմ: Բջիջն է, որի էվոլյուսիոնը ստեղծելու է աշխարհը, ամենից առաջ անգործարանավորը, հետո կյանքը, հետո միտքը: Այս հազարավոր դարերի մեջ, որ նայվածքը չի կարող չափել, որ երևակայությունը դժվարությամբ է պատկերացնում կազմվում և մեծանում է տեսակների հսկայական ծառը՝ անթիվ և խճճված ճյուղերով, որի բարդությունը և կատարելությունը աճելուց չեն դադրում: Մարդը վերջինն է: Բայց եթե նա պսակում է հոյակապ բուսականությունը, նրա հետն էլ կապվում է: «Նա բնությունից վեր չէ. նա կազմում է բնության մի մաս»: Եվ այսպես, մինչդեռ իր հպարտությունը իրան կղզիացնում է մնացյալ ստեղծագործությունից, գիտությունը նրա աչքերի առջևն է դնում իր նախնիքը՝ անձև սաղմը, la monaire, որից ինքն է դուրս եկել: Նա նորից գտնում է գործարանների, ինչպես և ձևերի էվոլյուսիոնը, անհատի ծագումը, ինչպես և տեսակի ընտանիքի, հոտի, համայնքի և պետության ծննդարանությունը: Պատմությունը բնության երկարաձգությունն է միայն: Միևնույն պարգացման գործ՝ ի՞նչպես կարող էր նա ենթարկված չլինել միևնույն օրենքին:

Բանաստեղծները կարողացան երգել տիեզերքի ներդաշնակությունը: Միայն մի բան պարզ է. տիեզերքն ընդհակառակն ոչ այլ ինչ է, եթե ոչ անսահման փակ դաշտը, ուր մղվում է մի հավիտենական պայքար: Մի անողորմ պատերազմ է չնչում գոյության բոլոր աստիճանների և բոլոր կարգերի վրա: Եվ ամեն տեղ նա առաջ է բերում նման հետևանքներ: Անհատների նույն պանաղանավորումը: «Պետք է ընդունել, որ ամեն տեղ միևնույն տեսակին պատկանող անհատ-

նները չունեն նույնպիսի նպաստավոր հաջողություններ (chances)*»: Տեսակների մեջ նույն ընտրությունը* (sélection)*: «Ժառանգականությունը հաստատում է, որ թե մարդկային և թե կենդանական հասարակությունների մեջ ո՛չ իրավունքները, ո՛չ պարտականությունները և ո՛չ էլ ինչքերը չեն կարող հավասար լինել...»: Անհավասարությունը ժողովուրդների օրենքն է: Ամենաուժեղների նույն վերապրումը: Ապրելու իրավունք ունեն միայն նրանք, որոնք ամենից լավն են հարմարվել: Թուլլերը համառոտակում են իրենք իրենցից և երկրի բնության մեջն է, որ նրանք անհետանան: «Երկաթեն» (airain) օրենք, որին չպիտի կարողանան չարժել բանականությունը և մարդու կամքը: Ի՞նչ է այս բանականությունը և այս կամքը, եթե ոչ նյութի մի արտաթորությունը* (effluve)*: Պատմության մեջ մուտք գործելով իբրև տեր՝ բնությունը նրան հարկադրում է իր խստությունը և անհրաժեշտությունը: «Ամեն տեղ մենք կարող ենք անմիջական* (efficientes) *պատճառների, վախճանական պատճառների տեղը դնել անդիտակցական և ճակատագրական պատճառներ...»: Այլևս երկվություն չկա ո՛չ գոյության, ո՛չ էլ մտքի մեջ: Տիեզերքը միայն մի ամբողջություն է, մի անսահման մեքենականություն, որի գործառնությունը վերածվում է մի կույր, անդառնալի և չարունակական դարգացման:*

Այս հղացումը «պետք է բանար մարդկային ոգու առջև անսահման առաջադիմության մի դարաշրջան...»: Մենք ունենք գոյության ավելի համեստ իրավունքներ: Բայց սա մի վատ է, որ հակառակ իր հանդիսած ընդդիմադրության, ոչ մի վարդապետություն չունեցավ այնքան արագ և այնքան ընդհանուր մի ազդեցություն, հեգելիանիզմից հետո: Գերմանիան ցասկում էր մեկ ոստնումով բնապանցության գագաթներից՝ դրական գիտությունների ավելի միացած բնագավառում: Հակասությունը միայն երևութական էր: Իրապես, մի նոր ձևի տակ, գաղափարի բացարձակության տեղը դնելով ուժի բացարձակությունը՝ մտքերը նորից գտնում էին այն տրերքը, որ իրենց սիրելի էին.— մի հավասար չանք՝ բռնելու համար մտքի և աշխարհի միությունը, մի օրենք՝ նման ներակայության (immanence) *և զարգացման, անդիտակցության և անհրաժեշտության: Հեկքելը, նյութականացած հեգելիանիզմն էր: Դեռ ավելացնենք, որ բազմաթիվ կենսաբաններից հալածված, նոր վարդապետությունը, ինչպես և մյուսը պետք է ընդունելություն գտներ գրագետների, պետական մարդկանց և պատմաբանների մեջ: Նիցչեն*

նրան է պարտական կյանքի իր հռչակավոր սահմանավորումը: 1905-ին Հարտմանը նրանից խնդրեց պատմության մի ամբողջական տեսություն: Դա այսօր փովում է հրապարակախոսների հոդվածների և պաշտոնական ճառերի մեջ: Հեգելիանիզմի հետ հաշտված դարվինիզմի վրա է, որ կազմակերպվել են արդի Գերմանիայի երկու մեծ քաղաքական փիլիսոփայությունները՝ մարքսիզմ և կայսերականություն:

Պատմության միևնույն հղացումը նրանց բերում է իրար մոտ: Ամեն պետության մեջ արտադրության միջոցների կամ հարստության տեր մի դասակարգ ճակատագրականորեն մղվում է ճնշելու մյուսներին: Պետությունների մեջ «նա, որին երևում են ամենանպաստավոր արտաքին հանգամանքները, որի համար զորության պայմանները ներկայանում են հնարավոր ամենալավ ձևով, նա չի կարող տատանվել ամենաուժեղը լինել կամենալու...: Իր առաջադիմության մեջ մի կայունություն կլինի հետադիմություն...»: Այստեղ դասակարգերի պայքարը, այնտեղ ժողովուրդների պայքարը: Համենայն դեպս, միշտ և ամեն տեղ պատերազմը:

Այսպես անցան Հեգելին. Հայտարարելով հանդերձ պետության բացարձակությունը՝ նա ընդունել էր, սակայն, իրավունքի տարերքը ժողովուրդների մեջ: Դյուրաբեկ վերապահություն, որ Թրայչքեն պիտի ջնջեր մի քանի խոսքով: Պետությունը պետք է ուժեղ լինի, և ուժեղ լինելու համար միայն ինքն իրան պարտական լինել: Մի դաշինք նա հարգում է, որքան որ նա չահ ունի դրան չխորտակելու: Իր չահը օրենք չունի: Հեգելը պատերազմի մեջ տեսնում էր մի անխուսափելի, անհրաժեշտ և օրինավոր կրիզիս, բայց՝ մի պատահար: Ահա նա կանգնած որպես կանոն: Դարձյալ Թրայչքեն է, որ հայտարարում է. «Մարդկության մեծ առաջադիմությունները միայն սուրով կարող են իրականանալ...: Անգամ քաղաքակրթված ժողովուրդների մեջն պատերազմը մնում է նրա ձևը»: Պատասխանելով խաղաղասիրության իր հերթին Շեոֆլեն գրում է 1900-ին իր պատերազմի փիլսական տեսությունը: «Աշխարհը, ինչպես որ գոյություն ունի, մի ներդաշնակություն չէ, այլ գոյակների մի անկարգ խաժամուժ, ենթարկված մի անխուսափելի պայքարի վտանգին...»: Պատերազմը ոչ դժբախտություն է, ոչ էլ պատիժ. նա մի բարիք է. ոչ թե միջոց, այլ նպատակ, ոչ թե բացառություն, այլ օրենք, «միակ ընթացքը՝ պարգացնելու համար առողջ կերպով Ընկերությունների միջազգային և ազգային վիճակը...»: Հեգելը պահանջում էր պատերազմի իրավունքի մի սահմանափակում, ընդունել էր միջազգային կանոնադրութ-

յուններ, որոնք մեզմայնում են պատերազմը, հանձնարարում էր նվաճած երկրների մեջ անձնավորությանց և կյանքի հարգանքը: Բայց պատերազմը, որովհետև դերագույն օրենքն է, այլևս օրենք չկա նրա դեմ: Նա անողորմ պիտի լինի, ատելության պես անողորմ, որովհետև Լաստոնը ասում է՝ «քաղաքակրթության ձևերը իրար առում են միայն»: Եվ, եթե ճիշտ է դեռ, որ թույլերը վերապրելու ոչ մի իրավունք չունեն, որ նրանց վերապրումն իսկ մի արգելք է տեսակի զարգացման, ի՞նչու նրանց խնայել: Նրանց ոչնչացումը մտնում է պատմության նպատակի մեջ: Նվաճումը նույնքան օրինավոր է, որքան այն միջոցները, որ հատկացված են նվաճելու: Գիտությունը միայն ինքնախաբեություն է: Եվ Բելգիան պիտի ցույց տա, թե Գերմանիան ի՞նչ ձևով է ուզում գործնականացնել մարդկային ընտրությունը և ծառայել ժողովուրդների առաջադիմության:

Ցեղ, զարգացում և կյանքի պայքար, մենք այստեղ բռնում ենք կական կտորները, պղպատեղ հյուսվածքը, որից գարբնվել է այս փիլիսոփայությունը: Այժմ տեսնենք նրա ամբողջությունը: Մի առանձին ազգ, «ամենից վերը»՝ տնտանելի կերպով ընտրված Աստուծուց և դրված մարգկության կատարին: Հարյուր միլիոն մարդիկ՝ իմբված իրենց երկրի, կամ ցրված ուրիշ երկրների մեջ: Նրանց միացնելու համար՝ մի կենտրոնացած կայսրություն, որ համախմբում է միևնույն օրենքի տակ, միևնույն իդեալի և ջանքի մեջ թե՛ երկրի, և թե՛ «ցրվածության» իր բոլոր որդիներին, նրանց պաշտպանելու համար՝ մի զորեղ նավատորմ և մի անզուգական բանակ: Այս «պոդավոր» (tentaculaire) պետությունը սպառնում է վերջապես բոլոր հայրենիքներին, ողողում նրանց իր առևտրականներով, իր դոկտորներով, իր լրտեսներով և իր գինվորներով, այն հույսով որ նրանց հարկադրի իր օրենքը և մշակույթը — ահա նոր Գերմանիան, ինչպես որ մեզ ցույց են տալիս փաստերն ու վարդապետությունը: Իր հաղթանակն իսկ չպիտի լինի միայն իր գործը: Պատմությունը ասել է արդեն: Ահա կատարյալ ստեղծագործություն, այն, որ մասնավոր պետությունների ավերակների վրա պիտի կառուցանե տիեզերականը, որ մի գիտական տիրապետության միության մեջ պիտի կազմակերպի և կանոնավորի կյանքը: Մարդկությունը պետք է միայն գլուխը ծռի: Մի ճակատագրական օրենք նրան դատապարտում է հնազանդվել իր երջանկության համար: Եվ ահա երկաթովն է, կրակովն է, որ Գերմանիան հավակնում է վերածնել աշխարհը, իր երազի լուսավորչության և իր կատազած հպարտության գինովության մեջ:

II

Կայսրության քաղաքականության վրա գրած իր չռնդալից գրքի մեջ, իշխան Բյուլովը նկատում էր վերջերս, որ գերմանական միությունը Եվրոպայից չընդունվեց ուրախությամբ: Մենք հասկանում ենք այս զգացմունքը: Այն ժողովուրդները, որոնք այդպիսի վարդապետություններ են քարոզում, շատ անհարմար դրացիներ են: Նրանց բարեկամությունից նվազ վախենալու չէ, քան նրանց վրեժխնդրությունից, և ոչ ոք չգիտի, թե նրանց փայփայանքները ինչ նենգություններ են ծածկում: Մի ախտանիշ ծանր էր: Անգամ Գերմանիայում Լամպրեխտի միտումը գերիշխում էր, հակառակ մեքենականության այս փիլիսոփայության դեմ պատմություն պաշտպանելու համար արված ջանքերին: Եվ Ֆրանսիայում, կես դարուց ի վեր, այս պատմական դիտության ազդեցությունը նկատ էր խուժել:

Ոմանք սքանչանում էին նրա վրա իր սպեկուլատիվ զորության համար: Նույնիսկ Տենը չգրեց, որ Գերմանիան «օրենքների մի սխատեմի կերպարանափոխեց պատմությունը, որ փաստերի մի կույտ էր միայն»: Ոմանք ընդունում էին նրան իր մեթոդների համար: Մեր հրատարակության մեջ մենք ճանաչեցինք այս վարակումը: Մի հրատարակություն

[Թերի է]

Թիֆլիս, 31 X 1916

[Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Պատմություն, մեթոդ, տեսություն)

Լեզվաբանության, բանասիրության և գրականության բազմաթիվ ամբիոնների կողքին, 1911 թվականին Սորբոնի մեջ հաստատվեց մի ամբիոն էլ՝ «Համեմատական գրականության» նվիրված: Պրոֆեսոր Պ. Բալդենսբերժեր, որին վստահեցավ Պարիզի Համալսարանի վարչությունը այդ բանախոսությունները, երկար տարիներ էր նվիրել նոր կազմակերպվող գրական-քննադատական այդ մասնագիտության ուսումնասիրության:

Մի փոքրիկ ակնարկ այդ մասին մեզ ցույց է տալիս, որ թեև առաջին անգամ Պարիզի մեջն է, որ համալսարանական ուսման և ուսումնասիրության արժանի է համարվում գրական մի նոր ճյուղ, բայց և այնպես դեռ 1850-ական թվականներից այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ էին կատարվել և այն էլ այնպիսի տպավորիչ մչակների ձեռքով, որոնք մի քանի տասնյակ տարիների պետք ունեին սակայն, մինչև կարողանային գրական աշխարհին հարկադրել իրենց ուսումնասիրությունները: Թև ինչքան դժվարություններ կան՝ համալսարանական մի նոր ամբիոն հաստատելու հետ կապված, պարզ երևում է այն հանգամանքից, որ ընկերաբանությունը (սոցիոլոգիա) չնայած որ մոտավորապես երեք քառորդ դարի պիտական մի բեղմնավոր անցյալ ունի իր հետը, Կոնտի և Սպենսերի նման հսկաներ, եթե նույնիսկ նկատի չառնենք ֆրանսիական ընկերաբանական նոր դպրոցը՝ Դյուրքհեյմի գլխավորությամբ, այնուամենայնիվ երկրորդական, գավառական համալսարանների մեջ միայն կարողացել է ընկերաբանությունը մի սեփական ամրոց ունենալ, մինչդեռ մեծերը և մեծամասնությունը համառորեն մերժում են նրան ինքնուրույն տեղ տալ՝ դանելով, որ նա դեռ շատ պետք ունի առանձին և ինքնուրույն դիտության լինելու համար:

Այս տեսակետից համեմատական գրականությունը շատ ավելի բախտավոր եղավ: Նա չուներ, անշուշտ, նույնքան մեծ հավակնություններ, որքան ընկերաբանությունը, գիտության մեջ մի հիմնական հեղաշրջում մտցնելու, բայց և այնպես շատ հասկանալի է, որ Վիեննայի և Բեռլինի համալսարանները երկար ժամանակ է մտադրվել են մի ամբիոն նվիրել դրան, և, սակայն, մինչև 1914 թվականը

այդ դեռ չէր հաջողվում: Շատ հասկանալի է, որովհետև մի՞թե հնարավոր է ուսումնասիրության մի նոր դաշտ, կամ մի նոր գործիք մեթոդ գտնել այնտեղ, ուր մարդկային ոգին, իր ինքնագիտակցության առաջին քայլերից սկսած, քաղաքակրթության առաջին մտամարզանքներից սկսած, այնքան եռանդով և ոգևորությամբ աշխատել է, որոնել և ուսումնասիրել: Եվ, սակայն, ոչ միայն հնարավոր, այլև անհրաժեշտ համարվեց այդ, Սորբոնի մեջ, մի քանի տեսակետներով, որոնցից միայն առարկայի պատմության վերաբերմամբ եղածները կարող են այստեղ օգտակար լինել:

Գիտությունների մեջ «համեմատականը» շատ սովորական է երկար ժամանակներից ի վեր: Համեմատական անդամաբանություն, համեմատական քերականություն և լեզվաբանություն շատ սովորական առարկաներ են: Այս վերջին երկուքը մանավանդ, պետք է անպատճառ մի օր մեզ առաջնորդեին դեպի համեմատական գրականությունը, երբ պատահականությունը կամ խոհականությունը հարկադրեին մեզ, բառերի և լեզվական ձևերի կյանքն ու պատմությունը ուսումնասիրելուց հետո, ուսումնասիրել նաև գաղափարների կյանքն ու պատմությունը: Որովհետև, իսկապես որ, գաղափարներն էլ ունեին իրենց կյանքն ու պատմությունը, ինչպես ամեն բան: Միայն թե դրա համար լեզվաբանը պետք է մի քիչ բանասեղծ էլ լինի, կամ ավելի ճիշտ, մի քիչ էլ փիլիսոփա, որպեսզի չորֆաուերի և տվյալների ուսումնասիրությունից կարողանա մի քիչ էլ վայելիք նյութ հանել, կամ մարդկային ոգու ստեղծագործության և ճանաչողության աղբյուրները որոնել ու նորմաներ-օրենքները դնել: Այդ փիլիսոփայական հակումը պետք է ավելացնել նաև 1850-ական թվականներից, նույնիսկ շատ ավելի առաջ արթնացած մեծ հետաքրքրությունը դեպի Արևելքն ու արևելյան ստեղծագործությունները պարզելու համար է. Ռնանսի, Մաքս Մյուլլերի և Գաստոն Պարիսի կատարած աշխատանքների հիմունքը: Բանասեր և լեզվաբան, վերջին երկուքը մանավանդ, հարված հարվածի վրա, համեմատաբար կարճ ժամանակում, այնքան բեղմնավոր հորիզոններ բաց արին, մեկը Օքսֆորտի մեջ, մյուսը Պարիզում, համաշխարհային գրականության պատմության մեջ, որ առանց երկար տատանվելու ամենքի համար էլ պարզ դարձավ, թե ի՞նչ կարելի է անել և ի՞նչ ատանալ: Եվրոպական գրականությունը նրանց ուսումնասիրության առջև շատ գաղտնիքներ սկսեց մատնել: Արևելքը դարեր անընդհատ հեղեղել էր Եվրոպան իր գաղափարներով, իր գրականությամբ, և ոչ ոք այդ մասին որևէ կասկած չէր ունեցել: Ըստ երևույթին, Եվ-

բոպան դուբս էր գալիս, մի անպատշաճ բառով, բանագող Արևելքի հանդեպ վերցնելով նրանից, ինչ որ իրեն չէր պատկանում և հպարտ ու մի ձևերով, իբրև յուր սեփական առնծագործություն ներկայացնելով:

Ուրեմն, Արևելքի ճանաչողությունը և փիլիսոփայական վերաբերմունքը դեպի գրականությունը, այն գլխավոր հիմունքներն են, որոնք անհրաժեշտ պետք է կացուցանեին մի նոր տեսակետ պտնել նոր տրված հարցերին մոտենալու համար, մի նոր ըարձունք գտնելու՝ այլ հորիզոններ տեսնելու համար: Իսկապես ոչ թե նոր նյութ էր պտնում նոր առարկայի կազմակերպության համար, այլ հին նյութերի մի նոր բաշխակցության անհրաժեշտ էր դառնում մի չարք նոր հարցերի պատասխան տալու համար:

Որչափ որ հնարավոր եղել է հետևել հայերեն հրատարակություններին, ես համարյա թե ոչ մի բան չեմ տեսել համեմատական գրականության մասին գրված: Մյուս կողմից, այս մասնագիտությունն էլ դեռ այնպես ուժեղ կազմակերպություն չունի. դեռ մի մեթոդական և նյութական ամբողջություն ներկայացնող տեսությամբ և հիմունքներով հրապարակի վրա դրված չէ, բացի գանազան մենագրություններից, որպեսզի կարելի լիներ պարզ ու հատակ նրա ամբողջ ծավալն ու տարողությունն առաջադրել այստեղ: Մի մեծ գժվարություն էլ, եղած մենագրությունների համարյա թե կատարյալ բացակայությունն է: Այնուամենայնիվ ներկա մտավորական շարժումների մեջ հետաքրքրության ամենամեծ տեղ բռնող գրականության համար գոնե կարելի լինի ցույց տալ այն լեզմնավոր ճանապարհը, որով ընթանում է համեմատական գրականությունը, նրա որոնումների դաշտը, կիրարկված մեթոդները, նրանից եղած ապահիքները և օգուտները, նրա տեղը մի խոսքով, գրական քննադատության պատմության մեջ և վերջապես այն օգուտները, որ կարող է տանել գրականությունն ընդհանրապես և հայ գրականությունը մասնավորապես համեմատական գրականությունից:

II

Անհրաժեշտ է մի սկզբնական սահմանավորում տալ՝ համեմատական գրականության, մեթոդի մասին ասելիքները պարզ գտնելու և այդ սահմանավորման տեսական յայնությունը և ճշգրտությունը իր ամբողջ տարողությամբ երևան բերելու համար:

Ամենից առաջ պետք է փարատել այն կարծիքը, որ կարող է տալ «համեմատական գրականություն» անունը, թե գա գրական մի տե-

սակի, կամ սեռի համեմատությունը չէ մի ուրիշ տեսակի կամ սեռի հետ: Դա նույնպես համեմատությունը չէ հին և նոր գրականությունների, երկու կամ ավելի ազգերի գրականությունների ու ընդհանրապես ամբողջ մի գրականության ամբողջ մի գրականության հետ, ինչպես որ անում են հաճախ «որոշելու» համար այս կամ այն գրականության տիպը, նկարագիրը, հատկությունները, առավելությունները և տարբերությունները:

Համեմատական գրականությունը գրականության մեջ գոյություն ունեցող գաղափարների և բնաբանների վերլուծական համապատկական և համեմատական պատմություն է, ժամանակից և տարածությունից անկախ:

Այս սահմանավորումը վերջնական լինելու ոչ մի հավակնություն չունի, ինչպես առհասարակ բոլոր սահմանավորումները: Բայց նոր կազմակերպվող մասնագիտության համար առժամանակյա անհրաժեշտություն է: Դրա մեջն իսկ գտնվում է զորությամբ, իր մեթոդը, ինչպես միշտ, այնքան սերտորեն ձուլված առարկայի հետ, գործիքն արտադրության հետ, ստեղծողն ստեղծագործության հետ:

Ոչ թե ընդհանուր, այլ մի փոքր ազգի գրականության չափավոր ծանոթությունն իսկ անհրաժեշտաբար երևան պետք է բերե նույն տեսակի բնաբաններ և գաղափարներ, որոնք պանազան ձևերով, ժամանակներում և տեղերում երգվել, պատմվել, նկարագրվել և ներկայացվել են: Եթե այդ գրականությունն անցել է այն շրջանը, ուր նույնատեսակ բնաբանների մշակումը ընդօրինակություն կամ «բանագողություն» է հայտարարվում, այն ժամանակ գրական քննադատների մեջ պետք է անպատճառ ջերմ հետաքրքրություն արթնանա բնաբանների տարբերությունը գտնելուց հետո, գտնել նաև տարբերությունների բնաբանը, կամ, որ նույն է, գտնել այն ազդությունը և ազդեցությունների այն ճանապարհը, որ հատակ ջրին բազմաթիվ ձևակերտումներ, գունավորումներ և փոփոխություններ է տալիս առվի եզերքին և առվակների մեջ:

Հենց մեթոդի մեջն էլ գտնվում է գլխավոր պատճառներից մեկը, որով գրականության ուսումնասիրությունը պատնում է «համեմատական»: Փորձառական գիտությունների և բնագիտության այն մեծ գարկը, որ տվեց Դարվինն այդ գիտություններին, ցույց է տալիս, որ շատ պակասավոր է յուրաքանչյուր փորձ, որ նաև համեմատական չէ: Նմանների կապակցությունը և աննմանների տարբերությունը անմիջապես աչքի է զարնում, հենց որ բնության մեջ գոյություն

ունեցող երևույթների ամբողջությունն ենք քննում[1]: *Համեմատությունը նախապատրաստում է ամբողջության ըմբռնումը և համապրությունը, մյուս կողմից էլ լրացնում է բազմաթիվ պակասություններ տեսության միատարրության մեջ ու հնարավորություն տալիս դործադրության դնել և դրանով ստուգել այն մի շարք սկզբունքները, որոնց կարող ենք եզրակացություն անվանել: Բացի այդ, փորձառական դիտությունների մեջ համեմատական մեթոդը պահանջ է դառնում այն ժամանակ, երբ սոսկ նկարագրություններից, նմանություններ և տարբերություններ գտնելուց հետո անհրաժեշտ է դառնում բացատրություններ տալ, մեկնել, պատճառները որոնել. Համեմատական մեթոդը այնքան չկարողացավ օգնել փորձառական դիտություններին, պատճառաբանության որոնման տեսակետից: Բայց գրականության պատմության և ուսումնասիրության մեջ համեմատական մեթոդը ձգտում է դառնալ միակը, որով կարելի է գրական հարցերին մոտենալ դիտականորեն, գրականության մեջն էլ փորձ կատարել, և որ ամենից գլխավորն է, ու համարյա թե միայն այստեղ բեղմնավոր է դառնում, համեմատական մեթոդը մեզ թույլ է տալիս ծագման և զարգացման պատճառների ուսումնասիրությունը գրականության բազմաթիվ բնաբանների, գաղափարների և առեղծվածների վերաբերմամբ:*

Բնական է, որ քիչ տարբերությամբ, համեմատությունը այստեղն էլ նույնը պիտի լինի, ինչ որ մյուս դիտություններ մեջ: Համեմատությունը կարող է լինել անհատական և ընդհանրական[2]: *Տրամաբանական այս հարցերը շատ ժամանակի կարիք ունեն, անկասկած, վերջնական ձևակերպումն ստանալու համար, բայց աշխատանքների ներկա վիճակն այնուամենայնիվ թույլ է տալիս կանխատեսելու, որ համեմատական գրականության մեջ անհատական համեմատությունը պետք է լինի ոչ թե անհատների համեմատությունը, այլ մի առանձնացած, կղզիացած բնաբանի կամ գրական խնդրի ուսումնասիրությունն, իր բաղկացուցիչ տարրերի ամեն տեսակ արտահայտությունների համեմատությամբ: Իսկ ընդհանրական համեմատությունը պետք է լինի անհատական համեմատությունների եզրակացությունները, կամ հարակից, բայց տարբեր խնդիրների համեմատությունը տիեզերական, կամ ընդհանուր մարդկային ծավալով: Անհատական համեմատությունը կարող է լինել մի որևէ ազգի գրականության*

[1] W. W u n d t. Logik II. *եր.* 361. Stuttgart, 1907.
[2] *Նույն եր. 364:*

մեջ գոյություն ունեցող գրական մի բնաբանի համեմատությունը արտահայտության իր բոլոր ձևերի մեջ: Ընդհանրական համեմատությունը կարող է լինել մի որոշ տարրի գրական մտահղացումը տարածությունից անկախ, դարձյալ մի գրական բնաբանի մասին: Այս վերջինը կարող է լինել նաև ժամանակից անկախ, կամ նաև, ոչ թե սոսկ մի պրոբլեմի, այլև մի ուղղության, գրական միևնույն սրամադրության համեմատությունը զանազան ժամանակներում և երկրներում: Բաղադրությունների բազմաթիվ հնարավորություններ կան, ինչպես և երկու մեթոդների թափանցողությունը մեկը մյուսի մեջ: Իսկանն այն է, որ եթե այդ երկուսի տարբերությունը խիստ կերպով կարելի չլինի պահպանել ամեն տեղ, այնուամենայնիվ, ծավալի վերաբերմամբ պիտի մնա միշտ այդ տարբերությունը: Բնագիտությունների մեջ համեմատաբար ավելի հեշտ է երկու մեթոդների տարբերությունը: Ինչպես վ. Վունդը բացատրում է մի օրինակով, անհատական համեմատություն է, երբ անասնագիտության (Zootomie) մեջ որոնում ենք կենդանական թագավորության յուրաքանչյուր տեսակի կամ ընտանիքի անդամազննական կատարյալ տիպը կառուցանելու ընտրելով յուրաքանչյուրից հատկանշական անհատները: Ընդհակառակն, ընդհանրական համեմատություն է, երբ համեմատական անդամազննության մեջ որոնում ենք միևնույն գործարանի աստիճանական զարդացումը ամբողջ կենդանական թագավորության մեջ[1]: Առաջին դեպքում համեմատությունը մեզ տալիս է «կատարյալ տիպը» բազմաթիվ նման երևույթների մեջ: Երկրորդ դեպքում համեմատությունը մեզ տալիս է միևնույն երևույթի «ամբողջական տիպը» իր հնարավոր և իրական բոլոր ձևափոխությունների մեջ:

Դժվար է ասել, թե գրականության մեջ համեմատությունը պիտի ընթանա այդ մեթոդով: Սակայն պարզ է, որ մեծ տարբերություն կա հետևյալ երկու մեթոդների մեջ: Անհիշատակ ժամանակներից ի վեր Արգոնավորդների կյանքից մի գրվագ է մնացել, Մեդեա, որ զբաղեցրել է բոլոր դարերի գրականությունները: Ավելի քան ութսուն ողբերգություններ կան գրված նրա վրա. ավելի քան երկու հարյուր հեղինակներ աշխատել են գրական զանազան տեսակներով: Եթե մի աշխատություն, որ կատարե այդ բոլորի համեմատությունը և իր եզրակացությունները հանի, որից տեսնում ենք, չատ օգտակար դիտողություններ կողքին, նաև թե լավագույն դործը Եվրիպիդեան է

[1] Նույն եր. 366:

տվել դասական աշխարհում, իսկ նորից Է. Լըդուվեն՝ Ֆրանսիայում, և Ֆ. Գրիլպարյեր՝ Գերմանիայում[4], *այն ժամանակ մենք պիտք է մի տարբերություն դնենք դրա և այն մեթոդի մեջ, որ որոնում է, օրինակի համար, վարդի մասին եղած դրական մտահղացումը ամեն ժամանակի և տարածությունների համար, կամ, որպեսզի հոգեբանական դործարանի ամբողջական զարգացման մասին կարողանանք խոսել, նեթե կարելի լինի որոնել կնոջական սիրո աստիճանական զարգացումը բոլոր դրականությունների մեջ: Պարզ է, որ առաջին դեպքում, երևույթի անհատականությունը շատ ավելի էական է, քան երկրորդ դեպքում, որտեղ մենք գործ ունենք ընդհանուր մարդկային հոգեբանական և դեղարվեստական մի խնդրի հետ: Ժամանակն ու նյութի մշակումը պիտի վճռեն, անշուշտ, վերջիվերջո մեթոդաբանական տարբերությունները՝ ավելի ճշտաբանություն, ավելի դիտություն դնելու համար դրականության ուսումնասիրության մեջ:*

III

Մեծ համարձակություն է, անշուշտ, փորձել համեմատական գրականության տեսությունը տալ այն ժամանակ, երբ դեռ կազմակերպման շրջանի մեջն է նա: Ինչ որ այսպիսի դեպքերում կարելի է տալ, լինելու են միայն «նյութեր տեսության համար»:

Տեսության մասին, ինչպես վերևում ասվեց, այժմ էլ ծննդաբանական ընթացքով պետք է անել: Արևելքի ուսումնասիրությունը և փիլիսոփայական բացատրությունը գրականության մեջ անհրաժեշտ դարձրին համեմատությունը: Համեմատությունից առաջ եկած առղծվածների հարցադրությունը կամ նկարագրությունը, ինչպես և պատճառականությունը կամ բացատրությունը կազմելու են այն առանցքը, որի շուրջ պատվելու է համեմատական գրականությունը:

Դեռ 1840 թվականից առաջ մի երիտասարդ և վաղամեռիկ դրականագետ՝ Լ. Դելոնչան[5], *նկատել էր, որ Եվրոպայում գոյություն ունեցող առակների մեծ մասը Հնդկաստանից են գալիս: Արևելքն է, որ առաջինն որդեգրել է դրական այս ձևը՝ «օգտակար մի խրատ ծածկել այլաբանական չղարշով», այսինքն առակը:*

Ավելի ճիշտ հարցադրություն է կատարում Գաստոն Պարիս, որ իրավամբ կարող է համարվել համեմատական գրականության հիմ-

[4] L. M a l i n g e r. Médée, étude de litt. comparée, Paris.

[5] L o i s e l e u r D e s l o n g c h a m p s. Essai sur les fables indiens.

նադիրներից մեկը: Ամենից շատ աչքը հարվածող խնդիրը ալբյուրի խնդիրն է: Մի փոքրիկ համեմատություն. մի քանի ժողովուրդների և դարերի գրականության մեջ, մեզ ցույց է տալիս նույն տեսակի գաղափարներ և բնաբաններ: Արդ, հարց է ծագում, ո՞ւր և ե՞րբ կատարվեց առաջին մտահղացումը միևնույն գրական նյութի: Այս հարցը մեզ տանում է խիստ բարդ երևույթների քննության: Մենք տեսնում ենք, թե ինչպես անհատականությունը գոյություն չունի, կամ կազմված է արտանհատական բազմաթիվ տարրերից: Դեռ միջնադարում, երբ հարաբերությունները այնքան պատահական էին և կղզիացումն ու անհատացումն այնքան հնարավոր, դեռ այդ ժամանակ մենք տեսնում ենք, որ ֆրանսիական ժողովրդական երգերը, հեքիաթներն ու առակները չատ քիչ հարազատ և բնածին են մայր երկրին, որ օտարամուտ հյուրեր եկել տեղավորվել, կատաղի պատքար են մղել բնիկների հետ, հաճախ հաղթել, երբեմն պարտվել, այնուամենայնիվ տեղավորվել են նոր հայրենիքում[6]: Դասական հնությունը, քրիստոնեությունը, կելտական ավանդությունները և հնդկական գրքերը, ահա այն աղբյուրները, որոնցից ֆրանսիական միջնադարը ներշնչվել է և կազմել իր գրականությունը: Մի ազգի գրականության համար համեմատական գրականությունը ավելի մեծ ծառայություն չի կարող անել, քան որոնելով բոլոր աղբյուրները՝ ցույց տալ այն ստեղծագործությունները, որոնք ինքնածին և բնածին են Մայր-Հողին: Այդպես միայն գրականությունը կլինի այդ ժողովրդի համար մի կատր հոգի նրա հոգուց, մի կաթիլ արյուն նրա արյունից:

Գ. Պարիս հետևում է այն քարավանին, որ կտրել է Գանգեսից մինչև Սեն իր ճանապարհը: Երկար ժամանակ պարսիկներին և արաբներին էին վերագրվում, ինչ նրանք միայն փոխադրել էին[7]: Բայց ելակետից վերադառնալով կրունկների վրա՝ մենք հասնում ենք բուդդայականության հայրենիքը, ուր գրական այդ ստեղծագործությունները գերազանցապես բարոյական են՝ առանց վարդապետական և միստիք լինելու: Ալեքսանդր Մակեդոնացու հիմնած Փոքր-Ասիական հունական կայսրությունները միջնորդի դեր են կատարել Հնդկաստանի և Հունաստանի մեջ՝ մեկից մյուսին տանելով ներշնչումներ և ապդեցություններ: Այսպես է, որ Եվրոպոսը չատ է

[7] Gaston Paris. Les contes orientaux dans la litt. fr. au moyen-age. Նույն տր. 7:

հնդկական, ինչպես և շատ հունական ողբերգություն կա հնդկական ստեղծագործություններին մեջ:

Իրենց համփորդության պատմությունից ավելի հետաքրքիր են այն ձևափոխությունները, հարմարումները և առհասարակ փոփոխությունները, որ կրել են նոր միջավայրի մեջ հին մաքները: Հնդիկների մաքերն ու մտածողության ձևերը տուփերի և արկղների նման են[5] անտահմանորեն իրար մեջ գրված, հետզհետե ավելի փոքրիկ և ավելի թանկագին և վերջիվերջո բոլորովին պատարկ: Իրենց ելակետում նրանք պատռում են չղթաներ[6] ավելի կամ պակաս բարդ կառուցվածքով: Այստեղ նրանք կորցնում են իրենց բարոյագիտական նշանակությունը, և իրենց կառուցվածքի արհամարհանքը խորտակվում է[7]: Այստեղ նրանք հարմարվում են մի ժողովրդի բարքերին, որ ոչ հեղափոխություն է ճանաչում, ոչ կատաս, ոչ բազմակնություն, ոչ էլ կրոնական բարդ ծեսեր: Եվ վերջապես անհատականացությունը, մոռացումը և քմահաճույքը մեծ դեր են կատարում նոր դարձնելու հին ստեղծագործությունները: Բայց նրանք դեռ սպահով չեն. ոչ մի ստեղծագործություն և մտահղացում վստահ չէ, թե մի օր չի «խմբագրվելու» ինքն: Երևի շատ քչերը ունեցել են փորձը, թե ստեղծագործության դահիճը միայն այդ «խմբագրացավն» է: Ահա այն ազդեցությունները, որոնց կարող է ենթարկվել մի ստեղծագործություն, որ պաղթում է, փոխում է իր հայրենիքը: Նոր հայրենիքում նրանք դառնում են նոր ազդեցությունների աղբյուր, օրինակ, Ֆրանսիայում հնդկական ստեղծագործությունները կանանց արհամարհանքն են մայրել, ուր գերազանցապես աճել էր աստիճական կնահաճությունը[8]:

Համեմատական գրականությունը չի կարող, իհարկե, բավականանալ ճանապարհի երկու ծայրերի ուսումնասիրությամբ: Պետք է քայլ առ քայլ կորել ճանապարհը և երկար հանգստանալ կայարաններում, այդտեղ պետք է տեսնել, թե յուրաքանչյուր միջավայրը ինչպիսի ազդեցություն է թողել պաղթող գաղափարների վրա. յուրաքանչյուր ազգ, յուրաքանչյուր հեղինակը ինչպես է ըմբռնել և արտահայտել նոր հյուրերին: Պետք է ուսումնասիրել նաև փոխադարձաբար սրանց ազդեցությունը յուրաքանչյուր միջավայրի, ազգի և հեղինակի վրա: Փոխադրեցությունների և իրերաթափանցության այս բարդ մեքենականության ուսումնասիրելը չի կարող

[5] Նույն տեղում, եր. 12:
[6] Նույն տեղում, եր. 22:

նյութ լինել ուրիշ որևէ տեսակ մասնագիտության, քան թե համեմատական գրականության:

Գրական գաղափարների և բնաբանների աղբյուրը, ազդեցությունները և ձևափոխությունները պետք է ուսումնասիրել ոչ միայն այսպիսի ընդարձակ ծավալով, այլ նեղ շրջանների մեջ անգամ: Ֆրանսիական «Վարդի ռոմանը» համեմատական գրականության մի անսահման նյութ է: Երկու հեղինակ XIII և XIV դարերում կազմակերպել են այդ բանաստեղծությունը, որ ունի 22000 տող: Բայց հետագայում սիրո այդ այլաբանությունն ունենում է անթիվ նմանվողներ գրական բոլոր ճյուղերի մեջ[10]: Հետաքրքիր հոգեբանական երևույթների ականատես կլիննենք, եթե մանրամասն քննության ենթարկենք յուրաքանչյուր գործի և հեղինակի մտահղացումը և արտահայտությունը: Դրանց համեմատությունը ցույց պիտի տա միայն լավն ու թույլը, այլև թե ինչո՞ւ համար մեկը լավ է, մի ուրիշը թույլ գործ:

Հայտնի է, որ Աստվածաշնչի «Ջրհեղեղը» ասորա-բաբելական կամ քաղդեական մի առասպել է[11], որ այնքան հրեացել և քրիստոնեացել է: Նախքան այդ, բաբելական կայսրության, Հայաստանի և Առաջավոր Ասիայի բոլոր ժողովուրդներն ունեցել են այդ առասպելը, որի հիմքը գուցե «չարի կործանումը ամեն բանի կործանումով» գաղափարն է, մի տեսակ ինքնասպանություն, որ սակայն, ժողովրդական երևակայությունն է կատարում: Համեմատական գրականությունը այս բնաբանի ուսումնասիրությունից կարող է հանել ոչ միայն այն եզրակացությունները, որ մյուս գաղափարների համար ասվեց, այլև, թե այս գաղափարն ամենից առաջ ինչպիսի մտահղացում, ինչպիսի ծագում և աղբյուր է ունեցել, մի բան, որ կարող է իրականություն, ստուգություն և արդարացում տալ նրան կամ մերժել:

Միստ դրավիչ է եղել բազմաթիվ հեղինակների համար նաև Ժան դ'Արկը ֆրանսիական հերոսուհին. անթիվ բանաստեղծություններ, քերթվածներ և շատ դրամաներ նվիրված են նրան: Համեմատական գրականությունը նրա աղբյուրը, պատմական իրականությունը գտնելուց հետո, պետք է ոչ միայն հեղինակների հոգու և երևակայության կենսագրությունը տա, այլև գծե այն սահմանները, ուր իրական մի փաստ կարող է թափառել գրական և գեղարվեստական

[10] Encyclopédie Larousse. "Roman de la Rose".

[11] Jules Oppert. Le poème chaldéen du deluge. Paris, 1885.

մնալով, և որից դուրս նա դադարում է ստեղծագործություն լինելուց:

Ամեն ազգ և ամեն դրականություն ունի իր ժողովրդական վեպը, իր դյուցազնաշխարհը: Համեմատական դրականության մի բեղմնավոր դաշտ է ներկայացնում ոչ միայն «Սասունցի Դավիթը» իր բոլոր փոփոխանակների հետ, այլև բոլոր դրականությունների, ժողովրդական վեպերի ուսումնասիրությունը լինելու է ապահովաբար լավագույն ճանաչողությունը ժողովուրդների հոգեկան առանձնահատկությունների, պատմական և ընկերային միջավայրի, ստեղծագործական և դեղեցկագիտական կարողությունների:

Համարյա բոլոր ժողովուրդներն էլ ունեն «Ջրաղացպանի, իր որդու և էշի» առակը: Շատ է հայտնի, որպեսզի այստեղ պատմվի: Հասարակաց կարծիքն արհամարհելը նրա հիմքն է և նշանը նրա բուդդայական ծագման[12]: Բայց ամեն տեղ այդ առակը ենթարկվել է ամեն տեսակ փոփոխությունների, երբեմն հայրն է ամենից առաջ նստած էշի վրա, երբեմն որդին, երբեմն առակը սկսվում է հոր, որդու և էշի խելոք և ընկերաբար համփոփությամբ, երբեմն հայրն էլ, որդին էլ սկսում են «ամենամեծ անարգարությամբ» էշի հանդեպ և այսպես տնվերջ: Այս երեք տարրերը, հայրը, որդին և էշը, ինչպես և ճանապարհը ու հասարակությունը կազմում են հինգ դրծոններ, որոնցից կարելի է անթիվ բազադրություններ կազմել: Ու ժողովուրդների ստեղծագործական եռևակայությունը ոչ մի տեղ էլ կանգ չի առել՝ կատարելու այդ բազադրությունները: Համեմատական դրականությանն է մնում այդ բոլորից հանել դեղարվեստական և բարոյադիտական լավագույն կառուցվածքը, ինչպես և օրենքը՝ նման մտահղացումների դրական դեղարվեստական կազմակերպության:

Այս օրինակները որոշ չափով տվին տեսության նկարագրությունը: Սակայն եղրակացությունը և բացատրությունը մնում են դեռ:

IV

Ինչպես ամեն տեղ, համեմատական դրականության մեջն էլ բացատրությունը անսահման դժվարությունների առջև է կանգնած: Գրական դաղափարների ծագման և զարգացման պատճառականությունը իր մեջն ունի առհասարակ պատճառականության բոլոր անկարելիությունները: Հետևելով ոչ այնքան լուծման, որքան հարցադրության պահանջին և դրանից բխող մի շարք դեղարվեստա-

[12] Gaston Pâris. Les contes. etc. S. 18.

կան-գործնական հարցերի արծարծման՝ կարելի է որոշ դրական նգրակացություններ հանել:

Գեղարվեստական ստեղծագործությունն ունի, անշուշտ, իր հայրենիքը, գուցե մարդուց դուրս, ուր իգնալ ձևերի կյանքն է թագավորում: Աշխարհի գեղարվեստական ըմբռնումը, սակայն, իր արտահայտությունների մեջ ցույց է տալիս մարդուն ներակա (immanent) ուժերի ներկայությունը. այսինքն մտապանցական (transcendentale) իրականությունը, որ գտնվում է իգեալ ձևերի հայրենիքում, արտահայտության մի հնարավորություն միայն ունի — մարդուն ներակա կարողությունների կամ ընդունակությունների կիրառումը: Այս երկու տարրերը ֆունկցիոնալ հարաբերության մեջ են իրար հետ, այնպես որ, ինչ որ ըստ երևույթին սոսկ անհատական է և ժամանակավոր, այդպես միայն կարող է լինել ընդհանուր մարդկային և հավիտենական: Լավ կանենք գաղափարների ծնունդը գտնելու և նրանց ոտների տեղը հաշվելու: Այդ անվերջ աշխատանքները մեզ ավելի ու ավելի պիտի համոզեն, որ գաղափարների հայրենիքը, հայրենիքի գաղափար չունի երկրի վրա, որ Հնդկաստանում ծնվածը կարող է միաժամանակ Սենի ափերին էլ ծնվել, որ գաղափարները մարմնանում են՝ առանց ճանապարհներ կտրելու: Պ. Ա. Ջոպանյան առաջինն գտել է, որ Նահապետ Քուչակի «Ես ձագ ծիծեռնակ պիտեի»-ն բառացի նման է Հ. Հայնեի «Ich stehe auf des Berges Spitze»-ին: Անկարելի է ասել, որ Հայնեն ծանոթ էր Քուչակին, որովհետև հայ գրականությունը նույնիսկ Հայնեի մահից հետո է ծանոթացել Քուչակին: Անկարելի է հաստատել նույնպես, որ մի ընդհանուր աղբյուր կա երկուքին համար, որից օգտվել են երկուքն էլ, իրարից անկախ: Ժողովրդական բանաստեղծությունն է, ճիշտ է, երկուքի էլ աղբյուրը, բայց անկարելի է փորձնական մի կապ գտնել գերմանական և հայ ժողովրդական բանաստեղծության մեջ: Փորձնական կապի բացակայությունը, սակայն, չի հերքում արտափորձական կապերի ներկայությունը: Բանաստեղծությունը մարդու կամ ժողովրդի ամենախորը, հոգեկան ներքին կյանքի ապրումներից մեկն է, նա չի կարող փոխադրվել, համբորդել, նա մի տեղում, կամ մի մարդու մեջ, կամ կա, կամ չկա, և եթե կա, այդ էլ ոչ այնքան շնորհիվ անդրադարձող մտածողության, որքան անգիտակից հոգեկան ուժերի գործունեության: Արդ, անգիտակցականը մարդու գիտակցության մեջ ցույց է տալիս անանձնավոր և արտանհատական գոյությունների անձնավորումը և անհատացումը:

Հայտնի է, թե ամենահզբնական ժողովուրդների հոգեկան կյանքն ամբողջ եղել է կրոնական: Շրջապատի հասարակությունն է, որ մարդուն տալիս է իր կենսա և աշխարհահայացքը: Այդ ուժածին և ամենածին աղբյուրը այնքան արտաքին չէ, որքան ներքին՝ հոգեկան՝ անհատական: Արտաքին աշխարհը այն չափով գոյություն ունի, որքան համապատասխանում է ներքին մի գրգիռի: Թեև նախնական մարդու կոպիտ նյութապաշտությունը ներքին ոչ մի բան չի տեսնում, բայց նրա հոգեկան բոլոր արտահայտությունները ցույց են տալիս նրա մեջ նիրհող երկվությունը, նրա էության երկարմատյան հիմունքը, որի անհասկացողությունը ոչնչացնում է անհատականությունը և հրապարակի վրա դնում մի անանձնավոր անհատ, մի տիեզեր արարած: Ուրեմն, մարդու հոգեկան ստեղծագործությունների աղբյուրը ունի երևութական անհատականություն և իրական արատանհատականություն: Ժողովուրդը չի ճանաչում ժողովրդական երգը, գրականությունն է, որ այդ տարրերությունը դրել է: Ժողովուրդը երգը կապում է միշտ մի երգչի հետ, անգամ նրա երգիչը ուրիշից է վերցրել: Նրա նյութապաշտ տեսողությունը ամենայն ինչ դարձնում սոսկ ոչնչությունը, հեղինակ է դարձնում թումանը:

Սակայն ժամանակով և տարածությամբ բաժանված հեղինակները և ժողովուրդները պետք է մի կապ ունենան, մի աղբյուր, որից խմում են նրանք, տարբեր գույն ստանում, բայց վերլուծության տակ մերկանում և նույնանում են: Ստեղծագործությունը կամ անկարելիություն է, կամ մարդու մեջ նիրհող այդ կրոնական ընկերային երկարմատեան ուժերի արտահայտությունն է: Այս տեսակետից, ինչքան որ մի ժողովուրդ բանաստեղծական և գրական շատ գաղափարներ ունենա անվերածելի, ինքնածին և բնածին, որոնք, սակայն, առանց փոխադրության և ճամփորդության, նման են ուրիշ ժողովուրդների ստեղծագործություններին, նույնքան և շատ գտած է լինում նա ճշմարիտ բանաստեղծական մոտիվները: Այդ նշանակում է մտազանցական իրականությունը փոխանակությամբ չի դարձել գերարվեստական իրականություն: Այդ նշանակում է մարդու ներսակա ստեղծագործական կարողությունների ուժը բավարար է եղել իրեալ ձևերի հայրենիքը մտնելու համար: Համեմատական գրականության կապերը, փոխանցումները, ճամփորդությունները և փոխանակությունները հաստատելուց հետո պետք է բացատրել անկապ, ինքնածին, կղզիացած և անփոխանակելի ստեղծագործությունների ծագումը, զարգացումը և աւեղծվածը: Սակայն, այդ կարելի է այն ժամանակ միայն, երբ հաստատվել է որոշապես յուրաքանչյուր ժամա-

նակի և տարածության բնույթը, նկարագիրը, թողած ազդեցությունների որակը և տեսակը այն ստեղծագործությունների վրա, որոնք «գաղթում են», կամ «համփորգում են»: Ինչքան որ այժմ աշխատանքները բացառապես, համարյա թե, այդ վերջին ուղղությամբն են կատարվում, բայց հեռու չէ ժամանակը, երբ Հնդկաստանը ստեղծագործությունների հայրենիքը համարելուց հետո, պետք լինի գուցե նաև Եվրոպան համարել և վերջիվերջո հասնել գեղարվեստական այս արմատական առեղծվածին, որ ստեղծագործությունների հայրենիքը մարդկությունն է, ժամանակից և տարածությունից անկախ, որ նրա հոգեկան կառուցվածքի երկարմատեան բնույթի մեջ պիտի փնտրել աղբյուրն ամենայն ստեղծագործության:

Թողնելով գեղարվեստական-բնագանցական այս առեղծվածները՝ մենք տեսնում ենք, որ համեմատական դրականությունը ավելի գործնական և դրական եզրակացություններ հանելով է զբաղվում: Երբ միևնույն նյութի դրական մշակումը բազմաթիվ հեղինակներ է զբաղեցրել կամ շատ ժողովուրդներ, ամենապարզ համեմատությունն իսկ բավական է բացատրելու ստեղծագործության չոշափելի աղբյուրների հատկությունները և թե ի՞նչ բանի մեջն է կայանում գեղարվեստականությունը և հաջողությունը: Բազմաթիվ հեղինակներ ճգնել են Վարդանանց պատերազմին տալ գեղարվեստական բացատրություններ: Համեմատական դրականությունը մեզ պետք է ասի, թե ինչո՞ւ, մոտավորապես մի տասնյակ հեղինակներ չեն հաջողել տալ այն, ինչ որ ուզում են, ինչ որ նյութն ընդունակ է ստանալու և ինչ որ շատ շատերն սպասում են: Հենց Մեդեայի երկու հարյուր հեղինակների աշխատությունների համեմատությունն է, որ ցույց է տալիս մեզ, թե ինչքան ժողովրդական է Եվրիպիդեսի այդ գործավոր գործը, թե ինչպես ոճիրը կարող է գեղարվեստական ծիրանի հագնել, թե ինչպես ամեն դար կարող է նույնքան ինքնատեղծ և ինքնատիպ լինել միևնույն նյութի մասին[13], թե ինչքան նոր պետք է լինի ամենայն հնություն, որ ուզում է գեղարվեստական դառնալ: Սահմանների մի քիչ ընդարձակումը մեզ թույլ պիտի տա բացատրելու, թե ինչո՞ւ Ջրհեղեղը մի որոշ դարաշրջանի ժողովուրդների մեջ եղել է գլխավոր բանաստեղծական մոտիվը, այն աստիճան, որ սրձանագրության է արժանացել: Եվ վերջապես ամեն գրականության համար հրամայական պահանջն է, ինչպես և ընդհանուր գրականության համար, համեմատական վերլուծության ենթարկել ժողովր-

[13] L. M a l i n g e r. Médée *եր. 398.*

գական վեպերը զանազան բաղակցություններով և գտնել նրանց աղբյուրները:

Լեզվի և մտքի մեջ թագավորում է նույն կապը, ինչ որ գործիքի և գործարանի: Այդ կապը նկատելով է, որ Մաքս Մյուլլերը փորձում է միտքը բացատրել լեզվի լույսի տակ[14]: Համեմատական գրականությունը միայն կարող է մտքի մի ստեղծագործության հնարավոր զարգացումը նկարագրելուց հետո, ցույց տալ ոչ միայն ստեղծողն ստեղծագործության մեջ, այլև ստեղծագործությունը ստեղծողի մեջ: Այսպես է, որ նա կարող է գրական փոքրիկ հարցերի ուսումնասիրությունն այնքան խորացնել՝ հասնելու համար գոյության և ճանաչողության մեծագույն առեղծվածների ուսումնասիրության: Ըստ որում, եթե գրական ստեղծագործությունը մարդու մեջ նիրհող երկարմատիան ուժերի պայքարից է ծնվում, ոչ պակաս նաև ճանաչողությունը, անհատականությունը, բարոյականությունը և մարդն առհասարակ այդ միևնույն էության զանազան ձևափոխություններն են և առանձնահատկությունները:

1917 Վ[արազդատ] Տ[երոյան]

Գեղարվեստ. գրական, գեղարվեստական երաժշտական պատկերազարդ հանդես. խմբագրությամբ Գաբրիէլին Լևոնյանի
1917, № 6, Թիֆլիս, էջ 242–250

[14] Max Müller. Das Denken im Lichte der Sprache, 1888.

ՌԵԳՈՒԼԱՏԻՎ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՌԵԳՈՒԼԱՏԻՎ ԴԵՐԸ ԿՅԱՆՔԻ ՄԵՋ

(Սկզբունքի և Աշխարհայացքի խնդիրներ)

Մարդկանց սկզբունքների և գործերի, նրանց քարոզածի և կատարածի, մտածածի և արածի մեջ եղած հակասությունները նկատած են եղել ամենահին դարերում նույնիսկ: Ոչ թե սկզբունքն է, որ պիտի նկատի ունենալ, այսինքն որոշ պայմաններում տված խոսքը հետագայում չկարողանալ կատարելը, այլ ընդհակառակն, մենք տեսնում ենք միշտ «սկզբունքի մարդիկ», որոնք իրենց քարոզածին հակառակ գործեր են կատարում: Ինչպես նաև նույնքան սովորական է այն երևույթն էլ, որ սիստեմի ամբակուռ կազմակերպության հասած մի վարդապետություն ունենում է տրամադրության իրար հակառակ կանգնած հետևողներ և հետևանքներ: Միևնույն «Աստվածաշունչն» է եղել թե՛ եգիպտական անապատականների և ճգնավորների, և թե՛ միջնադարյան հավատաքննիչների սուրբ գիրքը, ներչնչման և հավատքի, կամեցողության և գործունեության աղբյուրը: Ավետարանի նշանավոր առակը «կեղծավոր փարիսեցու» մասին այդ հակասությունն է մատնանշում, և, սակայն, այդ հակասության անծանոթությունը և անգիտությունը չէր պատճառ, որ ճգնավորը ճգնավոր էր և հավատաքննիչը՝ հավատաքննիչ: Կամ թե այդ չէ պատճառը, որ ամեն ժամանակ սկզբունք ունեցողները ստիպված են եղել իրենց սկզբունքին հակառակ գործեր կատարել, և ընկնել նեղքին ճեղքվածքների, հակադրությունների և հակասությունների մեջ:

Մեր օրերում, ամեն մարդ դիտե արդեն, թե ինչպես են արդարացնում Զինդելի և Բեբելի հարստությունը, անտեսական հավասարությունն քարոզողների տնտեսական անհավասարությունը: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Նապոլեոնը «լեռնականների» (մոնտանեարդ — ներկա բոլշևիկներ) չարքումն էր նստում, երբ դեռ չատ քչերն էին խոսում նրա մասին: Դեռ ռուսական հեղափոխության երկրորդ տարեդարձին չենք հասել, և արդեն անթիվ սոցիալական տարակերպություններ (պարադօքս) մեզ համար իրականության արժեք են ստացել:

Մենք պիտենք արդեն, որ Թուրքիան էլ «ժողովուրդների ինքնըորոշման» համար էր կռվում և ղբաղված էր ժողովուրդները կոտորելով: Գերմանիան համաշխարհային պատերազմն անվանում էր «ժողովուրդներն ազատագրող» (völker befreiende) պատերազմ, որ ինքն էր ձեռնարկել ստրկացնելու համար Բելգիան, Սերբիան, Լիտվան, Լեհաստանը, Կովկասը և այլն, եթե չհաշվենք իր դաշնակիցները: Նեպմիա ազգայնականության այնպիսի օրինակներ են տալիս հռչակված միջազգայնականները, որ դրանց նմանը դժվար է գտնել նացիոնալիստական որևէ տարեգրության մեջ: Անվերապահ բյուրոկրատիզմի տիպարները մենք գտնե այս օրերի դեմոկրատների մեջ միայն տեսանք: Բաքվի քաղաքային դուման ողջունեց կարգուկանոնի և իրավունքի թագավորությունը բերող տաճկական բանակին: Քաղաքացիական իրավունքներից չատերը, որ նույնիսկ ցարիզմը չէր կարողացել խլել, արդեն ոչնչացած են սոցիալիստական պետության մեջ:

Մարդկանց սկզբունքների, աշխարհայացքի և կատարած գործերի մեջ եղած այս հակասությունների չարքը հարելի էր անսահմանորեն երկարացնել, մանավանդ որ պատմության ներկա մոմենտը իր չնչաչափ արագությամբ և ներուժ ապրումներով, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում նրևան է բերում մեր առաջադրությունն արդարացնող և հաստատող բազմաթիվ ովյալներ և վկայություններ: Եվ մարդու մեջ ակամա հարց է առաջ գալիս. ի՞նչն է այս բոլոր հակասությունների պատճառը: Արդյո՞ք կյանքը միայն տեսականորեն ճշմարտություն է ճանաչում, իսկ գործնականորեն սուտ է և կեղծիք միայն: Եթե ամեն մարդ չի կարող իր գործերը համաձայնեցնել իր սկզբունքներին, այն ժամանակ չէ՞ որ կարելի է սկզբունքները հարմարեցնել գործերին և գոնե ներքին հակասություններից ազատվել: Մինչ՞ ազիտությունից կամ անգիտությունից են առաջ գալիս ղրված սկզբունքներ չպահել կամ չհարգելը: Մարդիկ մինչ՞ այդքան կեղծում են և ձևացնում, ուրիշ բան քարոզում և ուրիշ բան կատարում, այսօր այսպես են, վաղն՝ այնպես: Մինչ՞ կեղծիքը և խաբեբայությունը կարելի է անհատներից դուրս խմբակցությունների, կուսակցությունների, ազգերի և պետությունների մեջ էլ գտնել:

* * *

Հարցն այսպես դնելուց հետո մեզ այլևս չի հետաքրքրում նրա լուծումը, որքան մի քանի լուսաբանություններով հարցադրությունն ավելի խորացնելու և հիմնավորելու խնդիրը:

Եղել է մի ժամանակ (XVIII դարի լուսավորության շրջանը), երբ կկղծիքն էլ համարվել է մի բացատրություն: Հայտնի է, թե ինչպես կեղծիք էին հայտարարվում ոչ միայն կրոնի մեջ եղած թերությունները, այլև կրոնն ինքնին համարվում էր մի քանի մարդկանց «հնարած» միջոցը մնացյալ մարդկանց երևակայության և կամքի վրա ազդելու և այդ միջոցով իրենց տիրապետությունն ապահովելու նրանց վրա: Սակայն դա ոչ միայն հնացած է, այլ իսկի բացատրություն էլ չէ: Անկարելի է այդքան անբնականություն տեսնել բնության մեջ: «Կեղծիքն» այնքան խոշոր ծավալով է երևան գալիս, որ անկեղծն ու բնականը միայն բացառություններ մեջ կարելի է գտնել: Այդքան արվեստակյալ չի կարող լինել, սակայն, մարդը, բնության մի կտորը:

Անշուշտ միջավայրը, պատմական, ցեղային և սոցիալական պայմանները մեծ ազդեցություն ունեն թե՛ անհատի և թե՛ ժողովուրդների հոգեկան առանձնահատկությունների վրա: Երևույթների, պատահարների և սկզբունքների ենթակայական ըմբռնումը ինքնահասկանալի է ըստ ամենայնի, բայց բավարար չափով չի կարող լուսաբանել դրված հարցը: Ենթակայական ըմբռնումի կողքին կա առարկայականը, որ հստակ ու պարզ երևան է գալիս ամեն տեղ և իր նույնությունը պահպանում ամեն անգամ, երբ խոսքը խոսք է մնում, և գործը չի գալիս խոսքի անարատությունը եղծանելու: Առարկայական է նույնիսկ այն երևույթը, որ սկզբունքի խստապահանջ գործադրությունը մարտիրոսների մեջ է միայն տեղի ունենում, ուրեմն, չի կարելի ասել, թե կյանքը միայն որոշ անկյունից դիտողների համար է երևում հակասական:

Եթե ընդունենք, ուրեմն, որ սկզբունքի խստապահանջ գործադրությունը միայն նահատակների և մարտիրոսների մեջ է երևան գալիս, չենք կարող, սակայն, ընդունել, թե մնացյալ մարդկանց մեջ սկզբունքները եղծվում, խաթարվում և կեղծիք են դառնում: Ճիշտ այս տարբերությունը պարզ պիտի դարձնել հարցը իր իսկական խորությամբ ըմբռնելու համար: Կյանքի մեջ մենք տեսնում ենք սրինակներ, որոնք իրենց սկզբունքը ոչ մի կերպով չեն զիջում, նրան այլ բովանդակություն և մեկնություն չեն տալիս, իրենց կյանքի գնով նույնիսկ պաշտպանում են նրա սրբությունն ու անարատութ-

յունը, չեն հարմարվում, պատահապաշտ չեն դառնում և իրենց կյանքի յուրաքանչյուր կետը չափում-ձևում են նրա տրամադրությունների համաձայն: Մոլեռանդները պիտի ասեինք դրանց և սկզբունքի մարդիկ: Դրանք չատ փոքրաթիվ են, պատմությունը նույնիսկ հաշվում է դրանց թիվը: Այժմ հայց է առաջ գալիս. եթե դրանք են միայն իրենց սկզբունքներին հավատարիմ, ի՞նչ են ներկայացնում, ուրեմն, մարդկանց այն հոծ բազմությունները, որոնք իմբվել են դանագան սկզբունքների շուրջ: Արդյոք կեղծավորնե՞ր են դրանք և խաբեբաներ, որոնք չկարողանալով մարմնրոտական անդրդվելություն տալ իրենց սկզբունքներին՝ գործեր են կատարում դրանց հակառակ, մի ընթացքի մեջ են ընկնում, որպես թե ոչ մի սկզբունք չունենին: Թվում է, թե մի առարկայական ներհակություն կա սկզբունք և գործ գաղափարների մեջ:

Թեև անկարելի է իր խորությամբ և ընգարձակությամբ քննել այստեղ այդ երկու գաղափարները, որոնք իմացականության և կամքի բոլոր կնճիռները կարող են լուսան բերել: Բայց և այնպես, անհրաժեշտ է նրանց փոխադարձ առնչությունների մասին մի երկու խոսք ասել, հենց մեր նպատակի լուսաբանության տեսակետից:

Կյանքը հաստ է մշտապես (Հերակլիտ, Բերդսոն) և փոփոխվում: Նա ձևերի և կազապարների մեջ դրված առանձնակի մասերից կազմված չէ. պայթելու է պատապարտված ամենայն չրջանակ, որ պիտի կյանքի մի ընդհանրական մասնիկը նույնիսկ պարփակե. մարդը երբեք չպիտի կարողանա դեսի մինչև ջրում լողանալ: Ամեն բան անցնում է և փոխվում. կայունություն չկա դերեզմանի մեջ նույնիսկ: Հյուլեների ամենաբարդ և խոշոր կազմակերպություններից սկսած մինչև հետին մանրադիտական ատոմը — ամեն բան փոխվում է, չարժվում, նոր ձևեր և կերպարանքներ առանձնում, նոր գործեր և ֆունկցիաներ ձեռք բերում և կատարում: Անփոփոխելին և անսասանը այդ չարժումն է միայն, այդ հավիտենական լինելությունը, փոփոխությունը և դառնալը: Միտքն ինքնին նույնիսկ մի չարժում է, և ճշմարտության ամեն մի մեծ հավակնություններ կարող է ունենալ ամենայն միտք, որ իր ներքին էության համապատասխան մի ըմբռնում է տալիս արտամտային իրականության, այսինքն կարողանում է ամեն բանի մեջ չարժում տեսնել և ինքնին չարժում չարժում դարձնել ամբողջ գոյությունը: Այս գաղափարային (conceptuel) և իդեալիստական մոնիզմը հետու է մնում գործնական վհճերից և պայքարներից՝ չարժումի իր առանձնահատուկ բացատրությամբ:

Շարժումը նշանակում է դիրքերի, վիճակների տեղափոխություն, միևնույն տարածության չարունակական և զանազան մասերի գրավում, միևնույն տարածությունը չարունակական այլ ձևերով ուրվագծելու ընդունակություն: Կյանքն էլ իրրև մի չարժում, ոչ այլ ինչ է նշանակում, եթե ոչ զանազան մասերի և զանազան ձևերով գոյության մեջ մտնելու անընդհատական մի լինելություն:

Այդպես է կյանքը և կյանքը գործ է:

Այդպես չէ, սակայն, սկզբունքը և առհասարակ գաղափարը, որ հավակնություն ունի կյանքը վերցնելու, իր մեջ դնելու, պարփակելու, շրջանակներ, սահմաններ և ձևեր որոշելու, վերարտադրելու և ներկայացնելու որպես մշտահոս իրականության նույն պատկերն ու անդրադարձումը: Սկզբունքները կամ գաղափարները արկղերի նման անհաղորդ դասավորություններ են իրարից չատ հեռու և կտրված, ընդունակ արհեստականորեն իրար մոտ գալու և միանալու, բայց երբեք իրար մեջ մտնելու, լուծվելու և թափանցելու: «Մարդագլուխ-օձ» կարող է գոյություն չունենալ իրականության մեջ, բայց հեշտությամբ երկու գաղափարները իրար մոտ եկան և մի ֆանտաստիկ պատկեր կազմեցին: «Սոցիալիստ-բյուրոկրատ» երկու գաղափարների ինքնատիպ չնչացմամբ ստեղծված մի համադրություն է, որ կարող է պայթեցնել մեր տրամաբանության երկաթը նույնիսկ, բայց իրականության մեջ կարող են հազվադյուտ չլինել սոցիալիստ-բյուրոկրատներ:

Ահա թե ինչպես է, որ հոսող իրականությունը կարող է նահատակվել, չարչարվել և այլանդակվել այսպես կոչված սկզբունքների և գաղափարների դրոշմի տակ: Եվ ինձ թվում է, թե գործի և սկզբունքի մեջ եղած դարավոր հակասությունները անկարելի է հասկանալ, եթե այսքան արմատական և փիլիսոփայական վերաբերմունք ցույց չտանք նրանց ներքին էությունը հասկանալու համար:

* * *

Մարդկանց գործերի և սկզբունքների մեջ եղած հակասությունը ոչ թե մարդուն է հատուկ, այլ գործին և սկզբունքին: Անկարելի է սկզբունք ուննենալ և գործ կատարել միաժամանակ. մի օր կպայթեն սկզբունքները և գործ կատարող անձնավորության չարունակական զարգացումը երբեք չի դադարի գործեր կատարելուց, որովհետև դրանք կարող էին հակառակ լինել իր սկզբունքներին: Ով որ ուզում է բարոյական ներքին հակասություններից չտառապել, նա ամեն օր ինքն իրեն պիտի հաշիվ տա և ամեն օր էլ պիտի զղջա իր կատարած

գործերի համար: Հավատարմությունը, եթե բարոյական մի մաքսիմ կարող է լինել, ապա, ուրեմն հավատարմություն չի պահանջվում այլևս ուրիշի հանդեպ, այլ անձնավորություններին և էակների հանդեպ, մարդը պետք է հավատարիմ մնա ինքն իրեն: Ահա բարոյական օրենքը բոլոր նրանց համար, որոնք կարող են քաջություն ունենալ սկզբունք ունենալու: Որովհետև սկզբունքի լայն հասկացողությունը իր հետ բերում է մի ամբողջ սիստեմ սկզբունքների, այդ պատճառով էլ սկզբունք ունենալը այստեղ նշանակում է աշխարհայացք ունենալ: Մեր գործերի մեջ անհրաժեշտաբար պիտի առաջ գա սկզբունքի մուտացումը, չեղումը և հարպանքի պակասությունը: Գործի էությունից է բխում այդ, որ ամեն անգամ նոր ձևերի, շրջապատի, նոր անձնավորությունների և հանգամանքների, նոր նպատակների և պայմանների մեջ պետք է երևան դա և անհրաժեշտաբար նոր վերաբերմունք պահանջի: Վերաբերմունքի նույնությունը ամեն տեսակ պայմաններում կլիներ գործի անհաջողությունը և դատապարտությունը: Իսկ մեր օրերում ոչ ոք չի հավատում, թե մեկը կարող է ցանկալ, որ իր գործն անհաջող լինի: Կամեցված անհաջողությունը դուցե մի բարոյական բարձր առաքինություն է, բայց ոչ այս աշխարհից:

Իրականությունը շատ քչերն են այսպես պատկերացնում: Ընդհակառակն ամեն մարդու մեջ կենդանի է մի պնդապլուխ համառություն, որ միայն իր սկզբունքներին է վերապահում հարապատության, իսկության և ճշմարտության վառքը: Միայն ես և իմ կուսակցությունն ենք սոցիալիստ, բոլոր մնացյալները կեղծավորներ են, հերձվածողներ և սխալվողներ: Սակայն, եթե այսպես չդատեին, ոչ մեկն էլ ընդունակ պիտի չլիներ որևէ գործ կատարելու: Ճշմարտության ուժածին աղբյուրը մեզ համար պետք է չցամաքի նույնիսկ այն ժամանակ, երբ մենք սխալվում ենք և չեղվում մեր ճշմարտությունից:

* * *

Բայց իրականությունը շատ քչերն են այդպես պատկերացնում նաև ուրիշ պատճառով: Մինչդեռ ամեն մարդ սկզբունքներին տալիս է բավկացուցիչ (constitutif), կազմակերպող մի նշանակություն, այսինքն սկզբունքներին վերագրվում է մի հատկություն, որով նրանք մարդկանց գործերի բովանդակությունն են որոշում, նրանց հնարավոր կերպարանքը, յուրաքանչյուր դեպքի մասին ունենալիք վերաբերմունքը: Այդպես չի կարող լինել, սակայն, սովորական

կյանքի մեջ. այդպիսի սկզբունք միայն հակասություններ կարող է առաջ բերել: Ընդհակառակն, մենք մեզ հետ հաշտվում ենք և միաժամանակ հասկանում բոլոր մեծ սկզբունքների, աշխարհայացքների և վարդապետությունների չարաշահությունները, սկզբունքի և դրծի մեջ եղած հակասությունները, երբ այդ սկզբունքներին տալիս ենք ոչ թե բաղկացուցիչ բովանդակություն, այլ կանոնավորող (regulatif), առաջնորդող նշանակություն:

Ռեգուլատիվ գաղափարների արժեքը կյանքի մեջ մեծանում է չափազանց: Նրանք բովանդակություն չունեն, որպեսզի կյանքի մեջ, մի գործի հանդեպ գալիս, հակասություններ ստեղծեն: Ոչինչ չկա նրանց մեջ կոնկրետ և որոշ, որպեսզի ընդհարվի իրականության որևէ մասի հետ: Ճուտ ձևի և հնարավոր գործի պատրաստի չրջանակը կարող են լինել նոքա՝ մշտապես ձևափոխվելու և կերպարանափոխվելու ընդունակ: Բոլոր իդեալները մի-մի տեսակ ռեգուլատիվ գաղափարներ են, միշտ հարմարվող ժամանակին, միշտ փոխվելու և կատարելագործվելու ընդունակ: Իբրև ճուտ ձևի մտային արտահայտություն նրանք բովանդակություն չունեն, բայց ավելի ճիշտ կլիներ ասել, նրանք բազմաբովանդակ են: Ոչ մի բովանդակություն չի կարող նրանց վերջնական ձևը լինել: Ընդհակառակն, ամենայն բովանդակություն իր սկզբնական և հնարավոր ձևերից շատ բաներ է կորցնում՝ նրանց մեջ մտնելով: Սկզբունքներից տարբերվում են նրանք հենց այս պատճառով էլ, որ նրանք իրական են, սրանք՝ իդեալական, նրանք կոնկրետ, սրանք՝ վերացական, նրանք՝ հաստատուն, սրանք՝ մշտափոխ, նրանք՝ նյութական, սրանք՝ անկյութ: Առաված գաղափարը անթիվ սկզբունքներ է պարունակում իր մեջ, որոնցից և ոչ մեկն էլ, սակայն, չի կարող ռեգուլատիվ լինել ինքնին: Սակայն այդ գաղափարը առանձնապես ռեգուլատիվ է փիլիսոփայության ամենախոշոր կնճիռների համար, սկզբնավորության, վախճանի և պատճառականության բոլոր առևդծվածների համար՝ որոշ տեսակի փիլիսոփայության մեջ: Որոշ տեսակի աստրոպրություններ կարող են և հաճախ եղել են ռեգուլատիվ գաղափարներ այս կամ այն փիլիսոփայի համար: Բայց էվոլյուցիոնիզմը նույնպես մի ռեգուլատիվ գաղափար է, մանավանդ վերջին ժամանակների գիտնականների և փիլիսոփաների համար: Եվ եթե այս ռեգուլատիվ գաղափարների կիրառումները որոնենք փիլիսոփայության մեջ, միշտ էլ պիտի տեսնենք, որ նրանք անբովանդակ, բազմաբովանդակ ձևեր են միայն՝ տեսակետ, տեսողության անկյուն, ուղեցույց, բայց ոչ ճանապարհ, առաջնորդ, բայց ոչ նպատակ: Սկզբուն-

քի հետ ունեցած այս տարբերությունն է, որ պրկում է սկզբունքին աշխարհայացք դառնալու ընդունակությունները և ընդհակառակն մեծ նմանություններ է առաջ բերում աշխարհայացքի և ռեգուլատիվ գաղափարների մեջ: Բայց ոչ թե այս վերջիններին ներքին կառուցվածքն է այդ նմանության հիմքը, այլ ընդհակառակն՝ նրանց կիրառումը: Որովհետև մատերիալիստական կամ իդեալիստական աշխարհայացք չատ ավելի ճիշտ կլիներ ասել թե մի սկզբունք է: Սակայն, չունենալով սկզբունքի հաստատունությունը, կայունությունը և բավանդակությունը՝ այդ աշխարհայացքները ավելի շուտ ռեգուլատիվ գաղափարներ են, անձև ու անբովանդակ՝ թույլատրելով որ իդեալիստական մեծ տարրեր հանդիպեն այսպես կոչված մատերիալիստների հայացքների և դործերի մեջ, փոխադարձաբար:

Ինչքան քիչ են ռեգուլատիվ գաղափարները պիտության և փիլիսոփայության մեջ, նույնքան և չատ են սովորական կյանքի մեջ, ուր ճշմարիտ ռեգուլատիվ գաղափարի բացակայությունը ռեգուլատիվ գաղափար է դարձնում ամենահասարակ սկզբունքն իսկ: Այսինքն, երբ մտքից ավելի բարձր իրականության մի պատկեր անհրաժեշտ է դառնում մեր հայացքների, հավատալիքների և ապատումների ուղղության համար, մենք մտապատկերում ավելի ճիշտ ըմբռնում ենք մի իդեալ, մի բազմաբովանդակ ձև, որի մեջ դնում ենք այն, ինչ որ կոնկրետ իրականության մեջ չենք կարողանում գտնել: Սակայն չատ հազվագյուտ պետք են դալիս մեզ դրանք, որովհետև մենք միշտ զբաղված չենք բարոյականության վերջին հիմունքը որոնելով, կամ սկզբնավորության, վախճանի և պատճառականության բացատրություններ տալով: Ընդհակառակն սովորական կյանքի մեջ որևէ սկզբունք չատ հեշտ դառնում է մի իդեալ և իբրև այդպիսին՝ անբովանդակ մի ուղեցույց, որ գործերի անթիվ հակասություններից մեզ տանում է ողջ և առողջ մեր ուզած նավահանգիստը: Ճանապարհի խութերը և խորդուբորդները այլևս դազարում են հակասություն կոչվելուց և անհատի, ինչպես նաև խմբակցությունների ու ժողովուրդների համար իդեալի որոնումը կարող է դեմոկրատական անունը կրել կամ բյուրոկրատական, սոցիալիստական կամ բուրժուական և այլն, և այլն: Իրականությունը ոչնչով չի փոխվի. նպատակը և նպատակահարմարությունը ձեռք ձեռքի տված առաջ են գնում, լայնացնում են մեր տեսողության անկյունը, մեզ միշտ հավատարիմ պահում մեր սկզբունքներին և մեզ հետ:

Բայց երբ ռեգուլատիվ գաղափարներին տալիս ենք կոնկրետ և ոչ բովանդակություն, այն ժամանակ նրանք կորցնում են հնարա-

վոր ձևերի ճկունությունը, քարանում, կողմեր, անկյուններ կազմում, որոնց մեջ բացի ընդհանրապես ճանաչված բովանդակությունից ուրիշ բան չի կարելի դնել:

Ամեն մարդու համար գրեթե սկզբունքները ռեգուլատիվ գաղափարներ են: Բայց ինչ որ ուրիշի համար ռեգուլատիվ գաղափար է, ինձ համար գաոնում է մի որոշ և պարզ սկզբունք, ինչ որ ուրիշի համար երբեք էլ հակասություն չէ, ինձ թվում է հակասությունների մի խառնարան: Իմ սկզբունքները ինձ համար անբովանդակ ձևեր են, որոնց մեջ ես դնում եմ ինչ որ իմ կողմից իրրև գործ կատարվում է: Սակայն իմ սկզբունքները չունեցողները իմ սկզբունքների մեջ որոշ բովանդակություն են դնում և աննկելի համարում այն ազատությունը, որով ես իմ սկզբունքներին իմաստ և բովանդակություն եմ տալիս: Այսպես ահա. երբ սկզբունքների հավատարմության հակոդությունը ուրիշին է անցնում, այն ժամանակ անհասկանալի են մնում մարդկանց գործերից շատերը: Սոցիալական տարակերպությունները, ըստ մեծի մասին, սրանից են առաջ գալիս: Ինչ որ միայն ռեգուլատիվ գաղափար է ինձ համար, ուրիշների կողմից նկատվում է որպես մի որոշ և պարզ սկզբունք:

* * *

Ինչպես ասացինք արդեն, ռեգուլատիվ գաղափարները դիտության և փիլիսոփայության մեջ հազվագյուտ են, այնտեղ նրանք որոշ դեպքերում գաոնում են անհրաժեշտություն և անհատականության ու անձնավորության ամբողջացման նպաստում, ինչպես նաև սկզբունքների և աշխարհայացքի վերնաշենքը լրացնում և ամրապնդում: Շատ քչերն են մինչև այդտեղ հասնում, այնպես որ միշտ էլ անհրաժեշտ չեն լինում ռեգուլատիվ գաղափարները: Մի բարձրագույն «սկզբունք», որ բոլոր սկզբունքները իր մեջ պարունակի, որից բխեն բոլոր մնացյալները, որ բոլորի բովանդակությունը լինի և լրացումը միաժամանակ, այդպիսին անկարելի է կոնկրետ և շոշափելի իրականության մեջ դանել: Նա մի տեսակ բնազանցական գործիք է, որ շատ քիչ դեպքերում անհրաժեշտ է գաոնում և ոչ մի դեպքում էլ մեր գործերն արդարացնելու կոչված չէ: Ահա այստեղն է, որ հակասությունները (գործի և սկզբունքի) մեկ կողմ թողնելով պիտի որոնել, թե ինչքան իրավացի է ռեգուլատիվ գաղափարների այդպիսի կիրառումը: Այս նոր հարցն էլ մենք դժվարանում ենք արմատական քննության ենթարկելու. միայն թե, արծարծելով նրա

դլխավոր խնդիրները, մեր սկզբնական հարցադրությունն ենք ուզում մի քիչ էլ լուսաբանել:

Եթե հնարավոր չլիներ սկզբունքներին տալ այնպիսի բազմաձևություն, ճկունություն և առաձգականություն, այն ժամանակ մարդիկ կամ պիտի ոչ մի սկզբունք չունենային, կամ թե սկզբունք ունեցողները մարտիրոսներ պետք է լինեին: Իսկապես երկու անկարելիություններ:

Նախ և առաջ սկզբունք չունենալը առանց այն էլ մի բարոյական ախտավորության է հասած այսպես կոչված սկզբունքի տեր մարդկանց մեջ: Բայց, եթե ընդունենք, թե դրանք էլ մտնում են նրանց չարքը, որոնց համար սկզբունքները միայն ռեգուլատիվ դատափարներ են, այնուամենայնիվ անկարելի է ասել, թե բարոյական և կրոնական մեծ վարդապետություններըը, սոցիալական և տնտեսական ուղղություններըը, մեկ խոսքով կուսակցություններըը և խմբակցություններըը հնարավոր կլինեի՞ն առանց սկզբունքների: Դրա պատասխանը պարզ է: Պարզ է, որ քաղաքակրթության մեջ մեծ առաջադիմություններ ենք պարտական զանազան տեսակի դատափարներին և սկզբունքներին, որոնք կյանքի մեջ են մտել, ուժ և ազդեցություն են ձեռք բերել չնորհիվ այն հանգամանքի հենց, որ սկզբունքներ են եղել և դրանով էլ կարողացել են մարդկանց բազմություններ տանել իրենց ետևից և առաջ բերել պահանջված չարժումներըը և փոփոխություններըը: Մեկ կողմից, ուրեմն, անկարելի է հրաժարվել սկզբունքներից, մյուս կողմից էլ անկարելի է նրանց այնպիսի քարացում, ձևակերպումն և անկյունավորումն տալ, որ նրանք միայն մարտիրոսներին հատուկ լինեն: Մարտիրոսները բացառություններ են, և այդպես է նրանց արժեքը, որ նրանք ընդհանուր չեն: Նախ, անկարելի է բոլոր մարդերից պահանջել, որ մարտիրոսներ լինեն. և եթե մի այդպիսի պահանջ կատարվի էլ, այն ժամանակ արդյոք կանգ չի՞ առնի կյանքը զանազան քարացած սկզբունքների և ֆորմուլաների մեջ, հնարավոր կլինի՞ առաջադիմությունը, նոր սկզբունքների ծնունդը և հների մահը, ժամանակին, տարածության և պայմաններին հարմարվելը, մի խոսքով չարժումը, փոփոխությունը և առաջադիմություն: Ինքնահասկանալի է, որ մարտիրոսների մոլեռանդություններըը, չնչին սկզբունքների ուժածին արժեքը և ոչ սկզբունքի մեծությունը, նպաստում է որոշ չափով նրա հաղթանակին: Բայց կասկածելի է, թե մարտիրոսներըը պիտի ուղեղային նորից մարտիրոսանալ՝ իրենց սկզբունքների հաղթանակից հետո:

Այսպես ահա, թե սկզբունք չունենալը և թե սկզբունքի խստապահանջ և մոլեռանդ գործադրությունը հակառակ են մշտահաս կյանքի հավիտենական չարժման: Կյանքի մեջ այդ ծայրահեղությունների համար տեղ կա, բայց միայն հիվանդանոցներում: Ընդհակառակն լայն ու արձակ է տեղը նրանց համար, որոնք իրենց մտքի և հոգու լայնության կնիքն են դնում իրականության ձևերի և չափերի վրա, ընդառաջ գնում ընկերային վիճակի ստեղծած հրամայականներին և սկզբունքի պաշտամունքը դարձնում սկզբունք չունենալու չափ ազատ և սկզբունք չունենալու ազատությունը դարձնում մի սկզբունք: Եվ, երբ պետք է ազատվել սրանցից էլ, այն ժամանակ մնում է ապաստանել սովորական կյանքի առօրյա պատվիրաններին և թողնել, որ մեր բարձրագույն իդեալը իջնի փոքրիկ, գործնական սկզբունքների մեջ, նրանց տա իր մեծության, լայնության և խորության ճկունությունը և փրկե մեր հակասությունները գոնե մեր աչքերում:

Թիֆլիս, 13 նոյ[եմբերի] 1918 Վ[արազդատ] Տ[երոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ԷՎՈԼՅՈՒՍԻՈՆԸ

ԿՅԱՆՔԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

I. Էվոլյուսիոնի պատմականը և փիլիսոփայական խնդիրը.— II. Սպենսերյան էվոլյուսիոնիզմը.— III. Գիտությունն և փիլիսոփայությունը.— IV. Էվոլյուսիոնի հիմնական դծերը.— V. Բնազդ և իմացություն.— VI. Նյութականություն և մտավորություն.— VII. Կյանքի փիլիսոփայությունը.— VIII. Շարժումը և լինելությունը.— IX. Ընդհանուր հայացք:

Նախաբան

Հաղթական Ֆրանսիայի դեկավարող մտավորականությունը վերջերս չատ է հալածում Հանրի Բերգսոնին՝ համարելով նրան «վերմանատեր» և «պարտվողական» հոսանքին համակիր: Նրա խորը թափանցող մտածողությունը և լայնածավալ աշխարհայացքը չէր կարող անվերապահ բախտավորություն տեսնել հաղթության մեջ, ոչ էլ անպարմանալի կորուստ՝ պարտության մեջ: Գերմանիայում լիներ նա, թե Ֆրանսիայում, ճշմարտությունը չէր կարող փոխվել նրա համար: Այս դիրքը միայն բավական է պարզորեն ցույց տալու, թե ինչո՞ւ է նա հալածվում, անգամ եթե այժմ տեղին չհամարենք տալու այդ երևույթի մանրամասնությունները: Ըստ որում, այն բացառիկ դիրքը, որ նա բռնել էր պատերազմի ընթացքում, պատերազմից հետո և նրանից բխող համաշխարհային սոցիալ-քաղաքական հարցերի պարզաբանության և լուծման մեջ, նրան հեռացնում է սովորական մտածողության չլինելիից և սերտորեն կապում իր հոյակապ փիլիսոփայության հետ:

Դժվար է ասել, թե կանտից հետո մարքի աշխարհում ավելի մեծ հեղաշրջում կատարվել է, քան ինչ որ բերել է Հ. Բերգսոնը, ոչ միայն իր մտածողության խորությամբ և ընդարձակությամբ, այլև իր սիստեմի, աշխարհապատկերի և կենսահայեցողության նորությամբ, ուժգնությամբ և անհակասականությամբ: Եվ, սակայն, ոչ մի փիլիսոփայական սիստեմ այնքան իր ժամանակի ծնունդը չի կարող

համարվել, որքան բերգսոնիզմը: Մեր դարում իշխող ընդհանուր սոցիալ-տնտեսական տրամադրությունները, որոնք փիլիսոփայության մեջ արձագանքվել են որպես ըլատիվիզմ և արտոլյուտիզմ, պրագմատիզմ և պսիխոլոգիզմ, սոցիոլոգիզմ և սոլիպսիզմ— նրա մեջ ստացել են յուրահատուկ մի կերպարանք ու կառուցվածք՝ դարձնելով մեր ժամանակի պրոբլեմները փիլիսոփայության համար մշտական ու հավիտենական առեղծվածներ:

Ներկա հոդվածով մենք պիտի փորձենք հասկանալ ու ներկայացնել Հ. Բերգսոնի «Ստեղծագործող էվոլյուցիան» հենց իր բառապիտությամբ և այն չնչով, որ բնորոշում է ամբողջ նրա փիլիսոփայությունը՝ ավելի ձեռնահասներին թողնելով նրա քննադատությունը:

Ինչպես պիտի տեսնե ուշադիր ընթերցողը, Բերգսոնի դիրքը հեղուտությամբ չի կարելի որոշել՝ այս կամ այն ուղղության տակ դնելու համար, ոչ միայն, որովհետև «բերգսոնիզմ» արտահայտությունը ինքնին բավական է արդեն որոշելու նրա յուրահատուկ տեղը թե՛ ժամանակակից և թե՛ ընդհանուր փիլիսոփայության մեջ, այլև տեսակետի ու դիտողության անկյունի այն բացառիկ դիրքը նրան հեռացնում է հավասարապես սովորական նյութապաշտության և հասարակ ոգեպաշտության ծայրամասերից՝ մոտեցնելու համար թե՛ այս և թե՛ այն ավելի մեծ ճշմարտության ու ավելի շատ իրականության: Սա ամենալուրջ փորձն է գուցե, ազատագրելու իրականության ընդհանրացումները ընդհանրացումների իրականությունից, և իբրև այդպիսին՝ մեզ ավելի մոտեցնելու ճշմարտության թե՛ բնության և թե՛ կյանքի մեջ: Ըստ որում Բերգսոնի աշխարհայեցողությունը նաև կենսահայեցողություն է[1]:

I.

Փիլիսոփայական խնդիրը.— *Քսաներորդ դարը ժառանգել է մի փիլիսոփայական խնդիր, որ ծնվել է տասնվիններորդ դարի երկունքներից: Հետ-կանտյան փիլիսոփայությունը վերջացող դարի 30-ական թվականներին ցույց էր տալիս բարձունքին հասնողի հոգնածությունը և ուժասպառությունը: Իրականության և գոյության արմատական, իրական և ճշմարիտ ըմբռնողության ջանքերը կատա-*

[1] *Ավելորդ է կրկնել, թե չեմ հիշատակելու միշտ նրա բառապիտությունը և ցուցմունքներն ավելի շուտ առաջնորդելու համար են: Տե՛ս* Henri Bergson. L'Evolution Creatrice. Paris. F. Alcan. 1913. 14. *Տպագրությունը թարգմանված է ռուսերենի:*

րել էին հնարավոր թռիչքները կանոն բացած հորիզոններում: Վերլուծության և համադրության ամեն տեսակ փորձերն արվել էին և, սակայն, թվում էր, թե ամեն բան դեռ մնում է ուսումնասիրելու և չուսումնասիրված վիճակի մեջ: Այդ պահանջը դպալի է դառնում մանավանդ, երբ գործը կատարվել, վերջացել էր, այսինքն, երբ կարելի էր ամբողջությունը տեսնել, երբ սիստեմների սիստեմն էր դրվում հրապարակի վրա, որովհետև, իսկապես հետ-կանտյան փիլիսոփայությունը ներկայացնում էր սիստեմների մի ամբողջություն: Առանց, սակայն, նույնիսկ թվելու այն թերությունները, որոնք կարող էին նոր որոնումների կարիքն զգացնել, բավական է մի ընդհանուր հայացք այդ ամբողջության վրա՝ նկատելու համար իսկույն, որ հաղթողները ոչնչով տարբեր չէին պարտվողներից, որ նոր կառուցած սիստեմները շատ նման էին այն ավերակներին, որոնց վրա իրենք հիմնվել էին: Այդ ընդհանուր հայացքն է, որ մեզ ցույց է տալիս սիստեմներ չինելու, կառուցանելու ախտավոր հակումը, որ հատուկ է բոլորին էլ: Անշուշտ, պահանջ պետք է լիներ իրականությունը մեկնաբանել՝ առանց կառուցանելու: Այդ ընդհանուր հայացքն է, որ մեզ ցույց է տալիս ջախջախված մեքենականության ատաղձը նոր կառուցվածքներում: Անշուշտ, պահանջ պիտի լիներ իրականությունը բացատրել մի դիտության, որ ճշմարտապես ազատված լիներ մեքենականության անկենդանության: Այդ ընդհանուր հայացքն է վերջապես, որ մեզ ցույց է տալիս մի համատարած կամայականություն մտքի և կամքի թռչտվորության մեջ: Անշուշտ, պահանջ պետք է լիներ մի դիտության և փիլիսոփայության, որ կամայականության օրենքը տար:

Լուծման փորձը.— Նախքան խնդիրն իր ամբողջությամբ հասկանալն և ուսումնասիրելը՝ փիլիսոփայությունը անցնում է մի ծանր անհետաքրքրության և կայունության շրջան, երբ կատարվում է մի անուղղակի աշխատանք դեպի ուղիղ ճանապարհը: Փորձառական դիտությունների ուսումնասիրությունները, ինչպես և դրան հետևող նոր փիլիսոփայությունը անդիտակցաբար, կարելի է ասել, ճանապարհ պատրաստեցին այն առեղծվածների համար, որոնց դոյությունն էր միայն մատնանշել կանոը: Բարոյական դիտությունները, հոգեբանության վերլուծությունները, սաղմնաբանությունը, մանրէաբանությունը և այլն, և այլն, զգացնել էին տալիս կյանքի և դոյության մի այլ տեսակի փիլիսոփայություն, որ պետք է նոր ստեղծել, նոր աշխատել և ուսումնասիրել: Դրանով պետք է բացատրել այն մեծ հաջողությունը, որ ձեռք բերեց անմիջապես ապենսեր-

յան էվոլյուսիոնիզմը, և որ դեռ որոշ տեսակի միջավայրերում իր համայքից ոչինչ չէ կորցրել: Դա խոստանում էր, առաջին բերան, գծագրել այն ճանապարհը, որ կտրում է նյութը՝ հասնելու համար ինքնակամ շարժումների և զգայականության և այն, որ կտրում է ոգին առհասարակ, հասնելու համար բանականության: Դա խոստանում էր տալ ներքին ու արտաքին հարաբերությանց այն անթիվ աստիճանավորումները, որոնք պայմանավորում են գործարանավոր մարմինները, և այլատարրի վերլուծությունները առաջ մղել այնքան, որ կարելի լիներ գտնել գուտ միատարր իրականություններ: Հակայական սիստեմների դեմ պայքարի կանգնած՝ Սպենսերը հեշտությամբ որդեգրեց այն, ինչ որ ինքն ձեռնարկում էր ջախջախել միայն: Նա էլ սկսեց կառուցանել, դասավորել և համակարգել, ոչ թե իսկապես, ինչպես որ ինքն էր կարծում՝ գուտ միատարրից, այլ դեռ չզարգացածը դեռ չզարգացածի հետ: Դրանով մի ցանկություն միայն եղավ՝ առաջ գնալու, բայց մի գործունեություն եղավ՝ նորից կանգ առնելու հին ուղիների և սիրելի հիշատակների վրա: Էվոլյուսիոնիզմը հղացվեց, բայց առանց հետևողական չարունակության:

Բերգսոնը.– Ճշմարիտ էվոլյուսիոնիզմը երևան է գալիս Հանրի Բերգսոնի փիլիսոփայության մեջ միայն: Առանց առաջադրությունների, որ իր քննության բովից չեն անցել, առանց նախապաշարումների, թե փորձը փորձով պիտի ապացուցանել, խիզախ հպատակմամբ ընդգկում է նա կյանքն ամբողջ և ձեռնարկում գոյության ամենաստորրական ու ամենահիմնական վայրկյանը վերլուծելու: Իրականության թափանցողության համար նա չի խուսափում բնազանցականն մտաշխատանքից, և ըստ ամենայնի մարդու ճանաչողական ուժի մեջն է որոնում ճանաչելու առարկաները: Վերլուծությունը նրա համար հանճարի թափանցողությունն է, այդ պատճառով էլ նա շատ քիչ բաներ է գտնում վերլուծելու: Գծագրելով կյանքի ամենախորը փիլիսոփայությունը՝ նա հոգեբանական բացատրություն է տալիս նյութականության, և իրերի ներքնապես տևողությունն է բռնում ուսումնասիրելու: Փաստերի ոչ թե ընդարձակությունը, այլ խորացումն է փնտրում նա և շարժումը դարձնում է իրերի ենթանյութն (substratum) իսկ: Ժամանակի ստեղծագործական հատկությունը վեր հանելով և դրա ու տարածության հոգեբանական էությունը հիմնավորելով գիտակցության մեջ՝ նա մի անհակասական տեսություն է տալիս թե՛ նյութականության և ոգեկանության, և թե՛ պատճառականության: Նա որոշակի բաժանում է. ճանաչել՝ գործելու և ճանաչել՝ ճանաչելու համար հոգեկան մեր գործառնությունները, և այդ-

պես էլ հիմնավորում է իր զուտ մատհայեցողական և պրագմատիստական դիտութիւնը: Նրան անհրաժեշտ չեն ո՛չ բույսերի, ո՛չ էլ կենդանիների դասակարգութիւնները՝ բռնելու համար էվոլյուտիվ չարժումը: Կյանքը, իր ամենատարրական արտահայտութիւններից սկսած, մինչև իր ամենաբարձրագույն ձևակերպումները, ներկայացնում է էվոլյուսիոնի մի հսկայական գնացք, որ իր սկզբնական գարկից մինչև իր հնարավոր թավալումները, դառնում է լիմանալի և բանավարական՝ նրա քննող և թափանցող հայացքի տակ:

II

Էվոլյուսիոնի հնարավորութիւնը.— *Ի՞նչպես հնարավոր է էվոլյուսիոնը. ահա քաններորդ դարի ժառանգած փիլիսոփայական խնդիր-պարտականութիւնը: Անվիճելի է, որ եթե առաջադիմութիւն կա, այդ լինում է՝ մի «վիճակից» մյուսն անցնելով, այդ լինում է փոփոխութիւնով, չարժումով, ձևերի չարունակական կերպարանափոխութիւնով, որ հնի վրա ցույց է տալիս նոր հնարքներ և գծեր, նոր գործարաններ և գործառնութիւններ: Ըստ երևութին կարելի է ամբողջ էվոլյուսիոնը բացատրել, եթե հնարավոր լինի մեր օրերում ապրող ամբողջ կենդանականութիւնը, հետզհետե մերկացնելով իր բոլոր հատկութիւններից, գտնել վերջիվերջո գոյութեան այն ձևը, որ անփոփոխելին է, որից առաջ են եկել մնացյալ բոլոր ձևերը: Այսինքն, որովհետև մեզ տրամադրելի իրականութիւնը այլատարր է, պետք է գտնել զուտ միատարր իրականութիւնը, որովհետև այլատարրը միշտ ներկայացնում է արդեն փոխված և հեղաշրջված մի գոյութիւն: Մինչդեռ միատարրը ամենասկզբնական տեսակը կլինի, որից պետք է առաջ եկած լինեն բոլոր այլատարրները ու տեսակները և այդպես էլ ընթացավ իսկապես կենսաբանական էվոլյուսիոնիզմը՝ Դարվինի մոտ՝ սոսկ կենդանաբանական, Սպենսերի մոտ՝ նաև փիլիսոփայական հիմունքներով:*

Կենսաբանական փաստերը.— *Ճիշտ հղացված և սխալ առաջնորդված սպենսերյան և առհասարակ կենսաբանական էվոլյուսիոնիզմը ցույց է տալիս մի շարք գործոններ և պայմաններ, որոնց մեջ հնարավոր է դառնում փոփոխութիւնը և չարժումը: «Տեսակների զարգացումը» կատարվում է՝ միջավայրին հարմարվելով, գործնական կյանքի պահանջներին (գոյութեան կռիվ) հալեցնելով, կամ տեղի տալով, պատահաբար ստացած մի ընդունակութեան ժառանգականութեամբ, ուժեղների ապրելով և թուլերի մահով: Որոշ գործառնութիւններ կամ պահանջներ ստեղծում են որոշ գործարաններ.*

հանկարծական և կոպիտ փոփոխություններն էլ որոշ չափով ազդակներ են զարգացման: Թռանսֆորմիզմն ու նոր-դարվինիզմը դեռ երկար կվիճեն ապացուցանելու ժառանգականության դերը էվոլյուսիոնի մեջ: Անլուծելի մի համառությամբ, սակայն, էվոլյուսիոնը պիտի մնա առեղծվածների առեղծվածը, քանի որ ուշադրությունը չի կենտրոնացած այն վայրկյանի վրա, որ փոփոխությունն իսկ է, նրա վրա, որ ոչ թե վիճակից վիճակ անցնելն է, այլ այդ անցումը միայն, այն տևողությունը միայն, որ ո՛չ նախկին վիճակն է, ո՛չ էլ նոր վիճակը, նյութի այն ներքնապես ապրումը, որ երբեք վիճակ չէ, կայունություն չէ, քարացում չէ, այլ հարափոփոխ չարժում, մի մշտական ստեղծում, մի հավիտենապես նոր հնություն:

Ուղղությունների ըմբռնումը Սպենսերի մոտ.– *Անհերքելի է, որ ապրող, կենդանի նյութը ներկայացնում է երեք կերպարանքներ, նիրհ (torpeur), բնազդ (instinct) և իմացականություն (intelligence): Կեղծ էվոլյուսիոնիզմը դրանց ներկայացնում է որպես միևնույն էության երեք աստիճանավորումները՝ առանց ըստ էության տարբերության: Եվ միջավայրն ու վերոհիշյալ ազդակները, որոնք պայմանավորում են զարգացումը, այդ միևնույն էության ուժեղ են այս կամ այն կերպարանքը: Սպենսերի «վերլուծություն» գնում է առանց վերլուծելու՝ սոսկ նկարագրելով արդեն զարգացած իրերի կամ ձևերի նմանությունները, տարբերությունները և դասավորությունները: Դրանով ոչ միայն չի բացատրվում, թե ինչ է էվոլյուսիոնը, այլ հայտնի չի լինում նաև, թե ինչպես է կատարվում զարգացումը, փոփոխությունը և էվոլյուսիոնը: Շարժման մեջ կա ետ ու առաջ, փոփոխության մեջ կա չեղում, կայունություն և առաջադիմություն: Դրանք սակայն հաշվի չեն առնվում կեղծ էվոլյուսիոնիզմի մեջ: Բացի այդ, հարմարումը (Anpassung) էվոլյուսիոնի ճանապարհի վրա մի «պատահար» է միայն, փոփոխության մի երևույթական ազդակ այնտեղ, ուր կայունություն էլ կա, հետադիմություն էլ: Դեռ չենք մտնում ստացական ընդունակությունների ժառանգության մութ առեղծվածների մեջ, որոնք ինչքան էլ պարզվեն, չպիտի կարողանան համենայն դեպս ցույց տալ չարժման էությունը, փոփոխության այն վայրկյանը, որ ոչ մի արտաքին ազդեցության պիտի չենթարկվեր, եթե զարգացման սկզբնական մղումը, կամ թռիչքը նրա մեջ դրած չլիներ համապատասխան հակումներն ու տրամադրությունները:*

[2] *Նույնը եր. 65 և շար.*

Սխալի սրմատը.– *Հարցադրումն ավելի կպարզվի դուցե (ո-րովհետև քննադատելով կենսաբանական էվոլյուսիոնիզմը՝ մենք միայն ուզում ենք էվոլյուսիոնի հարցը դնել), եթե փորձենք մի ըս-պե ըմբռնել այն հակամիտությունը, որ ներակա է մարդու իմաց-ականության, որ չի թողնում հանգարեզ մի հղացում, կամ հայեց-ողության ընթանա իր սեփական ճանապարհով, որ էվոլյուսիոնի հղացումը տանում է դեպի կեղծ-էվոլյուսիոնիզմը: Այս դեպքում պետք է թեև Բերսոնի ամբողջ իմացաբանությունը ներկայացնել, կամ ճանաչողության տեսությունը, բայց թերևս կարելի լինի, ա-ռանց դրան, բռնել միայն սխալի կամ չեղումի րոպեն մտածողութ-յան ճանապարհի վրա: Իմացականությունը կոչտ նյութի վրա մար-դու ապրելությունը տարածելու ուժն է, և իբրև այդպիսին՝ նա ըն-դունակ է այն հատկություններն ու ընդունակությունները, որոնք միայն նյութին են հատուկ: Այսպես, օրինակ, մեր իմացականությ-ունը չի կարող «մտածել հոսանուտը», չարունակությունը, շարժումը և տևողությունը. նա տրամաբանության գործիքն է, իսկ մեր «տրա-մաբանությունը հաստատուն իրերի տրամաբանությունն է». նա հաղթանակում է երկրաչափության մեջ ավելի, քան ուրիշ որևէ տեղ: Ով որ փորձում է, ուրեմն, իմացականությամբ ըմբռնել ամբողջ իրականությունը, նա միայն հաստատուն իրերի, և այն էլ նրանց հարաբերությունը միայն պիտի կարողանա ըմբռնել: Նա տալիս է միայն օրենքներ, այսինքն հարաբերություններ, և դուր չէ, որ հա-րաբերությունը կազմում է Սպենսերի փիլիսոփայության դերիշխող ստորոգությունը: Մինչդեռ ճշմարիտ էվոլյուսիոնիզմը պիտի իրա-կանությունն ըմբռներ ոչ թե նրա մի մասով ամբողջի վրա աշխատե-լով – մասն ի՞նչպես կարող է իր մեջ պարունակել, կամ ըմբռնել ամբողջությունը – այլ մի այնպիսի միջոցով, որ այդ հակասության մեջ չի ընկնում: Էվոլյուսիոնի տեսությունը պետք է տա նաև իմաց-ականության ծննդաբանությունը, ծագումը և զարգացումը: Ի՞նչպես կարող է, ասկայն, իմացականությունը իր ծագումը գծագ-րել: Այս «ախտավոր շրջանակը»[3] (cercle vicieux) Սպենսերի համար գոյություն չունի: Եվ առհասարակ «սոսյլ» կոչվող դիտությունները չատ դժվարությամբ են մտնենում այս տեսակ հարցերին: Ճշմարտության ամենաարմատական հարցն է սա, որի ըմբռնումից կախված է յուրքանչյուր տեսության հիմքը:

[3] *Նույնը եր. 210:*

III

Փորձառական գիտությունները.— *Մի հարց, որ երբևէ իր տեղումը չէ և ամեն տեղին էլ հարմարում է, այդ էլ մտածողության այն տիպն է, որ մի ուսումնասիրության մեջ երևան է գալիս: Կարելի է՞ արդյոք մի առեղծվածի արմատական և կատարյալ լուծումը գտնել այսպես կոչված «ճշգրիտ», կամ ավելի ընդարձակ, փորձառական գիտությունների մեջ: Դա կապված է այնքան երկար և բարդ պատմությունների հետ, որ մենք ակամա որակում ենք դրան իբրև մի անհատականության գործ, որ այսպես է փնտրում ճշմարտությունը, ու ամեն փնտրողն էլ փորձում է ապացուցանել, որ այսպես կարելի է հասնել ճշմարտության: Սակայն ինչքան այլազանություն որ կա ընդհանուր ձևով դրված հարցի պատասխանների մեջ, նույնքան և անհատական տրամադրությունն ուժեղանում է որոնման ընթացքին գտնված փաստերով, որոնք ապացուցանում են իր ճանապարհի առավելությունները: Սա մի փաստ է արդեն, որ սուկ փաստերի վրա հիմնված դատողությունները վերջիվերջո կարիք են զգում ուրիշ տեսակ փաստերի դեմքը՝ եթե ոչ մեզ, գոնե իրենք իրենց համոզելու համար: Հաճախ հարցադրության եղանակն իսկ ստիպում է առաջին քայլիցն իսկ դիմել փաստերի, որոնք փորձից չեն բխում: Այսպես ահա, փորձառական գիտություններն աշխատում են այն բանի վրա, ինչ որ կրկնվում է, նմաններ ունի և չարունակություն: Զուտ բացառիկը երբևէ գիտության առարկա լինել չի կարող. նա ո՛չ չափի տակ է ընկնում, ո՛չ էլ համեմատության տեղ թողնում. իբրև բացառիկ, նա բանելու մի անկյուն չունի, ուր դիտողությունը կամ խորհողությունը կարողանար կենտրոնանալ: Հետո գիտությունը պետք է ամեն բան վերածե և չրջի, պետք է ամեն բան արտահայտե ուրիշ բաներով, առնվազն նշաններով: Իսկ ինչ որ անչրջելի է և անվերածելի, դա գիտության տակ չի ընկնում, դա հակագիտական է: Բացի այդ, փորձառական գիտությունները ամբողջի մասին գաղափար են կազմում ընդհանրացումներով միայն, այսինքն վերլուծության և համադրության մի խառնուրդով, ուր ամբողջի անհատականությունը բոլորովին ոչնչանում է: Եթե կա մի իրականություն, որ պիտի ըմբռնել առանց վերլուծության, ի՞նչպես պիտի անել, նույնպես, ո՞ւր պիտի դնել այն դիտողությունները, որոնք ստացվում են Ոգու միանվագ հայեցողությունից, իրականության դեմ հանդիման գտնված ժամանակ: Ի՞նչ պիտի անել վերջապես այն իրականության հետ, որ ոչ մի փորձի տակ չէ ընկնում, որ անորոշ տրամադրություն է միայն, որ չափազանց մեծ է, կամ չափազանց փոքր, և որ չի մեկ-*

նաբանվի ոչ մի ընդհանրացումով: Այստեղիցն արդեն պարզվում է, որ պնել հարցերն այս ձևով, նշանակում է սկզբից ևեթ անվերապահ և աննախապաշարյալ փիլիսոփայության մեջ փնտրել պատասխանները:

Անվերածելիները.– Ահա կյանքը, ժամանակը, տարածությունը, էվոլյուսիոնը և այլն, երևույթներ, որոնք ոչ մի կերպով չեն չրջվում, որոնց համար ոչ մի բանաձև, կամ ձևակերպում հարազատ չի կարող լինել: Կյանքը վերլուծել և վերածել, նշանակում է ամեն բան բացատրել, բացի կյանքից, որ իբրև ամենաբարդ երևույթների մեկ ամբողջ մլուլթյուն, երբեք գոյություն չունի մասերի մեջ, և ո՛չ էլ բոլոր մասերի հավաքածուի մեջ: Իբրև մի անվերածելի ամբողջություն՝ նա կյանք է: Նույնպես և իբրև մի անշրջելի շարունակություն՝ ժամանակը մի ինքնուրույն գոյություն է[4]: Երկրաչափության մեջ նա երևում է, երբ միայն պետք է փոնկսիոնել հարաբերությունները սահմանավորել: Եվ ո՛չ մի փորձառական գիտության մեջ նա ինքնին չի ենթարկվում վերլուծության և ուսումնասիրության: Կա՞րող է, ուրեմն, մի մասնագիտություն արմատական լինել, երբ առաջադրում է մի անորոշ բան, որին ինքն ժամանակ անուն է տալիս. իսկ ուր որ մի բան ապրում է, «այնտեղ ժամանակն է, որ գրվում է»: Նույնիսկ ամենահատարակ բանները մնում են անհասկանալի և անճանաչելի իմացականության համար, որ փորձառական գիտությունների ճանաչողական գործիքն է: Կա՞րելի է ընդունել, որ ապեղը, կամ կոր գիծը կազմված է ուղիղ գծերից, որովհետև «գիտությունն այդպես է ընթանում՝ մասերի բաժանելով», ուր ինչքան փոքր են մասերը, այնքան և ուղիղ է գիծը: Սակայն կոր գիծը մի անվերածելի անհատականություն ունի, որ ստացվել է մասիսի մի չարժումով: Փոքրիկ ուղիղ գծերի կրկնությունը չի տա երբեք կոր գիծը, ինչպես «հազարավոր լուսանկարների կրկնությունը չի տա այն պատկերը, որ ստացվում է կանազան տեսքերի լուսանկարներից»: Վերլուծելով աչքի նման մի գործարան՝ մենք գտնում ենք անթիվ բարդություններ, քիչներ, թաղանթներ, ոսպնյակներ, ապակենյութ և այլն, բայց սրանցից ոչ մեկն էլ աչք չէ, ոչ էլ ամբողջը միասին: Աչքի մեջ ավելին կա, քան մարդկային որևէ վերլուծություն կկարողանա տալ. այնտեղ կա հատկապես «տեսողության պարզ գործողությունը», որ ձեռքի մի չարժումի նման անվերածելի է: Վերլուծությունը մեզ տալիս է միայն նշաններ, որոնք, թվում է, թե ինչքան շատ և բարդ

[4] *Նույնը, եր. 370 և չար և 212–17:*

են լինում, այնքան էլ մոտ իրականության: Բայց դա սոսկ ցնորք է, իրական է երկուքից մեկը միայն, կամ «գործարանի անսահման բարդությունը», կամ «գործառնության ծայրահեղ պարզությունը»: Այդպես է նաև շարժումը: Բնության մեքենագիտական բացատրությունը շարժման մեջ տեսնում է «դիրքեր» (վիճակներ)[5], բնության վախճանաբանական բացատրությունը շարժման մեջ տեսնում է «կարգ» (նպատակ, հատակագիծ), բայց «շարժումը ավելին է, քան դիրքն ու կարգը»:

Այդ մասին դեռ հետո, բայց ամենից հատկանշականը այն հրաժարիմքն է, որ տալիս են փորձառական գիտությունները Բացարձակի որոնման հանդեպ և գիտություն հայտարարում ինչ որ միայն հարաբերական է, երևութական և չոշափելի: Ի՞նչպես կարող էր, սակայն, իր չրջապատի և իրականության հետ անընդհատ չփվող ոգին չստանալ մի բան այդ չրջապատից, որ իրական լինի, էական և ոչ-հարաբերական: Կա՞մ իրականությունն անիրական է, որովհետև հարաբերական, կա՞մ թե իրականության մեջն է բացարձակը, և ոգին անմասն չէ դրանից: Վերջապես «գործը չի կարող չարժվել անիրականի մեջ»[6], նա պետք է, որ բացարձակի հետ չփում ունենա, որպեսզի կարողանա իրականանալ, հաջողել և չսխալվել: Պարզ է, որ փորձառական գիտությունները, գուցե իրավամբ, չեն տալիս մեզ իրերի հիմքն ու էությունը, իսկ ով որ այդպիսի արմատական պահանջներ ունի, նա այլ ճանապարհ պիտի ընտրե ճշմարտության որոնման համար:

[Ձեռագրում պակասում է IV գլուխը. էջ 21–25]

V

Գիտակցությունն ընդհանրապես.— Գիտակցության ամենապարզ և ուրվագծային պատկերը չարժումն է: Եթե գիտակցական մի արտահայտություն (զգացում, միտք և այլն) ազատենք իր բովանդակություններից, կտեսնենք, որ մնում է մի բան, մի անորոշ բան, որին միայն չարժում անունը կարող ենք տալ. իր բովանդակության հետ, նա գործ է, իսկ առանձին՝ գործի ուրվագիծը, գործի հնարավորությունը, չարժում: Իր ամբողջության մեջ գիտակցությունը ներկայացնում է ամենից առաջ երկու տարբերություններ, ավելի ճիշտ՝ հակադրություններ — բնազդ և իմացականություն: Այս երկուքն էլ

[5] *Նույնը, եր. 177:*
[6] Ibid IV *եր.*

ընդհանուր գծերով իրար հակադրվում և իրար լրացնում են. ինչ որ զուտ բնազդային է բնազդի մեջ, հակադրված է նրան, ինչ որ զուտ իմացական է, իմացականության մեջ[7]*: Բայց երկուքն էլ մի բացառական ընդհանուր սահմանավորում ունեն, երկուքն էլ, իբրև հակում, սահմանելի չեն, որովհետև իրեր չեն: Բնազդն ու իմացողությունը կարելի է համարել աշխատանքի երկու մեթոդներ, մինչդեռ մեկը ինքն իսկ գործիքն է, որ ինքն գործածում է, կամ «կազմակերպչական աշխատանքի չարունակությունն իսկ» ապրող նյութի մեջ, որտեղ գործիք չինելը և գործիք բանեցնելը միևնույն բաներն են, որտեղ կա «մանրամասնությունների մի անսահման բարդություն» և «գործառնության մի աքանչելի պարզություն»,— մյուսն, ընդհակառակն, գործածում է այն գործիքը, որ ինքն չինել է իրանից դուրս կատարված աշխատանքով, որ խիստ անկատար է և անսահման կատարելության ընդունակ մխանգամայն, որ բավարարելով մի կարիք՝ առաջ է բերում նոր կարիքներ, և որ երբեք չի վերջացնում իր աշխատանքը, ու այնքան առաջ է գնում, որ սկսում է «գործիքներ չինող գործիքներ» չինել*[8]*: Երկուքն էլ երբեմն-երբեմն ձեռք են տալիս իրար, բայց ավելի իմացականությունն է, որ կարիք ունի բնազդին, քան հակառակը: Բնազդը և իմացականությունը երկու տեսակ ճանաչողություններ են. երկու լուծումներ նույն առեղծվածին, որ պետք է կենսական ուժի ներգործությունը կատարեր կոպիտ նյութի վրա: Իբրև գործնական՝ դրանք ճանաչողություն չեն, այլ միայն իբրև «գիտակցական նախապատրաստություն մի բանի, որ գործ է լինելու ապագայում». ճանաչողություն են:*

Զուտ բնազդը.— Բնազդ և իմացականություն ընդունելով իբրև «ընդհանրապես գիտակցության» երկու ուղղություններ՝ մնում է այժմ որոշել երկուքի տեղն ու փոխհարաբերությունը: Բնազդը նյութը կազմակերպելու աշխատանքն է և իբրև այդպիսին, նա ճանաչել կարող է միայն գործարաններով: Բայց որովհետև լեզվի բառերը «իմացականության բառերն են», դրա համար էլ իմացականությամբ կատարված փորձը՝ բնազդը բացատրելու, միշտ լինելու է լավագույն դեպքում նմանություն և մնալու է անբացատրելի: Նա չի կարող զուտ անդրադարձական լինել, նա չի կարող նաև անդիտակցության մեջ ընկած իմացականությունը լինել. «բնազդը գնում է դեպի կյանքը», իսկ իմացականությունը՝ դեպի նյութը. այսքանը

[7] *Նույնը, եր. 147 և շար:*
[8] *Նույնը, եր. 151 և շար:*

պարզ է, բայց չի բնորոշում նրան: Դուրս ավելի ճիշտ լինի բնազդն անվանել դեպի կյանքը ձգտող «մի համակրություն»[9], կամ ընկերային հարաբերությունների մեջ կանխազգացումներ, տրամադրություններ առաջ բերող մի ինքնահասկացողություն: Ըստ որում, նա երբեք զուտ ճանաչողություն չի տալիս, բայց լրացնում է, օգնում է, նախապատրաստում է իմացականության ճանաչողությունը, ուրեմն, մասնակից է իմացական աշխատանքին, բայց երբեք բնազդականը չի կարող զուտ ճանաչողական դառնալ: Նրա մեջ իմացականությունը սոսկ կյանքի իմացականությունն է, կամ ճանաչողությունը և այն էլ գործի համար միայն, գործի մեջ միայն: Մինչդեռ, եթե բնազդն ունենար այն «անշահախնդիր ճանաչողության կիրքը», որպիսին իմացականությունն ունի, այն ժամանակ նա մեզ գաղտնիքներ կարող էր մատնել, որոնք իմացականության մեջ դրված մնացել են հավիտենապես անլուծելի: Իմացականությունը չրջապատող ամպանման զանգվածն է զուտ բնազդի տեղը, ուր երբեմն աննշանակալի փոքր տեղողություններ են առաջ գալիս, մտքի չլացուցիչ փայլատակումներ, որոնք, եթե միայն մի վայրկյան երկարեին...: Այստեղ մոտենում ենք Բերգսոնին սիրելի intuition*-ին, զուտ հայեցողության, որի մասին չպիտի խոսենք, սակայն:*

Զուտ իմացականությունը.— «Ընդհանրապես գիտակցության» մեջ իմացականությունը մի տիրական դիրք ունի, ընդունակ միայն որոշ տեսակի իմացական աշխատանքի, նա չնորհիվ իր այդ գերիշխող դիրքին չատ հաճախ համարվել է ճանաչողական միակ գործիքը. սակայն, նա ձև ու հարաբերություն ճանաչելու գործիքն է միայն, այսինքն իմացականության ոչ թե տարածությունը կամ ծավալը, այլ միայն անբովանդակ հասկացողությունը, փոխհարաբերությունը և իբրև այդպիսին նրա ճանաչողությունը դատարկ է, մի ձև միայն ամեն ձևն ստանալու ընդունակ: Ինչպես Դեկարտն ասում է, ավելի մեծ ճշմարտություն չկա, թե եռանկյան երեք անկյունների գումարը հավասար է երկու ուղիղ անկյան, բայց այս ճշմարտությունը չի ապացուցանում երբեք թե եռանկյուն կա աշխարհում, որովհետև իբրև իմացողական ճանաչողություն անբովանդակ է և դատարկ, ձևական ճանաչողություն միայն: Սրանից պարզ հետևում է, որ ճանաչողությունը միայն իմացողական աշխատանք չէ, հիմքում գտնվում է մի ևնուն «կարողություն», որի մեկ երեսը ճանաչողություն է, մյուս երեսը՝ գործ, այնպես որ միայն

[9] *Նույնը, եր. 191:*

գործը նկատի առնելով՝ կարելի է իմացականությունը ճանաչել: Բայի այդ իմացականությունը միայն հաստատուն իրերի ճանաչողությունն է, հսանառուան ու կենսականը, ինչպես ասացինք, խուսափում են նրանից, այնինքն նա չի կարողանում մտածել շարունակությունը և տևողությունը, այլ միայն վիճակներ, դիրքեր, պարզ և կտոր-կտոր, իրար հետ ներքնապես առընչություն չունեցող առարկաներ[10]: Նրա գործառնության սահմաններից դուրս են դառնում տեսական աշխատանքները, նա միայն ծառայում է մարդու պրակտիկությունը տարածելու գործի վրա: Իրև գիտակցական գործունեություն՝ նա մի անորոշություն է, որ «բաժանում է և վերակազմակերպում». նա ավելի չուտ լուսավորում է գործը չընպատող հնարավորությունները, մի տեսակ լույս է նա, որ «ժայթքում է հնարավոր գործի և իրական գործի չփումից»: Ավելի պարզ կարող ենք ասել՝ իմացականությունը գործի գործիքն է: Երեք ուղղությունների մեջ հատկանշականը և տարրերականը իմացականության համար այս տիպի մտաշխատանքն է — գործի գիտակցական գործիքը, և այն էլ ո՛չ բնազդային թռիչքներով, ո՛չ էլ անգիտակցական անդրադարձումներով:

VI

Ճանաչողության Համայնական Աշխատանքը.— *Էվոլյուսիոնի հիմնական գծերը պարզվում են մեզ համար իսկապես նյութականության և մտավորության այն ըմբռնումից, որ այլևս զուտ իմացողական ճանաչողություն չէ: Էվոլյուսիոնի մեր այդ ըմբռնումը ոչինչ չի առաջադրում, նախապաշարմունքներ չունի իմացականության մասին և ինքն իրեն դնում է բոլորովին այլ լուծումնքների վրա՝ տեսնելու համար բոլորովին նոր հորիզոններ: Գոյության մի ավելի բարձր և ընդարձակ ձև կա, որից բխում են և՛ նյութականությունը, և՛ մտավորությունը (իմացությունը): Փիլիսոփաների մեծ մասն անկարող են եղել ըմբռնել այս ըստ երևույթին խիստ տարակերպությունը, որովհետև «Սպենսերի փիլիսոփայությունը մեկնում էր բնությունից և ամեն բան կենտրոնացնում իմացականության մեջ», իսկ «Ֆիխտեն ընդհակառակն կենտրոնացած իմացականությունը, կամ միտքն էր սիրում տիեզերքի մեջ»[11], պարզ է, թե ի՞նչ էին լինելու երկուքի բացատրությունները նյութականության և իմացակա-*

[10] *Նույնը, եր. 161 և շար. 169:*

[11] *Նույնը, եր. 207:*

նուիթյան մասին: Այս երկու օրինակները հատկանշական են: Ամբողջ փիլիսոփայությունը, կարելի է ասել սկզբից ևեթ, եղել է կամ այսպես, կամ այնպես: Եթե փիլիսոփայությունը պետք է որ ինքն իրեն հաղթահարէ, այդ լինելու է ո՛չ թե սրան, կամ նրան միանալով, այլ երկուքիցն էլ կտրականապես հեռանալով: Եվ դրա համար փիլիսոփայությունը պիտի դարձնել ամենից առաջ ո՛չ թե մի մարդու գործ, ինչպես որ եղել է այդ մինչև այժմ, այլ «գիտնականների մի համայնական աշխատանք»[12], ուր «գիտությանց փոխանակությունը» և մարդկայնության տարածումը ավելի ու ավելի լայն չրջաններում պիտի գառնան հիմքերը որոնումների: Ով, որ միայն իմացականությամբ է կամենում ճանաչել, նա պետք չունի, իհարկե, այդպիսի աշխատանքի: Բայց ով, որ համոզված է հասարակագիտության ուվյալներից, թե իմացականության concept*-ները*[13] *(*Begriff*) կազմվել են իմացականությունների ընկերաբանական համագործակցությամբ, նա պետք է անհրաժեշտաբար կարիք զգա համայնական աշխատանքի այդ համայնական աշխատանքը հաղթահարելու համար: Այն տիպի ճանաչողությունը, որ միայն ընդունակ է իրականությունն ըմբռնելու իր ամենախոր ծալքերի մեջ և լիակատար ամբողջությամբ, այդպիսի ճանաչողության մեջ առաջնակարգ տեղ են բռնում բնազդը, իմացությունների փոխանակությունը և իմացականությունների փոխհարաբերությունը: Ինչպես նաև, մի որևէ ճանաչողության ծննդաբանությունը և գործնական կյանքի մեջ կրած փոփոխությունները, ունեցած տարողությունը, կատարած դերը և աղդեցության ծավալը անհրաժեշտորեն կապված են այդպիսի լայն իմացականության հետ, սրա լրացուցիչ և բաղկացուցիչ տարրերն են դրանք:*

Ինտուիտիվ ճանաչողությունը.– Այդպիսի ընդարձակ չափականության համար վերցրած ճանաչողության համար պետք է իմացականությունը «ինքն իրենից դուրս մղել»: Ոչ մի պատողություն մեզ չի սովորեցնում, թե «լողալու և քայլելու մեջ մի կասկած կա», որովհետև

---

[12] *Նույնը, նր. 209:*

[13] *Պետք է խիստ տարբերություն դնել* idée *և* concept *բառերի մեջ. գաղափար բառը հայերենում գործածվում է երկուսի համար էլ, բայց դա սխալ է: Առաջինը բնորոշվում է իբրև մի անորոշություն և անսահմանելիություն, որ մշտական աշխատանքով պիտի դարձնել որոշ և սահմանելի. դա պլատոնական իդեալ գաղափարն է: Երկրորդն, ընդհակառակն, իր մեջ ոչ մի անորոշ և անսահմանելի բան չունի, բառերի քարացած տեսակն է և նոր փոփոխության անընդունակ. մաթեմատիկան, երկրաչափությունը և ստույգ կոչվող գիտություններն աշխատում են այդ տեսակ բառերով, թեև մաթեմատիկայի մեջն էլ կան առաջին տեսակից: Փիլիսոփայությունը աշխատում է երկուսի վրա էլ, ու դրանից են առաջ գալիս շատ տեսակի չփոթություններ:*

ոչ ոք պատրաստվածությամբ լողալ չի սովորում, միայն լողալ սովորելուց հետո ենք այդ կապը գտնում մենք[14]: Եվ մենք, որ գիտենք, թե ի՞նչ բան է հաստատունը, այն ժամանակ միայն կզգանք, որ ջուրն էլ հաստատուն է: Դործի բերած օժանդակությունը ճանաչողության մեջ այս աստիճան մեծ է: Մի ներքին բռնադատությամբ էլ մենք գտնում ենք, որ իմացականությունը բաժանվել է մի ավելի լայն իրականությունից, որ նրան շրջապատում է մի տեսակ «խմորի» նման, որ իմացականության ծագումն է մատնանշում: Երկուքի մեջ եղած տարբերությունը երբեք էական չէ: Բայց իմացականությունն առանձնապես ամեն բան ըմբռնում և պատկերացնում է որպես հաստատուն[15], ինչպես և կյանքն ու ամեն ինչ, որ շարժուն է և հոսանուտ. նրա գործունեության դաշտն է անշունչը, իսկ «չնչավորի և կենսականի համար նա գործածում է անշունչ օրինակներ և նշաններ»: Փիլիսոփայությունը չի կարող գրանով բավականանալ, նա պետք է իմացականության գծած շրջանակները խորտակի, նա պետք է փորձի իրականությունն ըմբռնել իրականության հավասար ծավալ ներկայացնող մի գործիքով, որ աշխատում է ոչ թե կառուցանելով, դասավորելով, համակարգելով և փաստեր կուտակելով, այլ մի հայացքով, որ թափանցում է իրականության ամենախոր ծալքերը. մի ճանաչողությամբ, որ իրերի երևույթական տարբերության տակ տեսնում է միևնույն սկզբունքը, ինչպես և գոյության անսահման կրկնությունների մեջ գտնում է ուղղություններ և գանազանվող հոսանքներ, որ վերլուծում է, ոչ թե բաժանելու և համադրելու, այլ մեկ և լրիվ ամբողջությունն ըմբռնելու համար, որ նախապաշարմունքներ չունի, և անհակասականությունը չի փնտրում պատրաստությունների մեջ, որքան գոյությանց ներդաշնակության և գործարանավոր կազակցության մեջ: Այն ժամանակ միայն ճանաչողությունը կլինի Բացարձակի գիտությունը: Թեև այստեղ նա մնում է դարձյալ անկատար, բայց չի լինի այլևս արտաքին և հարաբերական, ինչպես դրական գիտությունների մեջն է:

Ջուտ տևողության վայրկյանը.— Այն ժամանակ պետք է փնտրել մեր ներքին կյանքի ամենախոր հատվածների մեջ, ինչ որ ամենից չատ կտրված է արտաքինից, ինչ որ «ջուտ ներքինն» է, «ինչ որ ամենից քիչ իմացական է»: Կամքի մի զերազանց ճիգով մենք թափանցում ենք մեր սեփական կյանքի ամենաներքին վայրկյանում.

[14] Նույնը, եր. 210:
[15] Նույնը, եր. 166 և շար:

դա զուտ տևողությունն[16] է: Մեր անձնավորության համառ կենտրոնացումը ինքն իր վրա՝ մեզ թույլ կտա հավաքել և «կուտակել մեր անցյալը», որ խուսափում է մեզնից, «քշելու համար անբաժանելիորեն մի ներկայի մեջ, որ նա ստեղծում է՝ այնտեղ մտնելով»: Ապրումի այս հազվագյուտ վայրկյանը մեր «հսի զուգադրությունն է» ինքն իր հետ. այդտեղ իմացականություն կա, որովհետև կրկնություն կա, բայց այս կրկնությունը միշտ նորի նորությունն է միայն, այնպես որ իմացականությունը «զորությամբ միայն» այնտեղն է. իսկապես այս վիճակն առափնում, գերազանցում է նրան, որովհետև նոր է ու անբաժանելի: Զուտ տևողության այս հազվագյուտ վայրկյանը մենք անվանում ենք գիտակցությունն ընդհանրապես: Ընդհանրապես, որովհետև դա քարացում չէ, բայց նաև մասնավորապես, որովհետև դա հազվագյուտ է:

Լարում և Արձակում: Ազատություն և Անհրաժեշտություն.— Հոգեբանական այդ վիճակը ճանաչողական և գործնական բոլոր ուժերի լարումն է, գիտակցությունն ընդհանրապես, որի ներկայությանը մի վայրկյանի մեջ՝ գործակցում են բոլոր ուժերը միասին: Հասնելով այդ կատարյալ լարվածության՝ պետք է այժմ հակառակ գործողությունը կատարել՝ հասնելու համար հակառակ իրականության: Մենք «արձակում ենք»[17] հետզհետե այս լարումը, և ինչքան կատարյալ է լինում վերջիվերջո այս արձակումը, այնքան և կամքն ու հիշողությունը սկսում են բացակայել: Իհարկե, մենք չենք իջնում երբեք այդ կատարյալ կրավորականության, ինչպես և առաջին գործողության չէինք հասնում կատարյալ ազատության: Բայց կատարյալ արձակումով մենք մոտենում ենք «մի ներկայի, որ ոչ մի անցյալ չունի իր մեջ», որ միշտ նոր է, որ վայրկենապես մնռնում ու ծնվում է ապրնդհատ: Սա կլիներ զուտ նյութականությունը, եթե միայն տևողությունը կատարելապես բացակայեր, բայց մենք տեսնում ենք, որ խուսափուկ վայրկյաններ կան, որոնք համենայն դեպս մի բան են, բայց ո՛չ ոչինչ: Մենք կարող ենք եզրակացնել, որ ինչպես հոդեկանը հակված է դեպի այդպիսի լարումը, նույնպես և նյութականը՝ դեպի այդպիսի արձակումը: Գործողությունը կատարվում է մի տեսակ հավաքրլումով, կամ որ նույն է՝ ընդհատումով: Զուտ տևողության մեջ, կենտրոնացած մի կետի վրա՝ մեր ևսը դառնում է ապատ, իսկ

[16] Նույնը, եր. 218 և շար:
[17] Նույնը, եր. 219:

հակառակ պարագային՝ մեր հոն իջնում է տարածության վրա և ցրվում դպայնության մեջ: Անտարածական դպայնություն չկա:

Տարածությունը և ոգևկանությունը.— Բայց տարածական ասելով՝ չպիտի հասկանալ երբեք մեր բնության մի խորթ բան: Իր ժամանակին կանտն ապացուցել է, որ տարածականը երբեք նյութական որոշիչ չէ: Մեր մտածելու կարողությունը նյութի մեջ գտնում է այն հատկությունները, որ մեր զգալու կարողությունը այնտեղն էր դրել: Սա «ճշմարտության ծուռ ճանապարհն է», որի մեջ ընկավ կանտ. որովհետև, դրանից հետևում է, որ կամ ոգին է ձևվում իրերի վրա, կամ իրերը՝ ոգու վրա, և կամ թե «երկուքի մեջ կա միատիք մի հարաբերություն»: Մինչդեռ, ընդունելով իմացականությունը՝ որպես «ոգու դործառնություններից մեկը», մենք գրկում ենք նրան այդպիսի բացարձակ դիրքեր բռնելուց, և մեր հղացումի հետևողականության մեջ տեսնում ենք, որ հիշողությունը, իբրև ոգու ամենապայն և հատկանշական ուժը, ոչ այլ ինչ է, եթե ոչ չարունակություն, անընդհատություն, տևողություն, կողք կողքի և միաչափ հաջորդականություն, հատկություններ, որ մենք միայն տարածության մեջն ենք դտնում, այսինքն, տարածականը ապատելով նյութականից և դնելով ոգևկանության մեջ, մենք տեսնում ենք, որ նյութ ու իմացողություններ «հետզհետե հարմարվել են իրար» և ստացել մի ընդհանուր ձև: Այս հարմարումը կատարվում է շատ բնական կերպով, որովհետև «մեխանույն չարժման մեխանույն հավաչրջումն է, որ ստեղծում է ոգու իմացականությունը և իրերի նյութականությունը»[18]: Մի անգամ կանգնած այս հիմնական տեսակետի վրա՝ մենք տեսնում ենք, որ բարձրագույն ճշմարտությունը գտնելու համար մեր անձնավորության վրա կատարված այս աշխատանքը մի արհեստական և չինծու պինախտ չէ, որ նյութի և ոգու հարաբերության հարցում մենք միշտ կանգնած ենք մի ուղղության և նրա հավաչրջումի առջև:

Մի ուղղություն և իր Հավաչրջումը.— Մեխանույն եղրակացության սլիտի հանգեինք, եթե երկար վերլուծություններից հետո, փորձենք ապացուցանել, թե բնության մեջ կա՞րդ կա, թե անկարգություն: Եվ այս օրինակը մեծապես կարող է նպաստել ըմբռնելու, թե ինչի՞ մեջն է կայանում կենսական սկզբունքը: Իբրև բացատական գաղափար՝ շատ դժվար է ըմբռնել անկարգությունը, նա պարունակություն չունի, այլապես բացատական չի կարող լինել: Ընդհանուր մի բնորո-

[18] *Նույնը, եր. 225:*

չում կարող ենք տալ, թե անկարգությունը «ոգու անհամաձայնությունն» է իրերի հետ, «իր փնտրած և չգտած կարգն է» անկարգությունը, որ համենայն դեպս այլևս անկարգություն չէ: Բայց ինչ որ նա գտնում է, դա կարգ էլ չէ, այլ մի ուղղություն: Ուղղությունը կամ բնական ուղղությունն է, կենսականության, չարունակական ստեղծագործության և ազատ գործունեության ուղղությունը, կամ թե նրա հակաշրջված ուղղությունը՝ տարածության, երկրաչափության, կրավորականության և ինքնաչարժության ուղղությունը: Կենսական կարգը և ֆիզիկական կարգը[19], ահա բնության ցույց տված երկու ուղղությունները: Մենք այդ դժվարանում ենք տեսնել, որովհետև մեկի սովորությունները և հատկությունները, որոնք էական են իր համար, պատահական կերպով երևան են գալիս նաև մյուս կարգի մեջ, ու դժվար է լինում որոշել, թե դրանք ո՞ւր պատահական և ո՞ւր էական են: Օրինակի համար, էվոլյուսիոնը, իբրև մի մշտական ստեղծագործություն, հազարավոր օրինակների վրա կրկնվելով միայն՝ կարողանում է հասունացնել մի նորություն, մինչդեռ կրկնությունը ֆիզիկական կարգի էությունից է բխում: Բացի այդ, այս երկու կարգերի և ոգու հարաբերության մեջ մի ուրիշ վայրկյան էլ կա, որ մեզ ցույց է տալիս զուտ պատահականության, անկապակցության ներկայությունը: Այդ ժամանակ իսկապես ոչին է, որ ոչ մի կարգի վրա էլ չի կանգ առնում, «փոթորկոտ տարուբերվում է» երկուքի մեջտեղ և ծայրահեղորեն զգալի դարձնում անկարգությունը, աններդաշնակությունը և անկապակցությունը:

Միշտ նույն հավիտենական իրականությունն է, որ կարող է յարությամբ անցնել տարածությանն և ազատությունից՝ անհրաժեշտության: Դա «գիտակցություն ընդհանրապեսն» է, լարվող և արձակվող, ազատության և անհրաժեշտության սկզբունքը: Նյութի առջև ենք գտնվում մենք ամեն անգամ, երբ տեսնում ենք ձև ծնեցնող գործը կանգ առած: Անհրաժեշտության առջև ենք գտնվում մենք ամեն անգամ, երբ տեսնում ենք ոգու ազատ թռիչքի սարկական վերադարձը իր հետքերի վրայից: Տարածության առջևն ենք գտնվում մենք ամեն անգամ, երբ տեսնում ենք անցյալի կուտակումով նորաստեղծ ներկան մերկացած որևէ հիշողությունից և միշտ մեռնող ու ծնվող վայրկյաններով: Ճշմարտության այսպիսի ըմբռնումը մեզ ազատում է երկարմատյան անհեթեթություններից, ինչպես և մոնիստական միակողմանիությունից: Որովհետև կենդանի իրականության, կյան-

[19] *Նույնը, եր. 252:*

քի փիլիսոփայությունն է սա, որից արմատապես դուրս են գոնվում և՛ սիստեմները, և՛ քարացած տեսությունները:

VII

Կյանքի Հարցը.— *Ամեն բանն իր փիլիսոփայությունն ունի, ամբողջ փիլիսոփայությունը կյանքի փիլիսոփայությունն է, բայց Բերգսոնն է տալիս առաջինն կյանքի իսկական փիլիսոփայությունը: Իսկապես դոյակի ամեն երևույթները, որոնց թվումը միայն անթիվ պիտի լիներ, դարձել են փիլիսոփայության զբաղման առարկա: Դրանց մեջ պիտի հասկանալ նաև կյանքի ֆիզիկական, քիմիական, բնախոսական, հոգեբանական և ոգեկան բոլոր երևույթները: Բայց կյանքը, սովորական կյանքն իր ամբողջության մեջ, առանց որոնման որոշ տեսակետների, կամ արտահայտության համաձայն կատարված բաժանումների, կյանքն ինչպես որ կա՝ իբրև անմիջական տվյալ, կամ իբրև մի ամբողջական առեղծված՝ երբեք չի դարձել փիլիսոփայության նյութ: Նրա նշանակությունը, կամ նպատակը՝ իբրև դոյակի մի յուրահատուկ արտահայտություն, նրա ծագումը և կոչումը, իբրև էվոլյուտիվ շարժման մեջ երևան եկած մի ինքնանպատակ ամբողջություն, չի համարվել երբեք մի այնպիսի առեղծված, որ յուր մասերից և մասերի հավաքածուից դուրսն էլ մի առանձին բան ունենար ուսումնասիրվելու և ճանաչելու արժանի: Դեռ ոչ մի փորձ չէր եղել՝ մեկնելով միևնույն տեսակետից, կամ գործադրելով միևնույն սկզբունքը (էվոլյուսիոնը) բացատրելու նյութի և իմացականության միասնական ծագումը, տիեզերքի հետ ճուլելու նյութի կյանքը և հոգու կյանքը: Նույնքան մեծ տարողություն է ներկայացնում նաև ճշմարտության որոնումը, իբրև կյանքի ամբողջական արտահայտության մի առեղծված, այսինքն բռնելով մի ուրիշ տեսակետ՝ կարելի է ճշմարտությունը տեղափոխել, ազատել նրան առարկայական և ենթակայական որոշիչներից ու դարձնել գործի հետևանքը, կամ միայն կյանքի համար գոյություն ունեցող մի արժեք: Այս խնդիրներից մի քանիսը առանձնապես քննության են առնվել Վ. Ջայմսի, Շիլլերի (անգլիացի), Բ. Կրոչեի և ուրիշ փիլիսոփաների կողմից: Բայց այնպես, ինչպես որ դնում է Հարցը Բերգսոն, առաջին անգամն է կատարվում ամբողջ փիլիսոփայության պատմության մեջ: Պ. Ի. դը Լա Տուր կյանքի այս փիլիսոփայությունը մի թվական է համարում մարդկային մտածողության մեջ: Թեև Բերգսոն խոստովանում է, որ Շ. Դյունան նույնպես ունի որոշ չափով նման հայացքներ՝ կյանքի փիլիսոփայության վրա:*

Կյանքի Ամբողջությունը.– Կյանքի փիլիսոփայությունը մի առանձնակի և բացառիկ տեսություն չէ Բերգսոնի փիլիսոփայության մեջ. այլ ամբողջ փիլիսոփայությունը կյանքի փիլիսոփայությունն է: Երբ ճշմարտությունը բխում է մարդկային գործերից միայն, և կյանքի սահմաններում միայն նա գոյություն ունի, պարզ է, որ ամենայն փիլիսոփայություն դառնում է կյանքի փիլիսոփայություն, եթե, իհարկե, փիլիսոփայությունը ճշմարտության որոնումն է: Ուրիշ կերպ է եղել, սակայն, փիլիսոփայությունը: Առանց նկատի առնելու կյանքն իր ամբողջության մեջ, նա որոնել և գտել է ամեն տեղ «առանձնակի բազմազանություն», «տարածականություն» և «կանխագոյ մասերի հավաքածուներ», այսինքն, առանց ամբողջությունը նկատի առնելու, արհեստականորեն ստեղծել է մասեր և բաժանումներ կյանքի մեջ, ու հանգել է մեքենաբանական կամ վախճանաբանական եզրակացությունների[20]: Բայց, եթե նկատի առնենք կյանքի «իրական տևողությունը», որ նշանակում է թե անբաժանելի շարունակություն և թե ստեղծագործություն միաժամանակ, կտեսնենք, որ ոչ միայն կյանքը, այլև ամբողջ փիլիսոփայությունը մի նոր լույսի տակ է ընկնում: Ճանաչողության բոլոր տեսությունները եղել են համա-ակամա կյանքի փիլիսոփայություն, այն տարրևրությամբ, որ ոչ ոք չի մտածել, թե իր գտած ճշմարտությունները կյանքի ճշմարտություններ են, թե դրանք առարկայական չեն և չեն էլ կարող լինել: Բայց կյանքի ամբողջություն ասելով պիտի հասկանալ մի անհատականության կենսական արտահայտությունների անբաժանելի միությունը. այդ անհատականությունը կարող է լինել տիեզերքը, ինչպես նաև մարդը: Միշտ միևնույն տեսակետն է, որ առաջնորդում է ամեն տեսակի որոնումները ոչ թե վերլուծական, այլ համապարական մի հայացք: Այսպես, օրինակի համար, շաքարի, ապի և հին ձեթի խառնուրդը տալիս է մեզ կենսանյութի (protoplasme) կառուցվածքը, այնտեղ ամեն բան կա, որ կյանքին նման լինի, նույնը լինի կյանքի հետ, բացի, սակայն, կյանքից: Ֆիզիկական և քիմիական տարրերի ներկայությունը կյանքի մեջ ապացույց չէ, որ կյանքը ֆիզիկական և քիմիական տարրերի բաղադրությունից է կազմված: Կյանքի ամենաստորին ձևերն իսկ ցույց են տալիս իրենց ընթացքի մեջ մի տիպ, որ յուրահատուկ է, որ հոգեբանական է, մի առորոշություն և անսահմանելիություն ունի իր մեջ, որ ոչ մի ֆիզիկական կամ քիմիական տարրի մեջ չի գտնվի: Կարելի է, իհարկե,

[20] *Նույնը, եր. VII, ծանոթ. և եր. 24–57:*

կենսաբանական բոլոր երևույթները վերլուծել, բայց ոչ մի վերլուծություն չի տա մեզ իրականության հարազատությունը: Երբեք մի սերունդ չի կրկնում իր նախահոր, կամ նույնիսկ նախորդի ամբողջական տիպը. միշտ կմնա մի բնածին անհատականություն, որ նոր է, որ ստեղծվում է «կենսական սկզբունքի»[21] *միջամտությամբ:*

Կյանք և դրյծ.— Այն կյանքը, որ մենք ապրում ենք, ազդեցությունների և հակազդեցությունների մի հսկայական օվկիանոս է, ուր մենք գործում ենք և չատ քիչ զգում, թե գործում ենք: Կապված որոշ ժամանակ[իյ] և որոշ տարածության հետ՝ մեր դիտակցությունը անհատականանում է, համառոտվում է, սահմում է մեր իմացողության հակումների վրա, կաչկանդվում իր դիտած առարկայի չրջապծերում և միշտ հետապարձ առաջադիմության մեջ է մնում: Բայց նա պետք է ինքն իրեն հաղթահարի, նա պետք է «զուգադրվի իր սկզբունքի» հետ, որ իր գործադրության մեջ հեռացել էր իր սկզբունքից, և դրա համար նա պետք է պոկվի այն ամեն բանից, որ «պատրաստի» է, և միանա այն ամենի հետ, որ «պատրաստվում է»[22]*: Պետք է տեսնելու կարողություն մեկ դառնա կամենալու դրծի հետ: Ապատ գործի, դուտ գործի մեջ, ուր մենք նետվում ենք մեր հոգեկան և ֆիզիկական տրամադրելի բոլոր ուժերով, մենք զգում ենք, թե ինչպես մի հոսանք կա՝ մեր կամեցողությունը, որ մտնում է նյութի մեջ և կյանք տալիս նրան, իրականությունը դարձնում է մի «մշտական աճում», մի «անվերջ ստեղծում»: Մարդկային ամեն գործ, որ մի քիչ գյուտ ունի իր մեջ, մի քիչ ապատություն և ինքնուրույնություն, մեզ տեսանելի է դարձնում, թե ի՞նչն է նոր բանը, որ ստեղծում և աճում է: Հատկանչական է մի հանճարեղ գործ, որ լրացնում է վերոհիշյալ պահանջները. այնտեղ սովորաբար փնտրում են և գտնում նմանություններ, հին բաներ, օտար տարրեր և այլն: Բայց, իսկապես, դա անօգուտ աշխատանք է. հանճարեղ գործի մեջ «կանխագոյ տարրեր» չկան, ամենայն ինչ ստեղծագործություն է, չարժումի քարացումը և ձևի անհատականությունը, որ բոլորովին նոր է և գոյություն չի ունեցել երբեք:Բոլոր բանաստեղծներն էլ գործածում են միևնույն տառերն ու միևնույն բառերը, բայց մի հանճարեղ բանաստեղծություն մի ստեղծագործություն է «ստեղծում ոչնչից», ինչպես ասում էին: Եթե կյանքը դուտ գիտակցություն լիներ՝ ապատ նյութականությունից, նա գիտի ստակ ստեղծա-*

[21] *Նույնը, եր. 245:*

[22] *Նույնը, եր. 209 և 258 ու. շար:*

գործ ազատությունը լիներ, բայց կապված նյութի հետ՝ նա ուշանում և դանդաղում է նյութական փոփոխությունների վրա: Կյանքի էվոլյուսիոնը շարունակում է մի սկզբնական զարկ, որ նյութի մեջ դրել է նրա հակառակ ուղղությունը, ու ամեն բան այնպես է լինում, որպես թե կյանքն աշխատում է ազատվել նյութից, և դրա համար էլ նա մեզ երևում է որպես մի ջանք «բարձրացնելու մի ծանրություն», որ ընկնում է: Նյութը նման է «բազուկի այն ժեստին», որ բարձրացած ընկնում է. այդ անկումը, սակայն, պահում է իր մեջ մի բան, որ իրեն կենդանացրել էր. «Le geste créateur qui se défait»[23] – ահա նյութը: Եվ ամբողջ կենսաբանական գործունեությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի իրականություն, որ չինվում է այն բաների մեջ, որոնք քանդվում են: Դեռ Կլոդ Բեռնարը հայտարարում էր, թե «կյանքը մահ է», ապրել նշանակում է որոշ գործարանների մեռնելը և որոշ գործառնությունների շարունակվելը. մեկն առանց մյուսի չի կարող լինել: Իրականությունն իր մեջն իր չունի այլևս, այլ միայն գործ և հատկապես միայն գործ, որ չինվում է նման գործերի մեջ, որոնք քանդվում են: Կյանքը դարձնել գործ նշանակում է կյանքին կյանք տալ, որովհետև մի կեղծ մտադրություն է, որ մեզ ստիպում է կյանք համարել ամեն բան, որ դիրք է, վիճակ, պատրաստի գործարան կամ իր: Կյանքը չինելու և քանդելու ու վերաշինելու ընթացքն է. դրանից դուրս ամեն բան կա, բայց կյանքից:

Կյանքի նպատակը.– Իր ամբողջության մեջ կյանքն երևում է որպես մի ջանք կորով կուտակելու և արձակելու անթիվ ձևերով «ջրանցքների» մեջ. արևի ուժն է, որ մի անթափանցելի գաղտնապահությամբ կուտակվում է բույսերի մեջ և անցնում կենդանական գործարաններով[24]: Այս տիտանական ջանքի մեջ, որ բարձրացնում է նյութի ծանրությունը դեպի կենսականություն և կյանք, էվոլյուսիոնը առաջ է գնում ստեղծումներով, այսինքն էվոլյուսիոնը իրագործում է անկանխատեսելին, անգուշակելին և անիրագործվածը: Այսպես է լինում ստեղծագործությունը, և էվոլյուսիոնի նպատակը, որ կյանքին էլ է նպատակ, ոչ այլ ինչ է, եթե ոչ այդպիսի ստեղծագործություն. դա մի պահանջ է ստեղծագործության: Եվ որովհետև նյութի մեջն է, որ պիտի կատարվի ստեղծագործությունը, այդ պատճառով էլ կյանքը նյութի մեջ, կամ ապրող նյութն առհասա-

[23] Նույնը, եր. 266–269:
[24] Նույնը, եր. 274 և շար ու 286:

րակ, նշանակում է անսահմանելիություն և ապատություն նյութի մեջ: Էվոլյուսիոնի յուրաքանչյուր ուղղություն (բույս, կենդանի, մարդ) այնպիսի տևանք ունի, որպես թե էվոլյուսիոնը իր մոտ կանգ է առնում, իրանով էլ վերջանում: Դրանից առաջ են գալիս արգելք, աննկարագրելիություն և պայքար: Բայց այդ մասնավոր մտայնություններից միջից վայրկում է երկու անհրաժեշտություն, որ կյանքի հնարավորությունը և նպատակն է ցույց տալիս մեզ կորովի աստիճանական կուտակումը և դրանց աւտոդական ձևաքաշխումը փոփոխական և անսահմանավորելի ուղղություններին մեջ[25], որոնք վերջավորվում և հասնում են ապատ և ստեղծող գործերի: Բայց կյանքը բազմաթիվ տարակերպությունների մի համագրություն է, որոնցից մեկի կամ մյուսի գերիշխանությունը անտեսանելի է դարձնում երբեմն կյանքի նշանակությունը: Այսպես, կյանքը ո՛չ անհատացում է, ո՛չ էլ զուգորդում: Իմ զգացումները, զգայնությունները և մտապատկերները բաժանում են իմ անհատականությունը, մյուս կողմից իմ գիտակցությունը ցույց է տալիս, որ այդ բաժանումների, անհատացումներից յուրքանչյուրի մեջ գտնվում են մյուսներն էլ, ուրեմն, ես մի «բազմազան միություն և մի բազմազանություն»[26] եմ իսկապես: Անհատացումը մասամբ նյութի գործն է, մասամբ էլ կյանքն է, որ իր մեջ կրում է այդ հակումը: Բայց նա կրում է իր մեջ նաև զուգորդման հակումը, այնպես որ յուրաքանչյուր օրգանիզմ բխում է բջիջների զուգորդումից, որ սակայն իր մեջ բաժանում է աշխատանքը: Այս անհատացումը և զուգորդումը մի պատահական երևույթ չէ, կյանքի էությունից իսկ բխում են այս երկու ուղղությունները: Էվոլյուցիայի նշանակությունը ցույց է տալիս վերջապես մարդու մեջ մի թռիչք, որ մի վրդովեցուցիչ տարակերպություն է: Նյութը, որ բացարձակ անհրաժեշտությունն է, ծառայել է ստեղծելու բացարձակ ապատության գործիքը՝ մարդը: Ամեն գործին հարմարվելու և ամեն բան սովորելու ընդունակությունը ցույց է տալիս մարդու մեջ մի նեղքին բարձրություն, որ այլևս աստիճանական չէ, այլ էական. սրանով է նա գառնում էվոլյուսիոնի «նպատակը»: Էվոլյուսիոնը մի «անսահման ալիք» է, և միայն մի տեղ նրա շրջապիծը պատռվել է, և կենսական գարկը հասել է ապատորեն. գա եղել է դեպի մարդը: Սրանով, իհարկե, մարդը չի գառնում կատարյալ էակը, որովհետև նրա գիտակցությունը միայն իմացողություն է:

[25] Նույնը, եր. 277 և շար.
[26] Նույնը, եր. 280 և շար.

Մինչդեռ նթե վերջինս լրացվեր նաև հայեցողությամբ – intuition – այն ժամանակ կունենայինք մենք կատարյալ մարդկությունը: Դժբախտաբար հայեցողությունը գործում է միայն, երբ մի կենսական շահ կա մեջտեղ, ուրիշ ժամանակ մի «մարած լամպ»[27] է նա: Բայց անթիվ դժվարություններ է հաղթել մարդը մինչև իր ուղ հասնելը: Եվ ոչ մի տարակույս չկա, որ նա շատ դժվարություններ էլ հաղթելու է, որպիսին է, օրինակի համար, այդ կատարյալ մարդկությունը և «նույնիսկ մահը»[28], խիզախում է Բերգսոն:

Կյանք և ճշմարտություն.– Ընդհանրապես պրագմատիստական են կոչվում ճշմարտության այն տեսությունները, որոնք հիմնվում են կյանքի վրա: Սակայն, պրագմատիզմը օգտապաշտության (utilitarisme) և ամերիկյան ճարտարարվեստականության (industrialisme) հարազատ որդին է. նրա մեջ կյանքը ճշմարտության որոշիչ է շատ միակողմանի կերպով, մոդեռն մարդու հաջողություններն ու անհաջողություններն չափելու համար միայն: Կյանքի հոգեբանական, էվոլյուսիոնիստական և բնազանցական հիմքերը չէ, որ որոշում են այնտեղ, ստուգության կամ ճշմարտության նման դերագանցապես էվոլյուսիոնիստական և բնազանցական առեղծվածը: Մինչդեռ իմացողությունը և հայեցողությունը ձևված նյութի և կյանքի վրա, մեզ կարող են իրենց առարկայի էությունը հայտնել համագործակցությամբ միայն, այսինքն գիտակցությունը իբրև «կենդանի էակի ընտրական ուժը»[29] ճշմարտության ընդունակ է գործի և տեսնելու կարողության աչխատանքի չնորհիվ միայն: Այդ միևնույն է ասել, թե ճշմարտությունը և ճանաչողության տեսությունը բխում են կյանքի և հատկապես մարդկային կյանքի գործերից և գործերի մեջ դեր կատարող ուժերից: Մարդու ճանաչողական ուժը համաձավալ է գոյության հետ, և «փորձի ամբողջությունը» ընկնում է գիտակցության ամբողջության մեջ: Գիտակցությունը գործ է, կամ հնարավոր գործի և իրական գործի մեջ եղած տարբերությունն է ցույց տալիս, որ դարձյալ հայտնի է դառնում գործով միայն: Բայց այդպիսի գիտակցություն այլևս միայն իմացողություն չէ. մի գիտակցություն, որ գործի գործիքն է, իր մեջն ըմբռնում է «իմացողության շուրջ ծավալված մի հեղանյութ»[30], որ իմացո-

[27] Նույնը, եր. 290:
[28] Նույնը, եր. 294:
[29] Նույնը, եր. 194:
[30] Նույնը, եր. 210 և շար:

դուբյան խտացումը կարող է լինել, թեև ոչ նույնքան ճկուն և թափանցող: Բնութեան և ոգու մեկուբյունը մի ձևական և արհեստական ենթադրութեյուն չէ, ուրեմն, այլ փորձի ամբողջութեյան և ճանաչողական համաձայնալ ուժի արդասիքը: Կյանքի տեսութեյունը, հիմնված ճանաչողութեյան քննադատութեյան վրա, տալիս է մեզ ճշմարտութեյուններ, որոնք «հարմար նշաններ»[31] չեն այլևս, այլ «առարկայի ուղղակի տեսողութեյուններ»: Դրանք կարող են լինել սխալ կամ ճիշտ, ոչ թե որովհետև իրականութեյունն է այդպես, այլ մարդու ապրեցութեյունը իրականութեյան վրա տարածող դործիքների ուղղութեյունն է, որ սխալ կամ ճիշտ հետևանքների է հանդում: Ճշմարտութեյունը մի արժեք է միայն, այսինքն, անհատական հոգեբանական ուժերի արդելիչ կամ ծնող ուժը: Իրականութեյունը մարդու համար միայն մի արժեք է, ինքնին նա արժեք չէ այլևս: Կամ, եթե փորձի ամբողջութեյունը (զոյութեյունը) չէր կարող իր մեջ չունենալ իրեն համապատասխան մի դիտակցութեյուն (որ նույն է ասել, թե դիտակցութեյունը նույնքան անհրաժեշտ է, որքան զոյութեյունը), ուրեմն իրականութեյունը արժեք է նաև ինքնին, որովհետև արժեքավորումը մի բացատրիչ և պատահական երևույթ չէ բնութեյան մեջ, այլ բխում է անհրաժեշտաբար զոյութեյունից իսկ: Այսպես ընդունենք, թե այնպես, ճշմարտութեյան համար դլխավոր խնդիրը տեսական է, մարդու բռնած դիրքը (stellungnahme), որ կարող է մի երևույթ մեզ համար և՛ ճիշտ դարձնել և՛ սխալ, առանց որ իրականութեյունը դրա համար իր էութեյունը փոխեր: Էականը այստեղ ճշմարտութեյան գործիքն է, որ ո՛չ իրականութեյան մի մասն է, ո՛չ էլ դիտակցութեյունից գուրս զոյութեյուն ունեցող դիտակցութեյունը, այլ նույնքան ղգայմունքային, որքան բանական մտաշխատանքը, իրականութեյուն ապրելը, որ նշանակում է ճանաչել:

VIII

Լինելիութեյունը և շարժումը.— *Ամբողջ էվոլյուսիոնին և կյանքին տալով շարժական և հոսանուտ բնավորութեյունը՝ մեզ մնում է այժմ տեսնել, թե Բերգսոնը ինչպիսի ըմբռնում ունի շարժման և լինելութեյան* (le devenir) *վրա, երբև ինքնին զոյութեյուն ունեցող երևույթներ: Էվոլյուսիոնը նշանակում է շարժում, իսկ ի՞նչ է նշանակում շարժումը: Եթե ամենից առաջ հղրակացութեյունն ասենք, պիտի ընդունենք որ, եթե զոյութեյան մեջ կանգ առնել կա, որևէ ձ-*

[31] *Եր. VI:*

ևով, այն ժամանակ չարժում չկա բացարձակապես, գոյության մեջ, որևէ ձևով: Որովհետև սովորական, միամիտ մտածողության համար չարժումը մի տեղ հանդիսող իրի տեղափոխությունն է դեպի մի ուրիշ տեղ: Մի անգամ էլ առաջուց ասենք վերջին խոսքը. դա չարժում չէ: Ինչ որ մենք ստանում ենք իրերից, իբրև գգայնություն և մտապատկեր, ոչ այլ ինչ է եթե ոչ իրի հատկությունների ազդեցությունը մեր զգացողական գործարանների վրա: Այդ հատկությունը ոչ թե մի կայուն վիճակ է, այլ անսահման փոքրիկ չարժումների «անսահման տատանումը»[32], որ մեր զգայարանքների վրա տպավորեցնում է իրի հատկությունները: Մի հատկություն, եթե երկար համառում է, դա ցույց է տալիս նույն տարրական, փոքրիկ չարժումների կրկնողությունը. բայց երբ այդ չարժումների մեջ առաջ են գալիս քանակական և որակական փոփոխություններ, այն ժամանակ մենք տեսնում ենք, որ առարկան իր հատկությունը փոխեց կամ իր ձևը: Մեր աչքով տեսածը, սակայն, չի հերքում չարժման չարունակականությունը, որ ամեն րոպե առարկայի ձևը փոխելու մեջն է կայանում. «ձևը մի վայրկենական է՝ մի անցումի վրա բռնված»: Նախքան Անցումը և Ձևը ավելի խորացնելու՝ անհրաժեշտ է դեռ հիմնավորել չարժումը՝ իբրև ընդհանուր Լինելություն: Լինելությունը երեք տեսակ է, որակական, էվոլյուտիվ, և տարածական[33]: Այն չարժումը, որ կանաչ տերևը դարձնում է դեղին՝ որակական տարբերություն ունի այն չարժումից, որ կանաչը դարձնում է կապույտ: Այն չարժումը, որ ծաղիկը դարձնում է պտուղ, էվոլյուտիվ տարբերություն ունի այն չարժումից, որ larve [թրթուր] դարձնում է միջատ: Այն չարժումը, որ կոչվում է ուտել, կամ խմել, տարածական տարբերություն ունի այն չարժումից, որ կոչվում է կուլել[34]: Իրերի այս ներքնապես ապրումը մենք ոչ մի ձևով չենք կարող տեսնել կամ զգալ: Լինելությունն ընդհանրապես մնում է իրերի ամենախորը ծալքերի մեջ թաղված, մյուս կողմից էլ մեր լեզուն և մեր իմացողության բնական հակումը, որով չարժումը և հոսանուտը չի կարելի մտածել՝ անկարելի են դարձնում ըմբռնել չարժման այն ներքին ուղղությունը, կամ կյանքը, որ Լինելություն ընդհանրապես է, որ նյութի մեջ մտած՝ կազմում է տիեզերական անհանգստությունը,

[32] *Նույնը, եր. 325–327:*
[33] *Եր. 329:*
[34] *Նույնը:*

ստեղծում է կենսական զարկը և դրանով առաջ տանում էվոլյուսիոնը:

Անշարժության չարժումը և Գաղափարների փիլիսոփայությունը.– *Լինելությունը՝ իբրև մի անորոշ և անդուլն չարժում ծածկված է իրերի ամենամութ խորքումը. ինչ որ նա մեզ ցույց է տալիս ձև է, գույն, հատկություն, դիրք և մտապրություն: Սովորական դիտողության համար սրանք բոլորն էլ կայուն վիճակներ են. մենք տեսանք, որ ձևը դոնե վիճակ չէ: Բայց վիճակ չեն նաև մյուսները, որովհետև, եթե մի վիճակից մյուս վիճակ անցնելը վերլուծենք և այդ Անցումին ձև կամ գույն անունը տանք, այն ժամանակ անհրաժեշտ կլինի նախկին վիճակի և այդ ձևի և գույնի միջև կատարվող անցումը բռնել և նոր անուն տալ. այսինքն ձևը, որ փոխից իր գույնը, հանկարծակի չկատարվից, այլ ձևի ու գույնի միջև տեղի ունեցավ վիճակների մի անսահման շարունակություն, որ այնքան առաջ գնաց, մինչև կարելի եղավ հասնել անցումի մի չրջանին, ուր մեր զգայարանքները տեսնում են ձևի գույնը փոխված: Վիճակների այդ անսահման շարունակությունը պետք է վերլուծել հետևողականորեն և նոր անուններ տալ: Մենք կարող ենք դրան մի որևէ հատկություն անվանել, բայց անհրաժեշտ է այդ հատկության և գույնի միջև եղած անցումը բռնել և նոր անուն դոնել, ու այս գործողությունը կդնա հավիտենապես և միշտ մի բան միայն ցույց կտա մեզ, որ այս կերպով փորձել շարժումն իմանալի դարձնել, նշանակում է «շարժումը կազմակերպել անշարժություններով»[35]: Հին հունական փիլիսոփայության հախուռն փորձերը՝ շարժումը բացատրելու համար, հասան այս հուսահատ եզրակացության, թե «իրականությունը շարժվում է, բայց պարտավոր էր չշարժվել»: Եվ սրանով ստացվեց գաղափարների փիլիսոփայությունը՝ հավիտենապես անշարժ ձևերի վրա կերտված, ուր «իրականը այլևս շարժուն չէ»: Հարցը պարզ է. ի՞նչպես է, որ A. դառնում է B. կամ ի՞նչպես հնարավոր է լինում B, որ առաջ միայն A էր: Ասում ենք, գարունը դարձավ ամառ, կամ «երեխան դարձավ մարդ», գարունը չի կարող ամառ դառնալ, ինչպես ամառը չի կարող գարուն դառնալ, երեխան չի կարող մարդ դառնալ, ինչպես մարդը չի կարող երեխա դառնալ: Երեխա վիճակը կամ պետք է ոչնչանա մարդ դառնալու համար, կամ արդեն մարդ էր, և ոչինչ էլ չդարձավ: Երկու դեպքումն էլ շարժում չկա, երկու դեպքումն էլ փոփոխությունը կատարվում է՝ ոչնչից մի բան ստեղծե-*

[35] *Նույնը, եր. 333:*

լով: Ճշմարտությունն այն է, որ Անցումի հակայական չրջաններն անտես առնելով մեր իմացողությունը տեսնում է միայն երկու «երևակայական կայարաններ»[36], որոնց գարուն և ամառ անուն է տալիս: Բայց այդ Անցումը գոյություն ունեցել է, չարժուն է եղել և հոսող: Սովորական մտածողությունն է, որ չարժումը պատկերացնում է առանց տևողության և չարունակության, «չարժումը դարձնում է որպես մի կայունություն», որ չգիտես, թե ինչու անունների փոփոխություն է անում, երբ իրականության փոփոխություն չկա: Առանց մտնելու մեր մտքի և իմացողության այս ծուլ գործունեության, որ Բերգսոն կոչում է մեր իմացողության սինեմատոգրաֆիական մեքենականություն, վերլուծության մեջ, այստեղ բավական է ասել միայն, որ չարժումը վիճակից վիճակ անցնելը չէ, այլ միայն այդ անցումը, որ ոչ մի վիճակ չունի իր մեջ, ոչ մի կայունություն կամ քարացում, այլ անընդհատական չարժում, մշտական տևողություն, որ «միշտ նոր է իր մեջ կրած անցյալով»:

Ժամանակը և էվոլյուսիոնը.– Շարժման մեջ ավելին կա, քան վիճակների չարքը, քան չարժվողի հաջորդական դիրքերը, քան մեկ մեկու հետևից իրագործվող ձևերը: Այս ըմբռնումը միայն մեզ ազատում է հակասություններից և իմանալի դարձնում լինելությունը և պատճառականությունը: «Վիճակների չարքը», ինչպես և «մեկ վիճակի ազդեցությունը հաջորդ վիճակի վրա» պահանջում են ժամանակ իրականանալու համար: Ահա այս ժամանակն է, որ ամեն փիլիսոփայության մեջ ունի մի կրավորական դեր, միայն «հնարավոր գործունեության արձանագրություն»[37] է կազմում և ուրիշ ոչինչ: Նրա մեջ ուժ չկա, ոչ էլ այն, ինչ որ ինքն արձանագրելու է: Վիճակներն անկախ, իրենց իրագործման պատճառներն անկախ գոյություն ունեն ժամանակից դուրս: Ժամանակը նրանց պետք է այն չափով, որքան պետք է արձանագրել, ընդունել կատարվածը, առանց ամենաթուլ մասնակցության կատարվող իրականության մեջ: Արդ, հարց է առաջ գալիս, քանի որ ժամանակն այսքան կրավորական դեր ունի, ի՞նչու համար, ուրեմն, փոփոխություններն այս որոշ արագություն ունեն և ոչ մի ուրիշ արագություն. կամ թե, քանի որ ժամանակը համարյա թե դեր չունի չարժման մեջ ու բոլորովին պետք չէ վիճակների հաջորդականությունը և պատճառականությունը բացատրելու համար, ինչո՞ւ, ուրեմն, ամեն բան մի ան-

[36] *Նույնը, եր. 338:*

[37] *Նույնը, եր. 360 և շար:*

դամից տրված չէ, ինչո՞ւ տիեզերքը ի սկզբանն անտի, ցկատարածն վախճանի մի հարվածով չի փուլուում մեր աչքի առջև. ինչո՞ւ «ներկայի ետև կանգնած անցյալի կողքին չպիտի կանգներ նաև ապագան»: Պարզ հարցեր՝ դրված ամենաբարդ սիստեմների կառուցած ճշմարտությունների առջև: Բայց ասենք մի ուրիշ ձևով մեր ճշմարտությունը. ժամանակը կամ ստեղծում է, կամ ոչինչ է[38]*: Ժամանակակից գիտությունները Գալիլեից և Քեպլերից հետո, կամ ավելի ճիշտ Դեկարտից հետո միայն, սկսան ժամանակի դերը հասկանալ տիեզերական լինելության և չարժման մեջ: Բայց չկարողանալով ազատվել իմացողության բնական հակումներից՝ նրանք ժամանակ–ստեղծումը բացատրեցին՝ որպես ժամանակ–երկարություն: Ազատված իմացողության նախապաշարմունքներից, աշխատելով թափանցել իրականության էությունը մեզ տրամադրելի այլ դրծիքներով, որոնց մեջ իմացողություն էլ կա, բայց «զուտ հայեցողությամբ լրացած» և հարստացած մի գիտակցություն, մենք տեսնում ենք, որ չարժումը զուտ ստեղծողություն է կամ ժամանակը, որ իրերի էվոլյուսիոնի մեջ «նոր ձևերի շարունակական ստեղծումն է» և «բացարձակի առաջատվական աճումը», որ վիճակ չէ երբեք, այլ մի «անընդհատական մակընթացություն», մի հավիտենական հոսանք և հորձանք, որտեղ չկա վիճակ և կայունություն, այլ անսահման իրերաթափանցողություն և չարունակություն: Այս անշահախնդիր և աննախապաշարյալ ճանաչողությունը մի գործնական արժեք էլ ունի. բաժանելով գիտությունն ու փիլիսոփայությունը՝ նա առաջնին տալիս է ուսումնասիրելու վայրկյաններ և վիճակներ, այսինքն ինչ որ չի տևում, իսկ երկրորդին՝ չարունակական ստեղծումը, կամ ինչ որ զուտ տևողություն է:*

IX

Տասն և իններորդ դարը ձևնարկեց այս նոր փիլիսոփայության, բայց դժբախտաբար նա կանգ առավ՝ սկսելուց անմիջապես հետո և դնաց դեպի հին ճանապարհներն ու ճշմարտությունները: Փիլիսոփայական այդ խնդիրը մնաց, սակայն: Պետք էր կազմակերպել մի փիլիսոփայություն, որ ազատ լիներ կամայականություններից, անհատական նախասիրություններից և իմացողության նախապաշարումներից, մի փիլիսոփայություն, որ ընդունակ լիներ իմնելու «մանավոր դեպքերի մանրամասնություններին» մեջ՝ ընդգրկելու

[38] *Նույնը, եր. 369:*

համար ընդհանուրի և բացարձակի գիտությունը: Պետք էր բռնել կոնկրետ տևողությունը և ժամանակի մեջ հատկապես տևողականը, ինչպես նաև այն, որ ժամանակի ուժական և ստեղծագործական նկարագիրն է կազմում հասնելու համար իրականության ճշմարիտ ըմբռնողության: Պետք էր գծել նյութի առաջադիմությունը դեպի զգայականությունը և ետ զարգացումը դեպի բանականությունը: Պետք էր ազատել կյանքը կրոնական միստիցիզմի տարականոնություններից, ինչպես նաև ֆիզիկական և քիմիական պարզամիտ բացատրություններից: Նպատակից դուրս թողնել կայարան և վախճան հասկացողությունները ու ճշմարտությունը հեռացնել առարկայական ու ենթակայական հատկանիշներից: Պետք էր փորձել «թե բարձրանալ և թե իջնել» տիեզերական Լինելության ընթացքը, հաշտեցնել նյութի և ոգու հակադրությունը և իրական շարժումը փնտրել տևողության մեջ, որ իրրև զուտ տևողություն, կյանքի և գիտակցության մեջն է: Նյութն էլ տևում է, բայց նա իջնող իրականությունն է դաշնակցած այն բանի հետ, որ բարձրանում է: Կյանքն է և գիտակցությունը այդ բարձրացումը. այդտեղն է կատարվում էվոլյուտիվ շարժումը[39]*: Այդտեղից մեկնելով միայն մենք կարող ենք հասնել այն հեռանկարներին, որոնք բխում են էվոլյուտիվ շարժման բուն աղբյուրիցն իսկ գիտակցությունից: Փիլիսոփայությունը միայն այսպես կարող էր լուծել իր առաջադրությունը: «Սա ոգու վերադարձն է ինքն իր մեջ», մարդկային գիտակցության հանդիպումը կենդանի սկզբունքի հետ, որից ինքն է բխում:*

Թիֆլիս, 1918 Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր:

[39] *Նույնը, եր. 399:*

ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Պատմության ամենեն արագընթաց օրերը հեղափոխության վայրկյաններն են: Հասարակական փորձը՝ իր ամենազարգացած և բազմակողմանի երևույթներով, հրապարակի վրա է: Ամեն մարդ դիտե, թե երբ սկսեց, բայց ոչ ոք չգիտե, թե երբ է վերջանալու: Այնպես, որ անհավատալի են հեղափոխության բոլոր արժեքները՝ իբրև լինելության և փոփոխության պահապան երեսներ, որոնք այնպես կարող են փոխվել, որ այլևս չլինեն: Եվ, սակայն, հինը և հաւականը կործանելուց հետո տառապող մարդկությունը որոնում է նորը և ամենեն ավելի նորի հաւականությունը: Ամեն օր կատարվող ընկերային փորձի մեջ, սակայն, խախտվում է մտածողության պատավորող և համակարգող, ըմբռնող և ճշմարտացնող ուժը, ու այլևս տեղ չի մնում մարդկայնորեն ապրելու, մտածելու և գործելու: Այդ փորձերի թե՛ կրողը, և թե՛ հեղինակը դառնում են հետզհետե կույր պատահականության անգութ տարերքներ: Ամեն մի հեղափոխություն իրենց թշվառության համատարած թշվառության մեջ: Հեղափոխությունը կարող է շատ ճշմարտություններ բերել, բայց դրանք ծառայում են միայն ավելի թանձր քողարկելու այն ճշմարտությունը, որ բոլոր հեղափոխություններին է պատկանում:

Այդ առարկայական ճշմարտությունն ունենալու համար, սակայն, մեծ չանք պետք է, մտքի մեծ աշխատանք, ինչպես նաև իրականության մի մեծ թափանցողություն: Արհամարհանքի և անշահախնդրության հողի վրա զուտ ճշմարտության կիրքը պետք է ունենալ՝ հրապարակը հեղեղող ճշմարտությունների ճշմարտությունը դառնալու համար: Եթե ամբոխը ղեկավարող ճշմարտությունների հոլմանքը չի կլլել մեկին, եթե անտարբերությունը դեպի անցագարձը չի բխում սեփական սառամոքսի ինքնագիտակցությունից, եթե մեկն ապրում է իր հոգու խորքում այն, ինչ որ բոլորն ապրում են իրենց ձեռներով, ոտներով և կոկորդներով,— այն ժամանակ, իհարկե, ճշմարտության սերը կարող է հրապարակ բերելու չափ քաջությունն տալ նրան, որ չաուերի աստածն ասելու համար, չի դառնում երբեք չաուերից մեկը, որ չաուերի չաստածն ասելու համար, չի դառնում երբեք նորելուկ, որ չաուերին հակառակ ասելու համար չի

դառնում, սակայն, չատերին հակառակ: Որովհետև, մինչդեռ ամենայն ինչ հեղափոխության օրերին գուտ գործնական նպատակով է արվում և ասվում, կարող է պատահել, որ տեսական չահագրգռության մեծությունը գործնական արժեք տա իր խոսքերին այն չափով միայն, որչափով դրանք ընդունակ կլինեն սանձել չատ «պիտնականների», խթանել չատ անգործներին և առաջնորդել չատ տարուբերվողներին: Այսքան գործնականություն անկարելի է մերժել որևէ տեսականության:

Այսպես եմ հիմնավորում ես իմ հարձակումը մի քանի դաղափարների վրա, որոնք դարձել են անհավատ մարդկության սրբազան կուռքեր: Նրանք անխախտ կմնան իրենց տեղը, ինչպես հավիտենական չարիքը աշխարհի վրա, սակայն այդ էլ մի քաջալերանք է:

I
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Երևակայեցեք մի երկիր, որ գտնվում է իր «մեծ հեղափոխության» մեջ: Գործի մարդիկը գործի վրա են այն աստիճան չատ, որ անպետք մարդիկ նույնիսկ գործի վրա են: Հեղափոխությունը այլևս անպետք մարդ չի թողնում աշխարհի երեսին, նա կարող է առնվազն ծափահարել կամ քվեարկել:

Հրապարակի վրա է ամբողջ կյանքը, մարդու հոգին արդեն շրթունքների վրա է, մտքերի այնպիսի տենդոտ արտադրություն կա, որ ուղեղի մեջն այլևս միտք չի մնացել, միտքը հեռացել է իր բնակարանից: Խոսել, դատել, վիճել, քվեարկել և ընտրել՝ կոչվում է օրգանական աշխատանք հեղափոխության օրերին:

Իր մտքի ձևը իրականության վրա դրոշմելու տենդը այնքան մեծ է, որ աշխարհի ամենամեծ տարակերպությունները հնարավոր են դառնում: Լուռում է ճշմարտությունը և ճշմարտության անունով թևեր է առնում ամենայն ինչ: Ճանաչողությունը, փորձառությունը և գիտությունը գտնվում են նրանց ձեռքին այժմ, ովքեր մեծ տնտեսերամենտ են ցույց տալիս, թոքերի և չնչափողի մեծ ընդունակություններ:

Հեղափոխությունը ընկերային տարակերպությունների (paradoxes) մեծ դաշտն է: Միլիոններ են հրապարակ գալիս անմտության խելքն ապացուցանելու: Մի բանաձևով միայն ընկիր է դառնում թշնամին, և թշնամի է դառնում բարեկամը: Բոլորն էլ մի բան են

ցանկանում, բայց, որովհետև բոլորն էլ ցանկանում են, այդ պատճառով էլ անկարելի է դառնում:

Ոչ մի ժամանակ խոսքի ուժը այնքան մեծ չէ, որքան հեղափոխության մեջ, ուրեմն, սա կատարյալ ռասիոնել մարդկությունն է: Սակայն, ոչ մի ժամանակ խոսքի ուժը այնքան անպտղածնական և անուժ չէ, որքան հեղափոխության մեջ, ուրեմն սա բարբարոս և չամախոս մարդկությունն է:

Ոչ մի ժամանակ բացարձակ ազատության իդեալը միս ու արյուն չի դառնում այնքան մարդկանց մեջ. ուրեմն սա իդեալ մարդկությունն է: Ոչ մի ժամանակ, սակայն, այնքան ալլանդակ բռնություններ չեն լինում, որքան հեղափոխության մեջ:

Առանց հեղափոխության անկարելի պիտի լիներ ապացուցանել արդարության անարդարությունը, հավասարության անհավասարությունը, եղբայրության բարբարոսությունը և ազատության բռնությունը: Լեզվի ու մտածողության այս ինքնահերքումը և ինքնոչնչացումը զարձյալ հեղափոխության չնորհքներից է:

Վայ այն երկրին, եթե լայնածավալ է: Կենարան դառնալու մտահոգությունն այնքան «կենարաններ» է առեղծում, որ մարդիկ չեն մոռանում կենարանների կենարան էլ կազմելուց, որ իր հերթին դառնում է, իհարկե, չատերից մեկը: Երբեք մարդիկ իրենց հույսն այնպես չեն դնում անհատների վրա, երբեք, սակայն, այնքան կատարյալ չէ անհատի ոչնչացումը:

Ոչ ոք չգիտե, թե հեղափոխական չատախոսություններից ինչպես է, որ գործ է առեղծվում: Գործի առաջարանը խոսքն է անկասկած, բայց խոսքի անուժությունն անհերևակայելի է: Մի մոգական ձեռք, բոլորին հակառակ, թողնում է, որ գոյություն ունենա և մնա մի բան, որ գործն է, քվեարկված է դրան հակառակ, ընտրությունները դրան են հակառակ, գործիչները դրան են հակառակ, և, սակայն, գործիչը սովորում է՝ ինքն իրեն հակասելով իր գործին չհակասել և թույլ տալ, որ իր գործը հակառակվի իր ընտրողներին, իսկ ինքն էլ ծափահարվի իր ընտրողներից:

Վայ նրան, որ պահպանողական է. նա, որ չի ուզում ուրիշ բան էլ ձեռք բերել, նա կորցնում է իր ունեցածն էլ: Վայ նրան, որ ազատական է. նա, որ ուզում է բոլորին ազատություն տալ, ինքն էլ զրկվում է իր ազատությունից:

Ոչնչությունից ծնվում են անուններ՝ մեծ և հոյակապ: Անհատն է, մտածում եք դուք, որ պատմությունը դարբնում է: Անունների մեծությունը, սակայն, վերջվերջո ցույց է տալիս, թե հեղափոխութ-

յունը ինչպիսի մեծ դատարկություններ կարող է ծնել: Առանց այդ անուններին հեղափոխությունը, սակայն, անկարելի է թվում, խոստովանում են ամենքը:

Երբեք մարդկությունն այնքան չի փիլիսոփայում, երբեք, սակայն, այնքան անմիտ չէ եղել մարդու հավակնությունները: Այսօրվա իրականությունը ստեղծում է անթիվ իրապաշտներ, բայց երբեք ցնորամտությունը այնքան իրապաշտական չի եղել, կամ փոխադարձաբար:

Լոզունգների և բանաձևերի անսահմանությունը թվում է, թե պապկու է վերջապես անբանական իրականությունը. ոչ մի տեղ, սակայն, լոզունգներն ու բանաձևերը իրականության գերիները չեն դառնում, որպես հեղափոխության մեջ: Կուռքերի խորտակման աննման եռանդը չատ կարճ հիշողություն է ունենում: Հանուն կուռքերի են խորտակվում բոլոր կուռքերը, ինչպես որ հանուն կրոնի են ջնջվում բոլոր կրոնները:

Թե հարազատ իրականությունն է սա, երևում է նրանից, որ չատ չատերը իրենց հոգու խորքում գաղտնի ցանկանում են հինը, անցնողը, գնացողը, բռնությունը: Մարդիկ հաշտվել էին դրա հետ. սովորությունը, վարժությունը, երկարատևությունը տանելի էին դարձրել անտանելին, և այժմ անսովորն ու անվարժը անտանելի են դարձնում ամենայն ինչ: Այժմ ազատությունն է մեզ ճնշում: Եվ կամքերի ու ցանկությունների անկարողությունն ու խաչաձևումը դուցե չատերը բացատրեն իրրև ազատության առատությունից ճնշված գիտակցության անգործնականություն և թափառում:

Կործանվածի հիշողությունն այնքան տիրապետող է դառնում, որ նորը հաստատելու ղեկավարող սկզբունքը ոչ թե դրական մի հիմունք է, այսինքն մի բան, որ ինքնանպատակ է և ցանկալի՝ անկախ ուրիշ բանից, այլ նորը պետք է լինի, որպեսզի նոր լինի, որպեսզի հինը չլինի, հնին հակառակը լինի:

Ամեն երկրի հեղափոխությունը իր երկրի հեղափոխությունը չէ միայն. նա մարդկային հեղափոխություն է. այստեղն է նրա փիլիսոփայական փայլը: Սակայն, ամեն երկրի հեղափոխությունը ոչ մի երկրի հեղափոխությունն էլ չէ, որովհետև ամենայն իշխանություն, որ քանդելու է որևէ հեղափոխությունը, նրանով է տարբերվում կործանվածից և անցնող-գնացողից, որ աշխատելու է նմանվել հնին, անցնող-գնացողին, կործանվածին, եթե ուզում է իշխանություն լինել. այստեղն է նրա փիլիսոփայական հիմքը: Երբ մենք ուզում ենք ամեն բան փոխել, մոռանում ենք, որ մի բան կարող է փոխվել, երբ

չատ բաներ չեն փոխվում: Հողը պետք է անշարժ լինի քայլող ոտնե-րի համար: Բայց երբ մենք ուզում ենք ամեն բան փոխել, մենք մո-ռանում ենք, որ մարդն անփոփոխ է, այդ պատճառով և ոչ մի բան էլ չի փոխվելու: Վերջիվերջո հաղթանակում է, իհարկե, ամեն բան փոխելու մեր կամքը, և մենք ստանում ենք դեմոկրատներ, որոնք ա-վելի բյուրոկրատ են, քան որևէ տեղ, բանվորներ, որոնք ավելի հա-րուստ են, քան վաճառականները, ղորք, որ ավելի վախկոտ է, քան նապաստակը, բուրժուաներ, որոնք ավելի ազատական են, քան ա-նիշխանականը: Մի բան կա ընկերային կյանքի մեջ, որ երբեք չի կարելի տալ, ով որ առնել չդիտի, ինչքան ուզում եք տվեք, նա չի կարող ստանալ, իսկ ով որ առնել գիտի, նա տալու պետք չունի ստանալու համար:

Տեր ունենալու կարիքը երբեմն փոփոխամիտ է լինում: Հեղափո-խությունը մեզ սովորեցնում է տերեր փոփոխելու անհրաժեշտությու-նը և ավելորդությունը միաժամանակ:

Ամենայն հեղափոխություն ժողովրդի չահերի ինքնագիտակ-ցության վայրկյանն է, բայց միայն մի վայրկյան, որովհետև ամե-նայն հեղափոխություն նվազագույն անհատականության և ամե-նափոքր ինքնագիտակցության կատարյալ ոչնչացումովն է չարու-նակվում: Ամենանրբազգաց անձնավորություններ (Ռուսսո ևն) են լինում նրա կարապետները, սակայն ամենակոպիտ բռնակալներն են լինում նրա արհեստավորները: Մայրահեղ ազատության, խիստ նուրբ անհատականության պահանջներն են մղում մեզ դեպի հեղա-փոխությունը՝ մեր ունեցած ամենափոքր ազատություններից էլ, դեռ չբռնաբարված անհատականություններից էլ դրկվելու համար: Մի կտոր հաց բաց է անում հեղափոխության դռները, երկնքից աստղեր քաղելու մեր մոլեգնության մեջ փակվում են հեղափոխության դռները: Պատմության դրքերի մեջ պատմություն տեսնողների հա-մար հեղափոխությունը մեծ-մեծ դործեր է կատարում: Իրականութ-յան մեջ պատմությունը ապրողների համար՝ հեղափոխությունը մեծ-մեծ խոսքեր է ջարդում: Ոչ ոք չպիտի կարողանա ապացուցա-նել, թե այն օրից, երբ սկսվեց հեղափոխությունը մինչև այն օր, երբ կատարելապես մոռացվեց հեղափոխությունը, մի երկիր չպի՞տի լի-ներ այնպես, ինչպես որ է՝ առանց հեղափոխության: Այդ անկարելի է, որովհետև մի դահաղրկություն, երբ կարող է հարյուրավոր մի-լիոնների խենթացնել, միշտ մտածել է տալիս մեզ երկրի այն բար-ձունքի մասին, որտեղից աշխարհի փայլն ու փառքն է տեսնում: Բայց քանի որ փայլն ու փառքը բարձունքներից հեռու են միշտ,

ուստի խնդիրը միևնույն է: Մարդու Որդին է՞ խաբվում, թե՞ մարդկանց որդիները:

Հեղափոխությունը հասարակագիտական քաոսն է, եթե ամբողջությունը տեսնող աչքերով նայենք. բայց մասերն էլ վարակված են ամբողջության ցավով: Այդ ընդհանուր վարակումի մեջ, սակայն, լայն ու հաստ գծեր և բծեր կան, որոնք մատչելի են դարձնում ախտաբանությունը: Առանց հեղափոխական, կամ առանց հակահեղափոխական լինելու կարելի է բռնել այդ գծերից մի քանիսը ու վերլուծությունները կատարել: Ճիշտ ինչպես, սոցիալիստ լինելով, կարելի է ցավել չափազանց սոցիալիզմից, որովհետև ձեր երևակայած երկրում, եթե մինիստր-նախագահից մինչև վերջին ոստիկանը սոցիալիստ են, աշխատեցեք հոգեկան մեծ ուժ կուտակել՝ մի րոպե ևս սոցիալիստ մնալու:

Մեծ համբերություն պետք է այն աչքերի համար, որոնք ուզում են քաոսը տեսնել:

II

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՆ

Հեղափոխության մեջ առաջնակարգ դեր են խաղում կուսակցությունները: Առանց նրանց պատմության անկարելի է նրանց ընկերաբանությունը կատարել: Բայց այն համեստ չրջագիծը, որի մեջ չկան մեծ հավակնություններ, թույլ է տալիս «փոքրիկ նկատողություններ» անել այդ մասին էլ, փոքրիկ մտքեր, որոնք գուցե մի օր պետք եղած ճաշակը և ժամանակը գտնեն լինելու այն, ինչ որ ցանկալին է:

Ոչ թե միայն հեղափոխության, այլ ընկերաբանության տարակերպություններից է այն, որ մարդիկ կարող են պատվավոր դարձնել, ինչ որ ըստ էության անպատիվ մի բան է: Վիճելի հարցերն են միայն, որ կողմնակցություն, կուսակցություն են պահանջում: Եվ, ահա, մարդիկ առաջուց վճռում են կողմնակից լինել, կուսակից լինել մի բանի, որ վիճելի էլ չէ դեռևս, որ քննության կարոտ է, իրականության կռանի տակը չի ընկել դեռ: Եվ ավելին. մարդիկ վճռում են կողմնակից լինել, կուսակից լինել ոչ միայն այն բաներին, որոնք վիճելի են դեռևս, այլ նաև այն բաներին, որոնք այժմ գոյություն չունեն և ապագայում միայն կարող են գոյություն ունենալ: Գոյություն չունեցող բաների հանդեպ առաջուց վճռել դիրքը՝ նշանա-

կում է նվազագույն ճշմարտության հոգսից իսկ ազատվել մարդկայնորեն և լայնմտորեն: Բոլոր կուսակցությունները աշխատում են ցույց տալ, թե իրենց պաշտպանած հարցերը անմիջական չահագրգռություն են ներկայացնում բոլորի համար էլ, ուստի ամենքն էլ իրենց կուսակցության պիտի անդամագրվեն: Սրա մեջն է կուսակցական լինելու պատիվը: Բայց հասարակական հարցերից շատ քչերն են, որ անմիջական չահագրգռության առարկա կարող են լինել բոլոր մարդկանց համար էլ, նկատելով միայն այս, որ պետական ձևի նման հարցն իսկ շատ վիճելի է, թե ո՞րն է լավը: Ոչ մի հանրապետություն դեռ չի տվել անպլիական միապետության ազատությունները: Պետական ձևի պաշտպանության մեջ կան մարդիկ, որ անմիջապես չահագրգռված են. մեծամասնությունը՝ շատ հեռավոր կերպով: Ահա այդ մեծամասնությունն է, որ պիտի խտացնի կուսակցական չարքերը, ցնորքներով օրորվի, թե իրեն էլ անմիջապես չահագրգռված է, և կուսակից դառնա, երբ պետք էր անմիջապես չահագրգռվողների քննադատը դառնալ: Դրանով նա փակում է ճշմարտության ճանապարհը: Այստեղն է ահա անպատիվը: Թող ամեն մարդն իր համար ասի, թե ի՞նչ կլինի մի երկրի բարօյականությունը, ուր անկուսակցությունը ծնծաղելի և մի նոր տեսակի կուսակցություն է:

Կուսակցություններն իրենց գոյությունը պահում են, ուրեմն, ճշմարտությունը թաղելով: Ոչ միայն այդ, այլև իրար հակառակվելու ուժգնության մեջն է կուսակցությունների ուժը: Եթե ճշմարտությունը լիներ կուսակցության սկզբունքը, այն ժամանակ հավանական է, որ բոլոր մարդիկն էլ մի կուսակցության պատկաններին. ուրեմն, կուսակցություն հնարավոր չէր լինի այլևս, որովհետև հակառակ կարծիք պաշտպանող պիտի գոյություն չունենար, կուսակից և կողմնակից լինել անկարելի պիտի դառնար: Աշխարհում կողմ չկա, այլ կան կողմեր: Այդ պատճառով էլ մի կուսակցության գոյության արմատը իր հակառակորդ կուսակցության սրտումն է աճում: Այդ պատճառով էլ բոլոր մարդիկ անկուսակցական են, որովհետև մարդու սկզբունքը ճշմարտությունն է, իսկ կուսակցության սկզբունքը՝ ճշմարտության հակառակությունը:

Ով որ բարի լինի այս հոդվածների ոգին հասկանալ առանց կրճատումների կամ հավելումների, նա պիտի ընդունի, որ այդ ոգով կարող է դրել և՛ կուսակցականը և՛ անկուսակցականը: Խնդիրը միայն հասարակագիտական է և երբեք դրծնական: Դուցե համայնական

կամքը կազմակերպելու մեջ կան ներակա ներհակություններ, որոնք հնարավոր են դարձնում հակասությունը:

Կուսակցությունները կազմվում են ընդհանրապես հասարակության մեջ գոյություն ունեցող դաղափարներին և ձգտումներին ուժ և իրականություն տալու համար: Մի ընկերության օգտին ծառայելու կոչված նրանք դառնում են շատ հաճախ այդ ընկերության գլխին ամենամեծ չարիքը: Կապված անունների և լոզունգների (որոնք մի տեսակ անուններ են) հետ, նրանք ուզում են ոչ միայն այն, ինչ որ հասարակությունն է ուզում, այլև նրանք պահանջում են, որ հասարակությունն էլ ուզենա այն, ինչ որ իրենք են ուզում: Այստեղ տեր ը ծառա է, և ծառան տեր է՝ դեռ սոցիալիզմը չիրականացած:

Ենթադրողներ կլինեն, թե կուսակցությունները նպատակներ պիտի չունենան, սեփական, ինքնուրույն նպատակներ, որովհետև հասարակության նպատակներն ու իդեալներն են իրենց նպատակն ու իդեալը կոչված նրան ծառայելու, կամ՝ րող են միթե նրանք ուրիշ իդեալ ունենալ, քան ինչ որ հասարակությունն ունի: Բայց կուսակցությունները ոչ միայն նպատակներ ունեն, սեփական և ինքնուրույն, այլև կուսակցություններն ընդհանրապես ինքնանպատակ են: Մի տրամաբանություն կա, որ ասում է՝ հասարակությունը չի կարող վնասվել, երբ կուսակցությունը չահում է: Եթե մի երկրի մեջ գոնվող չորս հակառակ կուսակցություններն էլ չահեն, անշուշտ բոլոր կուսակցությունները կպնդեն դեռ, թե հասարակությունը չի կարող վնասվել, երբ կուսակցությունը չահում է: Կուսակցությունները ինքնանպատակ են ոչ միայն, որ հասարակության ծառայելուց ավելի, իրենք իրենց են ծառայում, այլև ունեն կռապաշտության և առհասարակ կրոնական մոլությունների բոլոր ախտերը: Կուսակցության անունը և կուսակցության մեջ եղած անունները մի-մի ուժածին աղբյուր են: Ոչ մի պայմանով ոչ մի կուսակցություն չի կարող հրաժարվել թե՛ մեկից և թե մյուսից: Իրականությունը ա՞յլ պահանջներ է առաջադրում. այն ժամանակ կուսակցության անունն էլ այլ բովանդակություն է ստանում: Շատ հեշտ է կատարվում կերպարանափոխությունը, շատ հեշտ են անցնում կուսակցությունները սոցիալիստականից՝ ազգայնականին և ազգայնականից՝ սոցիալիստականին: Ի՞նչու անունը չե՞ն փոխում, կարելի է հարցնել: Որովհետև անունն ուժ է, ամենակարող մի կուռք, որ անտարբեր է բովանդակության հանդեպ և կարող է ծառայել սոցիալիզմին նույնքան հավատարմությամբ, որքան ազգասիրությանն էր ծառայել մի ժամանակ: Եթե անվան համար կարելի է մի արդարացում դտնել, ա-

նուններին համար, սակայն՝ բացարձակապես անկարելի է: Կուսակցության անունը անհատականություն չունի, թեև ևս ունի, եան անխախտ կմնա, երբ փոխվում է անհատականությունը: Կուսակցության մեջ եղած անուններըը, բացի կուսակցական անհատականությունից ունեն նաև անհատական-անձնական մի փոքրիկ ևս: Սրա վիճակն ի՞նչ է լինելու: Իսկապես ոչինչ: Երբ ներում եք կուսակցական եսին «ոչ» ասելու, ինչ որ մի օր «այո» էր ասում, ի՞նչու չպիտի ներեք նաև անձնական եսին սպիտակ հայտարարելու, ինչ որ մի օր սև էր հայտարարել: Կուսակցականությամբ բզիկ-բզիկ եղած անհատականությունը բնազդաբար զգում է այդ, և շատ շատերը «ձանձրանում են», «հեռանում են» կուսակցությունից՝ վիրջիվելիջո իրենց ներքին հոգևական պահանջներին բավարարություն տալու, իրենց հոգին այդ ոչընդգությունից ազատելու համար միայն: Շատերն էլ կուսակցությունն են փոխում՝ հուսալով մի ուրիշ տեղ գտնել այն, ինչ որ այստեղ չգտան: Կուսակցական և անձնական եսերի նույնության և կատարյալ համերաշխության կա նրանց մոտ միայն, որոնք արհեստով կուսակցական են: Կուսակցության մեջ եղած անուններիի մեծ մասը սրանցից է կազմվում: Սրանք Սպինոզայի Աստծու նման անտարբեր են հասարակական բոլոր երևույթների և կուսակցության ամեն տեսակ բովանդակություններին հանդեպ: Ու չդայլում են իրենց ջանքերը սրան էլ նրան էլ, լավին էլ, վատին, միայն թե իրենց պաշտպանած կուսակցության գնա, նրա վատին ու լավին ծառայի իրենց ջանքը:

Ամեն մարդ ընդունում է, որ հասարակական գործերը պիտի վճռեն նրանք, որոնք ծանոթություն, դիտություն և փորձառություն ունեն: Անհատական և ենթակայական մտածելակերպներ կան, որոնք միշտ կարող են իրար հակասել: Բայց իրականության գրած մի առեղծվածին միայն մի լավագույն լուծում կարելի է տալ, և դա բխելու է ճանաչողությունից, գիտությունից և փորձառությունից[1]: Սակայն այնտեղն է կուսակցությունը, որ «մրցում է ճշմարտության հետ», գիտության հետ, փորձառության հետ:

Երբեմն կուսակցությունը իր դիրքը որոշում է մի հարցի հանդեպ՝ ոչ նույնիսկ նկատի առնելով այդ հարցի ու իր սկզբունքների ներդաշնակությունը կամ ներհակությունը, այլ պարզապես, թե իր վճիռն ինչ չափով կարող է բարձրացնել իր կուսակցության ուժը, համբավը և հեղինակությունը: Երբեմն նա իր դիրքը վճռում է մի

[1] *Տե՛ս* G. S i m m e l. Sociologie, 546.

հարցի հանդեպ նկատի ունենալով պարզապես իր կուսակցության մեջ հեղինակություն վայելող անձնավորության անձնական-հասարակական շահերը: Պատահում է ավելին: Կուսակցությունը իր դիրքը վճռում է մի հարցի հանդեպ առանց նկատի առնելու իր սկզբունքները, իր ղեկավարող անձնավորությունների շահերը, հասարակության օգուտը, գործի առարկայական հիմունքը. այդ բոլորը մեկդի է դնում նա և «այո» է ասում, եթե հակառակորդ կուսակցությունը «ոչ» էր ասել, և «ոչ», եթե հակառակորդն «այո» էր ասել: Կուսակցությունների պատմությունը կազմվում է այսպիսի մշտական «այո»-ներից և «ոչ»-երից, որոնք ժամանակի ընթացքին ստեղծում են անհաշտ բանակներ, որոնցից մեկն «այո» է ասում, երբ մյուսը «ոչ» է ասում և փոխադարձաբար, սոսկ այն պատճառով, որ հակառակությունը մնաց հակառակություն և բաժանումը բաժանում: Մտքի մի դաստիարակություն է տալիս կուսակցությունը, որով, եթե հակառակորդի հետ որևէ կարևոր կետում համաձայնություն գոյացվի, ոչ միայն այդ կետում մեկի կամ մյուսի անհատականությունը ստվերի տակ է ընկնում, այլ, թվում է այդ մտածողության համար, թե ամբողջ կուսակցական կյանքը, պատմությունն ու հաղթանակներն են, որ պիտի պարտվեն դրանով: Շատ քիչ չեն այնպիսիները, որոնք, կուսակցական դառնալով, դատապարտված են կուսակցական մեռնելու և մեռնելուց առաջ հայտարարելու, որ կուսակցական են ծնվել: Կան ընտանիքներ, որոնք կուսակցական են ամբողջությամբ: Ընտանիքների միջև եղած հարաբերությունը հաճախ որոշում է, թե այդ ընտանիքների հետ կապ և ծանոթություն կամ հակառակություն ունեցողները ո՞ր կուսակցության պիտի պատկանեն: Մի քաղաքում մի քանի երիտասարդներ որոշում են կուսակցական դառնալ. երբ հարց է լինում ընտրել, թե ո՞ր կուսակցության պետք է միանալ, վճռական դեր է խաղում այն տեսակետը, որ, եթե միանան մեծ և տիրող կուսակցության, իրենց անխորժության համար պիտի կլլվեն նրա մեջ և դառնան չատերից մի քանիսը, ուստի վճռում են միանալ այն կուսակցության, որի անունը միայն գոյություն ուներ իրենց քաղաքում:

Քաղաքական-հասարակական գործունեության առաջին քայլն է կուսակցությունը: Բայց կուսակցությունը դատապարտում է կուսակցական հոծ զանգվածներին քաղաքական անգործության հօգուտ իր մի քանի կարկառուն անձնավորությունների: Ջնջելով ան-

[1] *Նույնը, եր. 547:*

հատականությունները՝ նա արժեքավոր է դարձնում, երբեմն, անարժեքը և ծառայում է սարկաբար մի անձնավորության՝ հասարակության ծառայելու համար: Մինչդեռ մի երկիր, ուր ոչ մի կուսակցություն չկա, կարող է երևան բերել քաղաքական գործիչների ավելի մաքուր տիպեր, որոնք բեռնավորված են լինում միայն առարկայական ճշմարտությամբ՝ ազատված կուսակցության անցյալի սխալները կրելուց, դրդված իրենց ներքին-հոգևկան պահանջներից և ոչ թե հարցի լուծման նպատակահարմարությունից և առավելությունից: Ամբոխի քաղաքացիական գիտակցությունն արթնացնելու մի միջոց միայն գիտե կուսակցությունը. դա ընտրությունն է: Սակայն ընտրության քաղաքացիական դատարակությունն այն է, որ ամբոխի մշուշապատ երևակայության առջև վեհապետական հորիզոններ է բաց անում. — ժողովուրդ — վեհապետ — և քվե տալովն իսկ վերջացնում նրա քաղաքական գործունեությունը: Սա նշանակում է կայքրությունները առաջարկել միանդամայն իրականության մեջ և ոչինչ չտալ անոգոք իրականության մեջ: Միացյալ նահանգներում շատ է պատահում, որ կուսակցությունը մի հարցի առթիվ մի բանաձև է մշակում և ուղարկում ամեն քաղաք, ամեն գյուղ՝ այդ առթիվ կազմված միանդամներին քննարկելու համար: Ուրիշ ոչ մի ձևով չէր կարելի քաղաքացիական գիտակցությունը անդիտակցություն դարձնել: Ամենայն կուսակցություն խոստում է հանուն սկզբունքների, և տարածված կարծիք է, որ նրանք, ովքեր չեն կարող կուսակցական լինել, նրանք չեն կարող մի սկզբունքի ծառայել: Սակայն կուսակցական լինել՝ նշանակում է սկզբունք չունենալ, որովհետև, բացի այն, որ եթե մարդն ինքն չի ստեղծել իր սկզբունքը, նա սկզբունք չի կարող ունենալ, այլև որ հասարակական գործունեության մեջ առաջուց ծրագրված սկզբունքները, կազմելով սահմաններ և պատնեշներ, արգելում են ազատ անձնականության ազատ զարգացումը և վերջինին անընդունակ դարձնում սկզբունքի ծառայելու: Միշտ անհատի էվոլյուցիան կատարվում է խոտորնակ համեմատությամբ հասարակության էվոլյուցիային: Ուրեմն, նա, որ ընդունակ է սկզբունքների աշխարհում օրեցօր նվաճումներ կատարելու, նա՝ իբրև կուսակցական, դատապարտված է ամլության և նեղ չղթաների, որոնք վերջիվերջո նրա մեջ թողնում են միայն մի սկզբունք, որի անունն է անսկզբունքություն: Անշուշտ, սկզբունքը պահանջում է տևականություն և հաստատուն հիմքեր, բայց նա հաստատուն և տևական պետք է լինի կատարյալ ազատության մեջ՝ թե մտքի և թե մարմնի: Սկզբունքի արժեքը վտանգ կարողանալու և այ-

նուամենայնիվ փոխել չուզելու մեջն է: Ուզել-չուզելու այդ կատարյալ ազատությունն է ահա, որ ոչ մի կուսակցականի տրված չէ:

Մի երկիր, ուր առանց կուսակցության հասարակական գործունեություն հնարավոր չէ, այդ երկրում հասարակական գործունեությունը պարտավորիչ չէ իր քաղաքացիների համար, այլ չահավոր միայն: Կուսակցական լինել և չհվվել, թե չահվելու համար կուսակցական լինել, պատճառի և արդյունքի մի խառնարան է, որ որոշում է այդ երկրի կուսակցական ոգու հատկանիշները: Ո՞վ կարող է գրկվել իր շահից, կամ որ նույն է, ո՞վ կարող է կուսակցական չլինել.

Եթե դուք հարում եք մեծ կուսակցության, այդ կուսակցության մեծությունից ձեզ էլ է բաժին ընկնում: Եթե դուք հարում եք փոքր կուսակցության, այդ կուսակցության մտածում եք տալ դուք ձեր մեծությունից: Բայի այդ, մեծ և ուժեղ պետք է լինել մեծ և ուժեղը թողնելու և փոքրին միանալու, փոքրի շահը պաշտպանելու, ընկածին կանգնեցնելու համար:

Հայտնի է, թե ինչպես են մեռնում կուսակցությունները. ոչ թե գործի պակասությունից, այլ հաճախ գործի շատությունից են մեռնում կուսակցությունները, ինչպես օրինակ, Հայկ. իրականության մեջ հնչակյան կուսակցությունը մեռավ գործի առատության մեջ: Ոչ ոք չի լսել, որ մի կուսակցություն յուր առաջադրածները իրականացնելուց հետո հաշվեհարդար կատարե և լուծվի: Ընդհակառակն, երբ հասարակությունն այլևս հարցեր չի առաջադրում մի կուսակցության, այն ժամանակ այդ կուսակցությունն է հարցեր առաջադրում հասարակության, որի առաջին հոգսը լինում է այժմ ոչ թե ապատվել այդ կուսակցությունից, այլ նրա ցույց տված խնդիրները իր վրա վերցնել և լուծել, որպես թե ինքն իսկ դրել էր այդ հարցերը: Կամավոր մահը դոյություն չունի, ինքնասպանությունն էլ կամավոր մահ չէ: Ոչ մի կուսակցություն կամավոր մահ չի ճանաչում, ոչ իսկ ինքնասպանություն: Ուրիշ բաներ պետք են, որպեսզի մի կուսակցություն մեռնի: Այստեղն է գտնվում կուսակցությունների ամբողջ ողբերգությունը:

Կուսակցությունը թույլերի, անհաջողների, երևակայողների և ապիկարների բանակն է կազմակերպում: Դեռ հեղափոխությունից առաջ նա ասում է ամեն մարդուն, որ դու էլ կարող ես կառավարել մեր երկիրը: Բոլոր երևակայողները համոզվում են դրան: Անհաջողներին ասում է դու իրավունք ունես: Բոլոր անհաջողները ավելի քան համոզված են դրան: Ապիկարներին ասում է դու հավասար

ես, դու էլ կարող ես, չնորհքով ես, բոլոր ապիկարները ավելի քան ճիշտ են դատում կուսակցության անհրաժեշտությունը: Թուլլներին ասում է՝ դու ուժեղ ես, հենց միայն քվե տալով՝ դու կարող ես աշխարհի կառավարության մասնակցել: Եվ բոլոր թուլլերը մի անգամ էլ ապացուցանում են իրենց թուլությունը՝ մտնելով կուսակցության մեջ, ճշմարիտ համարելով այդ ասածը:

Կուսակցությունների մեջ կա մի առանձնահատուկ բարոյականություն. «միջկուսակցական ատյանները» ցույց են տալիս թե ի՞նչպես մեծը փոքր է և փոքրը՝ մեծ: Մի ուրիշ ծալիկ էլ ուրացությունն է, աշխարհին բոլոր ազատություններ չնորհող կուսակցությունը ուրացող (renegat) է հայտարարում նույնիսկ մի բոպե այդ կուսակցությունից հեռանալու ազատության մասին մտածողներին: Այս այն բարոյականությունն է, որ արգելում է էչ հեծնելու ամոթիից տառապողներին ներքև իջնելու ամոթանքն անգամ: Բայց անհատի հոգումն է թաղված այս հակասությունը, որ կուսակցություն փոխելու ազատությունը դարձել է բարոյական մի անանկություն: Հենց այդ պատճառով էլ բոլոր կուսակցությունները հետադիմական և բռնակալ հաստատություններ են, որոնք չատացնում են բարոյական անանկությունները և կաչկանդում են փոփոխության ազատությունը:

Եթե կուսակցությունը հալածվում է, արկածախնդիրներն են բազմամարդում նրա շարքերը. հալածանքից քաղցր բան չկա: Եթե կուսակցությունը պաշտպանվում և դորանում է, չատախոսներն ու դատարկապորտներն են բազմամարդում նրա շարքերը, մեծության մասին խոսելը ինձ էլ է մեծ դարձնում:

Ընդհանրական բնորոշումներ և սահմանավորումներ են սրանք՝ ավելի հարմար բնականոն զարգացում ունեցող ժողովուրդների կուսակցություններին: Փոքր և տարատայման վիճակի մեջ գտնվող ժողովուրդները ունենում են տարբեր կուսակցական գծեր, որոնք վերջիվերջո ընդհանուրի խեղաթյուրումները կամ չափազանցություններն են ներկայացնում:

Կուսակցական ներհակություններով տարուբերվող ժողովուրդները հասարակական միակամ գործունեության համար միայն մի բռնկամ ունեն. դա այն թշնամին է, որ սպառնում է ոչնչացնել նրանց բոլորին, առանց կուսակցական խտրության: Սկզբունքային ձևով, կուսակցական ժողովուրդները միայն բացասական հիմքի վրան միակամ կարող են դառնալ: Դեռ ավելին. հասարակության մեջն է արմատն այն բանի, որ կուսակցությունների մեջ ամենից անանձ-

լին է: Բոլոր հանրահարցումները (Referendum) վերածվում են վերջիվերջո մի մեծ «Ոչ»-ի[1] անհատական և խմբակցական ցանկությունների և կամքերի անսահմանության մեջ միայն «ոչ»-ը կարող է ընդհանուր լինել, որովհետև «արգելքի հակառակը ոչ թե առաջարկությունն է, այլ թույլտվությունը»: Ամենամեծ կուսակցությունները, ինչ որ արգելում են, տեղը մի բան չեն առաջարկում, այլ թույլ են տալիս մի շարք բաներ, որոնց ոչ անունը կա և ոչ էլ ցուցակը: Ճիշտ այդ է պատճառը, որ ամենայն հեղափոխություն, որ պահպանվում է կուսակցություններով, չինարար գործ է կատարում այն ժամանակ, երբ քանդում է: Միայն հինը քանդելու մեջն է, որ կուսակցությունները կարող են միանալ: Հանրապետություն հայտարարելը հեղափոխությամբ տապալված միապետության մեջ չինարար մի գործ չէ, դա քանդել է, դա միապետության որևէ հնարավորությունն ոչնչացնելն է: Այլ բան է հայտարարելը, այլ բան է հաստատելը. այստեղ արդեն դրական գործ կա, և երկիրը երբեք չի միանալու դրա համար: Ժողովուրդները ուրիշ միջոց դիտեն դրական գործ կատարելու համար: Դրական-չինարար գործը պահանջում է ճեռնհասություն, ճանաչողություն, փորձառություն և դիտություն, այսինքն, ամենայն բան, որ չի կարող դոյություն ունենալ մի կուսակցության մեջ, անգամ եթե սա միայն դիտության անունից երդվելիս լինի: Կուսակցական կազմի պատկերը մեզ ցույց է տալիս մտավորական անհավասարությունների ներդաշնակությունը, և դա կատարվում է ի վնաս քաղաքակրթության և առաջադիմության, որովհետև հասարակական գործի մեջ ոչ թե ատրճին է բարձրանում[2] բարձրի հետ գործակցելու, այլ բարձր կանգնողն է, որ պիտի իջնի ատրճին կանգնողների ոտներից ներքև նրա հետ գործակցելու համար: «Ամենից քիչ ունեցողի ունեցածն է, որ կարող են ամենքն էլ ունենալ»[3]: Կուսակցականությունը մտավորական հրաժարականն է, ուրեմն, քաղաքակրթության, և առաջադիմության դղջանքն է հետադիմության առջև խոստովանված: Առանց դրան մարդիկ հոտ չեն կարող լինել, ոչ էլ հոտերը խոյ կարող են ունենալ: Իդեալ իրականության պատկերը, եթե ֆանտազիա չի ուզում լինել, կոնկրետ իրականության քննադատությունը պետք է լինի: Այդ պատճառով էլ, ով որ կարծում է, թե բացասական հիմքերի վրա եղած գործունեությունները պիտի ոչնչացնել, նա ճիշտ է մտածում այն չափով

[1] Տե՛ս նույնը, եր. 473 և շար:
[2] Նույնը, եր. 550:

միայն, որ մարդկային ընկերությունը միայն բացառական հիմքերի վրա միակամ կարող է դառնալ: Չէ՞ որ հազարավոր ձևեր կան, որով մարդն արտահայտում է իր ձանձրույթը մարդ լինելուց:

III

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Երկու գաղափարներ են սրանք, որոնց հանդիպում ենք ամեն րոպե այս օրերում: Ինչքան որ գործնական կյանքում մեծ է դրանց նշանակությունը, նույնքան և տեսական աշխարհում փոքրանում է դրանց արժեքը: Որովհետև գիտակցությունը հոգեբանական մի երևույթ է, հոգեկան բոլոր գործառնությունների ամբողջությունը: Մինչդեռ դասակարգային կամ ազգադասակարգային գիտակցությունը, իբրև այդպիսին, չի կարող երբեք գիտակցություն լինել (Bewusstsein, Conscience), *քանի որ իր սահմանավորման մեջ նա գիտակցությունն է միայն մի որոշ դասակարգի, կամ ոչ մի դասակարգի: Մինչդեռ գիտակցությունը ո՛չ մի որոշ դասակարգի, ոչ էլ ո՛չ մի դասակարգի գիտակցությունը չի կարող լինել: Նա պետք է այդ էլ լինի, այն էլ լինի և դեռ շատ ավելին: Այս չէ կարևորն, իհարկե: Որովհետև վերջիվերջո կարելի է հաշտվել, թե նույն վիճակի, նույն չահերի տեր զգալ ինքն իրան, նշանակում է ունենալ մի որոշ գիտակցություն: Կամ թե պատմական, քաղաքական, լեզվական, կրոնական, աշխարհագրական մի ամբողջության պատկանելությունը նույնպես մի գիտակցություն է: Կարող ենք մերժել այդ տեսակ գիտակցության գիտական նշանակությունը, բայց գործնական կյանքն այնքան է մեծացրել դրանց արժեքը, որ անկարելի է, թեկուզ տեսականորեն, չշոշափել այն բոլոր հարաբերությունները և առնչությունները, որ կան այդ երկու գաղափարների մեջ:*

Մեր իրականության մեջ, գժբախտաբար, թե բարեբախտաբար, դասակարգերի բաժանումը երբեք չի եղել այնպես խիստ և որոշ, ինչպես ավելի կազմակերպված և քաղաքակրթված երկրների մեջ: Առանց վեճի ենթարկելու այս հայացքը՝ մենք կարող ենք նկատի ունենալ ամենից չնչաչափ մի դասակարդ՝ պարզելու համար, թե ինչ բանի մեջն է կայանում իսկապես դասակարգային գիտակցությունը: Մենք կարող ենք նկատի ունենալ, օրինակի համար, հոգևորականությունը: Դասակարգային շատ առանձնահատկություններ երևան են գալիս նրա մեջ և կամա թե ակամա կազմակերպում են նրա դա-

սակարգային գիտակցությունը: Նրա զբաղմունքը, պաշտոնը ստեղծում են նրա մեջ մտապատկերների և դգացմունքների, տեսնելու, խորհելու և գգալու մի չրջանակ, որ չի կարող ունենալ մի մարդ, եթե նա հոգևորական չէ: Նրա ապրուստի միջոցները, թոշակի ապրյուրները, կամ վաստակած դրամի ճանապարհները մեկ տեսակին, նույն դասակարգին պատկանող բոլոր անհատների համար էլ: Հոգևորականը պիտի ապրի անպատճառ կամ բարեպաշտների նվերներով, կամ այդ նվերների չահագործումով, կտակներով և անչարժ կալվածների եկամուտներով, որոնք այս եկեղեցուն, կամ այս վանքին են պատկանում: Նա պիտի ապրի ծնունդի, ամուսնության և մահվան առթիվ հավատացյալների համար կատարած ծեսերով: Իրա կանության և գործնական կյանքի մեջ սրանք այն աշխարհներն են, ուր թափառում է հոգևորականի գիտակցությունը այնքան իր ապրուստը հայթայթելու համար, որ վերջիվերջո նրա գիտակցության մեջ ստեղծվում է մտապատկերների մի առանձնահատուկ չրջանակ, որ նա կենդանի և պայծառ է տեսնում ամեն անգամ, երբ հանդիպում է իր դասակարգին պատկանող մի անհատի: Բացի այդ, նրա սպասելիքները իր պաշտոնի աստիճանավորումների վրա, նրա վերաբերմունքը դեպի հասարակությունը, որ հավատացյալ է, ծնվող, ամուսնացող և մեռնող, նվիրող և ողորմող հասարակությունը, ինչպես նաև նրա վերաբերմունքը դեպի անհավատացյալները, ստեղծում են նրա մեջ իր դասակարգին հատուկ գիտակցությունը: Նրա դասակարգային գիտակցության կազմակերպվելուն նպաստում է մեծ չափով նաև այդ հավատացող կամ չհավատացող հասարակության վերաբերմունքը իր հանդեպ մասնավորապես և իր դասակարգի հանդեպ ընդհանրապես: Նա ընդունում կամ մերժում է ինքն իրան այնպես, ինչպես որ ընդունում կամ մերժում են իրան այդ հասարակության մեջ: Նա իրան դգում է կնքող, ամուսնացնող, թաղող, ողորմություն տվող կամ առնող: Նա իրան համարում է անկեղծ այն բանի փոխարեն, որ կարծում են, թե նա անկեղծ չէ: Նա ծիծաղում է, սակայն, իրանից ավելի բարեպաշտների բարեպաշտության վրա: Փոքրիկ բաներ են սրանք, գիտակցության թույլ վայրկյաններ միայն, որոնք սակայն կազմում են այն առանձնահատուկ հոգեկան վիճակը, որ կոչվում է նրա դասակարգային գիտակցությունը: Բացի տնտեսական, առօրյա զբաղմունքի և ստացած կամ ունեցած վերաբերմունքի գործոններից, նրա դասակարգային գիտակցությունը կազմակերպվում է հաճախ ժառանգականորեն և պատմականորեն: Երբ մի քանի սերունդ նույն ընտանիքի մեջ, որդուց որդի հոգևորա-

կան են, պարզ է, որ ժառանգականությունն ըստ ամենայնի կարող է իրագործել իր հնարավորություններից չատերը, զարգացնել որոշ ընդունակություններ, որոշ ուղղությամբ, կամ նույնիսկ առաջ բերել իր պրազմունքի հակասությունները այլասերման ճանապարհով: Ավելի ուժեղ է պատմական գործոնը: Նրա գիտակցությունը բևեռավորված է այն բոլոր մեծ և փառավոր գործեր կատարած լինելու հպարտությամբ, որ ունենում են իրավամբ նրանք, որ կատարել են և որ ապօրինի կերպով անփականություն է դառնում նրանց, որ չեն կատարել թեև, բայց իրենց գգում են ի վիճակի կատարելու:

Համառոտ գծերով մենք ցույց տվինք, թե ինչպես է կազմակերպվում, օրինակի համար, դասակարգային գիտակցությունը: Նույն այդ օրինակը կարելի է մի քանի աննշան փոփոխություններով ամբողջովին դործադրել լուսաբանելու մյուս դասակարգերի դասակարգային գիտակցության կազմակերպությունը: Զինվորականությունը և ազնվականությունը ուրիշ կերպ չէ, որ կազմավորել են իրենց դասակարգային գիտակցությունը: Նույնպես և բուրժուազիան. սրա համար դեռ ավելին էլ կարելի է ասել: Թեև բոլոր դասակարգերն էլ ունեն այն գիտակցությունը, թե իրենք կատարելու են սոցիալական և պատմական մի խոշոր դեր: Բայց բուրժուազիան է ամենից ավելի, որ իրան գգում է աշխարհը քաղաքակրթելու, փիսուքյունը և գեղարվեստը զարգացնելու և մարդկության ճակատագիրը գնահատելու դերի մեջ սկսած Մեծ հեղափոխությունից:

Ոչ մի դասակարգի դասակարգային գիտակցությունը, սակայն, երբեք այնքան լուռ և անխոս չի եղել դարեր անընդհատ, որքան պրոլետարիատի և աշխատավոր դասակարգի գիտակցությունը: Կազմելով բոլոր երկրների ազգաբնակության ճնշող մեծամասնությունը՝ նրանք ամենայն իրավամբ պետք է ունենային իրենց հասարակական և պատմական դերի գիտակցությունը: Բայց, ինչպես որ մենք օրինակի համար ցույց տվինք, թե ինչպես կազմակերպվեց հոգևորականության գիտակցությունը, [որ] դասակարգային լինելուց առաջ հոգեբանական էր: Հեղափոխությամբ բռնված երկրների մեջ այլևս հոգեբանական գիտակցություն չկա, այլ միայն դասակարգային գիտակցություն: Գիտակցությունը, հոգուց հեռանալով և դասակարգերի մեջ հաստատելով իր բնակությունը, շատ հաճախ գիտակցական երևույթներ է առաջ բերում, որոնք մտածել են տալիս, թե մարդն է հեռացել մարդկությունից:

Անշուշտ, ազգատ է մի գիտակցություն, որ սոսկ անհատական ապրումներ ունի, միայն մասնավոր և անձնական երևույթներ ու

արտահայտություններ է ճանաչում: Անշուշտ, ավելի հարուստ է մի գիտակցություն, որ ապրումներ ունի, թե մի բան իրեն է վերաբերում, որովհետև իր նմանին էլ է վերաբերում: Բայց, այլևս գիտակցություն չէ այն գիտակցությունը, որ մտածում է, թե մի բան իրեն է վերաբերում, որովհետև միայն ուրիշին է վերաբերում: Ի՞նչպես կարող է միայն ուրիշին վերաբերողը իրեն էլ վերաբերել: Բայց, որովհետև ասել են, թե ոչինչ չկա իրեն վերաբերող, որ ուրիշին էլ չվերաբերի. ուստի այդ գիտակցությունը այսպես է «հարստանում», որ մտածում է, թե ինչ որ իրեն է վերաբերում, ուրիշին էլ պետք է վերաբերի: Լայնսիրտ այլասիրության քարոզը տալով նրան՝ մենք ստեղծում ենք նրանից նեղմիտ եսասիրության տխուր առպետը: Այսպես է, որ նա իրենը պաշտպանելով՝ մտածում է ուրիշին պաշտպանել և պահանջում է, որ ուրիշներն իրեն պաշտպանեն, որպեսզի իրենք իրենց պաշտպանեն: Մինչդեռ անհատապաշտ եսասիրության քիմիական, ֆիզիկական և բնախոսական հիմունքներ ունի: Դասակարգային էգոիզմը, սակայն, միայն կեղծ «սոցիոլոգիական» հիմունք ունի: Որովհետև զարգացած ինդիվիդուալիզմը սոսկ սոցիոլոգիական է, բխում է աշխատանքի ծայրահեղ բաժանումից, քաղաքակրթության մեծ առաջադիմությունից, և հասարակության արժեքն է բարձրացնում իր արժեքը բարձրացնելով: Սակայն, դասակարգային ինդիվիդուալիզմը հասարակության արժեքը նվազեցնելով է բարձրացնում իր արժեքը, առհասարակ արժեքը ժխտելով է, որ ինքն իրան արժեք է տալիս, որովհետև դասակարգային գիտակցությունը ոչ միայն չի հարստացնում անհատական հոգեբանությունը, այլ ընդհակառակն նրան ոչնչացնելով, գիտակցությունների այլասանության մեջ կատարյալ հավասարեցում, բացարձակ հարթաչափություն (nivellement) *մացնելով է, որ կազմակերպվում է: Հոգու այս հարստությունը հոգեզրկություն է: Նա ջնջում է հոգուց անցյալը, ինչպես նաև ապագան, ու մի օր մենք կունենանք հոգինոր առանց գիտակցության, որովհետև ուզում ենք հասնել գիտակցության առանց հոգու: Հոգու ոչ միայն տնտեսականացումը, այլ դասակարգայնացումն առհասարակ (որովհետև դասակարգերը երբեմն տնտեսության վրա չեն հիմնված), դառնում է այսպես հակասոցիալիստական լինելով հակամարդկայնական:*

Մի բան կա, որ բոլոր ծաղիկներին միատեսակ է դարձնում: Դասակարգային գիտակցության տեսությունն ասում է՝ մի բան պիտի դնել մարդկանց մեջ, որ բոլոր մարդկանց միատեսակ չդարձնե: Սո-

ցիալիզմի դեմ եղած բոլոր համարատակութիւններն անմիտ են, որովհետև դասակարգային տեսութիւնը միայն նրա ինքնահերքումն է:

Հեղափոխական խնդիրներից ազատված մարդկութիւնը կընդունի միայն հավիտենական ճշմարտութիւնները և նրանց միայն կտա ուժածին արժէք և արժէքի պատիվը: Ըստ որում տնտեսական սահմանափորումը կա՞րող է այլևս մարդու սահմանափորումը դառնալ, երբ սոցիալիզմն իրականանա, և տնտեսական հավասարութիւն իշխէ: Նշանակում է մարդը չի կարող տնտեսական սահմանափորման ենթարկվել, երբ դալու է մի օր, ուր նա այլևս տնտեսական սահմանափորում պիտի չունենա: Ուրեմն, դասակարգային տեսութիւնն ասում է, որ առժամանակյան հավիտենական է: Այդ այդպես կլինի այն մտքերի համար, որոնք հնացել են մտքից:

Հեղափոխութեան մնջ գիտակցութիւնը դեռ ուրիշ ձևերով էլ է հարատանում: Եթե մեկ կողմ թողնենք նոր մարդու անհատական գիտակցութիւնը և քննենք նրա հասարակական ապրումները, մենք կտեսնենք, որ դա էլ գիտակցական մի խառնարան է, որ իր ամբողջականութիւնը պահում է այն ինքնուրոյնութեան մնջ, որով նա իր վերաբերմունքն է ցույց տալիս յուր գիտակցութիւնն զբաղեցնող յուրաքանչյուր երևույթի մասին: Այդ երևույթները ոչ այլ ինչ են, եթե ոչ սեփականութեան պատմութեան կապերը՝ ոչ թե սեփականութեան հետ, այլ պատմական դործերի, խմբակցութիւնների, յուր անհատական հակումնների (գրական, դեղարվեստական, գիտական, արհեստակցական և այլն) բավարարութիւն տվող երևույթների հետ, որոնք անհատական լինելով հասարակական հիմք ունեն, սակայն: Ի՞նչպիսի գիտակցութիւն պիտի անվանել, ուրեմն, այն գիտակցութիւնը, որ պիտի հարատևա աղքատանալով, որ պիտի դրկվի չատ բաներից՝ մի բան ունենալու համար:

Սեփական շահերի ինքնագիտակցութիւնն է, որ կազմում է դասակարգային գիտակցութիւնը, բայց պիտի ավելացնել անմիջապես խիստ փոքրացած, գիտակցութիւնից դրկված, ամենահամառոտ մարդու համար: Դասակարգային պայքարի մղեղնութիւնից Զոլան դուրս է գալիս՝ նկարագրելով բանվորի և կապիտալիստի համբույրը իր Germinal-ում: Ինչքան քիչ մարդ է այն մարդը, որ կարծում է, թե մեծանալու համար պիտի փոքրանալ, մարդանալու համար պիտի դասակարգի պատկանել: Դրա ճանապարհը ավելի լավ գիտեն այն կապիտալիստները, որոնք բանվոր են եղել: Եվ դասակարգային գիտակցութիւնը նվաում է այս ճշմարտութեամբ, թե ինչ որ չատերին չէ տրված, ոչ ոքի էլ չէ տրված: Զարճալի տարակերպութիւնն-

բիզն է այս իմաստությունը, որով ասում են, թե մարդկության պատկանելու համար պիտի դասակարգի պատկանել: Ուղեղներ կան, իհարկե, որոնց համար մարդկությունն այն թիվն է, որ վիճակագրական թղթերը մեզ բերում են: Դա դեռ չեղած և չլինելիք մարդկությունն է, դա մարդկության ամենափոքր հնարավորությունն է միայն: Մարդկությունը խոտացում միայն կարող է լինել և ոչ թե տարածում: Եթե մարդը քար լիներ, իհարկե, ոչ մի տարբերություն չէր լինի քարե դաշտերի և քարե ծովերի մեջ: Բայց, որովհետև ասում են, թե մարդկությունը հոգեբանական գիտակցությունն ունենալուց հետո պետք է ուննենա դասակարդային գիտակցությունը, այդ պատճառով էլ մարդը և ամբողջ մարդկությունը հավասարազոր մեծություններ են: Այստեղ բաժանումը խորացում է և բազմապատկումը՝ փոքրացում:

Շատ քիչ դեպքերում է արդարանում օրգանիստիք սոցիոլոգիան, ուր անհատի և հասարակության բնախոսական նմանությունն է պաշտպանվում: Այստեղն է մեկը: Դասակարգային թեորիան ասում է, որ միայն ստամոքս ունեցող մարդը հավասար է կատարելապես այն մարդուն, որ աչք էլ ունի, ականջ էլ, բերան էլ և չոչափելիք էլ: Այս չափով ճիշտ է, որ երկուքն էլ առանց ստամոքսի չեն կարող ապրել, բայց տարբերությունը երկուքի մեջ միայն քանակական չէ, այլև որակական: Բայց բացարձակ սուտ է ասել, որ միայն ուտող մարդը ոչ մի տարբերություն չունի տեսնող, լսող, խոսող և զգացող մարդուց: Երկուքն էլ ապրում են, բայց երկուքն էլ կենդանական այլ թագավորություններին են պատկանում: Դասակարգային կռիվն, ուրեմն, անասնական կռիվն է մարդկության դեմ, ինչպես և դասակարգային գիտակցություն «արթնացնելը» գիտակցություն ոչնչացնելն է:

Պայքարի ամենայն միջոց, որ դուրս է գալիս տեսական սահմաններից, անհրաժեշտաբար պետք է որդեգրե այն զենքերը, որով իր թշնամին է պայքարում: Ուրիշ ձևի հաղթություն չկա աշխարհում: Սոցիալիզմը, կռվելու համար ազնվականության, կղերականության և բուրժուազիայի դեմ, որդեգրեց նրանց զենքերը իր դասակարգային տեսության: Նրանց պես, ինքն էլ մարդը բաժանեց, կտրատեց, նրա որոշ գործառնություններին, նրա որոշ մասերին ամբողջության արժեքը տվեց և դեռ ավելին, մարդու իդեալը դրեց ոչ թե նրա լավագույն մասերի, օրինակ ասպետականության մեջ, ինչպես անում էր ազնվականությունը, կամ այսպես կոչված հոգու մեջ, ինչպես անում էր կղերը, կամ մարդու նախաձեռնության, կազմակերպչական

ոգու, մրցման, մեծ չափով մեծ բարիք ձեռք բերելու ձգտումների մեջ, այլ միայն ու միայն մարդու տնտեսական պահանջների բավարարության ձգտումի մեջ: Սոցիալիզմը դրանով որդեգրեց իր թշնամիների դենքերը՝ նրանցից ավելի սուրանալու, ավելի դանդկանալու, ավելի անմարդկանալու համար, ինչպես յուրաքանչյուր թշնամին, որ կապկում է յուր թշնամուն: Դասակարգային թեորիան ոչ թե դասալարակում, այլ կազմակերպում է ամբոխային կրքերը, բայց այն, ինչ որ չի կարելի դաստիարակել, չի էլ կարելի կազմակերպել: Կազմակերպությունը կատարվում է, և դրանով իրականանում է հասարակապիտական տարակերպություններից մեկը՝ սուտի ճշմարտության արժեքը: Ինչքան սուտեր կան, որ ավելին արժեն, քան հաղար ճշմարտություններ: Այս ճշմարտությունն էլ մեզ կտանի մինչև այնտեղ, ուր վերջապես ամեն բան հավասարեցնելու բարբարոսության կծագի եղբայրության անհավասարությունը: Ըստ որում, եղբայրությունը անհավասարության մեջ միայն հնարավոր է, իսկ տնտեսական հավասարությունը մեզ պիտի սովորեցնեն անհավասարության արժեքը և առաջադիմության աղբյուրը: Որոնել մարդը մարդկանց մեջ, մեզ պիտի սովորեցնեն ջնջել տարբերությունները և դասակարգերը մարդկության մեջ: Անհավասարությունը, որ դրանից ծագելու է, կունենա ոչ թե տնտեսական և դասակարգային հիմունք, այլ մի բան, որի դեմ կռվելու համար ո՛չ բնությունը, ո՛չ էլ մարդկությունը ոչ մի միջոց չպիտանն:

Թիֆլիս, 917, 10 մայիս

IV

ԲՈՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքակրթության պատմությունը ազատության պատմությունն է: Իբրև մարդկային հոգու տարրական և միաժամանակ բարձրագույն պահանջ՝ Ազատությունը հնարավոր է այնտեղ միայն, ուր բռնություն կա: Ընկերաբանության մեջ միայն իրական են դասնում այստեսակ տարակերպությունները. ազատությունը բռնության արդին է:

Ընկերային բնազդը կարելի է ասել առաջին գործոնն է եղել, որ դրկել է մարդուն իր անհատացած ազատությունից և որոշ սահմաններում դրել: Այնուհետև, երբ ընկերանալու բնազդն այլասերվել է

և դարձել ոչխարային, հոտային բնազդ, այնուհետև բռնությունը դարձել է աշխարհի ամենաբնական բանը, և ազատությունը՝ անկարգություն, սանձարձակություն և ըմբոստություն: Ընկերանալ և ազատ լինել միաժամանակ, ահա թե ինչն է, որ դարեր անընդհատ անհասկանալի է եղել: Սա, իհարկե, բռնության ամենապարզ տեսակն է:

Բայց բռնությունը նշանակում է նաև հավաքական կամքի արտահայտություն, իսկ այդ հավաքական կամքն ստեղծվել է հավաքական մարմնից արմատախիլ անելով կամքը և տեղը դնելով մի անհատական կամք: Ազգությունը, եթե համարենք հավաքական կյանքի արտահայտությանդ ամբողջությունը, պիտի ընդունենք, որ բռնությունը այն ուժերից մեկն է, որով ստեղծվել է այդ ազգության մեջ ուժերի կենտրոնացումը և մարմնավորումը: Ծնունդն այդպիսի ընկերային պայմանների, ժողովրդական ուժի կենտրոնացման մարմնավորումը եղել է բռնության մարմնացումն իսկ: Հարազատ որդին իր միջավայրի բռնությունը դարձել է միակ չարժիչ ուժն իր շրջապատի: Թեև մի անձի վրա է մարմնանում բռնությունը, բայց դա անձնավորություն չէ, այլ մի խորհրդանշան: Նա մի գործիք է միայն «Աստուծո կամքն» իրականացնող: Նա հրամայում է, որովհետև նրանից միայն հրաման են սպասում: Ընկերային որոշ տեսակի հոգեբանության միակ գոպանակն է նա: Ո՛չ մի ուժ կենտրոնացած չէ, եթե մարմնավորված չէ: Ո՛չ մի հավաքական կամք գոյություն չունի, եթե մեկից ավելի կամք գոյություն ունի: Ո՛չ մի տեր այնտեղ, ուր մեկից ավելի տեր: Ո՛չ մի ուժ այնտեղ, ուր մեկից ավելի ուժածին աղբյուր:

Սրբազան, աստվածային բռնությունը ամբողջ մարդկության հավաքական, անգիտակից հոգեբանության ամենախոր ստեղծագործությունների մեկն է եղել: Ընկերաբանությունը ավելի խոշոր բան չի ճանաչում, քան բռնությունը: Այնպես որ կարելի է ասել, թե ուր որ բռնություն կա, այնտեղ ընկերաբանական մի երևույթ կա: Անհատական հարաբերություններն այն չափով են հասարակական արժեք ներկայացնում, որչափով որ իրենց մեջ գոյություն ունի սոսկական բռնությունը, կամ բռնության հնարավորությունը:

Անհատական կամքի յուրաքանչյուր արտահայտությունը, որ այս կամ այն չափով պարտադրություն չի առաջ բերում, կամ հնազանդություն, հպատակություն, համակերպություն, նույնիսկ հավանություն — այդպիսի անհատական կամքի արտահայտություն

մնում է կղզիացած, առանց չփումի, առանց հասարակական արժեքի:

Բայց, ասացինք արդեն, քաղաքակրթության պատմությունը և՛ պատերազմների պատմությունը: Ընկերանալ և ապատ մնալ միաժամանակ այնքան արմատացել է բանական արարածի մեջ, որ մարդը մարդու համար դարձել է մի Աստված: Եթե ամեն մարդ չունի այդ հասկացողությունը, պարտավոր է դոնե ընդունել, որ ազատության հետևողական ըմբռնումը վերջիվերջո տանում է մարդուն այդպես: Որովհետև իսկապես բռնությունը թվում է, թե ամեն բան է, բացի մարդկային լինելուց: Ոչ թե ազատության ըմբռնումն է, որ բռնությունը դարձնում է հակամարդկային, այլ պարզապես բանականության ներկայությունը մարդու մեջ անկարելի է դարձնում բռնության կենսակցությունը: Մարդը կարող է երբեք էլ չունենալ ազատություն, որովհետև ճշմարիտ ազատությունը միայն քաղաքական ազատություն չէ: Բայց մարդը կարող է կատարելապես ստրկացած լինել բռնությունից: Քաղաքականապես ազատը կարող է ինքն իրան տարուկ լինել, բայց բռնությունից ազատվածը նշանակում է, որ ոչ մի բռնության էլ ենթակա չէ:

Այսպես, ուրեմն, բռնությունը կարելի է և պարտականություն է ոչնչացնել բոլորովին, այն աստիճան, որ բռնություն համարվի միայն, ինչ որ տարերային է և անասնական: Ամենայն ինչ, որ մարդկային է, պիտի բռնություն չունենա իր մեջ: Եվ, սակայն, բռնությունը մնում է հասարակական չարժուձևների ամենամեծ գործոններից մեկը: Ի՞նչպես կարելի է արդարացնել բռնությունը:

Անկարելի է առաջուց մի բանաձև գտնել, որ ըստ ամենայնի հարմարվի ամեն տեսակ բռնության արդարացման. բայց մասնավոր դեպքերը տալիս են արդարացման որոշ հնարավորություններ: Դատապարտելի համարելով ամեն տեսակ բռնություն և բռնակալություն՝ մենք չենք կարող մի բռնություն գտնել, որ մեր ազատության պահանջներին համապատասխաններ: «Բռնության դեմ բռնություն». բանաձևում են չատերը, աստմի տեղ աստմ և աչքի փոխարեն աչք — ասում է հին կրոնական ճշմարտությունը: Բռնակալները, երբ տապալում են բռնակալներին, նույնպես բռնության դեմ բռնություն են կատարում:

Մենք դատապարտում ենք ամեն բռնություն:

«Բռնություն ազատության համար». ասում են ոմանք՝ բռնությունն արդարացնելու համար: Բայց այստեղ իսկապես ո՛չ թե

բռնությունն է արդարանում, այլ բռնության հետևանքը: Այդ միևնույնը կլիներ, եթե ասեինք՝ նպատակն արդարացնում է միջոցը:

Ոչ մի նպատակ չի կարող արդարացնել իր միջոցները, սոիպված ենք եզրակացնել այստեղն էլ:

Ամեն արժեք ուժի մեջն է, իսկ ուժը նշանակում է «բռնության իրավունք». այս էլ մի ուրիշ տեսակ արդարացում: Բայց մեր ազատության ոգին բողոքում է. ոչ մի բռնությունն իրավունք չունի:

Դեռ շատ բանաձևեր կարելի է գտնել բռնությունն արդարացնող, բայց իսկապես բռնությունը մնում է միշտ էլ բռնություն, միշտ էլ հակամարդկային և տարերային, միշտ էլ հակառակ բանականության և ազատության մեր պահանջներին:

Սակայն, մեկնելով մի ուրիշ տեսակետից, մենք տեսնում ենք, որ բռնությունը պատմության չարժիչ ուժերից մեկն է, և անկարելի է հրաժարվել նրանից: Մեր բանականության պահանջները խիստ անհատական են. մեր ընկերային պահանջները երբեք անհատական չեն: Իբրև անհատ ես բացարձակ ազատություն եմ. իբրև հասարակության անդամ ես բռնանում ու բռնակալվում եմ. ես ստեղծում եմ մեծամասնություն, մեծամասնությունն ինձ ջախջախում է: Սոցիալիստական բոլոր կուսակցությունները և խմբավորումները իրենց նվազագույն պահանջների մեջն են դրել քաղաքական ազատությունը, այնքան որ ազատության պահանջն ինքնահասկանալի է, հրամայական և անհետաձգելի. ազատության այդ մարմնացած բողոքները, սակայն, իրենց պահանջների գործադրության դիմում են բռնության միջոցով միայն: Դատապարտելով ամեն բռնություն նրանք իրենց նպատակներն իրականացնում են բռնությամբ միայն: Որովհետև իսկապես ուրիշ ոչ մի միջոցով պատմության մեջ հնարավոր պիտի չլինի ախտահանությունը: Օրենքի մեր ըմբռնումն իսկ մեզ առաջնորդում է դեպի բռնությունը, մենք չենք կարող օրենքի տառով սպանել մեր ազատության ոգին: Դա է միակ օրենքը, որ պատապարտելով ամեն բռնություն, գիտի թե ինչպես պիտի արդարացնել բռնությունը: Եվ այն սերունդը, որի հիշողությունից դեռ չեն ջնջվել բռնության սարսափները, չարիքը և տգեղությունները, ինչպես նաև բռնության գեղեցկությունը, բարիքը և համայքները, նա գիտի, նա ապրում է, տեսնում է, թե ինչպիսի բարիք է բռնությունը, թե ինչպիսի չարիք է բռնությունը:

Թիֆլիս. 917. 30 մարտ Վ[արազդատ] Տ[երյան]

V

ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

Եթե ճիշտ է, որ բառերի և կոնսեպտների ներքին հատկությունը և կառուցվածքն է դլխավոր պատճառը մարդկային մտածողության մեջ նրանց առաջ բերած հակասությունների, խառնակությունների, անորոշությունների և պայքարի, ապա ուրեմն այդ ճիշտ է ամենից ավելի հասարակագիտության մեջ: Այդ տեղն է, որ ամենից ավելի մարդ տևանում է, թե բառերը ինչքան հեռու են իրականությունից և թե իրականությունն ինչքան բառապուրկ է իր շատ և շատ երևույթների հանդեպ: Սոսկ լեզվական տեսակետից չկան բառեր, որ թե «այո» նշանակեն և թե «ոչ», թե «բարեկամ» նշանակեն և թե «թշնամի», թե «բարձր» և թե «ցածր», թե հաստատեն և թե հերքեն միաժամանակ: Սակայն, ինչ որ լեզվաբանորեն անկարելի է, չի նշանակում թե հասարակագիտորեն էլ անկարելի է: Սա թվում է, թե նախափորձյան մի ճշմարտություն է: Որովհետև փորձը մեզ ցույց է տալիս, որ լեզվաբանորեն չի կարելի բացատրել ոճերի ծագումը և պատճառները, սակայն, ընկերաբանորեն ավելի հեշտ բան չկա: Կրոնի ծագումը նույնպես լեզվաբանորեն չի բացատրվի, բայց ընկերաբանությունը ոչ միայն բացատրում, այլև ընկերաբանական մեթոդներ և սիստեմներ է ստեղծում դրանից: Այդպիսի բազմաթիվ երևույթներ, որոնք լեզվաբանորեն չեն բացատրվում, պարզ ու մեկին են դառնում ընկերաբանության մեջ: Դրանց կարգին է պատկանում բառերի այն դիտությունը, որ բառ լինելով հանդերձ՝ լեզվաբանության օրենքներին չի ենթարկվում: Լեզվաբանությունը բառերի ինքնահերքումն ու ինքնասպանությունը չի ընդունում: Սակայն, հասարակագիտությունն ընդունում է ամեն բան և փույթ չէ, թե ի՞նչ տեսակ, բայց իրականության մի որոշ իրավունք է տալիս բառերի ինքնահերքման և ինքնասպանության: Եթե բոլոր նրանք, որոնց դիտությունը, հասարակագիտական լինելով, շատ է հասարակ դարձել, չմոռանային ընկերաբանական և լեզվաբանական այս փոքրիկ մերձեցումները, կարող էին շատ բան չշահել, բայց մի հսրիզոն կունենային, ուր անհրաժեշտ է, որ նրանք իրենց փորձը կատարեն:

Պատմության ամենափոքր ծանոթությունն իսկ մեզ ցույց է տալիս, որ դեմոկրատիան Պերիկլեսի ժամանակից սկսել է գոյություն ունենալ, կազմակերպվել և իր գոյությունը, իրավունքը և ներքին

բովանդակությունը հաստատել ու իրականացնել: Ըստ որում դեմոկրատիա նշանակում է ժողովրդի (demos) իշխանությունը (kratos): Բայց մարդկությունը այդ ժամանակն էլ նույնքան տգետ էր լեզվաբանության մեջ, որքան այժմ: Գուցե այժմյան տգիտությունն անզուգական է և անմրցելի: Մինչդեռ այն ժամանակ առաջին փորձն էր կատարվում, և ներելի էր լեզվական մի ինքնասպանություն: Այժմ 2500 տարի հետո, նույն փորձը կրկնել հավիտենապես, այլևս աննելելի է: Ավելի գրավիչ բան չկա, քան սուտ խոսել և ճշմարտախոս լինել, գողանալ և առաքինի լինել, պատավել և ջահել մնալ, կանգնել և նստած մնալ, ծաուալել և հրամայող լինել, փոքրանալ և մեծ լինել, աղքատանալ և հարուստ լինել, տգիտանալ և գիտուն լինել, ավելի գրավիչ բան չկա: Թող լեզվաբանությունը չընդունի, ինչպես և ուրիշ շատ գիտությունները թող մերժեն մեզ այդ հաճույքը, բայց ընկերաբանությունը կընդունի առանց սակարկության: Պերիկլեսի այդ փոքրիկ փորձն էր, որ մենք էլ փորձում ենք, այսինքն մենք էլ ուզում ենք ժողովուրդ լինել և իշխել: Առաջին փորձիցն իսկ ինչ որ ստացվեց, այդ էլ մնաց մինչև այժմ: Որովհետև ազնվապետության և միապետության հակառակ մի բառ ստեղծելով չնչվեց թեև հակառակորդը, սակայն, փորձը մնաց փորձ: Մի փոքրիկ սրբագրություն պետք էր, որ պետք էր աննին, որովհետև ուրիշ կերպ չէին կարող անել: Պետք էր ասել, որ միապետության հակառակը ոչ թե ժողովրդապետությունն է, այլ մի ուրիշ բան, քանի որ առաջին փորձն իսկ բավական էր հասկանալու համար, թե ժողովուրդ և իշխանություն բառերը, եթե միացնենք, կստեղծվի լեզվական մի ինքնասպանություն և հասարակագիտական մի ախտավորություն: Ընդունելով ինքնասպանությունը հաստատ պահպանվեց այդ հիվանդությունը բժշկելու մի անսահման հույսով: Գուցե մարդու հասարակական գոյությունն ինքնին ախտավոր է, որ բոլորի իշխանությունը այլևս ոչ մի իշխանություն չէ, և իշխանությունը միայն մի քանիսի իշխանություն կարող է լինել: Այդ մի քանիսից թե ո՞վ պիտի լինի իշխողը, երբեք մեզ իրավունք չի տալիս և ոչ մի դեպքում ասելու, թե ժողովուրդը կլինի իշխող: Շատ պետք է մեղադրել Պերիկլեսին որպես հանցանքի առաջին հեղինակին, որ չկատարեց այդ սրբագրությունը: Որովհետև հետագայում ոչ միայն շատերը փորձեցին այդ լեզվաբանական ինքնասպանությունը, այլև ընկերային շատ և շատ ախտեր այնուհետև անունդ առին այդ անմիտ փորձից: Ավելորդ է այդ ախտերի նկարագրությունը: Մի քանի դիտողություններ, դեմոկրատիա բառի մի քանի բացատրություններ

մեզ կասեն ավելին, քան արժե դիտնալ այդ մասին: Սոցիալիզմի նոր տեսակն այն է, որ երևումէ սոցիալիզմի անունով: Իշխողները չուտով հասկացան, որ ոչ ծեծ պետք է, ոչ էլ հայհոյանք. դիվանք և երդումը նույն դերն են կատարում: Մինչդեռ ժառանգությունը մեզ կարող է վիժածներ տալ, որոնք ոչ դիվել դիտեն, ոչ էլ երդվել: Ընտրությունը մեզ մարդիկ կտա, որոնք ոչ ծեծել դիտեն, ոչ էլ հայհոյել: Սա միայն բավական է, որ գտնվի անդուռանելին, որ հնարավոր պատնա անկարելին:

Ո՞րն է դեմոկրատիան:

Դեռ հնարավոր չեղավ մի դեմոկրատիա, որ ամբոխ չլիներ: Այդ պատճառով էլ դեռ հնարավոր չեղավ մի դեմոկրատ, որ ամբոխավար չլիներ: Դեմոկրատիա, պա նշանակում է ցանկությունների անսահմանություն և կամեցողության ոչնչություն: Դեմոկրատիա, պա նշանակում է իշխանության ինքնազրկություն և ինքնախաբեություն: Դա նշանակում է իշխանությունը հանձնել և հրամաններ տալ, բայց դա նշանակում է նաև հրամաններ ընդունել իշխանությունը հանձնելուց հետո: Դեմոկրատիա, պա նշանակում է առանց դժվարության փառաբանություն գտնել և հպարտանալ չարած գործերի համար: Դա նշանակում է չատախոսություն, իրերի տրամաբանության մերժումն և պղծված երևակայության տրամաբանություն: Դա նշանակում է տգիտություն, գործի դաղտնիքը ձեռնամբարձ կամ քաոանդամ գտնել: Դա նշանակում է արժեքների ոչնչացում և ոչնչության արժեքավորում: Դա նշանակում է հետապիմության հրամանը՝ քաոակուսի գարձնելու առաջադիմության անխնդրը: Ամենակատաղի դեմոկրատները նրանք են, որ ոչ մի արժեք դեռ չեն ստեղծել, իսկ արժեք ստեղծելուց հետո, եթե մեկը դեռևս մնում է դեմոկրատ, այդ նրա համար է, որ դեմոկրատ լինելով՝ կարողացավ արժեք ստեղծել, ոչ թե նրա արժեքածին ազբյուրներից դեռևս խմելու, այլ չլինելու համար ինչ որ ինքն խորտակից բարձրանալու համար, ոչնչացրեց արժեք գառնալու համար: Իշխանության սիրահարները, եթե միայն այդ մեղքն ուննային, սիրտ դերադասին ամեն տեսակ իշխանությունը ժողովրդի իշխանությունից, որովհետև, եթե այդ է միայն իրենց մեղքը, ուրեմն նրանք պետք է ուննան մաքրության, պարզության, հատակության և շիտակության սերը, այսինքն նրանք սիրտ դերադասեն այն իշխանությունը, որ իր անունով է իշխում, յուր չահերի, ճաշակի, համոզմունքի, իրավունքի և կարողության անունով: Դա պարզ ու պայծառ իշխանությունն է՝ առանց խաբեբայության, առանց կեղծիքի, առանց բարոյական և

ընկերային տարրական առաքինությունների ոտնահարության: Մինչդեռ յուրաքանչյուր ընտրական խոհանոցում պատրաստված իշխանությունը բավարարել կարող է այն ճաշակները, որոնք չափազանց նրբազգաց լինելու համար այլևս ճաշակ չունեն: Ընտրությունը տալիս է քաղաքացիական դաստիարակություն, բայց այդ իդեալով տոգորվողները չատ են կարճատես, որպեսզի ընդունեն, թե դաստիարակությունը միայն մի դրական իդեալ է, և գողության դաստիարակությունն այլևս դաստիարակություն չէ: Անչուշտ, հավասարները հավասար են լինում, բայց խոհարարը չատ քիչ է մտածում կաղամբի և գետնախնձորի ու մսի քիմիական և օրգանական հավասարության մասին, երբ իր կերակուրն է պատրաստում: Այդպես էլ, և դեռ ավելին, ընտրական խոհանոցում չատ քիչ է մտածվում պատրաստվելիքի ներքին հատկությունների մասին, ամեն բանն իր տեղն ունի. և ցածրը բարձր է ու քաղցրը՝ նաև դառն: Իշխելու սերը ո՞ւմ մեջ պիտի զարթնանա, արդյոք նա, որ իր գլուխը չի կարող կառավարել, նա պիտի հրաժա՞րվի մարդկությունը կառավարելուց: Սուտի հասարակական արժեքը ամենաախտավոր կերպով երևան է գալիս այստեղ: Ահա նշանավոր սուտը. «Մինչև այժմ մարդիկ պիտեն պատմությունը դիտել, այսուհետև խնդիրն այն է, որ մարդիկ սովորեն պատմությունը չինել»: Դեմոկրատիա, դա նշանակում է ամեն մարդուն ասել.— Շինի՛ր քո երկրի և աշխարհի պատմությունը: Թե ինչպես սուտը կարող է այնքան ճշմարտություն պարունակել իր մեջ, որ նորածին դեմոկրատիայի մեջ մի մարդ չգտնվի, որ դրան չհավատա, մի մարդ չգտնվի, որ այդ ճշմարտության սուտը բռնե: Այդ էլ ուրիշ խնդիր է՝ կապված մարդու բնախոսական, ուղեղային և ժառանգական նախատրամադրությունների և կառուցվածքի հետ, որ ոչ մի դեմոկրատի դիտողության չի արժանանում: Այսպես է լուծում դեմոկրատիան բոլոր գիտությունների և փիլիսոփայությունների մեծ-մեծ խնդիրները, ձեռնամբարձ կամ քառանդամ սուտով: Այդպես չէ միթե, որ ամենանոր դեմոկրատիան փորձում է դասել տալ ամենահին դեմոկրատիաներին: Բոլոր թերուսները, տգետները և չահել-չները այդպես են: Սովորեցնելու ամենամեծ եռանդ են ցույց տալիս նրանք, որ սովորելու ամենամեծ կարիքն ունեն: Բայց մենք ներում ենք մի հանճարեղ մանուկի բռնկումներին և հրդեհներին: Ո՞վ է հավատում, սակայն, ամբոխի հանճարին:

Խիստ տգետ ու խիստ համեստ է եղել հավանարար ժողովրդական այն հանճարը, որ ասել է. «Մի տուն, եթե չատ ավլողներ ունի, տունն առանց ավլելու կմնա». այնքան համեստ, որ մենք նրա ա-

նունը չդիտենք: Սակայն այնքան հանճարել, որ դա մի ճակատագրական դատապարտություն է եղել մարդկության համար: Դեմոկրատիան, ամենքին դարձնելով ամեն բանի տեր, ամեն բան թողնում է անտեր: Ընտրական ճակատամարտների մեջ մենք դրախտներ ենք ստանում, որ ոչ արարական, ոչ էլ բիբլիական հանճարները չեն կարողացել երևակայել: Հաղթությունից հետո մեր հասարակական հաստատությունները չեն դադարում սպանդանոց մնալուց: Թող անսասան մնա հին իմաստությունը, որ ասում է մեզ. գործը թող խոսի գործչի մասին, և ոչ թե գործիչն իր գործի մասին: Խոստում անել, ներքնապես, բնազդապես մենք դիտենք, որ գործ անել չէ դեռևս: Որոշ տեսակի մարդիկ չատ լավ ըմբռնել են, որ խոստումն էլ գործ է, դրա համար էլ նրանք անմրցելի են իրենց գործի մեջ: Որովհետև գործի նվազագույն խղճմտանք ունեցողը հենց որ սկսեց չափավորել իր խոստումները, նա իր անկումը պատրաստեց: Դեմոկրատիան պահանջում է լիառատ և լիաբուռն խոստումներ, խոստումներ, որոնք ավելի արժեք ունենան, քան գործն իսկ, քան խոստացածն իսկ: Դեմոկրատիա նշանակում է մի մարդկություն, որ կերակրվում է խոստումներով, որ թույլ է տալիս, որ քաջալերում է սուտը, համոզված լինելով, որ ամենայն խոստում մեծ մասով սուտ է, եթե ոչ ամբողջովին: Դեմոկրատիան քաղաքական մի սարսռազդություն է: Բոլոր քվե ավողները կոչվում են դեմոկրատիա: Բայց որովհետև քվե տալու հավասարությունը չատ անհավասարություններ է ստեղծում, ուստի դեմոկրատիան ամենից առաջ հակադեմոկրատ է, երբ քվե է տալիս: Քաղաքական սարսռազդություն լինելով հանդերձ՝ նա վճռում է չատ հարցեր իր քվե տալովն իսկ, որոնք երբեք քաղաքական չեն: Այդ պատճառով էլ, երբ դեմոկրատիա ասելով հասկանանք քվե տալու ընդունակությունը, կտեսնենք, որ դեմոկրատիան թե՛ սոցիալիստ է, թե՛ կղերական, թե՛ միապետական, թե՛ բռնապետական և թե ամենայն ինչ, որ կարող է նրա հավանությանն արժանանալ այս կամ այն չափով, այսպես կամ այնպես: Ահա թե ի՞նչու անկարելի է դառնել մի քաղաքական գործիչ, որ նրա անունով չելույթ: Մի աստված է նա, որ բոլորի հանդեպ էլ բարյացակամ է, սակայն, չունենալով ամենակարողություն, նա մի պառնիկ է միայն, որ բոլորին էլ ժպտում է՝ լինելով ինքնին ամենաանկարողություն: Բայց կա՞րող է մարդկությունն այսպես լինել: Մարդկությունն այդպես չ՛, այո՛, որովհետև իրականություն է այդպես: Այդպես չէ միայն այն մարդկությունը, որ ոչ թե կա, այլ պետք է լինի: Մարդկության գաղափարը մեզ էլ ոչ թե «ինչ որ կա»-ն է, այլ «ինչ որ պետք է լի-

նի»-ն է: Ով չի չփոթում իդեալը ռեալի հետ, նա պարզ պետք է տեսնի, որ անհատները բազմապատկելով, երբեք կարելի պիտի չլինի ստանալ այնքան մեծ մարդկություն, որքան անհատական մեղքերի բազմապատկությունն է ներկայացնում մարդկությունը: Այժմ էլ կա, անշուշտ, այդ իդեալ մարդկությունը, այն լուռ և անխոս մարդկությունն է դա, որ իր աշխատանքից, իր հոգու հետ և ինքն իր հետ լինելուց դեռ չի ձանձրացել, որպեսզի քվեարկության գնա, կամ միտինգներ կազմե, որ ծափահարություններով ճշմարտությունները վճռե, կամ հավասարության անունով անհավասարություններ ստեղծե և մարդկության մեջ մի նոր մարդկություն կազմի՝ կոչելու համար դեմոկրատիա:

Դեռևս հնարավոր չի եղել ոչ մի դաստիարակությունը, որ մարդու ընկերային ընդունակությունները զարգացներ՝ ոչնչացնելով նրա քաղաքական ղգացումներն ու տրամադրությունները: Դեռևս անխախտ է այն հասկացողությունը, թե ինչ որ ընկերային է, նաև քաղաքական է, կամ քաղաքային: Ուստի և, ով որ հաշտվում է ընկերային կյանքի հետ, ապրելու հասարակական ձևի հետ, նա պետք է հաշտվի նաև քաղաքական կյանքի և դեմոկրատիայի հետ: Սակայն, անհրաժեշտ է կատարել այս փորձն էլ՝ բաժանել ընկերայինը և քաղաքականը: Դեմոկրատիա գաղափարը մի հավիտենական փորձ է՝ կապված մարդկության գլխին: Ի՞նչու կարելի պիտի չլինի կատարել մի փորձ, որ ընկերային կյանքի այն տեսակը լինի, ուր չկա այլևս այն տիպի քաղաքական կյանքը, որ դեմոկրատիայի վրա է հենվում: Անշուշտ միապետությունը դրա անհաջող փորձերից մեկն էր, նա չէր ճանաչում ժողովրդապետությունը, ընտրությունը, քվեն են: Բայց, որովհետև կյանքի ղեկավարող սկզբունքները վճռվել են ուժով, բռնությամբ և ամբոխային ղեկավարությամբ, ուստի մի ծայրահեղությունից մյուս ծայրահեղությունը ավելի հեշտ է եղել, քան նոր ձևի գյուտը, որ կարող էր թռիչք չպահանջել, ինչպես որ կարիք չուներ ոչ ուժի, ոչ բռնության, ոչ էլ ամբոխի: Եվ, քանի որ դեմոկրատիան է խոսողը, ուստի պետք է լռե ամենայն գիտություն, փորձառություն, իմաստություն և ճանաչողություն: Դեմոկրատիան միշտ էլ կգտնի անթիվ գիտնականներ, որոնք իր ճաշակին հարմար «գիտություն», «փորձառություն», «ճանաչողություն» և «իմաստություն» կգտնեն: Դեմոկրատիան ինքն իր միջից է հանում իր դատապարտությունը:

VI

ՍՈՑԻԱԼԻԶՄ

Մի ընդհանրական և համայնապարփակ հասկացողություն է սա, որի հիմունքներն են կազմում հեղափոխությունը, դասակարգային դիտակցությունը, դեմոկրատիան և կուսակցությունները: Ինչ որ ասվեց դրանց մասին, այստեղ ոչ կրկնելու պետք կա, ոչ էլ փոխելու: Այժմ անհրաժեշտ է երևան բերել նրա մի քանի ուրիշ երևոյթները, որոնք դեռ ծածկված են մնում, և որոնց լուսաբանությունը մեր բռնած անկյունից պետք է լրացնե ամբողջականությունը ընկերաբանական այս փոքրիկ դիտողությունների մեջ:

Սոցիալիզմը անխոցելի մի երևոյթ ունի. իբրև իդեալ՝ նա իր մեջն է կուտակում ինչ որ մարդկայնորեն լավագույն կարելի է եղել երևակայել: Բայց ո՞ր սոցիալիստն է, որ ճանաչում է նրա իդեալ արժեքը: Նա ըստ ամենայնի ունալ մի հասկացողություն է, որ երբեք էլ հեռու չէ իրականությունից, հիմնած է դասակարգային դիտակցության, կուսակցությունների և դեմոկրատիայի վրա: Այս դեպքումն էլ նրա արժեքը ուժածին գաղափար լինելն չէ, այլ մի ծրագիր է նա, որ պիտի իրականացնել այսօր կամ վաղը: Այստեղից ևեթ, իբրև ունալ մի հասկացողություն, նա զրկվում է իր ամենատարրական պաշտպանության զենքերից իսկ: Իդեալի անսահման հեռավորությունը նրբելի է դարձնում անորոշությունը, մթությունը, անկապմակերպությունը և խառնակությունը, որոնք այս դեպքում կլինեն ոչ թե սոցիալիզմի հատկանիշները, այլ ամենայն իդեալի բնորոշ կողմերը: Բայց ի՞նչպես արտարայնել հասկացողությունների այն անսահման այլազանությունը, որ պարունակում է իր մեջ սոցիալիզմ–իրականությունը: Ոչ ոք չի պահանջում առաջուց, թե ի՞նչ պիտի իրականացնել ժամանակի անսահմանության մեջ. ամեն օրը մեզ կասի, թե ի՞նչ պիտի անել վաղը: Բայց ամեն մարդ պարտավոր է պահանջել առաջուց, թե ի՞նչ պիտի անել վաղը: Իբրև վաղվա ծրագիր՝ Սոցիալիզմը մեզ ներկայացնում է գլխոցական և բյուզանդական վեճերի մի անլուծելի խառնարան, ուր գործնական կյանքի առաջադրած հարցերի մտահոգությունից ավելի, երևում է պարագլուխների անձնական հեղինակության, կուսակցությունների պատվի և քաղաքական մոմենտին հարմարվելու մտահոգությունը: Ամենայն իդեալի անդիմադրելի հմայքով գինված՝ ամենայն իրականության թերությունների կուտակում է դառնում այսպիսով Սոցիալիզմը: Ապագայի

նրա անորոշությունը վարկաբեկիչ է դառնում, ուրեմն, նրա մուտավոր իրագործման համար: Իբրև իդեալ պիտի մնա նա, եթե ուզում է լինել մարդկության իդեալը: Իսկ լինել մարդկության իդեալը և վաղվա ծրագիրը միաժամանակ բացի տրամաբանական հակասությունից, ունի նաև փորձի և պատմության հերքումը:

Միայն ապագայի հարցը չէ, որ ջախջախում է Սոցիալիզմի թևերը: Սոցիալիստական տեսությունները շուտով մի դար կյանք կունենան, բայց ավելի քիչ ժամանակ պետք էր, սակայն, վերջնականապես վճռելու, թե Սոցիալիզմը մի քաղաքական չարժում է, թե տնտեսական: Տնտեսապես, հետևաբար և կուլտուրապես հետամնաց երկրների համար այս հարցը շատ տարօրինակ կարող է թվալ: Բայց Սոցիալիզմը այդպիսի մի հարց է այն երկրների համար, որոնք քաղաքականապես շատ քիչ լուծելի հարցեր ունեն, կամ համարյա թե չունեն: Եթե նույնիսկ մի երկրում ձեռք է բերված այսպես կոչված «քաղաքական սոցիալիզմը», այսինքն պետական վարչական, դատական և օրենսդրական գործառնությունների կատարյալ և հետևողական զարգացումը ժողովրդապետական և դեմոկրատական հիմունքների վրա,— այդ երկրումն էլ Սոցիալիզմը դեռևս չի աղատվում քաղաքականությունից, այդ երկրումն էլ տնտեսական հարցին դեռևս ուզում են քաղաքականապես լուծում տալ: Եթե այդտեղ այդպես է, անկարելի է այլևս պնդել, թե Սոցիալիզմը ավելի պարզ և բյուրեղացած մի չարժում է այն երկրներում, որոնք դեռ քաղաքական բազմաթիվ հարցեր ունեն վճռելու:

Տնտեսական պրոբլեմներին քաղաքական լուծում տալը երկար տարիների փորձ ունի իր ետևը: Թե՛ այն երկրում, ուր կա, և թե՛ այն երկրում, ուր չկա քաղաքական հարցը: Երբ Սոցիալիզմը կատարելապես չի անջատվել քաղաքականությունից, նշանակում է դարձել է մի իդեոլոգիա շատ համապատասխան քաղաքական գործիչների և որոշ տիպի մարդկանց ճաշակին: Թող ամենակոպիտ նյութապաշտությունն նույնիսկ լինի Սոցիալիզմը, երբ նա գեկավարվում է կուսակցությունների ձեռքով, պառլամենտներում կամ առհասարակ քաղաքականությամբ, նա իդեոլոգիա է: Ամեն երկիրն էլ ունի դորշ դանգվածների մի դասակարգ, որ բոլոր դասակարգերին էլ է պատկանում, որովհետև ոչ մի դասակարգի չի պատկանում: Իբրև դասակարգայնապես անկազմակերպ նա ոչ մի իրականություն չի ներկայացնում իր մեջ, ընդհակառակն հնարավորությունների մի անսահմանություն կա նրա առջև: Նա պետք ունի հազար ու մի տեսակ իդեոլոգիաների, որպեսզի իրականացնն մեկն այն հնարավորություն-

ներից, որ հաճախ պատահաբար է ընկնում նրա ձեռքի տակ: Ընչաքաղցկներին պաշտպանելը դեռ չի նշանակում ընչազուրկ լինել: Սակայն իդեոլոգիան այդ էլ է տալիս, և իդեոլոգիան դառնում է, այսպիսով, Սոցիալիզմի պաշտոնական խնամակալությունը: Դեռ թողնենք իսկական պրոլետարական տեսակետը, թե ամենայն իդեոլոգիան վերջին վերլուծության մեջ այլասերվի իրականության պահանջների առջև, բայց մնում է, սակայն, խնամակալության անբարոյացուցիչ և անբարոյական դերը հասարակական կյանքում, ուր անչափահասների մասին չէ հարցը:

Քաղաքականություն և իդեոլոգիա, այս քույր-եղբայրները, խնամակալություն հաստատելով Սոցիալիզմի վրա, ոչ միայն տնտեսական հարցն են այլասերում, այլև մի դասակարգի հարցը դարձնում են մարդկային մի հարց: Իհարկե, իդեոլոգիան պատրաստ է ապացուցանելու, որ բանվորությունը մարդկության իդեալների դրոշակակիրն է: Ո՛րպիսի իրոնիա է այս, երբ բանվորի համեստ և չարքաշ ուղեղից դուրս է գալիս իդեոլոգիայի մշակած և բանաձևած այս ցնորքը՝ իբրև մի թոթռվանք: Տեսարանը կատարյալ է այն երկրներում, ուր բանվորությունը ոչ միայն այդ է վոխ առել, այլև իր շահերի դիտակցության մասին նույնիսկ նա այդ իդեոլոգիայի ղեկավարության է դիմում: Բնական և հոգեբանական երևույթների մեջ որոշ է այդ մասնավոր դեպքի տեղը, երբ իր գլխի մասին մտածել չկարողացողը սկսում է մտածել աշխարհի և մարդկության գլխի մասին:

Սոցիալիստական բուռգիտության մեջ շատ է խոսվում մի «պատմական դավաճանի» մասին. դա իդեոլոգիայի դյուտերից մեկն է: Բայց այլևս դյուտ չէ, որ պրոլետարիատի իսկական և «պատմական դավաճանը» իդեոլոգիան է, ամենայն իդեոլոգիան առհասարակ:

Պատմությունը և հասարակագիտությունը շատ են ճանաչում իդեոլոգիաներ և պոլիտիկաններ, որոնք, անժխտելի է, մի դեր կատարել են, բայց հայտնի է, թե ինչպիսի չարիք են դարձել մարդկության գլխին:

Ամենից հարուստը XVIII դարն է իր իդեոլոգիաներով: Բանականության անվերապահ պաշտամունքը և վարած անխնա քննադատությունը վերջվերջո նպաստեցին կառուցանելու մի իրականություն, որի իրական արժեքը բնորոշվում է ոչ թե կառուցվածքի, այլ կառուցանողների մտածողության այս որակումով՝ արհեստականություն (artificialisme): Մի մտածողություն է դա, որով վերլուծվում է

իրականությունը, ոչ թե ճշմարտությունը գտնելու համար, այլ իրենց ցանկություններին և հակումներին համապատասխան մի նոր իրականություն հիմնավորելու համար: Այդ մտածողությունն է, որ կեղծիք և խաբեբայություն է համարում պատմության մեջ ամեն բան, որ իր ցանկություններին չի համապատասխանում: Կրոնը մի քանի կղերամիտների ստեղծած գործն է, ազգությունը բռնապետներն են կազմակերպել, լեզուն գտել են կամ հնարել մի քանի ճարպիկ և խելոք մարդիկ, ընկերային կազմը նույնպես մի քանի մարդկանց ստեղծագործությունն է, աղքատներ կան, որովհետև հարուստներն ուզում են, որ աղքատներ լինեն, դինվորականություն կա որովհետև կապիտալիստներն ուզում են պաշտպանել և տարածել իրենց արտադրությունները, կրոն կա, որովհետև մի դասակարգ կա, կղերը, որ ուզում է ապրել այդ միջոցով: Անթիվ են այդ իդեոլոգիայի այսպիսի բացատրությունները: Անբանականը գոյություն ունի մի քանի մարդկանց կամքով միայն. ուրեմն, բավական է հերքել, ժխտել, կամ ջնջել այդ կամքը, որպեսզի անբանականը գոյություն չունենա այլևս: Բավական է մեջտեղից վերացնել պարզապես մի քանի մարդիկ, որպեսզի պատերազմ չլինի այլևս, որպեսզի կրոնը ջնջվի, դասակարգային հակամարտությունները վերջ գտնեն, ժանտախտ չլինի գուցե նաև, որպեսզի մարդկությունը չբաժանվի ազգային ներհակություններով, որպեսզի թշվառությունը վերջանա, աղքատությունը գոյություն չունենա, բռնությունը հեռանա մարդուց, ազատությունը թագավորե, անհավասարությունը խորտակվի և այլն, և այլն:

Պարզ է, թե ի՞նչն է այդպիսի դատողների մեջ արհեստականությունը: Ամբողջ պատմությունը, ամբողջ իրականությունը նրանց համար արհեստական հիմունքների վրա է դրված. մարդիկ այդպես են ուզեցել: Ամբողջ պատմությունը, ամբողջ իրականությունը կեղծիք է և խաբեբայություն, ոչ մի բան չկա բնական այս բնության մեջ. մարդիկ կամեցել են, այսպես է եղել, ուրեմն եկեք ուրիշ կերպ կամենանք, և իրականությունն ու պատմությունը ուրիշ կերպ կլինեն: Իդեոլոգիան, փորձելով զրկել բնությունը, որովհետև պատմությունն էլ, մարդկային իրականությունն էլ մի կտոր բնություն են, բնականությունից, ինքն էր իսկապես, որ զրկվեց բնականությունից: Արհեստական կառուցվածք տալով իրականության՝ ինքը դարձավ մի արհեստականություն և վատ տեսակի:

Իրականության մտավոր կառուցվածքը դրանով ստացավ մի անպատավություն, այսինքն ցույց տրվեց, թե մտքի մեջ վերամշակված

իրականությունը կարող է իրականություն չլինել: Դա դարձավ ամենայն իդեոլոգիայի ճակատագրական դատապարտությունը, ինչպես նաև այն բոլոր ժողովուրդների, որոնք իրենց «մեծ հեղափոխությունը» կատարում են իրենց իդեոլոգիայի դարաշրջանում: Հեղափոխությունն ինքնին իդեոլոգիայի արդյունքներից մեկն է: Բայց նա չէր լինի մեծագույն չարիքը, եթե Սոցիալիզմը մարդկության իգեալը, չլիներ իդեոլոգիայի արդյունքներից և չարիքներից մեծագույնը:

Այս արամաբանությունը կլրանա, եթե պարզ լինի, որ Սոցիալիզմը, իր ներկա վիճակով, մի իդեոլոգիա է միայն:

Մի կուսակցություն կա, որ ուզում է հակառակ մարդկանց կամքին բոլոր մարդկանց երջանիկ դարձնել: Այս ամենածայրահեղ սոցիալիստները միայն բավական են ապացուցանելու, թե ինչքան արհեստականություն կա այդ Սոցիալիզմի մեջ: Պրոլետարիատի դիկտատուրայով պիտի վերջանա ամենայն չարիք, և պիտի սկսի ամենայն երջանկություն: Մի քիչ մարտ իրականության մեջ, և իրականությունը կլինի ամբողջովին մարտ:

Երբ Սոցիալիզմի դեկավարությունն անցնում է կուսակցությունների ձեռքը, Սոցիալիզմը զրկվում է իր բնականությունից և իրական հիմունքներից, դառնում պոլիտիկա և իդեոլոգիա. իբրև մի զաղափար, որի հեղինակները, որի կրողները չեն. նա արհեստականորեն է ստանում իր անունդը և կյանքը, նա կարող է նույն արհեստականությամբն էլ փոխել իր գույնը և դառնալ մի ուրիշ տեսակի պոլիտիկա և իդեոլոգիա: Այսինքն Սոցիալիզմը կարող է դադարել Սոցիալիզմ լինելուց նրանց համար, որոնց տնտեսական, բարոյական, պատմական և հոգեբանական հիմունքներից չի բխում Սոցիալիզմը և փոփոխվել կարող է նրանց մաքում, ինչպես ամենայն միտք:

Սոցիալիզմը մի իդեոլոգիա է, որովհետև հիմնվում է դեմոկրատիայի վրա. ընտրողների գոռշ գանգվածը, որ հաճախ իր հակասոցիալիստական շահերը պաշտպանելու համար է լինում սոցիալիստ, որ անտեսական հարցին ուզում է քաղաքականապես լուծում տալ, որ իրականության բարդ մեքենայի ծանր կենճիռները ուզում է լուծել քվեարկությամբ:

Բայց Սոցիալիզմը իդեոլոգիա է ամենից ավելի, որովհետև մի պոլիտիկա է միայն:

Ամենայն պոլիտիկա մի իդեոլոգիա է ինքնին, և այդ դիտակցելով է, որ պոլիտիկան դառնում է իր մեծ վարպետների ձեռքում մի ճկուն խաղալիք: Արհեստական չլինելու և բնական դառնալու մտա-

հոգուբյունը պոլիտիկոսներին դարձնում է անսկզբունք և անկարպարանք, իրականության բոլոր պահանջները հաշվի առնող, վերապատվող ամեն ուժի և հակառակորդի առջև: Ցույց տալով ինքզինքը որպես երկրի և պետության կամ մարդկության չահերի ծառան՝ նա ինքնանպատակ է, սակայն: Պոլիտիկան պետք է ապրի, որովհետև մարդիկ կան, որոնք պետք է ապրեն՝ ուրիշները կառավարելով, կամ եթե կուզեք, իրականություն կա, որ ամբողջ լինելու, մեկ լինելու ձգտումներ է ցույց տալիս:

Սակայն ինչ ուզում է, թող լինի պոլիտիկան, միայն թե Սոցիալիզմը պետք է պոլիտիկա չլինի: Որովհետև ոչ մի տարբերություն չկա, ըստ էության, բոլոր պոլիտիկանների մեջ: Ազգային քաղաքականություն, դաղութային քաղաքականություն, մաքսային քաղաքականություն, միլիտարիզմ, կրոնական կամ հակակրոնական քաղաքականություն, սոցիալական կամ դասակարգային քաղաքականություն, սոցիալիզմ կամ կապիտալիստական կամ բուրժուական քաղաքականություն, այս բոլորը պոլիտիկաներ են և նրանց գործելակերպի, ծագման, զարգացման, հոլովույթի և կյանքի մեջ ոչ մի տարբերություն չկա: Բոլոր պոլիտիկաներն էլ վերցնում են իրականության մի կտորը, վրան թափում են իրենց մտքի և ոգու ամբողջ ուժը, մեծացնում, չափազանցնում արժեքը, մասին տալիս ամբողջի նշանակությունը, ու մի օր էլ գտնվում է առիթը, ներկայանում է համապատասխան մարդը և դրությունը՝ կյանքի կոչելու համար, ինչ որ մամուլի, ժողովների և ճառախոսությունների մեջ արծարծվել, ծեծվել, իբրև պահանջ էր ներկայացվել: Ահա պոլիտիկան, և դա նշանակում է արհեստականություն, դա նշանակում է կյանքի կոչել՝ ինչ որ կյանք չունի, ինչ որ կյանքից չի բխում, ինչ որ ոչ թե իրերի, այլ մարդկանց տրամաբանության պահանջն է: Անշուշտ, ցանկալի է, որ իրերը տրամաբանություն չունենան և մարդուն միայն վերապահված լինի այդ, բայց ցանկալին դեռ հնարավորը չէ, և եթե հնարավոր դառնա, շատ կասկածելի է, թե անցանկալի չի՞ դառնա: Պոլիտիկայի էությունից է բխում իրականության անհարազատությունը և արհեստականությունը: Նա հաշիվ է, նա դեպի հարավ պետք է նայի՝ դեպի հյուսիս գնալու համար: Նա պիտի «այո» ասի՝ լավագույն «ոչը» ասելու համար: Նա պետք է իր մտադրությունն իրագործե այնպես, որ ոչ ոք չիմանա, թե իր մտադրությունն էր, որ իրագործվեց: Եվ դրա համար նա դառնում է հետադիմության հզորագույն գործիքը, առաջադիմության մեծագույն կերևցմանը և ճշմարտության վերջին վախճանը: Պոլիտիկան ուղիղ ճանապարհ էլ է ճա-

նաչում: Այդ նրա համար է, որ ոչ ոք չիմանա, թե պոլիտիկա գոյությունն ունի աշխարհում, որ ոչ ոք չմտածի, թե կառավարելու արհեստը պահանջում է ծուռ ճանապարհներ, ինչպես ապրելու արհեստը՝ փորձառություն, ճաշակ և համառություն: Ինքնին մի արհեստականություն՝ պոլիտիկան չատ բնական մի երևույթ է, սակայն, նրանց համար մանավանդ, ովքեր ընկերակցել հասկանում են կառավարել:

Սոցիալիզմը պոլիտիկա է, որովհետև նման է բոլոր պոլիտիկաներին, և դեռ ավելին, որովհետև ոչ մի պոլիտիկա այնպես ամբոխավարություն չէ, այնքան արհեստականություն չէ, որքան Սոցիալիզմը: Ոչ մի տեղ այնպես չի ոչնչացվում երկրի սրամաբանությունը, ոչ մի տեղ մի քանի մարդկանց բանդագուշանքները այնպես չեն փաթաթվում ժողովուրդների գլխին, որպես Սոցիալիզմի մեջ: Ոչ մի բան առաջադիմության անունով այնքան հետադիմություն չի բերում, որքան Սոցիալիզմը: Ոչ մի անգամ ժողովուրդների պատմական զարգացումը այնպես չի բռնաբարվել, ինչպես Սոցիալիզմի մեջ: Ոչ մի տեղ ժողովուրդների տգիտությունը այնպես չեն չահագործել իդեոլոգները, որպես Սոցիալիզմի մեջ: Ոչ մի պոլիտիկա այնպես խաբեբայություն չի եղել, ինչպես Սոցիալիզմը, որ ձեռնամբարձ քվեարկությամբ աշխարհը շրջում է ոտն ու դլուխը:

Պոլիտիկա և իդեոլոգիա՝ մի ընդհանուր նկարագիր ունեն իրենց գործնակաների մեջ: Նրանք մեզ սովորեցնում են, թե երկու կետերի մեջ եղած ամենակարճ ճամբան ծուռումուռ գիծն է: Նրանք չեն կարող երբեք տնտեսական հարցերին տնտեսական միջոցներով լուծումներ տալ: Շատ հազվադեպ է, որ մեծ քաղաքական հարցերը քաղաքական միջոցներով լուծումներ ստանան: Նրանք չեն կարող կրոնա-բարոյական հարցերը կրոնա-բարոյական միջոցներով լուծել: Հոդերանական, հասարակագիտական և առհասարակ բոլոր դիտական հարցերը, որոնք ընկերային արժեք և նշանակություն ունեն, երբեք չեն լուծվում ուղիղ ճանապարհով: Համարյա թե բոլոր հարցերին նրանք տալիս են քաղաքական լուծում: Այսինքն ընտրության, քվեարկության, ճառախոսության, ամբոխավարության են դիմում նրանք՝ լուծելու համար դիտական, հոդեբանական հասարակագիտական, տնտեսական, կրոնական, բարոյական և այլն հարցերն ու առհդծվածները: Թե ի՞նչպես անուղիղ, ծուռումուռ, չեղ և կողմնակի գործնակաները բխում է ամենայն իդեոլոգիայի և պոլիտիկայի էությունից, ներքին կառուցվածքից և հիմունքներից: Այդ պարզ է դառնում, եթե նկատի ունենանք, որ քաղաքականությունը վերջին

միջոցը, միակ ձևը համարելով հասարակական հարցերը լուծելու, նրանք ուրիշ միջոցի են դիմում՝ որպեսզի չլինի թե այս դեպքում ուղիղ լինի իրենց գործելակերպը, երբ պետք է մի ծանրակշիռ քաղաքական հարց լուծել: Զինվորականությունը և պատերազմը դալիս են լուծել այդ հարցերը, որպեսզի քաղաքական հարցը քաղաքական լուծում չստանա, որպեսզի ուղիղ չլինի, սխալմամբ, գործելակերպը: Քաղաքականությունը, որ ամեն բան լուծում է քաղաքականությամբ, անզոր է գտնվում իր առաջադրած սեփական խնդիրները քաղաքականությամբ լուծելու:

Այդպես չէ՞ ամենայն Սոցիալիզմը, որ գտնվում է կուսակցությունների ձեռքը, որ ընչազուրկների անունից խոսում է ոչ-ընչազուրկների կամ իդեոլոգների բերանով, որ անկուսակցականություն է քարոզում արհեստակցական միությունններին, որպեսզի ավելի մոլեռանդ կուսակցական դարձնե բանվորներին, որ դեմոկրատիայի անունից է խոսում՝ պրոլետարիատի շահերը պաշտպանելու համար, որ հաշտեցնում է ընտրությունը և գործադուլը, որ էվոլյուցիոնիստ է և ռեվոլյուցիոնիստ միանգամայն: Այս բոլոր բաները շատ նրբայրորեն հաշտ ու հարազատ են ապրում ուղեղի մեջ, մտքի մեջ, պատվարների մեջ: Արդեն իդեոլոգիա այդ է նշանակում: Դա դուցե կարող է իդեալ լինել: Սակայն, ի՞նչպես հաշտեցնել դրանց իրականության մեջ՝ առանց իդեոլոգիայի, ի՞նչպես նույնացնել հակասությունները կյանքի մեջ՝ առանց իդեոլոգիայի:

Ամեն մարդ կարիք ունի իր նախնիների փորձերից հետո ինքն էլ փորձեր կատարելու: Ժողովուրդներն էլ պետք է կատարեն այն փորձը, որ ուրիշ ժողովուրդներն արդեն կատարել էին: Իրականությունը չի փոխվի, ճշմարտությունը այդպես չի գտնվի:

Ճշմարիտ Սոցիալիզմը մի թշնամի միայն ունի: Սուտ է, որ ասում են, թե դա բուրժուազիան է, կապիտալիզմը կամ միլիտարիզմը: Սուտ է, որովհետև Սոցիալիզմը նրանց որդին է, նրանցից է սնվում և առանց նրանց չի կարող ապրել: Սոցիալիզմի միակ թշնամին Սոցիալիզմն է, իդեոլոգների և պոլիտիկոսների ստեղծած Սոցիալիզմը:

Թիֆլիս, 917, 29 հոկտ.

VII

ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ա.

Ըստ երևույթին հեղափոխության հակառակը հակահեղափոխությունն է, ըստ երևույթին հեղափոխությունը մի դրական գաղափար է, հակահեղափոխությունը՝ բացասական:

Ըստ երևույթին հեղափոխության հակառակները՝ ժողովրդին հակառակել է, Սոցիալիզմին հակառակել է, դեմոկրատիային հակառակել է:

Ըստ երևույթին հեղափոխությունը առաջադիմություն է և հակահեղափոխությունը՝ հետադիմություն:

Ըստ երևույթին հակահեղափոխությունը միապետության պաշտամունքն է:

Ըստ երևույթին հեղափոխությունը ազատություն է, հավասարություն և եղբայրություն: Ըստ երևույթին հակահեղափոխությունը բռնություն է, անարդարություն և ստրկություն:

Ամեն ժողովուրդ երկու պատմություն ունի՝ հեղափոխությունից առաջ և հեղափոխությունից հետո: Ըստ երևույթին առաջ ստրուկ էին, հետո՝ մարդ:

Ամեն պատմություն միապետության պատմություն է, կամ ժողովրդի պատմություն: Ըստ երևույթին միապետությունը միապետի պատմություն է և հեղափոխությունը՝ ժողովրդի:

Ըստ երևույթին հեղափոխությունը չղթայազերծում է, և հակահեղափոխությունը՝ վերստին չղթայում:

Ըստ երևույթին հեղափոխությունը լուծ թոթափել է, և հակահեղափոխությունը՝ նոր լուծ կրելը:

Ըստ երևույթին հեղափոխությունը արժեքավորում է ամենայն արժեքի, և հակահեղափոխությունը ոչնչացում է ամենայն արժեքի:

Ըստ երևույթին հեղափոխական մոմենտը մարդու մեջ մարդկային արժանապատվության զարթոնքի մոմենտն է, և հակահեղափոխության մոմենտը մարդու մեջ՝ անասնական կրքերի հաղթության մոմենտն է:

Ըստ երևույթին պատմությունը մի ճանապարհ միայն ունի՝ միապետություն, սահմանադրություն և ժողովրդապետություն: Ըստ

երևույթին այդ ճանապարհը քայլում է հեղափոխության թևերի վրա:

Ըստ երևույթին հեղափոխությունը բխում է հասարակական շահերի գիտակցությունից, իսկ հակահեղափոխությունը՝ անհատական-մասնավոր շահերի գիտակցությունից:

Ըստ երևույթին հեղափոխությունը նշանակում է մարդկայնություն և հակահեղափոխությունը՝ հակամարդկայնություն:

Այսքանն էլ ցույց է տալիս ամբողջովին երկու գաղափարների մեջ եղած երևութական հակադրությունները և հակասությունները:

Որ այսպես գրելու հնարավորությունն էլ հեղափոխության բերած բարիքներից է, անկասկած է, և բավական է շատերի համար՝ հակահեղափոխական չդառնալու: Բայց դա դեռ բավական չէ՝ փոքրը մեծացնելու, ժամանակավորը հավիտենական դարձնելու և հասարակագիտական մեծագույն առեղծվածներից մեկը լուծելու համար:

Լուծո՞ւմ է, արդյոք, հեղափոխությունը որևէ առեղծված, թե՞ հեղափոխության առեղծվածը լուծվում է միշտ հակահեղափոխական իրականությամբ: Ահա խնդիրը:

Դեպի հարցն ունեցած վերաբերմունքի լրջությունը պահանջում է այստեղ մի մեծ համարձակություն: Պետք է փողոցից և միամիտներից դուրսն ապացուցանել, թե հակահեղափոխությունը հեղափոխության որդին չէ, թե ստողջությունը չէ, նորմալ վիճակը բոլոր գործարանավոր մարմինների համար, թե ընդհանրականն ու սևականը չէ այն, ինչ մենք նորմալ ենք անվանում, այլ բացառիկը և վայրկենականը:

Որովհետև, իսկապես, հեղափոխությունը ամբողջովին լատ երևույթին է, ինչպես ամենայն հասարակական երևույթ, որի օրենսդիրներն ու գործադիրները միևնույն անձնավորություններն են: Սա է իսկական «հակահեղափոխությունը»:

Որովհետև, իսկապես, հեղափոխությունը միայն քանդել է, ոչնչացնել, մերժել, հերքել և բացասել: «Խորացնել հեղափոխությունը» նշանակում է ոչինչ չթողնել, որ հաստատուն մնա և շարունակություն լինի, նշանակում է հետևողականորեն մտածել մինչև վերջ իշխանության հարցը և հասնել բնական վիճակին: Սա՝ է ճշմարիտ «հակահեղափոխությունը»:

Որովհետև, իսկապես, ժողովուրդ, սոցիալիզմ, դեմոկրատիա և այլն, մի հոդեբանություն ունեն, որ իր օրենքներն ունի, իր պարգացման և հաստատման համար պայմաններ է պահանջում: Մինչ-

դեռ հեղափոխությունը՝ իբրև գիտակցության մի ուղիղ գիծ, ոչ մի անդրադարձում չի ճանաչում, նշանակում է հոդևբանության բացակայություն և բնազդների գործունեություն, օրենքների խորտակում և օրինածին անընդունակություն, նշանակում է մի վայրկյան բարիք և մի հավիտենականություն չարիք՝ նույն այդ ժողովրդի, սոցիալիզմի և դեմոկրատիայի համար: Սա է իսկական «հակահեղափոխությունը»:

Բառերի մեջ մի պնդապլուխ համառություն կա, որով պետք է հաճախ հակահեղափոխությունն անվանել ամենայն չարիք, որ ինքնին հեղափոխություն է միայն:

Առնվազն տասնյակ տարիներ պետք են, եթե ոչ դարեր, նշմարելու համար մի երկրի կամ ժողովրդի առաջադիմությունը: Այն աչքերը, որոնք այդքան ժամանակ դեպի ետ կարող են տեսնել, նրանք պիտի տեսնեն հեղափոխության բոլոր դործերը՝ որպես ավեր, արյուն, կործանում և քանդում: Առաջադիմությունը պահանջում է չարունակություն, տևականություն, հաստատունություն, կարդ և ուժ: Հեղափոխությունը պահանջում է նոր բաների համար այդ հատկությունները, բայց տալիս է հին բաները՝ առանց այդ հատկություններին: Առանց չինական հեղափոխության՝ Հարյուր տարի հետո, Չինաստանը չէ՞ր լինի այնպես, ինչպես որ պետք է լինի: Պատմության աչքերն տեսած են՝ հեղափոխությունը նրանց ոչինչ չափեց, բայց շատ բաներից զրկելուց: Ո՞րն է առաջադիմությունը: Հեղափոխությունը չէ՞ ճշմարիտ «հակահեղափոխությունը»:

Ամենքի բանականության անկարողությունը և ամենքի կրքերի ամենակարողությունը կոչվում են հեղափոխության մեջ՝ ազատություն: Իբրև վերազարձ դեպի անասնությունը՝ սա է ճշմարիտ հակահեղափոխությունը:

Որպես կոկորդների և բնազդների հավասարություն, որ ջնջում է ամենայն տարբերություն և գանազանավորում հոգու և նկարագրի մեջ և ստեղծում տրամաբանական հավասարության անկարելությունը, հեղափոխությունն է իսկական «հակահեղափոխությունը»:

Երբ մարդկայնորեն անկարելի է անհավասարությունը և նըրայրությունը, մի ուրիշ ձևով կարելի է դա: Հեղափոխությունը մեզ ասում է, թե ինչքան դանհկություններ կային թաղված և ինչքան մաքուր էր միտքեսական ճահիճը, որ ծածկել էր աներևակայելի այդքան ճահիճներ: Ուրիշ կերպ չի կարող լինել ճշմարիտ հակահեղափոխությունը:

Եվ ոչ մի հեղափոխություն դեռ չի ազատել մեզ և ոչ մի ստրկությունից: Մի ազատություն կա, որ ոչ մի միապետություն չի կարող խլել, և որ խլում է մեզանից հեղափոխությունը՝ առույգ մտքի ազատությունը: Դրա համար է, որ ստրուկ ծնվածները հեղափոխության պետք ունեն՝ մի կտոր ազատություն ձեռք բերելու համար: Ի՞նչ է սրա անունը:

Պատմական թյուրըմբռնողությունը ժողովրդին արժեք տալու համար միապետին էլ է արժեք տալիս: Սակայն, պատմությունը այն բարդ մեքենականություննն է, որտեղ ժողովուրդը և միապետը հազարից երկուքն են միայն, և ո՛չ առաջինը, ո՛չ էլ վերջինը: Եթե միապետությունը միապետի պատմություն է, հեղափոխությունն էլ նա չի մնում մի քանի արկածախնդիրների պատմությունը լինելուց: Սակայն, մինչդեռ առաջինի մեջ, համենայն դեպս, մարդու պատմությունն է, որ կա, դժվար է ասել թե հեղափոխության մեջ երկու գործ կա՞ն արժանի մարդու անվան: Այո, հեղափոխությունը չղթայազերծում է, բայց մեկ չղթայից ազատելը՝ բազմաթիվ չղթաների տակ դնելու համար: Եթե ոչ մի անկանոնություն էլ չլինի և հեղափոխությունը իդեալ պայմաններում կատարվի, համենայն դեպս, չե՞ն տալիս մեզ քվեի, միտինգի, ընտրության և փողոցի չղթաները, որոնք ավելի վատ են, քան հիմք և տևականություն ստացած ստրկանությունը և գրաքննություն: Մինչդեռ մեկիցն ազատվելու համար դուք ձեզ հետ կուվելու պետք չունեք. ուրիշի հետ պետք է կուվել՝ ոստիկանությունից ազատվելու համար: Բայց դուք միշտ պարտվում եք ձեր հոգու լավագույն ուժերով հանդերձ, ձեր մեջ հանգչող փողոցային, ամբոխային և միտինգային բնազդներից: Դրա համար է, որ թոթափված լուծը հաստացնում է պարանոցը ավելի ծանր և ավելի չատ լծերի համար: Հասարակական կյանքով ապրողների և ոգևորվողների համար պետք է ցանկալի լինի միապետությունը, որ միայն մի լուծ տալով՝ ազատում է անհատին բազմաթիվ լծերից: Ինչքան բազմաթիվ են անհատի հասարակական կապերը, այնքան և չատ ու ծանր են նրա վրին դրած լծերը: Հեղափոխությունը մի անհատի մեջ մի հատիկ անկապ կետ չի թողնում, հեղափոխությունը ջնջում է անլուծելի մնացած մասերը մարդու մեջ. անմարդանալու լավագույն ձևն է դա:

Երբ արժեքի մասին են խոսում հեղափոխության մեջ, միևնույն բան են կատարում, ինչ որ, եթե խոսեին ջրի մեջ հղած կրակի մասին, երկրաշարժի չինած քաղաքների մասին և հեղեղով ղովացած

ծարավ արաերի մասին: Հեղափոխությունը այդպես է արժեքներ ստեղծում:

Ըմբռոստության սրբությունը միայն հեղափոխության մեջ կարող է գոհհկանալ և դառնալ մարդկային արժանապատվության վերջնական թագումը: Ամեն անգամ, երբ անհատականը դառնում է հասարակական, մարդկայինն է իսկապես, որ դառնում է անատնական: Ոչ մի տեղ քանակի փոփոխությունը այնպես չի դառնում որակի փոփոխությունը, որպես այստեղ: Ոչ միայն չատ մարդ այլևս մարդ չէ, այլև չատ մարդկանց հոգին երբեք մարդկային չէ, ոչ էլ նրա արտահայտություններից մեկը կամ մյուսը: Այդպես չէր լինի, եթե հեղափոխությունը քանդելու, ավերելու, արյունելու և բռնանալու բնազդների սանձարձակումը չլիներ:

Ժխտելով հեղափոխության պատմական-էվոլյուցիոնիստական դերը տեսնում ենք, որ պատմության մեջ զարգացումը կա թեև, բայց դա երբեք ըստ էության չէ: Փոփոխությունները, լինեն հանկարծակի կամ աննկատելի, այդ միևնույն է, փոփոխվածը միշտ Անփոփոխելին է, մարդկային կյանքի հասարակական ձևավորումը, ուր ձևավորման պրոցեսը կարճատեսների և կարճամիտների համար փոփոխության և հեղափոխության պրոցեսն է: Հեղափոխությանը տալ մարդկային և պատմական նշանակություն, լինում է ոչ միայն մի երազ ու ցնորք, այլև հրազի մեջ թռչելու մի երջանկություն: Թե ի՞նչն է հետևում ճակատագրական անհրաժեշտությամբ բոլոր հեղափոխություններին, պարզ ցույց է տալիս, թե ինչպես ժողովրդավարության հասնելու անդիտակցությունից ավելի մեծ անմտություն չի ճանաչում մարդը, և դա կոչվում է հեղափոխություն:

Շահերի ո՞ր դիտակցությունն է, որ ոչ մի շահ նկատի չունի. արդյո՞ք հասարակական շա՞հն է, որ ոչ մի մարդու շահը չի ճանաչում: Հեղափոխության մեջ այդ ճիշտ այդպես է: Բայց հեղափոխության պաշտպանները պատրաստ են ապացուցանելու, որ բոլորի վնասն է կազմում հասարակության շահը: Ո՞վ չդիտե, սակայն, թե ո՞վքեր են շահում հեղափոխությունից. երբ պատմության էջերը հարստանում են կարճ ժամանակում, հասարակության հոգին ու միտքն է աղքատանում այդքան ժամանակում:

Մեծ վաճառատներում մեր ցանկացած նյութի համար մեզ առաջարկվում է «մեծ ընտրություն» (grand choix): Արհեստը, վարպետությունը և դրամագլուխը տալիս են վաճառականին այդ հնարավորությունը: Ի՞նչ անուն տալ, սակայն, այն պատմության, ուր ամեն օր մի տեսակ հեղափոխություն է առաջարկվում: Ո՞վ է, որ կա-

րիք ունի այդ «մեծ ընտրության», վաճառողնե՞րը, թե՞ հաճախորդները: Այսպիսի հակամարտերի սիրույն աշխարհ է գալիս արյունի, երկաթի և կրակի հակահեղափոխությունը:

Որովհետև, իսկապես, հեղափոխությունը միայն ըստ ևրևույթին մի բարիք է, և հակահեղափոխությունը միայն, ըստ երևույթին մի չարիք է: Ըստ էության, հեղափոխությունը մի չարիք է և հակահեղափոխությունը կարող է չարիք չլինել երբեք:

Բ

Հեղափոխությունը արժեքավորելու խնդրում հարկ չկա մատնանշել այն չափանիշը, որով պատմական երևույթներն առհասարակ լավ կամ վատ են հայտարարվում: Այն անսահման վեճը, որ կարող է հարուցանել այդպիսի մի արժեքավորում, անշուշտ, բխում է մի անվիճելի հիմնահայացքից թե՛ կյանքի և թե՛ աշխարհի վրա: Այդ անվիճելի չափանիշը պետք է պարզ լինի ամեն մարդու համար, որ տրամադիր է այսպես կամ այնպես մտածելու: Մի հոդվածաշարք նույնպես կարող է պարզ դարձնել այդ, երբ նման բազմաթիվ հարցեր է շոշափել: Եթե թողնենք այն չլիճանակը, ուր մարդիկ գործում են, առանց այլևայլության մենք մարդկանց մի մեծ բաժին կդասենք այն չլիճանակի մեջ, ուր մարդիկ չեն գործում, և սակայն մեծ բավականությամբ չափում են մարդկանց գործերը: Նրանց պետք է հարցնել, թե գործը վերջանալուց հետո ի՞նչ ստացվեց— օգո՞ւտ, թե վնաս, լա՞վ թե վատ մի բան, առաջադիմությո՞ւն, թե հետադիմություն, չարժո՞ւմ թե կայունություն: Այս բառերի վրա դեռ կարելի է աշխատել, քանի որ անպատիվ են դարձել ոմանց համար հեղափոխությունն, ոմանց համար էլ հակահեղափոխություն բառերը:

Իբրև հասարակագիտական փորձ՝ հեղափոխությունը, երբ «մեծ» էր և ֆրանսիական էր, մեծ համակրություն վայելեց նույնիսկ կանտից: Ոչ միայն իբրև փորձ՝ բանականության իշխանությունը հաստատելու համար, այլև հենց անձնական տեսակետից կանտը իրավունք ուներ համակրությամբ վարվելու դեպի հեղափոխությունը: Այս փաստն էլ շատ թանկագին է, թեև նրա բոլոր գրվածների մեջ ոչ մի արդարացուցիչ տող չի կարելի գտնել հեղափոխության մասին, ու դեռ ոգին էլ կատարելապես հակառակն է: Կաթնգորիք հրամայականի, պարտականության, օրինապահության և հոգեկան ինքնասրճմամբ ձեռք բերված ագատության հեղինակը չէր կարող մարդու և աշխարհի մեջ մի փոքրիկ անկյուն գտնել հեղափոխությունն արդա-

բացնելու համար: Բայց նա համակիր էր Ֆրանսիական հեղափոխության: Բուռնական հռչակավոր բռնությունը այն ժամանակ էլ նշանավոր էր ավելի, քան երբևէ. հետո փորձը, հասարակապետական փորձը՝ բանականությունը թագավորեցնելու համար, նրան չատ կարող էր հետաքրքրել: Գործի անմիջական և մշտական արժեքը իր հաշվեհարդարից հետո է երևան գալիս ամբողջովին: Կա՞րող էր կանոը այլ կերպ մտածել գործի հաշվեհարդարից հետո, քան, ինչ մենք եզրակացնում ենք այժմ նրա ընդհանուր աշխարհահայացքից, քան, ինչ որ եզրակացրին իր աշակերտները՝ հետագայում: Փորձի արժեքը մի փորձ էլ մնաց հավիտյան, և հեղափոխության դերը պատմության մեջ սկսեց վիճելի դառնալ՝ մի ժամանակ անվիճելի և բացարձակ ճշմարտություն լինելուց հետո:

Շատ ավելի դժվար պիտի լիներ ապացուցանել, թե Ֆրանսիայումն էլ վիճելի դարձա՞վ երբևէ հեղափոխության արժեքը, որովհետև հեղափոխությունների այդ դասական երկրում, հաճախ ամենայն իրավամբ, հպարտանում են մարդիկ, թե աշխարհին օրենքներ են տվել: «Մարդկային իրավունքների հայտարարությունը», անժխտելի է, առափնում է մի երկրի սահմանները և դերազանցապես մարդկային տարողություն ստանում: Սակայն փաստ է, որ հեղափոխության պատմական արժեքը ոչ մի տեղ այնքան վիճելի չէ, որքան Ֆրանսիայում: Կանտի աշակերտները Գերմանիայում չատ ավելի հեշտությամբ կարող էին վիճելի համարել այդ: Անկարելի էր Ֆրանսիայում այդպես համարել, և, սակայն, դա փաստ է: Հեղափոխության ուսումնասիրության նվիրված հանդեսները, ընկերությունները, թանգարանները, ամբիոնները համալսարաններում նպաստեցին մեծ չափով անհողդողդ և անսասան համոզմունքներ կայացնելու նրա արժեքի վրա: Դրանք, իհարկե, նպաստեցին մեկ կողմից էլ, գործի մարդկանց, գործող մարդկանց գործունեությունը զարգացնելու և որոշ ուղղության մեջ դնելու: Բայց կուսակցական չրջանակներից դուրս, դործելու մտադրություն ունեցողներից դուրս, սոսկ ճշմարտության որոնմամբ զբաղվող աշխատավորների մեջ, հեղափոխության ամբողջական արժեքավորումը բերից բոլորովին անսպասելի հետևանքներ: Տեն, Ռընուվիե, Կոնտ և այլք դարձան մի-մի «վարպետներ հակահեղափոխության»: Մարդկությանը օրենքներ տալուց հետո նրանք գտան, որ չատ քիչ բան են տվել, սակայն, Ֆրանսիային: Հեղափոխության ճգտումը ամեն բան տալու՝ պատճառ է դառնում, որ հեղափոխությունը ոչինչ չտա իսկապես: Համարելով նրան քաղաքակրթության և առաջադիմության դպանակներից մեկը՝

մենք տեսնում ենք, որ 1789-ից մինչև, օրինակի համար, 1889-ը, այսինքն հարյուր տարվա միջոցին, Ֆրանսիան, սակայն, հազար քայլ ավելի չձգեց, քան թե կարող էր ձգել, առանց հեղափոխության: Այն ամենը, ինչ որ նա բերում է, չատ քիչ է լցնելու համար այն ամբողջ դատարկությունը, որ նա բաց է անում: Վիրահատությունը այնքան արյունահոսություն է առաջ բերում, որ բուժած վերքը դառնում է ավելի ծանր վերքերի մայր:

Ամենայն հեղափոխության դլխին կախված է մի ճակատագրական դատապարտություն՝ այլասերվել հակահեղափոխությամբ: Սա ինքնին միայն բավական է՝ վերջնականորեն համոզելու, թե հեղափոխությունը, իսկապես փոփոխությո՞ւն է, թե ոչ: Կամ թե չէ. հեղափոխությունը ձևերի և շրջանակների փոփոխությունը պիտի լինի՞, թե ներքին բովանդակության և էության փոփոխությունը: Պատճառի և արդյունքի մի անզուգական չփոթումով ձևի և շրջանակի արատները ներքին բովանդակությանն են վերագրվում և կարծում են էությունը փոխել՝ շրջանակը փոխելով: Որպի՞սի մարդկային կոմեդիա է, երբ բարձրագույն հոգեկան ստեղծագործությունները չեն կարողանում փոխել մարդու հոգին, և մի քվեարկություն պիտի կարողանա անել այդ: Հեղափոխությամբ փոխելու ձգտումը դառնում է մի տեսակ հետադիմություն, բարբարոսություն և եթե կուզեք, հակահեղափոխություն: Այսինքն, երբ որ գիտության, փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, գրականության և գեղարվեստին մնջվում է մարդը փոխելու հատկությունները տալ, այլևս ո՛ր տրամաբանությամբ է, որ բնազդական չարժումներին և խեղթություններին, որպիսին է հեղափոխությունը, վերագրվում է մարդը փոխելու հատկությունները: Իսկ եթե մարդը չի փոխվել, ի՞նչ արժեք ունի նրա կառավարիչների և օրենքների փոփոխությունը: Ու քանի որ ո՛չ պատմությունը, ո՛չ էլ տրամաբանությունը չեն կարող ապացուցանել, թե կառավարիչներն ու օրենքները փոխելով՝ փոխվում է նաև մարդը, ուստի եղրակացությունը պարզ հետևում է, որ պատճառի և արդյունքի չփոթություն կա այստեղ և միշտ էլ լինելու է, ինչքան որ մարդկային ողբերգությունը փորձվում է լուծել փողոցում:

Եթե հեղափոխությունը ոչ մի փոփոխություն էլ չէ, պարզ հետևում է ուրեմն, թե ի՞նչ կարող է լինել նրա վնասը, կամ օգուտը: Արտափարճական մի ճշմարտություն է, որ ամենայն վրիպում մի՛այն վնաս կարող է լինել, անգամ, եթե փորձի համար է կատարվում այդ. դեռ մեկ կողմ թողնենք, որ հասարակական կազմը ինքնին նշանա-

կում է անհաշտ մի դրութիւն փորձի հետ: Երբ փոխելու համար հեղափոխութիւն է կատարվում, միշտ էլ ստացվում է միևնոյն արդիւնքը, այսինքն անփոփոխելին կրկնվում է, առաջ է գալիս մի վրիպում: Եվ, որովհետև վրիպումը ընկերային կազմի վրա է կատարվում, ուստի վրիպումը դառնում է կատարյալ աղետ: Ինչ հատկութիւններ էլ, որ ուզում եք տվեք առվին, ափերին, հատակին և պատերին, որոնց միջից հոսելու է ջուրը. եթե ապբյուրի, հիմքի, ջրի հատկութիւնը չի փոխվել, մի՞թե կարելի՞ է ափերի, հատակի և պատերի փոփոխութիւամբ փոխել ջրի հատկութիւնը: Եթե մարդը չի փոխվել, ի՞նչպես կարելի է փոխել նրա երջանկանալու կամքը և պայմանները. չէ՞ որ առաջին պայմանը ինքն մարդն է: Հոդեբանութեան այս կատարյալ բացակայութիւնը քաղաքական չարժումների ծրագիրներից և կանոնադրութիւններից, ինքնին մի դատապարտութիւն է նրանց հաջողութեան համար՝ առաջուց կարդացված, իրենց սեփական ձեռքով: Իսկ քաղաքական այն վիճակը, որի մէջ անկաշկանդ կարելի է աշխատել մարդու փոփոխութեան վրա, երբեք հեղափոխութեան կարիք չունի: «Լուսավորված միապետութիւնն» էլ բավական է դրան: Սակայն հեղափոխութեան առաքյալներից ո՞րն է, որ կարիք չունի այն բանին, ինչ որ ինքն ուզում է տալ ուրիշներին, այսինքն ո՞րն է, որ կարող է համոզվել, թե ինքը փոխված չէ, փոփոխութեան կարիք ունի, հետևաբար մի պետական կամ հասարակական-տնտեսական ձև փոխելուց առաջ, պետք է ինքն իրան փոխե: Այստեղ է հեղափոխութեան ամբողջ ողբերգութիւնը, որ նա տարիքի գործ է, որոշ տեսակի ժառանգականութիւն և դաստիարակութիւն ստացած մարդկանց գործ է, խառնվածքի գործ է: Մի խոսքով մի անհեթեթութիւն է, որ ամեն տարիքի մէջն էլ մարդ չի կարող կատարել, ամեն նկարագիր ունեցողն էլ չի կարող անել, ամեն եղանակին չի կարելի անել, կրթված և դաստիարակված մարդը չի կարող անել, եթե ցեղական-ժառանգական կնքով թափառաշրջիկ, անհաստատ, անհայրենիք և անտունչ չէ, չի կարող անել:

Անշուշտ, առաջադիմութիւնը մի փոփոխութիւն է, որոշ բաների ոչնչացումն է, և նոր բաների ստեղծագործութիւնն է: Բայց ամեն առաջադիմութիւն այն ժամանակ է միայն առաջադիմութիւն, երբ նա մի չարունակութիւն է: Շարունակութիւնը մարդու գործնքի մէջ այն հիմնական անկյունաքարն է, առանց որի մարդը չի կարող իր գործերին մարդկային անուն տալ: Մարդկային չեն մարդու ամենայն գործերը, որ չարունակութիւն չեն, բացառիկ են, անջատում են, բնկոր են: Սովորական բառով արամաբանութիւն է

կոչվում մարդու մեջ իշխող այս մարդկությունը կամ չարունակությունը. այն հիմնական գիծը, որ ինչքան էլ տարբեր լինի յուրաքանչյուր անհատի և յուրաքանչյուր ժողովրդի մեջ, այնուամենայնիվ ցույց է տալիս մի ընդհանուր և հիմնական հատկություն, որ անորոշ կերպով մարդկություն է կոչվում: Ոչ միայն մարդը, այլև կյանքը անկարելի է առանց չարունակության: Նյութի մեջ եղած չարունակության որոշ տեսակը, եթե կյանք է կոչվում, անհրաժեշտ է, որ չարունակության մի ուրիշ տեսակն էլ լինի այդ նյութի մեջ, որ նա մարդ կոչվի: Բայց սա մեզ հեռու կտանի: Ակներև է արդեն, որ առաջադիմությունը նշանակում է պարզապես չարունակություն: Շատերը կայունություն են ըմբռնել, շատերն էլ խորտակում և ոչնչացում են ըմբռնել չարունակությունը: Սակայն, չարունակությունը ո՛չ այդ է, ո՛չ էլ այն: Կայունություն է դառնում ամենայն չարունակություն, ուր անցյալի պաշտամունքը, ավանդապահությունը և հեղինակապաշտությունը անմիտ և ձանձրալի կերպով կրկնում են կյանքը: Սակայն, առաջադիմություն է դառնում ամենայն չարունակությունը, ուր անծանոթ ապագայի մեջ ոտք է դրվում հին և ծանոթ անցյալի վրա կանգնած, ուր փոխվում են բաներ, որովհետև անփոփոխելի շատ բաներ են պահվում հաստատ, ուր անցյալը օրինակ է և իրատ, ոչ թե պատվեր կամ հրաման, ուր հեղինակությունը խորհրդակից է, և ոչ թե բռնակալ: Ի՞նչ է դառնում հեղափոխությունը այս մտատեսարանի մեջ. մի կատարյալ հեառադիմություն, ուր խորտակվում է ամենայն չարունակություն, ուր կյանքը զրկվում է իր անցյալից և դառնում հանգստարաստիճների մի անվերջ շարք, ուր վաղվա աննմանությունը դառնում է այսօրվա և մյուս օրվա դերեզմանը, ուր իրականությունը միայն հնարավորության չափ կյանք ունի, ուր միայն այդ կարճատև հնարավորությունն է ստեղծագործություն կոչվում, և ուր մշտական ոչնչացումն է նորություն դառնում: Զրկելով կյանքը չարունակությունից՝ հեղափոխությունը, եթե դեռ որևէ մարդկային բան պահում է իր մեջ, սակայն, դա այլևս առաջադիմություն չի կարող կոչվել: Ոչ միայն իր տևողության միջոցին, այլև ժամանակի մի ավելի լայն տարածության վրա հեղափոխությունը միայն հեառադիմություն է ցույց տալիս, մի անգուսպ չարժում և՛ նյութական, և՛ հասարակական, և՛ հոգեկան հաստատությունները դեպի ետ տանելու, բնության դեմ դարերով անողոք կռիվ մղելով՝ ձեռք բերածները ոչնչացնելու և նորից սկսելու, հեղափոխականները կարծում են նոր բաներ ձեռք բերելու, փաստո

և պատմությունը ասում են՝ հին բանները, ոչնչացածները՝ ամբողջապես նորից ձեռք բերելու, նորից կրկնելու:

Հանկարծակի և կոպիտ փոփոխությունները (variation brusque) *կարող են երկրագնդի կազմության մեջ մեծ դեր խաղացած լինել: Թեև դա դեռ չի ապացուցված, և որ դժվարն է, ինչ որ այդտեղ «հանկարծակի և կոպիտ» է, երբեք այլևս նման չէ այն բանին, որ «հանկարծակի և կոպիտ» կարող է կոչվել գործարանավոր աշխարհում: Մի երկրաշարժ, որ կարող է կղզիներ առեղծել և կղզիներ կործանել, ծովերի դիրքն ու չրջանակը փոխել, ինչպես նաև ցամաքները, դեռևս «հանկարծակի և կոպիտ» մի փոփոխություն չէ: Թեև դա կարելի է նույնիսկ դրական մտքով ըմբռնել և նույնիսկ կենսաբանական երևույթների մեջ որոշ տեղ տալ հանկարծակի և կոպիտ փոփոխություններին: Բայց այս տեսությունը* (Mutations théorie), *եթե ամենափոքրիկ դերն իսկ խաղում է էվոլյուցիայի մեջ, այդ էլ այնչափով, որ ենթարկվում է այս անհերքելի դիտողության, թե կատաստրոֆները այն ժամանակ միայն փոփոխություն և չարունակություն կլինեն միանգամայն, այսինքն կոպիտ փոփոխությունները կյանքի հնարավորությունը պահպանում են այն դեպքում միայն, երբ կատարվում են կյանքի ամենատարրին ատոմների վրա, բույսերի մեջ, բուսական-կենդանականի իսառն ատոմների վրա և չատ-չատ որոշ տեսակի կենդանիների մեջ, որոնք հարմարյալ դեպքերում միայն կարող են ապրելու հնարավորությունը պահպանել և միաժամանակ կոպիտ ու հանկարծակի փոփոխության ենթարկվել: Այսպես լինելով հանդերձ՝ չատ հին և մոռացված պատմություններ պիտի վերականգնել և անալոգիայով հնարավոր համարել առաջադիմությունը նաև մարդկային ընկերության մեջ՝ հանկարծակի և կոպիտ փոփոխությունների ազդեցության տակ: Եթե հասարակությունը մի գործարանավորություն է, այն ժամանակ դա այնպիսի կենդանի է, որ դժվար է ապացուցանել, թե նրա մեջ որևէ էական փոփոխության տեղ կա նույնիսկ աստիճանական և դանդաղ ընթացքով, դեռ չենք ասում կոպիտ և հանկարծակի փոփոխությամբ: Բայց հասարակությունը մի գործարանավորություն չէ: Դա մի ինքնածին և ինքնաբուխ դոյություն է՝ իր ուրույն հոգեբանությամբ և առանձնահատուկ արամաբանությամբ, որ չի բացատրվում ոչ մի անալոգիայով, որ չի ենթարկվում ո՛չ անգործարանավոր, ո՛չ գործարանավոր մարմինների օրենքներին, որ չատ երկրորդական, նմանողական կապեր միայն ունի անհատական-մարդկային հոգեբանության հետ, որի մեջ տեղ գրավելու, հաստատուն դիրք առեղծելու հա-

մար միայն անասելի ուժ և հռանդ պետք է մատնել, որի մեջ փոփոխություններ առաջ բերելը անկարելի է ոչ թե մի կուսակցության, մի գաղափարի, կամ մարդկային որևէ ուժի միջոցով, այլ ինքը հասարակությունն էլ բացարձակապես անկարող է ինքն իրեն փոխել:

Այդ պատճառով է, որ հակակրոնական չարժումները որոշ տեսակի կրոնական չարժումներ են, որ առաջադիմությունը մի տեսակ հետադիմություն է, մահը նրա համար մի տեսակ կյանք է, և փոփոխությունը կայունություն է նրա համար: Այս տարակերպությունները անհասկանալի են մնում նրանց համար, որոնք դոյության այդ ամենաբարդ երևույթին մոտենում են իրենց թեթևամտության ժամերին, իրենց ղգացումներով և կրքերով միայն: Նրանք չպիտի կարողանան հասկանալ, թե ինչպե՞ս կարող էին իրենք հաջողություն ունենալ, եթե իրենց ասածը ճշմարիտ չէ, որովհետև նրանք չպիտի կարողանան հասկանալ ճշմարտության հասարակագիտական սահմանավորումը: Որովհետև նրանք չպիտի կարողանան տեսնել եղբայրության քարոզիչների բարբարոսությունը և հավասարության առաքյալների անհավասարությունը: Նրանց կենսագրությունը միայն մեզ կասի, թե ի՞նչու համար ազատությունը բռնություն դարձրին նրանք, և սկսեցին մտածել ուրիշի մասին ամենից առաջ, երբ պետք էր մտածեին իրենց մասին ավելի շուտ: Նրանք չեն կարող հասկանալ, որ տեսություններով չի ղեկավարվում կյանքը, որ եթե հաջողություն չեն գտնում, պատճառը այս կամ այն թեորիան չէ, այլ պարզապես ապիկարություն, անկարողությունը և տգիտությունը: Նրանք չեն կարող հասկանալ, որ կյանք խոստանալով մահ են տալիս մեզ, և մեզ երջանկացնելու ձգտելով մեզ միայն դժբախտացնում են: Որ հանրապետությունն էլ միապետությունն է, և բուրժուազիան էլ դեմոկրատիա է: Որ հեղափոխությունը կարելի է դարձնել հակահեղափոխություն և սոցիալիզմը՝ դաղանություն: Որ, Ինչը չէ էականը, այլ միայն Ինչպեսը:

Իհարկե, կա մի ուրիշ տեսակի հակահեղափոխություն էլ, որ բխում է այսպես կոչված անձնական-ժառանգական չահերից ու հավակնություններից, որ հենվում է մի ավելի փոքր դասակարգի վրա, որի անմտությունը մի խոսքով, ծնունդ է տալիս հեղափոխության: Բանականության և առողջ դատողության վրա պիտի կասկածել, մի րոպե իսկ մտածելու համար, թե այս տողեր գրողը կարող է մեղադրվել այդպիսի հակահեղափոխությունը պաշտպանելու համար: Այդ հակահեղափոխությունը իսկի քննադատության էլ չի արժանանում այստեղ, այնքան, որ մեծ է ձգտումը մնալու գաղափարների աշ-

իարհում: Ընդհակառակն, չակերտավոր «հակահեղափոխությունը» ձգտում է ապացուցանել, որ երկրի տրամաբանության հասկացողությունը և մարդկային ընկերությունների հոգեբանության ճանաչողությունը պահանջում են նույնացնել հեղափոխությունը և հակահեղափոխությունը՝ որպես երկու անմտություններ, երկու անկայունություններ և հետադիմություններ ու դեն շպրտել երկուքին էլ, որպես անում է առողջ մարմինը հիվանդության և ախտավորության միկրոբներին, համառ և երկարատև աշխատանքով, մարդկային ստեղծագործ ոգու բարձրագույն ուժերով՝ լուծելու համար ընկերային հարցը, դասակարգային ներհակությունները և առհասարակ մարդկային ողբերգությունը:

Վ[արազդատ] S[երոյան]

Թիֆլիս, 917, 3 նոյ.

VIII

ՍՈՑԻԱԼ–ՆԱՑԻՈՆԱԼ

Ոչինչ այնպես բարձր և այնպես իդեալ չի եղել երբևիցե, որպես մի և ընդհանուր բարոյականությունը ամեն մարդու համար, ժամանակից և տարածությունից անկախ: Պետք է ճշմարտախոսությունը միայն գիտնականներին չվերապահվի, քաջությունը՝ միայն զինվորականներին, գութը՝ միայն հարուստներին, անձնվիրությունը՝ միայն սուրբգործներին, ևն, ևն: Պետք է սուրբությունը չլիներ երբեք, ոչ էլ քաղաքականը փոխվելուց հետո անառնականը հասատատվեր: Պետք է գոյություն չունենար «հռոմեական իրավունքը», ինչպես նաև այժմ պետք է գոյություն չունենային անթիվ «իրավունքներ» յուրաքանչյուր ազգի արդարության դրքերում: Պետք է սկզբից ևեթ գոյություն ունենար մի և ընդհանուր մարդկային բարոյականությունը: Բայց այդ իդեալը, որովհետև չի տրված պատմության սկզբում, թվում է, թե տրված է պատմության վերջում: Եվ իր հպարտ քաղաքակրթությամբ հպարտ մարդկությունը այսօր առանառես է այլասեռ, հակամերժ և իրարամերժ բարոյականություններին, որոնք բոլորն էլ, իրար հակասելով հանդերձ, երդվում են մի և ընդհանուր բարոյականության անունով:

Բացարձակ իրականություն է, որ գոյություն չունի մի և ընդհանուր բարոյականությունը, այլ ընդհակառակն կան անհատների, ըն-

տանիքների, ժողովուրդների, ազգերի, երկրների, պետությունների և ժամանակների բարոյականություններ, որոնք իրար ժխտում ու հակասում են: Սա իրականություն է, սա, ուրեմն, նաև ավելի հիմնավոր է, քան մեր իդեալը, որի իրականացումը միայն անհիմն կարող է դարձնել ներկա «հակասական» իրականությունը:

Մի անգամ միայն հնարավոր եղավ հրատարակել «Մարդկային իրավունքների հայտարարությունը»: Բայց քա՞նի երկրում կատարվել է այդ, և նույնիսկ Ֆրանսիայում չէ՞, որ հիմնված է ամենազորեղ հասարակական կազմակերպություններից մեկը՝ պաշտպանելու համար այդ հայտարարությունը, որ 130 տարուց հետո դեռևս պաշտպանի պետք ունի՝ ոտնակոխ չլինելու համար:

Մի և ընդհանուր բարոյականության հաստատումը, առաջ բերելով այսքան դժվարություններ, երբեք չի հուսահատեցնում, սակայն, մարդու անսահման կամքը՝ նրա իրականացման ձգտելու: Այդ դժվարությունները, սակայն, մի ուրիշ բան էլ են սովորեցնում մեզ: Ոչ միայն իդեալի հեռավորությունն անհասանելի է, այլև բազմաթիվ են նրա ճանապարհները:

Ամենից առաջ, քաղաքակիրթ ազգերից յուրաքանչյուրը իր ինքնատիպ քաղաքակրթությամբն արդեն ապացուցանում է, թե ինչքան որ նույն ձգտումներովն է տոգորված մարդն ընդհանրապես, բայց տարբեր ճամփաներով է դիմում իր նպատակին: Նմանության որոշ կշռաչափից հետո, նրանք ինքնատատապարտության չի մատնված մի ժողովուրդ, նա պետք է ընդգծե իր համար նոր և ինքնուրույն մի ճանապարհ, որ համապատասխան լինի իր պատմական զարգացման, իր ցեղային հոգեբանության, իր տնտեսական, կուլտուրական ընդհանուր պայմաններին: Միայն կապկելու վտանգը չէ, այլև շատ դրական և ներակա հոգեկան ուժերն են, որ պիտի բաց անել տան յուրաքանչյուր երկրի քաղաքակրթական պայմաններին համապատասխան առաջադիմության ճանապարհներ: Առանց դրանց շատ դառն կարող են լինել պատմության դասերը:

Անշուշտ, պատմական այդ անհրաժեշտությունն է, որ մի ազգի մեջ, ուր ազգային-տերիտորիալ հարցը վճռված չէ, սոցիալիզմը, այսինքն ինտերնացիոնալիզմը դարձնում է ակամա նեղ չովինիզմ՝ ավելի նեղմիտ, քան ոչ-սոցիալիստների հայրենասիրությունը: Այս փաստի կապարն հարվածները շատերն զգացած կլինեն Կովկասում: Այդ անհրաժեշտությունն է դուցե պատճառը նաև, որ սոցիալիստ պիտի լինել և տնտեսականից ավելի արյունի գնան ունենալ ուսերին: Այդ է պատճառը դուցե նաև, որ մի ամբողջ ժողովուրդ իր իշ-

խաններով և դրամատերերով հանդերձ կարող է սոցիալիստ դառնալ, մի ուրիշ ժողովուրդ էլ en bloc *[համբովին] սոցիալիստական ուրոշումները կայացնել՝ առանց մի հատիկ սոցիալիստական կազմակերպություն ունենալու: Ազգային հարաբերությունների այս տնտեսական գունավորման մենք կվերադառնանք: Այստեղ կարևորն է որոնել բարոյականության արհեստական կառուցվածքները:*

Սոցիալիզմի դասակարգային և տնտեսական հիմքը մի որոշ երկրի, որոշ մասնաժողովրդության հետևանք էր: Ոչ ոք կարող է ժխտել, որ դասակարգային բարոյականությունը խարանելով և մի ուրիշ դասակարգի համար բարոյականություն ստեղծելով, սոցիալիզմը նպատակ չի ունեցել մի և ընդհանուր մարդկային բարոյականություն ստեղծելու: Բայց մինչդեռ ավելի տրամաբանական և բանական կլիներ, որ մի և ընդհանուր բարոյականությունը լիներ իսկապես ընդհանուր-մարդկային, մեզ առաջադրվում է մի դասակարգի բարոյականությունը, որպես այդպիսին: Հենց որ մարդու սահմանավորումը իր հոգեբանական և բարոյագիտական բովանդակությունից դրվում է, դառնում է տնտեսական, արհեստակցական և դասակարգային, անմիջապես նեթ նրա բերած ամենայն սկզբունք դադարում է ընդհանուր մարդկային արժեք ունենալուց և, եթե նա խոստանում է բերել մեզ մի և ընդհանուր մի բարոյականություն, նա մեզ բերում է իսկապես, իր սահմանավորման համապատասխան, մի այլամերժ, հակասող և ժխտող մի բարոյականություն, որ այս դեպքում կարող է կոչվել, օրինակի համար, տնտեսական, դասակարգային կամ արհեստակցական բարոյականություն: Հենց որ մարդու սահմանավորումը դուրս է գալիս այս ընդհանուր և անորոշ սահմաններից, որպիսին է «մարդկայինը», իսկույն նեթ մարդը փոքրանում է, կրճատվում, համառոտվում, զրկվում իր միությունից և ամբողջականությունից: Այնպես որ մարդկությանը տալ դասակարգային բարոյականություն, կամ մի դասակարգի բարոյականությունը՝ նշանակում է հակասել մարդու կոչմանը և ընդունակություններին: Բարեբախտաբար կուսակցություններից դուրս կա սոցիալիզմի մի այլ հասկացողություն էլ, որ, եթե նույնիսկ պատմության առաջին շարժիչ ուժը տնտեսականը համարի, չի դադարում, սակայն, դրանով իսկ այս տնտեսական ուժը մի բարոյականություն համարելուց, և մարդու մասնավորացումը, դասակարգայնացումը և կրճատումը ժխտելուց:

Սոցիալիզմի այլասերման գլխավոր պատճառներից մեկն էլ այն է, որ նա ձեռք է բերվելու կռվով և պայքարով: Իսկ դրա մեջ միշտ

տեղ են բռնում մեծ չափով զգացմունքային և հուզողական այնպիսի տարրեր, որպիսին են առևտուրը, քենը, ոխը, վրեժը և այլն: Իսկ դրանք կարող են միայն մթագնել և խավարել ամենապայծառ սկզբունքներն իսկ: Ընդհակառակն, եթե նա ձեռք բերվեր, օրինակի համար, ազատ համաձայնությամբ, պայմանագրությամբ կամ նման միջոցներով, այն ժամանակ նրա հիմքերը պիտի կազմեին ոչ թե դասակարգը, անտեսությունը, հավասարությունը և այլ նման բաներ, այլ մի բոլորովին այլ հիմունք՝ մարդկությունը, բարոյականությունը և արդարությունն ու եղբայրությունը:

Ինչ չափով, որ Սոցիալիզմը միջազգայնություն է նշանակում, այդ չափով էլ նա աշխատում է ստեղծել մի և ընդհանուր մարդկային բարոյականություն: Այդ չափով էլ Սոցիալիզմը նմանվում է բոլոր կրոններին, որոնք թե՛ այստեղ, և՛ թե «այնտեղ» աշխատում են ջնջած լինել մարդկությունը պառակտող բաժանումները, տարբերությունները, ներհակությունները, անհասկացողությունները և այլազանությունները: Սակայն, ինչ որ չի հաջողվել բոլոր կրոններին, Սոցիալիզմն ուզում է, որ իրեն հաջողված լինի այդ: Այսինքն նա փորձում է, ինչ որ արդեն պետք եղածից ավելին փորձվել է դարերի ընթացքում և չատ ավելի հիմնավոր միջոցներով:

Ավելորդ է ասել, թե ինչո՞ւ բոլոր կրոններին չի հաջողվել այդ: Բայց չատ պարզ պետք է լիներ, թե այդ բանը չի հաջողվելու նաև Սոցիալիզմին, ոչ թե միայն որովհետև այդ չի հաջողվել անցնող դարերի ընթացքում, այլ այն հասարակ պատճառով, որ կրոնների մեծագործ գենքերից և հիմունքներից զրկված Սոցիալիզմը չպետք է փորձն իսկ կատարեր իր վրա վերցնելու այդ չափազանց ծանր բեռը: Միջազգայնությունը՝ որպես ազգայնության հակադրությունը, չի կարող իրականություն լինել երբևիցե, քանի որ նա անտեսում է երկրաբանությունը, աշխարհագրությունը, պատմությունը և նույնիսկ մաթեմատիկան:

Սոցիալիստական տգիտությունը սոցիալական երևույթ է համարում ինչ որ միայն սոցիալիստական է: Այսպես, ուրեմն, սովը սոցիալական մի երևույթ չէ այլևս, ոչ էլ պատերազմը և համագործակցությունը, ժանտախտը և թոքախտը, կրոնը և հայրենասիրությունը: Ահա այս մտաբանտի մեջ ինչ որ սոցիալ է համարվում, հայտարարվում է հակառակն այն բանին, ինչ որ նացիոնալ է համարվում: Այդ դեղեցիկ տգիտությունը բնական է, որ ազգայնական բոլոր երևույթները հետադիմություն հռչակի, առաջադիմության և մարդկայնության հակառակ, կամ բուրժուական և կապիտալիստական:

Համաշխարհային պատերազմի ընթացքում երևան եկած անվերածելի ազգային տարբերը բացատրվեցին դարձյալ միևնույն ապիտութեամբ՝ որպես գերմանական աշխատավորության պայքարը ընդդեմ անգլիական իմպերիալիզմի, կամ անգլիական բանվորության դատակարգային շահերի պաշտպանությունը ընդդեմ գերմանական կապիտալիզմի: Բայց դատակարգերը, որոնք Սոցիալիզմի մեջ պետք է ջնջվեն, ի՞նչպես կարող են պատերազմի մեջ հաշտվել: Երբ բանվորների բանակները կռվում են բանվորների բանակների դեմ, պետք է առնվազն սոցիալիստ լինել՝ պնդելու համար, թե անգլիացի բանվորը կռվում է գերմանացի կապիտալիստի դեմ, կամ գերմանացի բանվորը՝ անգլիացի կապիտալիստի դեմ: Որևէ դեպքում, թեկուզ պատերազմի ժամանակ, հաշտվող դատակարգերը միայն մի քանի ապացույց են, այսինքն, թե ինչքան ժամանակավոր պատահական և անցողակի է դատակարգերի գոյությունը, նույնքան և տևական, դրնել և անհրաժեշտ է մարդկության գոյությունը իր այլազանությունների և տարբերությունների մեջ, որոնք այսօր անտեսական լինելու համար հավիտենապես չեն դատապարտված անտեսական էլ մնալու:

Սոցիալ–Նացիոնալի հակադրությունը պարզապես ապիտութեան հետևանք է: Եթե մեր ժամանակը ողողող դաղափարամոլություններ մեջ շատ բաներ ներելի կարող են համարվել՝ իբրև փորձեր, որոնք պետք է անձնական լինեն, պատմական լինելուց հետո, բայց երբեք ներելի չի կարող լինել սոցիալ–նացիոնալի հակադրությունը: Մարդկային կյանքի մեջ երևան եկող ազգայնական երևույթները որոշ տեսակի ընկերային երևույթներ են, ինչպես որ բոլոր ընկերային երևույթները որոշ տեսակի ազգայնական երևույթներ են: Անգամ ժանտախտը, թոքախտը, խոլերան և այլն՝ իբրև ընկերային երևույթներ, չեն կարող երբեք միևնույն արտահայտություններ, ծագումը, պարպտյումը, տարածումը և հետևանքներ ունենալ բոլոր երկրների և ժողովուրդների մեջ, ամեն ժամանակի և տարածության համար էլ: Հիվանդությունները ազգայնական երևույթներ են ամենից առաջ, ընկերային երևույթ լինելուց առաջ, ոչ թե որովհետև ամեն մարդ դիտե «չինական ժանտախտի», «ասիական խոլերայի», «սպանիական ախտի», «փրանկախտի» հայանի և այլնի մասին, այլ որովհետև հատարակական ոչ մի երևույթ չի կարող կատարված լինել որոշ շրջապատից և շրջանակից դուրս: Սոցիալ–նացիոնալ հակադրությունը հետևանք է մի կուրության՝ շրջապատը և շրջանակը չտեսնելու մտավոր կուրության: Բացի այդ, այն փոքրիկ դերը, որ վերապահված է շրջապատին և շրջանակին, որպեսզի տեսանելի և շոշա-

*փելի դարձնեն ընկերային կյանքի որոշ երևույթները, ստանում է այդ մտավոր կույրերի մոտ նաև հակառակ մի ծայրահեղություն: Այդ պետք է գոյություն չունենա — ասողները միայն դրան են վերագրում հասարակական կյանքի մեջ եղած չարիքների պատճառը: Ազատություն, եղբայրություն և հավասարություն չատ հեչտությամբ կարող էին իրականանալ, եթե մարդկությունը պատակաված չլիներ ազգայնական նեղմտություններով: Ուրեմն, ոչ միայն պատերազմի, այլ դուցե նաև ժանտախտի պատճառը ազգայնական կրքերից է առնում իր սնունդը: Եթե ճշմարիտ է սոցիալիստական դոգման, թե պատմությունը դասակարգային կռվի պատմություն է, ապա, ուրեմն, անկարելի կլինի, առանց ակներև հակասության մեջ ընկնելու, պնդել, թե ազգայնական կրքերը երբևիցե կարող են պատերազմի պատճառ դառնալ: Պատմությունը պետք է միայն քաղաքացիական պատերազմների պատմությունը լիներ, որպեսզի մի բոպե կարելի լիներ ասել, թե դասակարգային կռվի պատմություն է: Կամ թե նա պետք է իր մեջ չունենար նաև քաղաքացիական կռիվների պատմությունները, ժողովուրդների և քաղաքակրթությունների ծագման զարգացման և մահվան պատմությունները, բնական ընտրության (sélection naturelle), ժողովրդագրական պատահարությունների, պատերազմի փիլիսոփայության և նման հարցերի պրոբլեմները, որպեսզի հակասության մյուս ծայրի վրա կանդնելով կարելի լիներ պատմությունը ազգայնական կրքերի և կռիվների պատմությունը համարել: Բայց ինչպես ամեն տեղ, նույնպես և այստեղ, ամբողի համար լուսա և ուղղություն չի կարելի տալ այսպիսի նուրբ «մանրամասնությունների» մեջ մտնելով: Նա կարիք ունի անխորտակելի ճշմարտությունների, պարզ և պայծառ սուտերի, որոնք մի բրոշյուրի կամ մի դասախոսության մեջ կարող լինեն բոլորի սեփականությունը դառնալ և «պատմության մնքենան չարժել»:

Ազգային հարցը սոցիալիստական գրականության հիմնական հարցերից է: Եվ, որովհետև ազգային հարցը համարյա թե գոյություն չունի Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում, որտեղներից առնում են իրենց սոցիալիստական սնունդը որակապես և քանակապես փոքր ժողովուրդները, ուստի Բելգիան և Ավստրիան են տալիս մեզ ազգային հարցի սոցիալիստականորեն «լուծումը»: Բայց որովհետև գրքերից սովորելու եռանդը ոչնչացնում է իրականությունն տեսնելու ցանկությունն անգամ, այդ պատճառով էլ անկարելի է լինում, հատկապես մեր հայկական իրականության մեջ, Սոցիալիզմը փրկել առանց ազգայնականությունը կործանելու: Չէ՞ որ

Ավստրիան և Բելգիան, Գերմանիայի և Ֆրանսիայի տմուն արտադրությունները են, և ազգային հարցը այնտեղ նույնպես չի փրկվում՝ առանց որոշ չափով Սոցիալիզմը կործանելու: Եվ ահա այսպես, արտադրությունների չգիտեմ քանիերորդ սերնդից է, որ «լույս» է առնում նաև մեր խղճուկ իրականությունը, ուր արդեն անվիճելի ճշմարտությունների կարգն է անցած, թե ինչ որ նացիոնալ է, դա կատարելապես հակադրված է սոցիալիստականին, եթե չասենք սոցիալականին:

Զրկված ուղեղից, տեսնելու և ըմբռնելու իրենց բնական հատկություններից՝ ամբողջ կուսակցություններ կան, որոնք չեն մտածում, որովհետև ուրիշները մտածել են արդեն, չեն տեսնում, որովհետև ուրիշները տեսել են արդեն: Հեղափոխության, կուսակցությունների և Սոցիալիզմի դոգմաները ուրիշ շատ հարցերի հետ չեն թույլ տալիս նաև, որ սոցիալ–նացիոնալ հարցի մեջ մարդը մտածի մարդկայնորեն, ինքնուրույն ձևով, յուր շրջապատի, յուր երկրի, յուր պատմության և ժողովրդի հոգեբանության տվյալների համաձայն: Այդ մտավոր կույրերը չեն ուզում ոչ մի գնով հասկանալ, որ սոցիալական հարցը մի պերճանք է Տաճկաստանի լծի տակ տառապող ժողովուրդների համար, քրդերի համար, զուլուսների համար. որ անգամ Ավստրիայում չի կարող երբեք սոցիալական հարցը լուծվել, քանի դեռ չի լուծվել ազգային հարցը. մի բան, որ այդ երկրի ժողովուրդները շատ մոտիկ անցյալում՝ երեկ, ապացուցեցին արդեն, իրենց պարտության հակավրեժը հանեցին՝ ամենից առաջ լուծելով իրենց ազգային հարցը, և հետո, մի անգամ արդեն հեղափոխության մեջ, նրանք չարունակեցին, այսպես կոչված, իրենց հեղափոխության խորացումը:

Ռուսական հեղափոխության ընձեռած սոցիոլոգիական տվյալները անթիվ են և անհերքելիորեն պերճախոս: Սոցիալիստների չովինիզմը և հողատերերի ու կապիտալիստների Սոցիալիզմը տեսնելուց հետո, մենք չզրկվեցինք նաև սոցիալիստական ցարիզմ և իմպերիալիզմ տեսնելու բախտից: Համաշխարհային հոգնածության և պատերազմի պարտության հրամայականները ամեն տեղ առաջ բերին «հեղափոխություններ», բայց դեռ չեղավ և հույս էլ չկա, որ հնարավոր լինի համաշխարհային հեղափոխություն: Ամեն տեղ, ազգերն ու ժողովուրդները իրենց դիտցած ձևով լուծեցին իրենց պարտության հակավրեժը, թեև համաշխարհային հեղափոխության առաքյալները երբեք չթերացան թուրքական հեղափոխության մասին էլ աշխարհին ավետելու: Ամեն տեղ ազգային երևույթները մի անդուդական

ներդաշնակություն մտցրին տնտեսական բազմապան երևույթների մեջ և բեգական Ադրբեյջանը և բոլշևիկյան Ռուսաստանը իրրև առանձնահատուկ ազգայնական երևույթների ծայրահեղությունների, ոչ մի տարբերություն չունեն իրարից: Դասակարգերի կատաղի պայքարը մի տեղ և դասակարգերի չեչտված գոյության ոչնչացումը և անտեսումը մյուս տեղ, ցույց են տալիս թե ինչքան բնական է այն իրականությունը, որ հեղափոխություններն ուզում են փոխել, և ինչքան արհեստական է այն իդեալը, որ հակադրվում է բնության — սոցիալը նացիոնալին: Անկասկած մի ուրիշ տեսակի տգիտության հետևանք է ազգայնական երևույթների մեջ տնտեսական հիմունքներ չտեսնելը, նման այն տգիտության, որ սոցիալ-տնտեսական երևույթների մեջ չի ուզում իր հերթին տեսնել ազգային հիմունքները: Երկու դեպքումն էլ ճշմարտությունները չինված են ամբոխի համար. մի բան, որին բաժին է մնացել դարերից ի վեր միայն տգիտությունը:

Երևան, 919, 14 V

IX

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Բոլոր հեղափոխություններին սիրելի և մտերիմ գաղափարներ՝ ամեն տեսակ Սոցիալիզմի անվիճելի հիմունքներն և նախապայմաններն են այս երկու գաղափարները: Այստեղն էլ անհրաժեշտ է վերագնահատության մի փորձ. թեև, ինչպես միշտ, այս անգամ էլ կարելի է անկասկած լինել, որ դրանց հանդեպ արտահայտված կասկածները չէ, որ անկարելի պիտի դարձնեն հավասարության և եղբայրության իրականացումը:

Ընկերային մի կառուցվածք կարելի է երևակայել հիմնված հավասարության վրա: Ընկերային մի ուրիշ կառուցվածք էլ կարելի է երևակայել հիմնված եղբայրության վրա: Բայց երևակայել մի կառուցվածք, որ հիմնված լինի թե հավասարության և թե եղբայրության վրա — դա աներևակայելի մի հակասություն է:

Որտեղից ծնվեց եղբայրության գաղափարը: Ով, որ այս հարցը տա ինքն իրեն, նա կտեսնի, որ ոչ մի տեղ եղբայրները հավասար չեն և ոչ մի բանով: Նույնիսկ երկվորյակ ծնվածները թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես և հոգեպես հավասար չեն լինում երբեք: Բայց

հենց այստեղ է թաղված ամբողջ թյուրիմացությունը, որով ամբոխի համար հավասարության միտքը է ներկայացնում եղբայրությունը: Ուստի, ամենից առաջ հավասարությունը պիտի սահմանազատել, որպեսզի պարզ դառնա, թե ի՞նչպես այնտեղ, ուր եղբայրություն կա, այնտեղ հնարավոր չի կարող լինել այլևս հավասարությունը:

Նույնիսկ եղբայրության սահմանազատումից պիտի բխի ինքնաբերաբար հավասարության անկարելիությունը: Բայց ավելի լավ է ամենից առաջ, այսպես կոչված, սոցիալական անհավասարությունից տանջված ուղեղների առջև բանալ ելապված հավասարության պատրանքները:

Մի հավասարություն կա, որ հնարավոր է. մի հավասարություն էլ կա, որ անհնարավոր է: Մի հավասարություն կա, որ պետք է լինի, և մի հավասարություն էլ կա, որ պետք է չլինի: Այս երկու զույգ հավասարությունների մասին ոչ ոք չի խոսում, ով որ խոսում է հավասարության մասին:

Ինչ որ անհնարավոր է, նա չպետք է էլ լինի. և ինչ որ հնարավոր է, նա պետք է և լինի: Ոչ միայն իր այս սովորական օգտապաշտության պատճառով. այլև նրա համար, որ այն, ինչ որ պետք է լինի, այն միայն հնարավոր է. և այն, ինչ որ չպետք է լինի, այն միայն անհնարավոր է:

Եթե օգտապաշտական տեսակետից է, որ չպետք է լեռները ջնջվեն և ձորերը լցվեն, ու հավասարություն լինի այն հողագնդի վրա, որ բազմաթիվ դժբախտություններ ունի, բայց նաև գեղագիտական տեսակետից էլ չպետք է այդ բանը կատարվի, ճշմարտապես այդ բանը չպետք է կատարվի, սակայն այն անվիճելի պատճառով, որ դա մի անմիտ քմահաճույք կլիներ, իսկ հողագնդի ձևն ու անհավասարությունները, համենայն դեպս, մի անմիտ քմահաճույքի արդյունքը չեն:

Հավասարությունը իր վերջին վերլուծման մեջ գալիս հասնում է անտարբերության: Եթե մի տեղ տարբերություն կա, այլևս անկարելի է հասկանալ, թե ինչպես կարող է հավասարություն լինել: Եթե բոլոր թվերը միևնույն արժեքը չունեն, այդ նրա համար չէ անկասկած, որովհետև դրանով վաճառականների հաշվապահությունը կդժվարանար, կամ թե դիտությունների մեջ չատ անպատիվ մի տեղ կհատկացվեր մաթեմատիկային, կամ թե թվերի բազակցության գործողություններից կզրկվենք մենք — այլ, որովհետև պարզապես անմտություն է մի այդպիսի պահանջ և բացատրության անկարոտ այդ անհրաժեշտ անհավասարությունը: Բայց սոցիալիստական, հե-

դափոխական և դեմոկրատական իմաստությունները ոչ մի տեղ էլ չեն ճանաչում որևէ տեսակի անհավասարության անհրաժեշտությունը: Եթե մի րոպե նույնիսկ ընդունենին նրանք բնության մեջ գոյություն ունեցող անհավասարությունների անհրաժեշտությունը, ապա ուրեմն ի՞նչպես է, որ նրանք չպիտի կարողանան ընդունել նաև բնական անհավասարությունը: Բայց նրանք բնության մեջ «անբնական» բաներ են գտնում և այդ է, որ չեն ընդունում: Զարմանք է այս բնությունը, որ երբեմն էլ անբնական է դառնում: Եթե այդ ճիշտ է, ապա և հրամայական է հավասարության պահանջը:

Եթե ճիշտ է, որ մարդկությունն էլ անբնական մի բան է, ուրեմն, նրա մեջ կարող են անհավասարություններ լինել: Այսպես ահա, այս հետաքրքիր մտածողության համար բնությունը պիտի դարձնել բնական, բնության մեջ անհավասարություններ չկան, և մարդկությունը միայն իբրև անբնական մի բան, անհավասարություններ է ճանաչում: Բայց, եթե բնությունը անհավասարություններ չունի, ուրեմն, մարդկությունն է, որ անհավասարություններ պիտի ունենա իբրև անբնական մի բան: Որովհետև անբնականին հատուկ է անբնականը և բնության բնականը:

Մի քիչ հանգիստ թողնենք բնությունը և հավասարության առաքյալների մտաշրջանակում փնտրենք, ինչ որ ուրիշ տեղ չենք կարող գտնել: Հավասարություն օրենքի առջև, կամ քաղաքացիական և քաղաքական իրավունքների հավասարություն, քվեարկության հավասարություն և տնտեսական հավասարություն: Ահա հավասարության գլխավոր առաղձը: Մարդիկ ոչ լեռների հավասարությունն են պահանջում, ոչ էլ մարդու ֆիզիկական և հոգեկան հավասարությունը: Իբրև ճշմարիտ իրապաշտներ և բնապաշտներ նրանք հեռու են ամենայն չափազանցությունից: Նրանք ոչ բնության հետ սկսում են, ոչ էլ մարդկության հետ վերջանում: Սկզբի և վերջին կատարի մեջ թողնում են ամեն բան անփոփոխ և մնջտևդ կանգնում, մի քանի բաներ են սրբագրում բնության և մարդու էության վերաբերմամբ: Որովհետև ես չեմ ուզում հավատալ, թե նույնիսկ սոցիալիստները և հեղափոխականներն ու դեմոկրատները կարող են երբևիցե պահանջել, որ բոլոր մարդիկն էլ կարողանան հավասարապես մաթեմատիկոս ծնվել, երաժիշտ կամ նկարիչ, բանաստեղծ կամ փիլիսոփա:

Արդ, ընդունելով, որ մարդիկ ինչքան էլ սոցիալիստ, կկարողանան հասկանալ այդքան բան, որ բնության և հոգու արատահայտությունների հավասարությունը չպահանջեն, մնում է այժմ մեզ էլ

հասկանալ, թե ինչքան նյութ, իրականություն և ճշմարտություն կա իրենց պահանջած հավասարության ատաղձի մեջ:

Բոլոր հավասարություններից, որ նրանք պահանջում են, ամենամեծն ու հիմնականը տնտեսական հավասարությունն է, որովհետև հին և զվարճալի մի պահանջ է հավասարությունը օրենքի առջև, այնքան որ անչափահասների, գուլուսների և թուրքերի մասին եղած հասարակական կարծիքների չարժումներից չէր կարելի մարդկության համար հավասարության պահանջը հանել: Այդ այդպես է նաև քաղաքական իրավունքների հավասարության համար «ազգերի ինքնորոշման» մեր հռչակավոր դարում: Իսկ քվեարկության հավասարությունը կարող են պահանջել միայն դեմոկրատները, այսինքն իշխանության ծարավի բախտախնդիրները. ես նախանձում եմ չքվեարկողների հասարակական և տնտեսական բարձր դիրքին և ինքնախաբեության ավելի մեծ նահատակներ չեմ ճանաչում, քան քվեարկողները: Ահա հավասարության պահանջը իր էության մեջ: Այդպես չէ՞ արդյոք խնդիրը տնտեսական հավասարության համար էլ:

Շատ հավանական է, որ բոլոր մարդիկն էլ իրենց օրգանական-բնախոսական պահանջների համար կարող են բավարարվել միևնույն չափացույց տնտեսական նյութերով: Բայց խնդիրն այն է, որ մարդկության մի մասը՝ մեծ մասը, այդ չափացույցից մի՛շտ պակաս է ստանում իր բաժինը աշխարհի սեղանի վրա, իսկ մյուս մասը՝ փոքր մասը, դրանից անհամեմատ ավելի շատ: Մեկը կարիք ունի և չի ստանում այնքան, որքան պետք ունի, մյուսն էլ կարիք ունի և ստանում է այնքան, որքան պետք չունի: Մարդու օրգանական-բնախոսական պահանջներին անհրաժեշտ եղող նյութի քանակը պետք է, դոնե վերացական ձևով ընդունենք, որ հավասար լինի, այսինքն, պետք է քաղցածներ չլիննին, երբ որ շատակերությունից հիվանդացողներ կան. այդպես է պահանջում մարդու բանականությունը և բարոյականությունը: Եվ այդ չափով հավասարությունը արդարություն էլ է, բայց միայն այդ չափով: Որովհետև ուրիշ տեսակի հավասարությունը թե՛ անարդարություն է, և թե՛ անբարոյականություն: Պահանջ չունեցողին տալ և շատ տալ է, առնել չիմացողին առնել սովորեցնել է, այսինքն ծուլություն, աղիկարություն և անկարողություն քաջալերել է, մրցումը և հուսադը ոչնչացնել է, կարիքի ուժածին աղբյուրը ցամաքեցնել, ասեղծագործության խթանները բթացնել, ճանապարհ բանալ ոտների համար, որոնք քայլել չեն կարող և լույս տալ աչքերի համար, որոնք տեսնել չեն կարող:

Ոչ մի քննադատության չի կարող դիմանալ այն առարկությունը, թե մի սերունդ հավասարություն, և մարդկությունը կկարողանա հավասար ծնվել հավասար իր հոգու և օրգանիզմի բոլոր ընդունակությունների մեջ: Սոցիալիստներից չատերը պատմության սկզբին են դնում բնական կոմունիզմը, այսինքն բնական հավասարությունը գոյություն ունեցել է մի որևէ ժամանակ, և դրա հետևանքը չի եղել հավասարության պահպանումը, այլ ոչնչացումը: Հավասարությունը ոչնչացել է, որովհետև նա չի կարողացել դիմանալ կուլտուրայի և ընկերային կյանքի պահանջներին, հավասարությունից է ծնվել անհավասարությունը, և հայրը երբեք չի կարող որդի լինել: Այսինքն, եթե այդ անկարգությունը պատահի, եթե ներկա անհավասարությունից ծնվի մի որևէ տեսակի հավասարություն, այն ժամանակ դա կլինի քաղաքակրթության և առաջադիմության ոչնչացմամբ, դա կլինի անարդարություն և անբարոյականություն:

Միայն օրգանական-բնախոսական պահանջների չափով հավասարությունն պահանջելը այլևս հավասարություն չէ: Իսկ նրա բոլոր մյուս պահանջները բարբարոսության և հետադիմության պահանջներ են: Ահա այն, ինչ որ հնարավոր է, կարող է լինել և պետք է լինի իբրև հակադրություն այն մյուս հավասարության, որ անհնարավոր է և չպետք է լինի:

Բայց հավասարության անկարելիությունը երևան է գալիս ամենից ավելի եղբայրության պատճառով: Ինքնին եղբայրությունը նշանակում է արդեն անհավասարություն, այսինքն մարդկային հարաբերությունների այնպիսի մի վիճակ, ուր ընտանեկան պայմանների նույնությունը միայն բավական չէ հավասարարժեք և հավասարազոր դարձնելու մարդը իր նմանների հետ: Ոչ թե մի, այլ մի տասնյակ սերունդ հավասարություն, և մարդկությունը դարձյալ պիտի սովորի անհավասարության ճանապարհը բռնել: Այսինքն, պայմանների նույնությունը ընտանիքի պես մի փոքրիկ հասարակության մեջ նույնիսկ, երբ չի կարող հավասարներ ստեղծել, այդ նշանակում է, թե հավասարության պահանջը մեզ ցույց կարող է տալ անհավասարության մեծ արժեքը միայն: Բայց սխալ է ենթադրել, թե հավասարությունը չի կարող լինել, այլ պատճառով էլ չպետք է լինի. ընդհակառակն հավասարությունը չպետք է լինի, այդ պատճառով էլ չի կարող լինել: Որովհետև հավասարությունը մի օր եղել է, ես հավատում եմ դրան, բայց մի մոմենտ միայն. և քանի որ մարդկային գոյության հիմքը վերջիվերջո բարձրագույն բարոյականությունն է, դրա համար էլ եղածը դարձել է չպետք է լի-

նի: Ու չի կարող այս բարոյական ժխտականից մի օր նորից հավատարմություն լինել:

Եղբայրության սկզբունքի մեջն է հավատարմության համար արտահանված այս բարոյական ժխտականի հիմունքը:

Երևան, 919, 17 V

X

ՇԱՏԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Քաղաքական զարգացման որոշ աստիճանի վրա գտնվող ժողովուրդները կարծում են, որ մի մեծ դժբախտություն է իրենց հայրենիքի, իրենց երկրի և պետության համար չատ և ազատ խոսել չկարողանալը: Ընդունված բառապիտությամբ պետք էր ասել՝ Սահմանադրություն չունեցող երկրների համար քաղաքական մեծագույն իդեալն է մի խորհրդարան ունենալ: Ժողովրդապետությունը մարմնանում է խորհրդարանի մեջ, առանց նրան չկա դեմոկրատիայի կամքի արտահայտություն և ոչ էլ դեմոկրատիա: Դեմոկրատիայի պատմությունը, կարելի է ասել, եղել է պառլամենտարիզմի պատմությունը: Մարդկության քաղաքականորեն կազմակերպության ավելի լավ ձև չի գտնված եղել: Քաղաքական և ընկերային կյանքի մեջ ամբողջության արտահայտությունը, անհատական կամքերի սահմանափակումը, քմահաճույքների ոչնչացումը, օրենսական աշխատանքների ֆունկցիոնալ բաժանումը, օրենքի գերակայությունը՝ գործի չեղումների և տատանումների վրա, ընդհանրական գործի ընդհանրական անօրինություն հնարավոր է եղել պառլամենտարիզմի միջոցով միայն: Սովորական և ընդունված մտածողության համար պառլամենտը վերջին դյուրը և վերին հեղինակությունն է: Նրանից դուրս հնարավոր չէ որևէ այլ ձևով ընկերային կյանքը կազմակերպել և ղեկավարել:

Պառլամենտարիզմի էական նշանակությունները խտացնելով այս մի քանի տողերի մեջ՝ չարժե ավելի երկար ծանրանալ դրա վրա: Ո՞վ է, որ չգիտե նրա մեծ արժեքը: Մենք ուզում ենք միայն հետևողականորեն լրացնել մեր սոցիալոգիական փոքրիկ դիտողությունները խորհրդարանի չուրջը՝ նրանից ներս և դուրս մի հայացք ձգելով: Որովհետև մենք տեսնում ենք առանց նախապաշարումների, այդ պատճառով էլ մենք պառլամենտը տեսնում ենք՝ որպես պահպան

տեսակի և որակի մարդկանց մի խմբակցություն: Խմբակցությունների մեջ երևան եկող բոլոր տեսակի ընկերաբանական երևույթները ամենեն ավելի զարդանում և կատարելագործվում են նրա մեջ: Մյուս տեսակի խմբակցություններից՝ կլուբ, ընկերություն, կուսակցություն և այլն, տարբերվում է նա այն բանով միայն, որ կարողացել է իրենով հետաքրքրվողների համար մի ընդունելի ձև գտնել՝ ամենն տեսակի գործերի և գործառնությունների բարձրագույն օրենսդիրը լինելու: Բացի այդ, մյուս տեսակի խմբակցությունները, բոլորն էլ ունեն իրենց որոշ և հաստատուն շրջագիծը, սրամագիծը և չառավիղը: Պառլամենտը ոչ շրջագիծ ունի, ոչ սրամագիծ, ոչ էլ չառավիղ: Պառլամենտներ են եղել, որոնք շրջագիծ ունեցել են՝ առանց սրամագծի, կամ չառավիղ՝ առանց շրջագծի: Իր կազմության ձևերով էլ պառլամենտը բավական տարբերություններ է ներկայացնում մյուս խմբակցություններից: Որևէ երկրում բնակվող մարդկության բացարձակ մեծամասնությունը, մոտավորապես 90%-ը, կատարելապես չեն հետաքրքրվում նրանով, բայց նրա էությունից չ բխում հետաքրքրվել անխտիր բոլոր մարդերով, կատարել գործեր, որոնք այդ երկրի մեջ պիտի չոչափեն բոլոր ապրողների, անգամ մեռնողների չահերն ու իրավունքները: Դնել օրենքներ, որոնցից ոչ միայն ոչ մի մարդ չի կարող ազատվել, այլև որոնց՝ հողն ու քարը, լույսն ու թռչունը և կենդանիները պետք է ենթարկվեն: Առանց չարունակելու էլ այս համեմատությունները՝ կարելի է նրա էության մասին ճշգրիտ դիտողություններ անել:

Այն տեսակետը, թե խոսելը դյուրին է, գործելը դժվար, պառլամենտարիզմի փիլիսոփայության մեջ ձևակերպվել է, իբրև օրգանական աշխատանքի ֆունկցիոնալ բաժանում՝ օրենսդիր և վարչական իշխանության անկախություն: Դրանով միայն կատարելապես ապահովվել է չատախոսության ընկերային արժեքը: Պառլամենտը եղել է խոսարան և չատախոսարան: Երբ մարդկային մարմնի գործարաններից մեկի ֆունկցիան՝ խոսելը, դառնում է ընկերային մի հաստատություն, այն ժամանակ հարց է ծագում՝ ի՞նչու համար գործն էլ իր հերթին չի հիմնվում մարմնական մի որևէ օրգանի վրա՝ դառնալու համար խոսքի լրացուցիչ կամ հակադիր ընկերային հաստատությունը: Պառլամենտարիզմի պատմությունը այս տեսակետից մի ինքնահերքում է: Որովհետև լավ խոսողներին է տրվում միայն գործելու իրավունքը, և որովհետև գերագանցապես օրենսդիր պիտի լինել՝ մի քիչ էլ վարիչ լինելու համար: Բայց այս արհեստական և

չինծու դրությունը վրկել է աչխարհը, ուրեմն նրա մեջ մի ճչմարտություն կա: Այդ է ահա, որ պիտի գտնել:

Իրրև մի ամբողջական մարմին միայն՝ նա պատրամիտնա է, բայց իրրև մի իրական և գործնական ամբողջություն՝ նա երբեք դոյություն չի ունեցել: Որովհետև, նրա կոտորակները (ֆրակցիա) միայն թվաբանական գործողության մեջ ներկայացնում են մի ամբողջություն, իսկ ոչ ոք այնտեղ չի գնացել թվաբանության համար: Նրա կատարած բոլոր գործերի մեջ ամբողջությունը հավասար է կեսի, նույնիսկ մեկ երրորդի, հազվագյուտ դեպքերում միայն՝ երկու երրորդի, կամ երեք չորրորդի:

Շատ հետաքրքիր է, թե ինչպես է կազմվում այս ամբողջությունը, որ կեսի չուրջն է դեգերում, մի քիչ ավելի է, կամ պակաս: Ով մի քիչ հաշտվել է կուսակցությունների սոցիոլոգիայի հետ, նա պետք է մոռացած չլինի նրանց գոյության պաշտպանողական դինքերը: Պատրամիտնատական բատադիտությամբ՝ մի «ամբողջական» քայլ գցելու համար պետք է միաժամանակ մի չարժում կատարել՝ մեկ աջ, մեկ ձախ: Բայլել հնարավոր է լինում, երբեմն միայն կենտրոնի չարժումով, առանց աջին կամ ձախին մի ղիջում անելու: Շատ հաճախ կենտրոնը քայլելու համար դեպի աջ է գնում. պակաս չեն դեպքեր, երբ նա դեպի ձախ է գնում: Պատրամիտնաը գործում է, ուրեմն, այն չարժումներով, որոնք նրան կանգնեցնում են, դեպի աջ տանում, կամ թե դեպի ձախ: Այս կայունությունը, հետադիմությունը և առաջադիմությունը կոչվում են պատրամիտնատական աչխատանքներ, կամ օրենսդրություն:

Իր կազմության մեջ պատրամիտնաը կուսակցությունների հոգեբանության վերջին զարգացումն է: Իր գործունեության մեջ՝ կուսակցությունների գոյության հերքումը: Որովհետև կենտրոնը միշտ ավելի իրավունք ունի: Բայց ստիպված լինելով երբեմն աջ թևքվելու, երբեմն էլ ձախ, նչանակում է նա, երբեմն, աջին է իրավունք տալիս, երբեմն էլ՝ ձախին: Այսինքն, ցանկանալով հասարակական կյանքը կուսակցականորեն ղեկավարելու, նրանք խոնարհվում են իրականության առջև, որ այլ տեսակի ղեկավարություն է պահանջում: Ձախը, որ «փոքրամասնություն» է, չպետք է կուսակցության մեջ քարանալ, որպեսզի պատրամիտնատական խոհանոցում միայն իրավունք ստանար: Այլը, որ նույնպես «փոքրամասնություն» է, կոտորակային մի ամբողջություն կազմելու համար միայն, երբեմն, իրավունք է ստանում իր տեսակետները կյանքի մեջ դնելու: Եթե ընկերային կյանքը պիտի ղեկավարվի կուսակցականորեն, ապա, ուրեմն,

կամ խորհրդարանի բոլոր կոտորակները միաժամանակ իրավունք պիտի ունենան, կամ նրանցից ոչ մեկն էլ իրավունք չպիտի ունենա իր տեսակետներն անցկացնելու կյանքի մեջ: Այն տարօրինակ խառնուրդը, որ կազմվում է դրացի, կամ անհաչա մասերի բաղակցությամբ մի մեծամասնություն, կամ ամբողջություն ստեղծելու համար, պարզապես ցույց է տալիս, որ զուտ կուսակցական տեսակետները իրավունք չունեն կյանքի մեջ մտնելու, այլ բոլոր կուսակցությունների, կամ որ նույնն է, ոչ մի կուսակցության տեսակետները: Եվ, իսկապես, օրենսդրական յուրաքանչյուր նստաշրջանի աշխատանքները, եթե մի հայտարարի բերելու լիներ, ոչ մի կուսակցության աշխարհայացքի տակ չպիտի կարողանանք դնել: Այս նկատողությունը պատշաճում է, իհարկե, ամենից ավելի կուսակցական բռնակալությունից ազատագրված պառլամենտներին: Թեև դիջումը ձախին Սոցիալիզմը չի իրականացնում, ոչ էլ աջին՝ դեմոկրատիան կործանում, բայց որովհետև կուսակցությունները այն խմբակցություններն են, որոնք բացարձակապես անընդունակ են որևէ սկզբունքի, այդ պատճառով էլ այդ զիջումները ցույց են տալիս միայն, որ կուսակցական կրքերի և քմահաճույքների բավարարությամբ հնարավոր է լինում ընկերային կյանքը առաջ տանել, ըստ էության, անկուսակցականորեն: Կուսակցությունների փրկությունը իրենց այս ապիկարության մեջն է. համոզված, որ իրենք են ղեկավարում կյանքը, մի օր նրանք կտեսնեն, որ կյանքը ղեկավարել է չատ բաների հետ նաև կյանքի ղեկավարներին:

Այս տարակերպյալ դրությունը անխուսափելի հետևանքն է աշխատելու այն եղանակին, որ պառլամենտին է հատուկ: Ճիշտ է, պառլամենտը մի բեմ է, ուր մշակվում է պերճախոսությունը: Բայց կուսակցական բռնակալության թագավորությունը կուսակցական պրոպագանդա է դարձնում պերճախոսությունը, իսկ անկուսակցական հայրենասիրությունը պերճախոսության միջոցով ստեղծում է վայրկյանի գերիշխանությունը և կուսակցական տարբերումներ: Այնուամենայնիվ, մարդը չի կարող վիշտ զգալ այստեղ իր խոսելու չնորհքի և ընդունակության վերաբերմամբ: Բայց, պառլամենտարիզմի գեղարվեստական արժեքը չատ քիչ է գնահատված նզովել, որպեսզի լիակատար կերպով գնահատված լինի չատախոսության ընկերային արժեքը: Խոսքի ուժով օրենքներ դնելը դարձել է պառլամենտարիզմի էությունը: Որևէ հարցի լուսաբանությունը պահանջում է հռետորի հոգեմտավոր ընդունակությունների ցուցադրությունը: Խոսել և անվերջ խոսել հանճնաժողովներում, ենթահանձնա-

ժողովներում, ընդհանուր վիճաբանության ժամանակ, հարցեր տալով, բանաձևի մասին, խմբագրության մասին, իբրև արտակարգ հայտարարություն, քվեարկության մասին, քվեարկությունից առաջ և հետո և այլն, և այլն, խոսելու իրավաբանության բառադիտությունն են կազմում և օրինական ձևով հնարավոր դարձնում չատախոսությունը: Ավելի զվարճալի արարած կա՞, քան խորհրդարանում չխոսող արարածը: Նա այն մարդն է, որ քայլում է առանց ոտների, այն արհեստավորը, որ նույնիսկ իր ձեռներիցն է զրկվել, այն տունը, որ ոչ հիմք ունի, ոչ էլ կտուր, այն ներկայացուցիչը, որ մի ժողովուրդ ներկայացնելու համար ինքն իրեն էլ չի կարող ներկայացնել, այն գլուխը, որ չատերի մասին պետք է մտածի, որովհետև ինքն իր մասին չի կարող մտածել: Ահա չատախոսության ընկերային արժեքը: Պետք է խոսել, չատ խոսել և լավ խոսել, այդ է օրենադիր լինելու առաջին պայմանը:

Բայց կուսակցական բռնակալության թագավորությունը մի քիչ նվազեցնում է չատախոսության այս ընկերային արժեքը: Կուսակցական ցուցակը, որ քվեարկության պետք է դրվի ժողովրդի առջև, կազմվում է տենդոտ և քրտնաջան աշխատանքներով: Այդ ցուցակների մեջ ի ցույց են դրվում հարյուրավոր բերաններ և մի քանի հատ էլ լեզու: Ամեն մարդ հո՞ խոսող չպիտի լինի: Այդ դեպքում էլ դեկավարող գործոնը դառնում է մի քանի հատ լեզուներ ապահովել կուսակցության համար, իսկ դրանից հետո պետք է նկատի ունենալ կուսակցական բարեհուսությունը, հյուրասիրությունն՝ նոսեկ ընկերներին, պատիվ՝ չատ աշխատողներին, ռոճիկ՝ երախտավորներին, բարեգործություն՝ ընկերների հիշատակին, և այլն, և այլն: Մեծ և հաղթական կուսակցությունների պառլամենտական կոտորակները այսպես են կազմվում: Փոքր ու հալածված կուսակցություններն են, որ հավատարմությամբ աշխատում են մինչև վերջն էլ ապացուցանել չատախոսության ընկերային արժեքը՝ հրապարակի վրա դնելով այնքան լեզու, որքան գլուխ: Մեծ կուսակցությունները պառլամենտը դարձնում են պատահական մարդկանց մի ժողովածու: Եթե բազմամարդ մի փողոցի մեջ ոստիկանության միջոցով կարենք և վերցնենք անցնող հասարակության մի մասը, նրան դնենք փառահեղ մի շենքի պատկառելի սեղանների առջև ու նոտարանների վրա, առանց դժվարության նրան կարող ենք պառլամենտ անվանել: Հասարակական այդ բնկորի մեջ նախագահ էլ կարելի է դանել, քարտուղար էլ: Այսպես կունենանք երեխաներ էլ, կանայք էլ: Մեծ կուսակցությունների կազմած ցուցակում քի՞չ կան երեխաներ՝ դպրոցի և

կրթության մեծապես կարոտ: Բնկորի մեջ վխտացող կանանց թիվը կարող է շատ լինել, պառլամենտում կնամարդեր կարող են լինել: Թեև մենք այժմ ունենք մի նոր «մեծ հեղափոխություն», որ պառլամենտ է տանում ոչ միայն հոդով, այլ նաև մարմնով կանանցն էլ: Երբեմն անուններն են կուսակցությանը վարկ տալիս, երբեմն էլ կուսակցությունը՝ անուններին: Այս վերջինը ավելի հաճախադեպ է, որովհետև դրանով միայն մեծապես ապահովվում է մտանների հավատարմությունը, ոչնչությունների անձնվիրությունը, որոնց վրա դնում է կուսակցությունը իր գոյության իրավունքը:

Այս բոլոր ախտավորությունները կարելի էր, իհարկե, չպարել հանրօգուտ առարկություններով, եթե միայն նրա աշխատելու եղանակի մեջ չլիներ անբուժելի մի վերք, որ դատապարտում է նրան իր գոյությամբն իսկ: Ինչպես ամենայն խմբակցություն, նույնպես և պառլամենտը ինքնանպատակ մի հաստատություն է: Ինչ նպատակի էլ կոչված լինի նա ծառայելու, նա ծառայում է ամենից առաջ ինքն իրեն: Իր տնտեսական չահերը նա միանգամից է ապահովում, և հավիտենապես՝ իր բարոյական և քաղաքական չահերը: Խոսքի ահեղ հորձանքի մեջ տարված՝ նրանք մոռանում են կյանքն ու իրականությունը և հետևում են խոսքի թափին, ելևէջներին, ճանապարհին ու հոգեբանության: Որովհետև խոսքի աշխարհը ուրիշ աշխարհ է, այնտեղ անկարելիություններ կան, որոնք կյանքի սովորական գործերն են, ինչպես և կյանքի անկարելիությունները խոսքի ճապուկ և հեշտ բաղադրությունների մեջ ամենքի հավանությանն են արժանանում: Խոսելու ընթացքը դժվարություններ է առաջ բերում, անհարթություններ և խոչընդոտներ: Պառլամենտական աշխատանք կոչվում է այդ դժվարությունների հաղթահարումը: Սակայն, դրանք խոսքի դժվարություններն էին միայն, որովհետև կյանքը չի ճանաչում այդպիսի դժվարություններ, և պառլամենտական աշխատանք կատարողը կյանքի համար ոչինչ կատարած չի լինում: Խոսքի թափը այնքան հեռուներն է տանում մարդուն, որ պառլամենտի մեջ մարդիկ դառնում են արհեստով խոսողներ և իրար լսողներ, իսկ կյանքի հանդեպ՝ բացարձակ խուլեր և կույրեր: Կոչված խոսելու և մտածելու ժողովրդի համար, իրենց ընտրողների համար, նրանք մտածում և խոսում են վերջիվերջո միայն իրենց համար:

Սակայն, այս բոլորը բնական բաներ են, մարդը չի կարող ուրիշ կերպ լինել, քան ինչպես որ է: Հենց որ մի խմբակցություն կազմվեց, չի կարելի պահանջել, որ նա չունենա իր առանձին հոգեբանությունը, սովորությունները, բարքերը, մտածելակերպը և սեփա-

կան նպատակները: Այս բոլորը հասկանալի և հանդուրժելի կլինեին, եթե միայն այդ խմբակցությունը չունենար անհանդուրժելի մի հավակնություն՝ ժողովրդական ներկայացուցչություն լինելու:

Ինքնին անհասկանալի մի գաղափար է ներկայացուցչությունը: Բացակայի տեղը ներկայացնել՝ ընկերային սովորական տարակերպություններից մեկն է: Բայց ազատ համաձայնության մեջ դեռ ընդունելի է ներկայացուցչությունը՝ իբրև մի հանձնառություն, մի պարտականություն, որ ստանձնում է մեկը՝ կատարելու մի ուրիշի փոխարեն: Եվ այդ հանձնառությունը լինելու է պարզ, որոշ և մի հատիկ միայն: Իսկ ի՞նչ է նշանակում «ժողովրդական ներկայացուցչությունը»: Դա նշանակում է ոչ թե մի, այլ անթիվ հարցերի հանձնառություն, ոչ միայն գոյություն ունեցող խնդիրների, այլև ապագայում լինելիք, գոյություն չունեցող հարցերի հանձնառություն: Ժողովրդական ներկայացուցչությունը ժողովրդի ֆիզիկական գոյության կրճատված ձևն է, ներկայացուցիչները կարծում են՝ նրա հոգևկան գոյության կատարելագործած ձևը: Երկու դեպքումն էլ նկատողությունը ճիշտ է: Որովհետև ոչ թե ժողովրդի, այլև ամբոխի մի փոքրիկ պատկեր է ներկայացնում խորհրդարանը հաճախ: Ինչպես նաև, նա իր մեջն ունի այնքան շատ հարցեր ու խնդիրներ, որոնք բոլորովին գոյություն չունեն ժողովրդի մեջ, ապա և դրանց խմբակցական յուրահատուկ հոգեբանությամբ տրված լուծումները, որոնք՝ սրամտաբորեն հակառակ են ժողովրդի շահերին և հասկացողություններին, որ կարելի է ասել, թե խորհրդարանը, ի մի ամփոփելով ժողովրդական հատվածների և խմբակների բոլոր հարցերը ու ամբողջ ժողովրդի գլխին կապելով, հարստացնում է, մի տեսակ, ամբոխային միտքը և նրա մեջ գտնվող հարցերը:

Սակայն, ամենից ավելի իր կազմության մեջն է, որ ժողովրդական ներկայացուցչությունը մի ինքնահերքում է: Երբ կուսակցությունները են ներկայացնում ընտրողների ցուցակը, այն ժամանակ նրանք իսկապես ներկայացնում են իրենց անունը միայն, մի թվահամար միայն: Այդ թվահամարի տակ պահված անուննները անարժեք և անմիտ իրտվիլակներ են, ավազի անպետք հատիկներ, որոնք պիտի պտտկվեն ու պատեպատ խփվեն՝ ցույց տալու, թե լիքն է դատարկ ամանը՝ համեղ կերակուրներով: Մի քիչ չնորհք է թափվում ամանի պատերից ավազի հատիկների վրա, և ավազի հատիկների խծրծոց ազմուկը ամանի պատերի վրա մի ներդաշնակություն է ստեղծում, պատարկության և ոչնչության ներդաշնակությունը՝ ժողովրդական ներկայացուցչության նվագահանդեսի համար: Մի քա-

նի արժեքների կողքին դրված տասնյակներով ոչնչությունները բավարարում են ժողովրդական ներկայացուցչության սկզբունքը և կուսակցական երկարակեցության մտահոգությունը: Անուններ կան այդտեղ, որոնք եթե բավական խելոք լինեին, պիտի թույլ չտային երբեք, որ իրենք պաշտպանեն իրենց դատը այնքան, որ դա կորած դատ կլիներ, բայց նրանք պիտի պաշտպանեն ժողովրդի դատը: Անուններ կան այդտեղ, որոնց պետք էր դուրս չպրտել մի բարեկիրթ հասարակության չրջանից հենց այն պատճառով միայն, որ իրենք համաձայնվում են այդտեղ մտնել, արժեքը ոչնչացնել և ոչինչը արժեքավորել: Անուններ, որոնք ներկայանալի չեն (presentable), այդ պատճառով էլ ներկայացուցիչ, որոնք հազիվ թե ժողովուրդ են, այդ պատճառով էլ ժողովրդական ներկայացուցչություն: Անուններ, որոնց բարձրագույն արժանիքն այն է միայն, որ իրենց բարոյական պարտքն են համարում անկախորեն և ինքնուրույն չմտածել, և անկախ ու ինքնուրույն մտածածը անմիջապես ոչնչացնել. որոնք հրապարակով խոսք են տալիս աչխարհին ամբողջ ժողովրդի չահերը պաշտպանել հակառակ իրենց համոզմունքին, իրենց ընդունակությանն և կարողության: Երջանիկ, եթե նրանք կարողանան մնալ ավազի հատիկներ դատարկ ամանում, որովհետև կուսակցական ամանը սուրճի չրաղաց է, ուր հատիկները պետք է ընկնեն անիվների, ատամների և հաստ պատերի ու օղերի մեջտեղ, տրորվեն, փչրվեն, խառնվեն ամենքը ամենքի հետ, հալվի իրենց անհատականությունը՝ կազմելու համար միապաղաղ, միագույն և միահամ մի խմոր, մի փոչի, որ պետք է սրսկել հասարակական կյանքի վրա՝ որպես հիշատակի վերջին բուռ հողը թաղկապին և սիրելի դերեզմանների վրա:

Նույնիսկ այս բոլորը կարելի էր ներել, եթե այդ հաստատությունը կարողանար լինել այն, ինչ որ ինքն է ուզում: Ամեն մարդ գիտե, որ նա ժողովրդի համար է, բայց ժողովուրդների կարճ տեսողությունը և բութ հիշողությունը դարերով ամբողջ ժամանակ են պահանջում՝ համոզվելու համար, թե նա միայն ինքն իր համար է և բացարձակապես ինքնանպատակ: Աչխարհում քիչ մարդ կա, որ վայելած չլինի ընտրական դրախտների անսահման խոստումները: Բայց այդ խոստացված դրախտները պառլամենտական իրականության մեջ դառնում են անսահման չատախոսությունների զվարճալի տեսարաններ: Ոչ ոք չի կարող կասկածել խոստումների անկեղծության և բարեմտության վրա: Այդ խոստումները կիրականանան, եթե հակառակորդ և մրցակից կուսակցությունը արգելք չլիներ: Բայց այդ խոստումները չեն իրականանա, որովհետև ամբողջ աչխարհը հակա-

ռակ է դրանց, մարդկային գոյությունը և պատմությունը, ֆիզիկական, քիմիական և ընկերային տարբրական օրենքները հակառակ են դրանց: Այդ պատճառով էլ բոլոր խոստացողները հաստարակական սոսկիսոններ են և խաբեբաներ, նրանք խոստանում են մի բան, որ ամեն մարդուց ավելի լավ գիտեն, թե չպիտի կատարվի: Պառլամենտի գոյությունը, ուրեմն, կրկնակի տեսակետներով անբարոյական հիմունքներ ունի, որ քաջալերում է սոսկիսոսությունը և խաբեբայությունը, որ թույլ է տալիս ժողովուրդը խաբվի մշտապես և խաբեբաներն էլ երկրի օրենսդիրներ հռչակվեն:

Պառլամենտը պոլիտիկայի և դիվանագիտության բացված դիրքն է, ուր ամեն մարդ իր քաղաքական գործունեության այբուբենն է սովորում: Բազմաթիվ կապերով և օղակներով նա իր մեջն է ամփոփում տնտեսական մեծ-մեծ ձեռնարկները և հնարավոր է դարձնում երկրի վարչական մեքենայի գործունակությունը կամ անընդունակությունը, միայն այդ ձեռնարկների համապատասխան թույլտվության սահմաններում: Եթե մեկին վիճակվում է ժողովուրդ լինելուց հետո օրենսդիր լինել և վերջն է վարիչ, նա սովորում է մարդ արարածի բոլոր սոսիճանաձոսությունները, մոռանալ իր խոստումները, ինքն իրան հերքել, իր կուսակցությունը դավաճանել հավատարմությամբ և վերադառնալ ժողովրդի մոտ նոր խոստումների և նոր դավաճանությունների համար: Պառլամենտի մեջ սկզբունքները ժայռերի վրա մի բոպն կանաչող ծաղիկներն են: Ամեն մարդ լսում է այդ սկզբունքների մասին, որոնք մշտ խոսվում են և քարոզվում, բայց երբեք չեն մտնում կյանքի մեջ: Ամեն մարդ համոզվում է դրանով չատախոսության ընկերային մեծ արժեքին, և չատ քչերն են տեսնում, որ բոլոր կուսակցությունները միայն այդ կետում համերաշխ են իրար հետ՝ չատախոսության ընկերային արժեքը բարձրացնելու: Այդ պատճառով է, որ պառլամենտը կարող է ոչնչացնել կուսակցությունների ոչնչացմամբ միայն, բայց նա պետք է մնա, որպեսզի դոնե մի հարցում կուսակցությունները համերաշխ լինեն իրար հետ:

Իր կազմությամբ, իր նպատակներով, աշխատելու իր յուրահատուկ եղանակով, իր տված օրինակով և դաստիարակությամբ, իր ներշնչած հույսերով և կատարած գործերով, իր ընդունակություններով և հավակնություններով իր ունեցած ազդեցությամբ և կրած տպավորություններով, իր դարավոր և պատմական դավաճանությամբ, ժողովրդապետության անխիղճ չահագործումով, իր ամբողջ գոյությամբ խորհրդարանը մի փտախտ է, մի ոսկեպարուր դերեզ-

ման, մի քառանկյունի անիվ, կամ հյու կամակատարների մի ստրկանոց, սուտի և խաբեբայության օրինականացումը, մանավոր մարդկանց մի տգետ ժողովարան, ինքնանպատակ մի ընկերություն կամ խմբակ, իշխանության ապիկարությունը և ապիկարության իշխանությունը:

Ընկերային կյանքը, եթե ախտավորություններ ունի, թող գոնե ծրարե մի քիչ այդ ախտերը՝ սպանելով պառլամենտը:

Երևան, 919, 21 Ի Վ[արազդատ] Տ[երոյան]

XI

ՍԱՐԴԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երկու դարավոր և հավիտենական թշնամիները չատ քիչ են հանդիպում իրար, ըստ երևույթին, այն երկրների մեջ մանավանդ, ուր եկվոր պետությունների տեղ վերահաստատվում է բնիկ պետությունը Հեղափոխության ալիքները տանում են մեկին և բերում են մյուսին, ու ալիքների տատանումը, լայնությունը և անշահախնդիր տարուբերումներ չտեսնողները դուրս են հանում մի րոպե իրենց գլուխները խոր ճահճի խորքից ու փրկություն ավետում տառապող մարդկության: Այդ փրկության հետ ավետվում է նաև անհատի ազատագրությունը, և թվում է, թե նորելուկը հաշտվել է արդեն դարավոր պարտվածի հետ: Մի րոպեով միայն մարդն ազատվում է, սակայն, ոտք դնելու համար այնպիսի մի աստիճանի վրա, ուր կայունությունն անխուսափելիորեն սպառնում է այլասերել դարավոր պայքարի ոսկին անգամ: Թողնենք հանգիստ նորելուկին, որովհետև չատ ուրախալի է, եթե նա չուտով պառավի և արժանի դառնա իր թշնամու փորձառությանն ու իմաստությանն:

Իշխանությունը մի առեղծված է, և հեղափոխությունը այդ առեղծվածի չուրջ ստեղծված դդայախաբությունը: Ցանկալի իրականության անհասանելիությունը, թե՞ արտաքին այլ պատճառներ ստեղծում են մի խենթ իմաստության ոգորումների չրջանը, ուր կատարվում է մի ավելորդ փորձ ձևռք բերելու ընկերային իդեալների կապույտ թռչունը: Որովհետև հեղափոխությունը իսկապես, ոչ իր սկզբնական օրերի դրած խնդիրներն է լուծում, ոչ էլ հետզհետե

երևան եկող ընկերային բարօրության հարցերը: Ընկերային այդ խնդիրների հիմքում հանդչում են իշխանության էության և անհատի ազատության անլուծելի հարցերը: Եվ, որովհետև ամենայն փոփոխություն կամ հեղափոխություն միայն իշխանության ձևերի շուրջն է վիճեր սահմանում և ոչ թե էության շուրջը, ուստի և հարց է, թե որևէ ձևի իշխանություն կարող է իրագործել անհատի ազատագրությունը: Ամեն երկրում էլ պակաս չեն մարդիկ, որոնք կուսակցություններ են կազմել և պնդում են, թե իշխանության այս կամ այն ձևը միակն է, որ կատարյալ երջանկության կհասցնի մարդկությունը և կիրագործի անհատի ազատագրությունը: Բայց ոչ մի տեղ էլ հարցը դրված չէ, թե իշխանությունը և անհատը կա՞րող են միաժամանակ և միատեղ ապրել գոնե, և ոչ թե անգամ իրար հետ լինել:

Իշխանությունը, որ երկնքից է գալիս և խոսում է Աստուծո անունով, մի իշխանություն է, և ամեն մարդ գիտի, թե ինչպիսին: Իշխանությունը, որ ժառանգաբար է գալիս և խոսում է պատմության անունով, այդ էլ մի իշխանություն է, և դեռ ոչ ոք չի մոռացել նրա առաքինությունները:

Իշխանությունը, որ ընտրությամբ է գալիս և խոսում է ժողովրդապետության անունով, այդ էլ մարդու ճանաչած իշխանություններից մեկն է: Նախորդ և այս դարը երջանկացել են այս վերջին գյուտից:

Ահա իշխանության երեք գլխավոր տեսակները, որոնց հետ չի հաշտվել հավիտենական պարտվածը:

Նա ճանաչում էր անասնական ազատությունը, և իշխանության մեջ հնարավոր չէ այդ այլևս:

Նա ճանաչում էր ավազակային ազատությունը, և իշխանության արժեքը բարձրացել է ավազակությունը հալածելով ու ոչնչացնելով. եթե իհարկե իշխանությունը ավազակապետություն չէ:

Նա ճանաչում է ոճրագործի ազատությունը, և քաղաքակրթությունը իշխանության հովանին է փնտրել գոպելու համար այդ ազատությունը:

Սակայն իշխանության ամենամեծ հիմքերից է այն հիմքը, որ հալածելով անասունին, ավազակին և ոճրագործին, արդարացնում է իր հալածանքը անհատի դեմ առհասարակ: Եթե ավազակները և ոճրագործները իշխանության հարազատ որդիները չլինեին, անշուշտ, իշխանությունը մի անխառն բարիք կլիներ: Բայց ավազակությունը և ոճիրը հալածելու համար կյանքի կոչված իշխանությունը երբեք

չի ճանաչելու իր հարազատներին, այդ պատճառով էլ անկարելի պիտի լինի ապացուցանել, թե կարո՞ղ է գոյություն ունենալ մեկը առանց մյուսին. Նրանք իրար պահում են:

Այն անհավասարությունը, որ իշխանությունն է ստեղծում նմանների մեջ, երբեք չի փոխվի, եթե Աստուծո ընտրյալը մարդկանց ընտրյալը դառնա, կամ մեկը չատանա: Իշխանության էությունը ծառայելու մեջ պետք է լիներ, բայց եղել է մշտապես տիրելու մեջ. այդ պատճառով էլ նրա ձևերի փոփոխությունը ավելի է բարձրացնում մարդկային ծանծաղամտությունը: Բայց, որովհետև մարդիկ բոլորը կոչված են ծառայելու, այդ պատճառով էլ ճարպիկները, լարախաղացները և որոշ տեսակի հալածականները չատ հեշտությամբ գտնում են ճանապարհը, որ տանում է դեպի տեր որոնող ծառաները: Այնտեղ կա ահա մի ազատություն, որ երբեք չի հալածվելու իշխանության ազատությունը: Եթե ճիշտ է այս տեսակետը, ճիշտ պիտի լինի նաև իրականությունը տեր որոնողների, որոնք միշտ կգտնեն իրենց որոնածը: Սակայն, այստեղն է ահա, որ իշխանությունը դառնում է մի անլուծելի և անբնական առեղծված, որովհետև աշխարհի տերերի թիվը երբեք չի կարելի սահմանափակել, մինչդեռ մարդկությունը սահմանափակ է: Եվ քաղաքական ու քաղաքացիական ազատությունների անվան տակ նվազում, մեղմանում և համառոտվում է անհատի և պետության դարավոր պայքարը: Մինչդեռ ինքնին ծիծաղելի է լուծի օտարությունը, թե՞ հարազատությունը, խոսելու ազատությունը, թե՞ գրելու, մանավանդ հավաքվելու ազատությունը, ուր մարդիկ միանում են, լուծ թոթափողները՞ մի նոր լուծ չինելու: Ինքնին մի աննկերդաշնակ հակասություն, քաղաքական կամ քաղաքացիական ազատություններ ձեռք բերելու համար միացողները անվերապահորեն տեր որոնողներն են եղել միշտ էլ:

Բայց անկարելի է այդպես խոսել տնտեսական ազատության մասին: Միակ ազատությունն է այդ, որ ճշմարտապես ազատում է մարդուն և՛ բնության, և՛ մարդկային կաշկանդումներից: Իսկ այստեղ ստեղծվում է մի տարօրինակ դերափոխություն, այստեղ աշխարհի տերերը պաշտպան են կանգնում լուծ թոթափելու աշխատանքին, և աշխարհի ծառաները կաշկանդում են իրենց միություններով, ճնշումներով, բողոքներով և ապստամբություններով ազատագրության ամեն փորձը: Ու այդ դերափոխությունից այլասերվում է անհատի ազատագրության դեղնցիկ պայքարը, առաջ է գալիս վարձկանություն, վաճառք, չհադիտություն, բուրժուապիա և

կապիտալիզմ: Աշխարհի տերերը սովորում են կապիտալի պաշտպանությամբ իրենց ծառաների թիվը չաւելացնել, և ամբոխը սովորում է անտեսական ազատութիւնները ոչնչացնելու իր պահանջներով ձեռք բերել իր բոլոր ազատութիւնները: Այս բազմատեսակ պայքարների մէջ շատ դժվար է լինում ինքն իրեն հարազատ մնալ, և ճիչերից ամենաթուլը կմնա այն ազազակը, թէ անհատի ազատութեան համար ոչ մի արդելք մարդկային չէ կարող լինել: Ամենայն ազատութիւն մեռնում է պայքարի այս կատաղի ձևերի մէջ, և տերունների ոհմակները ստեղծում են իրենց համար չարժվելու և դործելու նոր ասպարիզներ, ուր, որպես թէ հետապնդվում է դարձյալ անհատի ազատագրութիւնը, և այս անգամ, որպէս թէ անհատականութիւնը ոչնչանում է հավաքականութեան հետ օրգանապես կապված բարքերի, սովորութիւնների, կարգուկանոնների և օրենքների ճնշումներից: Մի անգամ կորցրած քաղաքական և անհատական ազատութիւնները՝ գլխավոր պարտավածը նոր ազատութիւններ է որոնում, որպես մի թիվ և չափ չկա աշխարհին չնորհված ազատութիւններին:

Եվ որոնում է նա իր երջանկութիւնը: Ինքնին մի հակասութիւն և անկարելիութիւն: Հավաքական գոյութեան մէջ երջանկութիւնը միայն անաատական կարող է լինել և երբեք անհատական: Աշխարհի վրա անհատական երջանկութիւնը այնքան տեղ է բռնում, որքան ոչ մի անհատ իրավունք չունի, և մարդն է միայն, որ հալածում է երջանկութիւնը՝ իբրև մի գողոն, որ ոչ օրի չպիտք է պատկանի: Անգամ, եթե աշխարհը չհալածեր, նեղ կգար չափազանց այն բնակարանը, որ պիտի պարփակեր իր մէջ անհատական երջանկութեան և հավաքական կենակցութեան գիտակցութիւնները: Մեր տարիքության մէջ պարտականութիւնը ստեղծում է նոր տարիքութիւն և մինչ, գոհ չլինելով մեր տերերի և բռնակալների թվից, մինչ ենք պատնում մեր բռնակալն ու տարիացնող տերը: Ո՞վ ենեմ ես մի երջանկութիւն, որի թշնամին ես ինքս չլինեի: Ի՞նչ է նշանակում, ուրեմն, երջանկութիւնը, որ միայն թշնամիներ ունի: Մարդ-անա՞սունն է մարդ, թե՞ մարդ անհատը. մինը վայելում է, մյուսը՝ տանջվում: Երջանկութիւնը տանջանքի վայելքն է այս աշխարհի վրա: Եվ օրենքների կաշկանդումներից է որոնում նա իր ազատագրութիւնը: Ինքնին դարձյալ մի հակասութիւն: Հավաքականութեան գոյութիւնը միշտ պահանջում է որոշ կազակցութիւն, գասավորութիւն, կարգ և օրենք: Անազատի մենակյացը միայն իրավունք ունի օրենք չճանաչելու, իսկ մարդկանց մէջ ապրող մարդը սլիտի ունենա իր որոշ սե-

դը, չրջապիծը, իր որոշ դերը և պարտականութիւնը: Անգամ իշխանութեան գլուխները չեն հրաժարվում իրենց բաժնից. միայն թե ընտրութեան կատարեալ ազատութիւնը տարբերում է նրանց հասարակ մահկանացուներից: Բայց օրենքի տարրական գիտակցութիւնը մարդկանց մեծամասնութեան համար ոչ միայն հավաքական կեանքի անընդհատական ներկայութիւնն է մատնանշում, այլև անհատական կամքի կատարեալ ոչնչացումը: Ամեն մարդ չունի օրենք դնելու գիտակցութիւնը, բայց ամեն մարդ պարտավոր է ունենալ օրենքին ենթարկվելու գիտակցութիւնը: Ավելի բնական է, սակայն, առաջինը, և ընկերային կեանքի հակաբնական ընթացքը հնարավոր է դարձրել երկրորդը միայն: Մարդը կփրկվեր, եթե նրա վարվեցողութիւնը այնպես լիներ, ինչպես որ ինքն կկամենար լիներին մնացեալ մարդկանց վարվեցողութիւնները: Սակայն, այդ նշանակում է ասել, թե մարդը կփրկվեր, եթե աշխարհը գոյութիւն չունենար: Տգիտութիւնը, ապիկարութիւնը, ծուլութիւնը, կամքի հիվանդութիւնները, իր չրջապատը և ստացած դաստիարակութիւնը ավելի բնական են, քան իմաստունների իմաստութիւնները: Անգամ ինքնածին և ինքնագիր օրենքը պիտի մնա հակահատուկան, որովհետև օրենքը նշանակում է արդեն ոչ անհատական մի բան: Միակ հնարավոր ազատութիւնները կորցնելուց հետո օրենքը կմնա միակ հնարավոր ճամփան պատվավոր պարտութեան: Այդ պատճառով է, որ ամենայն ըմբոստութիւն աննպատակ է, կամ օրենքից ավելի նրա գործադրութեան դեմն է ուղղված լինում: Անիշխանականների մեծ մասը օրենքի մոլեռանդ երկրպագուներ են, և օրենքի ճշմարիտ թշնամիները նրանք են, որոնք կամ օրենք են դնում, և դրանով ապահովում իրենց գոյութիւնը այլ տեսակի օրենքներից, կամ թե նրանք, որոնք երբեք բռնելու տեղ չունեն իրենց վրա օրենքի ձեռքին, տալու:

Եվ որոնում է նա իր ազատութիւնը սովորութիների, վարքուբարքի և ընդունված ձևերի դեմ: Ինքնին դարձյալ մի հակասութիւն և անկարելիութիւն՝ կապված ընկերային կեանքի առանձնահատկութիւնների հետ: Աշխարհում պակաս չեն լինի մարդիկ, որոնք անհատի ազատագրութիւնը այդքան փոքրացնում են: Որովհետև, երբ ամեն մարդ կարող է ստեղծել ինքն իր համար վարքուբարքի և սովորութիների օրենքներ ու տեսակներ, նա այլևս իրավունք չունի գոյութիւն ունեցածների ճնշումներից դժգոհելու. ապիկարների և անզորների համար միայն դրանք ճնշումներ են, ավելի ճիշտ կլիներ ասել գործելու և վարվեցողութեան պատրաստի ճանապարհներ, ուր

պետք է մտնի յուրաքանչյուր ուժը, որ ինքն իր համար չի կարող ստեղծել իր ճանապարհը: Պայքարի այլասերումը հասնում է այնտեղ, ուր պայքար են դտնում նրանք, որոնք ոչ պայքարի ուժ ունեն, ոչ էլ դաշտ: Այնքան, որ սարսափելի է ազատագրության պայքարը, որքան և ոչինչ այս վերջինը:

Բայց սովորություն են մնծի և փոքրի, շատի և քչի, հնի և նորի, ընդունվածի և չընդունվածի մի շարք հասկացողությունները, որոնք մի առ ժամանակ կանդնեցնում են մտքի ազատ թռիչքները և սարկացնում գաղափարը կամ որևէ հղացում, կամ ինքնուրույնություն, անհատականություն և էություն: Անպամ, եթե պետք լինի ամբողջ կյանքը տալ, դարձյալ կարելի է չհուսահատվել, թե ճշմարտությունը պիտի հաղթանակե մի օր: Ծանոթ և սիրված անունների հիմարությունները ներվում են, բայց մի աննկելի հանդգնություն պիտի ունենալ անծանոթ և անանուն իմաստությունները հարդելու համար: Անքննադատելի է փառահեղ շրջանակներում պարփակված անմիտ բովանդակությունը, բայց խոցելի է մերկապարանոց, լայնանիստ և խորախորհուրդ ճշմարտությունը: Պատվամոռաց ինքնասիրությունն էլ մի առաքինություն է, ինչպես գողի ճշմարտախոսությունը: Հավատքի գործն էլ մի սովորություն է, այդ պատճառով աչխարհում անհավատները սուսխոսներ են: Մշտապես դրական և մշտապես ժխտող առաքինությունները չատ նման են իրար՝ իրրև սառցական հատկություններ կամ կեղծիքներ: Մարդկանց մնծամտությունը այս շրջանակումն է պաշտպանում իր անհատականությունը: Եվ սակավ չեն հանդիպում տիպեր, որոնք հանուն մի բարձր փիլիսոփայության կարում են կյանքին կապող իրենց թելերի մեծ մասը, և անկախության մի տեսակն ստեղծում իրենց համար, որ իր միջից արտաքսում է պայքարող և հաղթանակող անհատականությունը՝ տեղը դնելու համար պարապած և թուլամորթ համակերպության: Բայց սրանք բոլոր ոչնչություններ են, որովհետև դրանց խորքում հանդչում է անհատի և պետության դարավոր և հավիտենական կռիվը:

Պետությունը ընկերակցելու տիպերից մեկն է՝ ամենաընդարձակը և ամենաայլազան. ընկերակցելու բոլոր ձևերը կարող են նրա մեջ տեղ դտնել, բայց և այնպես ազատությունը և անհատականությունը՝ չատ քիչ: Որովհետև լավագույն պետությունը լավագույն անհատականությունների ոչնչացմամբ է կազմակերպվում: Իրրև ընկերային տիպ՝ նա պիտի կազմակերպի բաղակցությամբ, կամ կառուցումներով, բաղկացուցիչ տարրերի ներքին և արտաքին առնչութ-

յունների ուժգնությունը, դյուրությունը և մտերմությունը ուժեղացնում է նրա ամբողջական բովանդակությունը: Երկու դեպքում էլ ի վնաս անհատականության է տեղի ունենում այդ զարգացումը, որովհետև բաղկացուցիչ տարրերը թե բաղակցական, և թե կառուցվածքային պետությունների մեջ իրենց պետական գործառնության մեջն են լինում, երբ պահում են շատ ընդհանուր նմանություններ: Աշխատանքի բաժանումը շատ ավելի նպաստում է անհատական տարբերությունները ոչնչացնելուն, քան զարգացնելուն, չնախատեսված միշտ մի վտանգ է. ինքնուրույնությունը ոչ մի ճանապարհ չի կարող գտնել, իսկ առանց լրացումի, կամ լրացուցիչը լինելու աշխատանքի բաժանում չի կարող լինել: Քաղաքակրթության ճանապարհը գնացել է այնպես, որ մարդը եղել է մի միջոց և մի գործիք հասարակության համար: Անհատը չի կարող ինքնանպատակ լինել ինքնանպատակ հասարակության մեջ:

Անկարելի է ասել, թե լավագույն կլիներ, եթե այսպես չլիներ, բայց անկարելի է նաև չտեսնել ընկերային կյանքի այս մահացու վերքերը: Դարձյալ հասարակությունն է անհատին արժեքավորող որպես մայր ամենայն արժեքի: Բայց նրա ժլատությունը, անկարգապահությունը, աչառությունը, տրամաբանության և բանականության դրժումը, խոտոր և ծուռ ճանապարհները իր ընտրությունների և արժեքավորումների մեջ ստեղծում են մի ախտավոր կացություն, որ անդրադառնում է ամբողջի վրա: Անհատականության չափ հավիտենական է ընկերության գոյության և զարգացման սկզբունքը, այնպես որ մի որևէ դարաշրջանի հատուկ չի կարող լիներ անհատականության պաշտամունքը: Խուլ կամ բացահայտ, նրա պայքարը զանազան անուններով և ձևերով, ակոսել է մարդկային պատմությունը իր սկզբնական օրերեն: Եվ նա չի վերջանա՝ առանց սպառելու իր վերջին եռանդն ու ուժը: Ընկերային զանազան աշխարհայացքները կամ վարդապետությունները մի րոպեով քողարկում են իրականության ճշմարտությունը, և մինչդեռ Սոցիալիզմը ամենայն ազատությունների անունովն է երդվում, իրականության մեջ նա պիտի լինի լավագույն պետական և ընկերային կազմակերպությունը բոլոր նրանց համար, ովքեր պետական որևէ այլ կազմակերպությամբ և ձևերով չեն կարողացել իրենց նպատակին հասնել: Այս անկյունից դարձյալ ոչ մի տարբերություն չկա Սոցիալիզմի և ամբաստական կամ կապիտալիստ պետությունների ըմբռնման մեջ: Երբ հնարավոր լինի լավագույն պետությունը, այն ժամանակ ոչ մի տեղ չի մնա անհատական նախաձեռնության, ինքնուրույնության և ազա-

տուժյան. այն ժամանակ կմեռնի անհատը, որովհետև պիտի ապրի պետությունը: Բայց սա կլինի մի ճշմարիտ հետադիմություն դեպի «բնությունը», որ իր մեջն այլևս մարդ չունի, այլ անասուն և զորչ գանգվածներ ու երկոտանիների հոտեր, որոնք թև չունեն, սակայն:

Մարդու գոյության մեջ համայնական ձևի ժխտումը նույնքան անհեթեթություն է, որքան սոսկ անհատական ձևի պաշտամունքը, բայց մարդկային իմաստությունը անզոր է երկուքին էլ տեղ տալու պատշաճորեն կյանքի մեջ: Կործանվող պետությունները և հեղափոխությունները վայրագ և անասնական անհատականությունների զարգացման հնարավորությունները ցուցադրում են մեզ՝ պարտադրելով հավաքական կամքի ցանկալի հակադրեցությունը: Խաղաղության և անկախության մեջ կազմակերպված պետությունները և հասարակությունները սարկացնող և հոտային բնազդների զարգացման հնարավորությունները սպառում են՝ պարտադրելով մեզ անհատական խիզախ ըմբռնությունների հակազդեցությունը: Եվ ահա թե ի՞նչու, միշտ միևնույն տառապյալ մարդկությունն է, որ պիտի փրկել մշտապես՝ իբրև անհատ, որ չի ուզում սարկանալ և անմարդանալ հոտային հավասարեցնող և հարթաչափող ուժերի առաջ և իբրև հավաքականություն ու համայնք, որ չի ուզում ոչնչանալ և սրսրվել մի մասնավորի առաջ: Այս կարող է ընդհանուր-մարդկային նշանակություն ունենալ, բայց իբրև չափազանց ընդհանուր, այլևս ոչ մի տեղի և չրջանի չի կարող հարմարվել. ամեն ժամանակ ունի իր իմաստությունը, իսկ սա ոչ մի ժամանակի էլ չի պատկանում: Այդ պատճառով էլ անտեսանելիորեն հետու է գտնվում այն ժամանակը, ուր պիտի աչխատել սահման դնել անհատականությունների զարգացման, երբ ամեն մարդ գիտե, որ մարդկային պատմությունը եղել է մի սահման անհատականության: Մասնի ոչնչացումով պահպանվել է մի ամբողջություն, որ այլևս ոչինչ չունի իր մեջ իր իսկ մասերից: Բանականության դրած սահմանը եղել է բանականության սահմանը, այդ պատճառով էլ անհատականության ազատագրությունը կմնա մի հավիտենական պարտականություն: Երբ աչխարհի վրա քաղաքական հարց չմնա այլևս, կմնա, սակայն, մեծագույնը, որ պիտի լինի վերջին պայքարը անհատի ապատագրության:

XII

ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ

Մեր դարի սոցիալական սնունդը թերի կլիներ ամենայն ստամոքսի համար, որ դեռ չի ինքնորոշվել, որովհետև սոցիալիստական մարդ-ստամոքսի համար ինքնորոշումը մի պատահական համեմունք էր, որ առանց մեր պատերազմին չպիտի ստանար երբևիցե քաղաքացիական իրավունք այս չափազանց անհրաժեշտ կյանքի մեջ:

Բայց ինքնորոշումն էլ հերթից դուրս դարձավ հերթական մի հարց մեր դարում: Ազգային հարցի լուծման համաստուքյունն էր կազմում նա ամենից առաջ, և այդ օրերին նա ինքնավարություն էր, որ. սակայն, խնդրվում էր և պատահում էր նաև, որ չնորհվում. իսկ մի օր էլ, անակնկալ կերպով, ինքնավարության պայմանը դարձավ ինքնորոշումը: Քաղաքային ինքնավարություն, կուլտուրական ինքնավարություն և վերջապես ազգային ինքնավարություն մի ուղեղային մեծ հեղափոխությամբ դարձան ինքնորոշում. այսինքն, պատմության փորձր մեզ ցույց տվեց. թե չկա ճշմարիտ ինքնավարություն առանց տարրական ինքնորոշման, կամ որ նույն է, ինքնավարության պահանջը ինքնորոշման պահանջն է: Թե ինչքան հեռու են իրարից այդ երկու դրացիները, մենք պարզ կտեսնենք, եթե նկատի ունենանք, որ ինքնորոշում պահանջողները ուզում են անկախության մասին խոսել, իսկ ինքնավարություն պահանջողները շատ հաճախ անկախություն ունեն: Ինքնորոշման ծննդաբանությունը, սակայն, մեզ պիտի ցույց տա նրա իրագործման այլանդակությունները և անկարելիությունները:

Որովհետև պատերազմը մարդկային ուժերի և կարողության սահմանները սպառելուց հետո երևան բերից ստորմարդկային թաքնված ուժեր և կարողություններ, որոնք ինքնորոշման փայլուն ցուցանակի տակ պատերազմի տրամաբանության նոր կարելիությունները իրագործեցին:

Պատերազմի հարազատ որդիներն էին կեղծ և անկեղծ ամեն տեսակ հեղափոխությունները, և դրանք արտահայտություն դատն ամենախոնարհ և գոյության իրավունքը դեռ չնվաճած սոցիալական համախմբումների մեջ: Իրենց հեղափոխական անկեղծության մասին մի րոպե իսկ չկասկածողները, քաղաքական վայրկյանի ամբողջությունն ընդգրկելու համար ինքնորոշման պահանջի հաջող մանևրիկ-

նները դարձան, և մեծ պոլիտիկոսների մեջ անգամ կարելի եղավ մեկը գտնել, որ առանց հեղափոխության և մի կտոր փիլիսոփայությամբ հիմնավորեց ինքնորոշման պահանջը՝ որպես փոքր ժողովուրդների և ազգերի մարդկայնորեն և ազատ ապրելու պահանջը: Հեղափոխությունը և հակահեղափոխությունը այս կետում եղբայրացան՝ չնորհելու և պաշտպանելու ինքնորոշումը տառապող մարդկության:

Սակայն, ինչ որ չէր կարողացել հասկանալ ավանդապահ, եսասեր և բռնակալ մարդկությունը, այդ չհասկացավ նաև հեղափոխական, այլասեր և ազատական մարդկությունը: Հեղափոխությունը մի ստրկացնող հավատարմության մեջ սիեզերական ոգու զգայախաբությունները գրգռեց և անտեսական տարբերությունների տեղափոխությունը փոփոխելով, առանց իհարկե նրան ոչնչացնել կարողանալու, քաղաքակրթությունը ոչնչացրեց: Իսկ ինքնորոշումը ազգերի եղբայրացման մեծ իդեալներով ազգերի կործանման յավաղուչ ճանապարհը գծագրեց՝ չարունակելու համար պատերազմը, որ ինքնորոշման հակառակորդներն էին սկսել:

Ահա թե ինչպես ծնավ ինքնորոշումը մեծ պատերազմի հրդեհներից մնացած ավերակներում: Հողից, ջրից և օդից զրկված սոցիալական խոնարհ համախմբումներ տասնյակ տարիներով պահպանել էին հավատքի պես անհիմն ու անհնարան մի միտք, որ ժամանակավրեպ և մի նոր ճևով հող, ջուր և օդ պիտի տար իրենց չոր երևակայության անապատներին, մինչև որ կարելի լիներ հին ճևով և մշտապես նվաճել իրավունքը՝ մեծերի ընտանիքում մի փոքրիկ տեղ ունենալու: Այդ մտքերից ոմանք, դեռ չծնված, արդեն հասունացել էին, շատերն էլ ընդհակառակն, իրենց մեծ տարիքին հակառակ, մանկական թոթովանքներից դեռ չէին անցել: Կային, որ, ոտկայն, ծնվեցին, երբ հրդեհները մարելու վրա էին, և կան դեռ, որ, ոտկայն, չդիտեք թե ի՞նչու չծնվեցին: Ավստրիայի, Հունաստանի և Թուրքիայի ավերակներում բոլոր ծնունդները վիժուկների կերպարանքն ունեցան, որովհետև, միևնույն հավատարեցնող պայմանների մեջ դրվեցին թե՛ հասունացածները, և թե՛ չհասունները, օր-պակասները: Ինչ որ տաք էր մեկի համար, ցուրտ կլիներ մյուսին, ինչ որ շատ էր՝ քիչ, առաջ էր՝ հետո, և մեծ ու փոքր, և նեղ ու լայն, և վերև ու ներքև: Ո՞վ հասկացավ իդեալին հասնելու ապարատիլիությունը: Ո՞րովհետև, իսկապես, ժողովուրդները հասնում էին իրենց իդեալին, որի իրականությունը ապարատիլի էր ամենայն իդեալազուրկ իրականության պես: Ոչ այնքան, որ անկերպարան արարածի կազմակերպությունը գերմարդկային ուժեր էր պահանջում փոքր-մարդկա-

յին զանգվածներից, այլ որքան ծնունդի անսպասելիությունը, հղակարծությունը և անակնկալությունը անընդունելի և մարդկային տրամաբանության անհասանելի դրություններ էին ստեղծում: Երկնքից ընկածի պես էր ինքնորոշումը իր առաջին օրերում: Այն, որ ամենքին էր պատկանելու, տեր չունեցավ առջի բերան և բավական ժամանակ անցավ, որ մարդիկ հասկացան, թե անգամ երկնքից ընկածի տերը առաջին հասնողն է:

Դեռ կարելի էր հաշտվել երկնքից ընկածի հետ, եթե միայն նրա տեղը գիտցվեր: Որովհետև ապշանքը, դանդաղությունը, ծուլությունը և անտերությունը տեր լինել ցանկացողների, պետք ունեցավ երկար ձևականություններ կատարելու, որպեսզի պարզ և որոշ վճռվեր, թե ո՞ւր պիտի ընկներ երկնքից ընկնողը: Այնպես հեշտ չգտավ իր տեղը նա, որ ասում էին, թե բոլորի սրտում տեղ ուներ: Եվ երբ որ գլուխը դնելու անկյունը գտնվեց, պետք եղավ առագաստի մահիճը պատրաստել մայրանալու ձգտող նրա որդիների և որովայնի համար:

Եվ պատահեց, որ ինքնորոշումը տվին նրանք, որոնք չպետք էր տային: Ինչպես անհավատալի է քաղցած չան առատաձեռնությունը, որ բարեսրտությամբ իր որսը նվիրում է իր ընկերոջ, այնպես և նվիրվածների մեծ մասը անհավատալի էին այն ձեռների մեջ, որից գալիս էին: Ո՞վ հասկացավ այդ տալու վարպետության մեջ թաքնված առնելու իմաստությունը: Դիշատիչների առաքինությունը սարսափելի է: Ամենավատ չարիքը, որ չարը կարող է հասցնել, այդ էլ որևէ տեսակի բարիքն է. ինչքան բարի են չարերը, որ միշտ չար են մնում: Ինքնորոշումը այն բարիքն էր, որի նման չարիք աշխարհը չի տեսել: Թուրքը՝ հային, գերմանացին և ռուսը՝ լեհին, Ֆրանսիան՝ Սիրիային և բոլորը Ուկրաինային:

Տիրոջ, տեղի, տալու և առնելու այս հակասությունները կարող էին պարտկվել ազգային եսի և ինքնապիտակցության համաղրող միության մեջ, եթե այդպիսին գոյություն ունենար: Որովհետև, իսկապես նա, որ ստեղծում էր, դեռ նոր պիտի ստեղծվեր: Ընդհանուր մարդկայինը պիտի կազմակերպվեր մասնավոր-դասակարգային ուժերի ձեռքով, այսինքն մասը, կամ մասերը պիտի վերցնեին ամբողջի դերն ու պարտականությունները, այսինքն ազգություն պիտի ստեղծվեր ապազգային տարրերից և ապազգային մեթոդներով: Ինքնորոշումը իր ներքին հակասություններով մի անժխտելի փաստ պիտի լիներ Սոցիալիզմի անանկության: Այդ պարզ կտեսնվի, երբ նկա-

սի ունենանք, թե ինչպես կազմակերպվից ինքնորոշումը մեծ պատերազմի հրդեհներից մնացած ավերակներում:

Առաջին հանդողը, որ ևկավ տեր լինելու անտերության ինքնորոշումին, հող ավեց ամենից առաջ իր պետ չբաած ռահներին: Կապիտալը և բանապետությունը իրենց երևութական աղգայնացումով ստեղծել էին ժողովուրդների համակեցության տարօրինակ խառնարաններ, որոնք միայն սոցիալիստական ցնորամտության մեջ կարող էին երևակայելի լինել: Այդ միապետական Սոցիալիզմը սոցիալիստականորեն չարուհանակելու անհաջող փորձերը կարճ ժամանակում անհետացան, և պետք եղավ վիրահատություն, պատմ և բաժանում կատարել մի քիչ ինքնորոշվելու համար, պետք եղավ հող գտնել և նրա սահմանները գծել: Ոչ ոք չգիտե, թե ի՞նչպես եղավ, որ նա, որ միայն հայկական կարող էր լինել, վրացական եղավ, և թուրքականը՝ հայկական եղավ: Ոչ մի Սոցիալիզմ մեզ չի հասցնի այդ իմաստության: Ինքնորոշվող երկրներ կային, որոնք տասնյակ տարիներով վիճել էին հողի և սահմանի մասին ու ոչ մի ելք չէին գտել. երբ պետք եղավ այդ վիճակից դուրծի անցնել, այն ժամանակ դուրծը կատարվեց՝ առանց որևէ կողմի ցանկացածը կատարվելու, ճիշտ ինչպես վեճը, որ Թիֆլիսը հային էր տալիս և Երևանը՝ թուրքին: Ու աշխարհին ամեն տեսակ ազատություններ տվող սկզբունքները բանության տեսակներ երևան բերին, որ աշխարհը չէր տեսել: Եվ սահմաններ էին գծվում պատմության բոլոր անտրամաբանություններով, մի տեղ տնտեսությունը, մյուս տեղ կուլտուրան, մի տեղ՝ մոտավորությունը, այլ տեղ՝ հեռավորությունը, մի տեղ՝ ազգությունը, մյուս տեղ՝ բանվորությունը, մի տեղ՝ ժողովրդի կամքը, մյուս տեղ՝ իշխողների կամքը վճռում էին, թե հողի այս չերտը ի՞նչ անունով պիտի ինքնորոշվի: Լավագույնը, իհարկե, երբ այդ բոլորը համաձայն էին, բայց դա բացառություն էր, և սովորություն էր, որ մեկը միայն դրանցից վճռում էր, և մնացյալ բոլոր արամաբանությունները ոչնչանում էին, կամ դառնում այդ ձևով վճռված ինքնորոշումների պատրաստի դերակատարներ: Ժողովուրդների հակայական տեղափոխություններ, կոտորածներ, տեղահանություններ և այլ տեսակի չարժումներ դառնում էին բնական հետևանքներ ժողովուրդների ինքնորոշման, որ, սակայն, ամենքին պիտի տար ամեն տեսակ երջանկություններ: Դժվար է ասել, թե ժողովուրդներին ոչնչացնելու համար ինքնորոշումից ավելի լավ ձև կա՞:

Մինչդեռ հողի ինքնորոշումը սահմանազծության հարց դարձավ: Զուգընթացաբար առաջ էր գնում նաև պատմական և ընկերային

խոշոր հաստատությունների ինքնորոշումը, որ այս անգամ կոչվում էր ազգայնացում՝ ազգի, լեզվի, օրենքների, բանակի, կրթության և այլն:

Սկզբնական հապճեպը մի անգիտակից վարպետությամբ քողարկում էր ազգայնական հակասությունները: Երբ փորձում էին, դպրոցն ազգայնացնելով, կրթությունն ազգայնացնել, շատ քչերն ուղեցին տեսնել, թե ինչքան քիչ իրավունք ունեին ինքնորոշվելու այն մանուկները, որոնց կարելի էր ազգայնացնել գուցե միայն դպրոցները փակելով: Բայց կրթվող նյութի ըմբռոստությունը միայն ներելի կարող էր լինել, եթե տանելի լիներ դոնե կրթող նյութի կարողությունը և որակը: Եթե որևէ բան չէր հաջողվում սրանց, անժխտելի է, որ հաջողվում էր արմատացնել նրանց մեջ իրենց ճիգի անզորությունը, անչնորհք կապկելու առավելությունը և տառը տալու ու ոգին առնելու ազգայնացման գերազանց մեթոդը: Ով չի ուզում անցյալը տեսնել, նա դոնե պետք է տեսնի ապագան, որպեսզի կարողանա այս ձևի ազգայնացման մեջ տեսնել ոչնչացող ինքնորոշումը և համոզվել՝ ավելի մեծ տուրք տալու ժամանակին, քան կամքին և տգիտությանն: Այս խորհուրդն ավելորդ կլիներ, եթե չծառայեր ապացուցանելու, թե ինքնորոշումը սպանվեց նաև կրթության ազգայնացումով:

Մեծ պատերազմը նյութեր շատ ուներ իր վիժուկներին կերակրելու համար, հատկապես բանակի ազգայնացման հարցում: Որովհետև մի անգիտակից ազգայնացում կար կռվող բանակների մեջ հեղափոխությունից առաջ, երբ շատ հեշտությամբ էին կազմվում կամավորական բանակները: Ազգայնացման նախատարերքն էին դրանք, որոնք հետզհետե զանազան սրբագրություններով, հավելումներով, կրճատումներով և թարգմանություններով պիտի կատարելագործվեին:

Թիֆլիս, Երևան, 1917–1920 Վարազդատ Տերոյան
Բնագիր, Ձեռագիր

Ի՞նչ բան է Intuition-ը
Ի՞նչ բան է Einfuhlung-ը
Կապեր և փոխհարաբերություններ
Առարկա և ենթակա
Արտաքին և ներքին
Եսը և գիտակցություն (անգիտակիցը, հանճարը)
Պատճառականությունը
Հոգեբանական մոնիզմը
Գեղեցիկի և ճշմարտի սահմանումը

INTUITION ԵՎ EINFÜHLUNG ՈՐՊԵՍ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՈՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔԸ

(Մեկնաբանական մի փորձ)

I

Մեր դարավերջի և դարասկզբի փիլիսոփայությունը անկասկած ամենալուրջ ջանքերն է կատարում, որ երբևիցե եղել են՝ հասնելու համար գիտության և փիլիսոփայության բոլոր ասպարեզներում մի անհերքելի և անհակասական մոնիզմի: Այդ ջանքերը դադարություն ունեցել են ամեն ժամանակ էլ: Նույնիսկ երկարմատյան Դարբնի ամենամեծ ներկայացուցիչներն էլ մոնիզմի իրենց ձգտումից են հասել դուալիզմին: Այսինքն, ձգտելով մարդկային ոգու անհակասական գործունեության, նրանք վերջիվերջո հասել են իհարկե դրան՝ հակասությունը տեղափոխելով մարդուց դուրս: Այսպես է, որ կարտեզիանիզմը մի հոգեբանական մոնիզմ է, բայց բնազանցական դուալիզմ: Այս մեկ օրինակը հատկանշական է այդ տեսակի բոլոր ջանքերի համար էլ: Մտքի միևնույն ասպարեզում չէ, որ մոնիզմի որոնումը մեզ տալիս է դուալիզմի դյուրը:

Աշխարհայացքի այս երկու հիմնական տարրերը, որոնք փիլիսոփայության պատմությունը սկզբից ևեթ երկու անհաշտ բանակների են բաժանել, հիմնվում են իսկապես մարդու մտության և անհակասականության մի տեսակ անդիտակից, բայց ամենաուժեղ ձգտումի վրա: Մոնիզմի և դուալիզմի փոխհարաբերության անթիվ սահմանափորումներից ընտրելով այս երկուսը՝ մենք նրանց բացատրում

ենք ինքն իրենով: Միության ձգտումից է առաջ գալիս միության անհրաժեշտությունը, կամ փոխադարձաբար. միության անհրաժեշտությունը ենթադրում է մարդու մեջ գոյություն ունեցող, միության ձգտող մի գործունեություն: Բացի այդ, այստեղ միությունը համարյա թե նույնանում է անհակասականության հետ: (Միություն=unite, Einheit): Փիլիսոփայության առաջին թոթովանքները եղել են դրանց մասին: Միություն ասելով անհակասականությունն են հասկացել մի տեսակ չարտահայտված ձևով: «Ոչնչից ոչինչ առաջ չի գալիս», «հողը հողով, ջուրը ջրով է հասկացվում» ամենահին փիլիսոփայական դարձվածքներն են, որոնք նույնության չեզոտված պահանջի մեջ դնում են նաև միության և անհակասականության տարրերը: Փիլիսոփայությունը չատերը սահմանավորել են ոչ թե ըստ իր բովանդակության, այլ ըստ իր կատարած աշխատանքի տեսակին, կամ որակին: Իսկ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ մի մտաշխատանք, որ ձգտում է միության, լինի դա բոլոր գիտությունների միասնականությունը, մի գիտության ընդհանրացումների և սկզբունքների միությունը, թե մարդու հոգեբանական գործառնությունների միությունը: Իսկ անհակասականությունը անմիջապես մտնում է միություն գաղափարի մեջ. որովհետև միությունը հասկանալով ոչ թե այլազանությունների միասնականությունը, այլ մեկությունն, մենք այլևս չենք կարող տարրեր, տարբերություններ, զանազանություններ, բաղկացուցիչ մասեր գտնել նրա մեջ: Իսկ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ անհակասականություն, որովհետև ինչ որ նույնը չէ, մի քիչ տարբեր է, ինչպիսի ուժեղ միասնականություն էլ ունենա այդ ուրիշի հետ, կունենա անպատճառ նաև մի տեսակ հակասում: Անհակասականությունը միության վերջին ապացույցն ու ապաստարանն է:

* * *

Այս բառադիտական նախաշխատանքի մեջ խոսվեց նաև, թե ինչպես է, որ մոնիզմի այդ ուժեղ հիմունքները չեն կարողացել, սակայն, մոնիստական մի տևական չենք պահպանել, և մոնիզմի ձգտումը այսօր էլ նույնքան ուժեղ է, որքան, երբ դեռ ոչինչ չէր կատարվել այդ ուղղությամբ: Ամենայն փիլիսոփայություն ձգտում է «վերջին խոսքն» ասել, որից հետո հնարավոր չլինի այլևս նորն ասել, կամ տարբերը: Ջուր աշխատանք է այդ, իսկապես: Նոր ձևերը և շրջանակները միշտ պետք է հնարավորություն տան չատ հնություններ թարմացնելու և իբրև ստեղծագործություն երևան բերելու:

Բայց մտաչխարհում մի ասպարեզ կա, որտեղ թվում է, թե կարելի է հասնել մի անհակասական մոնիզմի, որ թվում է, թե դեռևս չի ուսումնասիրված և պեղված իր բոլոր ծալքերով: Միևնույն աշխատանքները կատարելով մի այլ ասպարեզում՝ թվում է, թե կարելի է հասնել այնպիսի արդյունքների, որոնք կարող են տարածվել շատ ավելի հեռուները, քան իրենց բնագավառի սահմանները թույլ կուտան: Գեղարվեստական մոնիզմի փորձը այդ տեսակ աշխատանքներից մեկն է: Եթե այդտեղ կարելի լինի դանել մի անհակասական մոնիզմ, այն ժամանակ նրա տարողությունը ահագին կլինի և կարող է մի քայլ ավելի առաջ տարած լինել մեզ փիլիսոփայական հիմնական առեղծվածների նեթե ոչ լուծման, դոնե հարցադրության մեջ: Անցնող XIX դարում երևան եկած գեղարվեստական սիստեմները այդ մտահոգությունից ավելի աշխատել են գեղարվեստն էլ սիստեմ դարձնել, ինչպիսին եղել են դարերի ընթացքում բնազանցությունը, աստվածաբանությունը, արամաբանությունը և բարոյագիտությունը: Այդ տեսակետից նրանք չեն կատարել իսկապես մոնիստական աշխատանք: Ճշմարիտ մոնիզմի փորձը գեղարվեստի աշխարհում պետք է երևան բերե այն տվյալները, որոնք դուռ գեղարվեստական գաղափարներ լինելով հանդերձ՝ ունենան անհրաժեշտ լայնությունը և խորությունը՝ լինելու նաև հոգեբանական և բնազանցական դոնե օժանդակ–գաղափարներ: Պետք է փիլիսոփայության մյուս ճյուղերի ցուցադրած գաղափարներից հատկապես առարկայի և ենթակայի անլուծելի առեղծվածը մի այլ ճանապարհի մեջ դնել: Արտաքին և ներքին աշխարհի մի այնպիսի փոխհարաբերություն մտապատկերել, որ այլևս հնարավոր չլինի նյութապաշտության և ոգեպաշտության անհաշտ պայքարը:

Այս սահմաններում ահա մենք տեսնում ենք մի անսահման բեղմնավորություն այն երկու գաղափարների մեջ, որոնց մտածելու հանդգնությունը ոչնչով չի արդարանալու դուրս, քանի որ Intuition-*ի և* Einfühlung-*ի գաղափարները այս նպատակին ծառայեցնող և ոչ մի ուսումնասիրություն չճանաչելով հանդերձ, նրանց սոսկ վերլուծության նվիրված և ոչ մի հեղինակություն էլ չունենք ձեռքի տակ: Այդ երկու գաղափարների միայն ներկայացումն իսկ մեծ նորություն կարող էր լինել հայերեն կարդացողների համար: Որովհետև Թ. Լիպսի և Ե. Ֆոլկելտի խոր ուսումնասիրությունները դրանց մասին նորություն են նույնիսկ Եվրոպայում: Բայց որոշ տեսակետներով ավելի դժվար և առայժմ անհնարավոր համարեցինք այդ, քան այն, որ լինելու է մեկնաբանական մի փորձ՝ այդ երկու*

գաղափարները մի ուրիշ նպատակի ծառայեցնելու և ներկայացնելու որպես ներքին ապրումների և անկախ մտածումների մի համեստ փորձ այդ ասպարեզում:

II

Այս հիմնական պայմանավորումներից հետո առանց լայնորեն տարածվելու Intuition-ի և Einfühlung-ի վերլուծության վրա պետք է, սակայն, մի ժամանակավոր սահմանավորման ենթարկել նրանց և ապա անցնել դրված պրոբլեմին:

Մի քանի բառեր կան, որոնք մոտավորապես համապատասխանում են հայերենի մեջ Intuition-ին. ինքնիմացություն են ասում, հայտնատեսություն, մտատեսություն, մտահայեցություն և այլն: Երկու ապգի բառերն էլ ինքնին ոչինչ չեն բացատրում, եթե նրանց բովանդակությունը պարզ ու հստակ չէ մեզ համար:

Ճանաչողության (connaissance, Erkenntnis) տեսակներից մեկն է մտատեսությունը: Միայն ճանաչողությունը համարելով հոգեկան ֆունկցիաներից մեկը նրա տեսակների մեջ ուրեմն, մնում է որոշելու մտատեսության տեղը: Փիլիսոփայության այլևս անհերքելի փաստերից է, որ զուտ զգայական ճանաչողությունը ամենատարր տեսակին է պատկանում: Լիքը խաբկանքներով, ցնորքներով, թռուցիկ և խաբուսիկ գիտակցական վիճակներով զգայական ճանաչողությունը երբեք չի կարող հասարակ ժողովրդական ծանոթության սահմաններից անցնել և ընդհանուր, պարտավորիչ ու անհրաժեշտ ճանաչողության օրենքներին հասնել: Միշտ կապված փորձի հետ իրավամբ փորձին է վերագրում նա նաև այն, ինչ որ փորձի միջոցով չի ձեռք բերել:

Մյուս կողմից դրան հակադրված է զուտ իմացողական (conceptuel, begrifflich) ճանաչողությունը: Ճանաչողության բարձրագույն տեսակ է համարվել զա, որ զգայական ճանաչողության թերություններից զերծ է և, սակայն զերծ չէ յուրահատուկ թերություններից: Մերժելով զգայականի տուրքը, որ անմիջականություն, ուղղագծություն և փորձ է մտցնում ճանաչողության մեջ իմացական ճանաչողությունը հարկադրված է եղել անընդհատ կատուցումներ կատարել, իրականությունից կտրվել իրականությունը հասկանալու համար և մտքի անընդհատական անդրադարձումների տալավորության սահմաններում մնալ: Այս «ստորի» և «բարձրի» մեջտեղ կան բազմատեսակ ճանաչողություններ, որոնք վերջին վեր-

լուծման մեջ կենտրոնանում են այս կամ այն բևեռի վրա: Ճանաչողության տեսությունը այդպես է եղել, և դուցե այդ է պատճառը, որ պայքարը, ներհակությունը և ինքնահակասությունը անպակաս են եղել այդպես ներկայացված իրականության, կամ որ նույն է՝ փիլիսոփայական ուղղություններին և սիստեմների մեջ: Սակայն, մի ուրիշ տեսակի ճանաչողություն կա, որ հնարավորություն է տալիս մեկից հուսահատվելուց հետո, չընկնել տատանումների մեջ՝ մյուսին դիմելու համար, այլև երկուսի փորձն ունենալուց հետո՝ չընկնել ճանաչողական սկեպտիկության և ագնոստիցիզմի մեջ: Այս վերջին տեսակի ճանաչողությունն էլ կարող է ունենալ յուրահատուկ թերություններ, բայց համարյա թե բոլորովին զերծ է այն հիմնական թերություններից, որոնք զգայական և իմացողական ճանաչողությունը դարձնում են շատ պակասավոր, մշակման և կատարելության կարոտ գործիքներ:

Այսպես, ուրեմն, ճանաչողության երկու բևեռներից և ոչ մեկին էլ չի մոտենում մտատեսությունը: Որովհետև ճանաչողության բացասական վայրկյանն է նա, ուր զգայական և իմացողական գործոններր մի անզուգական համապրություն են կազմում և աչքեր տալիս գաղափարներին, կամ անդրադարձում առաջին զգայական տպավորության: Նրա մեջ իրականությունը և ճշմարտությունը ակնթախություն ունեն թեև, բայց դա ոչ թե տպավորության ակնթախությունն է, այլ գյուտի և հայտնության ակնթախությունը: Հանճարի աչքերով տեսնել ենք ասում մենք մի այդպիսի մտատեսության, որ տեսնում է ոչ միայն, ինչ որ ներկա է և շոշափելի, այլև ինչ որ նրան հարակից և ներակա է, ու անտեսանելի և անշոշափելի: Ամբողջությունը տեսնել նրա մասերի մեջ, նույնիսկ մեկի մեջ, մի անգամով «տեսնել», ինչ որ անթիվ անգամներով հնարավոր չէր լինի տեսնել: Գեղարվեստական ստեղծագործության առաջին նախապայմանն է սա, որով, մինչդեռ կիրարկումը երկար ժամանակ է պահանջում, բայց երկը պատրաստ է իր առաջին մատուցման մեջ: Բացի այդ, սովորական ինտուիտիվ ճանաչողությունը չէ սա, քանի որ մարդկային առօրյա հարաբերությունների մեջ մեզ առաջնորդում է մի տեսակ անգիտակից իրավական մտատեսություն, երբ մենք գիջում ենք, կամ պահանջում սուկ մեր էության ներքին բովանդակությամբ՝ առանց խոսքի և չարժումների: Մտատեսությունը, եթե այսքան լայն տեղ է բռնում կյանքի մեջ, պակաս կարևորություն չի ընծայում նաև մարդկային ոգու գործունեության բոլոր ասպարեզների վերաբերմամբ՝ ամենահին ժամանակներից սկսած: Բոլոր սխա-

տեմները, ուղղությունների սկզբնավորությունները, գրական կամ գեղարվեստական գլուխգործոցները ինքնին ներկայացնում են մտատեսության մի-մի փառավոր հուշարձաններ: Այդքան ընդարձակ և հին լինելով հանդերձ՝ մտատեսությունը երբեք, սակայն, չի դարձել ճանաչողական մի գործիք, նման մյուս տեսակի ճանաչողություններին: Այստեղ էլ կա անմիջականություն, բայց ոչ զգայական ճանաչողության պարզամտությամբ: Այստեղ էլ կա անդրադարձումը, բայց ոչ իմացողական ճանաչողության բեկբեկումներով և դանդաղությամբ: Իրականությունը սրա մեջ չի մշակվում, այլ վերարտադրվում իր բոլոր հատկություններով: Եթե Հ. Բերգսոնի հետ ընդունենք, որ իրականությունը մոզաիկային չէ, ինչպես մեզ ներկայացնում է զգայական և իմացողական փիլիսոփայությունը, այլ հոսանուտ և երաժշտական, ապա մեզ համար պարզ կլինի, թե ինչքան դժվար է հոսող իրականությունը նյարդային գրգիռների և տպավորությունների կամ թե իրար չթափանցող, կղզիացած բառերի և գաղափարների մեջ դնել: Այդ դժվարությունը բոլորովին գոյություն չունի մտատեսության մեջ, որովհետև նա հոգեկան ուժերի մի ներդաշնակ գործակցություն է, ուր վերլուծության և համադրության աշխատանքը կատարելով չէ, որ մարդկային ոգին իրականությունը բռնում է և վերցնում: Բացի այդ մտատեսությունը իրականության սոսկ լուսանկարումը չէ, ուր առարկան և ենթական անգիտակից փոխհարաբերության մեջ են, այլ մի ստեղծագործական վերարտադրություն է նույն իրականության: Բայց այս մասին հետո:

Մտատեսությունը սկզբից ևեթ մնացել է գեղարվեստական ոգևորության և ստեղծագործության սահմաններում: Նա նույնացել է մտահղացման և այս վերջինի ամենախոր ըմբռնման սահմանում: Նա երբեք չի ստացել ճանաչողական գործիքի դերը, երբեք չի ծառայել ճշմարտության որոնման, կանգ չի առել մարդկային «մտքի դրած և լուծել չկարողացած» պրոբլեմների վրա: Ամենից շատ նա եղել է զգալու ընդհանրացումը, բայց երբեք մտածելու, և ոչ էլ երկուքի համադրությունը: Մտատեսության տալով այդ նոր դերը՝ մեկ կողմից նրան հեռացնում ենք սովորական մի ճանաչողությունն լինելուց, մյուս կողմից էլ՝ մի համադրություն ենք կազմում ճանաչողական երկու գործիքներից՝ զգայական և իմացողական ճանաչողությունից: Այսպիսի խոշոր դեր տալով դուռ գեղարվեստական մի գաղափարի՝ մենք դեռ պետք է վերադառնանք՝ նրա մոնիստական աշխատանքը գնահատելու:

III

Գեղարվեստական ամենի մեծ տարողություն ներկայացնող մի գաղափար է Einfühlung-*ը, որի համար հայերեն և ոչ մի բառ չկա և գերմանական լեզվին հատուկ նորակազմ բառերից է, որով հնարավոր է եղել իրականության պահանջներին համապատասխան մի նոր բառ գործածել:* Fühlen *նշանակում է զգալ,* Gefühl *- զգացում, իսկ* Einfühlung *նշանակում է մեջ զգալ, ներ զգացում: Այստեղն էլ բառը չէ կազմված:*

Ամենից առաջ պիտի ասել, որ Einfühlung-*ը ճանաչողության տեսակներից ոչ մեկի տակն էլ չի մտնում ուղղակի կերպով: Անշուշտ, նրա ծագման բնագավառը զգայական ճանաչողությունն է, բայց ոչ զարգացման ասպարեզը: Որովհետև իբրև առարկայի և ենթակայի մի ինքնածին և առանձնահատուկ փոխհարաբերություն՝ նա առարկայի ենթակայացումն է և ենթակայի առարկայացումը: Գեղարվեստական ապրումների գերագույն վայրկյանն է դա, ուր մենք ստանում ենք տալով, փոխ ենք առնում ստեղծագործելով, մտնում ենք մի տեղ՝ մեր մեջ տեղափոխելով առարկան: Ես ինձ զգում եմ արևի մեջ, ես իմ մեջ արևն եմ զգում. ես ինձ զգում եմ դաշտանկարի մեջ չարունակ, իմ մեջ ես զգում եմ մի դաշտանկար չարունակ: Գեղարվեստական ապրումների զագաթնացումներ և խտացումներն են սրանք, որտեղ ոչ միայն կրավորական, այլև ստեղծագործական ապրումներն են գործում ամենից ավելի: Նրա մեջ ոչ միայն մարդը, այլև արտաքին աշխարհը հապես փոխված փոխհարաբերության են մտնում իրար հետ: Ենթակայի զգայական ընդունակությունները լայնանում են և միաժամանակ կենտրոնանում: Ինչ որ նա վերցնում է, իր մեջ կատարված մի մտաշխատանքի մշակումն է միայն և այն չափով է միայն արտաքին աշխարհը մասնակից այդ աշխատանքին, որչափով նա համապատասխանում է մտաշխատանքից բխող զգայական մտապատկերների հիմնական հատկություններին և պահանջներին: Առանց* Einfühlung-*ի չկա գեղարվեստական ստեղծագործություն և ապրում: Կամ որ նույն է, ամենայն գեղարվեստական արժեք ենթադրում է* Einfühlung-*ի մի ուժածին աղբյուր կամ պահեստ: Սա էլ ճանաչողություն է, բայց գեղարվեստական ճանաչողությունը երբեք չի բարձրացել փիլիսոփայական ճանաչողության (*Erkenntnis theorie*): Սակայն, եթե մենք հնարավորություն ունենք գիտակցից դուրս, որևէ այլ ասպարեզում հասնել մի ճանաչողության, որ մեր կարծիքով այլևս ոչ մի պաղտնիք չի կարող ծածկել իր*

մեջ. ի՞նչու համար մենք նրան էլ չպիտի կարողանանք այսպես կոչված «գիտական» ճանաչողության արժեքը տալ: Դրված հարցի կիզման կետը այստեղն է: Բայց նախ պետք է Einfühlung-ի գաղափարը հոգեբանական անհրաժեշտ վերլուծման ենթարկել, հետո նրա և մտատեսության կապերը որոշել, և ապա անցնել դրան:

Ասում ենք Einfühlung*-ը գիտակցական մի վիճակ է: Բայց դա այնքան անորոշ է, որքան, եթե ասեինք, թե զգացմունքային մի վիճակ է: Զգացմունքը, իսկապես, հոգեբանական դեռ չխուզարկված բնագավառների ընդհանուր անվանումն է. ամեն բան մտնում է նրա մեջ, նույնիսկ ճանաչողությունն էլ հնարավոր չի եղել ազատել նրանից: Անշուշտ, մեծ նշանակություն ունի փիլիսոփայական աշխարհայացքը հոգեբանական ֆունկցիաների գնահատման գործում: Բայց այստեղ եթե* Einfühlung*-ը չենք դնում կամքի և մտածողության աշխարհում, այդ նրա համար չէ, որ նա զուրկ է բոլորովին կամային և մտային տարրերից: Նրա ծագումն ու կյանքն ամբողջ մի կամային գործունեություն է, ինչպես և նրա ծավալը միայն դուրս է գալիս դրանց շրջանակից և մտային շատ հատկություններ ստանձնում: Ուրեմն, այս պայմանների տակ պահելով նրան զգացմունքի աշխարհում, մենք տեսնում ենք, որ նա ամենից առաջ ունի զգացմունքի թափը և սրությունը, մեր ներքին էության ամենախոր ձայքերը փոթորկելու և թափանցողության ընդունակ դարձնելու մեջ զգացմունքին խորթ մտապատկերների առջև:*

Գերազանցապես գեղարվեստական է այն մոմենտը, երբ մեր մեջ գործում է Einfühlung*-ը: Ամենից առաջ գեղարվեստական մի երկի ներկայությունն է, որ մեզ դնում է այդ վիճակի մեջ: Մի «գաղափար» է դա, որ մինչև այժմ միայն գեղարվեստական ապրումների հետ է կապված եղել: Բայց քանի որ ոչ մի հաստատուն սահմանավորում չկա գեղարվեստականի և ոչ գեղարվեստականի մեջ, ուստի և կարող ենք ընդունել, թե ոչ թե միայն պատճառը արդյունքն է, այլև արդյունքը պատճառ: Այսինքն ոչ թե գեղարվեստական երկին է միայն, որ մեր մեջ* Einfühlung*-ի հոգեգործունեությունն է առաջ բերում, այլև նրա ինքնածին և բնածին ինքնագործունեությունն է, որ մի գործին տալիս է գեղարվեստական կամ ոչ գեղարվեստական արժեք: Այստեղն էլ նորից վերադառնում ենք նրա ներքին էության և առանձնահատկության:*

Անշուշտ, մեծ նշանակություն ունեն մարդու շրջապատը, միջավայրը, ստացած կրթությունը, ընտանեկան և հասարակական պայ-

մաններն ու դիրքը մարդու գործերի, ապրումների և հոգեկան ուժերի որակի, զարգացման և ուղղության վրա: Բայց, ինչ էլ որ լինեն արտաքին այդ պայմանները, ինչքան էլ մարդը գործելու և դիմակավորվելու լինի սկզբունքներով, օրենքներով և սովորություններով, այնուամենայնիվ մարդու մեջ առաջնակարգ դեր են խաղում մի չափ անբացատրելի ուժեր՝ բոլորովին հեռու այդ արտաքին պայմաններից և սկզբունքներից, որոնք մեզ մոտիկ և մեզ հեռու են պահում որևէ առարկայից կամ գործից: Արտաքին պայմանները երբեք երկու եղբոր նույնիսկ, միևնույն մարդը չեն դարձնում: Ինչպես նաև անհատականությունն բազմազանդակ դաշտիարը երբեք չի բացատրի տարբերությունները, ինչպես որ կան նրանք: Սկզբունքի քարացումը անկարելի պիտի լիներ այնքան պլաստիկ դարձնել և տեղծել թյուրիմացությունների այն անսահմանությունը, որ սկզբունքների մեջ կա, և միայն սկզբունքների մեջ կա: Որովհետև իսկապես մարդու էությունը չեն բացատրում դրանցից ոչ մեկն էլ՝ նրա մասնակի վայրկյանները միայն, որոնց վրա իշխում է գարձյալ նրա մեջ հանգչող այդ անբացատրելի ուժը: Մարդը մի հանդուցյալ է անթիվ կապերի և օղակների, որոնք մեկնում են բոլոր իրերից և էակներից ու խաչաձևվում նրա մեջ: Ամենայն ինչ մեզ կապում է և վանում, մեր մեջ մտնում և դուրս գալիս. այս անդադրում և անսահման ներխուժումների մեջ մենք չենք գառնում այն, ինչ որ մեզ լեցնում է, այն պատճառով միայն, որ մենք էլ լցնում ենք այն, որ մեզ կլլել է: Այս փոխհարաբերությունների մեջ բարձր է մնում անձնավորության (personnalité) *գաղափարը, որովհետև նա է դեկավարում ամեն բան: Ամեն մարդու համար էլ սերը մնում է անբացատրելի մի խնդիրություն. այդտեղ մարդը երևան է գալիս իր էության ամբողջ թափով, դրա համար էլ նա պիտի մնա անբացատրելի: Միայն գեղարվեստագետն է, որ անբացատրելի կապեր ունի ամեն բանի հետ:* Einfühlung*-ը ամեն մարդու համար ապրումների բացառիկ մոմենտն է, գեղարվեստագետի համար միայն՝ ապրելու իր տեսակը, իր մենաշնորհը: Այդ պատճառով էլ, ունենալով հանգերձ ընդհանուր-հոգեբանական հիմունք, նա չի գարձել ընդհանուր-մարդկային հոգեկան վիճակ: Մենք սիրում ենք մեզ խաբել, թե մենք գործում ենք մեր սկզբունքների համաձայն, կամ հարապատ արդյունքն ենք մեր միջավայրի: Սակայն, մենք գործում ենք իսկապես այն համակրությունների* (Sympathie) *և հակակրությունների ազդեցության տակ, որոնք մեր մեջ առաջ են բերում իրերն ու*

երևույթները: Եթե անպատճառ մի անուն պետք է տալ այդ անբացատրելի ուժերին, ապա և դա մի տեսակ համակրություն կարող ենք անվանել: Նա դառնում է մեր կյանքի բացարձակ բռնակալը, մարդը նրա սարուկն է և խաղալիքը. արդարությունը, օրինքը, նույնիսկ ճշմարտությունը վճռվում են նրա հրամանով: Նա իշխում է հոգևկան բոլոր գործառնությունների և գործարաններվրա էլ: Որովհետև դա ապրելու տեսակն է, այդ պատճառով էլ նրա տեսակների տեսակը չէ: Այսինքն, որովհետև նա հոգու էության մասնակցությունն է ամեն բանի մեջ, այդ պատճառով էլ նա հոգու մասնավոր մի գործառնությունը չէ: Բնախոսական և կենսաբանական, ինչպես նաև ուղեղային տեղադրությամբ չի կարելի նրան բացատրել: Ով որ սիրում է հաճախ ինքն իր հետ, իր հոգու հետ առանձին լինել, նա շատ պարզ կհասկանա թե ինչ բան է Einfühlung-ը: Մակերևութային ապրումների և լեզվական խորհրդանշանների տակ չի ընկնում նա: Նրա մասին կարելի է խոսել անվերջ, բայց ոչ մի րոպե իսկ նրա էությունը մերկացնել. որովհետև, վերջապես, նա հասկացնելու համար չէ, այլ հասկանալու համար:

Einfühlung-ը գիտակցական մի վիճակ է, կարող ենք ասել մոտավորապես, բայց մի վիճակ, որ կայունություն չունի իր մեջ, այլ եսի – գիտակցության անվերծանելի կորիզի – ինքնագործունեությունն է: Նրա մեջ կարող է մտնել միայն այն, ինչ որ նրա սրյունից է ու նրա մսից: Բայց, ավելի ճիշտ, նա իր ինքնագործունեությամբ միայն իր մեջն է առնում ամեն բան, ինչ որ պետք է իր գործունեության: Արտաքին աշխարհի մի առարկա ոչ թե արթնացնում է նրա մեջ գտնվող, բայց ներհած տարրերը,– դա կլիներ սովորական իդեալիզմը և նրանով բացատրված պատճառականությունը,– այլ այդ առարկան գոյություն ունի կամ չունի գիտակցության համար՝ ըստ մարդու գիտակցական գործունեության պահանջին: Առարկայի գոյությունը պայմանավորվում է գիտակցության գոյությամբ ոչ թե միայն նրա համար, որ ճանաչողության տակ չընկնող մի բան չի կարող գոյության տակն ընկնել, այլև նրա համար, որ գոյությունը իբրև մտքի ստորոգություններից մեկը, չի կարող պատշաճել մտքից դուրս գտնված առարկաներին: Առարկան մի մտաշխատանքի խտացումն ու կենտրոնացումն է: Իբրև այդպիսին՝ նա ունի լինելու և դառնալու անթիվ աստիճաններ, որոնց բարձրագույն կատարը հասնում է գեղարվեստական առարկայի մեջ: Բայց դա նշանակում է արդեն, որ գեղարվեստական ճանաչողությունն է բարձրագույն ճա-*

նաչողությունը, առարկայի վերջին հնարավորությունը և մտաչխատանքի վերջին իրականությունը: Այդ վերջին հնարավորության և իրականության մենք հասնում ենք Einfühlung-*ի միջոցով: Ուրեմն, նա դառնում է ոչ միայն պիտակչական մի վիճակ, այլև ճանաչողական մի պրոցեսը:*

Ճանաչողության տեսության այս առեղծվածների մեջ սոցիոլոգիան և պրագմատիզմը մի լույս են սփռում: Առարկայի հոգեբանական գոյության հիմունքների վրա ընդհանուր և պարտադիր ճանաչողության դրոշմը կա. այն, որ մեզ ազատում է սոլիպսիզմի վտանգից, այսինքն, որ թույլ չի տալիս գոյության իրավունք տալ սոսկ անհատական առանձնահատուկ ապրումներին և մտապատկերներին ու քայմության դերն է շեշտում արժեքի առաջ գալու մեջ: Արժեքը դառնում է այն ժամանակ ոչ միայն մտաչխատանքի ընհանրականության և պարտադրության, այլև որևէ գոյության գլխավոր պայմանը: Ոսկու ներկա արժեքը ոչնչանում է ճգնավորների աչքարհում և դառնում մի առարկա, որ այնքան գոյություն ունի, որքան քարն ու հողը: Բայց նա, ինչպես և ամենայն արժեք, առեղծվում է գիտակցության այն ինքնագործունեության մեջ դնում է մի ուժածին պահեստ և ենթակայացնում է առարկան: Einfühlung-*ը իբրև ճանաչողական գործիք, այդ աշխատանքը կատարում է իր ինքնագործունեության: Եթե այդ աշխատանքի մեջ դեր կատարեին սոսկ զգայական, կամ սոսկ իմացողական գործիքները, այն ժամանակ մենք պետք է մի դեպքում մեր ճանաչողությունը համարեինք մի լուսանկարում և արտագրություն, մյուս դեպքում՝ մի կառուցում և իրագործում ոչնչով և ոչնչից: Մատերիալիզմի և իդեալիզմի պայքարը ծնվում է այստեղն ահա: Բայց նա ոչնչանում է, որովհետև առարկայի ճշմարիտ և վերջին ճանաչողությունը այդպես չի կատարվում: Երբեք մեր զգայարանքները մեր մեջ չեն բերում մի առարկա իր անմիջար և անխարդախ էության: Ոչ էլ մեզ դնում մի առարկայի մեջ՝ առանց մեզանից մի բան պակասեցնելու, կամ նրա վրա մի բան ավելացնելու: Ինչպես նաև երբեք մեր իմացողական գործիքները մի չենք չեն չինում մեզ համար, որ ընդօրինակություն չլինի, կամ մեզ մի չենքի մեջ դնում, որ խորթ չլինի: Մեկնելով իրականության հարատատ ապրումներից՝ նրանք հեռանում են նրանից, որովհետև բաժանում են անմիջապես զգայական տպավորությունը իմացողական մշակումից և փոխադարձաբար, ու զրանով առեղծում են «ներքին» և «արտաքին» կոչված աշխարհներ, ո-*

րոնք միայն իբրև հակասություններ կարող են իրար մոտ դրվել և երբեք էլ չպիտի կարողանան իրար թափանցել և զգայականը իմանալի դարձնել, կամ փոխադարձաբար:

Սակայն ճշմարիտ իրականությունը մեզանից հեռանում է այդպիսի որոնումների մեջ, եթե մենք վերջ չդնենք այդ տատանումներին. եթե թույլ չտանք, որ հաղթանակի մեր երկարմատեան ընութեան ամենաուժեղ պահանջը՝ միությունը և մոնիզմը: Պետք է ճանաչողության բոլոր գործիքները իրար հետ ձուլել և վերցնել միայն այն, որ մեզ ազատում է սխալ չարժումներից և ուղղություններից: Պետք է մոտենալ առարկային գեղարվեստագետի աչքերով և թափանցողությամբ: Եվ այդ հնարավոր է գեղարվեստի միջոցով: Այսինքն, գեղարվեստական ստեղծագործության և ապրումներին, եթե մենք տանք իմացողական (conceptuel, begrifflich) ձևակերպություն, մենք՝ մի կողմից ընդլայնած կլինենք հենց իր բնագավառը, մյուս կողմից էլ, նույնիսկ որակով՝ բարձրացրած կլինենք նրա տարողությունը՝ հաստատուն կամուրջ ձգելով գիտության և դաղափարի միջև:

IV

Մի քանի խոսքով, եթե հնարավոր լիներ Einfühlung-*ի և* intuition-*ի փոխհարաբերությունները պարզել, այն ժամանակ հնարավոր կլիներ նաև հոգեկան ամենաինքնուրույն գործունեությանց մեջ տեսնել հոդու երկարմատյան և միասլաշտական կառուցվածքը և ձգտումը: Այդ կլիներ մի ճանապարհ դեպի փիլիսոփայական և գեղարվեստական մոնիզմը:*

Մինչդեռ Einfühlung-*ը կրավորական մի ապրում է ըստ երևույթին, ուր մեծ դեր են խաղում «արտաքին» աշխարհի ազդեցությունները.* intuition-*ը, ընդհակառակն, մի ինքնագործունեություն է, ուր չարունակական ապրումների մեջ ստեղծվում է մի ընդհատում, մի վերադարձ և մի թռիչք, կամ հանկարծական ապրումների մեջ ստեղծվում է մի կապ, մի չարունակություն, մի դյուտ: Մի դաշտանկարի փիլիսոփայությունը դուք հասկանում եք* Einfühlung-*ի միջոցով: Երբ ձեր գիտությունն ապահովել է մի պրոբլեմի վրա, դուք այդ լուծում եք* intuition-*ի վայրկյանում: Եթե այս երկու օրինակների կոպտությունը մի քիչ պարզում է երկուքի մեջ եղած տարբերությունը, բայց մյուս կողմից էլ ստեղծում է անվերածելի մի հակադրություն: Երկուսի մեջն էլ կան ներգործուն և կրավորական*

մոմենտներ, բայց միայն մոմենտներ, որովհետև երկուսն էլ տարբեր արտահայտություններ են մի հիմնական հոգեվիճակի, ուր սահմանավորող նշանակություն ունի ստեղծագործությունը: Գյուտի նման մի ստեղծագործություն է անպայման դաշտանկարի մեջ որոնած փիլիսոփայությունը:

Ուրեմն, եթե հիմնականապես և կարճորեն մի սահմանավորման ենթարկելու լինենք այդ երկուքի տարբերությունը, պիտի ընդունենք, որ Einfühlung*-ը հոգեկան մի ապրելավիճակ է, ուր բացառապես գեղարվեստական ստեղծագործությամբ մշակվում, լրացվում և ամբողջական է դառնում իմացական մտապատկերը զգայական մտապատկերներով: Զգայականի կատարած մշակումը իմացականի վրա անընդունելի է գիտնականի համար: Այդ պատճառով էլ նրա աշխատանքը վնասակար և անօգուտ է համարվում: Բայց դա մի գեղարվեստական ստեղծագործություն է հոգու ներաշխարհում և, որովհետև մի հաշտություն է ստեղծում ներքին և արտաքին աշխարհների, իմացական և զգայական հոգեվիճակների մեջ, այդ պատճառով էլ նա ճանաչողական մի նոր համագրություն է դառնում, մի նորություն ճշմարտության որոնման մեջ: Ոչ թե նրանից խորչելով, այլ նրան որոշ վարժության և փորձի ենթարկելով՝ կարելի է տեսողության մի նոր հորիզոն դնել և ավելի մոտենալ իրականության, որ ինքնին և ինքնաբերաբար է առաջարկում մեզ ավելի չուտ, քան արհեստականորեն և կամեցված ձևով:*

Երկուքի մեջ եղած տարբերության առաջին եզրից արդեն պարզ է դառնում նաև երկրորդ եզրը: Զգայական մտապատկերների խառնակության մեջ անկարելի է լինում իրականության ճշմարիտ ըմբռնումը, եթե իմացական աշխատանք չկատարվի դրանց վրա: Այստեղն էլ ուրեմն, նյութը տալիս է զգայական աշխարհը, իսկ մշակումը կատարում է իմացական գործիքը: Առաջին դեպքում հակառակն էր: Մի նկար իմացական մի ամբողջություն է, և ինչքան էլ հարաղատությամբ նկարագրվի, մեկնաբանվի ու լուսանկարվի այդ նկարը, դարձյալ հնարավոր պիտի չլինի ստեղծել այն հոգեկան ապրելավիճակը, որ գեղարվեստական մի ստեղծագործություն է դառնում մարդու մեջ միայն՝ իսկականի հանդեպ զգայական մտապատկերների մշակության շնորհիվ: Փաստագրածաբար, նույնիսկ մաթեմատիկական մի խնդիր, իր կենդանների մեջ ներկայանում [է] հոգուն, որպես զգայական մտապատկերների մի խառնակություն, երբ բացակայում է հոգեներկայությունը, իրականության թափանցումը և ըմբռնումը: Եթե հնարավոր չլինի ստեղծել մի կենսաբանագում,

զուտ և բևեռում, որոնք կատարվում են բացառապես իմացական մտաշխատանքով, այն ժամանակ խնդիրը կմնա մշտապես խնդիր և անլուծելի: Ընդհակառակն, դուք հանկարծ մի պյուտ եք կատարում, երբ այլևս ոչ մի բան չեք տեսնում, բացի լուծումից, որ պատրաստվում է հոգու մեջ, առանց դիտակցական կամեցողության, այլ սոսկ լուծելու անգիտակից կամեցողության կենդանացրած կենտրոնացումից և բևեռումից: Մի սխալ քայլից խուսափում եք դուք այդպիսի ոգեներկայության մոմենտում: Սակայն ճիշտ չէր լինի, իհարկե, intuition*-ը նույնացնել ոգեներկայության (*Geistesgegenwart*) հետ: Երկուքի մեջ ընդհանուր է կազմության արագ և հանկարծակի հատկությունը: Մինչդեռ* intuition*-ը մի տեսողություն է և չարունակություն մի անդամ գտածի և բռնածի: Նա կարող է առաջ գալ ոչ թե մշտապես այսպիսի բաղակցություն ստեղծելով, այլ նրա նշանակության չարունակական վարժության շնորհիվ էլ: Եվ այդ պարագային նա կլինի ոչ թե մի համադրություն, այլ միատարր և պատրաստի գործիք իրականության ավելի մոտիկ և ավելի խոր ըմբռնման: Մեզ զբաղեցնող երկու գաղափարների* Einfühlung*-ի և* intuition*-ի մեջ մատնանշված այս տարբերությունը չատ դժվարությամբ ընդունելի պիտի դառնա: Սովորաբար երկուքն էլ համարվում են տեսողական, հայեցողական, պգայական հոգեգործունեություն: Մեր մատնանշած տարբերությունը ավելի մեծ դեղաչափ է պտնում զգայական տարրերից* Einfühlung*-ի մեջ և ավելի մեծ իմացական* intuition*-ի մեջ: Ընդունելով հանդերձ, որ երկուքն էլ անընդունակ են* begrifflich*–մտաշխատանքի, իրենց կենտրոնական և առանձնահատուկ վայրկյանում չեն կարող բառերով և գաղափարներով արտահայտվել կամ ձևակերպվել, այնուամենայնիվ, չատ հնչուտությամբ նկատելի է, որ առաջինը մնում է իր ամբողջ տևողության ընթացքին այդ անընդունակության մեջ. մինչդեռ* intuition*-ը ինքնին անհասկանալի պիտի մնար, եթե վերջիվերջո բառական և գաղափարային մի ելք և ճանապարհ չգտներ արտահայտվելու: Իմացական տարրի ներկայությունը սրանով միայն հիմնավորված կլիներ, եթե նույնիսկ նկատի չունենայինք ունենալ ինտուիտիվ դատողության, ինտուիտիվ իրավունքի և ինտուիտիվ ճանաչողության տվյալները, որոնք անկարելի կլինեին, եթե սոսկ զգայականորեն լինեին, և ոչ նաև իմացականորեն: Մատնանշելով այս տարբերությունները այժմ անհրաժեշտ է որոնել նրանց գործունեության և*

տարողության սահմանները՝ հասնելու համար նրանց աղբյուրի ակ-նարին և ընձեռած ճանապարհի արժեքավորման:

V

Այն վայրկյանը, որ մենք բնորոշում ենք իբրև Einfühlung*-ի կամ* intuition*-ի վայրկյան, իր մեջն ունի մի առարկա, որ կարող է «ներ-քին» էլ լինել, «արտաքին» էլ: Մեկ կողմ թողնելով առարկայի միա-միտ և ժողովրդական հասկացողությունը՝ մենք նրա մեջ տեսնում ենք անհրաժեշտ տարրերը՝ մեզ չահագրգռող հոգեգործունեության վերլուծության տեսակետից:*

Եթե կարողանանք առարկայի ինքնուրույն գոյությունը հասկա-նալ՝ մեկ կողմ թողնելով նրա հոգեբանական բացատրությունները, մենք կտեսնենք, որ նա չի կարող մտապատկեր լինել, ոչ թե, որով-հետև հոգեվիճակ լինելուց բացի, առարկան մի ուրիշ բան էլ է, այլ նաև այն պատճառով, որ նրա ներկայությունը և նրա գոյությունը տարբեր մոմենտներ են առարկայի ինքնուրույնության: Իբրև ներ-կայություն՝ նա մի մտապատկեր կարող է լինել, իսկ իբրև մի ինք-նուրույն գոյություն՝ նա այլևս չի ծագում սրտաքին գրգիռներից և ներկայություններից: Նրա ինքնուրույնության մեջ կենտրոնա-նում և համադրվում են մի շարք առարկայություններ, որոնք առհա-սարակ որևէ գոյության անհրաժեշտ տարրերն են: Մի մտապատկերի մեջ չեն կարող երբեք այդ առարկայությունները կազմակերպվել, կամ նույնիսկ դրծոն մասնակցություն ունենալ, քանի որ մտապատկերը ինքնին մի թռուցիկ և անհատական ակողություն է՝ պայմանավոր-ված չափազանց հակադիր և տարբեր աղբյուրներով: Մինչ-դեռ առարկան պայմանավորված չէ շրջապատի, լսության, տեսողու-յան, կամ դգայական անկյունի ազդեցություններով, այլ դրանցից անկախ լինելու, տարրեր լինելու մեջն է պահպանում իր ինքնու-րույնությունը և գոյությունը:

Այսպես կոչված «փորձառական» հոգեբանության փորձերը նր-բիք չափով կարողանան առարկայի գոյությունը հիմնավորել և հետևապես կարողանան պիտի հասնեն առարկայի պայմանավորված գո-յության՝ չկարողանալով հասնել պայմանավորված գոյության ա-ռարկային:

Մյուս կողմից, առարկայի վերապրնները կամ հատկանիշները (attribut) *բավարար չափով չեն լուսաբանում առարկայի ինքնու-րույնությունը, եթե հատկանիշների ըմբռնողությունը չընդարձա-*

կենք մինչև ստորոգություններ: Այստեղ էլ դարձյալ մի բռնություն կլինի գաղափարների վրա, եթե փոփոխական, չարժական և վերլուծական հատկանիշները նույնացնենք ստորոգությունների հետ, որոնք ըստ ամենայնի անփոփոխելի են և դերազանցապես տևողական, որովհետև տևողությունն է այն էական և վճռական մոմենտը, որ հատկանիշը ստորոգություն է դարձնում և մտապատկերը՝ առարկա:

Առարկայի ինքնուրույնության մեջ վճռական տեղ են բռնում ուրեմն քանակը, որակը, հարաբերությունը և լինելությունը, այսինքն այն հիմնական ստորոգությունները, որոնք առարկայի պատահական, պայմանավորված և հոգեբանական գոյության տալիս են տևական, անհրաժեշտ և իմացական հիմունքներ: Եթե առարկան մի մտապատկեր է, այն ժամանակ նրա մեջ չեն կարող գոյություն ունենալ առարկայի գոյության հիմունքները. կամ որ նույն է, առարկան չի կարող մտապատկեր լինել: Սակայն ոչ ոք չի կարող ժխտել առարկայի ինքնուրույնությունը: Հետևաբար նրա մեջ կարելի պիտի լինի գտնել այն անկյունաքարը, որ նրա ինքնուրույնության հետ ֆունկցիոնել հարաբերության մեջ է մտնում՝ իմացական դարձնելու անիմանալին:

Եվ, իսկապես, ուրիշ ճանապարհ չկա, եթե հրաժարվում ենք առարկան մտապատկեր ընդունելուց, կամ ոսկի մի մտաիր: Այսինքն ոչ թե առարկայի արտաքնությունն է նրա ինքնուրույնության հիմքը, ոչ էլ նրա ներքին մտապատկերումը՝ նրա ինքնուրույնության վախճանը, այլ առարկայի և ենթակայի ստորոգելական հիմունքներն են ֆունկցիոնել կապակցության մեջ, և այդ պատճառով միայն հնարավոր է դառնում իմացությունը և առարկան: Առարկայի ինքնուրույնության հիմունքները դուգակցվում են իմացության ինքնուրույնության հիմունքներին և «արտաքինը» հնարավոր է լինում՝ «ներքինը» հիմնավորելով, կամ փոխադարձաբար, մեկը մյուսին չի պայմանավորում, ոչ էլ նախընթաց է, բայց դուգակցվում է՝ փոխադարձ ինքնուրույնությունները պահպանելու համար:

Մնալով մեզ հետաքրքրող իմդրի սահմաններում, չենք կարող այնուամենայնիվ չշոշափել իմացաբանական և բնազանցական այս առեղծվածները, որովհետև վերջիվերջո ասի և գիտակցության մեջն են առնում իրենց ծնունդը ամեն տեսակի ապրումները և հոգեվիճակները: Այս կոպիտ բացատրությունը կարող է չատերին մտերիմ լինել, բայց չի կորսնցնում այս մտաշենքի մեջ իր անհրաժեշտ դերը, քանի որ մենք նույնացնում ենք առարկա—ենթակա, արտաքին—

ներքն և նման հասկացողությունները, ու փունկցիոնել կապակցության մեջ ավելի պատկերավոր և դիտըմբռնելի դարձնում: Այս տեսակետից, ոչ նվազ ձեռնտու է նաև մի այլ տեսակի բացատրությունը նույնպես հանրածանոթ, թե գիտակցության ծալքերումն է հանդչում Անգիտակիցը որպես նրա ենթանյութը, նրա նախապայմանը և սկզբնական ձևը: Իմացաբանական մի առեղծված է հանճարի ստեղծագործության յուրաքանչյուր մասնիկի վերլուծությունը, ինչպես նաև նրա ստեղծագործության ամբողջությունը, որովհետև նրա ստեղծած բազմաթիվ աշխարհները գիտակցության ինքնագործունեության բարձրագույն զարգացման են հասնում և իմանալի կացուցանում, ինչ որ չէր եղել սովորական և հասարակ մտքի համար: Բայց այդ ստեղծագործության ամբողջությունը անհերքելիորեն ցույց է տալիս անգիտակիցի ուժերի կուտակումը թե՛ որպես հանդչող, չարտահայտվող հոգեգործունեություն և թե՛ որպես վերջիվերջո անխմանալի նպատակների և իդեալների հետապնդում: Կամ-ակամա մարդն ապաստանում է նշանների և նմանությունների տակ՝ զգալով հանդերձ, որ ճշմարիտ իրականությունը ոչ միայն ավելին է, այլ գուցե նաև բոլորովին տարբեր: Բայց այսպիսի չենքերի արժեքը չի կորչում երբեք, եթե հնարավոր է լինում անհակասական մի համադրության վերածել բացատրությունների նոր տեսակը:

Ահա այս վերապահություններով պետք է չարունակել Intuition-*ի և* Einfühlung-*ի վերլուծությունը և դասավորությունը:*

Ոչ միայն այդ երկուքը, այլ նաև հոգեկան գործունեության բոլոր տեսակները էլ միևնույն բացատրությունն են ընդունում այս շրջանակի մեջ: Թողնելով մյուսները՝ մենք երկու խոսքով պիտի աշխատենք Einfühlung-*ի և* Intuition-*ի ըմբռնումը տալ վերոհիշյալ վերապահումներով:*

[Թերի է]

[Վարազդատ Տեր-Հայկ]

Բնագիր՝ Ջեռագիր

ԿՈԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Կոլեկտիվ աշխատանքը իբրև հակադրություն անհատական աշխատանքի, մեծ հավակնություններով առաջադրվում է հատկապես մեր դարաշրջանում, երբ թվում է, թե անհատականությունը սպանել է արդեն իր բոլոր հնարավորությունները, և միակ ճանապարհը, որ նոր է, որ դեռ փորձված չէ, որ լիքն է անսասելի հնարավորություններով — այդ միակ ճանապարհը կոլեկտիվ աշխատանքի ճանապարհն է: Ինչքան էլ այն մեկի արժեքը մարդկության դարավոր փորձի անժխտելի հատկություններն ունի, և գուցե, չափազանցություն լինի ասել, թե սպառել է արդեն իր բոլոր հնարավորությունները, այնուամենայնիվ նա անցյալին է վերաբերում, և մեր հայացքը մշտապես կաշկանդում է արդեն մեր հետևում փռված ուղինների և արահետների վրա, առանց հեռանկարի (որ միշտ առկում պետք է լինի) և առանց ապագայի, որ մենք ուզում ենք նոր լինի և մեր ստեղծագործական աշխատանքի մեջ մեզ ամեն րոպե ցույց չտա կրկնություն և հնություն:

Սակայն այս պահանջը մեզ ներկայանում է, իբրև կատադի անհատապաշտության դեմ բնականորեն առաջ եկած մի հականերգործություն, և որպես այդպիսին նրա բնորոշ հատկությունը դառնում է ֆորմալ և բացասական: Կոլեկտիվ աշխատանքի պահանջը մինչև այստեղ դեռ էական և դրական ոչ մի հատկություն ցույց չի տալիս: Եվ, իսկապես, ի՞նչ է նշանակում կոլեկտիվ աշխատանք:

Առանց խոր վերլուծության մեջ մտնելու կարող ենք ասել, որ կոլեկտիվ աշխատանքը տեխնիկայի և ինդուստրիայի մեջ երևան է գալիս գերազանցապես իբրև անհատական ուժերի և էներգիայի ներդաշնակում, համաձայնեցում, համադրում և գումարում: Հատկապես այս ասպարեզում աշխատանքի բաժանումը, մեկ կողմից վերջնական զարգացման հասցնելով անհատական ուժերի և էներգիայի օգտագործման մասնագիտացումը, մյուս կողմից անկարելի է դարձնում դրանց նպատակահարմար զարգացումը առանց կոլեկտիվ հարաբերությունների կապերն ավելի սերտացնելու: Ավելի պարզ ասելու համար՝ աշխատանքի բաժանումը, որ մեր դարաշրջանի կուլտուրայի բնորոշ գիծն է, ինքնին արդեն մի անժխտելի ապացույց է, որ մասնագիտացման (անհատականացման) ճանապարհը անվրեպ կերպով տանում է մեզ կոլեկտիվացման ուղինների վրա: Ուրեմն, աշխատանքն ինչքան անհատականանում է, այնքան, և ավելի կոլեկտիվանում: Այստեղ ոչ մի հնարավորություն չկա ավելի մանրամասնորեն կանգ առնելու այս, ըստ երևույթին, անընդունելի տարակերպության վրա: Մեր մտքի թելը չարունակելու համար այս-

քանն էլ բավական էր որպես մի առաջադրություն՝ թե տեխնիկայի և ինդուստրիայի աշխարհում մեր կուլտուրայի բնորոշ գիծն է աշխատանքն անհատականացնել կոլեկտիվացնելու համար:

Սակայն, մտքի աշխարհում կոլեկտիվ աշխատանքը մնում է իբրև մի ցանկություն միայն, մեթոդական մի նամանոլություն, որ մենք ավելի շուտ ձևակերպում ենք, քանաձևում, դնում կոլեկտիվ շրջանակի մեջ, կամ անվան տակ՝ առանց դեռևս հասած լինելու այնտեղ, ուր աշխատանքն, ըստ էության, կոլեկտիվ է դառնում: Մի սեղան չինելու համար, պարզ մասնագիտացման դեպքում, մեկը չինում է ոտները, մի ուրիշը՝ երեսը, երրորդը՝ կողքերը, դարակները, փականքները, հղկումը և այլն: Իսկ որպեսզի մի միտք հանրօգուտ նպատակների ծառայի, և իբրև այդպիսին հասարակության առաջարկվի, ո՞վ կարող է ցույց տալ, թե ո՞վ չինեց այդ մտքի ոտները, այդ մտքի երեսը, այդ մտքի դարակները և այլն: Ամենամեծ ժողովրդականության և ընդհանուր հավանության արժանացած միտքն անգամ, իր հիմքում ինչքան էլ որ բազմաթիվ աղբյուրներ ունենա, իր ծագման և ձևակերպման մեջ, սակայն, մնում է անհատական: Այն բոլոր ուղղումները, հապավումները և հավելումները, որ կարելի է անել այդ մտքի վրա, դառնում են կրճատումներ և կարկատաններ, հաճախ բառերի փոփոխություններ՝ առանց հիմնական և բազկացուցիչ տարրերի ստեղծագործությունը խանդարելու:

Եվ, սակայն, կոլեկտիվ աշխատանքը մտքի աշխարհում նույնքան հրամայականորեն պրվում է, որքան տեխնիկայի և ինդուստրիայի մեջ, ըստ որում մեր դարաշրջանի կուլտուրայի բնորոշ գիծը մեզ ցույց է տալիս առաջադիմության մի ճանապարհ միայն՝ աշխատանքի բաժանման չնորհիվ՝ աշխատանքի կոլեկտիվացում: Այդ պահանջը ոչ այնքան արդեն դյուրություն ունեցող ավյալների քմահաճ ընդհանրացման արտահայտությունն է, որքան իրական կյանքի գործադրման առարկայական միտումների խոր թափանցողության արդյունքը: Պատմականորեն մեզ հայտնի բոլոր փաստերը մեկ կողմից այդ ձգտման անդիմադրելի դրսևորումը ձևակերպելով՝ ցույց են տալիս մյուս կողմից աշխատանքի այդ մեթոդի բոլոր թերությունները ու առավելությունները: Դրա համար է, որ ովքեր որ լրջորեն շահագրգռված են նրա հաջողություններով, պետք է չտապ ընդհանրացումներից ավելի կանդ առնեն կոնկրետ օրինակների և փաստերի վրա՝ աշխատելով առինքնել այդ օրինակի բոլոր դրական նվաճումները:

Գիտական մտքի կոլեկտիվ աշխատանքի մի հսկա հուշարձան կա այս բոպեի աչքիս առջև, և որ ինձ առիթ տվեց այս փոքրիկ հոդվածով ընթերցողներին ծանոթացնելու համառոտակի այդ մեթոդի մի քանի դրական առավելություններին:

Ինն հարյուրական թվականներից Փարիզում ծրագրվում է կազմել մի փիլիսոփայական բառարան: Դեռ 1898 թվին Սորբոնի տրամաբանության դասախոս Ա. Լալանդը մի հոդվածով կենտրոնացնում էր ուշադրությունը «փիլիսոփայական լեզվի և փիլիսոփայության մեկության» (Einheit) վրա: Իսկ 1900 թվին փիլիսոփայության միջազգային կոնգրեսին նույն անձնավորությունը մի տեղեկագիր էր ներկայացնում «փիլիսոփայական լեզվի քննադատության և ամրապնդման» մասին: Մյուս կողմից, մի ուրիշ փիլիսոփա՝ Ք. Լեոն, ղանազան միջոցներ էր մտածում հիշյալ համագումարի աշխատանքները շարունակելու համագումարից հետո էլ, որով հնարավոր լինի գիտնականների և փիլիսոփաների միջև մտքերի հաճախակի և սերտ փոխանակություն հաստատել: Այս ընդհանուր ուրամագրությունները ջերմ արձագանք գտան ֆրանսիական փիլիսոփայական ընկերության մեջ, որը իր նյութական և մտավորական հովանավորության տակ վերցրեց փիլիսոփայական բառարանի կազմության աշխատանքը: 1902-ից սկսած ընկերությունն իր բյուլետեններում սկսեց հրատարակել բառարանը, և 1923 թվին վերջացավ ամբողջ գործը: Հետագայում արդեն գրքի ձև ստացավ բազմաթիվ ուղղումներով, լրացումներով և հավելվածներով: Իմ ձեռքի տակ գտնվում է 1928 թվի հրատարակությունը՝ երկհատոր, մեծադիր 1104 էջից բաղկացած գիրքը:

Ամբողջ գործը և աշխատանքը, իր սկզբնական տարրերից սկսած, խնամով մտածված և հաջողությամբ կիրառված կոլեկտիվ աշխատանքի մի պերճախոս հաղթանակ է: Այդ չատ պարզ երևում է առաջաբանի հետևյալ մի քանի տողերից, որ թարգմանաբար տալիս եմ, որովհետև դժվար է ավելի խտացած, ավելի չոչափելի, ավելի ճշգրիտ կերպով պատկերացնել այդ մեթոդը:

«Երկի տեքստը առաջին խմբագրությամբ կազմել միջին հաշվով հիսունական էջ ունեցող հատվածներով. տպագրել այդ հատվածները «փորձնական տետր»-ի ձևով և լայն լուսանցքներով, այնպես որ հեշտությամբ կարելի լինի ծանոթություններ գրել նրա վրա: «Տետրերն» այդ վիճակի մեջ հղել ընկերության անդամներին և ֆրանսիացի ու այլերկրացի որոշ թվով թղթակիցներին, որոնք այդ ձեռնարկին մեծ շահագրգռություն էին ցույց տալիս. հավաքել ու համեմատել նրանց քննադատությունները, հավելումները և դիտողությունները: Վերջնական տեքստի մեջ պահպանել այն ամենը, ինչ որ ընդունելի էր եղել անվիճելի կերպով, կամ, առնվազն, ընթերցողների գրեթե միաձայն հավանությամբ: Փիլիսոփայական ընկերության տարեկան մեկ կամ երկու հավաքույթներին ներկայացնել ամենավիճելի կետերը, առաջ բերել մի նոր դիսկուսիա և, հնարավորության սահմաններում, մի ընդհանրական դատողության այ-

տահայոութ֊յուն ստանալ,— վերջապես բոլորը բաղդատել և այդ բաղդատութ֊յունից հանել տնքստի վերջնական խմբագրութ֊յունը: Ընթացիկ ծանոթութ֊յունների ձևով էջերի ներքնահարկում տեղավորել անձնական ու տարամետ կարծիքները, հավաքութ֊յունների ընթացքում փոխանակված խորհրդածութ֊յունները և լրացուցիչ դիտողութ֊յունները, որոնց բնական տեղը բուն իսկ հոդվածի մեջ չէր կարող լինել: Ահա՛, ընդհանուր գծերով, այն կարգը, որին պետք եղավ հետևել այդ երկը կազմելու համար»:

Իհարկե, սկզբից ևեթ, Լալանդը և երկու—երնք ուրիշ փիլիսոփաներ (որոնք այդ երկար ժամանակաշրջանում մի քանի անգամ փոփոխում են այն պատճառով, որ դրանցից երկուսը մեռնում են, ուրիշները, այլ պատճառներով հետանում անմիջական աշխատակցութ֊յունից) իրենց վրա վերցնում են ամբողջ գործի սև աշխատանքը, այսինքն այն բոլոր նախապատրաստական աշխատանքները, որոնք վերաբում մեթոդական ձևով խստացված ներկայացնին՝ մինչև վերջնական խմբագրութ֊յան պատրաստութ֊յունը: Դիտական համագործակցութ֊յան այս նոր եղանակը այնքան անակնկալներ ուներ և տարածվեց այնքան երկար ժամանակաշրջանի վրա (ավելի քան քսան տարի), որ ստիպված եղան մի քանի տասեր մեկից ավելի «վերջնական» խմբագրութ֊յան ենթարկել և, ուրեմն, մի քանի անգամ նոր տպագրել: Ի վերջո հնարավոր եղավ տեխնիկապես համարյա անթերի մի գործ դուրս բերել, ըստ որում, ինչքան որ մտավորական միավորութ֊յան (մեկութ֊յան) համար նախաձեռնողները ներկայացնում էին ամենայն հեղինակավորութ֊յուն և առավելագույն կարողութ֊յուն, նույնքան և տեխնիկական դժվարութ֊յունները հաղթահարելու համար պակասում էր փորձը և բավանդակութ֊յանը համապատասխանող ձևը:

II

Մի քանի խոսքով փորձենք տալ բառարանի նկարագրութ֊յունը:

Յուրաքանչյուր հոդված տալիս է առաջադրված տերմինի «տեխնիկական» սահմանավորումը. դրան հետևում է անմիջապես այդ սահմանավորման քննադատութ֊յունը, ուր ի միջի այլոց մանում են բառի և դաղափարի լեզվաբանական առումները և փոփոխութ֊յունները, որոնք պատմականորեն առաջ են եկել դանազան դարաշրջաններում: Էջի ներքնահարկում տեղավորված են նույն տերմինի մասին եղած դանազան դիտողութ֊յուններ և ծանոթութ֊յուններ, որոնք, ըստ մեծի մասին, կամ տեխնիկական սահմանավորման դեմ տարաձերժ և հակառակ կարծիքներ են պաշտպանում, կամ էլ պատմական ու նոր լուսաբանութ֊յուններ են տալիս բառի սեմանտիկ (նշանակա-

գիտությունն)[1] *արժեքի մասին: Յուրաքանչյուր տերմինի մոտ նշանակված են գերմաներեն, անգլերեն և իտալերեն համապատասխան բառերը: Երբեմն հոդվածի կազմի մեջ, կամ թե նրա քննադատության և ծանոթությունների մեջ նշված են նույն տերմինի տարբեր առումները կամ նշանակությունները այդ լեզուներից մեկի կամ մյուսի մեջ: Եվ վերջապես, այդ բոլորից հետո տրված է նույն բառի միջազգային արմատը:*

Արժե մի քանի խոսք ասել այս միջազգային արմատի մասին:

Մարդկային ոչ մի գիտություն այնպես հավակնություն չունի լինել բացարձակ, ընդհանրական և տիեզերական, որպես փիլիսոփայությունը: Եվ, սակայն ոչ մի գիտության մեջ աշխատանքի միջոցներն ու գործիքները (այս դեպքում բառերն ու գաղափարները) այնքան անկայուն, անհաստատ, փոփոխական և առաճգական չեն, որքան փիլիսոփայության մեջ: Առաջին և վերջին սկզբունքների գիտությունը, որ ուզում է ընդհանուր մարդկային արժեք ներկայացնել, ամենից ընդհանրականը և տիեզերականը լինելը, պարտավոր է ունենալ հրամայաբար, իր արտահայտության միջոցների համար դոնե, ընդհանրականորեն և տիեզերականորեն ընդունելի ձևեր և նշաններ: Մաթեմատիկայի օրինակը վարակիչ է, ինչպես նաև երաժշտության օրինակը. երկուսն էլ ունեն ընդհանուր-մարդկային լեզու: Փիլիսոփայության համար այդպիսի լեզու մեծ անհրաժեշտություն էր: Այդ պատճառով էլ փիլիսոփայական ընկերությունն ընդունեց իդո միջազգային լեզվի արմատները իր բոլոր տերմինների համար: Էսպերանտոյի կատարելագործված վերամշակությունն է իդո-ն, որի նախդիրների և ածանցումների ըստ ամենայնի կանոնավոր և կատարյալ կիրառումը այդ արհեստական լեզվին տվել է մեծ ճկունություն և ճշգրտություն. մի բան որ այնքան անհրաժեշտ է փիլիսոփայական լեզվի համար: Այսպես, ուրեմն, միջազգային լեզվի աջակցության դիմելը, թեկուզ միայն արմատների ընտրության հարցում, ոչ միայն տեխնիկապես լուծում էր առաջադրված խնդիրը, այլև ըստ էության, այսինքն, փիլիսոփայության ընդհանուր-մարդկային արժեքի հաստատման տալիս էր իր անհրաժեշտ, պարտավոր տուրքը: «Ընդհանուր լեզու» գտնելու համար անհրաժեշտ է ոչ միայն գաղափարների և կոնցեպտների մասին ունենալ որոշ և հաստատուն սահմանագծումներ, այլև դրանց արտահայտիչ նշանների և բառերի միօրինակ և միատեսակ ձևեր:

---

[1] *Փիլիսոփայության մի նոր ճյուղ, որի համար և առիղծված է այդ նոր բառը և աշխատում է տալ տերմինների իմաստի պատմական ուսումնասիրությունը իր այն փոփոխություններով, որոնց ենթարկվել է նա զանազան ժամանակներ:*

Բոլոր նշանավոր փիլիսոփաներից կան անթիվ մնջքերումներ և քաղվածքներ, հատկապես «քննադատության» և «ծանոթությունների» բաժնում: Բայց ավելի արժեքավոր են հենց տերմինի սահմանավորման մեջ մտած քաղվածքները: Որևէ ժամանակ, որևէ փիլիսոփա, որ կարողացել է այս կամ այն տերմինին տալ այնպիսի մի սահմանավորում, որ մինչև այժմ էլ մնացել է անվիճելի և անգերազանցելի – այդ սահմանավորումը վերցնում են նույնությամբ՝ տալով հանդերձ նրա թարգմանությունը: Այսպիսով, միևնույն ընդհանուր նպատակին համագործակցելու են գալիս միևնույն կոլեկտիվ աշխատանքի մեջ նաև անցյալ դարաշրջաններում նույն գործի վրա աշխատողներն ևս:

Ոչ մի տեղ մարդկային լեզվի թերություններն ու անկատարությունն այնպես զգալի և չոչափելի չեն, որպես փիլիսոփայության մեջ: Այդ մասին շատ փիլիսոփաների մոտ կտեսնեք նմանօրինակ գանգատներ: Որպեսզի հնարավոր լինի յուրաքանչյուր պաղափարին մի տերմին միայն տալ, կամ, ինչ որ նույնն է, յուրաքանչյուր տերմինին միայն մի դաղափար տալ, դրա համար անհրաժեշտ լիներ գուցե շատ երկրներում պատրաստել նմանօրինակ գործեր, որոնց ընդհանրական համեմատությունից կարելի կլիներ պատրաստել մի ընդհանուր-մարդկային փիլիսոփայական լեզու՝ ընդունելի բոլոր լեզուների համար: Այս յայնածավալ մտահոգությունը տիրապետում է սույն բառարանի սկզբից մինչև վերջ: Որպես այդ ընդհանուր նպատակի նախապատրաստման մի տուրք՝ աշխատակիցները ամեն անգամ հրապարակ են բերում միևնույն տերմինի բոլոր այդօրինակ թերությունները: Որպեսզի դա միայն քննադատություն չլինի, այլ նաև ստեղծագործական աշխատանք, յուրաքանչյուր տերմին այնքան սահմանավորման է ենթարկվել՝ համարագրված առանձին հատածներով, որքան տարբեր առումներ որ ունի: Այդ տարբերությունները երբեմն նաև բարդանում են փիլիսոփայության դանագան դիսցիպլինաների մեջ գործածվելու պատճառով:

Վերջապես, երկի նկարագրության համար անհրաժեշտ է մատնանշել ընդարձակ «հավելվածը» և «հավելումները», որոնք անխուսափելի էին դառնում չնորհիվ այն հանգամանքի, որ երկար ժամանակաշրջանում պատրաստվեց գործը, և աշխատակիցները ցրված էին դանագան տեղեր ու երկիրներ, և իրենց դիտողությունները պատահական կերպով ու որոշ ժամանակի սահմանում չէր, որ պետք է հաղորդեին:

Մտածել, թե համագործակցության նման եղանակը կարող էր չարունակվել անվերջանալիորեն, և ունենալ միայն որոշ պերիոդներ, որոնք պետք է հնարավորություն տային այդ ժամանակաշրջանում կատարված աշխատանքների հանրագումարը կատարել և ամբողջա-

ցումը, որպեսզի ավելի մեծ թափով չարունակվեն աշխատանքները — այդ չէ՞ր նշանակում արդյոք վերջ տալ գիտական աշխատանքների անարխիկ վիճակին, որի մեջ գտնվում է նա ներկայումս և կազմակերպություն մտցնել այնտեղ էլ: Օսվալդի սրբելի մտորումներից է այս, որի համար, սակայն, նա ուրիշ եղանակներ էր առաջարկում:

III

Մի քանի տերմիններից քաղվածներ կատարելով և վերլուծությունը տալով գուցե, հնարավոր լինի ավելի ճիշտ գաղափար կազմել այս գործի որակի մասին: Վերցնում ենք, հատկապես, հետևյալ երեք բառերը. կոմմունիզմ, կոլլեկտիվիզմ, մատերիալիզմ: Թեև նման բառեր, որոնք մեզ հետաքրքիր կարող էին լինել, այնքան էլ շատ չեն, բայց և այնպես այսքանն էլ բավական է ցույց տալու այն մեծ ձգտումը, որ ունեցել են աշխատակիցները՝ պահպանելու հնարավորության սահմաններում, միևնույն գաղափարի կամ վարդապետության բոլորովին հակառակ, նույնիսկ հակասող արտահայտությունների առարկայական բանաձևումը:

«Կոմմունիզմ

A. Հասարակական կեցություն, որ նկարագրված է Պլատոնի Հասարակապետության մեջ:

B. Տնտեսական և հասարակական ամենայն կազմակերպություն, որի հիմքը անհատական սեփականատիրության հակադրված համայնական սեփականատիրությունն է և հասարակության ակտիվ միջամտությունն՝ անհատների կյանքի մեջ:

C. Մասնավորապես (Կարլ Մարքսի և Էնգելսի Կոմմունիստական մանիֆեստ, 1847) — մի վարդապետություն, որի բնորոշ գծերն են՝ անհատական հողային սեփականատիրության և ժառանգության ոչնչացումը, փոխադրության և արտադրության միջոցների սոցիալիզացիան, հանրային կրթությունը, վարկի կազմակերպումը պետության ձեռքով և աշխատավորների կազմակերպումը՝ նրա ղեկավարությամբ»:

Հոդվածի քննադատության մեջ կարդում ենք.

«Այս տերմինը իր ընդհանուր նշանակության մեջ թե՛ անորոշ է և թե՛ զորեղ. նա առաջադրում է կատարյալ սոցիալիզացիա ոչ միայն արտադրության միջոցների, այլ նաև սպառման առարկաների վերաբերմամբ, նա նույնիսկ սերտորեն միանում է (գուցե վատ հասկացված կամ չափազանցված պլատոնիզմի միջոցով) ընտանիքի քայքայման գաղափարին, ծնողների ու երեխաների ամբողջական բաժանման գաղափարին և պետության կողմից սրանց տրվելիք համայնական կրթության գաղափարին: Այս նշանակությունը, սակայն, կայուն չէ: Ցրանքը կոմմունիստներին (որոնք հեղափոխում

են միայն սեփականատիրությունը) հակադրում է ֆալանստերյաններըը, որոնք խորտակում են նաև ընտանիքը: Բայց այս պահպանողությունը թվում է, թե քիչ գործնական է: Ներկայումս այս բառը գործածվում է, հատկապես, բնորոշելու համար այն վարդապետություններըը, որոնք բխում են մարքսիզմից, ռուսական սովետիզմից և երբորդ ինտերնացիոնալից»:

«Կոլլեկտիվիզմ.

Ա. Նորաբանություն: Այս տերմինը ստեղծվել է Բագելի կոնգրեսում (1869)՝ հակադրելու համար պետական սոցիալիզմին, որ ներկայացնում էին հատկապես գերմանական մարքսիստները, ոչ-պետական, ոչ-կենտրոնացնող սոցիալիզմը, որ ներկայացնում էին հատկապես ֆրանսիացի, բելգիացի և չվեյցարացի պատգամավորնեըը: Առաջին անգամ գործածել է Լոկլում հրատարակվող չվեյցարական «Պրոգրես» թերթը, 1869 թ. սեպտ. 18-ին:

Բ. Ջանազան անհատական պատճառներով այդ տերմինը փոխել է իր այս մասնավոր իմաստը: Ժ. Գեդը, որ սկզբում միացած էր Ժյուրայի կոլլեկտիվիստական դպրոցին (Ա նշանակությամբ) չարունակեց նույն անունով բնորոշել իր վարդապետությունը, թեև անձնապես նա այդ ձևափոխել էր Հսկայական չափով և մարքսիզմի կողմ կատարած թեքումով: Եվ Ֆրանսիայում կատարած իր պրոպագանդի ազդեցության շնորհիվ մարքսիստական, հեղափոխական սոցիալիզմը այնտեղ հայտնի դարձավ կոլլեկտիվիզմ անունով:

Գ. Դրա հետևանքն այն եղավ, որ այդ բառն ընթացիկ լեզվի մեջ ձգտում է բռնել սոցիալիզմ տերմինի տեղը՝ ավելի ճշգրտելով ու նեղացնելով վերջինի նշանակությունը: Որպես հակադրություն ավելի լայն իմաստով վերցրած սոցիալիզմի (Լերու, Ֆուրիե, Օվուեն և այլն)՝ նա կիրառվում է սոցիալական այնպիսի մի ուժիմի համար, որի բնորոշ գիծը՝ քաղաքական տեսակետից՝ դեմոկրատիկ սկզբունքն է, իսկ անտեսական տեսակետից՝ այն հանգամանքը, որ արտադրության միջոցների և գործիքների սեփականությունը կոլլեկտիվ է, այսինքն, պատկանում է կա՛մ արտադրական ընկերություններին, կա՛մ համայնքներին կա՛մ էլ նույնիսկ պետության (չնայած բառի ծագման): Տես՝ Վանդերվելդ — Կոլլեկտիվիզմ և տնտեսական էվոլյուցիան: Հեղափոխական բնույթին էլ, իր հերթին, չքանում է նրանից. այդպես է, որ ալ. Միլլերանը՝ իր «Ֆրանսիական ռեֆորմիստական սոցիալիզմ» գրքի մեջ, որ նվիրված է հատկապես բնորոշելու այն, ինչ որ իրեն բաժանում է հեղափոխականներից, իրեն հայտարարում է կոլլեկտիվիստ, և կոլլեկտիվիզմը սահմանավորում է՝ որպես մի պրոցեսյուն, ուր կապիտալիստական սեփականատիրությանը անհրաժեշտորեն և պրոգրեսիվ կերպով փոխարինելու է սոցիալական սեփականատիրություն (կամ ազգային, կամ մունիցիպալ)»:

Քննադատության մեջ կարդում ենք.

«Տեղին կլիներ զանազանել հետևյալ դաղափարներ. 1. կոլլեկտիվիստական ռեժիմը. 2. մի վարդապետություն, ըստ որի, այդ ռեժիմը ձգտում է անհրաժեշտորեն կապիտալիստական ռեժիմի տեղը բռնել գործնականապես. 3. մի վարդապետություն, ըստ որի, այդ ռեժիմը ներկայացնում է թե՛ երջանկության և թե՛ արդարության տեսակետից կապիտալիստական սեփականատիրությունից իրավականորեն ավելի բարձր մի ռեժիմ»:

Ծանոթությունների բաժնում առանձին դիտողություններ կան A. և C. հատածների, ինչպես նաև քննադատության մասին հինգ հեղինակությունների կողմից կատարված:

«Մատերիալիզմ»

Մատերիայի և մատերիալիզմի մասին ավելի քան վեց էջի վրա խոսացած են փիլիսոփայության մեջ սկզբից ևեթ գոյություն ունեցող ամենակարևոր և հիմնական հայացքներն ու տեսակետները: Այստեղ կարևոր է նշել միայն D նշանակությունը:

Օնտոլոգիական, հոդեբանական և բարոյագիտական մատերիալիզմի սահմանավորումը տալուց հետո կարդում ենք սոցիոլոգիական մատերիալիզմի մասին.

«Պատմական մատերիալիզմ. Այս տերմինը ստեղծել է Էնգելսը՝ բնորոշելու համար Կարլ Մարքսի վարդապետությունը, ըստ որի տնտեսական երևույթները հիմքն են կազմում ու պատճառական ազդակը հանդիսանում ամենայն պատմական և սոցիալական իրականության: Հասարակության տնտեսական կառուցվածքը այն իրական հիմնաքարն է, որի վրա բարձրանում է որևէ իրավական և քաղաքական վերնաշենք և որին համապատասխանում են հասարակական գիտակցության որոշ ձևեր...: Նյութական կյանքի արտադրության ձևը պայմանավորում է ընդհանրապես սոցիալական, քաղաքական և ոգեկան կյանքի պրոցեսները» (K. Marx. Zur Kritik der politischen Oekonomic, 1859)*:*

Մարքսի այս մեջբերումը լուսաբանող մի ուրիշ հատված էլ բերված է Էնգելսի Hern Eugen Dühring's Umwälzung der Wissenschaft, *էջ 12-ից: Բայց ավելի հետաքրքիր է ծանոթության մեջ առաջ եկած վեճը պատմական մատերիալիզմ տերմինի մասին. այդտեղ կարդում ենք.*

«Պատմական մատերիալիզմ արտահայտությունը հաճախ քննադատվել է և, ինձ թվում է, իրավացի կերպով: Ստուգաբանորեն այդ արտահայտությունը կարող էր կիրառվել նաև Սպենսերի սոցիոլոգիայի վրա, որի հիմքը կենսաբանությունն է: Ինձ թվում է տնտեսական դետերմինիզմը շատ ավելի ճշգրիտ կլիներ և հատուկ կոչու-

մը: Լորիան առաջարկում է պատմական էկոնոմիզմ (ծանոթ. Կ. Ռանձոլիի):

«Տնտեսական դետերմինիզմը նույնպես երկդիմի կլիներ. այդ հնչանակեր ավելի շուտ «մի վարդապետություն, ըստ որի տնտեսական երևույթները են թելադրվում դետերմինիզմի», քան թե «մի վարդապետություն, ըստ որի տնտեսական երևույթները որոշում են բոլոր սոցիալական իրերը»:

* * *

Կոմմունիզմ, կոլեկտիվիզմ և մատերիալիզմ գաղափարների սահմանավորումները ըստ մեծի մասին թարգմանաբար բերելով՝ մենք կարծում ենք՝ որոշ չափով պարզած ենք լինում այդ երկի արժեքը՝ մեզ հետաքրքրող տեսակետից: Թեև պիտի խոստովանել, որ հենց այդ տեսակետից ցանկալի շատ բան էր մնում անելու, որպեսզի կարելի լիներ համաչափություն մտցնել նրա շուտ փիլիսոփայական արժեքի հետ: Ինչքան որ լրիվ, ամբողջական ու բազմակողմանի է տրամաբանության, ճանաչողության տեսության, բարոյագիտության, էսթետիկայի և մետաֆիզիկայի մասին եղած ոչ միայն բառապաշարը, այլ նաև սահմանավորումները, քննադատություններն ու ծանոթությունները, այնքան էլ հաջորդական կերպով պակասում են ոչ միայն բառապաշարը, սահմանավորումները, քննադատություններն ու ծանոթությունները, այլ նաև դրանց որակը, հեղինակավորությունը, հանրաժնք ընդունելիությունը հոգեբանության սոցիոլոգիայի, բիոլոգիայի, պատմության, իրավունքի և տնտեսագիտության վերաբերմամբ: Այս հասկանալի է ինքնին գործի բնույթից իսկ. դրա համար անկարելի է մեղադրանք հնարել: Եվ այդպես լինելով հանդերձ, այդ սահմանների մեջն իսկ, հարևան գիտական դիսցիպլիննները միայն գնահատելի տուրք են վերցնում իրենց ամենագործածական տերմինների այսպիսի փիլիսոփայական ձևակերպումից: Ամեն անգամ, երբ մարդիկ խորանում են և մատածում արմատականորեն, կարծում են, թե փիլիսոփայություն են անում: Հատկապես մեր հայկական իրականության մեջ շատերը կան, որոնք, օրինակի համար ասենք, գրական խնդիրների քննության մեջ առատորեն խառնում են փիլիսոփայական տեղեկություններ: Այս վտանգը ամեն րոպե նկատելի է փիլիսոփայության մեջ, և այդ պատճառով էլ «փիլիսոփայության բառգիրքը» անընդհատ հրավիրում է ընթերցողի ուշադրությունը նման չափոթություններին վրա: Պարզ է ուրեմն, որ հարևան գիտությունների բնագավառը ոտնակոխությունները կատարելով՝ հեղինակները միայն ավելի ուժգին կերպով շեշտած են լինում չափոթություններից խուսափելու, շեղումներ և սայթաքումներ չկատարելու անհրաժեշտությունը: «Ընդհանուր լեզու» գտնելու

անվիճելի պահանջը այս բառարանի մեջ մի օրենսգիրք կարող է գտնել:

Մյուս կողմից, «պաշտոնական դիտության» համար անընդունելի և անճանաչելի մնացած ինչքան արժեքներ մենք տեսնում ենք այստեղ առանց նախապաշարման և կրքի, վերարտադրված հնարավոր ճշտությամբ: Մարքսի, Էնգելսի, երրորդ ինտերնացիոնալի և սովետիզմի մասին Եվրոպայում սովորություն է, որ «պատկառելի» մարդիկ լռություն են պահում, «անպատկառները» հայհոյում: Մեր տեսած մեջբերումները միայն բավական են խորտակելու այդ սովորությունը, դրանից միայն ավելի է մնծանում որևէ աշխատության արժեքը, հատկապես փիլիսոփայական մի աշխատության, ուր նախապաշարմունքները, եթե մի քանիսին դուրեկան լինեն, արդարացում, սակայն, չեն կարող դտնել ո՛չ պատմության, ո՛չ էլ փիլիսոփայության առջև:

IV

Ի՞նչ չափով Ա. Լալանդի «Տեխնիկական և Գիտնագատական բառգիրք փիլիսոփայության» աշխատությունը կարելի է համարել կոլեկտիվ աշխատանքի արդյունք. Արդյոք էկլեկտիզմը և սինկրետիզմը չե՞ն տիրապետում այդտեղ միահեծան:

Այս երկու հարցին էլ կարելի է կարճ պատասխան տալ: Մանավանդ երկրորդ հարցը

[Թերի է. անթվակիր] [Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր:

ՄԱՍ III

ՅԱՎԵԼՎԱԾ

Փաստաթղթեր

№ 1

Ванское
Окружное
Управление
№ 211

Свидетельство

Ван, 16 мая 1915

Представителю сего жит. гор. Вана Симеону Сумбатяну разрешено ношение револьвера сист. "маузер".

[печать]
ՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
1915.7.V
Ванское окружное Правление

За Губернатора
гор. Вана и округа [ՎԱՐԱԶԴԱՏ] ԴԵՐՈՅԱՆ

Секретарь канцелярии
Губернатора П. ԼԵՎՈՆՅԱՆ

Բնագիրը՝ ձեռագիր։

Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 242, ց. 1, դ. 9, թ. 2։

№ 2

ՄԱՅԻՍԻ 7-Ի՞Ց ՄԻՆՉԵՎ 22-Ը
[1915 թ.]

Մարմինների կազմակերպությունը մի շարք փոփոխություններից հետո հետևյալն է.

I. Ոստիկանությունը.— *Դ. Փափազյան*[1]*, ոստիկանապետ, օգնկն*[2]*. Ղևոնդ Խանճյան. առայժմ 60 ոստիկաններ Քաղաքի և Այգեստանի համար: Կոմիսերները՝ 1. Գրիգոր Ճոնյան. 2. Քենտրչի – փոխ-կոմիսեր՝ Կարապետ Ճանոյան. 3. Նորաչեն՝ Արմենակ Մկրտիչյան. 4. Արարք՝ Մկրտիչ Կարաստեֆերյան. Քաղաքամեջ՝ փոխ-կոմիսեր՝ Սեթ Ասլանյան:*

II. Կալվածական-գաղթականական մարմին.— *Ա. Դաւթինյան*[3] *(նախգ.), Ա. Թերզիբաշյան, Ա. Միրզախանյան, փաստաբան Կարապետ Էֆ. և Հ. Ժամագործյան:*

III. Քաղաքապետությունը.— *պ. Մևոզյան (նախգ.), Տեր-Պողոսյան Վ., Մարության Վ., Գափամաջյան Ս. և Վուվունիկյան Ա.:*

IV. Դատարանը.— *Աղաբեկ Էֆ. (նախգ.), Շատվորյան Ռ., Թելջան Էֆ. (գործադիր պաշտոնյա), Քաջունի Ե. և Գալիկյան Հ. (դատախազ):*

V. Տնտեսական Մարմին.— *Ճիտեջյան Գ. (նախգ.):*

VI. Ընդհ. Քննիչ.— *Կ. Էֆ. Այճյան:*

VII. Նպաստից Հանճնաժողովը.— *Մկրտիչյան Հ. (նախգ.), Պարիկյան Գ., Մարության Փ., Պարսամյան Ա., Գափամաճյան Կ. և Թաշճյան Պ.:*

VIII. Տներու Հանճնաժողով.— *Հյուսյան Մ. (նախգ.), Երամյան Մ., Խոջամիրյան Ա., փաստաբան Կարապետ Էֆ.:*

IX. Կրթական Մարմին.— *Մինասյան Մ. (նախգ.), Նալբանդյան Մ., Ռշտունյան Ե., Մելիք-Ադամյան Ռ.:*

X. Երկրագործական Մարմին.— *Չենոբյան Խ. (նախգ.), Ավետաղայան Ա., Ռոբինսոն:*

---

[1] *Փափազյան Դավիթ (1884–1961) – ՀՅԴ անդամ, հայ ազգային-ազատագրական շարժման ակտիվ մասնակից: 1921 թ. նշանակվել է Երևանի միլպետ: 1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո բնակություն է հաստատել Թավրիզում:*

[2] *Հապավումները կարդալ. գվոպտ.— գավառապետ. նախգ.— նախագահ. օգնկն.— օգնական. թրգմ.–թարգմանիչ. կլվծկն.–գաղթկնկ.— կալվածական-գաղթականական. տնտ. մարմին – տնտեսական մարմին. ընդհ. քննիչ – ընդհանուր քննիչ. քաղաքապետարն-քաղաքապետարան:*

[3] *Դաւթինյան Արտակ Մկրտչի (1878–1950) – հրապարակագիր, հասարակական գործիչ, ՌԱԿ անդամ, մասնակցել է Վանի 1915 թ. ինքնապաշտպանական կռիվներին, ընտրվել է Վասպուրականի ժամանակավոր կառավարության նահանգապետի դիվանապետ:*

Գավառի կազմակերպությունը

1. Շահբաղիի գավառապետությունը.– *Աղավնյան Աբել (գվռպտ.), Օվիկյան Մ. (օգնկն.), Համբարձումյան Ստ. (թրգմն.), ոստիկան 50:*
2. Արտամետի գավառապետությունը.– *Հովհաննես Գոմեճյան (գվռպտ.), Լ. Մելիք-Դատյան (թրգմն-օգնկն.), ոստիկան 50:*
3. Ոստանի գավառապետությունը.– *Լևոն Գափրիելյան (գվռպտ.), Զ. Կորկոտյան (օգնկն.), Հ. Փալապեքյան (թրգմն.), ոստիկան 150:*
4. Ալյուրի գավառապետությունը.– *Հյուսյան Հ. (գվռպտ.), Շալջյան Ա. (օգնկն.), Ս. Առաքելյան (թրգմն.), ոստիկան 50:*
5. Կյոսաննոցի գավառապետությունը.– *Փ. Մարության (գվռպտ.), ոստիկան 50:*
6. Արճեշի գավառապետությունը.– *Ն. Ժամադուրծյան (գվռպտ.), Գ. Թումմասյան (թրգմն.), ոստիկան 50:*
7. Արճակի գավառապետությունը.– *Շիրին (գվռպտ.), ոստիկանապետ՝ Տաղվերանցի Մկո, ոստ. 50:*
8. Գոլծուքի գավառապետությունը.– *Գ. Թոխմախյան (գվռպտ.), ոստ. 50:*
9. Հայոց Ձորի գավառապետությունը.– *Ն. Նալբանդյան (գվռպտ.), Ն. Մելիքյան (ոստիկանապետ), Ս. Համբարձումյան (թրգմն.), ոստ. 50:*
10. Շատախի գավառապետությունը.– *Ս. Մեսրոպյան (գվռպտ.), Ա. Բազդասարյան (վաշտապետ), ոստ. 150:*
11. Ճանիկի գավառապետությունը.– *Ա. Սեմերջյան (գվռպտ.), Ս. Տեր-Սիմոնյան (ոստիկանապետ), ոստիկան 50:*

Թվեր

Քաղաքի և Այգեստանի պաշտոնյաների թիվը մոտավորապես.

1. Ոստիկան	*60 մարդ*	*7. Նալբանդյ.*	*6 մարդ*
2. Կլվծկն-Գղթկնկ.	*5 ,,*	*8. Տուները*	*6 ,,*
3. Քաղաքապետրն	*20 ,,*	*9. Կրթական*	*5 ,,*
4. Դատարան	*8 ,,*	*10. Երկրագործկ.*	*5 ,,*

5. Տնտ. Մարմին	20 ,,	11.. Դիվանատունը	15 ,,
6. Ընդհ. Քննիչ	2 ,,		

Գումարը 152 մարդ

Գավառի պաշտոնյաների թիվը մոտավորապես

1. Շահբաղի	50 մարդ	7. Արճակ	50 մարդ
2. Արտամետ	50 ,,	8. Գործուէթ	50 ,,
3. Ոստան	150 ,,	9. Հայոց Ձոր	50 ,,
4. Ալյուր	50 ,,	10. Շատախ	150 ,,
5. Կյուսնենց	50 ,,	11. Ճանիկ	50 ,,
6. Արճեշ	150 ,,		

Գումարը 850 մարդ

Քաղաքի պաշտոնյաների թիվը	152
Գավառի -,,-	850
Անցագիր է տրված	112
Արտոնագիր -,,- (դենքի)	132
Դիվանից գրվել են նամակներ	324
-,,- -,,- ապդեր	10

Դիվանատունը զբաղված է եղել բացառապես այս կազմակերպչական գործով: Մայիս 7,8,9,10 և 11-ին թե՛ հայ և թե՛ ռուս բանակի հայթայթման գործն էլ դիվանն է կատարել: Յուրաքանչյուր Մարմինը ինքն միայն կարող է ներկայացնել յուր գործունեության հաշիվը, որովհետև եթե դիվանատունը օրական մինչև 200 խնդրագրերի ընթացք է տվել, բայց միայն պատկանյալ իշխանութեյանց հղելու համար: Բայի այդ մոտավորապես 112 մարդ ստացել են ներքին կամ արտաքին անցագիր, և մոտավորապես 132 մարդ՝ դենք կրելու իրավունք, բացի ոստիկաններից, թեև իրականութեյան մեջ շատ ավելին է, քան տրված արտոնագրերի թիվը:

Վան, 22 մայիս 1915 Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր: ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, պ. 39, թ. 6–9:

№ 3

ՎԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՏՈՒՆԵՐՈՒ ՀԱՆՋՆԱԺՈՂՈՎԻՆ

№ 283

Վան, 20 մայիս 1915

Ձեր գործը առավելաբար անտես-Մարմնուկ հետ կապված լլլալով, Ձեր ժողովին մէջ առնք անտես Մարմնո ներկայացուցիչ պ. Համազասպ Տեր-Պողոսյանը:

[կնիք] Դիվանապետ
Վ. Տ.

/ Վանի
նահանգապետի
Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 10:

№ 4

ԲԱԲՎԻ ԳԱՂԹ. ՊԱՏՎԱՐԺԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Հայկավան, 20 ապրիլի 1916

Ապրիլի 19-ի երեկոյան ժամը 5-ին, Հայկավանի գաղթականներ ժողով մը գումարելով, իմիջիայլոց և զբաղվեցին հետացող ներկայացուցիչի փոխարեն նորը ընտրելու հարցով: Ընտրվեցին պ.պ. Վ. Տեր-յան ներկայացուցիչ և Գ. Քաջբերունի անձնափոխանորդ: Պատիվ ունենք ներկա գրութեամբ այս մասին հայտնելու պատ(վարժան.— Ռ. Ս.) կոմիտեիդ:

Քարտուղար
Գ.ր. Քաջբերունի

Ժողովի
Նախագահ
Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր:

ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 256, թ. 2:

№ 5

ԲԱՔՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ԵԿԵՂ(ԵՑԱԿԱՆ.–Ռ. Ս.) ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ 1915–16 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ավագ ուսուցիչ	*պ. Գալուստ Իսքենտերյան*	*գաղթական*
–,,–	*Վարազդատ Տերոյան*	*–,,–*
–,,–	*Պարույր Ստամբոլցյան*	*ռուսահայ*
	օր. Մարգարիտ Զոլախյան	*–,,–*
–,,–	*Սաթենիկ*	*–,,–*
	Տ. Օլգա Մելիք-Ալլահվերդյան	*–,,–*
	պ. Աղաբեգ Համբարյան	*գաղթական*
	պ. Հ. Մովսեսյան	*–,,–*
–,,–	*Արսեն Կեորկիզյան*	*–,,–*
–,,–	*Գրիգոր Քայբերունի*	*–,,–*

Նախագահ *անընթեռնելի*
քարտուղար Հ. Պետրոսյանց

[1916]

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 281, թ. 2:*

Ազգանունը բացակայում է – Ռ. Ս.

№ 6

ՁԵԿՈՒՑՈՒՄՆ
ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՕՐԵՆՔՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԿ(ԱԿԱՆ – Ռ. Ս.) ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ I ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ

1916 մայիս 10–13

Նախքան բուն զեկուցման անցնելը, պարտք եմ համարում հայտնել, որ Համագումարի արձանագրությունները դեռ չեն տպագրված. այդ պատճառով իմ զեկուցումը լինելու է փաստականից ավելի տպավորությունների և տրամադրությունների զեկուցում, և նույնիսկ աշխատանք մեր կոմիտեն էլ դործակից և աջակից դարձնելու

Համագումարի տրամադրության, ցանկությունների և որոշումների իրագործման:

Ինչպես հայտնի էր թերթերից և մեր մասնավոր տեղեկություններից, գաղթականական գործերով զբաղվող հայկ. հասարակությունների համագումարը տեղի ունեցավ Պետրոգրադում, 142 պատգամավորների մասնակցությամբ: Հարկելի կոմիտեիդ երեք ներկայացուցիչները չկարողացան դժբախտաբար – Ձեզ հայտնի պատճառներով – ներկա գտնվել նախապատերազմական ժողովի աշխատանքներին, ուր վճռվել էին իրավասության, նախագահական կազմի, աշխատանքի բաժանման, և այլն նման հարցերը: Համագումարի ընդհանուր տրամադրությունը և մտադրությունը ավելորդ դարձրին ոչ միայն ինձ, այլև Կովկասից հետզհետե հասնող նոր պատգամավորների համար էլ, վերոհիշյալ հարցերի վերաբերման կարիքը: Նախագահ էր ընտրվել պ. Ս. Գ. Մամիկոնյան[4], Մոսկվայի պատգամավորը. օգնականներ էին պ. պ. Գ. Ք. Զալխուշյան[5], Ա. Բ. Ասլիբեկյան[6] և պրոֆ. Վարդանյան[7]. քարտուղար՝ Հ. Թադևոսյան[8] մի քանի օգնականներով:

Հանդիսավոր բացումը կատարվեց մայիսի 10-ին ժամը 2-ին կեսօրից հետո, «Երկրաչափների ընկերության» դահլիճում: Գուցե բարձրաստիճան հյուրերի մասնակցության ներթադրությունն էր պատճառը, որ Հայկ. Համագումարը ստիպված էր օտար լեզվով կատարել իր հանդիսավոր բացումն, և իր ցանկությունների ու հույսերի արտահայտությունը: Ձեզ բոլորիդ հայտնի են արդեն, թերթերից և մասնավոր տեղեկություններից, թե ինչքան բարձր հայրենասիրությամբ և մեծ դուրմով տոգորված էին արտասանած ճառերը, մեր հայրենիքի և մեր դժբախտ եղբայրների մասին. ես խնայում եմ Ձեր ժամանակը: Մասնավոր պարտականություն դրվից պետական Դումայի մեր պատգամավորի վրա, այդ հանդիսավոր ժողովում արտահայտելու մեր շնորհակալությունները ռուսական պետության և հասարակու-

---

[4] *Մամիկոնյան Ստեփան (1859–1923) – իրավաբան, հրապարակախոս, խմբագիր, հասարակական գործիչ, Կալմիր Խաչի Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ, Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի և Հայաստանի խորհրդարանի անդամ: Անկախության հռչակագրի հեղինակ:*

[5] *Զալխուշյան Գրիգոր (1861–1931) – հասարակական գործիչ, իրավաբան: 1920 թ. Հայ անկուսակցականների միության նախագահ:*

[6] *Ասլիբեկյան Ալեքսանդր – սոցիալ-դեմոկրատական (մենշևիկյան) կուսակցության անդամ: Հայ անկուսակցականների միության վոխնախագահ:*

[7] *Վարպանով (Վարդանյան) Վարդան (1853–1919) – կենսաբան, պրոֆեսոր:*

[8] *Թադևոսյան Հովհաննես (1889–1974) – նկարիչ, պրոֆեսոր:*

յուններին – գլխավորապես «Տատիանայի կոմիտեին» – մեր դժբախտ եղբայրակիցներին ընծայած հյուրասիրության և խնամքի համար:

Նույն օրը երեկոյան իսկ սկսվեցին սեկցիաների նիստերը, որոնք չարունակվեցին անընդհատ չորս օր (որովհետև կարիք եղավ մեկ օր երկարաձգելու իրավունք ստանալ), օրական մի քանի անգամ յուրաքանչյուրը. իսկ ընդհ. ժողովները օրական մի անգամ կանոնավոր կերպով տարվեցին. վերջին օրը երկու ընդ. ժողով եղավ: Այս բոլորը ապացույց են աշխատանքի ներուժության գույն, բայց ոչ ընդարձակության և հիմնավորության: Ըստ որում, կովկասից, կամ գուտ գաղթականական մարմիններից թեև քիչ թվով ներկայացուցիչներ կային, բայց հարցերի ծանրության և դեպի գործ տածած հետաքրքրությունը բնականորեն ամբողջ աշխատանքը գրեթե գցել էին նրանց վրա: Մյուս կողմից, այդ նույն հանգամանքի չնորհիվ, գործը տարվեց բավական նեղ սահմաններում և թույլ հիմունքներով, ու գաղթականների ներկա վիճակը, վերաշինությունը, ներգաղթը, ինչպես և գաղթակ(անական – Ռ. Ս.) մարմինների հաչվետվությունը, գործունեության վերաբերյալ սկզբունքների մշակումը և պարզաբանումը, նաև բազմաթիվ զեկուցումները համարյա թե ոչ մի արձագանք չգտան Համագումարի մեջ: Որչափ որ այս և նման բաները մի այդպիսի Համագումարի ամենաբնական զբաղմունքները պիտի լինեն, բայց և այնպես նա ամբողջովին լցված էր այն հստակ գիտակցությամբ, որ ոչ մի Համագումար չի կարող լուծել և կարգավորել ոչ միայն այդ և նման բազմաթիվ հարցեր, այլև գարմանել շատ վիրավոր և ախտավոր կողմեր ու դործին տալ բնական ընթացքը, եթե գաղթակ. դործը մնալու է նույն անկազմակերպ վիճակի մեջ, ինչ որ եղել է մինչև այժմ: Այդ պատճառով Համագումարը առաջին վայրկյանից իսկ զգում էր, որ մի ծանր քար միայն պետք է շարժի նա տեղից, որպեսզի կառքը առաջ գնա. և այդ միակ ծանր քարը, գաղթականական դործի կազմակերպությունն էր:

Նախքան այդ հիմնական աշխատանքին անցնել, ես համառոտ կերպով կներկայացնեմ – դժբախտաբար միայն հիշողության վրա հիմնվելով – մյուս սեկցիաներում կատարված աշխատանքների բովանդակությունը, չուտով կենտրոնացնելու համար Ձեր ուշադրությունը «կազմակերպչական սեկցիայի» աշխատանքների վրա:

Ի միջի այլոց հայտնում եմ, որ դործում էին հինգ սեկցիաներ, ուր կայացած որոշումները չատ քիչ փոփոխություններով անցնում և հաստատվում էին ընդհ[անուր] ժողովների մեջ:

I. Դպրոցական սեկցիա.– *Ինչպես այս, նույնպես և բոլոր սեկցիաներում համարյա թե պակասում էին գուտ գաղթական. դպրոցներին կամ գործին հմուտ և հեղինակավոր ներկայացուցիչները: Ես ստիպված էի իմ ամբողջ ժամանակը տալ կազմակերպչական սեկցիային: Բայց այն սրամադրելի ժամանակը, որ ինձ մնացել էր, ես գործադրեցի այս սեկցիայում անցկացնել տալու, ըստ իս հիմնական այն տեսակետը, թե գաղթականների դպրոցական գործը ունի այժմ երկու կողմ. Ուրբանոցները ներկայացնում են դպրոցական տեսական միավորներ. իսկ Դպրոցները պատահական և անցողական միավորներ: Այդ պատճառով որբանոցները պիտի այժմյանից իսկ դնել հաստատուն և կատարյալ հիմունքների վրա, և ազատել գոնե այդ հաստատությունները անկանոնություններից և պատահական ազդեցություններից. պիտի բարձրացնել գոնե 25 ռուբլու յուրաքանչյուր որբի ամսական ծախսը: Գաղթականական գործի կենտրոնացումը պիտի ստեղծի նաև դպրոցի կենտրոնացում մի մարմնի և մի որոշ կանոնադրության շուրջ, որ պիտի կազմի և մշակի նորընտիր կոմիտեն: Սեկցիան բերեց նաև ուրիշ առաջարկներ, հիմնված պ. պ. Հ. Թադևոսյանի և Տ. Ռաամաջյանի[9] զեկուցումների վրա, դպրոցական առարկաների, դասապրքերի տեսակների և գաղթական ուսուցչության վերաբերմամբ, որոնց մասին ես ստիպված եմ այստեղ համառոտ լինել:*

II. Գյուղատնտեսական ելևմտական սեկցիա.– *Եթե Վերաշինության սեկցիա կազմել կարելի չեղավ, այդ նրա համար է, որ Վերաշինությունը իբրև խաղաղ ժամանակի աշխատանք, ներկա օրերում չի կարող ամբողջությամբ գործադրվել, և այժմ կարելի է միայն եղածը կործանումից և ոչնչացումից պաշտպանելով զբաղվել: Վերաշինությունը ապագայի գործ է. այժմ շատ քիչ բան կա անելու այդ ուղղությամբ: Այս տեսակետը, որչափ որ ընդունված, պետք եղած ճշտապահությամբ երևան չեկավ, սակայն, սեկցիայի բերած բոլոր առաջարկությունների մեջ: Գյուղատնտեսական և առհասարակ անտեսական վիճակի բարվոքման համար բերած բազմաթիվ առաջարկություններից կարևոր է այժմեն իսկ հոգ տանել մի չարք տեղական թանկագին բույսերի և կենդանիների վրա, որպեսզի տեսակը չոչնչանա. խնամքի տակ առնել լքված այգիները, տունկերը և գյուղատնտեսական հաստատությունները, և այլն: Իսկ երբ սկսք լինի*

[9] *Ռաամաջյան Տիգրան (Ռաշմաճյան. 1862–1946) – մանկավարժ, որպես ուսուցիչ և տեսուչ աշխատել է Ալեքսանդրապոլում, Երևանում և Թիֆլիսում:*

Վերաշինության, յուրաքանչյուր գաղթականի հատկացնել առնվազն 135 ռ. իր այդ կարիքների համար: Նկատի առնելով 200000 գաղթականների ներկայությունը, այդ գումարը կլինի ուրեմն 27000000 ռ., որն եռապատկվում է, եթե Վերաշինությունը տարածվի ոչ միայն դյուղատնտեսական կարիքների, այլև ընդհանուր տնտեսության և ընտանեկան հարկի շինության վրա: Համագումարը չդժվարացավ այսքան խոշոր ծրագիրների քվեարկության մեջ, քանի որ Վերաշինությունը կարող է լինել պետական ձևով և այս չափով առնվազն:

III. *Բժշկական սեկցիա.– Ոմանք աշխատանքներ չուններ կատարելու այս սեկցիան: Նա բերում էր այն առաջարկությունը, թե քանի որ գաղթականների բժշկական գործը իր վրա է վերցրել «Բաղաքների միությունը», լավ կլինի որ, այն հայկական կազմակերպությունները, որոնք դեռ զբաղվում են բժշկական գործերով, թողնեն այդ էլ նույն միության, և աշխատեն ընդհակառակն հիմնել կաշվի (մաշկային – Ռ. Ս.) և հոդեկան հիվանդությանց համար հիվանդանոցներ. մանավանդ առաջինի համար, որ լայն չափերով տարածված է գաղթականների մեջ:*

IV. *Իրավաբանական սեկցիա.– Ավելի գեղեցիկ ցանկություններով երևան եկավ այս սեկցիան. ցուցակագրելու և փաստագրելու ամբողջ հայ ողբերգությունը թվական ու փաստական տվյալներով, և հայկական ոճրապատումը իբրև պատմական հուշարձան հրապարակի վրա դնելու. հաշվելու հայկական կորուստները թվերով, գնով և արժեքով: Բացի այդ պետք է այժմվանից իսկ ապահովել գաղթականների իրավական և հասարակական դիրքը իրենց գտնված տեղերում, նույն տեղերի իշխանությանց և պայմանների հանդեպ. միջնորդել քրդերի զինաթափությունը լիակատար կերպով իրագործելու, հոդ տանել գրավված վայրերի մեջ կարգ և ապահովություն վերահաստատելուն, լքված սեփականությունները պահպանել և նրանց իրավական տերերին վերադարձնել, ու այդպիսով լուծել հին հողային հարցը և տեղիք չտալ նման նոր հարցերի առաջ գալուն: Կապմակերպել առաջավոր դիրքերում փախստականներ հավաքելու և խնամելու գործը, և վերջապես ազդու դիմումներ կատարել, կամավորներ տվող ազգին խնայելու նաև գերիներ ունենալ նույն պետության մեջ, ուր հայ գերիների թիվը մոտ 2000-ի կհասնի:*

V. *Կազմակերպչական սեկցիա.– Ես կարիք եմ համարում հայտնել, որ Պետրոգրադի Համագումարը միայն մի դրական, չոչափելի գործ կատարեց. և ըստ իս այնքան մեծ է այդ մեկ գործի արժեքն իսկ, որ*

նրա բոլոր մյուս պակասությունները դրանով ծածկվում են: Դա գաղթականական գործի օրենդրական ու վարչական կազմակերպությունն է: Ես պատիվ եմ ունեցել, սկզբից մինչև վերջը, մասնակցել նրա աշխատանքներին, պաշտպանելով այն տեսակետները, որոնք Ձեզ հայտնի են, և Ձերն իսկ են: Ամբողջ Համագումարն էլ այն կարծիքին էր, որ առանց այդ կազմակերպության, ոչ մի ցանկություն չի կարող իրականանալ, կամ Համագումարը ոչինչ պիտի չկարողանա կատարել: Բացի այդ, միաձայնություն կար նաև այն կետում, որ գաղթականական գործը անկարելի է թողնել այս վիճակում, որ անհրաժեշտ է ստեղծել ուժերի կենտրոնացում և աշխատանքի բաժանում, որ պետք է վերջ տալ անհաշիվ և անպատասխանատու գործունեության, և ստեղծել պատասխանատու մարմիններ, որոնց բաղկացուցիչ տարրերը հեռու լինեն նեղ հաշիվներից, անձնական հակումներից և իրենց ժամանակի քմահաճ տրամադրելուց. ըստ որում բարեգործության մեջն էլ կարող են դոյություն ունենալ սիրողներ և թեթուսներ: Ահա այն ընդհանուր հիմունքը, որոնց չուրջ, ըստ իս, միանում էին տրամագծորեն հակառակ սկզբունքների վրա կանգնողները:

Դլխավոր տարակարծությունները, վերոհիշյալ սկզբունքների դործադրության մեջ, կգտնվեին ընդհանրապես գաղթավայրերի (Կովկաս) և գաղութների (Ռուսաստան) ներկայացուցիչների միջև: Ո՞ւր պետք է լինի կեդրոնը, գաղթականական գործի այդ ռասխոնել կազմակերպության: Մոսկվայի և Պետրոգրադի մեր հայրենակիցները գաղթականական գործի ներկա անմխիթար կացության պատճառները գտնում էին ոչ միայն կեդրոնացման չդոյության մեջ, այլև նրանում, որ այդ գործը դտնվում է գաղթավայրերում, Կովկասում: Կովկասյան մթնոլորտը թունավորված է ազգամիջյան, կուսակցական և գավառական ախտերով. գործը տուժում է գործի վերակավարության չաս մոտիկությունից: Ընդհակառակն մայրաքաղաքը կարող է մի երջանիկ համադրություն ներկայացնել ակսիմիական տեսականության և իդեալ գործնականության. որչափ որ հեռու գործից, բայց նույնքան ավելի ուժեղ, որովհետև մոտիկ ուժի և իշխանության աղբյուրներին:

Որ այս հիմունքներն ապացույց են այն համառ հետևողականության, որ նկատվել է սկզբից ևեթ գաղթականական գործի մեջ առընդհատ աբստրակցիա կատարելու, անընդհատ կենդանի իրականությունից կտրվելու և հեռանալու համար — ինձ թվում է, որ դա արևի լուսի պես հայտնի է բոլորիդ, և ես ավելորդ եմ համարում

դրանց հերքումները և հակափաստերը բերել այստեղ, որոնք Ձերն իսկ են, և ավելի հիմնավոր, քան ես կկարողանայի երբևիցե տալ: Բայց Համագումարի մեծագույն փորձությունը այս խնդրի մեջն իսկ էր: Պետք է չմոռանալ երկու բանակների ջերմ հայրենասիրությունը և անսահման գումի գիտակցությունը, եթե տեսնում ենք Համագումարի հաղթական վճռականությունը, այս տարակարծությանց մեջից, ճնշող մեծամասնությամբ, գաղթականների ճակատագիրը էքսպերիմենտների չենթարկելու և իրականությունից չհեռանալու համար:

Երկրորդ գլխավոր տարակարծությունը գործի կեդրոնացման վարչական ձևի մեջն էր, և որն առաջուց վճռված լինելով, պակաս չնպաստեց առաջին տարակարծության բառնալուն: Բաքվի պատգամավորները չուտով գիջեցին կեդրոնացման երկվության սկզբունքից, որի չուրջ ի ներքուստ համաձայնություն էին կայացրել իրենք, տեղ տալու համար մի ավելի ռասիոնել կազմակերպության, որ գաղթող ուրիշ ազգերի մեջ էլ ընդունվել է: Նախ ասենք, որ ընդհանուր համաձայնություն կար, որ կեդրոնի վարչական կազմը պետք է կազմված լինի ռոճիկավոր ընտրյալներից. և որովհետև դժվարությունները բազմատեսակ են հաճախակի համագումարների համար, ուստի կարելի է կազմել Համագումարի տարրական մի պատճեն, մոտավորապես վաթսուն հոգուց բաղկացած մի մարմին, որ կոչվելու է «Պատերազմից վնասվածներին օգնող Հայկական կեդրոնական կոմիտե»: Սրա մեջ մտնում են, իրենց գործի մեծության չափով, հայկական հաստատությունների ներկայացուցիչները: Համագումարը նշանակեց այն մարմինները, որոնք կարող են ընտրող լինել, ընտրությունը թողնելով իրենց: Այստեղ անսխալ լինելու փոքրիկ հավակնությունը պիտի ներեք ինձ, որ մանրամասն ցուցակը չբերեմ. միայն մի քանի բացառիկ կետեր եմ ուզում երևան հանել: Նախ որ, այդ մարմինը կարող է իր թիվն ավելացնել, եթե անհրաժեշտ գտնի: Երկրորդ, Վեհափառ կաթողիկոսը կարող է «Եղբայրական օգնության» մարմիններից պատգամավորներ ուղարկել, ինչ թիվով, որ Նորին Սրբության հաճելի կթվի: Երրորդ, այդ 60 հոգու մեջ են տասն գաղթական ներկայացուցիչներ, որոնք կընտրվեն գոյություն ունեցող տաճկահայ նույնատեսակ մարմիններից:

Այս «Կեդրոնական կոմիտեն» իր նիստերը դումարելու է Կովկասում, տարեկան տոնվաղն երկու անգամ: Որպեսզի Համագումարի քարոզած համերաշխությունը կատարյալ լինի, նա ոչինչ չարաց իսկապես, որ այս կամ այն կերպ չնպաստեր դրան: Նա նույնիսկ իր

ճակատագիրը, կամ իր ցանկութիւնների իրագործման առաջին քայլն իսկ հանձնեց նրանց ձեռքը, որոնք դուցե ներկա պրեսթյան հեղինակներն են, ընտրելով ինն հոգուց կազմված մի մարմին, որը լինելու է կեդրոնական կոմիտեի կորիզը, և նրա դոյութիւնն իրականացնող. դրանք են. Պետրոգրադից՝ Ասրիւեկյան Ա. Բ., Մոսկվայից՝ Մամիկոնյան Ս. Գ., Նոր-Նախիջևանից՝ Զալխուչյան Գ. Ք., Բաքվից՝ Տեր-Միքայելյան Հ. Բ.[10], Թիֆլիսից՝ Առաքելյան Հ.[11], Հարությունյան Ս.[12] և Սահակյան Ա.[13], «Եղբայրական օգնութիւնից» Հ. Գարեգին վարդապետ, և գաղթականներից՝ Թերլեմեզյան Փ.[14]: Թեև առարկվեց, որ անհամերաշխներին տեսականորեն համերաշխեցնելով չէր, որ պիտի առաջ գար ցանկալի համերաշխութիւնը, և ընդհակառակն վտանգ կար հակառակ հետևանքի հասնելու, բայց գոնն հինգ հոգու համագործակցութիւնն ապահովված էր «Կեդր(ոնական — Ռ. Ս.) կոմիտեի» հաջողութեան համար: Կեդրոնական կոմիտեն իր միջից ընտրելու է յոթն հոգուց բաղկացած մի մարմին, որը լինելու է ռոճիկավոր, և իր կողքին կազմած հանձնաժողովներով դառնալու է գաղթականական ամբողջ գործի տերն ու իրական վարիչը: Գոյութիւն ունեցող մարմինները պահելու են իրենց ինքնավար գործունեութիւնը, անչուշտ միշտ համերաշխեցնելով այն, կեդր. կոմիտեի գործունեութեան հետ: Կեդր. կոմիտեն ունենալու է իր ներկայացուցիչ մարմինը Պետրոգրադում, նպաստ առանալու և բաշխելու գործի վերաբերմամբ:

Ահա Համագումարի «միակ» աշխատանքի գլխավոր գծերը, նրա կազմը, գործելակերպը, օրակարգը և նման բաները եղել են դուցե շատ պակասավոր և քննադատելի. մի պակասութիւն է դուցե նաև

---

[10] *Տեր-Միքայելյան Հայկ — հասարակական-քաղաքական գործիչ, Հայ ժողովրդական կուսակցութեան անդամ, «Հայոց մարդասիրական ընկերութիւն» մշակութային, կրթական և բարեգործական ընկերութեան նախագահ:*

[11] *Առաքելյան Համբարձում (1855–1918) — հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ. Հայ ժողովրդական կուսակցութեան հիմնադիրներից: 1913–1918 թթ. հրատարակել է «Ալրոր» ամսագիրը և «Մշակ» թերթը:*

[12] *Հարությունյան Սամսոն (1875–1941) — հասարակական-քաղաքական գործիչ. Հայ ժողովրդական կուսակցութեան ղեկավարներից. Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան նախագահ, Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի անդամ, 1918–1919 թթ. արդարադատութեան նախարար:*

[13] *Սահակյան Ավետիք (1864–1933) — հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ, ՀՀ խորհրդի նախագահ, 1918–1919 թթ. խորհրդարանի փոխնախագահ, հանրային ինամատարութեան նախարար:*

[14] *Թերլեմեզյան Փանոս (1865–1945) — նկարիչ, ազգային-ազատագրական շարժման գործիչ, 1915 թ. Վանի Այգեստան թաղամասի Զինվորական մարմնի անդամ:*

այն, որ նա միայն մի դրական գործ է կատարել և մնացել է ընդհանրացումների և ցանկությունների բնագավառում. նրա ձգտումները համազգային են եղել, բայց ոչ կազմը, և այլն, նման բազմաթիվ առարկություններ:

Բայց նրա գործունեության մեջ մեծ դեր է ունեցել իր կազմի որակը և ոչ թե քանակը. Կովկասից եթե գալու լինեին 50-ի տեղ 100 պատգամավոր, ես հավատացած եմ միայն ալիտի ավելի հեչտացնեին կատարված աշխատանքը, և միայն այդքան: Հրապարակի վրա դրված հարցը մի թշվառ ժողովրդի օգնության կազմակերպությունն էր. այդ տեսակետից համագումարը, եթե ոչ չատերի, բայց գոնե գաղթական պատգամավորների սպասելիքներն իրականացրից և արդարացրեց: Ահա թե ինչո՞ւ համար է, ես թուլլ եմ տալիս ինձ հարցնել պատկառելի կոմիտեիդ, թե ինչքա՞ն կարող է նա նպաստել համագումարի որոշումների իրականացման:

Վ[արազդատ] Տերոյան

«Բաքվի Հայոց Գաղթականական Կոմիտեին»
Բաքու, 7 Հունիսի 1916
Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ. ֆ. 27, ց. 1, գ. 286, թ. 1–6:*

№ 7

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ!

[Երևան, 6–19 փետրվարի 1919]

Արևմտահայ Բ. Համագումարը բացվում է քաղաքական և տնտեսական, նույնիսկ սոցիալական բոլորովին այլ պայմաններում, քան Ա. Համագումարը: Մոտ հինգ տարի է, ինչ մենք թողել ենք մեր Հայրենիքը և ապրում ենք վախստական, գաղթական վիճակով: Մեր Հայրենիքի հետ թողել ենք մենք նաև մեր իբրև կազմակերպված ժողովուրդը և համայնք ապրելու ձևերը և հաստատությունները: Սակայն երբեք մենք չթողինք իբրև կազմակերպված ժողովուրդ և համայնք ապրելու մեր կամքը, պահանջը և հատկությունը: Այդ կամքի արտահայտությունը սերճախոս կերպով երևան եկավ Ա. Համագումարի ժամանակ, երբ մենք այնքան չատ կազմակերպություն ունեինք, որ կարողացանք սոսկ մեր ընկերությունների, միությունների և հաստատությունների ներկայացուցիչները հավաքելով, կազ-

մել ժողովրդական ներկայացուցչությունը: Բայց, ինչպես երևում է, պաղթից չաս տարիներ հետո միայն մենք հնարավորություն պիտի ունենանք հասկանալու պաղթի բերած չարիքների մեծությունը, խորությունը և անսահմանությունը, որովհետև և ռուսական հեղափոխությունը և դրան հետևող գերմանո-թուրքական ներխուժումը մեր նոր հայրենիքի սահմաններում, փոթորիկի պես ավլեցին և դեն չպրտեցին, իբրև աչնան տերևներ, մեր բոլոր միությունները, ընկերությունները և կազմակերպությունները: Այսօր, սակայն, երբ փոթորիկն անցել է, և չատերը կարծում են, թե ծագել է մի կենարար և լուսավոր արև, այսօր մենք նորից հավաքվում ենք սոցիալական բոլորովին այլ պայմաններում, ուր ոչնչացած կազմակերպությունների տեղ մի նոր, ավելի ուժեղ, ավելի հաստատուն և տևական կազմակերպություն ստեղծելու մեր կամքն է ամենից առաջ մեր այստեղ հավաքվելու raison-d'ētre [լիննելիության իրավունք. ֆր.] կազմում: Այն օրվա կազմակերպությունների կազմակերպումը պետք է լիներ Ա. Համագումարը. այսօրվա անկազմակերպության կազմակերպությունը պետք է լինի Բ. Համագումարը:

Առաջին անգամ, երբ մենք հավաքվեցինք, տնտեսական չաս ավելի նպաստավոր պայմաններու մեջ էր գտնվում մեր ժողովուրդը, քան այսօր: Ես դժվարանում եմ Արևմտյան Հայաստանի գաղթական ժողովրդի տնտեսական թշվառությունները այնքան նսեմացնելու, որ քաջությունն ունենամ խոսքով արտահայտելու այդ: Երբ դուք դես ու դեննից կարդում եք դիակներ կրծողների, ավելցուկներով կերակրվողների, իրենց պատիվը ծախողների մասին և տեսնում ամեն քայլափոխին գերեզմաններից փախածների կմախքացած և պարհուրելի կերպարանքները, այն ժամանակ թույլ տվեք, որ ես հրաժարվեմ ավելի երկար ու ավելի մանրամասնորեն նկարագրելու հին-պատմական ժողովրդի այդքան մեծ թշվառությունը և մարդկությունից ունեցած հեռավորությունը: Մեր ժողովրդի տնտեսական կործանման այսպիսի սարսափելի պայմանների մեջն է հավաքվում Բ. Համագումարը, մինչդեռ այն ժամանակ մենք կուլտուրական պահանջներով էինք հրապարակ գալիս ընդհանրապես:

Ավելի մեծ տարբերություն կա այն օրվա և այսօրվա քաղաքական կացության մեջ: Այս երկու տարիները (1917–1918 թթ. – Ռ. Ս.), որոնք բաժանում են այն օրերը այս օրերից, քաղաքական պատկերի հորիզոնականը դարձրել են ուղղահայաց և ընդհակառակն: Մի աննկարագրելի համեստություն կար այն օրերի մեր քաղաքական դաղափարների մեջ. մեր պարտությունը մեր ուղեղում ստեղծել էր

ուղիղ և ճշմարիտ մտածողության անկարելիությունը և գերմանական հաղթանակները բռնակալորեն մեզ դարձրել էին առանձնատեսակ ռեալիստներ: Մեր քաղաքական իդեալների համար մեր ամբողջ տնտեսական և սոցիալական կացությունը կործանելուց հետո մենք քաղաքական իդեալներ ունենալու անընդունակություն էինք երևան բերում կատարելապես և միայն մի ցանկություն ունեինք մեր բազմաթիվ և բազմատեսակ խնամակալների կողքին ավելացնել մի ուրիշ տեսակի խնամակալություն էլ: Այդպես էր, որ մեր քաղաքական իդեալների դժգույն և անմիտ արտահայտություններից հետո, մենք մեր քաղաքական գործիչներին նույնիսկ բարեգործական և խնամակալության աշխատանքներին յծեցինք: Այդ էլ մի նոր տեսակի էքսպերիմենտ էր համոզվելու, թե գաղթական վիճակի ստեղծած չարիքը կվերանա գաղթական վիճակի վերացմամբ, ու այդ ուղղությամբ թափած ջանքերը զուտ կիսամիջոցներ են: Արդարացուցիչ շատ հիմունքներ կան այն օրերի այդպիսի աշխատանքներին և գուցե չպակասեն լրջմիտ խորհողներ այս օրերին էլ, որպեսզի արդարացնեն այդ էքսպերիմենտներից առած մեր դասերը և անհրաժեշտ համարեն, որ մենք ուրիշ բաների մասին էլ մտածենք: Ջուր կլիներ ավելի երկար կանգ առնել այս տեսակետի հիմնավորման վրա: Ով այդպես չգիտե, նա երբեք էլ այդպես չպետք է դիտենա:

Ո՛չ թե միայն մեր թշվառության պրոբլեմի անլուծելիությունն է, որ մեզ սարսափեցնում է և հեռու պահում նախկին փորձերը կրկնելու փորձությունից, ո՛չ թե միայն Հանրապետական կառավարության թափած ջանքերի բավարարությունն է, որ մեր ուշադրության ծանրության կենտրոնը տեղափոխում է այլ ուղղությամբ, ոչ թե միայն մեր կատարածի և կրածի ինքնագիտակցությունն է, որ մեզ առաջնորդում է դեպի նոր հորիզոններ, այլև շատ ավելի գործավոր պատճառներ և պայմաններ մեզ ի վիճակի են կացուցանում, մեզ պարտադրում են մի անգամ ընդմիշտ և գուցե այսօր միայն հայտարարել մեզ կամ քաղաքականորեն մի միավոր կազմելու անընդունակ կամ քաղաքական-պետական կյանքով ապրելու պահանջատեր:

Որովհետև ժողովուրդների պատմության այս հսկայական լինելության մեջ ապրելու միջին ճանապարհները ոչնչանում են բոլորովին և գլխին տեղ է մնում կամ օդի մեջ, կամ հողի մեջ: Ապրելաձևերի այս միջին ճանապարհների ոչնչացման պատմական վայրկյանում, հայ ժողովուրդը ուր էլ որ գտնվելու լինի, և ինչ պայմաններում էլ, դարձյալ կարող է ասել, որ իրեն համար գոյություն չունի այդ երկընտրանքը և այսօր չէ միայն, ոչ էլ այս պատերազմի ըն-

թացքին, որ նա ապացուցել է օդի մեջ, լույսի մեջ, ազատության մեջ ապրելու իր կամքը: Կովկասյան սահմաններում ապաստանած փախստականությունը սոսկ իր ֆիզիկական գոյության պահանջմամբ մի անհերքելի ապացույց է եղել այդ համառ կամքի արտահայտության, անգամ եթե մոռանանք մեր հեռավոր և մոտավոր պատմությունը մի րոպեով: Բայց այս փոքրիկ վիճակի մեծ ապացույցը հայ ժողովրդի ապրելու կամքը հիմնավորում է տևականորեն և ամբողջականորեն, որովհետև նա չէր կարող գոյություն ունենալ մեկ այլ տեսակի միջին ճանապարհի վրա, ուր մասերի կյանքը կարող էր հնարավոր լինել առանց ամբողջության կյանքի հնարավորության:

Հայ ժողովուրդը կարող է ապրել միացյալ, ազատ և անկախ Հայաստանի մեջ, կամ երբեք այլևս՝ այն հին և ավերակ միջին ճանապարհների վրա: Ամեն տեղ, ուր հնարավոր է հայ ժողովրդի անունից խոսել, մենք միևնույն բարբառն ենք լսում այս րոպեիս և ուրիշ կերպ չէր կարող լինել:

Եթե Համագումարը մեր ապրելու այդ միևնույն կամքի մի նոր արտահայտությունը պիտի լինի, այդ էլ այնպես միայն, որ հնարավոր դարձնե Հայրենիք վերադառնալը և վերաշինելը, որովհետև ահա երկիրը կանչում է մեզ և մեր ներգաղթի խնդիրը կարող է մեր քաղաքական իդեալների իրագործման առաջին քայլերից մեկը լինել:

Մեր քաղաքական իդեալների օրգանական կենսունակությունն է, որ պարզ ու պայծառ երևան է գալիս ամեն տեղ և մի ժողովրդի ապրելու հնարավորության հետ կապում այս րոպեիս նրա մեջ գոյություն ունեցող բոլոր հարցերը: Ձէ՞ որ այդ այնպես չէր կարող լինել, եթե հաստարմատ կոճղի փշրված բեկորները խնամքով չհավաքվեն և կյանքի համար չնախապատրաստվեն, եթե հայկական բանակի բազմաթիվ և հեռավոր մասերը իրար չմոտենան և իրար չճուլվեն, եթե գաղթողների ներգաղթի հետ տեղի չունենար նաև տեղահանվածների տեղավորումը և վերադարձը, եթե բռնի իսլամացածներին հնարավոր չլիներ բռնի հայացնել և եթե մեր կորուստների անոտահմանության հանդեպ կարելի չլիներ հաստուցման մի անոտահմանություն: Ո՛չ թե հայրենիքի ու վրեժի, այլ նույնիսկ սոցիալական անարդարության հրամայականն է իրրև ոճրագործ դատապարտելու այն քաղաքական գործիչներին, որոնք ժողովուրդների բնաջնջման գաղափարի մեջ բերում են մի ուրիշ ժողովրդի գործակցությունը: Այդ պատճառով է, դուցե, որ չատերն իրավունք կունենան անմոռաբ-

նակ հայտարարելու նույնիսկ մեր Հայրենիքը և միայն մի տեր ու տիրական ճանաչելու այն տեղի համար:

Մեր ներքին հորիզոնի վրա չէին կարող իհարկե այնպիսի հեռանկարներ գծագրվել, եթե հեռավոր և արտաքին հորիզոնի մեծ լույսերի տակ հնարավոր չլիներ տեսնել մեր հոգու խորքը, մեր կատարածի արժեքը և կատարելիքի անհրաժեշտությունը: Ես ուզում եմ ասել, եթե հայ ժողովրդի անվերապահ և անսահման զոհաբերությունները մեծ պատերազմին ընթացքին այսօրվա համար նպատակ չլինեին, և եթե չհաղթանակեր ամբողջ աշխարհի մեջ մեր անկախ և ինքնուրույն ապրելու կամքի հետ բոլորի անկախ և ինքնուրույն կամքը: Այդ պատճառով է, որ մենք երախտագիտության զգացումները միայն կարող ենք ունենալ ամեն բանի և ամեն մարդու հանդեպ, որ այս կամ այն կերպ նպաստել է արդարության և ճշմարտության հաղթանակին նպաստելու համար մեր հաղթանակին:

Արևմտյան Հայաստանի փախստական հայության երկրորդ համագումարը թող իր աշխատանքները սկսի այս լուսավոր և պայծառ երկնքի տակ և քաղաքական կացության ծանրաչափի բարձրագույն աստիճանի վրա: Թող նա մեծ ձայների մեջ մի փոքր ձայն լինի, մեծ հոսանքների մեջ մի փոքրիկ վտակ բազմապատկելու և մեծացնելու համար մեևնույն ձայները և մեևնույն տարրերը: Նրա համար այս րոպեն անվերադարձ է, ինչպես ամբողջ հայ ժողովրդի համար, նույնպես իր ամբողջ պատմության ընթացքին համար: Թող նա նույնիսկ անհամեստությամբ հնչեցնի իր ապրելու կամքը միաժամանակ այնքան զորությամբ և ուժգնությամբ, որ մեր կամքի ուժանակի առջև լսեն մեր խնդիրները, հակառակորդների չկամությունները և թերությունների անհեթեթությունները:

Այսօր ահա, ավելի քան չորս տարուց հետո, երբ մենք նոր էինք մտել պատերազմի մեջ, այսօր ահա մենք պետք է նորից բորբոքենք մեր հավատքի խարույկը, մեր եղբայրների, մեր դաշնակիցների, մեր բարեկամների և մի քիչ էլ մեր սրտերի մեջ:

[Վ. Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 243, ց. 2, գ. 8, թ. 2–4:*

Վ. Տերոյանի ելույթի կոնսպեկտը գտնվում է ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության արխիվում, կարճված գործերի ֆոնդ (այսուհետև ԱԱԾԱ, ԿԳՖ), գ. 3336, թ. 45–51: Սույն զեկուցման կոնսպեկտի առնչությամբ կազմվել է ՆԳԺԿ-ի հետևյալ տեղեկանքը – Ռ. Ս.

Документ № 3
Справка

Конспект речи Дерояна, произнесенной им во время состоявшегося в 1919 г. в г. Эривани съезда турецких армян, на котором он председательствовал, был избран в состав исполнительного комитета, а последним выбран его председателем.

Документ исключительно по содержанию дашнакского характера, где Дероян указывает о страданиях, принесенных жертвах, геройствах и т. д. армянского народа для создания единой объединенной независимой Армении. Этот конспект, написанный рукой Дерояна, изобличает его дашнакскую физиономию, что сам Дероян отрицает.

Уполномоченный ОО КАЛАШЯН

Բնագիր: Մեքենագիր: *ԱԱՄԱ, ԿԳՖ, գ. 3336, թ. 44:*

№ 8

ԲԱՆԱՁԵՎ ՇՐՋԱՆՆԵՐԵՆ ԵԿԱԾ ԶԵԿՈՒՅՑԻՄՆԵՐՈՒ ԱՌԹԻՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ Գ. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ ՄԵՋ 1919 Թ. ՓԵՏՐ. 8

Երևան, 8 փետրվարի 1919

Լսելով շրջաններեն եկած պատգամավորներու զեկույցումներու ամփոփումը, որու հիման վերա հայ և եզիդի ժողովուրդը փաստորեն սովի ճիրաններու մեջ վերջնական բնաջնջման նախօրյակը կապրի, համագումարը կորոշե, որ իրմե ընտրված խորհուրդը ազդու դիմումներ կատարե դաշնակիցներու կովկասյան ընդհանուր հրամանատարության դաշնակից պետություններու, համաեվրոպական կոնֆերանսին, այլև Փարիզի մեջ կազմված մեր նոր հայկական կառավարության և պահանջել հայ և չուտափույթ ամեն օգնություն մահացող ժողովրդի համար, ինչպես նաև հանձնարարել, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվին նպաստի և խնամատարական գործը կազմակերպելու և լավ հիմքերու վրա դնելու:

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 243, ց. 2, գ. 13, թ. 3:*

№ 9

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՏՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ ՊԱՏՃԵՆ

[Երևան] 1 ապրիլի 1919

Վրաստանի Սահմանադիր ժողովի պ. նախագահին

Արևմտահայ գործադիր մարմինը իր ջերմ ողջույններն է ուղարկում Վրաստանի Սահմանադիր ժողովին: Նա հավատացած է, որ Սահմանադիր ժողովը երկրում կարգ ու կանոն մտցնելով մեծապես պիտի նպաստի հեղափոխության նվաճումների ամրապնդման և ամենից ավելի փոքր ազգերի անկախ և ինքնուրույն դոյության հարաչխիքները տա:

Դարերով հարևան և բախտակից երկու ժողովուրդներից Վրաստանը ավելի երջանիկ եղավ իր ազգային իդեալները նպաստավոր պայմաններում իրականացնելով: Սահմանադիր ժողովը պիտի լինի մի վախճան և մի սկզբնավորություն դարավոր տանջանքների և հավիտենական բախտավորության:

Արևմտահայ Գործադիր Մարմնի նախագահ

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 13, թ. 2:*

№ 10

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ
Comite des Refugiés de l'Armenie
№ 7

ՁԵԿՈՒՅՑՈՒՄ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ
ԳԵՆԵՐԱԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ՎԱՐԱԾ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան, 30 ապրիլի 1919

Գործադիր մարմնի ապրիլ 20-ի և 22-ի նիստերի որոշման համաձայն ես ամսույս 24-ին էջմիածին մեկնեցի բանակցելու Գեներալ

Անդրանիկի[15] *հետ, թուրքահայ առանձին զորամասեր կազմելու վերաբերմամբ:*

Որովհետև այդ խնդիրը կապված էր ներդաշնի չտապեցման հետ և գաղթականության համար կյանքի և մահու հարց էր, ինչպես նաև Գործադիր մարմնի դոյության իրավունքներ էր շոշափում, այդ պատճառով էլ ես որոշեցի առանձին զորամասեր կազմակերպելու համար վարած իմ բանակցությունների զեկուցումը տալ գրավոր, խուսափելու համար ապագային որևէ թյուրիմացություններից, անորոշության տեղիք չթողնելու համար այդ կենսական հարցի մեջ դեր ունեցող ուժերի վերաբերմունքի մասին: Մյուս կողմից ես չեմ կարող առաջուց չհայտնել, որ կատարելապես դիտակցում եմ, թե ի՞նչ եմ կատարում ես և այդ ծանր պատասխանատվության գիտակցությամբն է, որ ես հանձն առի Արարատյան Հանրապետ(ության — Ռ. Ս.) կառավարության և Գործադիր մարմնի ու Գեներալ Անդրանիկի մեջ վարել այդ բանակցությունները, որոնք արևի լույսի պես պայծառ դարձրին ինձ համար թե հայ ժողովրդի և Հայրենիքի ճակատագիրը դարբնելու գործում ոչ մի դեր չունեն իրենք փախստականները և պետք է ենթարկվեն մի անգութ խնամակալության: Բայց այդ չէր կարող փախստական ժողովրդի համար վճռական նշանակություն ունենալ, եթե ներքին (մեզ հետ վարած) և արտաքին (ամբողջական Հայ դատի) քաղաքականությունը կանգնած լիներ այն ճանապարհի վրա, որ վտանգավոր, կասկածելի և կորուստբեր չլիներ փախստականության համար մասնավորապես և Հայ ժողովրդի համար ընդհանրապես: Այդ եղրակացության պիտք է հասներ, ով էլ որ վարելու լիներ այդ բանակցությունները, և եթե ինձ վիճակվեց այդ դժբախտությունը, ապա ուրեմն թույլ տվեք հայտնել որ Հանրապետական կառավարության խորհրդակցական, նասեր և աննեղոց վերաբերմունքը պարզելով այստեղ ես միայն ի նկատի ունեմ առաջարկելու Ձեզ, դեռևս համագործակցության մի հնարավորություն փնտրելուց չհուսահատվել և աշխատել մեր ուժերով և մեր պարտականության ու իրավունքի չափով մեզ դուրս հանել Հանրապետ. կառավարության բռնած արտաքին քաղաքականության կասկածելի և վտանգավոր ճանապարհից, եթե մենք իրավունք չունենայնք այդպես անել տալու նրան:

---

[15] *Օգանյան Անդրանիկ (1865–1927) — ազգային-ազատագրական չարժման նշանավոր գործիչ, ազգային հերոս, 1917 թ. զեկավարել է արևմտահայ փախստականների օգնության աշխատանքները, 1918 թ. նշանակվել է Հայկական բանակային կորպուսի դիվիզիայի հրամանատար, նրան շնորհվել է ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում, մասնակցել է Զանգեզուրի պաշտպանության համար մղված մարտերին: 1919 թ. ցրել է իր չոկատը և հեռացել արտասահման:*

Շատ մեծ դժվարությամբ ինձ հաջողվեց Գեներալ Անդրանիկին դուրս հանել իր արդար վրդովմունքի և զայրույթի տրամադրություններից դեպի հայ ժողովրդի ահավոր դժբախտության ներքին պատճառները, և այդտեղ ես պարտք եմ համարում հայտնել, որ իմ այդ աշխատանքին մեծապես օգնեց նորին ս. օծության Ամենայն Հայոց Վեհ. կաթողիկոսը:

Այն համեստ պահանջները, որ դրեց Գեներալ Անդրանիկը ներդաղթի համար առանձին զորամասեր կազմակերպելու վերաբերմամբ կատարելապես ցույց էին տալիս նրա զիջող, զոհաբերող և հայրենասեր բարյացակամությունը դեպի մեր տառապյալ փախստականությունը, Արարատյան Հանրապետությունը և մեր պատմական դատը: Նա համաձայնվեց կատարելապես իմ այն առաջարկին, թե քանի դեռ խաղաղություն չի վերջացել, քանի դեռ չի կազմվել Միացյալ և անկախ Հայաստանի կառավարությունը, քանի դեռ մեր երկիրը չի ազատվել դարավոր բռնագրավողից և ներդաղթը օրվա հրամայականն է, Բաթումի Հաշտության[16] հեղինակները իրավունք չպետք է ունենան մինչև վերջին րոպեն գերմանո-թուրքական բանակի դեմ պայքարողի առջև դնելու ձևական և անհիմն պահանջներ ու հավակնություններ, որոնք վերջիվերջո ներքին պատակտումներ միայն կարող են առաջ բերել, ներդաղթը ուշացնելու և դուցե նաև Միացյալ Հայաստանի կառավարությունը ծանր կացության մեջ դնել[ու]: Իր կողմից էլ Գեն. Անդրանիկը խոստանում էր նույնպես չհարուցանել նման ձևական դժվարություններ և ենթարկվել ամբողջովին ներդաղթի դեպքում մեկ ռազմաճակատ ստեղծելու բոլոր պահանջներին և կարգադրություններին:

Պարտք եմ համարում հայտնել, որ մեր այս առաջին բանակցության ներկա էին գերապատիվ տ. Տիրայր եպիսկոպոսը, ալ(արոն – Ռ. Ս.) Պուատևպարը[6], անգլ(իացի – Ռ. Ս.) մայոր Դիպդոն և անգլիական ծառայության մեջ գտնվող մի սպա պ. Պալեոդյանը: Այս վերջին երկուքը ամեն կերպ աշխատեցին արգելքներ հարուցանել և թույլ չտալ, որ Գեներալ Անդրանիկը համաձայնվի մեր առաջարկին: Ես ստիպված էի կետ առ կետ պատասխանել նրանց: Գեներալ Անդրանիկի կատարյալ համաձայնությունը իմ տեսակետներին մի ավելորդ ապացույց էր, թե անհարժեշտ է ունենալ ներքին անկախ մի

[16] *Պուադեբար Անտուան (1878–?) – միսիոներական առաքելությամբ եղել է Թոքատում, Մարզվանում, Սեբաստիայում: 1919 թ. Երևանում որպես Կովկասի ֆրանսիական առաքելության ներկայացուցիչ: 1924 թ. հրատարակել է Հայաստանի առաջին հանրապետությանը նվիրված աշխատություն:*

քաղաքականություն, ինչ որ կարելի չեղավ հասկացնել հաջորդ օր պ. Խատիսյանին[17]:

Ապրիլ 25-ին ես վերադարձա Էջմիածնից Հանր. կառավարության հետ նույն համաձայնությունը կայացնելու:

*Ինչպես հայտնի է Գործադիր մարմնից, Հանր. կառավարությունը ամեն բանը արել էր ներգաղթը իրենց պետական ներքին գործ դարձնելու համար և սակայն չէր կարողացել չընդունել, թե ներգաղթի կազմակերպությունը Գործադիր մարմնի բացարձակ իրավասության տակն է դնում: Ինչպես նաև գիտեր Բիչէի մի արտահայտությունը ինձ մոտ ապրիլ 22-ի երեկոյան, թե ներգաղթը կարող էր սկսվել տասն և հինգ օրից, եթե Անդրանիկը հանձն առներ պինվորական մասերի կազմակերպությունը: Բացի այդ, Գործադիր մարմնին հայտնի է նույնպես, որ խնամատարության պ. մինիստրը քանիցս և մի անգամ էլ ելևմտից պ. մինիստրը** Գործադիր մարմնից խնդրել են ներգաղթի կազմակերպության նախահաշիվը, անհրաժեշտ դումարահատկացումները կատարելու համար: Ես ավելորդ չեմ համարում մի ուրիշ պարագայի վրա էլ հրավիրել Ձեր ուշադրությունը. թե ներգաղթի չուտափույթ կազմակերպությունը կարող էր Կովկասյան Հայաստանի դատը օրդանապես միացնել ընդհանուր Հայկական դատի հետ. հայ ժողովրդի անվիճելի իրավունքների տիրապետության նախընտրությունը տալ զանազան վիճելի հողամասերի հանդեպ և վերջապես փրկել սովամահ գաղթականությունը: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ Գործադիր մարմնի և Հանրապետական կառավ(արության – Ռ. Ս.) հետ ունենյած հարաբերությունների անկանոնությունը կարող էր լոկորովին վերանալ ներգաղթի չուտափույթ կազմակերպության համար և Հայ ժողովրդի բոլոր հատվածների մասնակցությունն էլ ապահովելով վերածնվող Հայրենիքի կազմակերպության դործի մեջ հնարավոր դարձնել թե խորհրդարանի և թե վարչության մեջ համագործակցությունը, ինչպես նաև Հանրապետ. կառավարության ձեռնարկած թուրքահայ առանձին զորամասերի կազմակերպությունը պատահական և անհեղինակավոր հիմունքներից ազատել և դնել իր իսկական տիրոջ ձեռքը: Այս բոլոր հիմունքներից բացի, ապրիլ 26-ին, վարչապետ պ. Խատիսյանին երեք անգամ տեսակցելով ես չեչտեցի նաև այն անհրաժեշտությունը, թե պետք է ուննենալ անկախ պետության վայել մի նիրքին անկախ քաղաքականություն և թույլ չտալ, որ այդ հար-

---

[17] *Խատիսյան Ալեքսանդր (1874–1945) – քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ, 1910–1917 թթ. Թիֆլիսի քաղաքագլուխ, 1918 թ. ԱԴՖՀ ֆինանսների և պարենի, ապա խնամատարության նախարար: ՀՀ արտաքին գործերի նախարար, վարչապետ:*

ցում ամենաբարյացակամ մեր «դաշնակիցն» էլ իր միջամտությունը ունենա, թե մեր առաջարկած ձևով թուրքահայ առանձին գորամասեր կազմակերպելը միայն կարող է ուժեղացնել Հանր. կառավարության միջազգային դիրքը և ներքին հիմքերը, թե Գեն. Անդրանիկին հեռանալու հնարավորություն, եթե չասենք դրդապատճառները ավողները, միայն թուլացնել են ձգտում Հանրապետ. կառ. բարոյական և իրավական ուժը, բաժանում են ավելի հեշտ տիրելու համար, թե ներկա կառավարությունը մի հաստատուն և մեծ քայլ արած կլինի ընդառաջ գալով իմ առաջարկության դեպի Միացյալ և անկախ Հայաստանի պետական կազմակերպությունը և այլն, և այլն:

Ես խնդրեցի պ. Խատիսյանից, որ թույլ տա նույն օրվա Մինիստրական խորհրդում հիմնավորել իմ առաջարկը, քանի գիտենալով, որ նման դեպքեր տեղի են ունեցել ուրիշ անգամներ էլ և նույնիսկ երկու օր առաջ, երբ Մինիստրական խորհրդին ներկա է եղել անգլիական ծառայության մեջ գտնվող հայ սպա ոմն. բայց նա ձևական առարկությամբ մերժեց այդ և ինձ հրավիրեց Մինիստրական խորհրդին այնպիսի ձևով, որ ես չէի կարող ընդունել: Նույն օր երեկոյան ժամը 5-ին պ. Խատիսյանը ինձ տվեց Մինիստրական խորհրդի մխաձայն պատասխանը: Եվ որովհետև Գեն. Անդրանիկի հետ գործակցելու իմ առաջարկին ես տվել էի մի այնպիսի նշանակություն, որ նրա հետ գործակցելը Գործադիր մարմնի հետ գործակցել կլիներ և նրան մերժելը Գործադիր մարմնին մերժել, ուստի ես բերում եմ նրա պատասխանը բառացի «Հանր[ապետության] կառավարության Մինիստրական խորհուրդը միաձայնությամբ գտնում է, որ Գեներալ Անդրանիկի հետ համագործակցություն ոչ մի դեպքում հնարավոր չի կարող լինել, եթե Գեներալ Անդրանիկը Երևան չգա և չհայտնի իր կատարյալ հպատակությունը ներկա կառավարության»: Մի քանի անգամ և մի քանի ձևերով կրկնված այս պատասխանից հետո ես մերժեցի դրանից առաջ գալիք կացության քննությունը, որ սկսանում էր պ. վարչապետը և անմիջապես մեկնեցի էջմիածին: Նույն օր երեկոյան և հաջորդ օր առավոտյան շատ երկար լուրջ և մանրակրկիտ քննության ենթարկեցինք ներգաղթի և մեր քաղաքական դատի ներկա կացությունը Գեն. Անդրանիկի և իր սպայակույտի հետ: Հարցերին մոտենալու և քննելու այն լրջությունը և խոհականությունը, որ երևան բերեց Գեն. Անդրանիկը, կատարելապես ապացուցանում էին, որ նա ինչքան էլ հոգնած, այնուամենայնիվ պատրաստ է նորից նվիրվել մեր ժողովրդի կենսական հարցերի լուծման, որ նրա մեջ ոչ թե խռովականությունն էր խոսում, այլ ճշմարիտ և ան-

կեղծ ժողովրդասիրությունը, որ նա չհարգելով կառավարության հավակնությունները ոչ թե անձնական տեսակետներ էր առաջ բերում, այլ մեր դարավոր դատի պաշտպանության առաջնությունն էր տալիս, պաշտպանած լինելու նաև վիճելին, ինչպես նաև մի հայտարարի բերած չլինելու համար, մինչև վերջին րոպեն հավատարիմ մնացող պաշնակիցը այդ առավելությունը չունեցողների հետ: Առնությամբ քննվից նաև այն պարագան, թե ինչքան նպատակահարմար կլիներ մեր դատի ընդհանուր պաշտպանության համար, եթե պետք լիներ, որ Դեն. Անդրանիկը Երևան գար և հպատակվեր կառավարության:

Բայց Հանր. կառավարության բացարձակ անբարյացակամությունը պատմական այնպիսի մի վայրկյանում, երբ պահանջվում էր մեր բոլոր տեսակի և որակի ուժերի վինվորագրումը և քաջալերումը ապացուցանում էին միայն, որ կառավարությունը դնդրադասում է վարել իր առանձնահատուկ քաղաքականությունը, իր խնամակալությունը, Միացյալ Հայաստանի կառավարություն դառնալու իր դաղտնի ձգտումները, մի Հայրենիք ստեղծելու իրավունքի բռնապրավումը և աննկրոզամտությունը, քան թե նրա բարոյական և պատմական իրավատեր հատվածի գործակցությունը և աշխատակցությունը: Մի քանի փաստեր էլ ապացուցանում էին վերև հիշածս ներքին ինքնուրույն քաղաքականության անհրաժեշտությունը. որովհետև անկարելի եղավ այս կառավարության հասկացնել, թե Դեն. Անդրանիկին հեռացնելու և կղզիացնելու երկար ժամանակյա փորձերը միայն հայկական որևէ իշխանության, ներկա դեպքում Հանրապետական կառավարության, ուժերի չլատման և թուլացման կարող էր նպաստել:

Այդ պատճառով էլ ոչ մի առարկություն կարելի չէր մեջտեղ բերել և հիմնավորել Դեն. Անդրանիկին այն որոշման դեմ, թե նա պետք է հեռանա այս երկրից:

Ներկայացնելով իմ վարած բանակցությունների այս ընդհանուր դեկուցումը, ես ուզում էի միայն Գործադիր մարմնի համար պարզ դարձնել, թե ներկա պատասխանատու և ծանր պատմական վայրկյանում ինչպե՞ս էր, որ հնարավոր չեղավ Դեներալ Անդրանիկի և ներկա կառավարության հետ համագործակցությունը, Միացյալ Հայաստանի գաղափարի և գործի պաշտպանությունը և հատվածական և ընդհանրական տեսակետների պաշտպանությունը, որովհետև ընդհանուր հայկական տեսակետներով առաջնորդվողները իրենց հատվածական տեսակետին են միայն դերակշռություն տալիս ու ուզում են հիմքերը դնել մի Հայրենիքի, որ պատահականորեն մի

խումբ փոքրամասնության ձեռքով պիտի փաթաթվի անհրաժեշտաբար բոլորի վզին: Եվ եթե պետք լինի, որ ես մի եզրակացություն էլ բերեմ, այդ էլ այն կլինի, որ թախանձագին խնդրեմ Գործադիր մարմնից, դեռևս չհուսահատվել, մի վերջին փորձն էլ կատարել մեր ընդհանուր Հայրենիքի սիրույն Համագործակցության, թույլ չտալու համար ներքին պայքարի պատճհուհյունից օգտվեն ժողովրդից հեռու գտնվողները և մի նոր տեսակի չարիք դառնան: Բացի այդ, մի վերջին փորձ էլ կատարել ներգաղթի կազմակերպության համար դեռևս տրամադրելի ուժերը հավաքելու և կենտրոնացնելու, որից հետո միայն ներգաղթ ուղացնողներին մենք իրավունք կունենանք ներգաղթը խանգարողներ էլ համարել: Որովհետև իմ կարծիքով, այս կառավարության մեջ մեր չգտած Հայրենասիրության հանդեպ մենք պետք է դուրս բերենք մի ավելի մեծ հայրենասիրություն:

Վ[արազդատ] Տերոյան

(Ներկայացված է Արևմտահայ Գործադիր մարմնին 1919 – ապրիլ 28-ի նիստի մեջ)

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, դ. 14, թ. 1–4:*

№ 11

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻԱԶՈՐ ԿԱՊԻՏԱՆ ՅԱՐՐՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՎՐԴ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
№ 23

Թիֆլիս, 15 հունվարի 1921

Պատճեն

1. Հյուսիսային Ամերիկայի Միացյալ նահանգների Թիֆլիսի հյուպատոս մր. Մոզերին

2. Մ.Ա.Օ. կոմիտեի Թիֆլիսի ներկայացուցիչ միստր Էլմարին
3. Մ.Ա.Օ. կոմիտեի Կ. Պոլսի ներկայացուցիչ դոկտ. Մաքկալում-մին
4. Մ.Ա.Օ. կեդրոնական կոմիտեի Նյու Յորքի ներկայացուցիչ միստր Վիկրիին
5. Մ.Ա.Օ. կենդրոնական կոմիտեի ներկայացուցիչ միստր Ջակ-վիդին

Հ.Ս.Խ.Հ. Հեղկոմը խիստ ցանկալի համարելով Ձեր կոմիտեի գործունեության չարունակությունը Հայաստանում, իր կողմից ամեն ջանք թափել է՝ ոչ մի խանգարում չմացնելու համար նրա ընթացիկ կյանքի և նորմալ զարգացման մեջ:

Սակայն ամբողջովին կտրված լինելով Ալեք-պոլից, նա միայն Երևանի, Ղարաքիլիսայի և Էջմիածնի մեջ կարողացավ իր այդ տրամադրություններին գործնական ընթացք տալ և աջակցելով կապիտան J. Dangerfild-ի և մասր. Դիսսելի մեկնումին դեպի Ալեք-պոլ և Ղարս, նրանց հետ կոմիտեի ընդհ. լիազոր կապիտան Եարրոին ուղարկեց նաև 1920 թվի դեկտ. 14-ին կայացրած իր ակտը, որի պատճենն ներփակվում է սրան:

Որպես փաստ Հեղկոմի այդ տրամադրության գործնական արժեքին, կարող ենք հիշել այն հանդամանքը, որ Երևանի մեջ անգլիական որբանոցը իր ղեկավարներից լքված հանձնած է տեղական ճյուղին և նրա ընթացիկ ծախսերի համար բաց է թողնված 50 միլիոն հայկական ռուբլի, ինչպես նաև բոլոր դպրոցների պետականացման օրինագծի մեջ N.E.R-ի դպրոցները հիշատակված են, որպես նույն օրինքին չենթարկվող հաստատություններ:

Տաճիկների ներխուժման և ներքին հեղաշրջման անցողակի օրերին միջադեպեր տեղի ունեցան Ալ-պոլում, որոնք գերազանցապես տեղական բնույթ ունեին,— չէին համապատասխանում թե՛ խորհրդային ընդհանուր քաղաքականության և թե՛ նորաստեղծ իշխանության տրամադրություններին և այն էլ այնպիսի անձնավորությունների կողմից, որոնք երբեք լիազորված չէին հայկական իշխանության անունից խոսելու:

Փարատելու համար այդ թյուրիմացությունները և վերականգնելու համար ճշմարտությունը դեկտեմբերի վերջերին Հ.Ս.Խ.Հ. Արտաքին գործոց ժող. կոմիսարիատը մի պատվիրակ ուղարկեց ընդհանուր լիազորի մոտ, սակայն նա վերադարձավ Ալեքսանդրապոլից չկարողանալով տաճիկներից թույլտվություն ստանալ Ղարս գնալու:

Սույն թվի հունվ. 6-ին Արտգործժողկոմը մի պատվակութիւն ուղարկեց Թիֆլիս, տեղի լիազոր ներկայացուցչի հետ համախորհուրդ նույն պարտականութիւնները կատարելու Մ.Ա.Օ.Կ.-ի հանդեպ:

Այդ պատվիրակութիւնը լիազորված է հայտարարելու այստեղ և ամեն տեղ.

1. *1920 թվի դեկ. 14 ակտը:*
2. *Հ.Մ.Խ.Հ. Հեղկոմը ոչինչ չի ստացել կամ որևէ ձևով առել Մ.Ա.Օ.Կ.-ից:*
3. *Ընդհակառակը, նպաստել է նրա գործունեութեան ընդարձակման նորմալ ընթացքին և ապահովութեան:*
4. *Ալէք-պոլի «Պոլիդոն» կոչված որբանոցների հանձնումը տեղական հեղկոմին եղած է առանց Հ.Մ.Խ.Հ. հեղկոմի դիտութեան և համաձայնութեան, որպիսի հանգամանք բացատրում է մի միայն նրանով, որ աննորմալ դրութիւնը և հաղորդակցութեան բացակայութիւնը ժամանակավորապես կտրել էին ամեն հարաբերութիւն Ալ-պոլի և Երևանի հետ:*
5. *Այդ որբանոցները կպահպանվեն նույնութեամբ, իրենց անունով, դրոշակով և կազմակերպութեամբ մինչև առաջին առիթ, նորից Մ.Ա.Օ.Կ.-ին հանձնելու համար:*
6. *Ոչ մի տեղ Հայաստանում Մ.Ա.Օ.Կ.-ի գործունեութեան վերջ դրած չէ. Երևանի մեջ գործը տանում են դոկտ. C. D. Usser և միստր. Peers, իսկ Ղարաքիլիսայի մեջ կապիտան C. F. Grant, բոլորն էլ Մ.Ա.Օ. կոմիտեի անդամներ, որոնք չատ ուրախ են իրենց գործը շարունակելու համար:*
7. *Պատվիրակութիւնս լիազորված է նոր առաջարկութիւններ անելու բավարարութիւն տալու կատարված անախորժութիւնների փոխարեն և բանակցութիւններ վարելու որևէ պահանջի կամ ցանկութեան իրականացման համար Մ. Ա. Օ. Կ.-ի լիազոր ներկայացուցչութեան հետ, որ այդ նպատակով ուղարկված կլինի մի հարմար վայրում, լինի Նյու Յորքից, լինի Պոլսից, լինի Կովկ. ընդհ. լիազոր կապիտան Եարրոից, որովհետև տաճիկները հնարավորութիւն չեն տալիս բանակցութիւնները Ղարսում կատարելու:*

Հայտնելով այս բոլորը պատիվ ունենք սպասելու պատասխանին Ձեր կողմից նշանակված ներկայացուցչութեան հետ հանդիպման տեղի և ժամանակի մասին համաձայնութիւն կայացնելու համար:

Պատվիրակություն Ամերիկյան կոմիտեի հետ բանակցելու համար

Հայաստանի Սոցիալիստական խորհրդային
Հանրապետության Լիազոր ներկայացուցիչ
Վրաստանում Դանիել Շահվերդյան[18]
ՀՍՍՀ Հատուկ Պատվիրակ Մ. Ա. Օ.
կոմիտեի մոտ Վարազդատ Տերոյան

14.I.21, Թիֆլիս

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 46, թ. 8–9 (մեքենագիր՝ թ. 31–32, 40):*

№ 12

№163 **Удостоверение**

[Тифлис] 20 января 1921

Дано сие гражданину Вараздату Терояну в том, что он командируется Представительством по делам армян беженцев в Батум.

Все гражданские власти приглашаются оказывать ему содействие в исполнении им возложенных на него обязанностей.

Полномочный представитель
ССРА в Грузии
Секретарь

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 46, թ. 40:*

№ 13

Հարգելի պ. Տերոյան!

Երևան, 5 սեպտեմբերի 1921

Ձեր կարգադրության համաձայն պ. Անդրանիկ Եոլչեհյանի գաղտնի հանձնվեց պ. Մկրտիչ Մկրտումյանին: Բայց պ. Ա. Եոլչեհ-

[18] *Շահվերդյան [Դանուշ] Դանիել (1882–1941) – խորհրդահայ պետական, կուսակցական գործիչ, 1922–1923 թթ. արդարադատության ժողկոմ, ժողկոմխորհի նախագահի տեղակալ, 1928–1929 թթ. ՀՍՍՀ կարմիր խաչի ներկայացուցիչը Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Բելգիայում:*

յանը. ընտանեկան գործերով գյուղը մեկնած լինելու պատճառով, եւ-կավ Ձեզ մոտ իր Ալեք-պոլ գնալու պատրաստակամությունը հայտ-նելու համար Ձեր քաղաքից մեկնելուց հետո: Հիմա ինչպե՞ս եք կարգադրում, մտե՞լ է նա Ալեք-պոլի պաշտոնյաների շարքը եւ եթե այո, ի՞նչպես պիտի անել նրան իր պաշտոնատեղին ուղարկելու վե-րաբերմամբ:

Առանձնապես խնդրում է ի նկատի առնել նրա տնտեսական նեղ պայմանները եւ ընտանիքի դրությունը. վերջինս գտնվում է գյու-ղում եւ դա է եղել պատճառը, որ չի կարողացել Ձեզ ժամանակին հայտնել իր համաձայնության մասին:

Դպրոցական պարապմունքները շարունակվում են առանց չե-ղումների, սակայն նորաբաց դպրոցի թվով 120 երեխաների դպրո-ցում տեղավորելու հարց կա: Պ. Լուիսը կարգադրում է մի կերպ պա-րապել դրանց հետ, որը անկարգություն պիտի առաջ բերի դպրոցի կյանքում: Հուսով եմ, որ օր առաջ կչտապեք դեպի մեզ այդպիսի կնճռոտ հարցերին լուծում տալու համար:

Հարգանոք՝ Մեծբայան

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 14

Ա. Գ. ՄԱՐՄՐՆԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔՂՔԿ. ԿԱԶՄ. ՀԱՄԱՐ

[Երեւան, 1921]

1. *Խաղաղության վերհաժողովի որոշումներն անմիջապես հետո կազմել ժամանակավոր կառ. մը.*
2. *Ժամ. կառ. պետք է կազմվի երկրի մեջ, այնտեղ, ուր նա պի-տի գործե.*
3. *Ժամ. կառ. պետք է կազմվի համաձայնության գալով Ազգ. պատվիրակության, Երեւանի կառավարության, Պոլսի և Թիֆլիսի ազգ. խորհուրդներու, Կիլիկիայի և Միջագետքի տարագրյալներու և Կովկասի փախստականության հավա-սար ներկայացուցչության հետ:*

4. *Ժամ. կառ. չպետք է ավելի տևի, քան հինգ տարի, երբ պետք է գումարվի Հայաստանի սահմանադիր ժողովը:*
5. *Մինչև սահմանադիր ժողովը ժամ. կառ. խորհրդարան չի ունենում, հարկ եղած ժամանակ կարելի է հրավիրել վերոհիշյալ մարմինը:*
6. *Ժամ. կառ. պետք է կազմվի անկուսակցական հիմքերով:*
7. *Մինչև սահմ. ժողով. կառ. ձևն է ամբողջական հանրապետություն, որ ունենում է իր նախագահը և կառ-ը միայն:*

[Վ. Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 15, թ. 7–8:*

№ 15

Սիրելի պրն. Բրաուն

Թարգմանություն ֆրանսերենից
Կապաչի պոստ, 14 մայիսի 1922
Այնքսանդրապոլ

Ես Ձեզ խոստացել էի գրել պրն. Դևիսի հետ իմ պրույցի արդյունքների մասին: Շատ բան կա ասելու, միայն թե չեմ ուզում Ձեր ժամանակը չահագործել և չափազանց կարճ կգրեմ:

Մայիսի 4-ին Կ. Պ.-ում էի (Կապաչի Պոստ – Ռ. Ս.) և ինձնից 10 օր պահանջվեց հասկանալու համար, թե կարո՞ղ եմ արդյոք այս բաժանմունքում աշխատել, թե՞ ոչ: Այս ընթացքում գնացի Երևան, իսկ վերադարձիս մի նամակ գտա պրն. Դևիսից, ուր նա ինձ հանձնարարականներ էր տալիս՝ իր բացակայության ընթացքում իրագործվելիք աշխատանքների վերաբերյալ: Այս նամակը, որոշ իմաստով մեզ և գլխավոր անօրենին՝ պրն. Հորնի հետ իր գրած նամակի տրամաբանական շարունակությունն էր: Մի այլ իմաստով այն հակասում էր վերոհիշյալ նամակին և հատկապես այն խոսակցությանը, որ նա ունեցել էր ինձ հետ և, որի մասին ես Ձեզ պատմեցի վերջերս, երբ Թիֆլիսում էի:

Արդյունքում ես կրկնում եմ այն՝ ինչ ասում էի Թիֆլիսում. պրն. Դևիսը լիակատար ազատություն պետք է ունենա ընտրելու իր օգնականին՝ մարդ, որը կխոսի անգլերեն, ընդունակ կլինի մտածելու

և բավականաչափ խելացի կլինի պրն. Դևիսի մասին մտածելու համար:

պրն. Դևիսը չընդունեց իմ հրաժարականը՝ ասելով, որ ես Ձեզ պետք է ներկայացնեի այն՝ ինչը և անում եմ այժմ:

Կրթության կենտրոնական բաժանմունքի կազմակերպման իմ երկամյա փորձի ընթացքում ես եկա այն եզրակացության, որ դա այս վայրկյանին բացարձակապես անհնար է: Իսկ եթե համենայն դեպս այն իրականանա՝ կլինի սոսկ նոմինալ մի ինստիտուտ՝ առանց իրավասությունների և առանց իշխանության:

Շատ եմ ափսոսում, որ Ձեր բոլոր բարի ցանկությունները, մեծ բարեհաճությունն ու անկոտրելի էներգիան, որ ծախսում եք Near East Relief-ի զարգացման ու առաջադիմության համար՝ բախվում են անհաղթահարելի դժվարությունների հետ և մեզ դնում վատության անելու իրադրության մեջ, չնայած ուզում էինք բարին անել:

Մնալով միշտ Ձեզ հավատարիմ
[Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: Դերոյանների ընտանեկան արխիվ

№ 16

ՀԱՐՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, 5 օգոստոս 1922

Ես Լիագորի օգնակ. №1 բաժան. 1922 թ. օգոստոսի 5-ին հարցաքննեցի քաղաքացի Տերոյան Վարազդատին, որ ցույց տվեց հետևյալը.

Որքան ժամանակ է ինչ որ դուք ապրում եք Երևանում.

1918 թվից ապրում եմ Երևանում. այժմս ես Ամերիկյան դպրոցների վարիչի պաշտոնն եմ կրում: Իսկ առաջ տարի ես աշխատում էի գաղթականական բաժանմունքում: 1919 թվին Երևանում գոյություն ուներ «Արևմտահայ Գործադիր Մարմին» և ես այդ «Գործադիր մարմնի» նախագահն էի:

Առաջ որտեղ էիք ապրում: Մինչև 1915 թիվը ապրել եմ Վանում, իսկ 1916 թ. եղել եմ Բաքու, որտեղից անցել եմ Թիֆլիզ, որտեղ պաշտոնավարել եմ Գայանյան օրիորդաց դպրոցում իբրև ուսուցիչ: Թիֆլիզում մնացել եմ մինչև 1917/1918 թ., որտեղից անցել

եմ Երևան, և անմիջապես անցել վերոհիշյալ պաշտոններին: Մուռացյա ասել, որ 1921 թ. ես ՀՍԽՀ կողմից նշանակված էի պատգամավոր, նրա համար, որպեսզի բանակցություն վարեմ փաղչող Ամերիկոմի հետ, որպեսզի նրանք մնան և Հայաստանում աշխատեն:

Ինչու Թիֆլիզից անցաք Երևան: Ես Երևան եկա, որովհետև ուսուցչական կազմը (Գայանյան դպրոցի) արձակեցին, վրացիները հալածում էին հայերին, և երրորդը մայրս Երևանում էր, և այդ բոլորի համար էլ եկա Հայաստան ապրելու մտքս հետ:

Ինչ կուսակցության եք պատկանում. ես անկուսակցական եմ. ես չփումներ ունեցել եմ դաշնակցության հետ, բայց չեմ ենթարկվել այդ կուսակցությանը:

Ոչ մի տեղ չեք գնացել վերջերս: Ես իբրև օդնական ամերիկյան բոլոր դպրոցների վարիչի, այս [անընթ.] ամիս է այդ պաշտոնով չրջել եմ ամբողջ Հայաստանում, եղել եմ Ալեք-պոլ, Ղարաքիլիսա (Կիրովական, այժմ Վանաձոր – Ռ. Ս.), Դիլիջան, Ջալալօղլի (Ստեփանավան – Ռ. Ս.), Էջմիածին, Դարաչիչակ (Ծաղկաձոր – Ռ. Ս.) և այլն. և որովհետև հաչվվել եմ կենտրոնի (գանվում է Թիֆլիզում) պաշտոնյա, այդ պատճառով էլ 3-4 անգամ անցել եմ Թիֆլիզ, իմ գործունեության մասին զեկուցելու:

Ինչ կապ ունեք դուք Թիֆլիզի հետ և ում եք ճանաչում այնտեղի դաշնակներից և մաուզերիստներից: Ես ոչ մի կապ, բացի իմ Ամերկոմից, որտեղ ես պաշտոնավարում եմ, չունեմ և չեմ էլ ունեցել Թիֆլիզի հետ: Չեմ ճանաչում այնտեղի ոչ մի դաշնակցականի և մաուզերիստի, բացի Բագրատ Թոփչյանից (նախկին Ազգային խորհրդի նախագահ):

Ձեզ կամ ձեր բարեկամների մոտ Թիֆլիզից մարդիկ գալիս են. ես այնտեղ ոչ մի բարեկամ չունեմ, իսկ ինձ մոտ ոչ մի Թիֆլիզից եկող մարդ չի եղել, չեմ ստացել նաև ոչ մի նամակ վերջերս Թիֆլիզից:

Գիտեք արդյոք որևէ մեկին, որը վերջիս եկել է Թիֆլիզից: Որովհետև ես շատ հոգնած էի, չարունակ տանը հանգստանում էի, այնպես որ ոչ մի տեղեկություն չունեմ:

Դուք լսել եք և ինչ գիտեք այս վերջին տերորի մասին, որը տեղի է ունեցել Թիֆլիզում[19]*: Ես այդ մասին տեղեկացել եմ միայն թերթերից և ոչ մի ուրիչ կողմնակի տեղեկություն չունեմ:*

---

[19] *Խոսքը վերաբերում է Ջեմալ-փաշայի սպանությանը – Ռ. Ս.:*

Ձեր անհատական կարծիքը այդ դեպքի մասին: Որովհետև ես հալածված եմ քաղաքական ասպարեզից դաշնակցականների կողմից, այդ օրից 1919 թ. ապրիլից ես այս երկրի մասին ունեցա մի տեսակետ, որը հետևյալն է: Չի կարելի այստեղ քաղաքական գործունեություն տանել և դրա համար էլ ինձ հետու եմ պահում և չեմ հետաքրքրվում այդպիսի գործերով: Բայց ես կասեմ, որ ես տաճկաստանցի եմ և իմ ընտանիքը կոտորված է [մի տող չի կարդացվում]

Խոստովանում եմ, որ իմ կարծիքը նպաստավոր դրական չէ: Բայց ես ոչ մի կապ չունեմ այդ սպանության հետ: Որի համար և ստորագրում եմ:

Վ[արազդատ] Տերոյան

(Ձեռագիրը և անճշտությունները քննիչինն են, ստորագրել է Վ. Տերոյանը – Ռ. Ս.)

Բնագիր: Ձեռագիր: *ԱԱԾԱ, ԿԳՖ, գ. 3336, թ. 45*

№ 17

Երևան, Չեկա, 7 օգոստոսի 1922

ԸՆԿ. Ա. Հովհաննիսյան[20]

Երեք օրից ի վեր ինձ բանտարկել են Չեկայում աքսուրդ մեղադրանքներով: Ինձ սիրելի է հուսալ, որ դուք հարգել կտաք իմ իրավունքները այլ վերաբերմունք սպասելու Հայաստանի իշխանություններից այն բոլորի փոխարեն, ինչ որ ես արել եմ, ուժերս ներածին չափով, խորհրդային իշխանության գործակցելու և օրինապահ ընթացք ունենալու: Խնդրում եմ, եթե որևէ միջնորդություն կուզենաք անել, անմիջապես արեք, որովհետև այլևս անկարելի է:

Ձերդ Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր: *ԱԱԾԱ, ԿԳՖ, գ. 3336, թ. 49*

[20] *Հովհաննիսյան Աչոտ Գարեգինի (1887–1972) – խորհրդահայ կուսակցական և պետական գործիչ, պատմաբան, 1920–1921 թթ. ՀԽՍՀ լուսավորության ժողկոմ, 1922–1927 թթ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար: ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:*

№ 18

Երևան, Զեկա, 7 օգոստոսի 1922

Ընկեր Մռավյան[21]

Երեք օրից ի վեր ինձ բանտարկել են Զեկայում, տարօրինակ մեղադրանքներով: Ես միշտ կարծել եմ, թե իրավունք ունեմ այլ վերաբերմունք ապահովու Հայաստանի իշխանությունների կողմից և այժմ էլ դեռ. հույսս չեմ կտրել, թե պիտի չարունակեմ մնալ իմ այդ իրավունքի մեջ: Այդ պատճառով է, որ խնդրում եմ, մի րոպե տայիք փարատելու առաջ եկած թյուրիմացությունը:

Զերդ Վ[արազդատ] Տ[երոյան]

Բնագիր: Ձեռագիր: *ԱԱԾԱ.ԿԳՖ, գ. 3336, թ. 50*

№ 20

Выписка из доклада представителя при Амеркоме

3 октября 1924

В связи с прекращением массовой ликвидации детей перед нами теперь стоит вопрос о ликвидации ликвидированного отдела, где сидят такие махровые дашнаки, как Лорецян[22], Максапетян[23], Дероян. Вся эта кампания, находясь под покровительством Брауна, чья политическая физиономия достаточно всем известна, чувствуют себя превосходно и непосредственно сталкиваясь с крестьянами, рабочими и горожанами, приходящими к ним за детьми, ведут соответствующую агитацию против нас и мы сами

---

[21] *Մռավյան Ասքանազ Հարություն (1885–1929) – խորհրդահայ կուսակցական և պետական գործիչ, հրապարակախոս: 1921–1923 թթ. եղել է ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ, 1923–1929 թթ. ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ:*

[22] *Լոռեցյան Մկրտիչ (1894–) – ՀՅԴ անդամ, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կռվել է Կովկասյան ռազմաճակատի Հայկական 4-րդ կամավորական դրուժինայում, պարգևատրվել է 4-րդ աստիճանի մարտական մեդալով: Մասնակցել է 1921 թ. փետրվարյան ապստամբությանը:*

[23] *Մաքսապետյան Վարդան (1892–1937) – ՀՅԴ անդամ, մասնակցել է կամավորական շարժմանը: Կռվել է Հայկական 3-րդ կամավորական դրուժինայում: 1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո անցել է Պարսկաստան, 1922 թ. վերադարձել է Հայրենիք, 1937 թ. ձերբակալվել է ու գնդակահարվել:*

чувствуем по тону являющихся от них к нам родителей или родственников, что приложено достаточно усилий этой дашнакской кампанией, для того, чтобы раздражать и возбуждать против нас просителей. По одному такому поводу я вынужден был потребсвать от Брауна немедленно призвать к порядку Лорецяна и намекнул, что пребывание его в Америкоме нежелатель[но]. Но ...переписка по этому вопросу между нами еще не окончена. Лорецян завед. статистическим столом, участник в гражданской войне против нас, дашнак и до сих пор хвастующийся своей партийной принадлежностью, дважды сидел в ЧК.

Представитель (Г. САРКСЯН)
Верно: Завканцелярией ЦК КПА (подпись)

Բնագիր: Մեքենագիր: *ԱԱԾԱ, կԳՖ, գ. 3336, թ. 34*

№ 20

ՔՆՆՈՒԹՅԱՆ Ա.ՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

[Երևան] 2 նոյեմբերի 1924

2 նոյեմբերի 1924 թվին ես Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի լիազոր Միխայլովը քննութիւն կատարեցի բանտարկեալ Դերոյեն Վարպետի վերաբերմամբ, որը ցուցց տվեց:

Ես 36 տարեկան եմ, տաճկահայ, Վան քաղաքում ծնված, ունեմ բարձրագույն կրթութիւն, ծառայում եմ Լենինականի Ամիրեկյեն կոմիտեում, ամուսնացած եմ, հայրս եղել է գերձակ, բանտարկված եղել եմ 1922 թվին ինչպես քաղաքանակ հանձնավոր, ոչ մի կուսակցութեան մեջ չեմ եղե: Եվ նույնպես արհեստակցական միութեան մեջ:

Հարցաքննութեան ժամանակ բանտ. Դերոյենը ցուցց տվեց հետեալը.

[Արձանագրության չարունակութիւնը գրված է Վ. Տերոյանի կողմից.— Ռ. Ս.]:

1914-ին եղել եմ Բեռլին և հետո գնացել Վան, ուսուցչական պաշտոնով, մի տարի հետո գաղթել եմ և ծառայել Բաքվում, երմա-

նի-քյանդ (Հայկավան – Ռ. Ս.), ուսուցչակ. պաշտ. հաջորդ 2 տարին նույն դործով՝ Թիֆլիս, 1918-ին Երևան, Արևմտահայ Գործ. Կոմիտեի նախագահ, 1919-ից մինչև այժմ Ամերիկոմում գանագան պատասխանատու պաշտոններով (որբանոցների և դպրոցների վարիչ), 1920–21-ին եղել եմ Արտգործժող. ներկայացուցիչը, մոտ վեց ամիս, Ամերիկոմում և հրաժարվել եմ միայն օբեկտիվ պայմաններից դրդված: Ամերիկոմում և առհասարակ հակախորհրդային ագիտացիա կամ պրոպագանդա և աշխատանք չեմ կատարել երբևիցե: Ինձ հետ ձերբակալված իմ երկու աշխատակիցների վերաբերմամբ նույնպես հայտնում եմ, որ նման քայլեր և աշխատանք չեմ նկատել:

Գրված է իմ ձեռքով, առանց որևէ ճնշման ու ճշտության համար պատասխանատու եմ ամեն տեսակ դատարանի առաջ:

Հարցաքննեց Միխայլով

Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր: *ԱԱԾԱ, ԿԳԾ, գ. 3336, թ. 43*

№ 21

Постановление

Декабрь, 1924

1924 года декабря "..." дня. Я уполномоченный СЕКО Армчека Мхайлов Михаил рассмотрев сего числа следственное дело за №245 по обвинению гражданина *Максапетяна Вартана* в 60 и 69 ст. ст. Уг. К., *Дерояна Вараздата* в 60 и 69 ст. ст. и *Лорецяна Мкртыча* тоже в 60 и 69 ст. ст. Уголовного Кодекса законов ССРА **нашел:**

В Америкоме гор. Ленинакана была учреждена группа членов п/Д которая, пользуясь своим положением занималась организационной работой среди рабочих Америкома по линии партии "Дашнакцутюн". Помимо этого, группа эта вела известную борьбу против задач, которых наша партия желала провести среди рабочих Америкома и вообще в Америкоме же и путем агитации и провокации везде и всюду проводила свои планы. Через эту группу находили себе приют в Америкоме все те дашнаки, которые не работали и нуждались в службе, превращая таким путем Америком в убежище дашнаков. Обо всем этом излагает также в своем

докладе Председатель Совнаркома ССРА КПА, где отмечается затруднения, которые встречаются в работе, благодаря упомянутых выше дашнаков, находящихся в Америкоме на службе. Имея все это в виду **Армчека** подвергла аресту главнейших инициаторов этого явления – членов п/Д: Вараздата Дерояна, Лорецяна Мкртыча и Максапетяна Вартана. Следственным производством и агентоброботкой в Армчека удалось установить:

1. Вараздат Дероян известен как дашнак еще издавна: он принимал участие в беспорадках в Турции, за что был наказан турквластью. В 1918–19 год. он был в Тифлисе председателем Исполнительного комитета турецких армян и имел большое влияние вообще на турецкоподданных армян, беженцев из Турецкой Армений. Во время дашправительства Дероян Вараздат не проявлял свою активность и не был замеченным, так как в некоторых вопросах не соглашался с другими лидерами п/Д и во время февральской дашавантюры находился в Эривани и служил в Америкоме. В период существования Соввласти в Армении Дероян Вараздат за принадлежность к партии "Дашнакцутюн" Армчека еще раз арестовывался, но за неимением достаточного материала был освобожден. Находясь всегда на ответственных должностях в Америкоме Дероян Вараздат оказывал всемерное содействие подпольной работе п/Д, принимая на службу своим ручательством и рекомендациями безработных членов п/Д в Америком на службу. Кроме того он лично принимал участие в антисоветской работе, но так умело и осторожно, что отметить фактами затруднительно. О своей работе в п/Д и даже принадлежности к таковой Дероян Вараздат во время допросов в Армчека не сознался (агентурные данные о нем следдело форм. за №1889).

(Далее о Лорецяне и Максапетяне – Р. С.).

... Вернувшись в 24 году из ссылки, он (Максапетян – Р. С.) в Ленинакане ручательством Дерояна Вараздата был принят на службу в Америком. Во время работы в Америкоме Максапетян очень близко стоял как к Дерояну, так и к Лорецяну и принимал участие во всех их работах против Соввласти (см. стр...)[24]. Максапетян Вартан в принадлежности партии "Дашнакцутюн" и в участии в таковой не сознается.

[24] *Այսպես է փաստաթղթում:*

Имеющиеся в деле агентурные данные и следственное производство подтверждают и доказывают все вышеизложенное и потому

Полагал бы:

1. *Дерояна Варазdата Мкртычевича*, родившегося в 1887 году уроженца гор. Вана, женатого, высшим образованием, арестованного в октября 24 года, бывшего под стражей в 1922 году. и

2. *Лорецяна Мкртыча Хачатуровича*... приговорить к 5 летней высылке в концлагерь.

3. *Максапетян Вартана Мкртычевича*...

Уполномочен. №I (МИХАЙЛОВ) подпись
Присоединяюсь, Нач. СЕКО (МУГУДСИ)[25] подпись
Согласен. Нач. СОЧ (ВАРДАНОВ) подпись
Утверждаю. Предармчека (МЕЛИК ОСИПОВ)[26]

Բնագիր՝ Մեքենագիր: *ԱԱԾԱ, ԿԳՖ, գ. 3336, թ. 44*

№ 22

Заключительное постановление

15 апреля 1925

1925 года апреля 15-го дня. Я Пом. Упол. 1-го отд. СО. ЗАКЧЕКА Геворков, рассмотрев следственное дело за №128, присланное из Армчека, по обвинению гр. гр.:

1. *Дерояна Варазdата Мкртычевича* 38 лет, интеллигент с высшим образованием, был под судом в Армчека в 1922 г., за принадлежность к партии "Д".

2. *Лорецяна Мкртича Хачатуровича*, 41 г. интеллигент с высшим образованием, подвергался аресту за принадлежность к партии "Д" в 1921, 22 и 23 гг.

---

[25] *Մուգդուսի (Աստվածատրյան Խաչիկ Ալպաթի – 1898–1937) – ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմ:*

[26] *Մելիք-Օսիպով Սերգեյ Դմիտրիի (1882–1937) – Արտակարգ հանձնաժողովի նախագահ:*

3. *Максапетяна Вартана Мкртичевича*, он-же Мкртчян, 35 лет, интеллигент, со средним образованием женат, находился в ссылке с 1922 по 23 г. как член партии "Д"—в контр-революции, выразившийся в принадлежности к партии "Дашнакцутюн", подпольной работе в данной партии, как например—указанные дашнаки, находясь на службе в Амеркоме в г. Ленинакане, организовали группу, ведущую организационную работу среди рабочих Амеркома в пользу партии "Д", боролись против тех задач, которые КПА желала провести среди рабочих Амеркома, т.е., преступление, предусмотренное по отношению ко всем 60 и 69 ст. ст. Угол. Код. ССРА, на основании чего полагал санкционировать постановление Армчека и арестованных—*Дерояна Варазdата, Лорецяна Мкртича и Максапетяна Вартана*—выслать из пределов Закавказья сроком на пять лет без права жительства на Сев. Кавказе, Юго-России и Украины.

Настоящее дело как следствием законченное передать в архив. Постановление представить на утверждение Коллегии Закчека.

Справка: арестованные содержаться при Армчека

Пом. Упол. I-го отд. СО: подпись (В ГЕВОРКОВ)
Нач. I-го отд. СО: подпись (НАЗАРОВ)
Согласен Нач. СО: подпись (ВАЛИК)
Утверждаю Нач СО: подпись (Л. БЕРИЯ)[27]
Зампредзакчека подпись
Верно подпись

Բնագիր: Մեքենագիր: *ԱԱԾԱ ԿԳԲ, գ. 3336, թ. 54:*

[27] *Բերիա Լավրենտի Պավլի (1899–1953) – պետական անվտանգության դիկտատորներից, պետական անվտանգության գերագույն կոմիսար, ԽՍՀՄ նախարարների խորհրդի առաջին տեղակալ:*

№ 23

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ Ս.Ֆ.Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏ. ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Բաղաք-դիմում

Թիֆլիս, 15 հունիսի 1925
Բանտարկյալ Վարազդատ Տերոյանից
Ուղղիչ տան հիվանդանոց

Իններորդ ամիսն է, որ բանտարկված եմ հայ Զեկայի կողմից, և մոտ երկու ամիս է, որ տեղափոխված եմ Թիֆլիս-Մետեխ, ուր ինձ հայտնեցին պաշտոնապես, թե գործս ուղարկված է Մոսկվա Օ.Գ.Պ.Ու-ին:

Ինձ մեղադրում են 69 և 70 հոդվածներով: Ամբողջ ինն ամսվա ընթացքին ոչ մի քննություն չի կատարված, իսկ մի քանի խոսակցությունների ընթացքին, Հայ-Զեկայի նախագահ քաղաքացի Ս. Մելիք-Հովսեփյան, սկզբում մերժեց որևէ փաստ տալ, որ կարողանար հիմք ծառայել այդ մեղադրական հոդվածներին պատրաստելով, թե ինքն «կարիք չունի որևէ փաստի մարդ բանտարկելու համար», հետո ավելացրեց զանազան անգամներ, թե «ինչո՞ւ մեր ընկերներին բանտարկում են Եվրոպայում, ես էլ Ձեզ կբանտարկեմ այստեղ»: Մի այլ անգամ նա բարի եղավ տալ ավելի «լուրջ փաստեր», որով ես, ստորագրյալս, հակահեղափոխական եմ, պրոպագանդա, ագիտացիա և դավադիր աշխատանք եմ կատարում խորհրդային իշխանության դեմ, մի խոսքով ակտիվ դաշնակցական գործիչ եմ հետևյալ փաստերի հիման վրա.

ա) 1898 թվին, 28 տարի առաջ Տաճկաստանում սպանված եղբայրս եղել է դաշնակցական:

բ) 1922 թվին իմ բազմաթիվ աշխատակիցների չարքին գտնվելիս է եղել մի դաշնակցական կին:

գ) Ինձ բանտարկած ժամանակ նույնպես, իմ հարյուրավոր աշխատակիցների մեջ գտնվել են երկու նախկին դաշնակցականներ:

դ) Ես ճանաչել և հարաբերություններ եմ ունեցել բազմաթիվ դաշնակցական գործիչների հետ, սկսած 1905 թվից մինչև 1920-ը, թեկուզ պարզ ծանոթության հարաբերություններ:

Ergo–69 և 70 հոդվածները ու ինն ամսվա բանտարկություն առհաշիվ:

Այս «հանցանքները» այնքան պերճախոս ինքնաժխտումն ունեն իրենց մեջ, որ ես գերադասում եմ դրանց պատճառով պատժվել ավելի շուտ, քան որևէ փորձ կատարել արդարանալու կամ հերքելու: Այս կետը իմ առաջին և վերջին պատասխանն է այդ մեղադրանքներին:

Միակ բանը, որ ինձ դրդում է ներկա բողոքով դիմելու Ձեզ, հետևյալն է.

Խորհրդային իշխանության բարի անվան և համբավի վարկաբեկումը ցավ է պատճառում ինձ, առանց որ ես կոչված լինեի պաշտպանելու այն պաշտոնապես: Կազուիստական մեթոդները, որոնք շատ պատշաճ են անձնական զգացումներին ընթացք տալու և որևէ մեկին «բարեհույս» կամ «անբարեհույս» հայտարարելու համար, երբեք չեն գործադրվել խորհրդային արդարադատության մեջ: Եթե մի բանտարկյալի բողոքը չի կարող իր վիճակին դարման անել, գուցե առիթ ծառայե հրավիրելու Ձեր բարձր ուշադրությունը այնպիսի դեպքերի վրա, ուր մեկը իրեն համարում է ոչ թե բանտարկյալ, այլ «գերի», իշխանությունը նման ձևով գործադրող մարդկանց ձեռքին, երբ խնդրի կազուիստական հիմքը ակնբախ է ոչ միայն իրեն պահի, այլ նաև բոլոր նրան ճանաչողների և չրջապատողների համար. ինչ որ միայն վարկաբեկել կարող է մարդկային որևէ իշխանություն:

Սակայն ես շատ երջանիկ պիտի համարեի ինձ, եթե չկարողանալով հանդերձ արգելել, որ կատարվի մի ազազակող անարդարություն, դուք բարի լինեիք ստուգել, թե «գերեվաճառություն» չի՞ կատարվում խորհրդային միության խուլ անկյուններից մեկում, այն էլ նրա արդարադատության պատասխանատու աշխատակիցների ձեռքով: Ըստ որում, իմ «գործը» կամ Օ.Գ.Պ.Ու-ին չի ուղարկված, որովհետև ոչ մի գործ չկա, և դա սովորական մի ձև է երկարացնելու ըստ կամս իմ գերությունը, կամ էլ Օ.Գ.Պ.Ու-ին ուղարկված են ոչ թե վերոհիշյալ չորս անլուրջ մեղադրանքները, այլ գանազան ֆանտազիաներ, որոնց մասին ինձ ոչինչ չեն հայտնել, և որոնք այժմ ինձ ամիս հետո, ոչ իբրև մեղադրանք կարող են ներկայանալ, ոչ էլ արդարանալու տրամադրություն գտնել: Երկու դեպքումն էլ ես հիմնավոր եմ համարում իմ բողոքն ու հույսերը Ձեզ ուղղելու: Այս միայն բավական է, որ ես հանգիստ սրտով կրեմ բոլոր պատիժները, մտածելով այն մաքրագործող դերի մասին, որ ես համարձակվում եմ ավելացնել իմ բազմաթիվ ծառայությունների թվին կատարված իմ ձեռքով, խորհրդային իշխանության համար, իր առաջին օրերից սկսած մինչև այժմ, նույնիսկ կյանքս վտանգի տակ դնելով:

Քայքայված առողջությամբ, ընկած № 1 բանտի հիվանդանոցում ես իմ վերջին հույսն եմ հայտնում, որ դուք բարի կամք կունենաք ստուգելու իմ ասածների ճշմարտությունը, քանի ես դեռ ի վիճակի եմ անելու այդ:

Պատճեն

1. *Անդրկ. ժողկոմխորհի նախագահին*
2. *Ռ.կ.կ.(բ.) երկրային կոմիտեի քարտուղարին*
3. *Անդրկ. Արտակարգ հանձնաժողովի նախագահին*

Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 25

ЗСФСР
Закавказская Чрезвычайная Комиссия
по борьбе
с контр-революц. преступлением по должности
При Заксовнаркоме
ԱՍՖԽՀ
Անդրկովկասյան Արտակարգ
Հանձնաժողով
Հակահեղափոխություն և պաշտոնական
հանցանքների դեմ մաքառող
№ 5551

[Тифлис] 7 августа 1925
Отдел секретный
Сов. Секретно

Эривань-Армчека
На но. 7071/с от 21 июля 1925 г.

1. С получением сего вышлите в ЗАКЧК следственное дело (пересланное из ОГПУ) на гр. гр. *Лорецяна, Дерояна* и *Максапетяна*, каковой будет доследовано нами;

2. В отношении высылки упомянутых лиц из пределов Закавказья, сообщается, что в бытность т. М—Осипова на заседании коллегии ЗАКЧЕКА он говорил, что высылку данную можно отменить (повидимому т. Варданов не в курсе дела).

3. По соображениям чисто оперативного характера находим возможным пребывание обвиняемых на свободе, а почему Вам

надлежит теперь установить их местопребывание и сообщить нам.

Настоящее исполнить **срочно**.

Предзакчека (КАЦНЕЛЬСОН) подпись
Нач. СОЧ. (БЕРИЯ) подпись
Нач. СЕКО (ВАЛИК) подпись

Բնագիր: Մեքենագիր: *ԱԱԾԱ, ԿԳՖ, գ. 3336, թ. 75:*

№ 25

ՓԻԼ. ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԴԻՐԵԿՏԻՎՆԵՐԸ

[Երևան, 1930]

1. Հիմնական լեզուն համարել գերմ. և նրա վրա ձևել հայերենը:

2. Ռուսերեն փիլ. բառարան չկա, իսկ գրականության մեջ տերմինները որոշ և հաստատուն չեն:

3. Այնուամենայնիվ ռուսերենը դնել այն բոլոր դեպքերում, երբ ոչ մի կասկած չկա, թե համապատասխան տերմինը գտնված է:

4. Հայերեն փիլ. բառարանը իր նպատակներին մաքսիմում չափով կմոտենա եթե լինի երկլեզվյան, այսինքն՝ հայ-գերմ. և գերմ. հայ. երկու դեպքում էլ ռուսերենը օգտագործել հնարավորին չափ:

5. Ներկա փիլ. բառարանը իր բազմաթիվ նպատակների մեջ կունենա նաև ռուս-հայ. լրիվ փիլիսոփայական բառարանի նախապատրաստության արժեքը, ինչ որ անկասկած լինելու է, հենց որ կազմվի ռուսերեն փիլ. բառարանը:

6. Բառապաշարը լրիվ պետք է լինի հետևյալ ճյուղերի համար. լոգիկա, մետաֆիզիկա, իմացաբանություն, բարոյագիտություն, սոցիոլոգիա, մարքսիզմ-լենինիզմ, էսթետիկա:

7. Որպես օժանդակ գիտություններ, ամենակարևոր բառապաշարը հետևյալ գիտություններից — հոգեբանություն, մանկավարժություն, բիոլոգիա, մաթեմատիկա, պատմագիտություն, տնտեսագիտություն, ֆիզիկա և այլն:

8. Խուսափել աստվածաբանության ամբողջ բառապաշարից:

9. Որպես կանոն, ամեն բառի հայերեն թարգմանությունը դնել, բայց ընդունելի և հանձնարարելի համարել միայն սեաստատ տերմինը:

10. Տառաշրջումը կատարել լատիներենի հիմքի վրա և հայերեն արտասանությամբ:

11.Տերմինների համար սահմանում նշանակել շատ համառոտ և միայն տեխնիկական սահմանում, աշխատելով սպառել տվյալ տերմինի զանազան առումները:

12. Տերմինների սահմանումն անհրաժեշտ համարել այն բոլոր բառերի համար, որոնք առնված են սովորական լեզվից և ուրեմն ունեն փիլ. այլ կիրառություն:

13. Տերմինների սահմանումը անհրաժեշտ համարել նաև փիլ. այն բառերի համար, որոնց մենք որոշում ենք տալ այլ նշանակություն, քան մինչև այժմ տրված է եղել:

14. Տերմինների սահմանումը ցանկալի համարել ամենակարևորների համար:

15. Լատիներեն մի շարք տերմինները, որոնք ընդունված են բոլոր լեզուների մեջ, ինչպես նաև լոգիկայի ֆիգուրները, որոնք ոչ մի լեզվի մեջ էլ թարգմանված չեն, դնել նույնությամբ, տալով տեխնիկական սահմանումը և մի օրինակ:

16. ismus ձևը դնել իզմ-ով:

17. Միևնույն արմատը, բայց բազմաթիվ բանաձևեր ունեցող տերմիններից հատկապես գոյականաձևը ցանկալի համարել սահմանավորելու:

18. Նույն այդ տեսակի բառերից այն թարգմանական կամ ընդունելի համարված տերմինը, որ որոշվում է առաջին ձևի մեջ, դնել բոլոր մյուս ձևերի մեջ՝ որպես միակը, առանց մյուս տերմինների:

19. Այս շարքի մեջ, անթարգմանելի բառերը, որպես ընդհ. կանոնից չեղում, դնել առանց թարգմանության, բայց պարտադիր դարձնել նրա սահմանումը:

20. Բառարանը իր ընդարձակ ծավալով (սահմանումներով, համանիշներով, հանձնարարելի տերմիններով) լինելու է հայ-գերմառուս փիլ. բառարան:

21. Շատ ցանկալի է դրան կցել, որպես պարզ շարունակություն գերմ-հայ-ռուս բառարան համառոտ ծավալով (առանց սահմանումների, համանիշների և ոչ-հանձնարարելի բառերի):

Տեխնիկական դիրեկտիվները

22. Տվյալ տերմինը դնել կորպուսի գլխատառով, իսկ մյուս լեզվով համապատասխան տերմինները կորպուս-հասարակ, այս վերջինների մեջ ամենից ընդունելին և հանձնարարելին դնել սևատառ կորպուս:

23. Լատիներեն և լոգիկայի տերմինները դնել ցիցեր հասարակ:

24. Այս վերջինները դնել միայն գերմ. հայ բառարանի մեջ:

25. Սահմանումները դնել լուսանցքով, պետիտ և փակագծերի մեջ, առումները բաժանել գծիկներով:

26. Էջերը դնել միասյունակ:

[Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 26

[ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ]

[Երևան, 1930]

1. Փ. բառարանը փ. տեխնիկան է:

2. Փ. բառարան կազմելը նշանակում է մի խոշոր քայլ կատարել դեպի այդ տեխնիկայի նվաճումը:

3. Ամբողջական և լրիվ նվաճելու տենդենցներ հայերեն նախկին թերի, դիլետանտական գործերի հանդեպ:

4. Փիլ. մի տեսակ ինտերնացիոնալ և ընդհ. մարդկային լեզու է պահանջում:

5. Ուստի առնվազն 2 օտար լեզու, իսկ անհրաժեշտ դեպքերում – բոլոր լեզուները:

6. Ներկա մոմենտի ընթերցողի համար, վերջում դնել ռուս-հայ ցուցակ-բառարան:

---

7. Փ. բառարան հայերեն լեզվով լինելու է ոչ-թարգմանական, ոչ էլ բացատրական, այլ սոսկ բառագիտական:

8. Ուստի կարճ և տեխնիկական սահմանումներ տալ հետևյալ բառերի համար

ա) նոր բառերի

բ) քիչ գործածական բառերի

գ) ոչ–փիլ. բառերի

դ) անծանոթ

9. Սրան կից ցուցակով, 200 բառի համար տալ դրանց լրիվ առումներն ու գործածությունները միայն հայերեն:

10. Մտքի սոց. չինարարության բնորոշ բառերը տալ համառոտ սահմանումներով, տես ցուցակը:

11. Լրիվ բառապաշար լոգիկայի, մետաֆիզիկայի, իմացաբանության, բարոյագիտության, սոցիոլոգիայի, էսթետիկայի, մարքսիզմ-լենինիզմի:

12. Օժանդակ գիտություններից գլխ. բառեր, հոգեբանութ., մանկավարժութ., բիոլոգիա, մաթեմատիկա, ֆիզիկա, պատմագիտություն, տնտեսագիտություն:

13. Որպես կանոն – դնել բոլոր բառերի թարգմանությունը, բայց հանձնարարելի համարել սեաւառը:

14. (տես մյուս թերթիկները. 8. 10. 12. 13. 15. 16. 17. 18. 19)[28]:

15. Սիլլոգիզմի մի քանի նշանավոր ֆիգուրները դնել մի օրինակով և կարճ սահմանումներով:

16. Լատիներեն տառերի լոգիկական նշ. դնել:

17. Խուսափել անբրանական բառապաշարից:

18. Տառաշրջումը լատիներենի հիմքի վրա և հայերեն արտասանությամբ:

19. Սահմանում այն տերմինների, որոնք առնված են սովորական լեզվից:

20. Այլ. նշ. ստացած տերմինները սահմանել:

Իմ աշխատանքի նկարագրությունը

1. Այս բառարանը հիմնականում 4 լեզվով է կազմված:

2. Հայերեն բառերը տրված են հնարավորին չափ շատ, որից ընտրություն պիտի անել:

3. Եվրոպական արմատ պահելը, իրրև հեշտ գործ՝ չեմ կատարել ընդհանրապես, թողնելով հանձնաժողովին որոշելու այդ:

4. Բազմաթիվ կարճ սահմանումներ կան:

5. Որպես օրինակ այդ 200 լրիվ առումներով դրված բառերի— նայել Dialektik, Materie, Philosophie, Wert, Zweck.

6. Դրանք միայն գերմաներեն են:

[28] *Մեզ չհաջողվեց հայտնաբերել նշված թերթիկները – Ռ. Ս.:*

Հանձնաժողովի աշխատանքը

1. 4000 թերթիկին 5-ական րոպե տալով, պետք է 333 ժամ աշխ. իբրև ամենախիստ մինիմում.

2. իսկ եթե ամեն բառին 5 րոպե տանք—այն ժամանակ առնվազն 666 ժամ:

3. Ուստի հանձնաժողովի աշխ. պետք է կրճատել հնարավոր մոմենտների վրա.

4. նորամուտ բառերն ընդունելու կամ ուրիշ բառ առաջարկելու տեղը.

5. հոմանիշներից ընտրելու մեկը կամ երկուսը.

6. վիճելի թարգմանությունները նայելու.

7. բոլոր սահմանումները կարդալու.

8. ռուսերեն վիճելի և կասկածելի բառերը նայելու:

9. Քննելու այն բոլոր բառերը, որ ես եմ առաջարկում, կամ անդամներից մեկը:

10. Մի շարք բառերի ռուսերենը գտնելու, որ ես չեմ կարողացել:

11. Նոմենկլատուրայի ընտրություն:

[Վ. Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 27

ՆԻՇԵՐ
ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ
1920–1924

[1930]

Սիստեմատիկ հաշվառման ֆորմուլանների վերածել այդ թվականների տպագրական արտադրանքը, որ գրեթե իսպառ վերացել է հրապարակից և ամբողջությամբ ոչ մի տեղ չի կարելի գտնել — նույնքան հեշտ մի աշխատանք կլինի, որքան մի ընդարձակ դաշտի վրա փռված քարերը մի քանի երկրաչափական ձևերի վերածել: Իշխանությունը գրավելու, նորը հաստատելու և ամրապնդելու պրոցեսը, հինը քանդելու և վերաչինելու, քաղաքացիական կռիվների, սովի ու պրկանքի տարիների աշխատանքը, որ կարելի է ասել չատ քիչ չափով է տպագրական արտահայտության հասել, դառնում է ամեն օր

առօրյա – այսինքն ամեն օր անցնող օրվա պես և ոչ մի օրվա նման: Առանց բռնությունն գործադրելու անկարելի է այդ հաշվառումը սիստեմի տակ դնել: Եվ սակայն այդ ժամանակագրության տպագրական արտադրանքը հրապարակից չքացել է, ոչ մի տեղ միացած չի կարելի գտնել և արժեքավոր է ոչ միայն իբրև պատմական վավերագիր, այլ նաև այսօրվա օրը՝ իր մանրամասնության և ամբողջության մեջ՝ հասկանալու տեսակետից, նրա հիմքերը, ծագումը և ծագման երկունքն ըմբռնելու տեսակետից, որոնք և պայմանավորում են նրա աճը, բնույթը մասամբ նաև նրա դալիքը: Ահա, թե ինչու համար անհրաժեշտ է այդ հաշվառումը օր առաջ հրապարակել, ինչ որ պատճառներով չի կարողացել մինչև այժմ կատարել դևռևս դրապալատը: Սակայն մի քանի դիտողություններ և օրինակներ անհրաժեշտ են այստեղ՝ լրիվ գաղափար կազմելու համար այդ շրջանի տպագրական արտադրանքի և դրա վրա կատարած մեր աշխատանքի մասին:

Գիրք չինելու արհեստը, այս շրջանում, կարծենք, թե նոր է աշխարհ գալիս: Ըստ էության ասելիքը այնքան կարևոր է, այնքան ինքնահատկանալի և մատչելի, որ կարիք չունի որոշված ձևերի տակ մտնելու, գրքի կերպարանք ընդունելու, ներկայանալի դառնալու: Հեղինակ չունի գիրքը, կամ, եթե ունի էլ, ընկած է մի որևէ տեղ, վերջում, առաջաբանի մեջ, նման գրքույկների շարքից մեկի չափիկի վրա: Տպագրության տեղը, թվականը, տպարանը, հրատարակիչը, գինը, տիրաժը, ավելի բախտավոր չեն: Դրանք բոլորը կարևոր չեն գրքի ֆիզիոնոմիան, կենսագրությունը և կերպարանքը կազմակերպելու տեսակետից. ամենից կարևորը, ամենից անհրաժեշտը, ավելի կարևոր և ավելի անհրաժեշտ, քան ինչ որ գրքի բովանդակությունն է, այդ էլ նոր կյանքը բնորոշող, դեպի նորը կոչող այն մի քանի լոզունգներն են, որոնք անվրեպ ճշտապահությամբ փայլում են տպագրական արտադրանքի բոլոր միավորների վրա: Այստեղ ոչ մի թերացում չի կարելի գտնել, թեկուզ իբրև բացառություն:

Շատ բնորոշ է «մամուլի» կերպարանքը: Մոտավորապես 150 պարբերականների անուններ կան այս ժամանակաշրջանում. դրանցից շատ քչերն են, մատի վրա են հաշվվում այնպիսինները, որոնք մինչև այժմ էլ ապրում են: Մեծ մասն են կազմում, համեմատաբար, այնպիսինները, որոնք մեկ կամ մի քանի համար են լույս տեսել միայն:

[Վարազդատ Տերոյան]

№ 28

1931 թ. ՀԱՄԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺՆՈՒՄ ՆԿԱՏԻ ԵՆ ԱՌՆՎՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ

Երևան, 17 դեկտեմբերի 1930

1. Կազմել մի ցուցակ այն (հայերեն) գրքերի, որ կարելի է արտասահմանում վաճառել:

2. Այդ վերածել ֆրանսերենի:

3. Հանր. գրադարանից, Էջմ. մատենադարանից, ինստիտուներից, Հողժողկոմատից և այլ հիմնարկներից հավաքել փոխանակության ֆոնդի ցուցակները:

4. Կապ հաստատել Միության սահմաններից դուրս գտնվող եվրոպական. փոխանակության հիմնարկների հետ:

5. Մխիթարյանների պահանջած 1928–30 թ. մեր հրատարակությունները հավաքել և ուղարկել:

6. Մխիթարյանների պահանջած հայերեն և հայագիտական գրքերը լույս տեսած Միության մեջ, հավաքել և ուղարկել:

7. Մխիթարյանների ուղարկած գրքերը պահպանել և գիտական մշակման ենթարկել:

8. Կես դրույքով մի կուս. աշխատակից սպիտակ գրականության պահպանման և մշակման համար:

9. VOKS-ից ստացած գրքերը ցուցակագրել և բաշխել:

Ծախսերը

10. Ցուցակի տպագրության 250 ռ.

11. Լատինատառ գրամեքենա 500 ռ.

12. Մխիթարյանների հավաքածոն լրացնելու 200 ռ.

13. Նույնը ուղարկելու 100 ռ.

14. Այլ առաքումների և 1931 թ. գրականության առաքման համար 1000 ռ.

15. Ընթացիկ ծախսերի համար 200 ռ.

16. Ստանալիք գրականության համար ՀՕԿ-ին 1000 ռ.

17. Այս բոլոր գործերի կատարման առաջին պայմանն է մեր կանոնագրությունների հաստատումը Լուսժողկոմատի և ժողկոմխորհի կողմից:

Վ[արագդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 29

ՆԱԽԱԳԻԾ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
Հայ փիլիսոփայական ընկերության

[Երևան, 1930]

1. *Ընկերության նպատակն է փիլիսոփայական գիտությունների և խնդիրների ուսումնասիրությունը ու համապատասխան գրականության մշակումը հայոց լեզվով:*
2. *Այդ նպատակին հասնելու համար ընկերությունը*
ա. Կազմում է դասախոսություններ, զրույցներ, դիսկուսիաներ, ռեֆերատներ ևն:
բ. Գործող օրենքների սահմաններում հրատարակում է պարբերականներ և գրքեր:
գ. Հատուկ ժամանակ է նվիրում փիլիսոփայական բառարան կազմելուն հայոց լեզվով:
դ. Իր կենտրոնատեղում աշխատում է ունենալ փիլիսոփայական գրադարան:
ե. Մեծ փիլիսոփաները թարգմանում է հայոց լեզվով:
զ. Հավաքում է հայ փիլիսոփայության վերաբերյալ վավերագրեր և տեղեկություններ ու արժեքավորները հրատարակում է:
է. Կազմում է հայ փիլիսոփայության վերաբերյալ մենագրություններ և ուսումնասիրություններ:
ը. Կապ է պահպանում օտարերկրյա նման հաստատությունների հետ:
թ. Միջոցներ է ձեռք առնում մի կենտրոնատեղի ունենալու, ուր պահելու է իր արխիվը և գրադարանը:

ժ. Աշխատում է նյութական միջոցներ ունենալ իր նպատակների իրականացման պահանջած ծախքերը հոգալու համար:

3. *Ընկերությունը կազմվում է*

ա. Պատվո

բ. Իսկական

գ. Համակիր անդամներից:

Պ ա տ վ ո անդամներն ընտրվում են միաձայն՝ ընկերության նպատակներին խոշոր ծառայություն մատուցած անձեր:

Ի ս կ ա կ ա ն անդամներ ընտրվում են ձայների մեծամասնությամբ այն թեկնածուներից, որոնք ներկայացնում են որևէ տպագրված կամ անտիպ փիլիսոփայական աշխատություն հոդված, դասախոսություն, գիրք: Իսկական անդամ համարվում են նաև ընկերության հիմնադիրները:

Հ ա մ ա կ իր անդամները ընտրվում են ձայների մեծամասնությամբ քարտուղարի առաջարկած թեկնածուներից:

4. *Ընկերության գործունեությունը կատարվում է անդամների ընդհանուր ժողովների մեջ:*

5. *Ընկերության ընդհանուր ժողովի նիստերին մասնակցում են բոլոր անդամները, պատվո և իսկական անդամները վճռական ձայնով, իսկ համակիր անդամները խորհրդակցական ձայնով:*

6. *Ընկերությունը ունի իր քարտուղարությունը երեք անդամից բաղկացած, որոնք ընտրվում են մեկ տարով և հերթով վարում են գործերը յուրաքանչյուրը 4 ամիս:*

7. *Ընդհանուր ժողովի նիստերի տեղը, ժամանակը, օրակարգը որոշում է հերթական քարտուղարը և տեղեկացնում է անդամներին ինչպես և իշխանության: Նիստերը գումարվելու են պարբերաբար առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերին նախագահում է հերթական քարտուղարը և արձանագրությունները տանելու համար հերթով հրավիրվում է անդամներից մեկը: Նիստերը հրապարակային չեն:*

8. *Յուրաքանչյուր դասախոսություն, ռեֆերատ և այլն թեզիսների ձևով գրավոր պիտի հանձնվի քարտուղարին նշանակված նիստից առաջ և կարդալուց հետո կցվի արխիվին:*

9. *Յուրաքանչյուր նիստում, անկախ զբաղմունքի նյութից, ժողովը պետք է զբաղվի առնվազն երկու փիլիսոփայական տերմինի հայցմամբ:*

10. Ընդհանուր ժողովը հրահանգ է կազմում յուր քարտուղարության և անդամների զանազան աշխատանքների կարգի և կազմակերպի մասին:

Բնագիր: Մեքենագիր:
(Վ. Տերոյանի ձեռագրով
նշումներ կան – Ռ. Մ.)

Դերոյանների ընտանեկան արխիվ

№ 30

Выписка из протокола № 59 Заседания Республиканской Комиссии по чистке соваппарата при Арм. РКИ от 12 июня 31 г.

Ереван, 12 июня 1931

1. Расмотрение аппеляционных заявлений. (Докладчик В. Мамиконян).

1. Жалобу тов. Терояна Вараздата – Зав. Отд. международного обмена книжной палаты, снятого по первой категории.

Присутствовал тов. Тероян.

1. Считая нецелесообразным дальнейшее использование тов. Терояна на должности Зав. Отделом международного обмена, во изменение постановления Проверкомиссии снять его из аппарата Книжной Палаты вне категории.

Поллинный за надлежащими подписями.

С подлинным в е р н о:

подпись

Բնագիր: Ձեռագիր:

ԱԱԾԱ, ԿԴՖ, գ. 3336, թ. 54:

№ 31

Справка УРСО АРМГПУ

3 ноября 1931

ДЕРОЯН Вараздат Мкртичевич (Никитич) был арестован 7/VIII – 22 г. обвин. в подозрении в соучастии в терроре над Дже-

мал Пашой. Дело направлено с арестованным в ЗАКЧК (д. №258 – 22 г.).
Вновь был арест. 24/IX – 24 г. обвин. в организации в Амеркоме группы п/Д и к-р. Был по постан. Колл. АРМЧК направлен вместе со следделом в ЗАКЧК 12/II – 25 г. при осн. №1556. По постан. Колл. ЗЧК – 16/IV – 25 г. приг. к высылке из пределов ЗСФСР ср. на 5 лет. Дело направлено из ЗЧК в ОГПУ (см. отн. ЗЧК №5505/с 11/V – 25 г.) (д. №245 – 24 г.).

Проходит по агделу КРО "Благотворители Амеркома"

Д. д. форм. СО №№ 950 и 1889.
№ 950 сдано в архив УРСО, а/д № 1889 послано в ЗАКЧК.

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 4, գ. 973, I մաս, թ. 17:*

№ 32

ՀՍԽՀ ԼՈՒՍԱԺՈՂԿՈՄԱՏԻ ԳԻՏ. ՍԵԿՏՈՐԻՆ

[Երևան, 1931]

Ընթացիկ աշխատանքների ժամանակ պարզվեց, որ մեր գիտական հիմնարկներից ոչ մեկը չունի խորհրդային հրատարակությունների ամբողջական կոմպլեկտը: Միակ կոմպլեկտը, որ հավակնություն ունի լրիվ լինելու, գտնվում է մեզ մոտ. բայց նրա մեջ էլ պակասներ շատ կան և պետք է աշխատել լրացնել այն: Այս հանգամանքի վրա հրավիրելով Ձեր ուշադրությունը, ուզում ենք մատնանշել նաև այն, որ եթե այժմ չաշխատենք լրացնել այդ թերին, հետագայում այդ կդառնա այլևս անկարելի: Բայց որպեսզի այս դրությունը չշարունակվի ապագայի համար ևս, անհրաժեշտ է ձեռք առնել այնպիսի միջոցներ, որոնք ապահովեին մեր հրատարակությունների լրիվ ամբողջականության պահպանումը: Առ այդ առաջարկում եմ հետևյալ միջոցները.

1. Գոյություն ունեցող ներկա կոմպլեկտը հայտարարել անձեռնմխելի և անօգտագործելի:

2. Գրապալատի վրա պարտականություն դնել այդ անձեռնմխելի և անօգտագործելի կոմպլեկտի թերինները լրացնել մեկ տարվա ընթացքում:

3. Նոր ստացվող տպագրական նյութից մի մի օրինակ միացնել այդ կոմպլեկտին հենց որ համապատասխան «տարեգիրը» լույս տեսնի:

4. Այդ կոմպլեկտը պահել հատուկ նշանակված պահարանների մեջ մշտապես փակված և կնքված:

5. Տարին երկու անգամ բանալ այդ պահարանները մաքրելու համար:

6. Մեծ անհրաժեշտության դեպքում, պետք է հատուկ ակտ կազմել այդ պահարանները բանալու համար, մատնանշելով այն նպատակը, որի համար բացված է և բոլոր աշխատակիցների ստորագրությամբ երաշխավորել, որ ոչ մի բան պակաս չէ:

7. Գրապալատի աշխատակիցներից մեկը համարվում է այդ կոմպլեկտի պահապան և անձամբ պատասխանատու է սույն կանոնադրության բոլոր կետերի լրիվ կիրառման վրա հսկելու:

8. Այդ պահարաններում պահել նաև ստուգված «տարեգիր»-ները, իրենց լրացուցիչ ցուցակների հետ:

9. Առաջիկա տարվանից բյուջետային հատկացումներ կատարել այդ կոմպլեկտը կազմել տալու կամ հատուկ պահպանակներ չինել տալու յուրաքանչյուր գրքի համար:

10. Գրադարանային տեխնիկայի մի շարք միջոցներով նրա պահպանության բոլոր ձևերը կիրառել:

11. Հատուկ Ex libris *– տպագրել այդ միակ կոմպլեկտի համար:*

12. Գրապալատը իր և այլ հիմնարկների կարիքների համար պետք է պահի նաև մի օգտագործելի կոմպլեկտ:

13. Սույն կանոնադրությունը հրատարակել ԼԺԿ տեղեկագրի մեջ ի գիտություն:

[Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 33

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ

[Երևան, 1931]

I. Պրոֆիլը.

1. 80000 բառ կամ ասույթ:

2. Խոսակցական լեզու. գիտության, գրականության, քաղաքականության և միջին պահանջի մասնագիտական բառեր: Հումանիտար-պոլիտեխնիկ թեքում:

3. Սեռերը, չեչտադրությունը, տիպիկ ասույթները, տիպիկ օրինակները և գերմանիզմները:

4. Քերականության համար հոլովների տախտակ և անկանոն հոլովների ցուցակ. բ) խոնարհումների տախտակ և անկանոն խոնարհումների ցուցակ:

5. Հեղափոխության նորաստեղծ բառապաշարը:

6. Հատուկ անունների ձևափոխությունները:

7. Բարդ բառեր, բաժանական բայեր, ոճեր և առումներ:

II. Կաղմողները.

III. Պայմանագրությունը. *ժամկետը, հոնորարը, տիրաժը, վճարման եղանակները:*

Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 34

ԸՆԿ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՑ

[Երևան, 1931]

— *Աշխատակից ընտրելու ազատություն.*
— *Բառարանները դռնելու կարգադրություն.*
— *Երաշխիք պայմանի հարգման մասին.*
— *Վերջին ամիսն:*

Ընկ. պայմանը

- *Ժամկետը 1937 հունվար 1.*
- *2 առանձին պատրաստածի և մեկի պատրաստածը նայելու տարբերությունը.*
- *Տարբերության տոկոսը (հեղ. կամ. խմբ.)*
- *Հեղինակություն 100 %*
- *Խմբագրություն 25%*
- *Արտագրություն 20 %*
- *Սրբագրություն 30%*
- *Նոմենկլատուրա, թե ոչ*
- *Կա՞րա թե թերթ*
- *Տպագրական ստիլի որոշումը*
- *Կրճատումները և տառերի տեսակները*
- *Խմբագրման ստիլի որոշումը (բառաբույներ)*

Պաշտ. պայման

- *Առձեռնի և լիակատարի միջինը*
- *Որինակի չափը 80000 բառ. (մամուլն անհայտ)*
- *Ապահովել 2 հոգու լրիվ ամսական վարձը (1000-ական ռ.)*
- *Գրականություն 1000 ռուբլու չափ*
- *Ֆրանս-գերմ. և գերմ-ֆրանս. լիակատար բառարաններ բերել տալ Եվրոպայից*
- *Կարտոտեկներ*
- *Տույժերը*
- *Խմբագրություն*
- *Արտագրություն*
- *Սրբագրություն*
- *Հեղինակային իրավունքը*
- *Տիրաժը*

[Վարագդատ Տերոյան]

Դերոյաններին ընտանեկան արխիվ

Բնագիր: Ձեռագիր:

№ 35

Ցերեվան, փետր. 1931

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ ՊԱՏՎԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ.

Ձեր նոյ. 7 թվակիր գրությանը պատասխանում ենք ներկա նամակով, մի քիչ ուշ, որպեսզի կարողանայինք Ձեր բոլոր հարցերին տալ սպառիչ պատասխան:

1. Լիովին համաձայն ենք Ձեզ հետ, որ գրքերի և թերթերի հավաքման կենտրոնատեղին լինելու է խմբագրությունդ: Այդ մասին դուք կարող եք հայտարարել ուր որ պետք է. իսկ Ձեզանից անկախ, ուղղակի մեր հասցեով ուղարկվածները ոչ ընդունելի են, ոչ էլ հաշվի կառնվեն:

2. Մենք որևէ առարկություն չէինք անի Ձեր այն կետի հանդեպ, թե առաքումները պետք է կատարել տարին 2–3 անգամ, բայց ավելի նպատակահարմար կլիներ առաքումները կատարել փոքրիկ կապոցներով, ամիսը մեկ անգամ նույնիսկ:

3. Առաքման ծախսերը: – ա) Այստեղից ուղարկվեն Ձեր բոլոր պահանջները մեր ծախսով: – բ) Այդտեղից ուղարկվելիքները պետք է ուղարկել գլխավոր մեր հասցեով, իսկ առաքման ծախսերը կատանաք ՀՕՄ-ի Փարիզի մասնաճյուղից, որին ամեն անգամ պետք է ներկայացնել առաքման ծախսերի հաշիվը, պատճեն մեզ ուղարկելով. այդ մասին մենք համաձայնության ենք եկել ՀՕԿ-ի** կենտ վարչության հետ այստեղ:*

4. Ուղարկում ենք Ձեզ, ինչպես պահանջել էինք, 10 օրինակ «Տպագրության տարեգիրը». նման ուրիշ ցուցակներ կազմելու դեպքում խոստանում ենք նույնպես ուղարկել:

5. Ձեր 5-րդ կետը նույնպես համաձայնություն առաջ բերեց, այսինքն, խմբագրությանդ կողմից ներկայացված պահանջները կուղարկվեն ցույց տրված հասցեին:

6. Ձեր 6-րդ կետը, թե խմբագրությունդ հանձն կառնե հսկել, որ ամեն հրատարակությունից մի մի օրինակ հավաքվի մեզ համար, առանձին ուշադրության արժանի է: Դուք հասկանում եք անշուշտ, թե ինչքան կարևոր է գիտական նպատակով հավաքված կոլլեկցիայի ամբողջականությունը. և, մենք վստահ ենք, որ դուք ըստ ամենայնի ձեռնհաս եք այդ հսկողության:

7. Ձեր ուշադրությունը հրավիրում ենք հատկապես հետևյալ կետի վրա. Ձեր կոչը, ըստ երևույթին, իրրև առաջին քայլ, դուցեև անհրաժեշտ էր. բայց մենք կարծում ենք, որ հիմնականում այդ մեթոդով չէ, որ պետք է արմատապես կարգավորվի այդ գործը: Մենք ցանկանում ենք ավելի շատ, որ խորհրդային սահմաններից դուրս գտնվող բոլոր հայ հրատարակիչներին հասկացնեինք, թե անհրաժեշտ է մեր հրատարակությունների հետ փոխանակություն կատարել իրենց հրատարակությունները մեզ ուղարկելով Ձեր միջոցով: Այս տեսակի փոխանակության սկզբունքը, մեր կարծիքով, պետք է հիմք ընդունել և այն կիրառելով կազմակերպել այս ամբողջ գործը:

8. Ձեր կոչի առթիվ մենք էլ գրություններ ենք ստացել Գերմանիայից, Ամերիկայից, Եգիպտոսից և այլն, մեզ գրքեր ուղարկելու մասին: Մենք նրանց պատասխանում ենք ընդհանրապես, որ կարող են ուղարկել գրականություն կամ մեր կամ Ձեր հասցեով: Նման դեպքերում, մեզ թվում է, դուք ևս այդ հասցեներից մեկը տալու եք, նայած ուղարկվելիքի մեծության և տեղի մոտավորության մեր կամ Ձեր հասցեին:

9. Խորհրդային Միության սահմաններում լույս տեսնող հայերեն և հայագիտական գրականություն մենք հանձն կառնենք (թեև նման գործեր մեր ֆունկցիաների մեջ չեն մտնում) հավաքել Ձեզ համար հատուկ փոխանակության հաշվով:

10. Ձեր մյուս ցանկությանն ընդառաջ գնալու համար, հայտնում ենք, որ պատրաստում

[Թերի է] [Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 36

ՀՍՍՀ
ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄ
ՄԱՐՔՍԻԶՄԻ–ԼԵՆԻՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տ ե ղ ե կ ա ն ք

Երևան, 20 մարտի 1932

Ընկ. Վարազդատ Տերոյանը Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի փիլիսոփայական տերմինաբանական հանձնաժողովի աշխատակից է:

Դիրեկտոր՝ ստորագրություն /Գյուլի-Քեվխյան/
Գործերի կառավարիչ՝ ստորագրություն /Ռ. Տոնյան/

Բնագիր: Մեքենագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 37

Ընկեր Խանջյան[29]!

Կարծում եմ, որ չեք մոռացել, թե անցյալ օր ես Ձեզանից թանկագին ժամեր խլեցի բոլորովին այլ խնդրի համար, ինչ որ դուք փոխեցիք գործնական եղրակացություններին: Այդ առաջարկությունները ինձ մերժվեցին ոչ թե 2, այլ 12 օրից հետո: Ինձ թվում է, որ ես պարտավոր եմ այդ մասին հայտնել Ձեզ, քանի որ դրանցից ոչ մեկը ինձանից չէր գալիս:

Մի առաջարկություն, որ իր տեսակով մտնում է Ձեր գործնական եղրակացությունների շարքում, և որ ես եմ առաջարկում, հույս ունենալով, թե չեք մերժի – այն է, որ կարգադրեք պետհրատին վճարել իմ «Իմպերիալիստական ծիծեռնակները»-ի հոնորարը, մոտ 5 տպագրական մամուլի չափով: Այդ ինձ կօգնի մի քիչ սպասել, մինչև նույն գլխավոր խնդիրը Ձեզ հետ տեսականորեն կարգադրե-

[29] *Խանջյան Աղասի Ղևոնդի (1901–1936) – խորհրդահայ կուսակցական, պետական գործիչ. 1930–1936 թթ. Հ Կ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար:*

լու հնարավորությունը, որ կարծում եմ, թե դուք կընծայեք ինձ ոչ շատ հեռու ապագայում:

Միշա Զերդ
Վարագպատ Տերոյան

Երևան, 28.IV.32
Տերոյանների ընտանեկան արխիվ

№ 38

Երևան, 26 հունիսի 1932

«Փիլիսոփայության բառապիրքը» ներկայացնելով «Մարքսիզմ–Լենինիզմ» ինստիտուտի դիրեկտորին, հարկ եմ համարում տալ հետևյալ տեղեկությունները.

1. Կանտի և Դեկարտի բառապաշարը, որ ես հավաքել էի նրանց գործերի թարգմանությունները կատարելով, այստեղ անհամեմատ չափով հարստացել է բառարանակազմության սիստեմատիկ աշխատանքի շնորհիվ հետևյալ աղբյուրների վրա.

ա. R. Eisler-*ի փիլ. բառ.*
բ. A. Lalande-*ի փիլ. բառ.*
գ. Clauberg-*ի և* Dubislav-*ի փիլ. բառ.*
դ. Mauthner-*ի փիլ. բառ.*
ե. Радлов-*ի փիլ. բառ.*
զ. Hegel-*ի* Logik *ռուս. և գերմ.*
է. Windelband-*ի* G. d. n. Phil. *ռուս. և գերմ.*
ը. Ленинский сборник XII

2. Ամբողջ գործն ունի 4849 թերթիկ և մոտավորապես 22000 տերմին:

3. Բոլոր հիմնական տերմինները արված են չորս լեզվով (ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և հայերեն): Պակասավոր է միայն ռուսերեն բառապաշարը: Իսկ այն բոլոր տերմինները, որոնց միայն գերմաներենը կա, շատ հեշտությամբ կարելի է հայերենի վերածել օգտվելով արդեն կատարված աշխատանքից:

4. Բազմաթիվ տերմինների տրված է սեղմ, հակիրճ և տեխնիկական սահմանումներ: Դրանց թիվը կարելի է ավելացնել կամ պակասեցնել, ի պահանջել հարկի:

5. Ամբողջ գործի մեջ նկատելի է միայն մի մտահոգություն – լինել ըստ ամենայնի լրիվ և ամբողջական, ոչ թե այսօրվա պահանջները միայն բավարարել, այլև վաղվա. ոչ միայն սովորողների այլև սովորեցնողների. ինչքան կարելի է սահմանափակել տերմինաբանական անարխիայի հնարավորությունները և ինստիտուտի հեղինակավորությունը տալ ստեղծվող բառագիտությանը:

Վ[արագդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 39

ՄԱՐԳՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԱՍ-Ի ԼԻԱԶՈՐԻՆ

[Երևան, 1932]

Շուտով մի տարի կլինի, ինչ ես թողել եմ բոլոր կողմնակի զբաղմունքներս և զբաղվում եմ գրական-գիտական աշխատանքներով, ուստի խնդրում եմ ինձ ընդունել «գիտ. աշխատավորների միության» մեջ:

1. Տպագրված աշխատություններից հիշատակել կարող եմ – «Գեղարվեստ» հանդեսի 1917 թ. մեջ մի ուսումնասիրություն «Համեմատական գրականության» մասին:

Տպագրության համար պատրաստ է.

2. Մ. Լ.-ի ինստիտուտի հանձնարարությամբ թարգմանած K. Marx – La misère de la philosophie, *թարգ. ֆրանսերենից, գերմաներեն թարգմանության հետ բանասիրական-քննախոսական համեմատությամբ:*

3. Տպագրության պրոցեսում գտնվում է. Taine, H. – Philosophie de l'art, *ռուսերեն թարգմանությունների համեմատությամբ և բազմաթիվ ծանոթագրություններով:*

4. Թարգմանել եմ և դեռ հրատարակիչ չեմ կարողացել գտնել.

ա) I. Kant – Kritik der reinen Vernunft.
բ) I. Kant – Kritik der praktischen Vernunft.
գ) R. Descartes – Discours de la méthode.
դ) R. Descartes – Méditations métaphysiques.
ե) B. Spinoza – Ethik.

5. Ունեմ թարգմանությունները նաև Բարբյուսից («Կրակը», որ տպվում է այս րոպեիս), Անատոլ Ֆրանսից և Մորիս Մետերլինկից:

6. Այս րոպեիս զբաղված եմ – կ. Մարքսի «Փիլիսոփայության Թշվառության» հավելվածների վրա, այն է. գրքի մեջ գործածված փիլիսոփայական տերմինների հայերեն, ֆրանս. և ռուսերեն բառգրքույկ կազմելով, ինչպես նաև նույն գրքի հատուկ անունների համար կենսագրականներ պատրաստելով (մոտ 150 անուն):

Զուգընթացաբար պատրաստում եմ նաև Տենի «Գեղարվեստի փիլիսոփայության» համար երեք լեզվով գեղարվեստական տերմինների բառգրքույկ և հատուկ անունների կենսագրականներ (մոտ 1000 անուն):

7. 1931 թվին ինստիտուտի հանձնարարությամբ պատրաստեցի փիլիսոփայական տերմինաբանական բառարան (մոտ 22000 բառ) գերմաներեն, ֆրանսերեն և հայերեն լեզուներով:

[Վարազդատ Տերոյան]

Ինագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 40

Ընկեր Խանջյան!

[Երևան. 1932]

Ավարտելով իմ հերթական երրորդ բանտարկությունը, մեծ ցանկություն զգացի Ձեզ տեսնելու: Սովորություն է եղել, ի հնուց ասած, որ նման դեպքերում, առանց մեծ դժվարությունների հարուցելու, կենտկոմի Քարտուղարն ինձ ընդունում է երկարատև խոսակցության: Այս անգամ, հույս ունեմ, որ մի առանձին անհատի դժվարություն չպիտի ներկայանա այդ ավանդական սովորությունը գործադրելու. նույնությամբ. ուստի խնդրում եմ բարի եղեք նշանակել տեղը և ժամանակը՝ պարտադրահանջի խնդիրներն ամենակարճ

ձևով վերջացնելու համար, և որպեսզի ասեմ, ինչ որ դրել չպիտի կարողանամ:

[Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյաննելի ընտանեկան արխիվ*

№ 41

ԼՈՒՍԱՇԽԻՆ ԿԻՑ ԳԻՏ. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՑԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

[Երևան] 17 ապրիլի 1933

Սրանով խնդրում եմ ինձ ընդունենք Ձեր սեկցիայում:

Ավարտել եմ Փարիզի համալսարանը և գիտական աշխատանքներիս բերմունքով ուսումս շարունակել եմ նաև գերմանական մի քանի համալսարաններում, ամեն տեղ էլ փիլիսոփայական ֆակուլտետներում:

Սորբոնի ավարտական քննությանս թեզը եղել է "La biologie d'A. Comte".

Բեռլինում արդեն պատրաստ էր իմ թեզը դոկտորայի քննության, երբ վրա հասավ իմպերիալիստական պատերազմը և ես հնարավորությունից զրկվեցի պաշտպանելու "Die soziologischen Grundlagen der Erkenntnis" *թեզս:*

«Գեղարվեստ»-ի մեջ տպել եմ մի փոքրիկ ուսումնասիրություն «Համեմատական գրականության» մասին:

Անտիպ գործեր ունեմ.

1. *Մի ուսումնասիրություն «Հ. Բերգսոնի էվոլյուցիոն թեորիայի» մասին:*
2. *«Կանտի պրագմատիզմը»:*
3. *«Սոցիոլոգիայի տեղը փիլիսոփայության մեջ»:*
4. *Զանազան փոքրիկ* essai*-ներ:*
5. *Թարգմանել եմ Դեկարտի, Կանտի և Սպինոզայի գլխավոր գործերը:*
6. *Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հանձնարարությամբ պատրաստել եմ «Փիլիսոփայության բառարան» հայ. գերմ. ֆրանս. լեզվով, և որ ընդունվել է իբրև գիտահետազոտական աշխատանք:*

Հույս ունեմ, որ այսքանը բավարար կհամարվի իմ ընդունելության համար:

[Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 42

ԳԵՐՄ.-ՀԱՅ. ԲԱՌԱՐԱՆ

Երևան, 20 հուլիսի 1933

I. Պրոֆիլը՝

1. 80000 բառ կամ ասույթ, կամ միավոր 65—70 հեղ. մամուլ:

2. Հեղափոխության նորաստեղծ բառապաշարը:

3. Հատուկ անունների ձևափոխությունները կամ տարբերությունները:

4. Ոճերը և դերմանիզմները՝ օրինակներով:

5. Հոլովումների և խոնարհումների տախտակները:

6. Հումանիտար—պոլիտեխնիկ թեքում:

II. Կազմողները. *Աշխատունակ և ճկուն, ուսած 2 հոգուց ոչ ավելի, որպեսզի կոլեկտիվ աշխատանքը լինի իրական և ոչ թե անվանական:*

III. Պայմանագրական. *1. Ամբողջ գործը հանձնել մեկ տարում:*

2. Նկատի ունենալով, որ գերմ.—հայ բառարան պատրաստելը կրկնապատիկ ժժվար աշխատանք է, քան ռուսերենից—հայ բառարան պատրաստելը, ուստի հոնորարը հաշվել ռուս-հայ բառարանից 50% հավելումով միայն:

3. Հոնորարի 50%-ը վճարել մեկ տարվա ընթացքում, հավասար բաժանելով ամիսների վրա: 25%-ը վճարել ամբողջ գործը հանձնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Վերջին 25%-ը՝ տպվելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում:

4. 8000 տիրաժը հաշվել մեկ տպագրություն:

5. Երկրորդ և հետագա ստերեոտիպ տպագրությունների համար՝ 50% հավելում:

6. Նոր և բարեփոխված տպագրությունների համար՝ առանձին պայման, ըստ հեղինակների իրավունքի դեկրետի:

Վ[արազդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 43

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

[Երևան, 1933]

I. Պրոֆիլը.

Հիմնական բառապաշարը՝ Նեսլերի գերմ.–ռուս բառարանից, 50000 բառ կամ միավոր: Կատարել անհրաժեշտ հավելումներ և հապավումներ, հատկապես հեղափոխության նորաստեղծ բառապաշարն օգտագործելու և հնացած և գործածությունից դուրս ընկածները հանելու մտքով: Ընթացիկ ամենագործածական բառապաշարը, ոչ միայն խոսակցական լեզուն նպատակադնելով, այլև գիտության, գրականության և քաղաքականության հնարավորին չափ լրիվ բառապաշարը. մասնագիտական բառերը – որչափ որ պահանջվում է միջին պատրաստության համար:

Տվյալ սահմաններում գերմաներեն մի բառի հայերեն համանիշներից խուսափելը դառնում է պարտադիր և այդ պատճառով էլ բառարանը թարգմանչական նպատակների համար սահմանափակ նշանակություն է ստանում:

II. Բառակազմության տեխնիկական ցուցմունքները.

1. *Որևէ բառ տալիս՝ խուսափել մշտապես մասունք բանիների նշանակումից, բայց շեղումների ժամանակ, երբ օրինակ, բառը թե՛ մակրայ է և թե՛ ածական, կամ թարգմանության մեջ այլ է – նշել համառոտագրությամբ մասունք բանին:*
2. *Սեռերը, 3 դեպքում էլ տալ:*
3. *Շեշտերը դնել հոդված կազմող բառի վրա, իսկ բառախմբում՝ միայն այն ժամանակ, երբ փոխվում է:*
4. *Համանիշները բաժանել ստորակետներով:*
5. *Առումները՝ արաբական թվանշաններով, բայց առաջինը (1) չդնել:*
6. *Առումների վերջը դնել վերջակետ:*
7. *Առումների համանիշները բաժանել միջակետով:*
8. *Առումներից մասնագիտականը դնել ամենից վերջը, նշելով բնագավառը:*
9. *Բառախմբեր կազմելիս, հիմնական բառը հետագայում տալ գծիկներով և մեկ միավորի մեջ. ինչքան հնարավոր է խուսափել ծանրաբեռնությունից:*

10. *Գծիկն օգտագործել նաև տիպիկ տատյթների ոճերի և օրինակների մեջ, ավելացնելով գծիկի վրա փոփոխական (հոլովական) վերջավորությունը:*
11. *Բարդություններըը տալ անպայման, երբ նշանակությունը փոխվում է, մյուս դեպքերում՝ միայն ամենակարևորներն ու ամենագործածականները:*
12. *Բայերի մեջ տալ խնդրառությունը կարևոր դեպքերում, հատկապես հայերենից տարբեր դեպքերում:*
13. *Անկանոն բայերի 3 ձևը* (partizip 2. imperfect) *տալ մշտապես՝ իբրև առաջին բառ. ուղարկ կատարելով* infinitive-*ի վրա:*
14. *Զանազան նախդիրներով կազմված բայանունները և բայերը* (aus, ab. ge, ein, auf, ver, um *և այլն) առուգաբանորեն չդրել (գծիկներ չդնել):*
15. *Բոլոր բայերի օժանդակ բայը տալ մշտապես՝ փակագծում:*
16. *Գերմ. համանիշ բառերից մշակման ենթարկել ամենագործածականը, մյուսները ենթարկել համապատասխան ուղարկի:*
17. *Նշել բառի փոխաբերական, պատկերավոր, ընդհանրաբար, գավառաբարբառ գործածությունները՝ այս վերջինները կրճատ ձևով:*

III. Բառարանի օժանդակ հավելվածներ.

ա) Հառաջաբան

բ) Օգտագործելու ցուցմունքներ

գ) Համառոտագրություններ

դ) Քերականություն տարրական և բարձր, այս վերջինի մեջ ծանրանալ գերմ. լեզվի առանձնահատկությունների և դժվարությունների վրա:

Քերականության մեջ սպառել բաժանական բայերի, բայանունների, կանոնավոր բայերի և իպական հոլովների օրինքները:

ե) Անկանոն բայերի տախտակ 6 ձևով (infinitive, ind. pras. Imperfect, konj, imperf, imperative, partizip 2.) *և համաներով, որոնք բառաշարքի մեջ բռնում են համապատասխան բայի համարին:*

գ) Տիպար հոլովների տախտակ, արականի և չեզոքի վրա համարներ դնելով, իսկ իգականի վրա՝ չեղումների դեպքում:

[Վարագդստ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 44

Հարգելի ընկ. Խանջյան!

Երևան, 2 հունվարի 1935

«Փիլիսոփայության թշվառության» մասին ես մի մտավախություն ունեի, որ հայտնեցի Ձեզ վերջին անգամ: Այդ կանխատեսությունն իրականացավ: Կուսհրատի դիրեկտորը շատ վերամբարձ, չանթահարող և ոչնչացնող տոնով ինձ հայտնեց, որ «թարգմանության լեզուն շատ վատ է. տերմինոլոգիան սխալ, անտեղի և զուր համեմատություն է կատարված հակահեղափոխական կառուցիկու դերմ. թարգմ. հետ, թե թարգմանությունն ուշանալու է» և այլն, և այլն: Այսքանը բավական էր ինձ համար, բայց Ձեզ համար հավանաբար ուրիշ բացատրություններ կճարվեն: Ահա դարձյալ մի կանխատեսություն: Եվ որովհետև սկզբից մինչև վերջ, գործը գնում է լիակատար օրինաչափության սահմաններում, ապա և ես, այդ բոլորը հավաստելու անխառն հաճույքը վայելելով, կատարած եմ լինում իմ պարտքը Ձեզ հաղորդելու այդ հավաստումները:

Օգտվում եմ առիթից, հիշեցնելու իմ երկու մեծ գործերի մասին: Ժամանակս ամբողջ անցնում է միայն նրանց հաջողության երազներով:

Մշտապես Ձերդ՝ Վ[արագդատ] Տերոյան

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 45

ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ

Երևան, 27 ապրիլի 1935

Եվրոպական լեզուների բառարաններ հրատարակելու անհրաժեշտությունը վերջին մի քանի տարիներում խիստ զգալի է դարձել, հատկապես, այդ լեզուների ուսուցման մասին Համ.Կ(բ)Կ.Կ.-ի հայտնի որոշումից հետո: Դասագրքերի պահանջը հետզհետե բավարարվում է, բայց լեզվի հետագա զարգացման հնարավորությունները դրանով էլ սահմանափակվում, կամ թե նորանոր դժվարությունների են հանդիպում՝ մայրենի լեզվով բառարանների չգոյության պայմաններում: Եվրոպական լեզուների բառարաններն ըստ մեծի մասի պատրաստված են Մխիթարյանների ձեռքով և Պոլսում գտնվող գիտնականների կողմից: Առանձնապես գերմաներեն-հայերեն բառարան շատ քիչ է հրատարակվել, և կոյլավը մնում է գրեթե բացառություն: Իսկ ֆրանս-հայերեն և անգլ-հայ. բառարանները շատ կան հրատարակված: Բայց բոլոր տեսակներն էլ հնացած են, մեր պահանջներին շատ քիչ կարող են բավարարել և անգործնական են շուկայում: Արևելյան Հայաստանում գրեթե երբեք չեն հրատարակվել այդպիսի բառարաններ (եթե չհաշվենք Ծրանգյանի գերմ.-հայ. աշակերտական բառգրքույկը): Այնպես որ մեր կուլտուրական զարգացման մակարդակի չափսին հարազատորեն պատշաճում է ներկայումս այդպիսի բառարաններ հրատարակելու նախաձեռնությունը:

Մյուս կողմից, ԲՈՒՀ-ների, ԲՏՈՒՀ-ների և բազմաթիվ տեխնիկումների մեջ եվրոպական լեզուների ուսուցումը պարտադիր է: Դրա հետևանքով, թե դասախոսները և թե արդեն ավարտած ու նոր սովորող ուսանողները կազմում են մի պատկառելի մասսա, որի համար մեծ անհրաժեշտություն է դարձել լեզու սովորելու այդ հզոր գործիքի պահանջը: Առանց բառարանի, այդ ուղղությամբ կատարված աշխատանքները ոչ ցանկալի արդյունք կարող են տալ, ոչ էլ լիակատար կերպով արդարացնել դործադրված նյութական և մտավոր կապիտալները:

Մեր կուլտուրական առաջադիմությանը որակական մի նոր զարկ տալու և գիտականորեն աճողների պահանջը որոշ չափով բավարարելու համար անհրաժեշտ ենք համարում առաջին հերթին հրատարակել գերմ.-հայ. բառարան հետևյալ պրոֆիլով:

1. 80 հազար բառ կամ ասույթ:

2. Խոսակցական լեզու, գիտություն, գրականություն, քաղաքականություն և միջին պահանջի մասնագիտական բառեր: Հումանիտար-պոլիտեխնիկ թեքումով:

3. Սեռերը, չեշտադրությունը, տիպիկ ասույթները, տիպիկ օրինակները և գերմանիզմները:

4. Քերականության համար — ա) հոլովների տախտակ և անկանոն հոլովների ցուցակ. բ) խոնարհումների տախտակ և անկանոն խոնարհումների ցուցակ:

5. Հեղափոխության նորաստեղծ բառապաշարը:

6. Հատուկ անունների ձևափոխությունները:

7. Բարդ բառեր, բաժանական բայեր, ոճեր և առումներ:

Պրոֆիլի նույն սխեման գործադրել երկրորդ հերթի ֆրանս.-հայ և անգլ.-հայ. բառարանների կազմության և հետագայում հայ.-գերմ. (որը ոչ մի տեղ հրատարակված չէ), հայ.-ֆրանս և հայ.-անգլ. բառարանների համար:

ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ

[Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր, մեքենագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 46

Նախագիծ

ՈՐՈՇՈՒՄ ՀՍԽՀ ԺԿԽ

Եվրոպական լեզուների բառարաններ հրատարակելու մասին

[Երևան, 1935]

Նկատի ունենալով եվրոպական լեզուների բառարաններ ունենալու հետզհետե մեծացող պահանջը բարձրագույն ուսումնական հիմնարկների համար, հանձնարարել Լուսժողկոմատին.

1. Սկսել ամենամոտ ապագայում առաջին հերթին գերմ.-հայ բառարան կազմելու նախապատրաստական աշխատանքները այն հաշվով, որ բառարանը հրատարակության հանձնվի 1937 թվի սկզբին:

2. Կազմակերպել «Մելքոնյան ֆոնդի» միջոցով բառարանի նախապատրաստման աշխատանքները և հրատարակությունը:

3. Հավանություն տալ Լուսժողկոմատի առաջարկությանը մեջ գտնված բառարանի պրոֆիլին:

4. Գերմ-հայ. բառարանի նախապատրաստման աշխատանքներին զուգընթաց սկսել նաև ֆրանս-հայ բառարանի նախապատրաստական աշխատանքները այն հաշվով, որ 1938 թ. սկզբին տպագրության հանձնվի նաև ֆրանս-հայ բառարանը:

[Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Մեքենագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 47

С.С.Р.А. Н.К.В.Д.
Управление Народного Комиссариата Внутренних Дел ЗСФСР по Армении

[Ереван] 17 августа 1935

УГБ

ОРДЕР №4/56

Выдан 17 августа 1935 г.
Действителен суток
Сотруднику УГБ УНКВД ССРА
Мартиросяну Ц.
Поручается произвести обыск и арест гр.
Дерояна Вараздата

Всем органам Советской власти и гражданам СССР надлежит оказывать законное содействие предъявителю ордера, при исполнении возложенных на него поручений.

Нач. УНКВД ЗСФСР по ССРА подпись МУГДУСИ
Секретарь подпись

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 9:*

№ 48

Прокурору по спец – делам
тов. Микаеляну

[Ереван] 17 августа 1935

Просим дать санкцию на арест гр. ДЕРОЯНА Вараздата – соучастника арестованных ГЕВОРКЯНА Артавазда и МУШЕГЯН Р. в деле восстановления подполья партии "Дашнакцутюн" – в Армении, т.е. по обвинению по ст. 67 – 71 УК ССРА.

НАЧ СПО УГБ подпись (ГЕВОРКОВ)
НАЧ 2 ОТД СПО подпись (МАРТИРОСЯН)

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 6:*

№ 49

"УТВЕРЖДАЮ"
НАЧ УНКВД по ССРА
/МУГДУСИ/ подпись
"3" ноября 35 г.

Обвинительное заключение

По следделу № 3828 по обвинению
гр-на ДЕРОЯНА Вараздата Мкртичевича,
в преступлениях, предусмотренных ст.
ст. 67 и 71 УК ССРА

[Ереван] 3 ноября 1935

В 1932 г. 00 б/АрмГПУ был завербован в качестве секретного сутрудника гр-н ДЕРОЯН Вараздат Мкртичевич, во время вербовки ДЕРОЯН дал письменное обязательство, что обязуется сообщить в органы о всех известных ему, а также выявленных к/р личностях и проявлениях.

В СПО УГБ УНКВД Армении поступили данные о том, что МУШЕГЯН Рипсиме, б/ член нелегальной дашорганизации (арестована по делу № 3938) после возвращения из ссылки, в начале 1934 г., два раза виделась с ДЕРОЯНОМ Вараздатом для получения ориентировки о внутреннем и политическом положении страны, а также возможности восстановления дашнакского подполья в

Армении; о том, что ДЕРОЯН имеет явно фашистские взгялды, каковые он высказывает в кругу своих знакомых.

На основе этих данных и ввиду того, что ДЕРОЯН Вараздат обо всем этом в УНКВД ничего не сообщал, 17/VIII с. г. был арестован и привлечен к следствию в качестве обвиняемого по ст. ст. 67 и 71 УК ССРА.

В процессе следствия, показаниями обвиняемых — ДЕРОЯНА Вараздата, МУШЕГЯН Рипсиме (привл. по следделу №3838) и привлеченного к следствию в качестве свидетеля ШАРАМБЯНА Манвела установлено, что ДЕРОЯН, несмотря на то, что сам лично после советизации Армении в нелегальные организации не входил, но все таки пользовался большим доверием среди к/р дашнакских личностей, почему и последние советовались с ним и сообщали о наличии нелегальных дашнакских комитетов. Например, ДЕРОЯНУ было известно, что в 1923 г. в Эривани существует налегальный дашнакский комитет во главе с МЕЦБАЯН Еленой (сослана). В 1925 г. при Амеркоме в Эривани существует дашнакская группа, во главе с МИРЗОЯНОМ Арташесом (умер). В 1926 г. сушествует мощная дашнакская студенческая организация в Госунте Армении во главе с ШАРАМБЯНОМ Манвелом и др. и ДЕРОЯН, будучи, дважды репрессированным после этого, скрыл не только при допросах, но и при самой вербовке (см. д. л. №30, 40, 44, 45).

В начале 1934 г. МУШЕГЯН Рипсиме, с которой ДЕРОЯН познакомился в 1922 г. через Мецбаян Елену, после возвращения из ссылки, в Эривани два раза посетила его — ДЕРОЯНА, где в присутствии фельетониста ТУМАСЯНА Арама (лит. псевданим "Лер Камсар")[30] провоцировала и дискредитировала руководителей партии и правительства. Рассказывала также, что якобы в Тифлисе случился большой инцидент между руководителями Армении и Закрайкома по вопросу госбюджета Армении, подчеркнув при этом, что в руководстве Закавказского правительства и партии есть работники, ведущие явно шовинистическую политику, что Грузия живет за счет других нацреспублик Закавказья. Рассказывала о внутреннем положении СССР, что якобы в России в результате коллективизации крестьяне умирали с голоду и что среди крестьян — большое недовольство соввластью и при малейшем осложнении в международном положении, в СССР начнут-

---

[30] *Լեռ. Կամսար (Թովմասյան Արամ Թովմասի, 1888–1965) – գրող, երգիծաբան: 1915 թ. մասնակցել է Վանի ինքնապաշտպանությանը: Երևանում աշխատակցել է մի շարք պարբերականներին:*

ся крестьянские восстания. Затем она интересовалась и расспрашивала ДЕРОЯНА о настроениях бывшего генерала СИЛИКОВА[31] и бывшего члена дашпарламента ГРИГОРЯНА Миграна и о дашработе в Эривани (см. д. л. №№ 30, 31, 32).

Из показаний ДЕРОЯНА усматривается, что его друг детства Лер Камсар является фашистом, имеет пораженческие настроения, восхищается фашизмом и несколько раз заявлял ему, что "германский фашизм искоренит коммунизм".

ДЕРОЯН дал показание также о том, что ему было хорошо известно, что СИЛИКОВ настроен монархически и что он – СИЛИКОВ неоднократно дискредитировал соввласть, считая ее непрочной и т.д. (см. д. л. №39).

Из показаний ШАРАМБЯНА Манвела усматривается, что ДЕРОЯН разделял взгляды МУШЕГЯН Рипсиме и Лер Камсара и что он как человек с германской ориентацией, считал ГИТЛЕРА весьма умным и способным политическим деятелем, Германию – при объединении с Австрией – непобедимой и т.д. 47

Обвин. ДЕРОЯН признал себя виновным в двурушничестве (см. д. л. №36).

НА ОСНОВАНИИ вышеизложенного:

ДЕРОЯН Вараздат Мкртичевич, 1888 г. рождения, урож. гор. Вана (Турция). В 1912 г. во Франции окончил Сорбонский университет – факультет философии. В том же году слушал в Германии в Лейпцигском университете лекции по философии, усовершенствовался в гор. Вене (Австрия). Совершил путишествия по Италии. Из Германии выехал накануне империалистической войны. В 1914 г. был в Турции. В Закавказье приехал в 1915 г., прожив в городах Баку, Тифлисе и Эривани. В 1918 г. был директором школы "Гаяне" в Тифлисе. При оккупации германскими войсками Грузии в 1918 г., ДЕРОЯН состоял членом общества "Дейч Армениш культур". Заместителем председателя этого общества являлся арестованный ныне 00 Зак. НКВД по обвинению в шпионаже ФУФАЕВ.

В 1919 г. был председателем исполнительного комитета армянских беженцев по Армении. На этой должности остался до советизации Армении. После советизации до 1921 г. служил в Амеркоме в качестве завшколой и переводчика.

---

[31] *Սիլիկով Մովսես Բաբայի (1862–1937) – ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ, 1918 թ. նշանակվել է Հայկական բանակային կորպուսի 1-ին հրաձգային դիվիզիայի հրամանատար, ապա Հայկական դիվիզիայի պետ: 1918 թ. Սարդարապատի հերոսամարտի ղեկավարներից է: 1919 թ. ՀՀ զինվորական մինիստրի օգնական: 1920 թ. գլխավորել է Կարս-Ալիքսանդրապոլ ճակատի հայկական ուժերը:*

Был арестован три раза в 22 году по обвинению в соучастии в терроре над послом Турции Джемал Пашой, был освобожден по недоказанности, в том же году. Был вновь арестован в 1924 г. по обвинению в дашнакской деятельности в Амеркоме г. Эривани, Коллегией б/АрмГПУ был осужден к высылке на 5 лет, но б/ЗакГПУ отменило постановление и освобожден. В третий раз был арестован 5/VIII—31 г. по обвинению в шпионаже, но 25/1—32 г. был освобожден ввиду недоказанности.

ОБВИНЯЕТСЯ: в том, что будучи секретным сотрудником УНКВД Армении, как при вербовке, так и после не сообщал ни разу о том, что ему после советизации было известно о наличии нелегальных дашнакских организаций, что МУШЕГЯН Р. побыв у него на квартире, в присутствии Лер Камсара провоцировала советскую власть,— партию и ее руководство, расспрашивала его о дашнакском подполье и о политических настроениях отдельных личностей, Лер Камсар имел и имеет фашистские и пораженческие настроения; бывш. генерал СИЛИКОВ имеет монархическое настроение и дискредитировал соввласть, и что ДЕРОЯН не только не сообщал обо всем этом, а наоборот, сам разделял их взгляды, высказывая фашистские настроения, то есть в преступлениях, предусмотренных ст. ст. 67 и 71 УК ССРА.

Следствие по настоящему делу считать законченным и на основании ст. 200 УПК, дело через Прокурора по спецделам направить на слушание Особого Совещания НКВД СССР.

Составлено 2-го ноября 35 г. г. Эривань

УПОЛ 2 ОТД СПО подпись /ИСРАЕЛЯН/
"ПРИСОЕДИНЯЮСЬ:" /НАЧ 2 ОТД/ подпись /МАРТИРОСЯН/
"СОГЛАСЕН": ЗАМ НАЧ ЧПО УГБ подпись /КОСТИКЯН/

СПРАВКА: По делу вещдоказательств не имеется.
Дероян арестован 17/VIII—35 г. и содержится при комендатуре УГБ УНКВД.
До делу допрошены: МУШЕГЯН Р. и ШАРАМБЯН Манвел..

УПОЛ 2 ОТД СПО подпись /ИСРАЕЛЯН/

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 55–57:*

№ 50

"УТВЕРЖДАЮ"
НКВД З.С.Ф.С.Р.
(ГОГЛИДЗЕ)[32] подпись
23 ноября 1935

Постановление.

1935 г. Ноября "22" дня, г. Тифлис.

Я, Опер. Уполномоч. 11-го Отд. СПО УГБ НКВД ЗСФСР, Саркисов, рассмотрев сего числа поступившее из УНКВД ССР Армении след. дело за №3828 по обвинению гр-на ДЕРОЯНА Варазда та Мкртычевича в преступлении предусмотренном ст 71. УК ССР Ар.

НАШЕЛ

что произведенным расследованием предъявленное ДЕРОЯНУ Варазда ту обвинение в двурушничестве доказано и нормы УПК соблюдены. На основании этого и принимая во внимание целесообразность рассмотрения этого дела во внесудебном порядке,

ПОСТАНОВИЛ:

Согласиться с обвинительным заключением УНКВД ССР Армении по следственному делу № 3828 и дело переслать через УСО УГБ НКВД ЗСФСР на слушание Особого Совещания при НКВД СССР.

Согласие Прокурора на пересылку след. дела имеется в деле

ОПЕР УПОЛНОМОЧ 11 ОТД СПО УГБ подпись (САРКИСОВ)
НАЧ 11 ОТД СПО УГБ подпись (ДАВИДОВ)
"СОГЛАСЕН" ЗАМ НАЧ СПО УГБ подпись (КОБУЛОВ)[33]

АЦ/5экз.

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 58*

[32] *Գոգլիձե Սերգեյ Արսենտիի (1901–1953) – պետական անվտանգության գնդապետ, ԱՍՖԽՀ-ի ներքին գործերի ժողկոմ, Վրաստանի ԽՍՀ ՆԳԺԿ-ի վարչության պետ (1934–1937):*

[33] *Կոբուլով Հմայակ Զաքարի (1906–1955) – պետական անվտանգության ծառայության գնդապետ, գեներալ-լեյտենանտ, ԱՍՖԽՀ պետքաղվարչության բաժանմունքի պետ (1934).*

№ 51

СССР
Народный комиссариат
Внутренних дел
З.С.Ф.С.Р.

Ս.Խ.Հ.Մ.
Ա.Ս.Ֆ.Խ.Հ.
Ներքին գործերի
ժողովրդական Կոմիսարիատ

2 декабря 1935
Сов. Секретно
В. Срочно

В УСО ГУГБ НКВД СССР – город МОСКВА.–
копия: прокурору по спец. делам ЗСФСР – Здесь.–

УСО УГБ НКВД ЗСФСР при этом препровождает след. дело за № 3828 по обвин. ДЕРОЯНА Варазда та Мкртичевича по 67 и 71 ст. УК ССРАрмении – на рассмотрение Особого Совещания при НКВД СССР.–

Обв. ДЕРОЯН В. М. содержится под стражей и с сего числа перечислен за Вами.–

Решение по делу просим сообщить.–

ПРИЛОЖЕНИЕ: Дело (и пакет с меморандумом и фотокарточ.)

1935 1/XII НАЧ УСО УГБ НКВД ЗСФСР подпись (ПОЗОЕВ)
СТ ИНСПЕКТОР подпись (ЦИНАМЗГВАРОВ)

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 60*

№ 52

Պետհրատի վարչության նախագահ ընկ. Չոփուրյանին

[Երևան, 1930–1935]

Դասագրքերի տպագրության կամպանիան իր ամենածավալուն չրջանի մեջ առաջ է բերել մի չարչ թյուրիմացություններ, որոնք, ինքնին անարժեք և անհիմն, ուշադրության արժանի չէին լինի եր-բեք, եթե միայն իրենց բացասական ազդեցությունն զգացնել չտա-

յին հենց առաջին րոպեից իսկ. մինչդեռ այդպիսի թյուրիմացության թե՛ ենթակա եղողները և թե առաջ բերողները մտահոգված են աշխարհի բոլոր բարի տրամադրություններով և ցանկություններով, գոնե այդպես ասվում է, և գոնե հակառակն ապացուցված չէ դեռևս: Ըստ որում, բարի տրամադրություն են ցուցաբերում նաև ինքնապաշտպանության բնազդով օժտված բոլոր արարածներն իսկ, ցանկալով ապացուցել թե իրենց անցյալ սխալները գրավական չեն ապագա սխալների: Համաձայն եմ. բայց այդ ապագան երաշխավորելու մտահոգությունն ահա մի կատարյալ չարիք է դառնում ներկայի համար: Ոչինչ չանել այն ժամանակ, երբ պետք էր աշխատել և «սկսել աշխատել» այն ժամանակ, երբ այլևս աննելիք չունեն, ինքնին ապացույց է թե խնդիրն ինչպիսի որակի մասին է: Բացի այդ, ոչինչ չանելու, ուրեմն նաև սխալ չանելու նպաստավոր զրահներով հրապարակ գալ և ուզենալ մի բան անել օգնելու համար — բավական անառիկ դիրք է ըստ երևույթին: Սակայն մի փոքրիկ վերլուծություն այդ վերջին ակտիվության ցույց է տալիս, որ ոչինչ չանելը, ոչինչ անել չկարողանալու պարզ հետևանքն է, իսկ վրեժխնդրության ակտիվությունը մի գործ լինելով համենայն դեպս, ցույց տվեց առաջին ենթադրության ճշտությունը մեկ կողմից և մյուս կողմից էլ,— խոսենք մեր տեխնիկայի լեզվով— գվարճալի մի արձան կանգնեցրեց վրիպակների մեջ վրիպակ տալով: Այս պայծառ ճշմարտությունը եզրակացության համար մտածել կտար միայն եզրակացություն անելու անընդունակ մարդկանց:

Բայց անհրաժեշտ է պատվով դլուխ բերել դասագրքերի տպագրության կամպանիան: Դրա համար ես այժմ հարմար ժամանակ չեմ համարում ոչ ուսումնասիրություններ անելու, ոչ էլ վիճաբանություններ: Այլ առաջարկում եմ մի քանի կոնկրետ միջոցներ.

1. Ճշտել բոլոր աշխատակիցների պարտականության և պատասխանատվության բաժինը, որպեսզի հնարավոր լինի թերությունների և հանցանքների հասցեն չչփոթել:

2. Շտուրմի խուճապային բնույթը փոխել և նորմալ աշխատանքի ինտենսիվությունը բարձրացնել պարտականությունների և պատասխանատվության ճիշտ և որոշ բաշխումով:

3. Աշխատանքի պայմանները դարձնել կամպանիայի համար բարենպաստ, չեզոքացնելով անդրագետ միջամտություններ:

4. Օգնել սրբագրական գործին ոչ թե սպառնալիքներով և անտեղի ծանրաբեռնումով, այլ այն սահմանների մեջ, որ ամեն դեպքում կարիք լինի:

5. Աշխատավարձի վճարման նոր կարգ մեթոդները փոխել արմատապես:

6. Ստաբիլ դասագրքերն արժանի են կոնտրոլ սրբագրության:

Ի վերջո, մի խոսք էլ մի այլ տեսակի թյուրիմացության մասին: Խորհրդային իշխանության օրով հրատարակված դասագրքերի սերիան բոլորի աչքի առջևն է. ովքեր որ հասկանում են դասագրքերը ոչ թե վարչականորեն, այլ մանկավարժորեն, նրանք չեն կարող առանց իրենց տրամաբանությունը չարդելու՝ չխոստովանել, թե ոչ մի տարի դասագրքերի որակի, լեզվի և տեխնիկայի վրա այնքան ուշադրություն և խնամք թափված չի եղել, որքան այս տարի: Եվ եթե կան դեռևս շատ թերություններ, ապա այդ նրանից է, որ այդ ուղղությամբ մենք առաջին փորձն է միայն, որ կատարում ենք այս տարի, և թե այդ փորձի կրկնությունն ամենայն հավանականությամբ ևս ավելի սլիտի մոտեցնի արտադրանքը մեր անընդհատ աճող պահանջներին բավարարելու մակարդակին: Բայց այստեղ բավական հեռավոր ապագայի խնդիր կա. մեծ ուրախությամբ ես կուզեի իմ համեստ ուժերը տրամադրել՝ ուսումնասիրելու և ծրագրելու, թե ինչպես կազմակերպել ստաբիլ դասագրքերի արտադրության գործը հետագայում, թեկուզ եկող տարվա համար: Իսկ նորկա կամպանիայի համար, ես վերոհիշյալ օպերատիվ ձեռնարկումներից բացի, ուրիշ որևէ միջոց չեմ էլ երևակայում, և կարծում եմ, որ դուք ինձանից ավելի լավ կհասկանաք, թե ինչքան գործնական արժեք ունեն դրանք:

[Վարազդատ Տերոյան]

Բնագիր: Ձեռագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 53

НАЧ УСО УГБ НКВД ЗСФСР – гор. Тифлис.

Копия:

ГУГБ
Учетно-статистическ. Отдел
14 января 1936 12/3828/Л

Препровождается для исполнения и объявления выписка из постановления Особого Совещания при НКВД СССР от "4" января 1936 г. по делу №3828 гр. ДЕРОЯН Вараздат Мкртычевича, которого надлежит направить с первым отходящим этапом в гор. Мариинск, в распоряжение НАЧ. РАСПРЕД. ОТД-НИЯ СИБЛАГа НКВД.

Дату направления подтвердите к 15/II–36 г.

ПРИЛОЖЕНИЕ: выписка.

Начальник УСО ГУГБ НКВД СССР:
Нач 1 Отд-ния УСО:

Выписка из протокола

Особого Совещания при Народном Комиссаре Внутренних Дел СССР
от "4" января 1936 г.

СЛУШАЛИ	ПОСТАНОВИЛИ
По № 3828/ЗАК о ДЕРОЯН Вараздат Мкртычевиче, 1887 г. р. дашнак	ДЕРОЯН Вараздат Мкртычевича – за к/р провокационную деятельность – заключить в исправтрудлагерь, сроком на ТРИ года, считая срок с 17/8–35 г. Дело сдать в архив.

печать Народный Камиссариат Внутренних Дел СССР

Отв. Секретарь Особого Совещания подпись

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 59, 61

№ 54

СССР
Народный Комиссариат Внутренних дел
УПРАВЛЕНИЕ ИТЛ
и МЗ УНКВД
по Новосибирской обл.
Учетно-распределительный
отдел
№ 37/220710
235958

При ответе обязательно ссылаться на №№--------- и дату---------
В учетный стол – 8 отд ГУГБ НКВД СССР суда. **Город Москва**
Копия: в ОМЗ УНКВД обл. Московской обл. гор. Москва

Новосибирск, 1 апреля 1938

Извещение

Фамилия, имя и отчество – Дероян Вараздат Мкртычевич. Год рождения – 1888, Наименование осудившего органа – Ос. Сов. НКВД СССР
Когда – 4.1.36, по какой статье – УК КРПД, на срок 3
Убыл – Умер 6.2.38. в Орлово. Розовск. отд.

Пом. нач. УРО подпись Нач. 2-го отд. УРО

Բլանկ: Մեքենագիր: Բնագիր: Ջեռագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1931, թ. 62:*

№ 55

Москва центр Пушкинская 15-а
Прокуратура Союза Советских социалистических Республик Генеральному Прокурору Союза ССР Товарищу Руденко Р. Н.

Ереван, 17 ноября 1954

От Дероян Нуник Вараздатовны
(Арм.ССР, г. Ереван,
ул. Свердлова дом №107).

З а я в л е н и е

В августе месяце 1935 года органами НВД АРМ.ССР был арестован мой отец Тероян (Дероян) Вараздат Мкртычевич, а в

следующем году сослан в Мариинск. До 1937 года мы от него получали письма, а затем наша связь с ним прекратилась. Нам официально не известно, что с ним стало.

Отец мой учился в Париже, а затем в Берлине, окончив курс с ученой степенью доктора философии. Последние годы в г. Ереване состоял внештатным работником Института Марксизма-Ленинизма, а в 1935 году был приглашен в Ереванский Государственный Университет лектором немецкого языка. Одновременно ему поручались ответственные переводы с немецкого и французского языков на армянский, по преимуществу по философии.

Нам неизвестно, за что арестован наш отец, знаем лишь, что никакого суда над ним не было, по крайней мере дело его не рассматривалось в судебных органах Армении. И поэтому, нам, его детям, очень важно знать: жив ли наш отец, в чем его вина, за что он был осужден и был ли он политическим преступником, как до сих пор клеймили его имя.

В виду изложенного, вся наша семья просит Вас сделать распоряжение о детальной проверке дела моего отца, и если он невиновен то реабилитировать его (по всей вероятности, уже посмертно). Это послужит для нас большой моральной поддержкой и устранит дальнейшие препятствия в нашей жизни.

подпись /Н. ДЕРОЯН/

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 66–67:*

№ 56

ПРОКУРАТУРА
Союза Советских
Социалистических Республик
№ 1311 — 43991 — 54
Москва-центр, Пушкинская, 15-а.

Гр. Дероян Нуник Вараздатовне
гор. Ереван, ул. Свердлова, д. 107

19 января 1955

Сообщаю, что Ваша жалоба Прокуратурой Союза ССР направлена в прокуратуру Армянской ССР.

Результаты проверки будут сообщены прокуратурой республики.

ПРОКУРОР ОТДЕЛА ПО СПЕЦДЕЛАМ
СОВЕТНИК ЮСТИЦИИ подпись

Բնագիր: Մեքենագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 57

[Из обзорной справки]

Ереван, 20 апреля 1955

... Помимо этого к делу приложено в отдельном пакете предписание бывш. Руководящих работников НКВД ЗСФСР ГОГЛИДЗЕ и КОБУЛОВА в адрес НКВД АрмССР о необходимости дискредитации ДЕРОЯНА Вараздата материалами следствия и высылки им этих материалов.

Справку составил:
ПОМ. ВОЕННОГО ПРОКУРОРА ЗАК ВО ПО ДЕЛАМ
СПЕЦПОДСУДНОСТИ ПОДПОЛКОВНИК ЮСТИЦИИ
ПОДПИСЬ Д Ж А Н Г И Р О В

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 72:*

№ 58

[Из протокола допроса свидетеля Товмасяна Арама Томасовича (Леркамсара)]

Ереван, 9 июля 1955

...Дерояна Вараздата я знал с детских лет и по совместной учебе в Эчмиадзинской духовной академии. За все время моего

знакомства с ним я знал его как хорошего философа и человека владеющего несколькими иностранными языками. Он был беспартийным, сугубым ученым и политикой не занимался, а всего себя уделял научной работе, педагогической работе и переводям различных иностранных трудов...

ПОДПИСЬ ТОВМАСЯН

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 80:*

№ 59

[Из протокола допроса свидетеля Чубаряна Григорий Амбарцумовича]

Ереван, 22 июля 1955

...Дерояна Вараздата Мкртычевича я знал еще до советизации Армении, как видного педагогического деятеля, при чем он отличался не столько как педагог, а как администратор. Лично с Дерояном Вараздатом я не был знаком и не общался с ним. Однако, я его знал по его служебной деятельности в так называемом "Амеркоме"... школьным отделом заведывал Дероян Вараздат... он всецело был поглащен своей педагогической работой и административной деятельностью в Амеркоме. ...Не мыслимо, чтобы Мушегян Рипсиме осмелилась бы обратится к Дерояну Вараздату с вопросами о восстановлении дашнакского подполья, ибо столь серьезный и умный человек, как Дероян, не стал бы связываться с этой пустушкой Мушегян...

ПОДПИСЬ Г А. ЧУБЛРЯН

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 82–85:*

№ 60

[Из протокола допроса свидетеля Мелик-Оганджаняна Карапета Агабеговича]

Ереван, июль 1955

...Дерояна Вараздата я знал с 1921 года по его работе в Аморкоме. ...где в то время работало много педагогов, врачей и других специалистов из местных... Он отличался хорошими административными способностями, был строг... Сейчас в Ереване есть много ученых и видных деятелей, которые в свое время учились у Дерояна... Помимо этого Дероян был философом и литературоведом, блестящим знатоком Гегеля и Канта. Дероян в совершенстве владел немецким и французским языками, занимался переводами ценнейших иностранных произведений — Канта, Гегеля и др., принимал участие в составлении философского русско-армянского словаря. В последние годы он большую часть времени сидел дома и занимался научной работой... Я слышал, что эта Рипсиме Мушегян вернувшись из ссылки, посетила Дерояна Вараздата. Цель ее посещения мне не известна, но по всей вероятности она посетила Дерояна просто, как старого знакомого и своего педагога. Я слышал, что Дероян Вараздат относился к ней с неприязнью, называя ее "пустышкой", "глупой" и "болтушкой". Я не допускаю мысли, чтобы Дероян Вараздат, будучи столь умным и серьезным человеком, вступил бы с этой Мушегян Рипсиме в какие либо серьезные разговоры при его мнении о ней и своем отношении к ней.

подпись К. МЕЛИК — ОГАНДЖАНЯН

Բնագիր: Ձեռագիր: *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1951, թ. 86–90:*

№ 61

Прокуратура СССР
ВОЕННЫЙ ПРОКУРОР
Войсковой части
– 19295 –
№2434

2 декабря 1955

Гражданке ДЕРОЯН Нуник Вараздатовне
город Ереван, улица Свердлова дом 107.

Сообщаю, что по Вашей жалобе в адрес Комитета Государственной Безопасности при СМ АрмССР от 17 ноября 1954 года по делу Вашего отца ДЕРОЯНА Вараздата Мкртичевича нами произведена проверка, которая закончено 30 ноября 1955 г. и дело направлено в Военную Прокуратуру Закавказского Военного Округа для окончательного разрешения.

О результатах сообщу дополнительно.

СТАРШИЙ ПОМ. ВОЕННОГО ПРОКУРОРА ЗАК ВО
ПО ДЕЛАМ СПЕЦИАЛЬНОЙ ПОДСУДНОСТИ
ПОДПОЛКОВНИК ЮСТИЦИИ
А Л Е К С А Н Я Н

Բնագիր: Մեքենագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 62

ВЕРХОВНЫЙ СУД
Армянский ССР

Эрменистан ССР
АЛИ Мэhкэмэси

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

№ 5/51 – 56
Ереван, 17 февраля 1956

Справка

Дана настоящая справка гр-ке Дероян Нуник в том, что определением Судебной Коллегии по уголовным делам Верховного Суда Арм.ССР от 15-го февраля 1956 г., постановление Особого совещания при НКВД СССР от 4-января 1936 года в отношении

ее отца ДЕРОЯНА ВАРАЗДАТА МКРТЫЧЕВИЧА отменено и дело за недоказанностью предъявленного ему обвинения прекращено.

ЗАМ ПРЕДСЕДАТЕЛЯ
ВЕРХСУДА АРМ ССР подпись /АРАКЕЛЯН/

Բնագիր: Մեքենագիր: *Դերոյանների ընտանեկան արխիվ*

№ 63

Определение

Ереван, 17 февраля 1956

Судебная Коллегия по уголовным делам Верховного Суда Армянской ССР — в составе:

Председательствующего — Л. Аракеляна
Членов: 1. — С. Мхитарян
2. — А. Ханамиряна

При участии прокурора — Ю. Гукасова

Рассмотрела в заседании от 15-го февраля 1955 г. протест Военного Прокурора ЗАКВО, на постановление Особого Совещания при НКВД СССР от 4-го января 1936 г., которым Дероян Вараздат Мкртычевич, за к/р провокационную деятельность заключен в ИТЛ сроком на 3 года.

Дероян Вараздат Мкртычевич — 1888 г. рождения, уроженец гор. Ван-Турция, из семьи кустаря, с высшим философским образованием, окончил философский факультет Сорбонского Университета во Франции, учился также в Лейпцигском Университете в Германии, беспартийный, армянин, гражданин СССР, до ареста переводчик иностранной философской литературы на армянский язык, проживал в гор. Ереване, по ул. Свердлова дом №107, при отбывании наказания в лагерях 6/II — 1938 умер.

Протест внесен на предмет отмены постановления Особого Совещания и прекращения дела.

Заслушав доклад члена Верховного Суда Арм.ССР Мхитарян и заключение прокурора Гукасова — Судебная Коллегия по уголовным делам Верховного Суда Арм.ССР —

УСТАНОВИЛА

Из материалов дела усматривается, что Дероян урож. Ван — Турции, среднее образование получил там т.е. [же], в 1905 г. приехал в Эчмиадзин и до 1908 г. учился в Эчмиадзинской Академии, после чего был исключен из академии за участие в студенческих волнениях и выехал на проживание в г. г. Тбилиси, Баку, но в том же в 1908 г. вернулся в Ван и работал в школах педагогом. В 1909 г. выехал в Париж и поступил в Сорбонский университет и в 1912 г. окончил философский факультет и для усовершенствования выехал в Германию и поступил в Лейпцигский университет, в 1913 г. поехал в Австрию и в Вене также слушал лекции по философии, затем совершил поездку по Италии и в 1914 г. вернулся в Ван, а в 1915 г. с армянами беженцами приехал в Тбилиси и до 1919 г. проживал в гор. Тбилиси, Баку, Ереване, учительствовал и был директором Тифлисской женской школы "Гаянэ". После установления Советской власти в Армении служил в "Америкоме" в качестве заведующего школой и переводчика.

За время нахождения Дероян в Армении он трижды был арестован органами бывшего ГПУ и каждый раз был освобожден за недоказанностью вины.

Так, в 1922 г. был арестован по обвинению в соучастии в терроре над послом Турции Джемал-Пашой, но за недоказанностью был освобожден.

В 1924 г. был арестован по обвинению в дашнакской деятельности в "Америкоме" и Коллегией Арм.ГПУ был осужден к высылке на 5 лет, но Коллегией ЗАКГПУ это постановление было отменено и Дероян был освобожден.

В 1931 г. вновь был арестован по обвинению в шпионаже, но был освобожден ввиду недоказанности вины.

После освобождения из под стражи в 1932 г. Дероян был завербован органами Арм.ГПУ как секретный сотрудник.

17-го августа 1935 г. Дероян вновь был арестован и ему было инкриминировано обвинение в том, что будучи секретным сотрудником Арм.ГПУ, органам НКВД не сообщал об известных ему дашнакских организациях в Армении, не сообщал также, что вернувшаяся из ссылки дашначка Мушегян Рипсик посетила его квартиру, и в присутствии фельетониста Товмасяна Арама (псевдоним "Леркамсар"), провоцировала Советскую власть, партию и ее руководство, а Леркамсар проявлял фашистские и пораженческие настроения, не сообщил также о монархических настроениях своего близкого знакомого бывшего генерала Силикова.

Тот пункт обвинения, что Дероян зная о наличии дашнакской организации, не сообщил об этом соответствующим органам, опровергается тем, что за это он в свое время был арестован, но был освобожден за недоказанностью.

Пункт обвинения, что Дероян не сообщил следственным органам о посещении его квартиры дашначкой Мушегян Рипсимэ и о ее а/с высказываниях, опровергается показаниями свидетеля Товмасяна о том, что никаких а/с разговоров при посещении Мушегян квартиры Дероян не происходили, она не считала Дерояна дашнаком и не пыталась говорить с ним по вопросам дашнакской деятельности, тоже самое усматривается и из обзорной справки по делу Мушегян Рипсимэ (дело лист 5-ый материалы дополнительной проверки). Свидетели Чубарян Григорий и Мелик–Оганджанян Карапет также подтвердили, что Дероян никакой дашнакской деятельности не проявлял.

Тот пункт обвинения, что Дерояну известно было о монархистских настроениях бывшего генерала Силикова, но об этом он не донес, это как обвинение нельзя вменить в вину Дерояна т.к. этот генерал был на учете органов НКВД и по материалам дела никакой а/с деятельности не проявлял.

Таким образом Дероян был осужден по необоснованным материалам.

На основании вышеизложенного и руководствуясь ст. 395 УПК Арм.ССР судебная Коллегия по уголовным делам Верховного Суда Арм.ССР, соглашаясь с протестом –

ОПРЕДЕЛИЛА

Постановление Особого Совещания при НКВД СССР от 4/1 – 1936 года отменить и дело в отношении Дерояна Вараздата Мкртычевича прекратить за отсутствием состава преступления.

Председательствующий – Л. АРАКЕЛЯН
Ч л е н ы: 1. А. Ханамирян
2. С. Мхитарян

Отпеч. 6-экз.
4-адрес.
1 в дело
1 в ...
исп. Мхитарян 17/II – 56 г.

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 158, թ. 16, 17:*

№ 64

ՍՍՌՄ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ПРОКУРАТУРА
СССР
ПРОКУРАТУРА
АРМЯНСКОЙ ССР

№7/ов – 288 *13 մարտի 1956*
ՔԱՂ. ՆՈՒՆՆԻԿ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԴԵՐՈՅԱՆԻՆ
(Երևան, Սվերդլովի նր. 107)

Հայտնում ենք, որ Հայկ. ԽՍՌ Գերագույն Դատարանի Քր. Գործերով Դատական Կոլլեգիայի 1956 թ. փետրվարի 15-ի որոշմամբ, Ձեր հոր՝ Վարազդատ Մկրտչի Դերոյանի նկատմամբ եղած 1936 թ. քր գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:

ՀՍՍՌ Դատախազի օգնական
հատուկ գործերով
տորագրություն /Օհանջանյան/

12/3–56 թ. ՌԹ.

Բնագիր: Մեքենագիր: *Դերոյաննների ընտանեկան արխիվ*

№ 65

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ
ԿԻՑ
ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵ

АРМЯНСКАЯ ССР
КОМИТЕТ
ГОСУДАРСТВЕННОЙ
БЕЗОПАСНОСТИ
ПРИ
СОВЕТЕ МИНИСТРОВ
АРМЯНСКОЙ ССР
УЧЕТНО-АРХИВНЫЙ ОТДЕЛ

№ 2751

№ 13/3698
Ереван, 29 мая 1956
Совершенно секретно

Начальнику учетно архивного отдела КГБ
ПРИ СМ СОЮЗА ССР – полковнику
Тов. ПЛЕТНЕВУ Я. А.

Возвращаем архивного-следственное дело №235958 на ДЕРОЯНА Вараздата Мкртычевича с определением Судебной Коллегии по уголовным делам Верховного Суда Арм.ССР от 15/II – 56 г. об отмене постановления Особого Совещания при НКВД СССР от 4/1 – 36 г. и прекращении дела за отсутствием состава преступления.

ПРИЛОЖЕНИЕ: следдело 235958.

НАЧАЛЬНИК УЧЕТНО АРХИВНОГО ОТДЕЛА КГБ
ПРИ СМ АРМ ССР – подполковник подпись /МУРАТОВ/
НАЧАЛЬНИК 1 ОТД Я УАО КГБ ПРИ СМ
АРМЯНСКОЙ ССР – капитан подпись /КНЯЗЧЯН/

Բնագիր: Մեքենագիր: *ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 158, թ. 101.*

Ծանոթագրություններ

էջ 85

* *Նկատի ունի Հայաստանի Առաջին Հանրապետությունը:*

էջ 109

* *Նկատի ունի Հայաստանի Առաջին հանրապետությունը:*

էջ 331

* *Այդ պատգամավորը Միքայել Պապաջանյանն էր.– տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Պատ. խմբագիր Ա. Վիրաբյան. Ե., 2004, էջ 124:*

էջ 332

* *Կոմիտեի լրիվ անվանումն է՝* Комитет Ее Императорского Высочества Великой княжны Татьяны Николаевны.

էջ 336

* *Ամենայն Հայոց կաթողիկոսը (1911–1930 թթ.) – Գևորգ Ե Սուրենյանցն է:*

էջ 338

* *Արևմտահայերի 1-ին համագումարը տեղի է ունեցել Երևանում 1917 թ. մայիսի 2–11-ին: Քննարկվել են գաղթականության օգնելու, հայրենադարձության, որբերի, հայության արևմտահայ և արևելահայ հատվածների համագործակցության հարցեր:*

էջ 345

* *Արևմտահայ գործադիր մարմին:*

էջ 346

* *Ամենայն Հայոց Վեհ. կաթողիկոսը – Գևորգ Ե Սուրենյանցն է:*

** *Կնքվել է Բաթումում 1918 թ. հունիսի 4-ին օսմանյան թուրքիայի և ՀՀ կառավարության միջև: Պայմանագրով սահմանափակվել են Հայաստանի տարածքը, զինուժը և այլն:*

էջ 347

* *1919 թ. փետրվարից մինչև հունիս խնամատարության մինիստրը Սահակ Թորոսյանն էր:*

** *Ելմտից կամ Ֆինանսների մինիստրի պաշտոնակատարը Գրիգոր Ջաղեթյանն էր:*

էջ 350

* *Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտե՝ Ամերիկոմ – ՄԱՕԿ (*American Committee for Relief in the Near East*), ամերիկյան բարեգործական հաստատություն: Ստեղծվել է 1918 թ. Հայկական և*

Սիրիական նպաստամատույց կոմիտեների (1915 թ.) միավորմամբ՝ Մերձավոր Արևելքի երկրների պատերազմից տուժած հայ, հույն, ասորի բնակչությանն օգնելու համար: Հայաստանում և Անդրկովկասում գործել է 1919 թ. մայիսից: Ունեցել է 75 որբանոց, 20 հազար որբերով: Գործել է մինչև 1931 թ.:

էջ 367

** Արտակարգ հանձնաժողովն ունեցել է բացառիկ լիազորություններ, անգամ մահապատժի իրավունք: Կոչված է եղել «պայքարելու» հակահեղափոխության և սաբոտաժի դեմ: 1922 թ. փետրվարի 6-ից դադարել է ՆԳ ժողովրդական կոմիսարիատին կից վերանվանվելով պետական քաղաքական վարչություն:*

էջ 382

** «Հանդես Ամսօրեայ», հայագիտական հանդես: Վիեննայի Մխիթարյան միաբանության պաշտոնական հրատարակություն: Լույս է տեսնում 1887 թվականից Վիեննայում:*

*** Հայաստանի օգնության կոմիտե՝ ՀՕԿ, հիմնադրվել է 1921 թ.: Նրա խնդիրն էր օգնել Հայաստանի սովյալ բնակչությանը, օժանդակել երկրի շինարարությանը: ՀՕԿ-ն ուներ մասնաճյուղեր ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես է աշխարհի հայաշատ քաղաքներում: 1922–1938 թթ. կազմակերպվել է 60 հազար հայերի ներգաղթը Հայաստան: Լուծարվել է 1937 թ.:*

**** Հայ օգնության միություն (ՀՕՄ), Հայ կանանց բարեգործական միություն: Հիմնադրվել է 1910 թ. Բոստոնում: Մինչև 1919 թ. կոչվել է Կարմիր խաչ, ապա Հայաստանի Կարմիր խաչ, իսկ 1946-ից ՀՕՄ: 1915-ից օգնել է Եղեռնից փրկված հայրենակիցներին, որբերին: Օժանդակել է 1924–1925 թթ. Թուրքիայից, Հունաստանից ու Իրաքից 10 հազ. հայ գաղթականների տեղափոխությանը Սովետական Հայաստան: 1928-ից հիմնել է հայկական դպրոցներ, նշանակել կրթաթոշակներ:*

էջ 384

** Սույն աշխատությունը մնացել է անտիպ և գտնվում է Դերոյանների ընտանեկան արխիվում: Նախատեսվում է ապագայում տպագրել:*

ВАРАЗДАТ ТЕРОЯН

НАУЧНЫЕ И ПУБЛИЦИСТИЧЕСКИЕ ТРУДЫ

Резюме

Имя ученого, общественного деятеля, интеллектуала Вараздата Мкртычевича Терояна (Дерояна, 1887 – 1938) осталось малоизвестно нынешней общественности.

Вступив в начале XX века на научно-общественное поприще, он в течение своей недолгой жизни занимался многочисленными и разносторонними проблемами, был активным общественным деятелем.

В наследии В. Терояна остался ряд заслуживающих внимания ценных исследований, посвященных сложным вопросам истории, философии и литературы. Им переведены важнейшие труды классиков философии, с подлинников.

Вараздат Тероян родился в 1887 г. в городе Ване (Западная Армения). Он был младшим братом деятелей армянского национально-освободительного движения, членов партии "Дашнакцутюн" Вазгена (Тиграна) и Жени (Заруи) Тероянов. После получения начального образования на родине, он поступает в Сорбоннский университет в Париже и в 1912 г. оканчивает его. Далее Тероян становится слушателем философских факультетов в некоторых университетах Германии и Австрии. По окончании университета он защищает диссертацию на тему "La biologie d'A. Comte". В Берлине им была завершена докторская диссертация на тему "Die Soziologischen Grundlagen der Erkenntnis". Однако из-за начавшейся Первой мировой войны диссертация не была защищена.

В конце лета 1914 г. он возвращается в г. Ван.

Младотурецкое правительство, воспользовавшись началом Первой мировой войны, осуществило Геноцид западных армян. В 1914 г. и особенно в 1915 году начались массовая резня и насильственное переселение западных армян. В некоторых местностях армяне прибегают к вооруженному сопротивлению. Первыми начали героическую самооборону против погромщиков армянское население г. Вана, в которой принимал участие также В. Тероян. Продвижение русской Кавказской армии, в составе которой были армянские добровольческие дружины, спасает ар-

мян города от окончательного уничтожения. По приказу русского командования 7 мая 1915 г. известный государственный и политический деятель Арам Манукян назначается временным управляющим-губернатором г. Вана и окрестных губерний. В. Тероян также включается в руководящие органы губернии.

Однако 5 июля 1915 г. российское войско внезапно начинает отступление. Вместе с ним вынужденно уходит и армянское, айсорское и езидское население Ван-Васпуракана. В. Тероян с группой беженцев переезжает в Тифлис, а далее в Баку.

С 10-го по 13-е мая 1916 г. он участвует на Первом армянском съезде, состоявшемся в Петрограде.

9 января 1919 г. в Ереване на представительном собрании армянских беженцев В. Тероян избирается в состав подготовительного комитета Второго съезда западных армян, а затем председателем исполнительного комитета.

В 1919 г. В. Тероян поступает на службу в Американский комитет помощи Ближнему Востоку (Амерком), где в его ведомство переходят учебные учреждения, приюты, больницы.

После установления советской власти в Армении 2 декабря 1920 г. Ревкомом Армении В. Тероян назначается полномочным представителем в Амеркоме, а в 1922 г. – попечителем учебных учреждений.

В годы советской власти В. Тероян был необоснованно арестован четырежды – в 1922, 1924, 1931 и в 1935 гг. В 1936 г. Особое совещание при НКВД СССР приговаривает В. Терояна к трем годам заключения в исправительно-трудовом лагере в Сибири. По официальному извещению Ваздат Тероян скончался 6 февраля 1938 г. в возрасте 51 года в концентрационном лагере в г. Мариинске.

Решением от 16 марта 1956 г. Судебная коллегия уголовных дел Верховного суда АрмССР денонсирует судебное решение и за неимением состава преступления оправдывает В. Терояна посмертно.

Из оставшегося богатого наследия В. Терояна особо можно отметить статьи – "Теория эволюции Бергсона", "Пангерманизм и историческая философия", "Социализм и социализм" и т.д. Он перевел классиков философии – "Критика чистого разума", "Критика практического разума" Иммануила Канта, "О методе обсуждения" Рене Декарта, "Этика" Спинозы, "Философия искусства" Ипполита Тена, и т.д. Он также переводил и художественные произведения – "Красная лилия" Анатоля Франса, "Огонь" Анри Барбюса и т.д.

В настоящем сборнике представлена научная и общественная деятельность Вараздата Терояна. Впервые публикуются неизданные научные статьи ученого, его выступления на съездах беженцев западных армян. Приводятся материалы о его деятельности в области учреждения школ, создании философского общества, философских словарей на армяно-иностранных языках.

Впервые мы попытались представить общественности жизнь и деятельность патриота, интеллектуала-ученого, имея целью ознакомить общественность с его научным наследием. Это особенно необходимо профессионалам-историкам, и философам.

В приложении книги приведены документы, примечания, указатели имен и географических названий. Основная часть документов до сих пор не издана, она предоставлена семьей Дероянов, сотрудниками Национального архива Армении и архива Национальной безопасности при правительстве РА.

VARAZDAT TEROYAN

SCIENTIFIC AND PUBLICISTIC STUDIES

Summary

The name of Varazdat Mekertich Teroyan (Deroyan, 1887-1938) – an intellectual, scholar and public figure of great merit – has remained almost unknown to the present community.

He came into the field of science and public work in the beginning of the 20th century and devoted himself to a number of various problems during his short life.

V. Teroyan left numerous valuable studies on the difficult problems of philosophy and literature. He translated major works of classical philosophers from the original. He was occupied with scientific-organizational work, as well.

V. Teroyan was born in the city of Van (Western Armenia) 1887/8. He was the younger brother of Vazgen (Tigran) and Zhenia (Zaruhi) Teroyans – national liberation movement figures, members of Dashnaktsutyun party.

After finishing primary school in Van, V. Teroyan went to Paris and graduated from the Philosophy Department of the Sorbonne University in 1912. Then he studied philosophy in a number of universities in Germany and Austria.

His degree thesis at the Sorbonne University was 'La biologie d'A. Comte', and his doctoral thesis in Berlin - 'Die Soziologischen Grundlagen der Erkenntnis'. However, the latter was not finished because of the First World War.

In 1914 he went back to the city of Van and lectured in the local Central School.

The government of Young Turks, making advantage of the beginning of the First World War, carried out the genocide of Western Armenians. In 1914 and especially 1915 the massacre and violent deportation of Western Armenians broke out. In a number of regions the Armenians resorted to armed resistance. Among the first to heroically withstand the assault was the Armenian population of Van, with active participation of V. Teroyan. The Armenian population of the city was saved thanks to the advance of the Russian Caucasian army jointly with the fighting squads of the Armenian volunteers.

On 7 May 1915, by order of Russian command, Aram Manukian (Sargis Harutyunian, 1879-1919) – a famous public, political and state figure – was appointed interim governor of Van and neighbouring provinces. V. Teroyan, too, was involved in the leading bodies of province governing. However, in July 1915 the Russian troops unexpectedly retreated. The Armenian, Assyrian and Yezidi population of Van-Vaspurakan had to leave, as well. V. Teroyan, along with a group of refugees, moved to Tiflis (Tbilisi), then – Baku.

On 10-13 May 1916 he took part in the First Armenian Congress held in Petrograd.

On 9 January 1919 V. Teroyan was elected to the preliminary committee of the Second Congress of Western Armenians, then – a chairman of the executive committee, by the assembly of representatives of Armenian refugees in Yerevan.

In the same year V. Teroyan joined the American Committee for Relief in the Near East (ACRNE), where he was put in charge of educational institutions, orphanages and hospitals.

After the establishment of Soviet rule in Armenia on 2 December 1920, V. Teroyan was appointed plenipotentiary representative of ACRNE, and in 1922 - supervisor of educational institutions, by the Revolutionary Committee of Armenia. During the years of Soviet rule V. Teroyan was unlawfully arrested four times (1922, 1924, 1931 and 1935). After the last arrest he was unjustly sentenced to three years' GULAG imprisonment by the special conference of the Soviet NKWD on 4 January 1936. According to the official notification, Varazdat Teroyan died on 6 February 1938, at the age of 51, in one of Siberia's concentration camps in Mariinsk.

V. Teroyan was posthumously acquitted by the Armenian Soviet Supreme Court's panel of judges' decree dated 16 March 1956, which vacated the judgment of 1936 in the absence of *corpus delicti*.

Among V. Teroyan's scientific studies are to be mentioned 'Evolution Theory of Bergson', 'Pan-Germanism and Historical Philosophy', 'Socialism and Socialism' etc. He translated the classics of philosophy – I. Kant's 'Critique of Pure Judgment', R. Descartes' 'On the Method of Polemic', B. Spinoza's 'Ethics', H. Taine 'Philosophy of Art' etc. He also made *belles-lettres* translations, such as A. France's 'Red Lily', H. Barbusse's 'Fire' etc.

In the present collection Varazdat Teroyan's scientific and public work is presented. For the first time his unpublished scientific articles, his speeches at the Congress of Western Armenian Refugees are brought into the open. There are also materials on his activities in the field of school and philosophical society establishment, as well as his project of creating a philosophical dictionary in three languages (Armenian-German-French).

For the first time an attempt has been made to present the life and work of the sincere patriot and intellectual-scholar, in an effort to acquaint the community with his scientific heritage. This is especially useful for present-day historians and philosophers.

The appendix of the book deals with documents, comments and indexes. Most documents have not been published up to now. Deep gratitude must be expressed to Teroyan (Deroyan) family, National Archives of Armenia and National Security Service Archives attached to the government of RA, for placing the documents at our disposal.

Հապավումներ

ԲՀԱ – Բանբեր Հայաստանի արխիվների
ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես
ԱԴՖՀ – Անդրկովկասի դեմոկրատական ֆեդերատիվ Հանրապետություն
ԱՍՖԽՀ – Անդրկովկասի սոցիալիստական ֆեդերատիվ խորհրդային Հանրապետություն
ԳԱ – Գիտությունների Ակադեմիա
ժողկոմխորհ – ժողովրդական կոմիսարների խորհուրդ
ԼԺԿ – Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ
ԽՍՀՄ – Խորհրդային սոցիալիստական Հանրապետությունների միություն
ՀՍԽՀ – Հայկական սովետական սոցիալիստական Հանրապետություն
ՀՕԿ – Հայ օգնության կոմիտե
ՀՕՄ – Հայ օգնության միություն
ՄԱՕԿ – Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտե
ՌԿԿ(բ) – Ռուսաստանի կոմունիստական կուսակցություն (բոլշևիկների)
ՆԳԺԿ – Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ
ՍՍՌՄ – Սովետական սոցիալիստական ռեսպուբլիկաների միություն

ВО — Военный округ
ГПУ — Государственное политическое управление
ГУГБ — Главное управление государственной безопасности
п/Д — партия Дашнакцутюн
ЗАКЧК — Закавказская чрезвычайная комиссия
ЗСФСР — Закавказская Советская федеративная социалистическая республика
ИТЛ — Исправительный-трудовой лагерь
КГБ — Комитет Государственной безопасности
КРО — Контрреволюционный отдел
КРПД — Кентрреволюционная партия Дашнакцутюн
НКВД — Народный комиссариат внутренных дел
ОГПУ — Объединенное государственное политическое управление

ОМЗ – Отдел мест заключения
ОО – Особый отдел
ОС – Особое совещание
РКИ – Рабоче-крестьянская инспекция
СЕКО – Секретное отделение
Сиблаг – Сибирский лагерь
СО – Секретный отдел
СОЧ – Секретно-оперативная часть
СПО УГБ – Секретно-политический отдел управления государственной безопасности
ССРА – Советская социалистическая Республика Армения
СССР – Союз советских социалистических Республик
УАО – Учетно-архивный отдел
УК – Уголовный кодекс
УНКВД – Управление народного комиссариата Внутренних дел
УРО – Учетно-распределительный отдел
УРСО – Управления розыскно-следственного отдела
УСО – Учетно-статистический отдел
ЦК КПА – Центральный комитет коммунистической партии Армении
4ПО УГБ – 4-ый политический отдел управления государственной безопасности
ЧК – Чрезвычайный комитет
NER – Near East Relief
VOKS – Всесоюзное общество культурных связей

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբեղյան Մանուկ 21
Ա-դօ (Հ. Տեր-Մարտիրոսյան) 11
Ալեքսանդր (Ալեքսանդր Առաջին) 45
Ալեքսանդր Սակեդոնացի 164
Ալեքսանյան 410
Ահարոնյան Ավետիս 7
Աղաբեկ էֆենդի 326
Աղավնյան Աբել 327
Այծյան Կ. էֆենդի 326
Անդրանիկ, տես Օզանյան Անդրանիկ
Աշեր, Ըշըր (C. D. Usser) 352
Առաքել Դավրիժեցի 49
Առաքելյան Լ. 411, 414
Առաքելյան Համբարձում 337
Առաքելյան Ս. 327
Ասլանյան Սեթ 326
Ասրիբեկյան Ալեքսանդր Բ. 331, 337
Ասրյան Ա. Ս. 8
Ավետաղայան Ա. 326
Արամ, տես Մանուկյան Արամ
Արիստակես Լաստիվերտցի 49
Արմինիուս (Arminius) 144
Ափիյան Ն. Ա. 13

Բադալյան Գ. 11
Բալդենսբերժեր Պ. 157
Բաղդասարյան Ս. 327
Բաղեշցյան Համազասպ 7
Բարբյուս (Barbusse) Անրի 15, 16, 387
Բարունակ 63–68
Բաուր Օտտո 148
Բեբել (Bebel) Ավգուստ 172
Բեկզադյան Ալեքսանդր 12
Բերգսոն (Bergson) Հանրի 14, 15, 141,175,183,184,186,189,194, 201,202,206,207,210,302,388
Բերիա Լավրենտի 364, 368
Բեռնար (Bernard) Կլոդ 204
Բիչ, գեներալ 347
Բիսմարկ Օտտո 151
Բլասկո Իբանյեզ (Blasco Ibañez)
Բյուլով (Bülow) Բերնհարդ 156
Բրաուն 355, 359, 360

Գալիլեյ Գալիլեո (Galilei) 211
Գալիկյան Հ. 326
Գարեգին վարդապետ 337
Գափամաճյան Կ. 326
Գափամաջյան Ս. 326
Գափրիելյան Լևոն 327
Գեդ (Guesde) Ժյուլ 321
Գևորգ Ե. Սուրենյանց
Գևորգյան Արտավազդ 396
Գևորկով Վ. 363, 364, 396
Գերվինուս (Ջերվինուս, Gervinus) Գեորգ Գոտֆրիդ 142, 148
Գիզեբրեխտ (Giesebrecht) Ֆրիդրիխ-Վիլհելմ 141–143
Գիպպոն, մայոր 346
Գյուլի-Քեվխյան Հայկ Գաբրիելի 384
Գոգլիձե Ս. Ա. 24,25,400,407
Գոմեճյան Հովհաննես 327

Գրանտ (Grant C. F.), կապիտան 352
Գրիգորյան Սիհրան 398
Գրիգորյան Վարվառա 16
Գրիլպարցեր (Grillparzer), ֆրանց 163

Դանջերֆիլդ Ժ. (Dangerfild J.) 351
Դավիդով 400
Դարբինյան Արտակ 7, 326
Դարվին (Darwin) Չարլզ Ռոբերտ 152, 160, 187
Դելոնշան (Deslongchamps Loiseleur) L. 163
Դեկարտ (Descartes) Ռընե 15,194,385,387,388
Դևիս 355, 356
Դերոյան (Միրզա-Ավագյան) Սարիամ 23, 24
Դերոյան Ն. Վ. 24,405,406,410,414
Դիսսել 351
Դյունան (Dunant) Анри Жан 201
Դյուրքհեյմ (Durkheim) էմիլ 157
Դովլաթյան Իսահակ 12
Դրոյզեն (Droysen) Յոհան Գուստավ 148
Դուբիսլավ 385

Եզոպոս 164
Եղիազարյան Արտավազդ 380
Եոլչեճյան Անդրանիկ 353
Եվրիպիդես 162, 170
Երամյան Մ. 326

Չենոբյան Խ. 326
Չիբել (Sybel) Հայնրիխ 143
Չիմմել (Simmel) Գեորգ 221
Չինգեր Պաուլ 172

Զոլա (Zola) էմիլ 231

Էլմար 351
Էյսլեր (Eisler) Ռուդոլֆ 385
Էնգելս Ֆրիդրիխ 320, 322, 324

Թադևոսյան Հովհաննես 331, 333
Թալեաթ Մեհմեդ 71
Թաշճյան Պ. 326
Թերզիբաշյան Ա. 326
Թերլեմեզյան Փանոս 337
Թերջան էֆենդի 326
Թոխմախյան Գ. 327
Թովմաղյան Արամ, տես Լեռ-Կամսար
Թովմասյան Գ. 327
Թորոսյան Սահակ 417
Թոփչյան Բագրատ 357
Թրայչքե 142, 154

Ժամագործյան Հ. 326
Ժամագործյան Ն. 327
Ժան դ'Արկ (Jeanne d'Arc) 166
Ժենյա, տես Տերոյան Զարուհի
Ժյուրա 321

Իսրայելյան 399
Իսքենտերյան Գալուստ 330

Լալանդ (Lalande) Անդրե 316, 317, 324
Լամպրեխտ (Lamprecht) Կարլ 142–144, 148, 156
Լասսոն (Lasson) Ադոլֆ 155
Լեո (Leo) Հենրիխ ֆոն 316
Լեռ-Կամսար 23, 397–399, 407, 408, 413
Լևոնյան Գարեգին Չիվանու 171

Լևոնյան Պարույր 325
Լերու (Leroux) Պիեր 321
Լըգուվե (Legouvé) էրնեստ 163
Լիպս (Lipps) Թեոդոր 299
Լոռեցյան Մկրտիչ 19, 359–364, 367
Լորիա 323
Լուիս 354
Լուտեր (Լութեր, Luther) Մարտին 144

Խանամիրյան Ա. 411, 414
Խանճյան Ղևոնդ 22, 326
Խանջյան Աղասի Ղևոնդի 22, 24, 384, 387, 392
Խատիսյան Ալեքսանդր Հովհաննեսի 347, 348
Խոջամիրյան Ա. 326

Կանայան Ստեփան 21
Կանտ (Kant) Իմմանուիլ 14, 150, 183,185,199,256,257,385,387, 388,409
Կասյան Սարգիս 12
Կարապետ էֆենդի 326
Կարասեֆերյան Մկրտիչ 326
Կարլայլ (Կարլեյլ, Carlyle) Թոմաս 98
Կացնելսոն 368
Կաուցկի Կարլ 392
Կեորկիզյան Արսեն 330
Կեպլեր (Քեպլեր, Kepler) Յոհան 211
Կեսար, տես Հուլիոս Կեսար
Կիրակոս Գանձակեցի 49
Կլաուբերգ (Clauberg) 385
Կնյազչյան 415
Կոբուլով Հմայակ 24,25,400,407
Կոյլավ (Coilav) Գրիգոր 393
Կոնտ (Comte) Օգյուստ 7, 157, 257, 388
Կոսոյան Հայկակ 7
Կոստիկյան 399
Կորկոտյան Զ. 327
Կրեսոս 55
Կրոչե (Croce) Բենեդետտո 201

Համբարյան Աղաբեգ 330
Համբարձումյան Ստ. 327
Հայնե (Heine) Հայնրիխ 168
Հարտման (Hartmann) Կարլ, Ռոբերտ էդուարդ 154
Հարությունյան Սամսոն 337
Հացագործյան Արսեն 7
Հեգել (Hegel) Գեորգ Վիլհելմ-Ֆրիդրիխ 15, 147, 148, 154, 385, 409
Հեկքել (Haeckel) էռնստ 143, 152, 153
Հերակլիտ 175
Հերուկյան 12
Հիտլեր Ադոլֆ 398
Հյուսյան Հ. 327
Հովհաննիսյան Աշոտ Գարեգինի 19, 22, 358
Հուլիոս Կեսար 146,149

Ղուկասով Յու. 411,412

Ճանոյան Կարապետ 326
Ճիտեջյան Գ. 326
Ճոնյան Գրիգոր 326

Մալինգեր (Malinger) Լ. 163,170
Մամիկոնյան Ստեփան Գ. 331, 337

Մամիկոնյան Վ. 377
Մանուկյան Արամ 6–8,87,92
Մանուկյան Արմենակ 13
Մարտիրոսյան 395, 396,399
Մարության Վ. 326
Մարության Փ. 326,327
Մարքս Կարլ 148, 320, 322, 324, 386, 387
Մաութներ (Mauthner) Ֆրից 385
Մաքկալում 351
Մաքսապետյան (Մկրտչյան) Վարդան Մկրտիչի 19, 359, 361–364, 367
Մեդեա (Medée) 162
Մելիք-Ադամյան Ռ. 326
Մելիք-Ալլահվերդյան Օլգա 330
Մելիք-Դատյան Լ. 327
Մելիք-Հովսեփյան (Մելիք-Օսիպով) Ս. Դ. 20,363,365,367
Մելիքյան Ն. 327
Մելիք-Օհանջանյան Կարապետ Աղաբեկի 25,409,413
Մելոյան Ղևոնդ 7
Մելքոնյան, Ֆոնդ 394
Մեծբայան Ելենա 354,355,397
Մեռզյան 326
Մեսրոպյան Ս. 327
Մետերլինկ (Maeterlinck) Մորիս 387
Միլլերան (Millerand) Ալեքսանդր 321
Միխայլով Միխաիլ 19,20,360–363
Մինասյան Մ. 326
Միրզա-Ավագյան Հարություն Գրիգորի 24
Միրզախանյան Ա. 326
Միրզոյան Արտաշես 397
Միքայելյան 396
Միքայելյան Քրիստափոր 7
Մխիթարյան Ս. 411,412,414
Մկո, Տաղվերանցի 327
Մկրտիչյան Հ. 326
Մկրտումյան Մկրտիչ 353
Մյուլլեր (Müller) Մաքս 158, 171
Մյուլլեր (Müller) Ֆրից 152
Մոզեր 350
Մովսեսյան Հ. 330
Մռավյան Ասքանազ 15,19,22,359
Մուղդուսի (Աստվածատրյան Խաչիկ) 363,395,396
Մուշեղյան Հռիփսիմե 22, 23, 396–399, 408, 409, 413
Մուրատով 415

Յարրո (Եարրո) էռնեստ 350–352

Նազարով 364
Նալբանդյան Մ. 326
Նալբանդյան Ն. 327
Նահապետ Քուչակ 168
Նապոլեոն 45,172
Նեսլեր 390
Նիցշե (Nietzsche) Ֆրիդրիխ 98, 153

Շալջյան Ա. 327
Շահ-Աբբաս (Աբբաս II) 49
Շահվերդյան Դանիել (Դանուշ) 353
Շատվորյան Ռ. 326
Շարամբյան Մանվել 397–399
Շելլինգ (Schelling) Ֆրիդրիխ Վիլհելմ Յոզեֆ 147
Շեոֆլե (Schäffle) Ալբերտ էբերխարդ Ֆրիդրիխ 154

Շիլլեր (Schiller) Ֆերդինանդ Կաննին Սկոտտ 201
Շիրին 327
Շլայխեր (Schleicher) Ավգուստ 152

Չալխուշյան Գրիգոր Ք. 331, 337
Չոլախյան Մարգարիտ 330
Չոպանյան Արշակ Հովհաննեսի 15, 168
Չոփուրյան Հայկ 401
Չուբարյան Գրիգոր Համբարձումի 25,408,413

Պալեոգյան 346
Պապաջանյան Միքայել 416
Պարիկյան Գ. 326
Պարիս (Pâris) Գաստոն 158, 163, 164, 167
Պարսամյան Ա. 326
Պետրոսյանց Հ. 330
Պերիկլես 237,238
Պերց (Pertz) Գեորգ Հենրիխ 141
Պիղատոս 76
Պիրս (Peers) 352
Պլետնյով Յու. Ա. 415
Պղատոն (Պլատոն) 320
Պոզոև 401
Պրեսանսե Ֆրենսիս դը 75
Պուատեպար (Պուադեբար) 346

Ջակվիդ 351
Ջաղեթյան Գրիգոր 417
Ջանգիրով 24,25,407
Ջեմալ փաշա Ահմեդ 19, 357, 377, 399, 412
Ջայմս (Ջեյմս, James) 201

Ռադլով Էռնեստ Վեոպոլդովիչ 385
Ռանճոլի Կ. 323
Ռանկե (Ranke) Լեոպոլդ 142,144
Ռասմաջյան (Ռասմաճյան) Տիգրան Հակոբի 333
Ռընուվիե (Renouvier) Շարլ 257
Ռնան (Ռընան, Renan) Էռնեստ 158
Ռշտունյան Ե. 326
Ռոբինսոն 326
Ռուդենկո Ռ. Ն. 405
Ռուսսո (Rousseau) Ժան Ժակ 217

Սաթենիկ 330
Սաթենիկ (Տերոյան Սաթենիկ) 6
Սահակյան Ավետիք 337
Սահակյան Ռուբեն Օնիկի 26
Սարգսյան Գ. 360
Սարկիսով 400
Սեմերջյան 327
Սիլիկով (Սիլիկյան) Մոիսեյ (Մովսես) Բաբայի 22–24, 398, 399, 413
Սիլիկովա Նատալիա Ալեքսանդրովնա 24
Սմբատյան Սիմոն 325
Սպենսեր (Spencer) Հերբերտ 157, 183, 186–189, 195, 322
Սպինոզա (Spinoza) Բենեդիկտ 15,221,387,388
Ստալին Ի. 24
Ստամբոլցյան Պարույր 330
Սուրենյանց Գևորգ Ե 416

Վազգեն, տե՛ս Տերոյան Տիգրան
Վազրիկ, տե՛ս Տերոյան Վարազդատ
Վալիկ 364, 368

Վայից (Waitz) Գեորգ 142, 143
Վանդերվելդ (Vandervelde) Էմիլ 321
Վարդանանք 170
Վարդանյան (Վարդանով) Վարդան, պրոֆեսոր 331
Վարդանով, ներքին գործերի կոմիսարիատի աշխ. 363, 367
Վիլսոն (Wilson) Վուդրո 79
Վիկրի 351
Վինդելբանդ (Windelband) Վիլհելմ 15, 385
Վիրաբյան Ա. 10
Վունդ (Wundt) Վիլհելմ 161, 162
Վուվունիկյան 326

Տակիտոս Պուբլիոս Կոռնելիոս 144
Տեն (Taine) Հիպպոլիտ 15, 156, 257, 386
Տեր-Միքայելյան Հայկ Բ. 337
Տերոյան Զարուհի (Ժենյա) 6
Տերոյան Տիգրան (Վազգեն, Վազրիկ) 6,7,19,20
Տեր-Պողոսյան Համազասպ 329
Տեր-Պողոսյան Վ. 326
Տեր-Սիմոնյան Ս. 327
Տիրայր եպիսկոպոս 346
Տոնյան Ռուբեն 384
Տուր Պ.Ի. դը լա 201

Ցինամզգվարով 401

Փալապեքյան Հ. 327
Փափազյան Դավիթ 326
Փափազյան Հակոբ Դավթի 8

Քալաշյան 343
Քաջբերունի Գրիգոր 329,330
Քաջունի Ե. 326

Օհանջանյան Գուրգեն 414
Օպպերտ (Oppert) Ժյուլ 166
Օսվալդ (Oswald) Ֆելիքս 320
Օվիկյան Մ. 327
Օվուեն (Օուեն, Owen) Ռոբերտ 321

Ֆիխտե (Fichte) Յոհան Գոտլիբ 195
Ֆոլկելտ (Volkelt) Յոհաննես 299
Ֆոշ, գեներալ 79
Ֆրանգյան 393
Ֆրանս (Franse) Անատոլ 15,387
Ֆրանք 320
Ֆուրիե (Fourier) Մարի Շառլ 321
Ֆուֆաև 398

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադրբեյջան (Ադրբեջան) 270
Ալբանիա 70,120
Ալեքսանդրապոլ (Ալեք-պոլ, Ալ-պոլ, Լենինական, Գյումրի) 12, 13,333,351,354,355,357,398
Ալսուր 327,328
Ալպեր 146
Այգեստան 6,8,87,326,327,337
Անգլիա 151,152,268
Անդրկովկաս 13, 21, 24, 364, 365, 367, 397, 398, 410
Անդրկովկասի դեմոկրատական ֆեդերատիվ հանրապետություն (ԱԴՖՀ, ԱՍՖԽՀ, ԱՍՖՍՀ, ЗСФСР) 21, 347, 365, 367, 378, 395, 400, 401, 404, 407
Անդրֆեդերացիա 20
Առաջավոր Ասիա 166
Առդան (Արդեններ), լեռներ 146
Ասիա 116
Ավստրիա 7, 146, 268, 269, 293, 398, 412
Ատլանտյան, օվկիանոս 146
Արաբիա 70
Արարատ (Մասիս), լեռ 77,110,120
Արարատյան Հանրապետություն, տես Հայաստանի Առաջին Հանրապետություն
Արարք 326
Արևելյան Հայաստան 11,393
Արևելք 143,150,158,159,163
Արևմտյան Հայաստան (Տաճկահայաստան, Западная Армения) 6, 10, 11, 38, 63, 79, 89, 339, 342
Արևմուտք 146
Արծակ 327,328
Արծեշ 327,328
Արտամետ 327,328

Բազել 321
Բաթում 11,346,353
Բալթիկ, ծով 146
Բալկաններ 146
Բաղդադ 67
Բարտողյան լեռներ 67
Բաքու 9, 10, 32, 35, 47, 48, 79, 173, 329, 330, 336–338, 360, 398, 412
Բելգիա 80, 147, 155, 173, 268, 269, 353
Բեյրութ 7
Բեռլին 7,119,157,360,388,406
Բիթլիս 11
Բոլգարիա (Բուլղարիա) 70,79
Բոստոն 7
Բրեստ 79
Բրուսիա (Պրուսիա) 145, 146
Բուրգոյն (Բուրգունդիա) 147

Գաղղիա (Ֆրանսիա) 146
Գանգես 164
Գերմանիա 21,119,141–148, 151, 152, 154, 163, 173, 183, 257, 268,269,353,383,398,411,412
Գործութ 327,328

Դարաչիչակ (Ծաղկածոր) 357
Դիլիջան 357
Դրոնթայմ (Տրոնհեյմ) 146

Եգիպտոս 70,122,383
Եվրոպա 146, 156, 163, 170, 299, 324, 365, 381
Երևան (Էրիվան) 8, 10–13, 23, 47, 73, 76, 79, 85, 87, 92, 93, 97, 99, 110, 140, 270, 275, 284, 295, 296, 333, 338, 343, 344, 348, 349, 351–362, 367, 368, 370, 374, 375, 377, 378, 380, 382, 384–390, 392–399, 401, 405–407, 409–412, 414, 415
Երևանի Հանրապետություն, տես Հայաստանի Առաջին Հանրապետություն
Երմանի-քյանդ, տես Հայկավան

Զանգեզուր 345

Էլբա 146
Էջմիածին 7, 10, 32, 344, 347, 351, 357, 374, 407, 412
Էրզրում 11

Թավրիզ 326
Թիֆլիս 9–11, 17, 19–21, 24, 25, 47, 62, 87, 156, 171, 182, 212, 233, 236, 250, 263, 295, 296, 331, 333, 337, 347, 350–355, 357, 361, 362, 365, 397, 398, 400, 404, 412
Թոքատ (Թոխատ) 346
Թուրքիա 7, 19, 20, 71, 79, 173, 269, 293, 362, 365, 398, 399, 411, 412

Ժնև 93

Իտալիա 7,144,146,398,412

Լայպցիգ 398,411,412
Լեհաստան 120,146,147,173
Լենինական 19,23,360,362,364
Լիբանան 7,70
Լիտվա 173
Լոզան 79
Լոկլ 321
Լոնդոն 146
Լորեն (Լոթարինգիա) 147

Խաղաղ օվկիանոս 146
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ, ՍՍՌՄ, ՍԽՀՄ, СССР) 12, 13, 18, 23–25, 273, 275, 294, 312–320, 323, 327, 329, 351–353, 358, 359, 363, 364, 383, 395, 397, 399, 400, 401, 404–406, 410, 411, 414, 415

Կազաչի պոստ 355
Կարս (Ղարս) 93,351,352,398
Կիլիկիա 103,109,110,354
Կյուսենենց 327,328
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս, Պոլիս) 77,351,352,354,355,393
Կովկաս 21, 38, 47, 173, 264, 331, 332, 335–338, 341, 346, 347, 352, 354, 359

Հայաստան 5, 9, 11–13, 15, 22, 23, 25, 26, 49, 55, 60, 62, 73, 103, 107, 109, 110, 119, 120, 122, 166, 331, 341, 346–353,

355, 357–360, 362, 395–401, 406, 408, 412
Հայաստանի Առաջին Հանրապետություն (Արարատյան Հանրապետություն, Երևանի Հանրապետություն, Республика Армения) 10, 85, 87, 109, 345, 346
Հայկական պար 77
Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Սովետական Հայաստան, Խորհրդային Հայաստան, ՀՍՍՀ, ՀՍԽՀ, ՀԽՍՀ, ՀՍՍՌ, ՀԽՍՌ, Армянская ССР, ССРА) 10–14, 16, 19, 24, 25, 115, 261, 269, 275, 308, 319, 323–327, 350–354, 357–359, 362–364, 378, 384, 393–396, 397, 399, 400, 405–407, 410–415
Հայկավան (Երմանի-քյանդ) 329, 360, 361
Հայոց Ձոր 327,328
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Միացյալ Նահանգներ, Ամերիկա) 37, 79, 122,223,294,350,353,357,383
Հյուսիսային Կովկաս 81,364
Հնդկաստան 163,164,168,170
Հոլանդիա 146,147
Հռենոս 146
Հռոմ 144–147
Հրեաստան 70
Հունաստան 70,122,164

Ղարաբաղ 103,109
Ղարաքիլիսա 351,352,357
Ղարս, տես Կարս

Ճանիկ 327, 328

Մասիս, տես Արարատ
Մարզվան 346
Մարիինսկ 23,404,406
Մեծ Բրիտանիա 353
Մեծ Հայք 84,85
Մերձավոր Արևելք 11–13,350–352
Միջագետք 354
Միջերկրական, ծով 146
Մոնթենեգրո (Չեռնոգորիա) 70
Մոսկվա 15, 16, 25, 331, 335, 337, 365, 401, 405, 406
Մոսուլ 79
Մուշ 84

Նյու-Յորք 351,352
Նովոսիբիրսկ 23,405
Նորաշեն 326
Նոր-Նախիջևան 337

Շահբաղի 327–328
Շատախ 327–328
Շվեդ (Շվեդիա) 146
Շվեյցարիա (Սկովդիա) 146, 147
Շտուտգարտ (Stutgart) 161
Շուշի 93

Ոստան 327,328

Չինաստան 253

Պարիզ, տես Փարիզ
Պարսկաստան 360
Պետրոգրադ 10, 119, 330, 331, 334, 335, 337

Ջալալօղլի (Ստեփանավան) 257

Ռիգա 146
Ռուեն (Ռուան) 146
Ռումանիա (Ռումինիա) 70
Ռուսաստան 106, 113, 119, 270, 293, 335, 364, 397, 414

Սարդարապատ 87.398
Սեբաստիա 346
Սեն (Սենա), գետ 164,168
Սերբիա 70,80,173
Սիբիր 23,404
Սիրիա 79,294
Սկանդինավիա 146
Սկովդիա, տես Շվեյցարիա

Վան 6–9, 11, 63, 84, 87, 93, 97, 325, 326, 328, 329, 337, 356, 360, 363, 397, 398, 411, 412
Վասպուրական 6,8,11,93,97,326
Վենետիկ 6,144
Վիեննա 157,398,412
Վիստուլ (Վիսլա) 146
Վրաստան 344, 350, 353, 397, 398, 400

Տաճկահայաստան, տես Արևմտյան Հայաստան
Տաճկաստան, տես Թուրքիա
Տավրոս, լեռներ 120

Ուկրաինա 294,364

Փարիզ (Պարիզ, Բարիզ) 7, 79, 110, 157, 158, 163, 166, 184, 316, 343, 382, 388, 406, 412
Փոքր Ասիա 67,164

Քաղաքամեջ (Քաղաք) 8, 326, 328

Օդեր, գետ 146
Օքսֆորտ 158

Ֆլորանս (Ֆլորենցիա) 144
Ֆրանսիա 80, 145–147, 151, 156, 163,165,183,257,264,268,269, 294,321,398,411

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սսհակյան Ռ. Օ. – Առաջաբան. Վարազդատ Տերոյանի կյանքը և գործունեությունը 5
Նկարներ 27–30
Մաս I
Գաղթական որբը. Գաղթականի խոսքեր 31
Գաղթական հարցեր 36
Օրագիր վերաշինության 49
Բարունակը և բարունակները 63
Աբսոլյուտ պատմությունը 69
Մինչև Հայրենիք վերադառնալը 77
Ինքն Արամը 87
Հեռու և մոտ 100
Միության մոմենտը 103
Մաս II
Դատարկ տակառներ 111
Այսօրվա պատմության մասին 119
[Անվերնագիր] 123
Պանգերմանիզմը և պատմափիլիսոփայությունը 141
Համեմատական գրականություն 157
Ռեգուլատիվ գաղափարները և գաղափարների ռեգուլատիվ դերը կյանքի մեջ 172
Ստեղծագործող էվոլյուսիոնը 183
Սոցիալիզմ և սոցիալիզմ 213
Intuition և Einfühlung որպես գեղարվեստական մոնիզմի հիմունքը 297
Կոլեկտիվ աշխատանքի մի հուշարձան 314
Մաս III
Հավելված 325
Ծանոթագրություններ 416
Резюме 419
Summary 421
Հապավումներ 424
Անձնանունների ցանկ 425
Տեղանունների ցանկ 431

ՎԱՐԱԶԴԱՏ ՏԵՐՈՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ
ԵՎ
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ВАРАЗДАТ ТЕРОЯН

НАУЧНЫЕ
И
ПУБЛИЦИСТИЧЕСКИЕ ТРУДЫ

Համակարգչային շարվածքը՝ Շ. Բասենցյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24[9]

[4300 դր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0612127

A II
91459